



**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱՄԱԽՄԲՄԱՆ
ՄԱՐՏԱՆՐԱՎԵՐՆԵՐԸ.
ԺՄԻ ՆԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱՅԱՍՏԱՆ, ՎՐԱՍՏԱՆ, ԱԴՐԲԵՋԱՆ,
ՌՈՒՍԱՍՏԱՆ, ԲԵԼԱՌՈՒՍ, ՂԱՉԱԽՍՏԱՆ,
ՂՐՂՉՍՏԱՆ, ՈՒԿՐԱԻՆԱ, ՄՈԼԴՈՎԱ**

Խմբագիր՝ ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ



Global Campus
of Human Rights

Europe
South-East Europe
Latin America-
Caribbean

Asia-Pacific
Caucasus
Arab World
Africa

This document has been produced with the financial assistance of the European Union and as part of the Global Campus of Regional Masters' Programmes and Diplomas, managed by EIUC.

The contents of this document are the sole responsibility of the Yerevan State University and can under no circumstances be regarded as reflecting the position of the European Union or of EIUC.

**CHALLENGES TO THE CONSOLIDATION
OF MODERN DEMOCRACY:
IDL COMPARATIVE ANALYSIS**

*(Armenia, Georgia, Azerbaijan, Russia,
Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine and Moldova)*

Edited by ARUSYAK ALEKSANYAN

YEREVAN
YEREVAN STATE UNIVERSITY PRESS
2019

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ.
ԺՄԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

*(Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս,
Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա, Մոլդովա)*

Խմբագիր՝ ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

ՀՏԴ 32.001

ԳՄԴ 66.0

Ժ 214

*Հրապարակության են երաշխավորել
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհուրդը և
Եվրոպական ուսումնասիրությունների
կենտրոնի գիտական խորհուրդը*

Ժ 214 Ժամանակակից ժողովրդավարության համախմբման մարտահրավերները. ԺՄԻ համեմատական վերլուծություն (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա, Մոլդովա) / Խմբ.՝ Ար. Ս. Ալեքսանյան: -եր., ԵՊՀ հրատ., 2019, 456 էջ:

Աշխատությունը ժողովրդավարության մակարդակի ինդեքսի (ԺՄԻ) մեթոդաբանությամբ իրականացված համալիր հետազոտություն է, որում համեմատական վերլուծության են ենթարկվել նորանկախ երկրների ժողովրդավարական համախմբման առանձնահատկությունները և բնորոշ գծերը: Ուսումնասիրությունների շրջանակն ընդգրկում է ինը երկիր՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա և Մոլդովա:

Սույն աշխատանքը նախորդ երեք ուսումնասիրությունների շարունակությունն է, որում առավելապես դիտարկվել են 2016-2018 թթ. ժողովրդավարական համախմբման հիմնախնդիրները: Աշխատությունը ներառում է ԺՄԻ-ի ներերկրային և միջերկրային վերլուծությունները: Ներերկրային վերլուծությունն ընդգրկում է նշված երկրների քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական և առողջապահական ոլորտների 2000-2018 թթ. հիմնական փոխակերպումներն ու դրանց ազդեցությունը ժողովրդավարական համախմբման գործընթացի վրա, իսկ միջերկրային վերլուծությունը՝ 2017 և 2018 թթ. ԺՄԻ-ի և դրա հինգ ենթաինդեքսների համեմատական ցուցանիշները: Աշխատությունը նախատեսված է համալսարանների, գիտահետազոտական կենտրոնների գիտնականների և սովորողների, ինչպես նաև հանրային ծառայողների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար:

Հայաստանի ազգային գրադարանի համահավաք գրացուցակ:

Այս գրքի փվյալները գրանցված են համահավաք գրացուցակում և հասանելի են Հայաստանի ազգային և Երևանի պետական համալսարանի գրադարաններից:

ՀՏԴ 32.001

ԳՄԴ 66.0

ISBN 978-5-8084-2409-8

© Հեղինակներ, 2019

© ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն, 2019

© ԵՊՀ հրատարակչություն, 2019

Խմբագիր և հետազոտական խմբի գիտական ղեկավար՝

Արուսյակ Ալեքսանյան ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի դասախոս, փորձագետ, քաղաքական գիտությունների թեկնածու

Հետազոտական խմբի անդամներ՝

Աշոտ Ալեքսանյան ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի փորձագետ, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ

Արտյոմ Տոնոյան ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու, ադրբեջանագետ

Աննա Սարկիսյան ԵՊՀ միջազգային հարաբերությունների մագիստրոս, միջազգային անվտանգության և ժողովրդավարացման հարցերով փորձագետ

Ալիսա Զամայան ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի «Եվրոպագիտություն» ծրագրի մագիստրոս, փորձագետ

Հետազոտական խմբի խորհրդատու՝

Վլադիմիր Մարտիրոսյան ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի փոխտնօրեն, քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գրախոսներ՝

Գարիկ Քեոյան Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ալեքսանդր Մարգարով Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Head of the Research Team, Editor

Arusyak Aleksanyan Expert, Lecturer at Center for European Studies, YSU, Doctor of Philosophy in Political Science

Research Team

Ashot Aleksanyan Expert, Lecturer at Center for European Studies, YSU, Degree of Doctor of Sciences (Political Sciences), Associate Professor

Artyom Tonoyan Expert in Azerbaijani Studies, Assistant Professor at Chair of Iranian Studies, YSU, Doctor of Philosophy in Philology

Anna Sarkisyan Expert in international security and democratization, MA in International Relations at YSU

Alisa Jamalyan Expert, MA in European Studies at Center for European Studies, YSU

Research Adviser

Vladimir Martirosyan Deputy Director of the Center for European Studies, YSU, Doctor of Philosophy in Political Science, Associate Professor

Readers

Garik Keryan Degree of Doctor of Sciences (Political Sciences), Professor

Alexander Markarov Degree of Doctor of Sciences (Political Sciences), Professor

Challenges to the Consolidation of Modern Democracy: IDL Comparative Analysis (Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine and Moldova), ed. by Arusyak Aleksanyan, Yerevan, YSU press, 2019, 456 p.

This book is a complex research carried out by methodology of the Index of Democracy Level (IDL) where a comparative analysis of features and characteristics of democratic consolidation of newly independent countries is conducted. The study encompasses nine countries, namely Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine and Moldova. This is a continuation of the previously published three books, where key issues of democratic consolidation for the 2016-2018 period were mainly observed. It contains in-country and cross-country analyses of the IDL. In-country analysis focuses on major transformations in political, economic, social, educational and health spheres of the mentioned countries as well as their impact on the process of democratic consolidation within 2000-2018 years. Cross-country analysis displays comparative indicators of five sub-indices which conditioned the Index of Democracy Level in 2017-2018. The book is proposed to professors and students of universities, research centres, as well as public servants and civil society representatives.

The National Library of Armenia Cataloging-in-Publication Data.

A catalog record for this book is available from the National Library of Armenia and Library of Yerevan State University.

Հապավումներ

ԱԳԻ	Առողջապահական գործոնների ինդեքս
ԱԷԿ	Ատոմային էլեկտրակայան
ԱԺ	Ազգային ժողով
ԱԺՃ	Ադրբեջանի ժողովրդական ճակատ
ԱԺԾԿ	Ադրբեջանի ժողովրդական ճակատ կուսակցություն
ԱլԳ	Արևելյան գործընկերություն
ԱլԳ ԲՀՖ ԲԱՊ	Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի Բելառուսի ազգային պլատֆորմ
ԱՀ	Ադրբեջանական Հանրապետություն
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՃԹՆ	Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԲԿԳ	Բաց կառավարման գործընկերություն
ԲՀԿ	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն
ԳՐԱՆԻ	«Քաղաքացիական նախաձեռնություն» քաղաքական կուսակցություն
ԴԺՀ	Դոնեցկի ժողովրդական հանրապետություն
ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԵԳՇ	Երկրի գործընկերության շրջանակ
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵԽԽՎ	Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով
ԵՄ	Եվրոպական միություն
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոցներ
ԺՄԻ	Ժողովրդավարության մակարդակի ինդեքս
ԺՈՒԱԽ	Ժողովրդական ուժերի ազգային խորհուրդ
ԻԻՀ	Իրանի Իսլամական Հանրապետություն
ԼԳՔՏ	Լեսբուհի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր
ԼԺՀ	Լուգանսկի ժողովրդական հանրապետություն
ԽՀԱԱԳ	Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտի
ԽՍՀՄ	Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միություն

ԿԲ	Կենտրոնական բանկ
Կ _{գր}	Կրթական գործոնների ինդեքս
ԿԸԻ	Կոռուպցիայի ընկալման ինդեքս
ԿԽ	Կարմիր խաչ
ԿԸՀ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ԿՄՎ	Կովկասի մուսուլմանների վարչություն
ՀԱԱ	Համախառն ազգային արդյունք
ՀԱՊԿ	Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպություն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԳԲԻ	Համաշխարհային գենդերային բացակի ինդեքս
ՀԸԳՀ	Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԱՆ	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն
ՀՀ ՎԿ	Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե
ՀՀԿ	Հայաստանի Հանրապետական կուսակցություն
ՀՅԴ	Հայ Յեղափոխական Դաշնակցություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՊԳ	Հետաքննությունների պետական գրասենյակ
ՀՌԿԿ	Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն
ՂԺՎ	Ղազախստանի ժողովրդի վեհաժողով
ՂրՀ	Ղրղզստանի Հանրապետություն
ՂՀ	Ղազախստանի Հանրապետություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԶՀ	Մարդկային զարգացման համաթիվ
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՄԻԱՎ	Մարդու իմունային անբավարարության վիրուս
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՄՀ	Մոլդովայի Հանրապետություն
ՅՈՒՆԻՍԵՖ	ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ
ՆԱԿ	Նոր Ադրբեջան կուսակցություն
ՆԱՏՕ	Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպություն
ՆԳՆ	Ներքին գործերի նախարարություն
ՈւԱԱՊԽ	Ուկրաինայի ազգային անվտանգության և պաշտպանության խորհուրդ
ՈւՈւԵ	Ուկրաինական ուղղափառ եկեղեցի
ՊԱԾ	Պետական անվտանգության ծառայություն
ՊՎԾ	Պետական վիճակագրական ծառայություն
ՌԱԱԴ	Ռուսաստանի անկախ արհմիությունների դաշնություն

ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՌԴԿԿ	Ռուսաստանի Դաշնության կոմունիստական կուսակցություն
ՌԼԴԿ	Ռուսաստանի լիբերալ-դեմոկրատական կուսակցություն
ՌԿԿԿ	Ռուսաստանի կոմունիստներ կոմունիստական կուսակցություն
Ս _{գր}	Սոցիալական գործոնների ինդեքս
ՏԱԻ	Տնտեսական ազատության ինդեքս
Տ _{գր}	Տնտեսական գործոնների ինդեքս
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություններ
Ք _{գր}	Քաղաքական գործոնների ինդեքս
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ
ՕՈՆԼ	Օտարերկրյա ուղղակի ներդրումներ
ՖՏ	Ֆինանսական տարի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ.....	7
Հեղինակների մասին.....	12
Ներածություն	14
<i>Արուսյակ Ալեքսանյան</i>	
Կարարման ամփոփագիր	17
<i>Արուսյակ Ալեքսանյան</i>	
1. Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի մեթոդաբանությունը	20
<i>Արուսյակ Ալեքսանյան</i>	
2. Հայաստանի նոր իրողությունները. ժողովրդավարության կոնսոլիդացում, թե՞ ինստիտուցիոնալացում	34
<i>Արուսյակ Ալեքսանյան</i>	
3. Հիբրիդային ժողովրդավարությունը Վրաստանում. կառավարման և ինքնակառավարման մարմինների արդիականացումը.....	74
<i>Աննա Սարկիսյան</i>	
4. Ժողովրդավարությունը հետխորհրդային Ադրբեջանում. կարգախոս, թե՞ չափելի արժեք	101
<i>Արդյոն Տոնոյան</i>	

5. Ռուսաստանի դաշնության ժողովրդավարական փոխակերպումները համաշխարհային մրցունակության և պատժամիջոցների պայմաններում 145

Աշոտ Ալեքսանյան

6. Բելառուսական պետականության արդիականացման հեռանկարները. պետականաշինության և քաղաքացիական խոսույթի առանձնահատկությունները 196

Աշոտ Ալեքսանյան

7. Ժողովրդավարացման զսպման և անազատականության շրջափուլերը Ղազախստանում. կառավարելի և փոփոխվող իշխանակարգ 241

Աշոտ Ալեքսանյան

8. Ղրղզստանի ժողովրդավարության կայացման գործընթացները 292

Ալիսա Ջամալյան

9. Կոնսոցիալ համախմբման ներուժն Ուկրաինայում. քաղաքացիավարական անվտանգության սահմանները 327

Աշոտ Ալեքսանյան

10. Ժողովրդավարության ամրապնդումը Մոլդովայում 377

Ալիսա Ջամալյան

11. Հետխորհրդային ժողովրդավարական փոխակերպումների և արդիականացման առանձնահատկությունները. միջերկրային վերլուծություն 415

Արուսյակ Ալեքսանյան

Անունների և հիմնաբառերի ցանկ 439

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արուսյակ Ալեքսանյանը քաղաքական գիտությունների թեկնածու է, Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի դասախոս և փորձագետ: Նա դասախոսում է նաև ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի քաղաքագիտության ամբիոնում: Նրա գիտական հետաքրքրությունների հիմնական թեմաներն են համեմատական քաղաքական վերլուծությունը, Ժողովրդավարության ինդեքսները, քաղաքական տեխնոլոգիաները: 2012 թ.-ին Արուսյակ Ալեքսանյանը, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստանի և Նյու Յորքի «Կարնեգի» կորպորացիայի հետազոտական ծրագրի շրջանակներում մշակել է Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի մեթոդաբանությունը, իսկ 2009 թ.-ին թեկնածուական ատենախոսության շրջանակում՝ Քաղաքական համակարգի կայունության ինդեքսը:

Աշոտ Ալեքսանյանը քաղաքական գիտությունների դոկտոր է, ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի դասախոս և փորձագետ, քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի դոցենտ: Նրա գիտական հետաքրքրությունների հիմնական թեմաներն են քաղաքացիական հասարակությունը, սոցիալական գործընկերությունը, մարդու քաղաքական իրավունքներն ու ազատությունները: 2002-2017 թթ. եղել է Գերմանիայի ակադեմիական փոխանակման ծրագրի (DAAD) և ԵՄ «Էրազմուս Մոնդուս»-ի հրավիրված գիտնական (Հաննովերի, Մյունխենի Լյուդվիգ-Մաքսիմիլյանի, Յենայի Ֆրիդրիխ Շիլլերի, Լյուվենի Կաթոլիկ և Բեռլինի ազատ համալսարանների քաղաքագիտության ինստիտուտներում): 2013-ից «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն» հանդեսի պատասխանատու խմբագիրն է:

Արտյոմ Տոնոյանը բանասիրական գիտությունների թեկնածու է, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոս: Զբաղվում է Ադրբեջանի իրանական լեզուների ուսումնասիրությամբ: Վերջին տարիներին նրա գիտական հետաքրքրությունների շրջանակում է նաև հետխորհրդային Ադրբեջանի քաղաքական համակարգը:

Աննա Սարկիսյանը ԵՊՀ միջազգային հարաբերությունների մագիստրոս է, միջազգային անվտանգության և ժողովրդավարացման հարցերով փորձագետ: Նա մասնակցել է բազմաթիվ հեղինակավոր կառույցների կրթական ծրագրերի: Ունի սոցիալ-տնտեսական ոլորտի հետազոտական և զարգացման ծրագրերի կառավարման ավելի քան 15 տարվա փորձ: 2014-2016 թթ. եղել է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան (ՀՌԿԿ) ծրագրերի ղեկավար: 2016-2017 թթ. ուսանել է Շվեյցարիայի Ժնևի համալսարանի և Անվտանգության քաղաքականության Ժնևյան կենտրոնի ավագ փորձագետների համար նախատեսված համատեղ մագիստրոսական ծրագրում: Սարկիսյանն ընդգրկված է եղել նաև Ֆլեթչերի անվան իրավունքի և դիվանագիտության դպրոցի մասնագիտական ծրագրերից մեկում: 2018 թ.-ին մասնակցել է Ռեմսֆելդ հիմնադրամի Կենտրոնական Ասիա-Կովկաս ծրագրին: ՀՀ ԱԺ 2018 թ. ընտրություններին եղել է դասընթացավար՝ ՀՀ ԿԸՀ-ի և Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի կազմակերպած ընտրական հանձնաժողովների անդամների վերապատրաստման ծրագրում:

Ալիսա Ջամալյանը ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի «Եվրոպագիտություն» մագիստրոսական ծրագրի մագիստրոս է և Լիբերալ քաղաքականության դպրոցի շրջանավարտ: Նա եվրոպագետ է և քաղաքացիական ակտիվիստ, երեխաների սոցիալական և կրթական իրավունքների պաշտպանության ոլորտի մասնագետ: Նրա հետաքրքրությունների շրջանակում են միգրացիոն գործընթացների և լիբերալիզմի արդի մարտահրավերները:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից պայմաններում կարևոր նշանակություն ունեն նորանկախ երկրների ժողովրդավարության համախմբման մարտահրավերների ուսումնասիրությունները: Այս առումով ժողովրդավարության մակարդակի ինդեքսի (ԺՄԻ) մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս համակողմանիորեն անդրադառնալ այդ երկրներում ժողովրդավարության կայացման քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթական և առողջապահական նախադրյալներին:

Ներկայացվող աշխատանքը նախորդ երեք ուսումնասիրությունների¹ շարունակությունն է, որտեղ ԺՄԻ-ի կիրառմամբ ուսումնասիրվում են նորանկախ երկրների ժողովրդավարական զարգացումների և նահանջների գործընթացները: Այլևս փաստ է, որ ԺՄԻ-ն՝ որպես գիտահետազոտական գործիք, կայացել է և արդյունավետորեն կիրառելի է ազգային ու միջազգային հետազոտություններում:

«Ժամանակակից ժողովրդավարության համախմբման մարտահրավերները. ԺՄԻ համեմատական վերլուծություն (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա)

¹ Ավելի մանրամասն տե՛ս **Ալեքսանյան, Արուսյակ**, խմբ. (2017) Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի միտումները մարդու իրավունքների և ժողովրդավարացման չափումներում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա, Մոլդովա): Եր., ԵՊՀ հրատ., **Ալեքսանյան, Արուսյակ**, խմբ. (2016) Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատական վերլուծությունը մարդու իրավունքների և ժողովրդավարացման համատեքստում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա, Մոլդովա): Եր., ԵՊՀ հրատ., **Ալեքսանյան, Արուսյակ**, խմբ. (2015) Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատական վերլուծություն. Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ուկրաինա, Մոլդովա: Եր.: ԵՊՀ հրատ.:

նա, Մոլդովա)» սույն աշխատությունում ԺՄԻ-ի կիրառմամբ համեմատական ուսումնասիրություն է կատարվել և համակարգային մոտեցմամբ վեր են հանվել նշված երկրների 2000-2018 թթ. ժողովրդավարացման միտումները:

Դիտարկվող ժամանակահատվածում հետխորհրդային երկրների քաղաքական համակարգերի ժողովրդավարացումը բախվել է բազմաթիվ խոչընդոտների: Դրանք պետական ինստիտուտների բյուրոկրատացման և քաղաքական մշակույթի ցածր մակարդակի պատճառով առաջացրել են անարդյունավետ կառավարման եղանակներ, որոնք իրենց հերթին հանգեցրել են խիստ բացասական հետևանքների:

ԺՄԻ-ի մոդելի մասին այս աշխատությունը նվիրված է XXI դարի միջազգային, տարածաշրջանային և ներպետական փոխակերպումներում հիշյալ երկրների ժողովրդավարացման ռազմավարության քաղաքագիտական վերլուծությանը: Դրանում կարևորված են ժամանակակից ժողովրդավարության զարգացումներն ինտեգրման և համագործակցության համատեքստում, ինչպես նաև ԺՄԻ գործոնների ազդեցությունը հետխորհրդային տարածքում ժողովրդավարական ներուժի վրա:

Հեղինակները ԺՄԻ-ի մեթոդաբանությամբ իրականացված հետազոտության միջոցով գնահատել են այդ երկրների ժողովրդավարական համախմբման առաջընթացն ու նահանջը՝ հիմնվելով ժամանակակից ժողովրդավարության տեսությունների վրա²: Անցած տարիների փորձը ցույց է տվել, որ անհրաժեշտ է քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթական և առողջապահական բարեփոխումների հետևանքների ավելի խորը՝ հայեցակարգային ընկալում, ինչպես նաև հետխորհրդային հասարակությունների հետագա զարգացման ուղղությունների ու հեռանկարների համակողմանի քննություն:

Ներերկրային վերլուծությունը վերաբերում է դիտարկվող պետություններում 2000-2018 թթ.-ին տեղի ունեցող ժողովրդավարական համա-

² Տե՛ս **Diamond, Larry** (2019) *Ill Winds: Saving Democracy from Russian Rage, Chinese Ambition, and American Complacency*. New York: Penguin Press, **Fukuyama, Francis** (2018) *Identity: The Demand for Dignity and the Politics of Resentment*. New York: Farrar, Straus and Giroux, **Laski, Gregory** (2018) *Untimely Democracy: The Politics of Progress after Slavery*. New York: Oxford University Press.

խմբման փոխակերպումներին և ըստ այդմ՝ ԺՄԻ-ի միտումներին՝ ներառելով դրանց վրա ազդող քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական և առողջապահական գործոնները: Որպես նախորդ հետազոտությունների շարունակություն այս աշխատության մեջ հեղինակների ուսումնասիրությունները կենտրոնացել են մասնավորապես 2016-2018 թվականների քաղաքական և սոցիալ-տնտեսական իրադարձությունների վրա:

Միջերկրային վերլուծությունը հետխորհրդային ինը երկրների ժողովրդավարության մակարդակի ինդեքսի և դրա ենթահինդեքսների (Ք_{ԳԻ}, Տ_{ԳԻ}, Ա_{ԳԻ}, Կ_{ԳԻ} և Ա_{ԳԻ}) սանդղակավորումն է 2017 և 2018 թվականների կտրվածքով, ինչպես նաև համեմատական վերլուծությունը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, կատարման ամփոփագրից, տասնմեկ գլխից ու անունների և հիմնաբառերի ցանկից: Առաջին գլխում ներկայացված է ժողովրդավարության մակարդակի չափման մոդելի մեթոդաբանությունը: Երկրորդից տասներորդ գլուխները ներառում են 2000-2018 թթ. Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ուկրաինայի և Մոլդովայի ԺՄԻ-ի ու դրա ենթահինդեքսների միտումները՝ առավել հանգամանորեն անդրադառնալով 2016-2018 թթ. քաղաքական, տնտեսական, սոցիալական, առողջապահական և կրթական գործընթացներին: Տասնմեկերորդ գլուխը միջերկրային վերլուծությունն է, որի շրջանակում կատարված է դիտարկվող պետությունների ԺՄԻ-ի ու դրա հինգ բաղադրիչի՝ Ք_{ԳԻ}-ի, Տ_{ԳԻ}-ի, Ա_{ԳԻ}-ի, Կ_{ԳԻ}-ի և Ա_{ԳԻ}-ի սանդղակավորումը և համեմատական վերլուծությունը 2017 և 2018 թվականների կտրվածքով:

Արուսյակ Ալեքսանյան

ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Ժամանակակից ժողովրդավարության համախմբման մարտահրավերները. ԺՄԻ համեմատական վերլուծություն (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա, Մոլդովա)» աշխատության հեղինակներն են ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի (ԵՈւԿ) փորձագետներ ու դասախոսներ Արուսյակ Ալեքսանյանը (ք.գ.թ), Աշոտ Ալեքսանյանը (ք.գ.դ), ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դասախոս Արտյոմ Տոնոյանը (ք.գ.թ.), միջազգային անվտանգության և ժողովրդավարացման հարցերով փորձագետ Աննա Սարկիսյանը և ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի «Եվրոպագիտություն» ծրագրի մագիստրոս, փորձագետ Ալիսա Զամայանը: Հետազոտության շրջանակում փորձագետները ժողովրդավարության մակարդակի ինդեքսի (ԺՄԻ) մոդելի միջոցով հավաքագրել, հաշվարկել և վերլուծել են հետխորհրդային 9 երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական և առողջապահական ոլորտի ցուցանիշներն ու դրանց հիման վրա ստացված ԺՄԻ-ն: Այսպիսով, աշխատանքը ներառում է ԺՄԻ-ի և դրա ենթահինդեքսների՝ Քաղաքական գործոնների ինդեքսի (Ք_{ԳԻ}), Տնտեսական գործոնների ինդեքսի (Տ_{ԳԻ}), Սոցիալական գործոնների ինդեքսի (Ս_{ԳԻ}), Կրթական գործոնների ինդեքսի (Կ_{ԳԻ}) և Առողջապահական գործոնների ինդեքսի (Ա_{ԳԻ}) ամփոփ վերլուծությունը:

Ք_{ԳԻ}-ի, Տ_{ԳԻ}-ի, Ս_{ԳԻ}-ի, Կ_{ԳԻ}-ի և Ա_{ԳԻ}-ի, հետևաբար դրանց հիման վրա հաշվարկված ԺՄԻ-ի արժեքները որոշ տարիների կտրվածքով հնարավոր է աննշան տարբերվեն նախորդ հրապարակումների համապատասխան տարիների արժեքներից: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ հեղինակները, հետևելով Համաշխարհային բանկի, միջազգային կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների, Ազգային վիճակագրական ծառայությունների կողմից տվյալների շտեմարանների մշտական

թարմացմանն ու լրամշակմանը, ներառում են այդ փոփոխությունները յուրաքանչյուր նոր հրապարակման մեջ:

Ընդհանուր առմամբ ԺՄԻ-ն կազմված է պաշտոնական վիճակագրությունից, մշակված նոր փոփոխականներից, գործող միջազգային հեղինակավոր կազմակերպությունների ցուցանիշներից: ԺՄԻ-ի չափումների և համեմատական վերլուծության արդյունքում ստեղծվել է շուրջ 5000 տվյալից բաղկացած շտեմարան:

Այսպիսով, այս հետազոտության տվյալների հավաքագրման, մշակման և հաշվարկների իրականացման համար հիմք են հետևյալ աղբյուրները.

1. Քաղաքական գործոններ՝

- 1.1. Օրենքի գերակայությունը (ՀԲ-ի Համաշխարհային կառավարման ինդիկատորներ),
- 1.2. Քաղաքական կայունությունը / բռնության բացակայությունը (ՀԲ-ի Համաշխարհային կառավարման ինդիկատորներ),
- 1.3. Քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ինդեքսը («Ազատության տան» զեկույցներ),
- 1.4. Մամուլի ազատությունը («Ազատության տան» զեկույցներ),
- 1.5. Կոռուպցիայի ընկալման ինդեքսը («Թրանսփարենսի ինթերնեշնլի» զեկույց),
- 1.6. քաղաքական համակարգը (գնահատված է հետազոտողի կողմից),
- 1.7. սոցիալական անհանգստությունները և քաղաքական ճնշումները (գնահատված է հետազոտողի կողմից),
- 1.8. խորհրդարանական մեծամասնությունը (գնահատված է հետազոտողի կողմից),
- 1.9. կրոնը (գնահատված է հետազոտողի կողմից),
- 1.10. հակամարտության առկայությունը (գնահատված է հետազոտողի կողմից),
- 1.11. Գենդերային հավասարությունը (Համաշխարհային գենդերային բացակի զեկույց):

2. Տնտեսական գործոններ՝

- 2.1. համախառն ազգային արդյունքը մեկ շնչի հաշվով, ԱՄՆ դոլար (ՀԲ-ի ինդիկատորներ),
- 2.2. առևտրաշրջանառության ծավալը (ՀՆԱ%) (ՀԲ-ի ինդիկատորներ),
- 2.3. տնտեսության վարկավորման ծավալները (ՀՆԱ%) (ՀԲ-ի ինդիկատորներ),
- 2.4. օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՀՆԱ%) (ՀԲ-ի ինդիկատորներ),
- 2.5. գնաճը (%) (ՀԲ-ի ինդիկատորներ, Ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ),
- 2.6. Տնտեսական ազատության ինդեքսը («Հերիթիջ» հիմնադրամի զեկույց),
- 2.7. բյուջեի դեֆիցիտը (ՀՆԱ%) (ՀԲ-ի ինդիկատորներ, Ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ):

3. Սոցիալական գործոններն են՝

- 3.1. իրական աշխատավարձը (ԱՄՆ դոլար) (Ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ),
- 3.2. գործազրկության մակարդակը (%) (ՀԲ-ի ինդիկատորներ),
- 3.3. Զինի ինդեքսը (%) (ՀԲ-ի ինդիկատորներ, Ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ):

4. Կրթական գործոններն են՝

- 4.1. Մարդկային զարգացման համաթվի կրթության բաղադրիչը (ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի զեկույցներ),
- 4.2. պետության ծախսերը կրթության ոլորտում (ՀՆԱ%) (ՀԲ-ի ինդիկատորներ):

5. Առողջապահական գործոններն են՝

- 5.1. կյանքի սպասվող տևողությունը (ՀԲ-ի ինդիկատորներ, Ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ),
- 5.2. ծախսերն առողջապահության ոլորտում (ՀՆԱ%) (ՀԲ-ի ինդիկատորներ):

Արուսյակ Ալեքսանյան

1. Ժողովրդավարութեան մակարդակի ինդեքսի մեթոդաբանութիւնը*

ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

XX-րդ դարը կարելի է անվանել ժողովրդավարական փոխակերպումների ժամանակաշրջան: Այն նշանավորվեց ավտորիտար և ամբողջատիրական համակարգերից ժողովրդավարականի անցման գործընթացներով: Այդ ընթացքում մի շարք երկրներում տեղի ունեցավ ժողովրդավարության համախմբում, մյուսներում՝ հետընթաց, իսկ որոշ մասն էլ դեռևս անցումային փուլում է: Այս համատեքստում շարունակում են արդիական մնալ ժողովրդավարության «հաղթանակի» և «պարտության» հարցադրումները, ժողովրդավարության համախմբման և հետընթացի պատճառներն ու նախադրյալները: Մասնագետները առավել հաճախ են անդրադառնում այն հիմնահարցերին, թե որ գործոններն են, որոնք կարող են ապահովել սահուն անցումը ժողովրդավարությանը և նպաստեն դրա ամրապնդմանը: Ընդ որում, քաղաքականից զատ, մասնագետներն առանձնացնում են նաև սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ գործոններ ու նախապայմաններ (*Lipset 1959, Almond and Verba 1963, Lijphart 1968, Dahl 1985, Huntington 1991, Barro 1999, Vanhanen 2003, Siegle et al. 2004*):

Այս առումով տեղին է նշել, որ ժողովրդավարության մակարդակի ինդեքսի մեթոդաբանությունը հիմնված է այն մոտեցման վրա, որ ժողովրդավարությունը պայմանավորված չէ մեկ գերակա գործոնով և ունի բազմա-գործոնային կապ ժողովրդավարության հետ: Ըստ այդմ՝ ԺՄԻ-ի մոդելավորման ժամանակ հիմք է ընդունվում այն դրույթը, որ ժողովրդավարութե

* Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի (ԺՄԻ) մեթոդաբանությունը մշակել է Արուսյակ Ալեքսանյանը ՀՌԿԿ-Հայաստան և Նյու Յորքի «Կարնեգի» կորպորացիայի թիվ «R03» կրթաթոշակի շրջանակում:

1. Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի մեթոդաբանությունը

յան վրա տարբեր կշիռներով ազդում են հինգ խումբ գործոններ՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական, առողջապահական³:

Գծապատկեր 1

Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի գործոնները⁴



³ ԺՄԻ-ում ընդգրկված փոփոխականների ընտրությունն իրականացվել է դրանց կոռելյացիոն մատրիցի կառուցման և արտաքսման մեթոդով: Նախնական փուլում ընդգրկվել է ավելի քան 50 փոփոխական, այնուհետև մոդելից դուրս են բերվել այն փոփոխականները, որոնք կոռելյացիոն ուժեղ կապ ունեն ($R \geq 10,71$):

⁴ Սոցիալական գործոններից կրթականի և առողջապահականի տարանջատման նպատակն այդ բաղադրիչների առավել խորքային՝ ըստ առանձին ոլորտների, ուսումնասիրությունն է: Սոցիալական գործոնների ինդեքսն այս դեպքում վերաբերում է միայն եկամուտների անհավասարությանը:

Ժողովրդավարությունը պայմանավորող քաղաքական գործոններն են՝

1. Օրենքի գերակայությունը (Օր.),
2. Քաղաքական կայունությունը / բռնության բացակայությունը (Կայուն.),
3. Քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ինդեքսը (ՔԻ),
4. Մամուլի ազատությունը (ՄԱ),
5. Կոռուպցիայի ընկալման ինդեքսը (ԿԸԻ),
6. քաղաքական համակարգը (ՔՀ),
7. Գենդերային հավասարությունը (Գենդ.),
8. սոցիալական անհանգստությունները և քաղաքական ճնշումները (ՍԱ),
9. խորհրդարանական մեծամասնությունը (ԽՄ),
10. կրոնը (Կ),
11. հակամարտության առկայությունը (ՀԱ):

Տնտեսական գործոններն են՝

1. համախառն ազգային արդյունքը մեկ շնչի հաշվով (ՀԱԱ),
2. առևտրաշրջանառության ծավալը (Ա),
3. Տնտեսական ազատության ինդեքսը (ՏԱԻ),
4. տնտեսության վարկավորման ծավալները (ՏՎ),
5. օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՆ),
6. գնաճը (Գ),
7. բյուջեի դեֆիցիտը (ԲԴ):

Սոցիալական գործոններն են՝

1. իրական աշխատավարձը (ԻԱ),
2. գործազրկության մակարդակը (Գործ.),
3. Զինի ինդեքսը (ԶԻ):

Կրթական գործոններն են՝

1. Մարդկային զարգացման համաթվի կրթության բաղադրիչը (ՄՀՀ-կրթ.),
2. պետության ծախսերը կրթության ոլորտում (ԿԾ):

1. Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի մեթոդաբանությունը

Առողջապահական գործոններն են՝

1. կյանքի սպասվող տևողությունը (ԿՏ),
2. ծախսերն առողջապահության ոլորտում (ԱԾ):

Մոդելում ընդգրկված ինդեքսների և մի շարք փոփոխականների բնույթն ու հաշվարկման մեթոդաբանությունը հետևյալներն են.

- «Օրենքի գերակայությունը» և «Քաղաքական կայունություն / բռնության բացակայությունը» Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող պետական կառավարման արդյունավետության գնահատման վեց ինդեքսից երկուսն են (*Kaufmann, Kraay, Mastruzzi 2010, 2-3*): Օրենքի գերակայությունը չափում է օրենքների նկատմամբ քաղաքացիների վստահությունը և նրանց կողմից դրանք հարգելու աստիճանը, հանցագործությունների մակարդակը, օրենսդիր իշխանության, դատարանների և ոստիկանության արդյունավետությունը: Քաղաքական կայունությունը / բռնության բացակայությունը ներառում է ցուցիչներ, որոնք չափում են պետական ինստիտուտների կայունությունը, կտրուկ փոփոխությունների, ապակայունացման և ոչ սահմանադրական ճանապարհով իշխանափոխության հավանականությունը (ներառյալ ահաբեկչությունն ու բռնության կիրառումը պետության ներսում):

- «Քաղաքական իրավունքների» և «Քաղաքացիական ազատությունների» ինդեքսները գնահատում է «Ազատության տուն» (Freedom House) կազմակերպությունը «Ազատությունն աշխարհում» (Freedom in the World) հետազոտության շրջանակում: 2018 թ. ԺՄԻ-ի հաշվարկների համար կիրառվել է «Ազատությունն աշխարհում» 2019 թ. զեկույցը (*Freedom House 2019a*), քանի որ այն ընդգրկում է 2018 թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի զարգացումները 195 երկրի և 14 տարածքի վերաբերյալ: Հաշվետվությունները կազմող և գնահատող վերլուծաբաններն օգտվում են տեղեկատվության բազմազան աղբյուրներից, այդ թվում՝ լրատվական նյութերից, ակադեմիական վերլուծություններից, հասարակական կազմակերպությունների հաշվետվություններից, փորձագետների հետ կապերից: Այսպես՝ Քաղաքական իրավունքների ցուցանիշը հիմնված է տասը կետ ունեցող հարցաշարի վրա՝ բաժանված երեք ենթակատեգորիաների՝ ընտրական գործընթաց (3 հարց), քաղաքական բազմակարծություն

և մասնակցություն (4 հարց) և Կառավարության գործառնություն (3 հարց): Քաղաքացիական ազատությունների հարցաշարը բաղկացած է տասնհինգ կետից՝ բաժանված չորս ենթակատեգորիաների՝ ինքնարտահայտման և հավատքի ազատություն (4 հարց), միավորման և կազմակերպական իրավունքներ (3 հարց), օրենքի գերակայություն (4 հարց), անձնական իրավունքներ ու ազատություններ (4 հարց): Յուրաքանչյուր հարցի տրվում է 0-4 միավոր: Քաղաքական իրավունքների առավելագույն նիշը 40 է, քաղաքացիական ազատություններինը՝ 60: Ստացված միավորներն այնուհետև վերաբաշխվում են 1-ից մինչև 7 միավորային սանդղակի շրջանակներում, որտեղ 1-ն առավելագույն ազատության նիշն է, 7-ը՝ նվազագույն. 1-ից 2,5 գնահատված երկրները «ազատ» են, 3-ից 5-ը՝ «մասնակի ազատ», 5,5-ից 7-ը՝ «անազատ» (*Freedom House 2019b*): Նշված երկու ինդեքսները մոդելում ընդգրկված են որպես մեկ փոփոխական (պարզ միջին): Մոդելում տվյալները նորմալացնելիս որպես առավելագույն արժեք է (max) ընդունվում 1-ը, նվազագույն (min)՝ 7-ը:

- «Մամուլի ազատությունը» ևս գնահատում է «Ազատության տուն» կազմակերպությունը, և վերաբերում է 199 երկրի և տարածքի մամուլի ազատության աստիճանին: «Մամուլի ազատության» վերջին հրապարակումը՝ 2017 թ. գեկույցը (*Freedom House 2017a*), ընդգրկում է 2016 թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի իրադարձությունները: Զեկույցում ներկայացված հարցումն ու գնահատականները վերաբերում են երեք ոլորտի՝ «օրենսդրական միջավայր», «քաղաքական միջավայր» և «տնտեսական միջավայր»: Այս բաղադրիչներից ստացված գնահատականների հիման վրա ձևավորվում են պետությունների վարկանիշներն ըստ «ազատ» (0-30), «մասնակի ազատ» (31-60) և «անազատ» (61-100) կատեգորիաների (*Freedom House 2017b*): Տվյալները նորմալացնելիս որպես առավելագույն արժեք է (max) ընդունվում 0-ն, նվազագույն (min)՝ 100-ը:

- «Կոռուպցիայի ընկալման ինդեքսը» գնահատում է «Թրանսփարենսի ինթերնեշնլ» (*Transparency International*) կազմակերպությունը, և վերաբերում է աշխարհի 180 երկրի հանրային ոլորտում կոռուպցիայի ընկալման մակարդակին (*Transparency International 2018a*): Այն հիմնված է փորձա-

1. Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի մեթոդաբանությունը

գետների հարցման վրա և գնահատվում է 0-100 բալանոց համակարգով, ընդ որում՝ 0-ն նշանակում է կոռուպցիայի ընկալման ամենաբարձր մակարդակը, 100-ը՝ ամենացածր: ԿԸՀ-ի տվյալները հաշվարկվում են մի շարք անկախ կազմակերպությունների (Քաղաքական և տնտեսական ռիսկերի խորհրդատվություն, «Էկոնոմիստ Ինթելիջենս Յունիթ», «Ազատության տուն», Համաշխարհային տնտեսական ֆորում, Համաշխարհային բանկ, Բերթելսմանի հիմնադրամ, «Գլոբալ Ինսայթ» համաշխարհային տնտեսական ֆորում և այլն) ներկայացրած աղբյուրների հիման վրա: Հարցման թեմաները վերաբերում են կոռուպցիային, շահերի բախմանը, հակակոռուպցիոն միջոցառումներին և ձեռքբերումներին, պետության քայլերին՝ պատժամիջոցների կիրառման և կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ: Որոշ հարցեր վերաբերում են պետական կառավարման պրակտիկայում կոռուպցիայի տարածվածության, քաղաքացիների ընկալման և ԶԼՄ-ների հաղորդագրություններում կոռուպցիայի հետ առնչություններին՝ սկսած մանր բյուրոկրատական կոռուպցիայից մինչև իշխանության բարձրագույն օղակներում կոռուպցիոն ռիսկերը (*Transparency International 2018b, 2018c*): Այս փոփոխականի կարևորությունն այն է, որ կոռուպցիայի ցուցանիշները վկայում են բյուրոկրատական համակարգի և պետական կառավարման որակի մասին: Մոդելում տվյալների նորմալացման ժամանակ որպես առավելագույն արժեք է (max) ընդունվում 100-ը, նվազագույն (min)՝ 0-ն:

- «Քաղաքական համակարգ» փոփոխականը, ըստ Ֆ. Քիֆերի (*Keefe 2012, 3-4*) կոդավորման համակարգի, բաժանվում է հետևյալ կատեգորիաների՝ խորհրդարանական (2 միավոր), խորհրդարանի կողմից ընտրված գործադիր իշխանության գլուխ (1 միավոր), նախագահական (0 միավոր): Քաղաքական համակարգերը ստանում են 0 միավոր, եթե պետության ղեկավարը ոչ ընտրովի մարմին է կամ ընտրվում է ուղղակի քաղաքացիների կամ ընտրիչների կողմից, սակայն վարչապետի պաշտոնը բացակայում է: Ընտրովի նախագահի և վարչապետի պայմաններում համակարգը համարվում է նախագահական, եթե նախագահը՝ 1. ունի վետոյի իրավունք, որը կարող է չեղյալ համարվել միայն խորհրդարանի որակյալ մեծամասնության կողմից, կամ՝ 2. նշանակում է վարչապետին և/կամ Կառավարության ան-

դամներին և 3. կարող է ազատ արձակել խորհրդարանը՝ նշանակելով նոր ընտրություններ (համակարգը նախագահական է, եթե բավարարված են 1-ին պահանջն առանձին կամ 2-րդն ու 3-րդը միասին): Քաղաքական համակարգերը, որոնցում գործադիրն ընտրվում է խորհրդարանի կողմից, խորհրդարանական են (2 միավոր), բացառությամբ երբ այդ խորհրդարանը չի կարող հեշտությամբ հետ կանչել գործադիրին, ինչի համար պահանջվում է ձայների 2/3-ը կամ խորհրդարանի ինքնալուծարում: Այդ դեպքերում համակարգը ստանում է 1 միավոր:

- «Գենդերային հավասարություն» փոփոխականը Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակվող (Համաշխարհային գենդերային բացակ, Global Gender Gap) գնահատականն է, որը վերաբերում է կանանց և տղամարդկանց միջև անհավասարության չափմանը չորս ոլորտում: Դրանք են՝ 1. տնտեսական մասնակցություն և հնարավորություն, 2. կրթության հասանելիություն, 3. քաղաքական իրավունքներ, 4. առողջություն: Գնահատման արժեքները տատանվում են 0-1 սանդղակի սահմաններում, որտեղ 1-ը նշանակում է կատարյալ հավասարություն, 0-ն՝ կատարյալ անհավասարություն (*World Economic Forum 2018*): Մոդելում տվյալների նորմալացման ժամանակ որպես առավելագույն արժեք է (max) ընդունվում 1-ը, նվազագույն (min)՝ 0-ն:

- «Սոցիալական անհանգստություններ ու քաղաքական ճնշումներ» փոփոխականը գնահատվում է 0-5 սանդղակի շրջանակում և ներառում է սահմանված ժամանակահատվածում ցույցերի, գործադուլների, սոցիալական անկարգությունների քանակը և մասնավորապես ճնշումները դրանց նկատմամբ, այդ թվում նաև՝ քաղաքական ձերբակալությունների ու սպանությունների դեպքերը: Հաշվի առնելով նման վիճակագրության բացակայությունը, հիմնվելով թերթերի, հետազոտությունների, հաշվետվությունների տեղեկատվության ուսումնասիրությունների և վերլուծության վրա՝ դրանց գնահատականը տրվում է հետազոտողների կողմից 0-5 սանդղակի շրջանակում, որտեղ 0-ն անհանգստությունների և ճնշումների առավելագույն քանակն է՝ ընդհուպ հեղաշրջումներ և հեղափոխություններ, 5-ը՝ դրանց իսպառ բացակայությունը:

1. Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի մեթոդաբանությունը

- «Խորհրդարանական մեծամասնություն» փոփոխականը հաշվարկվել է հետևյալ կերպ. 0 միավոր, եթե գործադիր իշխանության ղեկավարի կուսակցությունն ունի բացարձակ մեծամասնություն օրենսդիր իշխանության մարմնում, 1 միավոր, եթե մանդատների բաշխումը համեմատաբար հավասար է, 2 միավոր, եթե բացարձակ մեծամասնությունը պատկանում է ընդդիմությանը: Տվյալները նորմալացնելիս որպես առավելագույն արժեք է (max) ընդունվում 2-ը, նվազագույն (min)՝ 0-ն:

- «Կրոն» փոփոխականի սահմանումը հիմնված է այն հետազոտությունների վրա, որոնք հաստատում են քրիստոնեության և ժողովրդավարության սերտ փոխկապվածությունը և ոչ քրիստոնյա մշակույթների քիչ համատեղելիությունը ժողովրդավարությանը: «Կրոն» փոփոխականում առանձնանում են երկու կատեգորիա՝ «քրիստոնյա» (1 միավոր) և «ոչ քրիստոնյա» պետություններ (0 միավոր):

- Հակամարտության առկայության ազդեցությունը ժողովրդավարության վրա գնահատվել է հետևյալ կերպ՝ հակամարտության բացակայություն (2), պասիվ հակամարտության առկայություն. պետությունը կոնֆլիկտային իրավիճակում է այլ պետության/պետությունների հետ, որը, սակայն, չի ուղեկցվում ռազմական ակտիվ գործողություններով (1), ակտիվ հակամարտության առկայություն. պետությունը կոնֆլիկտային իրավիճակում է այլ պետության/պետությունների հետ, որն ուղեկցվում է ռազմական ակտիվ գործողություններով (0): Տվյալների նորմալացման ժամանակ որպես առավելագույն արժեք (max) ընդունվում է 2-ը, իսկ նվազագույն (min)՝ 0-ն:

- «Տնտեսական ազատության ինդեքսը» (Index of Economic Freedom) գնահատվում է «Հերիթեջ» (Heritage) հիմնադրամի և «Ուոլ Սթրիթ» (Wall Street Journal) օրաթերթի կողմից 0-100 միավորային սանդղակով, որտեղ 0-ից 49,9 գնահատական ստացած երկրները «տնտեսապես ճնշված» են, 50-ից 59,9-ը՝ «հիմնականում անազատ», 60-ից 69,9-ը՝ «չափավոր ազատ», 70-ից 79,9-ը՝ «հիմնականում ազատ», իսկ 80-ից 100-ը՝ «ազատ»: Այն հիմնված է 12 գործոնի վրա: Դրանք են՝ 1. սեփականության իրավունքի պաշտպանություն, 2. դատական համակարգի արդյունավետություն, 3. կառավարության ամբողջականություն, 4. հարկային բեռ, 5. Կառավարության ծախքեր, 6. հարկաբյուջետային համակարգ, 7. գործարարության

ազատություն, 8. աշխատանքային ազատություն, 9. դրամավարկային ազատություն, 10. առևտրի ազատություն, 11. ներդրումների ազատություն, 12. ֆինանսական ազատություն: 2018 թ. ԺՄԻ-ի հաշվարկների համար հիմք է ընդունվել Տնտեսական ազատության 2019 թ. ինդեքսը (*Miller, Kim and Roberts 2019*), քանի որ այն ընդգրկում է 2017 թ. հուլիսի 1-ից մինչև 2018 թ. հունիսի 30-ն ընկած ցուցանիշները: Մոդելում տվյալների նորմալացման ժամանակ որպես առավելագույն արժեք (max) ընդունվում է 100-ը, նվազագույն (min)՝ 0-ն:

- Մարդկային զարգացման համաթվի կրթության բաղադրիչը (HDI-education) հաշվարկում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը (UNDP): «Մարդկային զարգացման համաթվի» 2018 թ. զեկույցը ներառում է 189 երկրի և տարածքների վերաբերյալ 2017 թվականի տվյալները: ՄԶՀ-ն երեք առանձին ինդեքսների/բաղադրիչների (կյանքի սպասվող տևողություն, կրթություն, համախառն ազգային եկամուտ) ամփոփ գնահատականն է և համարվում է հասարակության բարեկեցության չափման կարևորագույն ցուցանիշներից մեկը: ԺՄԻ-ի մոդելում կիրառվել է միայն ՄԶՀ-ի կրթության բաղադրիչը: Վերջինս հիմնվում է երկու ցուցանիշի վրա՝ 1. ուսման միջին տարիներ (ներառում է 25 տարին լրացած անձի՝ դպրոցում և/կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ստացած կրթության միջին տարիները՝ առավելագույն 15 տարուց), 2. ուսման սպասվող տարիներ (դպրոցահասակ երեխայի ուսման տարիների այն թիվն է, որը սպասվում է, որ նա կունենա՝ ուսման առավելագույն 18 տարուց (ներառյալ մագիստրատուրայում սովորելու հնարավորությունը)) (*UNDP 2018*):

- Զինի ինդեքսը (եկամուտների կենտրոնացման գործակիցը) բնակչության եկամուտների բաշխման փաստացի ծավալի շեղումն է դրանց հավասարաչափ բաշխման գծից: Հավասարաչափ բաշխման դեպքում այն հավասար է զրոյի, բացարձակ անհավասարության պայմաններում՝ մեկի: Տվյալների նորմալացման ժամանակ որպես առավելագույն արժեք է (max) ընդունվում 0-ն, իսկ նվազագույն (min)՝ 1:

- Իրական աշխատավարձը բնութագրում է անվանական աշխատավարձի գնողունակությունը դիտարկվող ժամանակահատվածում, այսինքն՝ ապրանքների և ծառայությունների այն ծավալը, որը հնարավոր է ձեռք բե-

1. Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի մեթոդաբանությունը

րել աշխատավարձով՝ ըստ բազիսային ժամանակահատվածի գների: Միջերկրային վերլուծության ժամանակ միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում է ԱՄՆ դոլարի գնողունակության համարժեքության ցուցանիշով:

Բոլոր փոփոխականները նորմալացվում են հետևյալ բանաձևով⁵

$$X' = \frac{x_i - \min\{x_i\}}{\max\{x_i\} - \min\{x_i\}}$$

որտեղ՝ x_i -ն i -րդ բնութագրից ցուցանիշի մեծությունն է, $\min\{x_i\}$ -ն՝ i -րդ բնութագրից ցուցանիշի նվազագույն արժեքը, իսկ $\max\{x_i\}$ -ն՝ i -րդ բնութագրից ցուցանիշի առավելագույն արժեքը:

Միջերկրային վերլուծությունների ժամանակ որոշ փոփոխականների համար որպես առավելագույն և նվազագույն արժեքներ են ընդունվել աշխարհի երկրների վերջին հինգ տարվա երեք նվազագույն և երեք առավելագույն տվյալների միջինացված ցուցանիշները, իսկ մեկ երկրի դեպքում նրա տարբեր ժամանակահատվածների համապատասխան արժեքները:

Յուրաքանչյուր խմբի, այսինքն՝ Քաղաքական (P_{qT}), Տնտեսական (S_{qT}), Սոցիալական (U_{qT}), Կրթական (Y_{qT}), Առողջապահական (A_{qT}) գործոնների ինդեքսների հաշվարկն իրականացվում է ժողովրդավարության վրա ազդող գործոնների նորմալացված արժեքների պարզ և կշռված միջինների հաշվարկով՝

⁵ Բանաձևում բացասական ազդեցությամբ փոփոխականների (օրինակ՝ գնաճ) նվազագույն և առավելագույն արժեքները փոխատեղվել են, ուստի դրանց ցածր արժեքների դեպքում ստանում ենք ավելի բարձր նորմալացված արժեքներ, և հակառակը:

- $P_{q\pi} = (2 * (\text{ՔԻ} + \text{ԿԸԻ} + \text{Օր.} + \text{ՄԱ} + \text{Կայուն.} + \text{ՔՀ} + \text{ԽՄ} + \text{ՍԱ} + \text{Գեներ.}) + \text{ՀԱ} + \text{Կ}^*) / 20$
- $S_{q\pi} = (\text{ՀԱԱ} + \text{Ա} + \text{ՏՎ} + \text{ՕՈՒՆ} + \text{ՏԱԻ} + \text{Գ} + \text{ԲԴ}) / 7$
- $U_{q\pi} = (\text{ՋԻ} + \text{ԻԱ} + \text{Գործ.}) / 3$
- $Y_{q\pi} = (\text{ՄՁՀ-կրթ.} + \text{ԿԾ}) / 2$
- $A_{q\pi} = (\text{ԿՏ} + \text{ԱԾ}) / 2$

Հաշվի առնելով վերոհիշյալ հինգ խումբ փոփոխականների ազդեցությունը ժողովրդավարության մակարդակի վրա՝ առաջարկում ենք ձևակերպել այդ գործոնների աստիճանակարգությունը. ժողովրդավարության մակարդակի ինդեքսը կհաշվարկվի $P_{q\pi}$, $S_{q\pi}$, $U_{q\pi}$, $Y_{q\pi}$ և $A_{q\pi}$ կշռված միջին թվաբանականի հիման վրա⁶.

$$\text{ԺՄԻ} = (45 * P_{q\pi} + 30 * (U_{q\pi} + Y_{q\pi} + A_{q\pi}) / 3 + 25 * S_{q\pi}) / 100$$

⁶ Կշիռները սահմանվել են տրամաչափարկման միջոցով, մասնավորապես՝ չափանմուշ մի շարք երկրների (Նորվեգիա, Շվեդիա, Դանիա, Իսլանդիա) ժողովրդավարության մակարդակի ինդեքսի հաշվարկման և դրանցում ենթաինդեքսների գործակիցների որոշման, ինչպես նաև ժողովրդավարության տեսական դրույթների և առկա մոդելների ուսումնասիրությունների հիման վրա: Նոր ուսումնասիրություններից ելնելով՝ կշիռները ճշգրտվել են:

1. Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի մեթոդաբանությունը

ԺՄԻ-ի այս բանաձևի համաձայն՝ ժողովրդավարության վրա առավելագույն ազդեցությունն ունեն քաղաքական, այնուհետև՝ սոցիալական (ներառելով նաև կրթական ու առողջապահական բաղադրիչները) և տնտեսական գործոնները:

Մոդելի առանձնահատկություններից է նաև այն, որ ռեգրեսիոն վերլուծության միջոցով հնարավոր է վեր հանել, թե նշված գործոնների ինդեքսներում որ փոփոխականներն են առավել ազդեցիկ, և ինչպես են դրանք անդրադառնում դիտարկվող պետությունների ժողովրդավարական փոխակերպումների վրա:

Այսպիսով՝ ԺՄԻ-ն կազմված է՝

- պաշտոնական վիճակագրությունից,
- մշակված նոր փոփոխականներից,
- միջազգային հեղինակավոր գործող կազմակերպությունների ցուցանիշներից:

Առաջարկվող մոդելը հնարավորություն է տալիս՝

1. վերլուծելու և համեմատելու պետության ժողովրդավարության մակարդակը տարբեր ժամանակահատվածներում,

2. համեմատելու երկու և ավելի պետություններ ըստ ժողովրդավարության մակարդակի՝ դասակարգելով դրանք համապատասխան սանդղակի սահմաններում,

3. վեր հանելու այն գործոնները, որոնք առավել բացասական կամ դրական ազդեցություն են ունենում տվյալ երկրի ժողովրդավարության վրա՝ բացահայտելով՝ որ ոլորտում պետք է ուշադրություն դարձնել իրավիճակը բարելավելու համար:

Գրականության ցանկ

- **Almond, Gabriel A., and Verba, Sidney** (1963) *The Civic Culture: Political Attitudes and Democracy in Five Nations*. Princeton.
- **Barro, Robert J.** (1999) “The Determinants of Democracy.” *Journal of Political Economy* 107:158-183.
- **Dahl, Robert A.** (1985) *A Preface to Economic Democracy*. University of California Press.

- **Freedom House** (2017a) “Freedom of the Press 2017. Press Freedom’s Dark Horizon”. Accessed July 18, 2019. https://freedomhouse.org/sites/default/files/FOTP_2017_booklet_FINAL_April28.pdf.
- **Freedom House** (2017b) “Freedom of the Press 2017 Methodology”. Accessed July 18, 2019. <https://freedomhouse.org/report/freedom-press-2017-methodology>.
- **Freedom House** (2019a) “Freedom in the World 2019. Democracy in Retreat.” Accessed July 10, 2019. https://freedomhouse.org/sites/default/files/Feb2019_FH_FITW_2019_Report_ForWeb-compressed.pdf.
- **Freedom House** (2019b) “Freedom in the World 2019. Methodology 2019.” Accessed July 10, 2019. <https://freedomhouse.org/report/methodology-freedom-world-2019>.
- **Huntington, Samuel P.** (1991) *The Third Wave. Democratization in the Late Twentieth Century.* University of Oklahoma Press.
- **Kaufmann, Daniel, Kraay, Aart, and Mastruzzi, Massimo** (2010) “The Worldwide Governance Indicators: Methodology and Analytical Issues.” World Bank Policy Research Working Paper 5430. Washington, D.C.
- **Keefer, Philip** (2012) “Database of Political Institutions: Changes and Variable Definitions.” The World Bank, December 2012. Accessed June 10, 2019. http://siteresources.worldbank.org/INTRES/Resources/469232-1107449512766/-DPI2012_Codebook2.pdf.
- **Lijphart, Arend** (1968) *The Politics of Accommodation: Pluralism and Democracy in the Netherlands.* Berkeley: University of California Press.
- **Lipset, Seymour M.** (1959) “Some Social Requisites of Democracy: Economic Development and Political Legitimacy.” *American Political Science Review* 53(1): 69-105.
- **Miller, Terry, Anthony Kim, James Roberts** (2019) “2019 Index of Economic Freedom,” 25th Anniversary Edition. The Heritage Foundation. Accessed July 15, 2019. https://www.heritage.org/index/pdf/2019/book/index_2019.pdf.
- **Siegle, Joseph T., Weinstein, Michael M. and Halperin, Morton H.** (2004) “Why Democracies Excel.” *Foreign Affairs* 83(5): 57-71.
- **Transparency International** (2018a) “Corruption Perceptions Index 2018.” Accessed July 18, 2019. <https://www.transparency.org/cpi2018>.
- **Transparency International** (2018b) “Corruption Perceptions Index 2018: Technical Methodology Note.” Accessed July 18, 2019. <https://www.transparency.org/cpi2018>.
- **Transparency International** (2018c) “Corruption Perceptions Index 2018: Full Source Description.” Accessed July 18, 2019. <https://www.transparency.org/cpi2018>.
- **UNDP** (2018) “Human Development Indices and Indicators: 2018 Statistical Update” New York. Accessed July 20, 2019. http://hdr.undp.org/sites/default/files/2018_human_development_statistical_update.pdf.

1. Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի մեթոդաբանությունը

- **Vanhanen, Tatu** (2003) *Democratization: A Comparative Analysis of 170 Countries*. London and New York, Routledge.
- **World Economic Forum** (2018) “The Global Gender Gap Report 2018.” World Economic Forum, Geneva. Accessed June 15, 2019. http://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2018.pdf.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՆՍՈԼԻԴԱՑՈՒՄ, ԹԵ՛ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԱՑՈՒՄ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

2018 թ. Հայաստանում նշանավորվեց շրջադարձային փոփոխություններով: «Թավշյա հեղափոխությունը», դրան հաջորդած քաղաքային իշխանությունների, այնուհետև ՀՀ ԱԺ ընտրությունները ձևավորեցին քաղաքական նոր ուժ և նոր իրողություններ: Համազգային ոգևորությունն ու էյֆորիան հասարակության մի մասի մոտ հետզհետե անկում ապրեցին՝ բաժանարար գծեր անցկացնելով դրա անդամների միջև: Շրջադարձային այս պայմաններում կարևոր հարցադրումներից է այն, թե կարող ենք արդյոք արձանագրել, որ Հայաստանում տեղի է ունեցել ժողովրդավարության մակարդակի իրական աճ: Քանի որ հետհեղափոխական միջավայրն իր մեջ խտացրել է հակասությունների և հակադրությունների մի ամբողջ շղթա. մի կողմից՝ լեգիտիմ ընտրված քաղաքական իշխանություն, սակայն մյուս կողմից՝ հասարակության պառակտում և անհանդուրժողականության խիստ դրսևորումներ, մի կողմից՝ բարեփոխումներ իրականացնելու քաղաքական կամք, մյուս կողմից՝ իշխանությունների տարանջատման սկզբունքի և ժողովրդավարական այլ նորմերի խախտում: Նման հակասական դրսևորումները վկայում են, որ Հայաստանը մուտք է գործել անցումային մի շրջափուլ, որտեղ քաղաքական համակարգն ավելի զգայուն է ընկալում իշխանությունների թե՛ ձեռքբերումները և թե՛ ձախողումները, որն ավելի է մեծացնում հետընթացի հավանականությունը:

2. Հայաստանի նոր իրողությունները. ժողովրդավարության կոնսոլիդացում, թե՞ ինստիտուցիոնալացում

Աղյուսակ 1

Հայաստանի Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական, Կրթական ու Առողջապահական գործոնների և ժողովրդավարության մակարդակի ինդեքսները (2000-2018 թթ.)*


Տարեթիվ	Ք _{ԳԻ}	Տ _{ԳԻ}	Ս _{ԳԻ}	Կ _{ԳԻ}	Ա _{ԳԻ}	ԺՄԻ
2000	0,430	0,449	0,453	0,394	0,398	0,430
2001	0,436	0,419	0,463	0,370	0,405	0,424
2002	0,458	0,489	0,495	0,351	0,370	0,449
2003	0,454	0,541	0,509	0,352	0,367	0,462
2004	0,434	0,550	0,541	0,374	0,473	0,474
2005	0,451	0,542	0,588	0,394	0,428	0,481
2006	0,441	0,541	0,615	0,402	0,363	0,473
2007	0,432	0,562	0,672	0,429	0,361	0,484
2008	0,385	0,623	0,734	0,441	0,325	0,484
2009	0,428	0,502	0,715	0,491	0,338	0,475
2010	0,433	0,563	0,710	0,455	0,363	0,492
2011	0,432	0,662	0,723	0,449	0,329	0,514
2012	0,400	0,715	0,731	0,428	0,450	0,526
2013	0,390	0,705	0,793	0,422	0,525	0,533
2014	0,406	0,721	0,817	0,399	0,604	0,553
2015	0,378	0,608	0,792	0,435	0,602	0,513
2016	0,341	0,644	0,804	0,434	0,595	0,508
2017	0,397	0,705	0,816	0,430	0,625	0,551
2018	0,482	0,798	0,802	0,430	0,641	0,610

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

Ք_{ԳԻ}-ի, Տ_{ԳԻ}-ի, Ս_{ԳԻ}-ի, Կ_{ԳԻ}-ի, Ա_{ԳԻ}-ի և հետևաբար դրանց հիման վրա հաշվարկված ԺՄԻ-ի որոշ տարիների արժեքները, հնարավոր է, աննշան տարբերվեն նախորդ հրապարակման համապատասխան տարիների արժեքներից՝ թարմացված և նոր տվյալների ներմուծմամբ պայմանավորված նվազագույն և առավելագույն արժեքների փոփոխման հետևանքով:

2.1 Հայաստանի՝ ժողովրդավարության անցման ժամանակակից մարտահրավերները

Գծապատկեր 1
Հայաստանի Քաղաքական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)^{*}



Ժողովրդավարության մակարդակի Քաղաքական գործոնների ինդեքսի (Ք_{ԳԻ}) միտումների ուսումնասիրության համաձայն՝ 2016 թ. անկումից հետո, որը մեծամասամբ պայմանավորված էր քաղաքական կայունության անկմամբ, 2017 և 2018 թթ. դիտարկվում է անընդմեջ աճ: Միևնույն ժամանակ, 2018 թ. գրանցվում է դիտարկվող ժամանակահատվածի ամենաբարձր ցուցանիշը (տե՛ս Աղյուսակ 1, Գծապատկեր 1):

Ստացված արդյունքներն ու ժՄԻ-ի համալիր վերլուծությունը առաջադրում են մի շարք հարցադրումներ. որքանո՞վ են ժողովրդավարական հետխորհրդային տարածքի և մասնավորապես Հայաստանի 2018 թ. հեղափոխությունները, արդյո՞ք դրանք կձևավորեն ժողովրդավարական հասարակարգ, և որքանո՞վ է հնարավոր հետընթացի գործընթացը:

^{*} Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

2. Հայաստանի նոր իրողությունները. ժողովրդավարության կոնսոլիդացում, թե՛ ինստիտուցիոնալացում

Ուսումնասիրելով ժողովրդավարության հետընթացի գործընթացները՝ Ս. Հանթինգթոնը (*Хантингтон 2003, 310-311*) առանձնացնում է մի շարք գործոններ, որոնցից են.

- ժողովրդավարական արժեքների ոչ բավարար արմատավորումը էլիտայի և հասարակության լայն շերտերի շրջանում,
- սոցիալական բախումների բերող տնտեսական ճգնաժամը,
- ահաբեկչության և ապստամբ շարժումների հետևանքով օրենքների ու կարգուկանոնի վերացումը:

Այս գործոնները արդիական են նաև Հայաստանի համար:

Ժողովրդավարության անցման գործընթացը միջանկյալ շրջափուլ է, որում առավելապես կարևորվում է անցման ձևերի և ձևաչափերի բազմազանությունը, որից և կախված են ժողովրդավարության թե՛ հետընթացի և թե՛ համախմբման հնարավորություններն ու հավանականությունը: Այս պարագայում կարևոր է ժողովրդավարության համախմբման գործընթացը տարբերակել դրա ինստիտուցիոնալացման կամ կայունացման փուլերից⁷: Ժողովրդավարության կայունության մասին կարելի է խոսել միայն որոշ ժամանակ անց, ընդ որում այն կարող է ի հայտ գալ որևէ կուսակցության կամ առաջնորդի գերիշխանության պարագայում, երբ այդ ուժը թուլացրել է իշխանության համար պայքարող մյուս մասնակիցներին: Ինստիտուցիոնալացումը ևս նույնական չէ ժողովրդավարության համախմբմանը, քանի որ ձևավորված քաղաքական ինստիտուտները կամ ընդունված օրենքները կարող են քողարկել երևույթների իրական նշանակությունը: Երբ հասարակությունը գործող իշխանություններից պահանջում է արագ փոփոխություններ և ապագայի վերաբերյալ հստակություն, իրականում նա սատարում է իշխանության ավտորիտար տեսակին: Եվ հակառակը, երբ իշխանությունները գիտակցաբար ձեռնպահ են մնում անհիմն խոստումներից, իսկ հասարակությանը բավարարում է նման բաց քաղաքականությունը, ուրեմն նա


⁷ Ժողովրդավարության համախմբման հիմնահարցերը ուսումնասիրել են Գ. Օ'Դոննելը (*O'Donnell, Schmitter 1986*), Ֆ. Շմիտերը (*Schmitter 1992, Шмиттер 1996*), Խ. Լինցը ու Ա. Ստեփանը (*Linz & Stepan 1996a, 1996b*), Լ. Դայմոնդը (*Даймонд 1999*), Ս. Հանթինգթոնը (*Хантингтон 2003*), Լ. Սմորգունովը (*Сморгунов 1999*), Ա. Մելվիլը (*Мельвиль 1999*) և այլք:

հասունացել է ժողովրդավարության համար: Այս իրավիճակը Ադամ Պշևորսկին բնութագրում է որպես ընթացակարգերի որոշակիության պայմաններում արդյունքների անորոշություն: Ժողովրդավարության հաստատումը, ըստ նրա, անորոշության ինստիտուցիոնալացման գործընթաց է, որտեղ որևէ ուժ իրավասու չէ վերահսկելու գործընթացները և ազդելու դեպքերի ու արդյունքների վրա (*Баранов 2016, Przeworski 1988, 1986, 58*):

Պշևորսկու այս ձևակերպումները մի կողմից կարծես լեզվացնում են Հայաստանում տեղի ունեցած թավշյա հեղափոխությունը և որպես «անորոշության արդյունք» այն դարձնում բուն ժողովրդավարական գործընթաց, սակայն մյուս կողմից մատնանշում են հետհեղափոխական գործընթացի բացերը, և որ հասարակությունը իրականում այդքան էլ պատրաստ չէ ընկալելու ժողովրդավարական արժեքների ողջ սպեկտորը: Հետհեղափոխական հասարակությունն այսօր ավելի, քան երբևէ ձգտում է որոշակիության, որը լիովին «կերակրվում» է իշխանությունների խոստումներով և պուպիլիզմով:

Այսպես, իր բոլոր դրական և բացասական կողմերով հանդերձ՝ Հայաստանն անցում կատարեց մի նոր շրջափուլի: Այս գործընթացի կարևոր փոփոխություններից էին, անշուշտ, ընտրական ոլորտում դրական զարգացումները, ինչը շատ բնորոշ է հետհեղափոխական շրջանին, քանի որ իշխանության եկած ուժերն այդ փուլում օգտվում են իրենց նկատմամբ հանրային բարձր վստահությունից և լեգիտիմությունից: Ընտրական գործընթացներում դրական զարգացումների վերաբերյալ գնահատականներ են տվել նաև միջազգային համապատասխան կառույցները (*OSCE/ODIHR 2018*): Այդուհանդերձ, այս ոլորտում հիմնարար առաջընթացի մասին հնարավոր կլինի խոսել միայն հաջորդ տարիների ընտրություններին, երբ դրանք կընթանան էմոցիոնալ և մրցակցային առավել առողջ պայմաններում:

ՀՀ ընտրակարգը (1990-2018 թթ.)⁸



Ընտրությունների արդյունքները վերլուծելիս նախ և առաջն նշենք, որ դեռևս 2016 թ. հունիսի 1-ից ուժի մեջ մտավ ընտրական նոր օրենսգիրքը⁹, որը համապատասխանեցվել էր 2015 թ. հանրաքվեով¹⁰ ընդունված սահմանադրական փոփոխություններին (*ՀՀ Սահմանադրություն, Գլուխ 16, Հոդ-*

⁸ Տվյալների աղբյուր են՝ «ՀՀ Սահմանադրական օրենք», 5-րդ հոդված (ընդունվել է 27.03.1995 թ.), «ՀՀ օրենքը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 55-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր (ընդունվել է 03.07.2002 թ.), «ՀՀ օրենքը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»՝ 57-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր (ընդունվել է 19.05.2005 թ.), «ՀՀ Սահմանադրություն 2015 թ. փոփոխություններով», Հոդված 89, ՀՀ ընտրական օրենսգիրք ընդունվել է 2016 թվականի մայիսի 25-ին:

⁹ ՀՀ ընտրական օրենսգիրք (Սահմանադրական օրենք), ընդունվել է 2016 թվականի մայիսի 25-ին:

¹⁰ Տե՛ս ՀՀ ԿԸՀ-ի պաշտոնական կայք՝ <https://www.elections.am/parliamentary/> (20.06.2019):

ված 210): Հիմնական փոփոխություններից ուշագրավ էր խորհրդարանում պատգամավորների թվաքանակի սահմանումը՝ առնվազն 101 պատգամավոր (ՀՀ Սահմանադրություն, Հոդված 89, ՀՀ ընտրական օրենսգիրք, Հոդված 76): Ըստ այդմ, 2017 թ. խորհրդարանական ընտրություններից հետո խորհրդարանն ունեցավ 105, իսկ արդեն՝ 2018 թ.՝ 132 պատգամավորներ: Տեղին է նշել նաև, որ նախկինում գործող 41 մեծամասնական և 90 համամասնական պատգամավորական տեղերի հարաբերակցությամբ խառը ընտրակարգից այդ փոփոխություններով անցում կատարվեց ամբողջապես համամասնական ընտրակարգի՝ 1 համապետական և 13 տարածքային ընտրացուցակներով (ՀՀ ընտրական օրենսգիրք, Հոդված 77, 78) (տե՛ս Գծապատկեր 2):

Համեմատական վերլուծություն անցկացնելով 2017 թ. հերթական և 2018 թ. արտահերթ խորհրդարանական ընտրությունների միջև՝ կարող ենք փաստել, որ մեկ տարվա տարբերությամբ խորհրդարանն ունեցավ քաղաքական ուժերի լրիվ նոր բաշխում և ներկայացվածություն: Մասնավորապես ՀՀԿ-ն, որը, սկսած առաջին գումարման Ազգային ժողովի ընտրություններից (1995 և 1999 թթ. մասնակցել է դաշինքով), մշտապես ներկայացված է եղել խորհրդարանում, իսկ 2017 թ. խորհրդարանական մեծամասնություն էր, արդեն 2018 թ. չկարողացավ հաղթահարել 5%-ի շեմը: Անցողիկ նվազագույն շեմը չհաղթահարեց նաև ՀՅԴ-ն, որը նույնպես մշտական ներկայացվածություն է ունեցել նորանկախ Հայաստանի խորհրդարաններում: Իսկ ահա «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը*, որը 2017 թ. խորհրդարանական ընտրություններին մասնակցեց «Ելք» դաշինքի** կազմում՝ ստանալով նվազագույն թվով մանդատներ, արդեն հաջորդ տարվա արտահերթ ընտրություններին «Իմ քայլը» դաշինքով խորհրդարանում ձեռք բերեց որակյալ մեծամասնություն (տե՛ս Աղյուսակ 2):

* Վարչապետ Նիկոլ Փաշինյանը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության անդամ է:

** 2017 թ. մայիսից՝ Նիկոլ Փաշինյանը եղել է «ԵԼՔ» խորհրդարանական խմբակցության ղեկավար:

ՀՀ Ազգային ժողովի 2017 և 2018 թթ. ընտրությունների արդյունքները¹¹

Կուսակցություններ, դաշինքներ, մասնակիցներ	ՀՀ Ազգային ժողովի ընտրություններ			
	2017		2018	
	ձայների %	պատգամ. մանդատներ	ձայների %	պատգամ. մանդատներ
ՀՀԿ	49,15	58*	4,7	-
«Ծառուկյան» դաշինք ¹²	27,36	31**	-	-
«Ելք» դաշինք ¹³	7,79	9	-	-
ՀՅԴ	6,57	7	3,9	-
«Իմ քայլը» դաշինք ¹⁴	-	-	70,4	88***
«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	-	-	6,4	18
«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	-	-	8,3	26
Ընդամենը		105		132

Հայաստանի քաղաքական դաշտում տեղի ունեցած այս փոփոխությունների առիթ դարձավ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի որոշումը՝ իր պաշտոնավարման երկրորդ ժամկետի ավարտից հետո առաջադրել թեկնածությունը վարչապետի պաշտոնում¹⁵. դա ժողովրդական բողոքի մեծ ալիք

¹¹ Տվյալների աղբյուրը տե՛ս ՀՀ ԿԸՀ պաշտոնական կայք <http://www.elections.am/electionsview/>, ԵԱՀԿ-ի վերջնական հաշվետվությունները ՀՀ ընտրությունների վերաբերյալ <http://www.osce.org/odihr/elections/armenia> (վերջին մուտքը՝ 21.06.2019):

* Այդ թվում ազգային փոքրամասնությունների 3 ներկայացուցիչ՝ եզդի, ասորի, քուրդ:

¹² «Ծառուկյան դաշինքում» ընդգրկվել են ԲՀԿ-ն, «Այլանս» և «Առաքելություն» կուսակցությունները:

** Այդ թվում ազգային փոքրամասնությունների 1 ներկայացուցիչ՝ ռուս:

¹³ «Ելք» դաշինքում ընդգրկվել են «Լուսավոր Հայաստան», «Հանրապետություն» և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունները:


¹⁴ «Իմ քայլը» դաշինքում ընդգրկվել են «Քաղաքացիական պայմանագիր» և «Առաքելություն» կուսակցությունները:

*** Այդ թվում ազգային փոքրամասնությունների 4 ներկայացուցիչ՝ եզդի, ասորի, քուրդ և ռուս:

¹⁵ 2015 թ. սահմանադրական փոփոխություններից հետո, որով Հայաստանը նախագահական կառավարման ձևից պետք է փոխ առ փոխ անցում կատարեր

առաջացրեց, որն էլ ի վերջո հանգեցրեց վարչապետի հրաժարականին*։ Ավելի ուշ, քաղաքացիական անհնազանդությունների ճնշման ներքո (Атанесян 2018) խորհրդարանը վարչապետ ընտրեց հեղափոխության առաջնորդ Նիկոլ Փաշինյանին։ Ինչ վերաբերում է պատճառներին, ապա դրանք շատ ավելի խորքային էին։ Դրանցից առավել նշանակալի հանրային վստահության անկումն ու խորը հիասթափությունն էր։

Գծապատկեր 3
Հանրային վստահությունը ՀՀ ԱԺ և ՀՀ Նախագահի նկատմամբ
2008-2017 թթ. (%)¹⁶



խորհրդարանականի, վարչապետը դառնում էր գործադիր իշխանության փաստացի ղեկավար։

* 2018 թ. ապրիլի 23-ին քաղաքացիական անհնազանդությունների ճնշման ներքո Սերժ Սարգսյանը վարչապետի պաշտոնը ստանձնելու 6-րդ օրը հարժարական տվեց։

¹⁶ Տվյալների աղբյուրը՝ ՀՌԿԿ-Հայաստանի առցանց տվյալների վերլուծության բազա, Կովկասյան բարոմետրի տարածաշրջանային կայք՝ <https://www.caucasus-barometer.org/en/> (20.07.2019)։

2. Հայաստանի նոր իրողությունները. Ժողովրդավարության կոնսոլիդացում, թե՛ ինստիտուցիոնալացում

Գծապատկեր 3-ում ներկայացված են ՀՀ Ազգային Ժողովի և ՀՀ Նախագահի նկատմամբ հանրության վստահության ցուցանիշները 2008-2017 թթ.-ին, որում հստակ նկատելի է վստահության նվազման դինամիկան: Ընդ որում, եթե 2008 թ.-ին խորհրդարանի հանդեպ վստահություն ուներ հասարակության 26%-ը, իսկ 2017 թ.՝ 12%-ը, ապա նույնը չի կարելի ասել նախագահի մասին: Քանի որ դիտարկվող ժամանակահատվածի սկզբին՝ 2008 թ.-ին, նախագահը վայելում էր հասարակության 53%-ի վստահությունը, իսկ չվստահողների ցուցանիշը 30% էր, ապա արդեն 2017 թ. իրավիճակը կտրուկ փոխվել է, և այդ տվյալները համապատասխանաբար կազմել են 17% և 65%: Ուշագրավ է, որ միաժամանակ և՛ օրենսդիր մարմնի, և՛ գործադիր իշխանության ղեկավարի նկատմամբ անվստահության ցուցանիշի կտրուկ՝ 15-16% աճ է նկատվում 2012-2013 թթ.: Բոլոր դեպքերում հեղափոխությունից արդեն մեկ տարի առաջ և՛ նախագահը, և՛ խորհրդարանն ունեին անվստահության հավասարապես բարձր ցուցանիշներ:

Մարդու իրավունքներն ու ազատությունները: Հայաստանում մարդու իրավունքների մտահոգիչ խնդիրներից շարունակում են մնալ խոշտանգման և բռնության դեպքերն ու վատ պայմանները կալանավայրերում, կամայական և ուղղորդված ձերբակալություններն ու կալանքը, ոստիկանների ոչ իրավաչափ գործողությունները հավաքների մասնակիցների և լրագրողների նկատմամբ, կանանց քաղաքական ցածր մասնակցությունը, զինված ուժերում ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերը, կոռուպցիոն երևույթները, ընտանեկան բռնությունը, անհանդուրժողական վերաբերմունքը սեռական փոքրամասնությունների նկատմամբ (*ՀՀ ՄԻՊ 2019, U.S. Department of State 2019, Human Rights Watch 2019, Freedom House 2019, Amnesty International Report 2018*):

2018 թ. իրադարձությունները անմիջականորեն կապված էին նաև մարդու իրավունքների ոլորտում տեղի ունեցած փոփոխությունների և զարգացումների հետ: Ազգային և միջազգային տարբեր իրավապաշտպան կառույցներն իրենց զեկույցներում (*ՀՀ ՄԻՊ 2019, U.S. Department of State 2019, Human Rights Watch 2019, Freedom House 2019*) արձանագրեցին զգալի առաջընթաց մարդու իրավունքների ոլորտում: Մասնավորապես նշանակալի է քաղաքացիների ակտիվության աճը հասարակական կյանքի

տարբեր բնագավառներում որոշումների ընդունման գործընթացներին մասնակցության, նրանց կամքի և խոսքի ազատ արտահայտման ու իրացման առումով: Այնուամենայնիվ պետք է նաև արձանագրել ատելության խոսքի տարածման, այլակարծության նկատմամբ անհանդուրժողականության աճի փաստը (*ՀՀ ՄԻՊ 2019, 14, 258*), որի հետևանքով հետհեղափոխական Հայաստանում առավել խիստ դրսևորվեց հասարակության բաժանումը իշխանամետների և ընդդիմադիրների, «նորերի և նախկինների»:

Թեև զանգվածային լրատվության միջոցների գործունեության ազատությունը ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ (*Հոդված 42*), այնուամենայնիվ գործնականում հայաստանյան լրատվական դաշտում առկա են խնդիրներ տեղեկատվության օբյեկտիվ լուսաբանման, բազմակարծության, հանդուրժողականության, լրագրողների արհեստավարժության ու բարեվարքության, ինչպես նաև լրատվամիջոցների նկատմամբ ճնշումների գործադրման առումով: Այսպես, օրինակ՝ 2018 թ. սեպտեմբերին ՀՀ ոստիկանության և ՀՀ քննչական կոմիտեի ծառայողները խուզարկության ենթարկեցին ընդդիմադիր «Yerevan.Today» լրատվական կայքի խմբագրության գրասենյակը (*Yerevan.Today 2018, ՀՀ ՄԻՊ 2019, 326-329*): Մեկ այլ դեպք վերաբերում է նախընտրական քարոզարշավի ընթացքում «News.am» լրատվական կայքում տեղադրված հոդվածին, որի կապակցությամբ խմբագրություն էին այցելել ՀՀ ոստիկանությունից՝ պահանջելով տրամադրել հրապարակված նյութի բովանդակությունը հաստատող ապացույցներ (*ՀՀ ՄԻՊ 2019, 328*):

Մամուլի ազատության մասին խոսելիս տեղին է նշել, որ հեռարձակվող և տպագիր լրատվամիջոցների համեմատ, առցանց լրատվամիջոցներն ու սոցիալական ցանցերը որոշ չափով ապահովում են քաղաքական բազմակարծությունը, իսկ ուղիղ հեռարձակումը քաղաքական իրադարձությունների լուսաբանման կարևոր գործիք է դարձել: Միևնույն ժամանակ հեղափոխությունից հետո նկատվել է կեղծ օգտատերերի և դրանց կողմից մանիպուլյացիոն փորձերի կտրուկ ավելացում (*U.S. Department of State 2019, 17-18, Freedom House 2019*):

2. Հայաստանի նոր իրողությունները. ժողովրդավարության կոնսոլիդացում, թե՛ ինստիտուցիոնալացում

«Ազատության տան»* (Freedom House) Մամուլի ազատության 2017 թ. զեկույցի (ընդգրկում է 2016 թ. իրադարձությունները) համաձայն՝ Հայաստանի մամուլն անազատ է: Դիտարկվող 199 պետությունների և տարածքների ցանկում Հայաստանը զբաղեցրել է 137-րդ տեղը: Եվրասիական տարածաշրջանի երկրների շրջանում Հայաստանը 4-րդ տեղում է՝ զիջելով Վրաստանին, Ուկրաինային և Մոլդովային (Freedom House 2017a, 26): Մամուլի ազատության Հայաստանի գնահատականը (63), սակայն, չի փոփոխվել նախորդ տարվա համեմատ. այն օրենսդրական, քաղաքական ու տնտեսական միջավայրերում ստացել է համապատասխանաբար 20, 23, 20 միավորներ (Freedom House 2017b)**: Կազմակերպության փորձագետների այս գնահատականները հիմնավորվում են լրագրողների նկատմամբ ճնշումների առկայությամբ, լրատվամիջոցների անկախությունը սահմանափակող գործողություններով և մի շարք այլ խնդիրներով***:

«Ազատության տան» «Ազատությունն աշխարհում» զեկույցի (Freedom House 2019) համաձայն՝ Հայաստանում քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ոլորտները «մասնակի ազատ» են¹⁷: Հատկանշական է, որ նախորդ տարվա համեմատ 2018 թ.-ին Հայաստանը գրանցել է առաջընթաց՝ բարելավելով քաղաքական իրավունքների ոլորտին տրված գնահատականը մեկ միավորով, որի շնորհիվ Քաղաքական իրավունքների (4) և քաղաքացիական ազատությունների (4) ինդեքսի գու-

* «Ազատության տան» Մամուլի ազատության և Քաղաքական իրավունքների ու Քաղաքացիական ազատությունների ինդեքսներն ընդգրկված են ԺՄԻ-ի մոդելում որպես Ք_{ԳԻ}-ի փոփոխականներ:

** «Ազատության տան» Մամուլի ազատության ինդեքսը գնահատվում է 100-ից մինչև 0 միավորային սանդղակով, որտեղ 0-ից 30 գնահատական ստացած երկրները «ազատ» են, 31-ից 60-ը՝ «մասնակի ազատ», իսկ 61-ից 100-ը՝ «անազատ»:

*** Տե՛ս «Ազատության տան» պաշտոնական կայք՝ <https://freedomhouse.org/report/freedom-press/2017/armenia> (20.07.2019):

¹⁷ «Ազատության տան» Քաղաքական իրավունքների և Քաղաքացիական ազատությունների ինդեքսը գնահատվում է 1-ից մինչև 7 միավորային սանդղակով, որտեղ 1-ից 2,5 գնահատական ստացած երկրներն «ազատ» են, 3-ից 5-ը՝ «մասնակի ազատ», 5,5-ից 7-ը՝ «անազատ»:

մարային գնահատականում այն ստացավ 4 միավոր՝ կրկնելով 2003 թ. գրանցած վերջին լավագույն արդյունքը¹⁸:

Միևնույն ժամանակ կանանց իրավունքների առումով պետք է նշել, որ Հայաստանում նրանք ունեն ցածր ներգրավվածություն հասարակական և մասնավորապես քաղաքական գործընթացներում: Այսպես, օրինակ՝ Ազգային ժողովի 2018 թ. արտահերթ ընտրությունների արդյունքներով պատգամավորական մանդատ ստացած 132 ներկայացուցիչներից 32-ն են կին: Նույն թվականին կին նախարարների թիվը եղել է 2, իսկ կին դատավորների քանակը՝ 26%: Նման ցուցանիշ է արձանագրվել նաև Երևանի ավագանու կազմում. 65 անդամներից 18-ը կամ 27,6%-ը ևս կանայք են: Ավելին, 2018 թվականի հունիսի դրությամբ բարձրագույն պաշտոնի խմբի 103 քաղաքացիական ծառայողներից կին են ընդամենը 15, գլխավոր պաշտոնի խմբի 3221 ծառայողներից՝ 1582-ը, իսկ առաջատար և կրտսեր պաշտոնի խմբի 2189 և 860 ծառայողներից կին են 1319-ը և 612-ը (*«ՄԻՊ 2019, 566-567, WomenNet.am 2019»*): Վիճակագրական այս պատկերից պարզ է դառնում, որ ստորին պաշտոններում կանանց տեսակարար կշիռը հետզհետե մեծանում է:

ԲԳԻ-ի ենթաինդեքսի՝ ՀԳԲԻ-ի (Համաշխարհային տնտեսական ֆորումի Համաշխարհային գենդերային բացակի ինդեքս, Global Gender Gap) 2018 թ. ցուցանիշի համաձայն՝ 149 պետությունների շարքում Հայաստանը 98-րդ տեղում է: Հատկանշական է, որ վերջին երեք տարում Հայաստանի գենդերային հավասարության ցուցանիշը տարեցտարի բարելավվել է՝ մոտենալով 0,678 միավորի (տե՛ս Աղյուսակ 3): Ըստ այդ տվյալների՝ ՀԳԲԻ-ի «տնտեսական մասնակցության և հնարավորությունների» ենթաինդեքսով Հայաստանը 2018 թ.-ին 149 երկրների շարքում զբաղեցրել է 73-րդ տեղը՝ ստանալով 0,675 միավոր և նվազեցնելով արդյունքը նախորդ տարիների համեմատ: Իսկ վերջինիս նկատմամբ դիրքային և միավորային զգալի տարբերությամբ Հայաստանը «կրթական մակարդակով» 27-րդ տեղում է՝ ստանալով առավելագույն 1 միավորը: Ավելին, եթե տղամարդկանց 46,1%-ն ունի բարձրագույն կրթություն, ապա կանանց ցուցանիշն այդ ոլորտում 58,7% է:

¹⁸ Տե՛ս «Ազատության տան» պաշտոնական կայք՝ <https://freedomhouse.org/report-types/freedom-world> (16.06.2019):

2. Հայաստանի նոր իրողությունները. Ժողովրդավարության կոնսոլիդացում, թե՛ ինստիտուցիոնալացում

«Առողջության և գոյատևման» ենթահինդեքսով Հայաստանը 148-րդ տեղում է, իսկ «քաղաքական հնարավորությունների հզորացում» ոլորտում՝ 115-րդ: Այսպես, ՀԳԲԻ-ում լավագույն արդյունքները գրանցվել են կրթական մակարդակում, իսկ ակա քաղաքականության և առողջապահության ոլորտները առավել խոցելի են (*World Economic Forum 2018, Part 1: 11, 13-14, 21-22, Part 2: 9-10, WomenNet.am 2019*):

Աղյուսակ 3

2016-2018 թթ. Հայաստանի Համաշխարհային գենդերային բացակի ինդեքս¹⁹

ՀԳԲԻ ենթահինդեքս	2016		2017		2018	
	վարկանիշ	միավոր	վարկանիշ	միավոր	վարկանիշ	միավոր
Տնտեսական մասնակցություն և հնարավորություն	69	0,671	71	0,671	73	0,675
Կրթական մակարդակ	27	1,000	42	0,999	35	1,000
Առողջություն և գոյատևում	143	0,939	143	0,939	148	0,939
Քաղաքական հնարավորությունների հզորացում	125	0,068	111	0,099	115	0,099
ՀԳԲԻ	102/144	0,669	97/144	0,677	98/149	0,678

Կանանց նկատմամբ խտրականության առավել հաճախակի հանդիպող ձևերից է գենդերային բռնությունը (*Crowell & Burgess 1996, Watts, Zimmerman 2002, Лактионова 2010*), որն ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում տարածված երևույթ է: Կանանց նկատմամբ և ընտանիքում բռնության վերաբերյալ վիճակագրական տվյալները ամբողջությամբ չեն ներկայացնում իրավիճակը, քանի որ ՀՀ-ում դեռևս բացակայում է միասնական վիճակագրությունը, և բացի այդ՝ բռնության տվյալ տեսակը հիմնականում քողարկված է: Այդուհանդերձ, վիճակագրական տվյալները փաստում են Հայաստանում տվյալ երևույթի առկայության մասին: Այսպես, ըստ ՀՀ ոստիկանության տվյալների՝ 2018 թ. ընթացքում գրանցվել է բռնու-

¹⁹ Տվյալների աղբյուրը՝ Համաշխարհային տնտեսական ֆորումի պաշտոնական կայք՝ <https://www.weforum.org/reports/the-global-gender-gap-report-2016>, <https://www.weforum.org/reports/the-global-gender-gap-report-2017>, <https://www.weforum.org/reports/the-global-gender-gap-report-2018> (15.07.2019):

թյան 707 դեպք, որից միայն 441-ը՝ ամուսնու կողմից կնոջ նկատմամբ (ՀՀ ՄԻՊ 2019, 544-552):

ԺՄԻ-ի մոդելում ընդգրկված քաղաքական այլ փոփոխականների միտումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2016-2018 թթ. «Քաղաքական կայունության» ցուցանիշը պարբերաբար աճել է, սակայն, ի հակադրություն դրան, «Օրենքի գերակայության» ցուցանիշը պարբերաբար նվազել է²⁰: Կոռուպցիայի ընկալման 2018 թ. ինդեքսը (ԿԸԻ)²¹ մնացել է անփոփոխ նախորդ տարվա համեմատ, սակայն ունեցել է դրական փոփոխություն 2016 թ. նկատմամբ: 2018 թ. ցուցանիշով Հայաստանը 35 միավորով 180 պետությունների և տարածքների շարքում զբաղեցրել է 105-րդ տեղը²²: «Հակամարտության առկայությունը» փոփոխականի ցուցանիշը, 2016 թ. Ապրիլյան պատերազմով պայմանավորված անկումից հետո, 2017 և 2018 թթ. դարձյալ աճել է, այդուհանդերձ իրավիճակը հայ-ադրբեջանական սահմանին շարունակում է լարված մնալ²³:

Այսպիսով, դիտարկվող 2000-2018 թթ. ժամանակահատվածում Հայաստանի ՔԳԻ-ն ունեցել էրկու խոր անկում՝ 2008 և 2016 թվականներին: Այդուհետ՝ 2016 թ. անկումից հետո, երբ գրանցվել էր դիտարկվող ժամանակահատվածի՝ Քաղաքական գործոնների ինդեքսի նվազագույն ցուցանիշը,

²⁰ Տե՛ս ՀԲ պաշտոնական կայք՝ <https://info.worldbank.org/governance/wgi/> (20.07.2019):

²¹ Կոռուպցիայի ընկալման ինդեքսը գնահատում է «Թրանսփարենսի ինթերնեշնլ» (Transparency International) կազմակերպությունը 0-100 սանդղակի միջակայքում (մինչև 2012 թ.՝ 0-10), որտեղ 0-ն նշանակում է ամբողջական կոռումպացվածություն, իսկ 100-ը՝ կոռուպցիայի բացակայություն:

²² Տե՛ս «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի պաշտոնական կայք՝ <http://www.transparency.org> (10.07.2019):


²³ Մոդելում հակամարտության ազդեցությունը ժողովրդավարության վրա գնահատվել է հետևյալ կերպ՝ ա) հակամարտության բացակայություն (2 միավոր), բ) պասիվ հակամարտության առկայություն (1 միավոր). պետությունը կոնֆլիկտային իրավիճակում է այլ պետության/պետությունների հետ, որը, սակայն, չի ուղեկցվում ռազմական ակտիվ գործողություններով, գ) ակտիվ հակամարտության առկայություն. պետությունը կոնֆլիկտային իրավիճակում է այլ պետության/պետությունների հետ, որն ուղեկցվում է ռազմական ակտիվ գործողություններով (0): Տվյալների նորմալացման ժամանակ՝ որպես առավելագույն արժեք (max) ընդունվում է 2-ը, իսկ նվազագույն (min)՝ 0-ն: Հաշվի առնելով հայ-ադրբեջանական հակամարտության բնույթը՝ 2016 թ.-ին այն գնահատվել է 0 միավոր, իսկ արդեն 2017 և 2018 թթ.՝ 1:

2. Հայաստանի նոր իրողությունները. ժողովրդավարության կոնսոլիդացում, թե՞ ինստիտուցիոնալացում

հաջորդ երկու տարիների ընթացքում այն անընդմեջ աճել է՝ 2018 թ. արձանագրելով առավելագույն ցուցանիշը: Հայաստանի ժողովրդավարության մակարդակի և աճի միտումների պահպանման, ինչպես նաև հետընթացի գործընթացներից խուսափելու համար իշխանությունների և հանրության ջանքերը պետք է ուղղվեն վերոնշյալ հիմնախնդիրների լուծմանը, հասարակության մեջ բաժանարար գծերի չեզոքացմանը և ապագային միտված զարգացման հստակ հայեցակարգերի մշակմանն ու իրագործմանը:

2.2 Տնտեսական գործընկերության զարգացման հեռանկարներն ու մարտահրավերները

**Գծապատկեր 4
Հայաստանի Տնտեսական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)***



Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ Տնտեսական գործոնների ինդեքսը ($S_{գԻ}$) 2015 թ. անկումից հետո 2016-2018 թթ. ունեցել է անընդմեջ

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

աճ՝ դրականորեն ազդելով Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի վրա: Դիտարկվող ժամանակահատվածի ամենաբարձր S_{գր}-ն եղել է 2018 թ., ամենացածրը՝ 2001 թ. (տե՛ս Գծապատկեր 4, Աղյուսակ 1):

2017 թ. Հայաստանում արձանագրվեց վերջին տարիների ամենաբարձր տնտեսական աճը՝ 7,5%: Այն ապահովվեց ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև արդյունաբերության խթանման շնորհիվ: Աճի տեմպը պահպանվեց մինչև 2018 թ. առաջին եռամսյակ՝ ապահովելով ՀՆԱ-ի 9,7% աճ: Հետագա ամիսներին, սակայն, այն նվազեց, իսկ տարեկան աճը կազմեց 5,2% (տե՛ս Աղյուսակ 4) (*ՄԺԾԾ 2020-2022, 24-26, World Bank 2019, 3-4, Azg.am 2019*): Այս առումով նաև նշենք, որ 2018 թ. քաղաքական փոփոխությունների և հեղափոխական իրադարձությունների զարգացման փուլում հնարավոր եղավ խուսափել լուրջ ցնցումներից, որոնք կարող էին էական բացասական ազդեցություն թողնել տնտեսական միջավայրի վրա:

Աղյուսակ 4

ՀՆԱ-ի իրական աճն ըստ տնտեսության ճյուղերի 2016-2018 թթ., %²⁴

	2016	2017	2018
	փաստ.	փաստ.	փաստ.
ՀՆԱ	0,2	7,5	5,2
Արդյունաբերություն	7,6	11,8	5,8
Գյուղատնտեսություն	-5,0	-5,1	-8,5
Շինարարություն	-14,1	2,8	0,8
Ծառայություններ	3,2	10,6	9,3
Զուտ անուղղակի հարկեր	-3,7	9,7	8

Վերլուծելով մոդելում ընդգրկված S_{գր}-ի փոփոխականների ցուցանիշները 2016-2018 թթ. կտրվածքով՝ կարող ենք նշել, որ դրանք հիմնականում ունեցել են դրական միտումներ: Այսպես՝ մեկ շնչին ընկնող համախառն ազգային եկամուտը 2016 թ. անկումից հետո (3750 ԱՄՆ դոլար, ՀԲ Ատլասի մեթոդ) հաջորդ երկու տարվա ընթացքում անընդմեջ աճել է՝ 2018 թ. հաս-

²⁴ «Հայաստանի Հանրապետության 2020-2022 թվականների պետական միջնա-ժամկետ ծախսերի ծրագիր», ՀՀ կառավարություն // <https://www.gov.am/am/medium-term/> (13.07.2019):

2. Հայաստանի նոր իրողությունները. ժողովրդավարության կոնսոլիդացում, թե՞ ինստիտուցիոնալացում

նելով 4230 ԱՄՆ դոլարի: Այդ ցուցանիշով Հայաստանը Համաշխարհային բանկի՝ ըստ եկամուտների մակարդակի պետությունների 2018-2019 թթ. դասակարգման սանդղակում բարելավեց իր դիրքերը՝ միջինից ցածր մակարդակի խմբից անցում կատարելով միջինից բարձր երկրների խումբ (*World Bank Blogs 2018*)²⁵: 2016-2018 թթ. անընդմեջ աճ է գրանցվել տնտեսության վարկավորման ծավալներում, ինչպես նաև զգալիորեն կրճատվել է բյուջեի դեֆիցիտը՝ 2016 թ. ՀՆԱ-ի 5,5%-ից 2018 թ. հասնելով 1,8%-ի: Ի հակադրություն դրան՝ 2016 թ. գնանկումից հետո սպառողական գները պարբերաբար աճել են՝ 2018 թ. հասնելով 2,5%-ի: Կրճատվել է նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը՝ 2016 թ. գրանցված ՀՆԱ-ի 3,2%-ից 2018 թ. հասնելով 2%-ի²⁶:

Անկում է ապրել նաև Տնտեսական ազատության ինդեքսի՝ Հայաստանին տրված գնահատականը: Ըստ «Տնտեսական ազատության 2019 թ. ինդեքսի» զեկույցի²⁷ Հայաստանը աշխարհի 180 երկրների շարքում 47-րդն է և ունի չափավոր ազատ տնտեսություն: Հայաստանին տրված 67,7 գնահատականը բարձր է համաշխարհային միջինից (60,8), սակայն ցածր է Եվրոպայի տարածաշրջանի երկրների միջինից (68,6): Զեկույցում փորձագետները մտահոգություն են հայտնում մասնավորապես «դատական համակարգի արդյունավետության» և «կառավարության ամբողջականության» (համակարգում առանձին հատվածների կոռուպցիոն ռիսկերը) ոլորտների առնչությամբ, որոնք նախորդ տարվա համեմատությամբ ևս նվազել են: Նշված տարում առավել մեծ նահանջը դիտվել է «հարկաբյուջետային համակարգին» տրված գնահատականում (*Miller, Kim and Roberts 2019, 2, 19, 32, 86-87*):

²⁵ 2018 թ. հուլիսի 1-ի դրությամբ ՀԲ-ի եկամուտների դասակարգման նոր շեմը միջինից բարձր եկամուտ ունեցող պետությունների խմբի համար կազմել է 3896-ից 12055 ԱՄՆ դոլար:

²⁶ Տվյալների աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք՝ <https://www.armstat.am>, ՀԲ պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org> (19.07.2019):

²⁷ ՏԱԻ-ի 2019 թ. ինդեքսի արժեքը ԺՄԻ-ի մոդելում ընդունվել և դիտարկվել է որպես 2018 թ. արժեք, քանի որ այդ ինդեքսը որոշելու համար «Երիթիջ» հիմնադրամի փորձագետները հիմնականում հիմնվել են 2017 թ. հուլիսի 1-ից մինչև 2018 թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի տնտեսական և այլ ցուցանիշների վրա:

Զգալի դրական փոփոխություններ են եղել արտաքին առևտրաշրջանառության ոլորտում, որը 2016-2018 թվականներին պարբերաբար աճել է՝ հասնելով ՀՆԱ-ի 90,4%-ի²⁸: 2018 թ. փոփոխվել է ապրանքների արտահանման կառուցվածքը. կրճատվել է հանքարդյունաբերական արտադրանքի արտահանումը, փոխարենը աճել է տեքստիլ, գյուղատնտեսական ապրանքների և թանկարժեք մետաղների մասնաբաժինը: Աճել է հայկական ապրանքների արտահանումը Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) երկրներ, Իրանի Իսլամական Հանրապետություն և Իրաք (*Manookian, Bogdan 2019, 6-7*):

Հայաստանն աստիճանաբար խորացնում է իր գործընկերային հարաբերությունները ԵԱՏՄ-ի և ԵՄ-ի հետ: Միանալով Եվրասիական տնտեսական միության հիմնադրման մասին պայմանագրին²⁹ Հայաստանը հնարավորություն ստացավ առավել խորացնելու իր տնտեսական կապերն անդամ մյուս պետությունների՝ Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի հետ շնորհիվ միացյալ մաքսային տարածքի ստեղծման և անդամ երկրների միջև ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժի (*World Bank 2019, 86-87*): 2018 թ. ձեռքբերումներից էր ԵԱՏՄ-ի և Իրանի միջև կնքված ազատ առևտրի գոտու ստեղծման վերաբերյալ ժամանակավոր համաձայնագիրը³⁰: Միևնույն ժամանակ շարունակվում են Սինգապուրի, Իսրայելի, Հնդկաստանի, Եգիպտոսի և Սերբիայի հետ առևտրի ազատ գոտիների ստեղծման վերաբերյալ բանակցությունները (*Azg.am 2019*):

Զարգացման ներուժ ունենալով հանդերձ՝ ԵԱՏՄ-ն դեռ կայացման ճանապարհի պիտի անցնի, որի խոչընդոտներից է անդամ պետությունների

²⁸ Տվյալների աղբյուրը՝ ՀԲ պաշտոնական կայք՝ <http://data.worldbank.org/indicator/NE.TRD.GNFS.ZS> (19.07.2019):

²⁹ Պայմանագիր Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին (ընդունվել է 10.10.2014, Մինսկ), որը ուժի մեջ մտավ 02.01.2015 // <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=120340> (19.07.2019):


³⁰ Տե՛ս “Interim Agreement leading to formation of a free trade area between the Eurasian Economic Union and its Member States, of the one part, and the Islamic Republic of Iran, of the other part” (signed at Astana on 17th May, 2018, will enter into force on 27th October, 2019) // http://www.eurasiancommission.org/ru/act/trade/dotp/-sogl_torg/Documents/Interim%20Agreement%20EAEU-Iran_final.pdf (20.07.2019):

2. Հայաստանի նոր իրողությունները. ժողովրդավարության կոնսոլիդացում, թե՛ ինստիտուցիոնալացում

միջև տնտեսական հարաբերությունների անհամաչափ զարգացվածությունը, իսկ Հայաստանի պարագայում՝ ընդհանուր սահմանի բացակայությունը, որն ավելի է դանդաղեցնում կայացման գործընթացն ու պետության լիարժեք ինտեգրումը կազմակերպությանը: Ու թեև 2018 թ. Հայաստանի արտահանումը դեպի ԵԱՏՄ երկրներ զգալիորեն աճել է, այնուամենայնիվ կազմակերպության անդամ երկրներից առևտրային հիմնական գործընկերը մնում է Ռուսաստանը: Այսպես՝ 2018 թ. Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության մեջ ԵԱՏՄ-ի տեսակարար կշիռը կազմել է 27%, որից 26,1% միայն Ռուսաստանի Դաշնության հետ է: Այսինքն՝ Հայաստան-ԵԱՏՄ առևտրի գրեթե 97%-ը բաժին է ընկնում Ռուսաստանին: Արտաքին առևտրաշրջանառությունը ԵՄ-ի հետ 24,8% է (տե՛ս Գծապատկեր 5):

Գծապատկեր 5

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունն ըստ երկրների (2018 թ. հունվար-դեկտեմբեր)³¹



³¹ Տվյալների աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք՝ https://www.armstat.am/file/article/sv_12_18a_411.pdf (16.07.2019):

Հայաստանը ԵՄ շուկա մուտք է գործում արտոնյալ պայմաններով. սկսած 2009 թ.-ից՝ օգտվում է Եվրոպական հանձնաժողովի՝ Արտոնությունների ընդհանրացված համակարգից (GSP+)*. որով գրոյական մաքսատուրք է սահմանված Հայաստանից ԵՄ արտահանվող ապրանքների դասակարգման 66% վրա: Հնարավոր է, որ առաջիկա տարիներին Հայաստանը կդադարի օգտվել GSP+ արտոնյալ պայմաններից, քանի որ երկրի մեկ շնչի հաշվով եկամուտն աճում է (*World Bank 2019, 86-87, EEN Armenia 2019*):

ՀՀ-ԵՄ համագործակցության զարգացման համար առանցքային նշանակություն ունի նաև 2018 թ. հունիսին ուժի մեջ մտած «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը» (ՀԸԳՀ)³², որը քաղաքական երկխոսության և տնտեսական զարգացման, ինչպես նաև առևտրի ու ներդրումների ծավալների մեծացման և նոր հեռանկարների ուրվագծման նպաստավոր պայմաններ է ստեղծում:

Համաշխարհային բանկը 19ՖՏ-23ՖՏ ժամանակահատվածի «Երկրի գործընկերության շրջանակում» (ԵԳՇ) (*World Bank 2019*) ներկայացնում է զարգացման մարտահրավերների և սահմանափակումների ամփոփ նկարագիր, որում մասնավորապես նշվում են հետևյալ հիմնախնդիրները.

- արտաքին հատվածի թույլ կատարողական՝ պայմանավորված արտահանման ծավալների ցածր մակարդակով և ապրանքների սահմանափակ տեսականիով,

- ընկերությունների մակարդակով արտադրողականության նվազ աճ՝ պայմանավորված ոլորտում ոչ բավարար թափանցիկությամբ ու մրցակցու-

* GSP+-ը ԵՄ շուկա մուտք գործելու արտոնյալ պայմաններ է տրամադրում զարգացող երկրներին՝ պայմանով, որ դրանից օգտվողները պետք է հարգեն մարդու իրավունքների և աշխատանքային իրավունքների, կառավարման ու շրջակա միջավայրի պաշտպանության միջազգային կոնվենցիաներով սահմանված պահանջները:

³² Տե՛ս «Comprehensive and Enhanced Partnership Agreement between the European Union and the European Atomic Energy Community and their Member States, of the one part, and the Republic of Armenia, of the other part» (signed at Brussels on 24th November, 2017) https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/36140/-comprehensive-enhanced-partnership-agreement-between-european-union-armenia-cepa_en (15.07.2019):

2. Հայաստանի նոր իրողությունները. Ժողովրդավարության կոնսոլիդացում, թե՛ ինստիտուցիոնալացում


թյամբ, կարգավորման որակի հիմնախնդիրներով, կոռուպցիոն ռիսկերով և այլ բացերով,

- մարդկային կապիտալի որակի անկում, որը հիմնականում աշխատուժի արտադրողականության աճի դանդաղեցման հետևանք է՝ պայմանավորված միգրացիայով, բնակչության ծերացմամբ, աշխատաշուկայում կանանց ներգրավվածության ցածր մակարդակով, կթական համակարգով և այլ հիմնախնդիրներով,

- խոցելիության աճ մակրո և միկրոտնտեսական մակարդակներում, ինչպես նաև ժողովրդագրական և բնապահպանական ոլորտներում (*World Bank 2019, 8*):

2.3 Սոցիալական ոլորտի ձեռքբերումներն ու առկա խնդիրները

Գծապատկեր 6
Հայաստանի Սոցիալական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)*



* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

Սոցիալական պաշտպանությունը մշտապես եղել է ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից: Այս ոլորտում պետական քաղաքականության առաջնայնություններից են աղքատության մակարդակի շոշափելի կրճատումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումը, ինչպես նաև ՀՀ բնակչության խոցելի խմբերի համար սոցիալական համապատասխան երաշխիքների ապահովումը (*ՄԺԾԾ 2020-2022, 159*):

2016-2017 թթ. Սոցիալական գործոնների ինդեքսի (Ս_{ԳԻ}) աճն ընդհատվեց 2018 թ. անկումով: Դիտարկվող ժամանակահատվածում Ս_{ԳԻ}-ի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է 2014 թ., իսկ նվազագույն ինդեքսը եղել է 2000 թվականին (տե՛ս Գծապատկեր 6, Աղյուսակ 1):


2017 թ.-ին Հայաստանում զգալի առաջընթաց գրանցվեց աղքատության մակարդակի կրճատման ուղղությամբ: Այն կազմեց 25,7%՝ 2016 թ.-ի համեմատ նվազելով 3,7 տոկոսային կետով: Առաջին անգամ գրանցվեց 2008 թ. մինչ ֆինանսական ճգնաժամը եղած աղքատության մակարդակից (27,6%) ցածր ցուցանիշ: Դա հնարավոր եղավ աշխատանքից ստացվող եկամտի և զբաղվածության աճի շնորհիվ: Սոցիալական քաղաքականության ոլորտի այս ձեռքբերման կարևորագույն գործոնը, թերևս, 2017 թ. տնտեսական աճն էր: Այդուամենայնիվ աղքատության մակարդակը մնում է մտահոգիչ և բարձրներից է տարածաշրջանի համադրելի պետությունների համեմատ: Մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ աղքատության բաշխման խիստ շեղումներ կան Երևանի, այլ քաղաքների և մարզերի միջև: Ընդ որում, աղքատության մակարդակի տարբերությունն ըստ քաղաքային (25%) և գյուղական բնակավայրերի (26,8%) այդչափ զգալի չէ, որքան Երևանում (22,4%) և հանրապետության այլ քաղաքներում (27,9%): Հայաստանի 10 մարզերից աղքատության ամենաբարձր մակարդակը Շիրակի մարզում է (44,3%), ամենացածրը՝ Վայոց Ձորում (16,9%) (*ՀՀ ՎԿ, ՀԲ 2018, 46-55, Manookian, Bogdan 2019, 11-12, World Bank 2019, 6-7*):

ՀՀ կառավարության ծրագրի 4.2-րդ մասով նախատեսվում է մինչև 2023 թվականը էապես կրճատել աղքատությունը և վերացնել ծայրահեղ աղքատությունը: Դա իրականացվելու է բնակչության աղքատ խավի շրջանում կրթության մակարդակի բարձրացման, աշխատանքի ապահովման և գործարարության խթանման ծրագրերի միջոցով (*ՄԺԾԾ 2020-2022, 159*):

2. Հայաստանի նոր իրողությունները. Ժողովրդավարության կոնսոլիդացում, թե՛ ինստիտուցիոնալացում

Չնայած 2017 թ. Սոցիալական գործոնների ինդեքսի աճին՝ 2018 թ. այն անկում է ապրել՝ պայմանավորված իրական աշխատավարձի նվազմամբ, որը 365 ԱՄՆ դոլարից նվազել էր՝ հասնելով 349-ի³³: 2018 թ. գրանցվել է գործազրկության աննշան նվազում, որի մակարդակը (17,7%) շարունակում է մտահոգիչ մնալ և դարձյալ համարվում է ամենաբարձրերից տարածաշրջանում:

Գծապատկեր 7
Գործազրկության մակարդակը հետխորհրդային տարածքում (2000-2018 թթ.)³⁴



Գծապատկեր 7-ում ներկայացված է հետխորհրդային 9 պետության գործազրկության մակարդակը 2000-2018 թթ. կտրվածքով: Գծապատկերից տեսանելի է, որ նշված պետությունների 2000 թ. գրանցած գործա-

³³ Տվյալների աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ «Հ վիճակագրական կոմիտեի՝ միջին անվանական աշխատավարձի, սպառողական գների ինդեքսի և փոխարժեքի վերաբերյալ պաշտոնական տվյալների հիման վրա:

³⁴ Տվյալների աղբյուրը՝ ՀԲ պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.ZS> (19.07.2019):

գրկության ցուցանիշները գրեթե միևնույն մակարդակին են և չունեն այդչափ մեծ ցրվածություն, որքան որ 2018 թ.-ին: Այսինքն՝ տարիների ընթացքում Հայաստանի գործազրկության մակարդակը աճել է՝ մեծացնելով շեղումը տարածաշրջանային միջինից: Հայաստանից հետո գործազրկության երկրորդ բարձր ցուցանիշը Վրաստանինն է (14,1%), իսկ նվազագույն մակարդակը Մոլդովայում է (3,4%):


Սոցիալ-տնտեսական ոլորտի հիմնախնդիրների ու ձեռքբերումների, հեղափոխության, ժողովրդավարության համախմբման և հետընթացի հիմնահարցերը քննարկելիս և վերոնշյալ եզրույթների միջև զուգահեռներ անցկացնելիս տեղին է անդրադառնալ Ալեքսիս դե Թոքվիլի մոտեցումներին, որոնք մասնագիտական գրականության մեջ ստացել են «Թոքվիլի էֆեկտ» կամ «Թոքվիլի պարադոքս» անվանումները (*Elster 1998, 58-60, Finkel and Gehlbach 2018*): Համաձայն այդ մոտեցման՝ սոցիալական պայմանների բարելավումը զուգորդվում է դժգոհությունների աճով: Թոքվիլը նման եզրակացության է հանգել ֆրանսիական հեղափոխության և Եվրոպայում ու ԱՄՆ-ում հետագա բարեփոխումները ուսումնասիրելիս: Այս համատեքստում նա մասնավորապես շեշտում է բարեփոխումների և դրանց հետևանքով առաջ եկող, բայց հասարակությանը չբավարարող սպասումների մասին: Եվ ըստ այդմ նշում է, որ բարեփոխումներ նախաձեռնող «վատ կառավարությունը» ամենից շատ է վտանգված հեղափոխության սպառնալիքով, և այս պարագայում հեղափոխությամբ կործանված վարչակարգը գրեթե միշտ ավելի լավն է, քան դրան հաջորդողը (*Tocqueville 1955, 1969, 1986*): Սոցիալ-տնտեսական բարեփոխումների և պայմանների բարելավում մինչ-հեղափոխական ժամանակահատվածում կարելի է դիտարկել նաև հետխորհրդային այլ երկրների օրինակով: Այսպես՝ Ուկրաինայում մինչև Նարնջագույն հեղափոխությունը (2004 թ. նոյեմբերից 2005 թ. հունվար) 2002-2004 թթ. ընթացքում տնտեսական աճը միջինում եղել է 9%, իսկ 2004 թ.՝ 12%, որն ուղեկցվել է նաև աղքատության մակարդակի զգալի կրճատմամբ³⁵:

³⁵ Տվյալների աղբյուրը՝ ՀԲ պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/> (15.07.2019):

2.4 Կրթական գործոնները. պետական քաղաքականության ուղին

Գծապատկեր 8

Հայաստանի Կրթական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)*



Կրթական գործոնների ինդեքսի ($Y_{ԳԻ}$) միտումները վերլուծելիս պարզ է դառնում, որ 2000-2018 թթ. այն ունեցել է տեսանելի անկումներ ու վերելքներ, որոնք, սակայն, եղել են ֆիքսված միջակայքում, այդ պատճառով էլ կորն ընդհանուր առմամբ գտնվել է միևնույն մակարդակում: $Y_{ԳԻ}$ -ի լավագույն ցուցանիշն արձանագրվել է 2009 թ.՝ պայմանավորված դիտարկվող ժամանակահատվածում կրթությանը հատկացված ծախսերի ամենաբարձր նիշով՝ ՀՆԱ-ի գրեթե 4%-ը: Իսկ $Y_{ԳԻ}$ -ի նվազագույն ցուցանիշը արձանագրվել է 2002 թ.-ին:

2017 թ. կրթությանն ուղղված պետական ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 2,2%-ը, ինչը 2,5 անգամ ցածր է Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների միջին ցուցանիշից (*World Bank 2019, 11*):

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

Այսօր Հայաստանում միջին մասնագիտական և բարձրագույն կրթության համակարգերը հարմարեցված չեն աշխատաշուկայի ժամանակակից կարիքներին: Հիմնախնդրի պատճառներից են գիտական համայնքի և մասնավոր հատվածի ոչ հստակ հարաբերությունները, առաջարկի և պահանջարկի անհամապատասխանությունը: Մասնավորապես, հումանիտար կրթությամբ մասնագետների գերառաջարկը և անբավարար ներդրումները STEM կրթության ոլորտում (բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա) խորացնում են առկա հիմնախնդիրները (*World Bank 2019, 11*):

Աղյուսակ 5

Աշակերտների և ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշները, %³⁶

ուս. տարի	տարրական դպ.	հիմնական դպ.	ավագ դպ.	նախն. մասնագ.	միջին մասնագ.	բարձրագույն
2016/2017	91,2	90,7	65,1	8,1	11,1	54,1
2017/2018	91,3	90,1	65,5	8,6	11,5	56,4
2018/2019	91,1	84,9	74,0	6,7	11,7	52,2

Դիտարկելով համախառն ընդգրկվածության վիճակագրական տվյալները՝ պարզ է դառնում, որ վերջին 7 տարվա ընթացքում տարրական դպրոցում ընդգրկվածությունը հետզհետե նվազել է՝ 2012/2013 ուստարում գրանցված 95,2%-ից 2018/2019 ուստարում հասնելով 91,1%-ի (*Aleksanyan 2017, 44*): Նշված ժամանակահատվածում ընդգրկվածության ամենամեծ նվազումը (10%) գրանցվել է հիմնական դպրոցի աշակերտների շրջանում: Փոխարենը վերջին տարիներին բարձրագույն ուսումնական հաստատու-

³⁶ Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ՎԿ (2017) «ՀՀ սոցիալական վիճակը 2016 թվականին» // <https://www.armstat.am/am/?nid=80&id=1958>, ՀՀ ՎԿ (2018) «ՀՀ սոցիալական վիճակը 2017 թվականին» // <https://www.armstat.am/am/?nid=80&id=2059>, ՀՀ ՎԿ (2019) «ՀՀ սոցիալական վիճակը 2018 թվականին» // <https://www.armstat.am/am/?nid=82&id=2182> (15.07.2019):

2. Հայաստանի նոր իրողությունները. ժողովրդավարության կոնսոլիդացում, թե՛ ինստիտուցիոնալացում

թյուններ ընդունվողների աճ է գրանցվել (2018/2019 ուստարում 52,2%): Այդուամենայնիվ տվյալ ցուցանիշը նախորդ երկու տարվա համեմատ կրճատվել է, իսկ 2017/2018 ուստարում արձանագրված ընդգրկվածությունը (56,4%) այդ ժամանակահատվածում ամենաբարձրն է եղել: Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում համախառն ընդգրկվածությունը շարունակում է մնալ ամենացածրը (տե՛ս Աղյուսակ 5):


Հայաստանում կրթության ոլորտը միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխանեցնելու և առկա հիմնախնդիրները հրատապ լուծելու ուղղությամբ պետական քաղաքականությունը նախատեսում է.

- դասավանդողների մասնագիտական վերապատրաստում և ատեստավորում,
- կրթական ծրագրերի արդիականացում և համապատասխանեցում աշխատանքային շուկայի և տնտեսության ժամանակակից պայմաններին,
- կրթական օջախների նյութատեխնիկական պայմանների բարելավում,
- մինչև 2023 թ. անցում կատարել համընդհանուր ներառական կրթության,
- հանրակրթության համախառն ընդգրկվածության ցուցանիշը միջնաժամկետ հատվածում հասցնել 99%-ի,
- նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններն ավարտելուց հետո բուհ ընդունվող շրջանավարտների թիվը 17%-ից հասցնել 19%-ի և այլն (*ՄԺԾԾ 2020-2022, 92-100*):

2.5 Առողջ զարգացումն ու օրակարգային խնդիրները

Գծապատկեր 9

Հայաստանի Առողջապահական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)*




Առողջապահությունը ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից է: Թեև այդ համակարգի կատարողականի և իրավիճակի բարելավման առումով նկատելի են դրական փոփոխություններ, այնուամենայնիվ կարևոր մարտահրավերները շարունակում են մնալ օրակարգում: Առողջապահության ոլորտին ուղղված պետական ծախսերի ցածր մակարդակը հնարավորություն չի տալիս առավել արդյունավետ առաջընթաց և նպատակներ իրականացնել: Հայաստանի առողջապահության պետական ծախսերը 2017 թ. կազմել են ՀՆԱ-ի 1,5%-ը, որը 5 անգամ ցածր է Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների միջինացված ցուցանիշից: Միևնույն ժամանակ գրպանից կատարվող ծախսերով Հայաստանն աշխարհում ամենաբարձր ցուցանիշներ ունեցող երկրներից մեկն է: Այդ ծախսերի մեծ մասը, սակայն, կազմում են ոչ ֆորմալ վճարումները (*World Bank 2019, 11, 12*): Մասնավոր հատվածի զգալի վճարումներով է պայմանավորված նաև առողջապահության ընթացիկ ծախսերի՝ Հայաստանի բարձր ցուցանիշը,

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

2. Հայաստանի նոր իրողությունները. ժողովրդավարության կոնսոլիդացում, թե՛ ինստիտուցիոնալացում

որը 2017 թ. հասել է ՀՆԱ-ի 10,4%-ի: Նշված ցուցանիշը անհամարժեք է Հայաստանի նման եկամուտ ունեցող երկրի համար, որը, սակայն, կարելի է բացատրել նաև արտերկրից ստացվող տրանսֆերտների անմիջական ազդեցությամբ հասարակության եկամտի վրա (տե՛ս Գծապատկեր 10) (ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտ 2018ա, 32-33):

Գծապատկեր 10
Առողջապահության ծախսերն ըստ ֆինանսավորման աղբյուրների, ՀՆԱ%



Հայաստանում առողջապահության հիմնախնդիրները քննարկելիս կարևոր է նշել այդ ծառայությունների մատուցման տարածքային անհամաչափության մասին: Մասնավորապես դրանք հասանելի չեն մայրաքաղաքից դուրս ապրող բնակչության զգալի մասի համար, ինչը ոչ միայն հավելյալ ծախսեր է ստեղծում բնակչության համար, այլև լուրջ վտանգ է շտապ և անհետաձգելի առողջական խնդիրների պարագայում (World Bank 2019, 12):

Առողջապահության ոլորտի կարևոր մարտահրավերներից է բնակչության ծերացումը: 65 տարեկանից բարձր բնակչությունը Հայաստանում 11,6% է, որը գրեթե 5%-ով գերազանցում է ՄԱԿ-ի ժողովրդագրական

ծերացման սանդղակով սահմանված 7%-ը (<< ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտ 2018թ, 16):

Միևնույն ժամանակ Հայաստանը դասվում է ցածր ծնելիություն ունեցող երկրների շարքին. ծնելիության գումարային գործակիցը կազմում է 1,6 երեխա, ինչը ցածր է պարզ վերարտադրության մակարդակից (2,1 երեխա՝ մեկ կնոջ հաշվով)³⁷:

Այսպիսով, դիտարկելով Առողջապահական գործոնների ինդեքսի (Ա_{ԳԻ}) ցուցանիշները՝ կարող ենք նշել, որ դրանք ունեն աճի միտում, ընդ որում որոշ տարիներին գրանցվել են կտրուկ վերելքներ: Դա պայմանավորված է եղել բացառապես առողջապահության ընթացիկ ծախսերի ավելացմամբ: Ա_{ԳԻ}-ի 2016-2018 թթ. աճին արդեն նպաստել են կյանքի սպասվող տևողության ցուցանիշի դրական փոփոխությունները:

2.6 Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի զարգացման միտումները

Գծապատկեր 11-ում ներկայացված են ԺՄԻ-ի հինգ ենթագործոնների միտումները 2000-2018 թթ.-ին, որոնց համադրությամբ դուրս է բերվել Ժողովրդավարության մակարդակի ինդեքսը նշված ժամանակահատվածի համար (տե՛ս Գծապատկեր 12): Ստացված արդյունքներից երևում է, որ 2015 և 2016 թվականների անկումից հետո ԺՄԻ-ի կորը դարձյալ վերականգնվում է՝ 2017 և 2018 թթ. ապահովելով կտրուկ աճ: Ժողովրդավարության մակարդակի 2017 և 2018 թթ. ինդեքսների աճի վրա նշանակալի է եղել մասնավորապես քաղաքական և տնտեսական գործոնների ազդեցությունը, որոնք գրանցել են պատմական ամենաբարձր ցուցանիշները: Ք_{ԳԻ}-ի պարագայում կորը որոշակի անկումներով հիմնականում միևնույն մակարդակին է, և միայն 2018 թ.-ին նկատվում է աճ այդ մակարդակից: Դրա վրա մասնավորապես նշանակալիորեն ազդել է Քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ցուցանիշի դրական փոփոխությունը,


³⁷ Տե՛ս ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի պաշտոնական կայք՝ <https://www.un.am/hy/agency/UNFPA> (19.07.2019):

2. Հայաստանի նոր իրողությունները. ժողովրդավարության կոնսոլիդացում, թե՛ ինստիտուցիոնալացում

որը վատթարացել էր սկսած 2004 թվականից: Միննույն ժամանակ Օրենքի գերակայության ցուցանիշը շարունակաբար անկում է ապրել և՛ 2017, և՛ 2018 թթ.: Դա վկայում է, որ Հայաստանում քաղաքական մշակույթը դեռ չի գտնվում պատշաճ մակարդակում և հասարակությունը հիմնականում այդքան էլ մտածված ու պատասխանատվությամբ չի օգտագործում ձեռք բերված ազատություններն ու իրավունքները:

Գծապատկեր 11


Հայաստանի ժողովրդավարության վրա ազդող Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական, Կրթական և Առողջապահական գործոնների ինդեքսները (2000-2018 թթ.)*



* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները: ԺՄԻ-ի գործոնների ինդեքսները համեմատելի են միայն ըստ միտումների:

Գծապատկեր 12

Հայաստանի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը (2000-2018 թթ.)*



Տեղին է նշել, որ ի տարբերություն ՔԳԻ-ի և ՏԳԻ-ի՝ Սոցիալական գործոնների ինդեքսը ոչ միայն չի գրանցել կտրուկ վերելք, այլև 2018 թ. անկում է ապրել: Վերջինս պայմանավորված է եղել իրական աշխատավարձի նվազմամբ: Կրթական և Առողջապահական գործոնների ինդեքսները վերջին տարիներին հիմնականում կայուն են եղել:

Այսպես՝ 2017 թ. մի շարք ցուցանիշների աճը նպաստեց ՔԳԻ-ի, ՏԳԻ-ի և դրանցով պայմանավորված ԺՄԻ-ի վերականգնմանը նախորդ տարիների անկումներից հետո: Արդեն 2018 թ. հետհեղափոխական գործընթացները, որոնք նշանավորվեցին լեգիտիմ իշխանությունների ձևավորմամբ և քաղաքական իրավունքների ու քաղաքացիական ազատությունների ցուցանիշների աճով, հանգեցրին ԺՄԻ-ի բարձրագույն նիշի արձանագրմանը դիտարկվող ժամանակահատվածում: Այդուամենայնիվ, դիտարկելով տարածաշրջանի մյուս երկրների հետհեղափոխական շրջափուլի փորձը՝ տեղին է նշել, որ հետընթացի գործընթացները բացառված չեն, իսկ ժողովրդավարության համախմբման համար անհրաժեշտ են տարիներ, որոնց ընթաց-

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

2. Հայաստանի նոր իրողությունները. ժողովրդավարության կոնսուլիդացում, թե՞ ինստիտուցիոնալացում

քում ձեռք բերված արդյունքը ոչ միայն պետք է պահպանել, այլև ապահովել նոր առաջընթաց:

2.7 Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի ռեգրեսիոն վերլուծությունը

Ռեգրեսիոն վերլուծության կիրառմամբ դուրս են բերվել ԺՄԻ-ի Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական, Կրթական, Առողջապահական գործոնների ինդեքսների այն փոփոխականները, որոնք ունեն նշանակալի ազդեցություն Հայաստանի ժողովրդավարության մակարդակի վրա:

Մոդելում ընդգրկված քաղաքական ցուցանիշներից նշանակալի կապ է հաստատվել ԺՄԻ-ի* և «Օրենքի գերակայության» փոփոխականի ու «Կոռուպցիայի ընկալման ինդեքսի» միջև (տե՛ս Աղյուսակ 6):

Աղյուսակ 6

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (Ք_{գր.}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Օրենքի գերակայություն	0,01	0,458	0,000	24
Կոռուպցիայի ընկալման ինդեքս	0,091	0,537	0,000	24

Տնտեսական գործոններից նշանակալի կապ է դիտվել միայն ԺՄԻ-ի և «համախառն ազգային արդյունքի» միջև (տե՛ս Աղյուսակ 7):

Աղյուսակ 7

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (S_{գր.}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Համախառն ազգային արդյունքը մեկ շնչի հաշվով (1000 ԱՄՆ դոլար)	0,03	0,613	0,000	24

* ԺՄԻ-ն ժողովրդավարության մակարդակի ինդեքսն է, որից դուրս է բերվում համապատասխան անկախ փոփոխականը յուրաքանչյուր զույգային ռեգրեսիոն վերլուծության ժամանակ:

Մոդելում ընդգրկված Սոցիալական գործոնների ինդեքսի փոփոխականներից նշանակալի կապ է հաստատվել ԺՄԻ-ի և «իրական աշխատավարձի» ու «Զինի ինդեքսի» միջև (տե՛ս Աղյուսակ 8):

Աղյուսակ 8

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (Ս_{գր}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Իրական աշխատավարձ (100 ԱՄՆ դոլար)	0,032	0,678	0,000	24
Զինի ինդեքս	-0,548	0,670	0,000	24

Կրթական գործոններից նշանակալի կապ է դիտվել ԺՄԻ-ի և «ՄՀՀ կրթության բաղադրիչ» փոփոխականի միջև (տե՛ս Աղյուսակ 9):

Աղյուսակ 9

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (Կ_{գր}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Մարդկային զարգացման համաթվի կրթության բաղադրիչ	1,256	0,812	0,000	24

Մոդելում ընդգրկված առողջապահական ցուցանիշներից նշանակալի կապ է հաստատվել ԺՄԻ-ի և «Կյանքի սպասվող տևողություն» փոփոխականի միջև (տե՛ս Աղյուսակ 10):

Աղյուսակ 10

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (Ա_{գր}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Կյանքի սպասվող տևողություն	0,033	0,893	0,000	24

Ըստ ստացված արդյունքների՝ ԺՄԻ-ի մոդելի քաղաքական գործոններից Հայաստանի ժողովրդավարության վրա նշանակալիորեն ազդում են «Օրենքի գերակայությունը» և «Կոռուպցիայի ընկալման ինդեքսը», որոնց աճը 1 միավորով կնպաստի, որ ԺՄԻ-ն դրական փոփոխության ենթարկվի համապատասխանաբար 0,01 և 0,091 միավորներով: Այս փոփոխականները պայմանավորում են կախյալի տատանումների 46-54%-ը:

2. Հայաստանի նոր իրողությունները. ժողովրդավարության կոնսոլիդացում, թե՞ ինստիտուցիոնալացում

Տնտեսական ցուցանիշներից նշանակալի կապ է հաստատվել ԺՄԻ-ի և շնչային «համախառն ազգային արդյունքի» միջև, որի աճը 1000 ԱՄՆ դոլարով կհանգեցնի ԺՄԻ-ի դրական փոփոխությանը 0,03 միավորով:

Սոցիալական գործոններից առավել ազդեցիկ փոփոխականներն են «իրական աշխատավարձը» և «Ջինի գործակիցը»: Իրական աշխատավարձի բարձրացումը 100 ԱՄՆ դոլարով կհանգեցնի ԺՄԻ-ի աճին 0,032 միավորով: Միևնույն ժամանակ Ջինի գործակցի նվազումը 0,1 միավորով կբերի ԺՄԻ-ի դրական փոփոխությանը 0,06 միավորով: Երկու փոփոխականներն էլ պայմանավորում են կախյալի տատանումների 67%-ը:

Կրթական գործոններից «Մարդկային զարգացման համաթվի կրթության բաղադրիչի» աճը 0,1 միավորով կնպաստի ԺՄԻ-ի ցուցանիշի բարձրացմանը 0,13 միավորով: «ՄԶՀ կրթության բաղադրիչի» փոփոխականը պայմանավորում է ԺՄԻ-ի տատանումների 81%-ը:

Առողջապահական գործոններից «կյանքի սպասվող տևողության» աճը 1 տարով կհանգեցնի ԺՄԻ-ի դրական փոփոխությանը 0,033 միավորով: Վերջինս ունի դետերմինացիայի ամենաբարձր գործակիցը և պայմանավորում է ԺՄԻ-ի տատանումների շուրջ 90%-ը:

Հայաստանում ժողովրդավարության մակարդակի աճի և համախմբման գործընթացները առավել արդյունավետ և արագ դարձնելու համար պետական իշխանության մարմիններն ու հանրությունը պետք է ուշադրության կենտրոնում պահեն և աշխատանքներ տանեն վերոնշյալ ոլորտներում դրական փոփոխություններ արձանագրելու ուղղությամբ:

Գրականության ցանկ

- **Aleksanyan, Arusyak** (2017) “The Index of Democracy Level of Armenia.” In Trends of the Index of Democracy Level in the dimension of human rights and democratization (Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine and Moldova), edited by Arusyak Aleksanyan, 26-55. Yerevan: YSU press.
- **Amnesty International** (2018) “Amnesty International Report 2017/2018: The State of the World’s Human Rights.” Accessed July 22, 2019. <https://www.amnesty.org/en/documents/pol10/6700/2018/en/>.

- **Azg.am** (2019) «Հայաստանի տնտեսությունը 2018 թ. ԵԱՏՄ-ին մեր երկրի անդամակցության համատեքստում», «ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ #6, 15-02-2019, (վերջին մուտքը՝ 21.07.2019)՝ <https://www.azg.am/AM/2019021513>:
- **Crowell, Nancy and Ann Burgess editors** (eds.) (1996) *Understanding violence against women*. Washington, DC: National Academy Press.
- **EEN Armenia** (2019) “EU Generalised System of Preferences GSP+ Armenia.” Accessed July 17, 2019. https://eenarmenia.am/en/multicontent/usefull_links/252/.
- **Elster, Jon** (1998) “A plea for mechanisms.” In *Social Mechanisms: An Analytical Approach to Social Theory*, edited by Peter Hedstrom and Richard Swedberg, 45-73. New York: Cambridge University Press.
- **Finkel, Evgeny and Scott Gehlbach** (2018) “The Tocqueville Paradox: When Does Reform Provoke Rebellion?” (November 4, 2018). <http://dx.doi.org/10.2139/ssrn.3202013>.
- **Freedom House** (2017a) “Freedom of the Press 2017. Press Freedom’s Dark Horizon”. Accessed July 18, 2019. https://freedomhouse.org/sites/default/files/FOTP_2017_booklet_FINAL_April28.pdf.
- **Freedom House** (2017b) “Freedom of the Press 2017. Country Report: Armenia.” Accessed July 18, 2019. <https://freedomhouse.org/report/freedom-press/2017/armenia>.
- **Freedom House** (2019) “Freedom in the World 2019. Country Report: Armenia.” Accessed July 10, 2019. <https://freedomhouse.org/report/freedom-world/2019/armenia>.
- **Human Rights Watch** (2018) “World Report 2018: Events of 2017.” Accessed July 19, 2019. <https://www.hrw.org>.
- **Human Rights Watch** (2019) “World Report 2019: Events of 2018.” Accessed July 18, 2019. <https://www.hrw.org>.
- **Linz, Juan J. and Alfred Stepan** (1996b) “Toward Consolidated Democracies” *Journal of Democracy*. Vol. 7, № 2 (April): 14-33. Accessed July 18, 2019. <https://muse.jhu.edu/article/16745>.
- **Linz, Juan J. and Alfred Stepan** (1996a) *Problems of Democratic Transition and Consolidation. Southern Europe, South America and Post-Communist Europe*. The Johns Hopkins University Press.
- **Manookian, Armineh, Olena Bogdan** (2019) “Armenia - Country Economic Update: A Strong Mandate for Change Amid a Global Slowdown,” *Country Economic Update*. Washington, D.C.: World Bank Group. Accessed July 18, 2019. <http://documents.worldbank.org/curated/en/270691552624070040/Armenia-Country-Economic-Update-A-Strong-Mandate-for-Change-Amid-a-Global-Slowdown>.
- **Miller, Terry, Anthony Kim, James Roberts** (2019) “2019 Index of Economic Freedom,” 25th Anniversary Edition. The Heritage Foundation. Accessed July 15, 2019. https://www.heritage.org/index/pdf/2019/book/index_2019.pdf.

2. Հայաստանի նոր իրողությունները. ժողովրդավարության կոնսոլիդացում, թե՞ ինստիտուցիոնալացում

- **O'Donnell, Guillermo, Philippe Schmitter** (1986) *Transitions from Authoritarian Rule: Tentative conclusions about uncertain democracies*. Baltimore/London, Johns Hopkins University Press.
- **OSCE/ODIHR** (2018) “Republic of Armenia, Early Parliamentary Elections, 9 December” ODIHR Election Observation Mission Final Report. Accessed July 18, 2019. <https://www.osce.org/odihr/elections/armenia/413555>.
- **Przeworski, Adam** (1986) “Some Problems in the Study of the Transition to Democracy.” In *Transitions from Authoritarian Rule* (Vol. 3), edited by Guillermo O'Donnell et al., 47-63. Baltimore and London: The Johns Hopkins University Press.
- **Przeworski, Adam** (1988) “Democracy as a Contingent Outcome of Conflicts.” In *Constitutionalism and Democracy*, edited by Jon Elster and Rune Slagstad, 59–80. *Studies in Rationality and Social Change*. Cambridge: Cambridge University Press. doi:10.1017/CBO9781139173629.003.
- **Schmitter, Philippe** (1992) “Interest Systems and the Consolidation of Democracies.” In *Reexamining Democracy. Essays in Honor of Seymour Martin Lipset*, edited by Larry Diamond and Gary Marks, 156-181. Newbury Park, Calif.: Sage Publications.
- **Tocqueville, Alexis de** (1955) *The Old Regime and the French Revolution*. New York: Anchor Books.
- **Tocqueville, Alexis de** (1969) *Democracy in America*. New York: Anchor Books.
- **Tocqueville, Alexis de** (1986) *The European Revolution" & Correspondence with Gobineau*. Gloucester, Mass.: Peter Smith.
- **U.S. Department of State** (2019) “2018 Country Reports on Human Rights Practices: Armenia.” Bureau of Democracy, Human Rights and Labor. Accessed July 16, 2019. <https://www.state.gov/wp-content/uploads/2019/03/ARMENIA-2018.pdf>.
- **Watts, Charlotte, Cathy Zimmerman** (2002) “Violence against women: global scope and magnitude.” *The Lancet* 359 (9313): 1232—1237.
- **WomenNet.am** (2019) “Infographics.” *Women and Society: information analytical portal*. Accessed July 20, 2019. <http://womennet.am>.
- **World Bank** (2019) “Armenia - Country Partnership Framework for the Period FY19-FY23.” Washington, D.C.: World Bank Group. Accessed July 18, 2019. <http://documents.worldbank.org/curated/en/523501552357219076/Armenia-Country-Partnership-Framework-for-the-Period-FY19-FY23>.
- **World Bank Blogs** (2018) “New country classifications by income level: 2018-2019.” Accessed July 18, 2019. <http://blogs.worldbank.org/opendata/new-country-classifications-income-level-2018-2019>.
- **World Economic Forum** (2018) “The Global Gender Gap Report 2018.” Accessed July 20, 2019. http://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2018.pdf.
- **Yerevan.Today** (2018) «Yerevan.Today կայքի հայտարարությունը», սեպտեմբերի 18 (վերջին մուտքը՝ 10.07.2019)՝ <https://yerevan.today/all/society/20914/yerevan-today-kayqi-haytararutyuny>:

- **Атанесян, Артур** (2018) “«Бархатная революция» в Армении: потенциал, достижения и риски политикопротестной активности”. Полис. Политические исследования, № 6: 80-98. <https://doi.org/10.17976/jpps/2018.06.06>
- **Баранов, Николай** (2016) “Демократический транзит”. Персональный сайт Николая Баранова. Лекции. Дата доступа: 13.07.2019. <https://nicbar.ru/politology/study/kurs-teorii-demokratii-i-demokraticeskij-tranzit/321-leksiya-11-demokraticeskij-tranzit>.
- **Даймонд, Ларри** (1999) “Прошла ли «третья волна» демократизации?” Полис. Политические исследования, № 1: 10-25.
- **Лактионова, Марина** (2010) “Гендерное насилие как социокультурный феномен: к постановке проблемы”. Вестник Майкопского государственного технологического университета, Выпуск 4: 142-150.
- **Мельвиль, Андрей** (1999) Демократические транзиты: теоретико-методологические и прикладные аспекты. М.
- **Сморгунов, Леонид** (1999) Сравнительная политология: Теория и методология измерения демократии. СПб.
- **Хантингтон, Сэмюэл** (2003) Третья волна. Демократизация в конце XX века. Москва.
- **Шмиттер, Филипп** (1996) “Размышления о гражданском обществе и консолидации демократии”. Полис. Политические исследования, № 5: 16-27.
- **ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտ** (2018ա) «Հայաստանի առողջապահության ազգային հաշիվներ», զեկույց (վերջին մուտքը՝ 20.07.2019)՝ <https://nih.am/assets/pdf/atvk/db2191e2a1db3cbb395d9a308594d8f7.pdf>:
- **ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտ** (2018բ) «Առողջապահության համակարգի գործունեության գնահատում», զեկույց (վերջին մուտքը՝ 20.04.2019)՝ <https://www.nih.am/assets/pdf/atvk/226be970fc81ad43bdbd893aabe7-651f.pdf>:
- ՀՀ ընտրական օրենսգիրք (Սահմանադրական օրենք), ընդունվել է 2016 թվականի մայիսի 25-ին (վերջին մուտքը՝ 10.03.2017)՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=105967>:
- **ՀՀ ՄԻՊ** (2019) «Տարեկան հաղորդում 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին», Երևան (վերջին մուտքը՝ 26.06.2019)՝ <https://www.ombuds.am/images/files/8f03a4f279d0491fd510fca443f8f269.pdf>:
- **ՀՀ Սահմանադրություն** (ընդունվել է 2015 թ. դեկտեմբերի 6-ին) (վերջին մուտքը՝ 20.07.2019)՝ http://www.parliament.am/law_docs5/Sahmanadrutyun_06-12.2015.pdf
- **ՀՀ ՎԿ** (2017) «ՀՀ սոցիալական վիճակը 2016 թվականին» (վերջին մուտքը՝ 20.07.2019)՝ <https://www.armstat.am/am/?nid=80&id=1958>:

2. Հայաստանի նոր իրողությունները. Ժողովրդավարության կոնսոլիդացում, թե՛ ինստիտուցիոնալացում

- **ՀՀ ՎԿ** (2018) «ՀՀ սոցիալական վիճակը 2017 թվականին» (վերջին մուտքը՝ 20.07.2019)՝ <https://www.armstat.am/am/?nid=80&id=2059>:
- **ՀՀ ՎԿ** (2019) «ՀՀ սոցիալական վիճակը 2018 թվականին» (վերջին մուտքը՝ 20.07.2019)՝ <https://www.armstat.am/am/?nid=82&id=2182>:
- **ՀՀ ՎԿ, ՀԲ** (2018) «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական - վերլուծական զեկույց, ըստ 2017թ. տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, Երևան (վերջին մուտքը՝ 20.07.2019)՝ https://www.armstat.am/file/article/poverty__2018-arm.pdf:
- **ՄԺԾԾ** (2020-2022) «ՀՀ 2020-2022 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր», ՀՀ Կառավարություն (վերջին մուտքը՝ 20.07.2019)՝ <https://www.gov.am/files/docs/3502.pdf>:

3. ՀԻՔՐԻԴԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ

ԱՆՆԱ ՍԱՐԿԻՍՅԱՆ

Սույն գլխում ներկայացվում են Վրաստանի ժողովրդավարության մակարդակի ինդեքսի (ԺՄԻ) միտումները 2000-2018 թթ., հատկապես 2016-2018 թթ. տեղի ունեցած քաղաքական, տնտեսական, սոցիալական, առողջապահական և կրթական հիմնական իրադարձությունները: Ինչպես երևում է Գծապատկեր 10-ից, ԺՄԻ-ն արձանագրում է կայուն աճ՝ 2018 թ. ունենալով ժամանակագրական շարքի ամենաբարձր ցուցանիշը: Նշված ժամանակահատվածում համաթվի աճի վրա զգալի է տնտեսական և սոցիալական գործոնների ազդեցությունը, որն արտացոլում է պետության ուշադրությունը հատկապես այդ երկու ոլորտների նկատմամբ:

Պետք է նշել, որ հարավկովկասյան երկրների նկատմամբ վերլուծաբանների կողմից հետաքրքրության պակաս չի նկատվել այդ պետությունների անկախությունից ի վեր: Բեռլինի պատի փլուզումը և դրան հաջորդած Խորհրդային Միության կազմալուծումը բազմաթիվ վերլուծաբանների մոտ հույս էին ներշնչել, որ կոմունիստական նախկին ճամբարում և աշխարհի այլ երկրներում ժողովրդավարության նոր տեսակ պիտի ձևավորվի (*Wheatley 2016, 1*): Վրաստանում ժողովրդավարացման գործընթացներին հատկապես ուշադիր են հետևում արևմտյան ժողովրդավարությունները՝ հաշվի առնելով երկրի քաղաքական կողմնորոշումը դեպի Արևմուտք: Այս տեսակետից սույն վերլուծությունը փորձ է կապեր հաստատելու ժողովրդավարության առաջընթացը պայմանավորող գործոնների և երկրում տեղի ունեցող գործընթացների միջև:

3. Հիբրիդային ժողովրդավարությունը Վրաստանում. կառավարման և ինքնակառավարման մարմինների արդիականացումը

Աղյուսակ 1

Վրաստանի Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական, Կրթական ու Առողջապահական գործոնների և ժողովրդավարության մակարդակի ինդեքսները (2000-2018 թթ.)*

Տարեթիվ	Ք _{ԳԻ}	Տ _{ԳԻ}	Ս _{ԳԻ}	Կ _{ԳԻ}	Ա _{ԳԻ}	ԺՄԻ
2000	0,353	0,372	0,514	0,382	0,411	0,385
2001	0,355	0,381	0,527	0,381	0,413	0,389
2002	0,324	0,388	0,532	0,389	0,443	0,383
2003	0,317	0,455	0,537	0,382	0,474	0,401
2004	0,336	0,485	0,545	0,439	0,458	0,422
2005	0,380	0,511	0,566	0,419	0,454	0,446
2006	0,398	0,657	0,600	0,450	0,445	0,498
2007	0,356	0,674	0,644	0,440	0,441	0,488
2008	0,350	0,599	0,736	0,450	0,469	0,480
2009	0,371	0,477	0,709	0,475	0,538	0,465
2010	0,414	0,541	0,707	0,460	0,567	0,501
2011	0,427	0,601	0,739	0,445	0,529	0,519
2012	0,531	0,634	0,781	0,406	0,528	0,571
2013	0,486	0,655	0,813	0,413	0,542	0,564
2014	0,514	0,710	0,821	0,419	0,553	0,592
2015	0,497	0,713	0,766	0,427	0,532	0,579
2016	0,525	0,706	0,768	0,545	0,550	0,604
2017	0,520	0,743	0,752	0,549	0,576	0,612
2018	0,521	0,760	0,807	0,549	0,591	0,625


* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

Ք_{ԳԻ}-ի, Տ_{ԳԻ}-ի, Ս_{ԳԻ}-ի, Կ_{ԳԻ}-ի, Ա_{ԳԻ}-ի և հետևաբար դրանց հիման վրա հաշվարկված ժՄԻ-ի որոշ տարիների արժեքները, հնարավոր է, աննշան տարբերվեն նախորդ հրապարակման համապատասխան տարիների արժեքներից՝ թարմացված և նոր տվյալների ներմուծմամբ պայմանավորված նվազագույն և առավելագույն արժեքների փոփոխման հետևանքով:

3.1 Քաղաքականությամբ զբաղվելու օգտակար արվեստը

Գծապատկեր 1

Վրաստանի Քաղաքական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)*



Քաղաքական գործոնների ինդեքսի ($P_{\text{գ}}$) վերջին տարիների միտումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2012 թվականի կտրուկ աճից հետո այն տատանվել է՝ պարբերաբար նվազելով կամ աճելով: Անկայունության այդ դրսևորումները նախ և առաջ վկայում են անցումային գործընթացի հիմնախնդիրներին և ժողովրդավարության համախմբման մարտահրավերներին դիմակայելու փորձերի մասին: Արդեն 2018 թ. տատանումների ուժգնությունը հետզհետե նվազել է, և արձանագրվել $P_{\text{գ}}$ -ի աննշան աճ նախորդ տարվա համեմատությամբ:

Վերջին շրջանի կարևոր իրադարձություններից էին Վրաստանում տեղի ունեցած խորհրդարանական և նախագահական ընտրությունները: 2016 թ. հոկտեմբերի 8-ին Վրաստանում կայացան խորհրդարանական ընտրություններ, որոնց մասնակցեց քսանհինգ կուսակցություն/կուսակցություններ:

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

3. Հիբրիդային ժողովրդավարությունը Վրաստանում. կառավարման և ինքնակառավարման մարմինների արդիականացումը

րի դաշինք: Դրանք անցկացվել են և՛ համամասնական, և՛ մեծամասնական ընտրակարգով (*Aleksanyan 2017, 59-61*):

Այս ընտրությունները նշանակալից էին ոչ միայն պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու տեսակետից, այլև այն հանգամանքով, որ մեծամասնություն ստացած քաղաքական ուժին իրավունք էր վերապահվում առաջադրել վարչապետի թեկնածություն և ձևավորել կառավարություն:

Այսպես, 2016 թ. խորհրդարանական ընտրություններից հետո Վրաստանի խորհրդարանում մեծամասնություն ստացած ուժը ձեռնամուխ եղավ սահմանադրական փոփոխությունների: Նույն տարվա դեկտեմբերի 15-ի խորհրդարանի որոշմամբ ստեղծված պետական սահմանադրական հանձնաժողովը ստանձնեց գործող Սահմանադրության շրջանակներում փոփոխությունների նախագիծ ներկայացնելու պարտավորություն: Խորհրդարանի նախագահի գլխավորած հանձնաժողովի վրա դրված էր բարձր պատասխանատվություն. նախատեսվում էր հիմնովին փոխել երկրի սահմանադրական տրամաբանությունը:

Բարեփոխումներից առաջ գործող Սահմանադրությունը Վրաստանի Միացյալ ազգային շարժման կողմից թողնված ժառանգություն էր և ամբողջովին «ձայնակցում» էր 2010 թ. սահմանադրական բարեփոխումներին, ըստ որի ստեղծված հիբրիդ համակարգը խորհրդարանական պարզ մեծամասնությանը հնարավորություն էր տալիս ազատորեն կայացնելու ցանկացած որոշում: 2010 թ. սահմանադրական ձևակերպումները գրեթե անհնարին էին դարձնում նաև Կառավարությանը և Վարչապետին հաշվետու պահելը լրացուցիչ բարդություններ ստեղծող կառուցողական անվստահության քվեի ընթացակարգով:

Սահմանադրական փոփոխությունների նախագիծը երրորդ և վերջին ընթերցմամբ Խորհրդարանն ընդունեց 2017 թ. սեպտեմբերի 26-ին: Նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին դժկամությամբ ստորագրեց նախագիծը՝ նշելով, որ կնախընտրեր ունենալ միասնական համաձայնություն վայելող փաստաթուղթ և ոչ թե միակուսակցական կամարտահայտություն, որը միտված էր ամրացնելու իշխող ուժի դիրքերը (*Radio Free Europe/Radio Liberty 2017*):

Փոփոխված Սահմանադրությամբ Վրաստանը անցում է կատարում խորհրդարանական կառավարման ձևի: Հիմնական փոփոխությունները վերաբերում են Նախագահի ինստիտուտին. 2024 թ. սկսած՝ Նախագահն ընտրվելու է հինգ տարով՝ 300 հոգուց կազմված ընտրիչների խորհրդի կողմից, որը բաղկացած է լինելու Խորհրդարանի բոլոր պատգամավորներից և Աբխազիայի ու Աջարիայի ինքնավար հանրապետությունների բարձրագույն մարմինների ներկայացուցիչներից:

Բացի այդ, խորհրդարանական ընտրություններում կուսակցությունները պետք է հաղթահարեն 5% շեմը (բացառություն են լինելու 2020 թ. ընտրությունները, որոնց համար նախատեսված է 3% անցողիկ շեմ): Խորհրդարանական փոքրամասնություններին տրվում է հնարավորություն կազմավորելու հետաքննող և այլ հանձնաժողովներ: Արգելվում է գյուղատնտեսական նպատակով օգտագործվող հողերի վաճառքը օտարերկրացիներին:

Հետաքրքիր քննարկում էր ծավալվել խորհրդարանական ընտրություններում հաղթահարվող շեմի շուրջ: Այսպես, 2019 թ. հունիսին «Վրացական երազանք» կուսակցության նախագահ Բիծինա Իվանիշվիլին հայտարարեց, որ 2020 թ. խորհրդարանական ընտրություններն անցկացվելու են համամասնական ցուցակներով՝ զրո անցողիկ շեմով (*EPDE 2019*): Ինչպես նշել է Խորհրդարանի խոսնակ Արչիլ Թալակվաձեն, այդ նախաձեռնությունը թույլ կտա ունենալ ավելի հավասարակշռված և հանգիստ քաղաքական մթնոլորտ, կրճատել բևեռացումը և ստեղծել համագործակցության հնարավորություն (*Agenda.ge 2019*): Կուսակցությունների հզորացման ու դրանց ինստիտուցիոնալացման կարևորության մասին նշում են բազմաթիվ հեղինակներ: Այդ քննարկումները հանգում են այն մտքին, որ կուսակցությունների կայացումը նպաստում է պետություններում ժողովրդավարության համախմբմանը և ավտորիտար ու ամբողջատիրական անցյալից հրաժարվելուն (*Bader 2008, 84*):

Պետք է նշել, որ սահմանադրական փոփոխությունները միանշանակ ընդունելության չարժանացան իշխանության տարբեր ճյուղերի ներկայացուցիչների կողմից: Այսպես, Նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին մտահոգություն ուներ նոր Սահմանադրությամբ նախատեսված Նախագահին կից

3. Հիբրիդային ժողովրդավարությունը Վրաստանում. կառավարման և ինքնակառավարման մարմինների արդիականացումը

գործող Ազգային անվտանգության խորհուրդը վերացնելու նորմ մտցնելու կապակցությամբ: 2017 թ. մայիսի 10-ին տեղի ունեցած թբիլիսյան ռազմավարական քննարկումների ընթացքում նա մասնավորապես նշեց, որ «զինված ուժերի հզորացման և լուրջ մարտահրավերներին պատրաստ լինելու ուղղությամբ աշխատող հաստատությունն իսպառ բացակայում է նոր Սահմանադրության մեջ և փոխարինված է մի կողմից Պաշտպանության խորհրդով, որը կգործի միայն պատերազմի ժամանակ, իսկ մյուս կողմից՝ կարգախոսով, որ Վրաստանը պետք է դառնա ՆԱՏՕ-ի անդամ» (*Civil.ge 2017a*): Անվտանգության խորհուրդ ունենալու կարևորությունը շեշտել են նաև տարածաշրջանով հետաքրքրված և մասնագիտական ներգրավվածություն ունեցող անձինք: Մասնավորապես, Ռոնալդ Մագնումը, որը 2005-2011 թթ. համակարգում էր Վրաստանի Պաշտպանության նախարարությանը կից ԱՄՆ-ի թռչակի անցած զինվորականների թիմը, նշել էր, որ նոր Սահմանադրությունը պետք է անպայման ուղենշի Ազգային անվտանգության խորհրդի գործունեությունը: Վրաստանի նման երկրի համար, որն ունի կառավարության սակավաթիվ կազմ, անհրաժեշտ է մի մարմին, որը հիմնականում զբաղված կլինի ազգային անվտանգությանը վերաբերող խնդիրների վերլուծությամբ: (*Civil.ge 2017b*):

Եւս Վենետիկի հանձնաժողովը հանդես եկավ կարծիքով, որում մասնավորապես ասվում էր. «Վենետիկի հանձնաժողովը կարծում է, որ առաջարկված բարեփոխումն արժանի է դրական գնահատականի, քանի որ այն ամբողջացնում է Վրաստանի քաղաքական համակարգի զարգացումը դեպի խորհրդարանական համակարգ և նպաստում երկրի սահմանադրական կարգի բարելավմանը» (*Venice Commission 2017*):

2018 թ. հոկտեմբերի 28-ին Վրաստանում տեղի ունեցան նախագահական ընտրություններ (*CEC 2018*), որոնք ուշագրավ էին ոչ միայն թեկնածուների աննախադեպ քանակով, այլ նաև մի շարք այլ պատճառներով: Քառասունվեց թեկնածու էր առաջադրվել, որոնցից Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մերժել էր քսանմեկին և գրանցել քսանհինգին: Դրանք ամենաշատ թեկնածուներով գրանցված ընտրություններն էին Վրաստանի անկախությունից ի վեր: Քսանհինգից տասնինը ներկայացնում էին քաղաքական տարբեր կուսակցություններ: Մնացյալ վեցին, այդ

թվում և գործող նախագահ Սալումե Զուրաբիշվիլին, առաջադրել էին նախաձեռնող խմբերը: Այստեղ մի հետաքրքիր նրբություն կա. Վրաստանի Ընտրական օրենսգիրքը տարբեր մոտեցումներ է նախատեսում կուսակցության և նախաձեռնող խմբի առաջադրած թեկնածուների նկատմամբ: Կուսակցություններից առաջադրվածները վայելում են որոշակի արտոնություններ, ինչպիսիք են, օրինակ՝ հեռուստատեսային անվճար եթեր կամ մասնակցություն հեռուստաբանավեճերին, եթե կուսակցությունը հաղթահարել է 3% ընտրական շեմը վերջին ընտրություններում: Նախաձեռնող խմբերից առաջադրվածները չեն օգտվում նման արտոնություններից, սակայն Ընտրական օրենսգիրքը նախատեսում է դեպքեր, երբ նախաձեռնող խմբի կողմից առաջադրված թեկնածուին կարող են վերապահվել նման արտոնություններ (ՎՀ ընտրական օրենսգիրք 2011, Հոդված 51 (8)):

Աղյուսակ 2

**ՎՀ 2018թ. նախագահի ընտրություններին թեկնածուների ստացած ձայները
տոկոսով³⁸**

Թեկնածուներ	2018	
	I փ.	II փ.
Սալումե Զուրաբիշվիլի (անկախ թեկնածու)	38,64	59,52
Գրիգոր Վաշաձե (Միացյալ ազգային շարժում)	37,74	40,48
Դավիթ Բաքրաձե (Եվրոպական Վրաստան – Ազատության շարժում)	10,97	-
Շավլա Նաթելաշվիլի (Վրաստանի աշխատանքային կուսակցություն)	3,74	-
Դավիթ Ուսուպաշվիլի (Ազատ դեմոկրատներ)	2,26	-
Զուրաբ Զափարիձե («Գիրչի» կուսակցություն)	2,26	-
Կախա Կուկավա (Ազատ Վրաստան)	1,33	-
Այլ թեկնածուներ	3	-

Նախագահական ընտրություններն անցան երկու փուլով: Երկու հիմնական թեկնածուներ Սալումե Զուրաբիշվիլին և Գրիգոր Վաշաձեին չհաջողվեց ակնհայտ մեծամասնություն ստանալ, քանի որ ձայները գրեթե հա-

³⁸ Տվյալների աղբյուրը՝ տե՛ս ՎՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայք՝ <https://results20181128.cec.gov.ge/eng/> (20.07.2019):

3. Հիբրիդային ժողովրդավարությունը Վրաստանում. կառավարման և ինքնակառավարման մարմինների արդիականացումը


վասարաչափ էին բաշխվել՝ համապատասխանաբար 38,64% և 37,74% (CEC 2018): Առաջին փուլին մասնակցեց 1,637,956 մարդ, որը ընտրողների 46,74% էր (Agenda.ge 2018):

Արդեն երկրորդ փուլում, որը տեղի ունեցավ 2018 թ. նոյեմբերի 28-ին, Սալոմե Ջուրաբիշվիլին 59,52% արդյունքով հաղթեց Գրիգոլ Վաշաձեին (տե՛ս Աղյուսակ 2):

Հավելենք, որ այս ընտրությունները վերջինն էին, երբ Վրաստանի քաղաքացիները ուղիղ քվեարկությամբ էին ընտրում հանրապետության Նախագահին: Այսուհետ նոր Սահմանադրությամբ Նախագահին ընտրվելու է ընտրիչների կողմից՝ երկրի՝ ամբողջովին խորհրդարանական համակարգի կառավարման անցնելու պատճառով:

Գծապատկեր 2

Հանրային վստահությունը ՎՀ Նախագահի նկատմամբ, 2008-2017 թթ. (%)³⁹




³⁹ Տվյալների աղբյուրը՝ ՀՌԿԿ-Հայաստանի առցանց տվյալների վերլուծության բազա, Կովկասյան բարոմետրի տարածաշրջանային կայք՝ <https://www.caucasusbarometer.org/en/> (20.07.2019):

Պետք է նշել, որ 2012 թ.-ից սկսած Նախագահի ինստիտուտի նկատմամբ վստահության դանդաղ աճ է նկատվում: Գծապատկեր 2-ում ժամանակային շարքով ցույց է տրվում վրաց հասարակության վերաբերմունքի փոփոխությունը այդ ինստիտուտի հանդեպ: Ընդ որում, դա չի վերաբերում սահմանադրական փոփոխություններով պայմանավորված Նախագահի քաղաքական լիազորությունների սահմանափակմանը: Այսինքն՝ բովանդակային առումով հասարակության գոհունակությունն աճում էր Գիորգի Մարգվելաշվիլի պաշտոնավարումից, որն իրականացնում էր կիսախորհրդարանական համակարգով նախատեսված գործառույթներ:

3.2 Տնտեսությունը որպես ժողովրդավարացման միջոց

Գծապատկեր 3
Վրաստանի Տնտեսական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)*



Վրաստանի Տնտեսական գործոնների ինդեքսը ($S_{գի}$), Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված, 2009 թ. անկումից հետո ունեցել է աճի հստակ միտում: 2010 թ.-ից $S_{գի}$ -ի անընդմեջ աճն

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

3. Հիբրիդային ժողովրդավարությունը Վրաստանում. կառավարման և ինքնակառավարման մարմինների արդիականացումը

ընդհատվում է 2016 թ.-ին, որից հետո այն դարձյալ վերականգնվում է՝ 2018 թ. գրանցելով ամենաբարձր ցուցանիշը:

Ըստ Համաշխարհային բանկի զեկույցի՝ Վրաստանի տնտեսությունը միջինում տարեկան 4,5% տոկոս աճ է ապահովում: Տնտեսական կառավարման բնագավառում լայնածավալ բարեփոխումների շնորհիվ Վրաստանը ստացել է «աստղային բարեփոխող» համբավը (*World Bank 2019*):

Հետամուտ լինելով երկրի տնտեսական աճի ապահովմանը՝ Վրաստանը գործընկերային հարաբերություններ է հաստատում համաշխարհային տարբեր շուկաների հետ: 2014 թ.-ից ԵՄ հետ գործող Ասոցացման համաձայնագրի⁴⁰ շրջանակում Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱԳ) ստեղծմամբ Վրաստանը, միացյալ շուկայում ստանալով պրեֆերենցիալ ռեժիմ, իր երկրի արտադրողներին լայն հնարավորություն է ընձեռում՝ իրացնելու իրենց արտադրանքը ԵՄ-ի հսկայական շուկայում: 2016-2018 թթ. դեպի ԵՄ արտահանման ցուցանիշները կայուն աճ են ապահովում՝ 2016 թ. կազմելով 565,7, 2017 թ.՝ 655,4, 2018 թ.՝ 730,7 միլիոն ԱՄՆ դոլար, իսկ արտահանման ընդհանուր ծավալները եղել են 2016 թ.՝ 2,1, 2017 թ.՝ 2,7, 2018 թ.՝ 3,4 միլիարդ ԱՄՆ դոլար⁴¹: Նշված թվերը դրական միտում են նախանշում. համաձայնագրի շրջանակներում տնտեսական հարաբերությունների խորացումը, դրանով պայմանավորված՝ տնտեսական բարեփոխումների իրականացումը երկարաժամկետ հեռանկարում խոստանում են երկիրը թույլ մրցակցայինից վերածել ԵՄ անդամ պետությունների լիարժեք գործընկերոջ: Համագործակցության դրույթների արդյունավետ իրականացման շնորհիվ՝ երկրում ոչ միայն զարկ կտրվի տնտեսական աճին, այլև այն իր հետ կբերի ինստիտուտների ամրապնդում, կանխատեսելի և թափանցիկ իրավական կարգավորումներ, բարելավված ներդրումային միջավայր: Այս ամենի իրականացումը կխթանի հասարակական կյանքի

⁴⁰ Տե՛ս “Association agreement between the European Union and the European Atomic Energy Community and their Member States, of the one part, and Georgia, of the other part” (20.08.2014). [https://eur-lex.europa.eu/legal-content/en/TXT/PDF/?uri=CELEX:2-2014A0830\(02\)](https://eur-lex.europa.eu/legal-content/en/TXT/PDF/?uri=CELEX:2-2014A0830(02)) (20.07.2019):

⁴¹ Տվյալների աղբյուրը՝ Վրաստանի ազգային վիճակագրական գրասենյակի պաշտոնական կայք՝ <https://www.geostat.ge/en/modules/categories/35/external-trade> (25.07.2019):

այլ ոլորտների առաջընթացը՝ բարձրացնելով երկրի բարեկեցության ընդհանուր մակարդակը:

Սակայն Համաձայնագիրը կյանքի կոչելու իրականացման ընթացքի և ծավալների վերաբերյալ կան որոշակի վերապահումներ: Թեև այն կնքելուց հետո դեպի ԵՄ արտահանման ցուցանիշները աճել են, այնուամենայնիվ եղել են սպասվածից ցածր: Պատճառը բացատրող մի քանի գործոն կա: Նախ, պետք է նշել, որ մինչև Ասոցացման պայմանագրի ստորագրումն ու ԽՀԱԱԳ-ն կյանքի կոչելը Վրաստանի և ԵՄ միջև արդեն իսկ գործում էր Արտոնությունների ընդհանրացված համակարգը (GSP+), որով վրացական արտադրության բազմաթիվ ապրանքներ արտահանվում էին դեպի ԵՄ: Ու թեև Ասոցացման համաձայնագրի շրջանակում ազատ առևտրի գոտու ստեղծմամբ այդ ապրանքների ցանկն ընդլայնվեց, սակայն դրանց ազդեցությունն արտահանման ընդհանուր ծավալի վրա նշանակալի չէր: Ավելացած ապրանքատեսակներն էին գինին, պանիրը, ոչխարի և այծի միսը, շոկոլադը, կաշին և մորթին, թարմ և պահածոյացված հատապտուղները և այլն, որոնք մինչ այդ ընդգրկված չէին GSP+-ում:

Բացի այդ, կառավարական մարմինների և արտադրողների միջև կա օրենսդրության ներդաշնակեցման ժամկետների, իրականացման և տեղայնացման հետ կապված ընկալումների տարբերություն: Սա հատկապես վերաբերում է գյուղատնտեսական ապրանքներ արտադրողներին, որոնք պիտի առաջնորդվեն Սանիտարական և բուսասանիտարական ընդունված նորմերով: Այս ընթացակարգերում առկա անհստակությունների պատճառով գյուղացիները չեն կարողանում ավելի շատ գյուղատնտեսական ապրանքներ արտահանել ԵՄ շուկա (*OSGF 2016*):

Թեև դրական, բայց աճի դանդաղ տեմպի պատճառներից է նաև արտադրական ծավալների սակավությունը: Փոքր և միջին ձեռնարկությունների համար արտադրական ծավալների մեծացումն անմիջականորեն պայմանավորված է ֆինանսական միջոցների հասանելիությամբ: Վրացական բանկերի՝ ՓՄՁ-ներին առաջարկված վարկերի տոկոսադրույքները բավական բարձր են, չկան մատչելի վարկեր ոլորտային զարգացման համար:


Ի լրումն ներքին խնդիրների՝ Համաձայնագրով նախատեսված տնտեսական զարգացմանը խոչընդոտում են աշխարհաքաղաքական իրողու-

3. Հիբրիդային ժողովրդավարությունը Վրաստանում. կառավարման և ինքնակառավարման մարմինների արդիականացումը

թյունները: Ռուսաստանի սահմանած պատժամիջոցները, օտարերկրյա ներդրումների սակավությունը, ենթակառուցվածքների ոչ լիարժեքությունը դանդաղեցնում են ԵՄ ուղղությամբ ակնկալվող զարգացումը:

Գծապատկեր 4

Հանրային կարծիքի ուսումնասիրություն ռուսների հետ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու վերաբերյալ (2009-2017)⁴²



Ուշագրավ է, որ 2017-2018 թթ. Ռուսաստանը շարունակում է մնալ վրացական ապրանքների արտահանման առաջատար երկրներից մեկը: 2018 թ. դեպի Ռուսաստան արտահանման ծավալները կազմել են 436,6 միլիոն ԱՄՆ դոլար, որը կազմում է ընդհանուր արտահանման 13%-ը: Այլ գործընկերների շարքում են Ադրբեյջանը, Թուրքիան, Հայաստանը, Չինաստանը⁴³: Ընդ որում, եթե այս ցանկի բոլոր երկրների հետ Վրաստանն ունի բարիդրացիական հարաբերություններ, և տրամաբանական է դրանց հետ


⁴² Տվյալների աղբյուրը՝ ՀՌԿԿ-Հայաստանի առցանց տվյալների վերլուծության բազա, Կովկասյան բարոմետրի տարածաշրջանային կայք՝ <https://www.caucasusbarometer.org/en/> (20.07.2019):

⁴³ Տվյալների աղբյուրը՝ Վրաստանի ազգային վիճակագրական գրասենյակի պաշտոնական կայք՝ <https://www.geostat.ge/en/modules/categories/35/external-trade> (25.07.2019):

տնտեսական հարաբերությունների զարգացումը, ապա Ռուսաստանի պարագայում, թվում էր, թե պետք է տնտեսական հարաբերությունների սառեցում նկատվեր: Մինչդեռ արտահանման ծավալները դեպի Ռուսաստան իրենց բացարձակ արժեքով վերջին տարիներին միայն աճել են: Ինչպես առևտրաշրջանառության դեպքում, այնպես էլ հասարակական ընկալումներում (տե՛ս Գծապատկեր 4) Ռուսաստանը չի դիտարկվում որպես երկիր, որի հետ հարաբերություններն անցանկալի են: Սա վկայում է, որ մարդկանց գիտակցության մեջ հստակ սահմանազատում կա քաղաքական խնդիրների և տնտեսական շահի ընկալման միջև:

Գծապատկեր 5

Հանրային կարծիքի ուսումնասիրություն թուրքերի հետ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու վերաբերյալ (2009-2017)⁴⁴



Ուշարժան է, որ թուրքերի հետ բիզնես վարելու հարցում վրաց հասարակությունը նույնքան խանդավառ չէ, որքան ռուսների պարագայում (տե՛ս

⁴⁴ Տվյալների աղբյուրը՝ ՀՌԿԿ-Հայաստանի առցանց տվյալների վերլուծության բազա, Կովկասյան բարոմետրի տարածաշրջանային կայք՝ <https://www.caucasusbarometer.org/en/> (20.07.2019):

3. Հիբրիդային ժողովրդավարությունը Վրաստանում. կառավարման և ինքնակառավարման մարմինների արդիականացումը

Գծապատկեր 5): Այստեղ վրաց հասարակության և իշխանությունների մոտեցումների միջև բավականին տարբերություն է նկատվում:

Վրաստանը տարածաշրջանում առաջինը կնքեց ազատ առևտրի համաձայնագիր Չինաստանի հետ: Երկար բանակցություններն ավարտվեցին 2017 թ. մայիսի 13-ին Համաձայնագրի ստորագրմամբ և 2017 թ. նոյեմբերի 28-ին վավերացմամբ: Այն ուժի մեջ մտավ 2018թ. հունվարի 1-ին⁴⁵: Համաձայնագրի շրջանակը ներառում է ապրանքների առևտրաշրջանառություն, ծառայություններ, մտավոր սեփականության իրավունքներ, ինչպես նաև այնպիսի նոր ուղղություններ, ինչպիսիք են առցանց առևտուրը, շուկայական մրցակցության և շրջակա միջավայրի վերաբերյալ հարցեր (*FTA 2019*): Վրաստանը դեպի Չինաստան է արտահանելու պղնձի և երկաթի հանքաքար, ընդեղեն, գինի, ոսկի և կիսապատրաստի ապրանքներ: Իսկ Չինաստանը Վրաստան է ներկրելու շինարարական մեքենաներ, արտադրական սարքավորումներ, պողպատ, էլեկտրոնիկա, տեքստիլ, հագուստ և կենցաղային տեխնիկա (*Lopatina 2018*):


Նշելով Չինաստանի հետ բարձր մակարդակի հարաբերությունների կարևորությունը՝ որոշ վերլուծաբաններ, այնուամենայնիվ, զգույշ են այդ Համաձայնագրով արձանագրված հաջողությունների մասին արտահայտվելիս: Այսպես, Եվրոպա-Վրաստան ինստիտուտի տնօրեն Ռևազ Տոպուրիան իր հոդվածում նշում է, որ Չինաստանի հետաքրքրվածությունը Վրաստանով պայմանավորված էր ոչ միայն տնտեսական կապերի հաստատմամբ, այլև իր «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության մեջ Վրաստանին որոշակի տեղ հատկացնելով՝ հաշվի առնելով Վրաստանի աշխարհագրական դիրքը և վերջին տարիներին կյանքի կոչած երկաթգծային հաղորդակցությունը: Վրաստանն, իր հերթին, դրա դիմաց փորձում էր ստանալ ներդրումների հոսք և աշխատատեղերի ստեղծում, որոնց ծավալները Համաձայնագրի ստորագրումից մեկ տարի անց դեռ չեն գոհացնում: Հեղինակը նշում է, սակայն, որ տնտեսական հարաբերությունների դանդաղ տեմպի մեղավորները ոչ միայն և ոչ այնքան Համաձայնագրի կողմերն

⁴⁵ Տե՛ս “Free Trade Agreement Between the Government of the People’s Republic of China And The Government of Georgia” (May 13, 2017, Beijing). http://fta.mofcom.gov.cn/georgia/annex/xdzw_en.pdf (20.07.2019):

են, որքան տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրավիճակը և մասնավորապես Ռուսաստանի ներկայությունը ու Չինաստանի՝ ԱՄՆ հետ տնտեսական պատերազմի մեջ գտնվելը (*Topuria 2019*): Այնուամենայնիվ, այս Համաձայնագրի ստորագրումը տարածաշրջանում շահեկան դիրք է ապահովում Վրաստանին, որն այս մակարդակի հարաբերություններ ունի միաժամանակ Չինաստանի և ԵՄ հետ:

3.3 Սոցիալական վեկտորի զարգացումներն ու խնդիրները

Գծապատկեր 6
Վրաստանի Սոցիալական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)*



Սոցիալական գործոնների ինդեքսը որոշակի տատանումներ է արձանագրել 2016-2018 թթ.՝ գրանցելով 2016թ.՝ 0,768, 2017թ.՝ 0,752, 2018թ.՝ 0,807 ցուցանիշները: 2017թ. ցուցանիշի անկման ամենաակնառու հանգամանքը պետական բյուջեում սոցիալական ոլորտին նախորդ տարվա համե-

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

3. Հիբրիդային ժողովրդավարությունը Վրաստանում. կառավարման և ինքնակառավարման մարմինների արդիականացումը

մատ հատկացված ավելի քիչ ֆինանսական միջոցներն են (*Ministry of Finance of Georgia 2017*): Ու թեև 2018 թ. արձանագրվել է ամենաբարձր ցուցանիշը ողջ ժամանակային շարքում, սոցիալական ոլորտը մնում է մտահոգիչ և առավել խոցելի ոլորտ, որում բարեփոխումներ իրականացնելու Կառավարության ջանքերի արգասիքը երկարաժամկետ հեռանկարում միայն կարող է շոշափելի արդյունք տալ:


2016-2018 թթ. ժամանակաշրջանի նորամուծություններից է պարտադիր կենսաթոշակային համակարգի ներդրումը Վրաստանում: 2018 թ. հուլիսի վերջին Խորհրդարանի ընդունած օրինագիծը մինչև քառասուն տարեկան աշխատողներին պարտադրում է միանալ կենսաթոշակային կուտակային համակարգին: Ըստ օրինագծի քաղաքացին, գործատուն և պետությունը հավասարապես երկուական տոկոս կփոխանցեն պահուստային հիմնադրամին:⁴⁶ Սույն նախաձեռնությունը արժանացավ քննադատության մի քանի պատճառով: Ընդհանուր առմամբ, դժգոհությունը հայեցակարգային է. պարտադիր կենսաթոշակային համակարգում ներառված աշխատողները գտնում են, որ հարկատուների շրջանակը մեծացնելու փոխարեն ընդգրկված քաղաքացիների վրա է լրացուցիչ բեռ դրվում: Մինչդեռ հիմնական խնդիրը ստվերում աշխատողներին հարկային դաշտ բերելն է:

Հարկատուները նաև չեն կիսում Կառավարության խանդավառությունն առ այն, որ պարտադիր կուտակային համակարգի միջոցով հնարավոր կլինի «երկար փողեր» ունենալ, քանի որ այդտեղ ընդգրկվածների թիվը փոքր է տնտեսության մեջ երկրում դրա հաշվին էական փոփոխություն կատարելու համար:

⁴⁶ Տե՛ս “Law of Georgia on Pension Savings.” No. #3303-ES, adopted on 21 July 2018. http://www.economy.ge/uploads/files/2017/ek__politika/pension_savings_law_final_ng.pdf (15.07.2019):

3.4 Ուսումը լույս է. զարգացման ծրագրերի հեռանկարները

Գծապատկեր 7
Վրաստանի Կրթական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)^{*}



Գծապատկեր 7-ում Կրթական գործոնների ինդեքսը կայուն առաջընթաց է արձանագրել: 2016-2018 թթ. ժամանակահատվածում Վրաստանը ակտիվ քայլեր է նախաձեռնել կրթական ոլորտի բարեփոխումների ուղղությամբ: Մեծ կարևորություն է տրվում ընդհանուր կրթական համակարգի ուժեղացմանը՝ միասնական մոտեցման սկզբունքով: 2017 թ. ուժի մեջ մտած «Վաղ և նախադպրոցական կրթության մասին» օրենքով⁴⁷ իշխանությունները նպատակ ունեին բարձրացնել նախադպրոցական տարիքի երեխաների կրթական մակարդակը՝ դպրոցական կրթական համակարգին ավելի լավ պատրաստված լինելու նպատակով:

^{*} Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

⁴⁷ Տե՛ս “Law of Georgia on Early and Preschool Education.” No. 5366-IIS, adopted on 8 June 2016. https://www.ilo.org/dyn/natlex/natlex4.detail?p_lang=en&p_isn=104529 (15.07.2019):

3. Հիբրիդային ժողովրդավարությունը Վրաստանում. կառավարման և ինքնակառավարման մարմինների արդիականացումը

Վրաստանում գործում է 2085 հանրային և 236 մասնավոր դպրոց: Ըստ 2016 թթ. վիճակագրության՝ դպրոցներում ներգրավված աշակերտների թիվը կազմում էր 564 729 երեխա (հանրայինում՝ 508 888, մասնավորում՝ 55 841): Ուսուցիչների թիվը 65 445 էր (հանրայինում՝ 59 779, մասնավորում՝ 5 666) (*Ministry of Education, Science, Culture and Sports 2017*):

Ըստ «Կրթության և գիտության 2017-2021 թթ. միասնական ռազմավարության»՝ կրթական ոլորտի պետական ֆինանսավորումը զգալիորեն աճել է՝ 2017 թ. հասնելով 1,1 մլրդ լարիի՝ կազմելով ընդհանուր ՀՆԱ-ի 3,1%-ը (*Ministry of Education, Science, Culture and Sports 2017*):


Կրթության և գիտության ոլորտի բարեփոխումներին հսկայական օժանդակություն էր նաև 2014 թ.-ից վրաց կառավարությանը Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամի կողմից «Երկրորդ կոմպակտ»-ով 140 մլն դոլարի տրամադրումը: Վերջինիս նպատակն է բարեփոխել կրթության ընդհանուր որակը, դպրոցների ֆիզիկական կարողությունները, ամրապնդել շուկայում պահանջված որակների և կրթության միջև կապը, ներդնել գիտության, տեխնոլոգիաների, ինժեներիայի և մաթեմատիկական գիտությունների բարձրորակ ծրագրեր (*Millenium Challenge Corporation 2013*): Համագործակցության հուշագրով նախատեսված էր Վրաստանում հիմնել Սան Դիեգոյի համալսարանի մասնաճյուղ, իսկ 2016-2019 թթ.-ին դպրոցի ուսուցիչներին առաջարկել վերապատրաստման ծրագրեր (*Agenda.ge 2016a*):

Կրթական համակարգի բարելավելուն է միտված նաև ուսուցիչների աշխատավարձերի բարձրացումը՝ առաջին անգամ «Վրացական երազանքի» իշխանության գալուց հետո (*Agenda.ge 2016b*):

Վրաստանը ջանքեր է ներդնում նաև ԵՄ հետ Ասոցացման պայմանագրի շրջանակներում կրթության ոլորտում առաջընթաց գրանցելու համար:

3.5 Առողջապահական վարքագծի փոփոխությունը

Գծապատկեր 8
Վրաստանի Առողջապահական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)^{*}



2016-2018 թթ. Առողջապահական գործոնների ինդեքսը կտրուկ տատանումներ չի արձանագրել: Այն պայմանավորող ցուցանիշների ազդեցությունը գրեթե նկատելի չէ, քանի որ նշված տարիների համար ոլորտի փոփոխությունները նշանակալի չեն: Կարելի է նշել, որ առողջապահական ոլորտի բարեփոխումների շնորհիվ բնակչությանն ավելի հասանելի են դարձել առողջապահական նվազագույն ծառայությունները: Առողջապահության ընթացիկ ծախսերը 2016-2018 թթ. եղել են ՀՆԱ-ի 8%-ի սահմաններում⁴⁸: Այդ ձեռնարկների շնորհիվ բարձրացել է կյանքի սպասվող միջին տևողությունը՝ 2016 թ.՝ 72,7, 2017 թ.՝ 73,5, 2018 թ.՝ 74 տարի⁴⁹:

Դրական միտում է նկատվում նաև ծնելիության ցուցանիշներում. 2017 թ.-ին այն յուրաքանչյուր կնոջ հաշվով կազմել է 2,1 երեխա 2003 թ.-ին ար-

^{*} Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

⁴⁸ Տե՛ս ՀԲ պաշտոնական կայք՝

<https://data.worldbank.org/indicator/SP.DYN.LE00.IN?locations=GE> (25.07.2019):

⁴⁹ Տե՛ս Վրաստանի ազգային վիճակագրական գրասենյակի պաշտոնական կայք՝

<https://www.geostat.ge/en/modules/categories/320/deaths> (25.07.2019):

3. Հիբრიդային ժողովրդավարությունը Վրաստանում. կառավարման և ինքնակառավարման մարմինների արդիականացումը

ձանագրված 1,6 նույն ցուցանիշի համեմատ:⁵⁰ Նաև ծննդկանների մահացության դեպքերի ցուցանիշի դրական անկում է նկատվում. 2011 թ.-ին 100 հազար ծննդկանի հաշվով 32 մահացության դեպքերից այս ցուցանիշը 2017 թ.-ին կրճատվել է՝ հասնելով 25-ի:⁵¹

Մանկամահացության ցուցանիշները նույնպես նվազել են վերջին տարիներին: Այսպես՝ 2010 թ.-ին մինչև մեկ տարեկան երեխաների մահացությունը (1000 նորածինների հաշվով) եղել է 12,7, իսկ արդեն 2018 թ.՝ 8,7 դեպք:⁵²

Մահ առաջացնող հիվանդություններից առաջատար են սրտի իշեմիկ հիվանդությունը, կաթվածը, սրտի հիպերտոնիկ հիվանդությունը, Ալցհայմերի հիվանդությունը, թոքերի քաղցկեղը, թոքերի օբստրուկտիվ քրոնիկ հիվանդությունը, լյարդի ցիռոզը, շաքարային դիաբետը, ստամոքսի քաղցկեղը, երիկամների քրոնիկ հիվանդությունը (CDC 2019):

Առողջապահական վարքագծի փոփոխություն նախատեսող համընդհանուր բժշկական ապահովագրությունն ուժի մեջ մտավ 2014 թ.-ին: Դրա շահառուներն են Վրաստանի քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, չեզոք քաղաքացիությամբ անձինք, ինչպես նաև փախստականի, ապաստան հայցողի կարգավիճակ ունեցողները: 2017 թ. մայիսից շահառուների խմբերը ճշգրտվել են՝ ըստ անհատական եկամտի: Բարձր եկամուտ ունեցող անձինք (տարեկան 40 000 և ավելի լարի) դուրս բերվեցին ծրագրի հիմնական ծառայությունները ստացողների շրջանակից: Բացառություն են կազմում ծննդօգնության, կեսարյան հատման, հղի կանանց, ինֆեկցիոն հիվանդությունների սպասարկման ծառայությունները: Սոցիալապես խոցելի խմբերի, երեխաների, սահմանափակ կարողություններով անձանց և թոշակառուների նկատմամբ նույնպես որևէ փոփոխություն նախատեսված չէ (Ministry of Labour, Health and Social Affairs of Georgia 2019):

⁵⁰ Տե՛ս ՀԲ պաշտոնական կայք՝

<https://data.worldbank.org/indicator/SP.DYN.TFRT.IN?locations=GE> (25.07.2019):

⁵¹ Տե՛ս ՀԲ պաշտոնական կայք՝

<https://data.worldbank.org/indicator/SH.STA.MMRT?locations=GE> (27.10.2019):


⁵² Տե՛ս ՀԲ պաշտոնական կայք՝

<https://data.worldbank.org/indicator/SP.DYN.IMRT.IN?locations=GE> (27.10.2019):

3.6 Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի զարգացման միտումները

Գծապատկեր 9

Վրաստանի ժողովրդավարության վրա ազդող Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական, Կրթական և Առողջապահական գործոնների ինդեքսները (2000-2018 թթ.)*



Գծապատկեր 10-ում ներկայացված տվյալների համաձայն՝ ԺՄԻ-ն 2000-2018 թթ. ունեցել է մի շարք կտրուկ վերելքներ և վայրէջքներ (2006 թ., 2009 թ., 2012 թ.): Այդուամենայնիվ, ԺՄԻ-ի կորի ընդհանուր միտումը դրական է, իսկ 2012 թ.-ից դրա աճը առավել նկատելի է:

2016-2018 թթ. ժամանակահատվածի ԺՄԻ-ի դրական դինամիկան հիմնականում ապահովվել է Տ_{գր}-ի և Ա_{գր}-ի կայուն աճով, ինչպես նաև Ք_{գր}-ի, Ս_{գր}-ի և Կ_{գր}-ի ընդհանուր դրական աճի միտումով: Այս առումով հետաքրքիր է դիտարկել, մասնավորապես, ավելի մեծ աճ ապահովող տնտես-

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:


ԺՄԻ-ի գործոնների ինդեքսները համեմատելի են միայն ըստ միտումների:

3. Հիբրիդային ժողովրդավարությունը Վրաստանում. կառավարման և ինքնակառավարման մարմինների արդիականացումը

սական գործոնները: Դասագրքային ճշմարտություն է, թերևս, որ քաղաքական, ոչ թոհչքաձև, բայց կայուն զարգացման պարագայում տնտեսական աճի ավելի արագ տեմպ է նկատվում:

Գծապատկեր 10

Վրաստանի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը (2000-2018 թթ.)*



Դիտարկվող 2000-2018 թթ. ժամանակահատվածում ԺՄԻ-ի ամենացածր ցուցանիշը գրանցվել է 2002 թ.-ին, ամենաբարձրը՝ 2018 թ.:

Նշված ժամանակահատվածում և կիրառված մեթոդաբանության շրջանակներում Վրաստանի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը գրանցում է կայուն դրական դինամիկա՝ հանրային կառավարման ոլորտի բարեփոխումների, շուկայական հարաբերությունների ազատականացման, իրավունքների և ազատությունների, մրցակցային ընտրությունների անցկացման և ժողովրդավարական այլ նորմերի ամրապնդման ու գործընթացների իրականացման շնորհիվ: Երկիրը շարունակում է ներգրավվել տարածաշրջանային և աշխարհագրական ավելի լայն ընդգրկմամբ քաղաքական և

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

տնտեսական նախաձեռնություններում՝ երկրի զարգացումը պայմանավորելով նաև արտաքին գործոններով:

3.7 Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի ռեգրեսիոն վերլուծությունը

Արուսյակ Ալեքսանյան, Աննա Սարկիսյան

Սույն ենթագլխում ներկայացվում են ռեգրեսիոն վերլուծության արդյունքները, որով առանձնացվել են Վրաստանի ժողովրդավարության մակարդակի վրա առավել նշանակալի ազդեցությամբ փոփոխականները:

Մոդելում ընդգրկված քաղաքական ցուցանիշներից նշանակալի կապ է հաստատվել ԺՄԻ-ի* և «Քաղաքական կայունություն / բռնության բացակայություն», «Օրենքի գերակայություն» և «Քաղաքական իրավունքներ և քաղաքացիական ազատություններ» փոփոխականների միջև (տե՛ս Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (Ք_{գր.}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Քաղաքական կայունություն/ բռնության բացակայություն	0,01	0,808	0,000	24
Օրենքի գերակայություն	0,004	0,929	0,000	24
Քաղաքական իրավունքներ և քաղաքացիական ազատություններ	-0,158	0,532	0,000	24

Տնտեսական գործոններից նշանակալի կապ է հաստատվել ԺՄԻ-ի և «արտաքին առևտրաշրջանառության» ու «տնտեսության վարկավորման» հետ (տե՛ս Աղյուսակ 4):

* ԺՄԻ-ն ժողովրդավարության մակարդակի ինդեքսն է, որից դուրս է բերվում համապատասխան անկախ փոփոխականը յուրաքանչյուր զույգային ռեգրեսիոն վերլուծության ժամանակ:

3. Հիբրիդային ժողովրդավարությունը վրաստանում. կառավարման և ինքնակառավարման մարմինների արդիականացումը

Աղյուսակ 4

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (S_{գր.}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Առևտրաշրջանառության ծավալը (ՀՆԱ%)	0,004	0,865	0,000	24
Տնտեսության վարկավորման ծավալները (ՀՆԱ%)	0,005	0,835	0,000	24

Մոդելում ընդգրկված սոցիալական ցուցանիշներից նշանակալի կապ է հաստատվել ժՄԻ-ի և «իրական աշխատավարձի» միջև (տե՛ս Աղյուսակ 5):

Աղյուսակ 5

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (U_{գր.}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Իրական աշխատավարձը (100 ԱՄՆ դոլար)	0,045	0,795	0,000	24

Կրթական գործոնների ռեգրեսիոն վերլուծությամբ ստացել ենք հետևյալ հավասարումները (տե՛ս Աղյուսակ 6).

Աղյուսակ 6

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (Կ_{գր.}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Մարդկային զարգացման համաթվի կրթության բաղադրիչը	2,101	0,902	0,000	24

Մոդելում ընդգրկված առողջապահական ցուցանիշներից նշանակալի կապ է հաստատվել ժՄԻ-ի և «կյանքի սպասվող տևողություն» փոփոխականի միջև (տե՛ս Աղյուսակ 7):

Աղյուսակ 7

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (Ա_{գր.}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Կյանքի սպասվող տևողությունը	0,061	0,661	0,000	24

Ինչպես նշեցինք, քաղաքական գործոններից Վրաստանի ժողովրդավարության վրա նշանակալի ազդեցություն ունեն «Քաղաքական կայունություն» և «Օրենքի գերակայություն» փոփոխականները, որոնց դրական փոփոխությունը 1 միավորով կբերի ԺՄԻ-ի աճին համապատասխանաբար 0,01 և 0,004 միավորներով: «Քաղաքական կայունություն» ու «Օրենքի գերակայություն» ունեն դետերմինացիայի բարձր գործակիցներ և պայմանավորում են ԺՄԻ-ի տատանումների 81-93%-ը: «Քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ինդեքսի» դրական փոփոխությունը 1 միավորով կնպաստի ԺՄԻ-ի աճին 0,158 միավորով:

Տնտեսական գործոններից Վրաստանի ԺՄԻ-ի վրա նշանակալի ազդեցություն ունեն առևտրաշրջանառությունը և տնտեսությանն ուղղված վարկերի ծավալները: Արտաքին առևտրաշրջանառության և տնտեսության վարկավորման ծավալի դրական փոփոխությունը 1%-ով ՀՆԱ-ի նկատմամբ կբերեն ԺՄԻ-ի աճին՝ համապատասխանաբար 0,004 և 0,005 միավորներով: Տնտեսական գործոնները պայմանավորում են կախյալի տատանումների 84-86%-ը:

Սոցիալական գործոններից իրական աշխատավարձի բարձրացումը 100 ԱՄՆ դոլարով դրականորեն կազդի ԺՄԻ-ի աճի վրա 0,045 միավորով:

Մարդկային զարգացման համաթվի (ՄԶՀ) կրթության բաղադրիչի աճը 0,1 միավորով կհանգեցնի ԺՄԻ-ի փոփոխությանը 0,21 միավորով: ՄԶՀ կրթության բաղադրիչի փոփոխականի դետերմինացիայի գործակիցն ամենաբարձրերից է և պայմանավորում է ԺՄԻ-ի տատանումների 90%-ը:

Միևնույն ժամանակ կյանքի սպասվող տևողության աճը 1 տարով կհանգեցնի ԺՄԻ-ի աճին 0,061 միավորով:

Այսպես, համապատասխան ոլորտային բարեփոխումներն ու վերոնշյալ բոլոր փոփոխականների աճը կհանգեցնեն Վրաստանում ժողովրդավարության մակարդակի բարձրացմանը:

Գրականության ցանկ

- **Agenda.ge** (2016a) “US Funding Supports professional Development of Georgiam Teachers.” February 3. Accessed July 17, 2019. <https://agenda.ge/en/news/2016/-284>.

3. Հիբրիդային ժողովրդավարությունը Վրաստանում. կառավարման և ինքնակառավարման մարմինների արդիականացումը

- **Agenda.ge** (2016b) “Salaries Increase for Georgian Teachers.” April 14. Accessed July 17, 2019. <https://agenda.ge/en/news/2016/885>.
- **Agenda.ge** (2018) “Presidential Elections: CEC Announces 46,74% Turnout.” October 28 (27.10.2019). Accessed July 17, 2019. <https://agenda.ge/en/news/2018/-2256>.
- **Agenda.ge** (2019) “Parliamentary Speaker Explains Constitutional Changes for 2020 Elections.” August 6. Accessed July 17, 2019. <https://agenda.ge/en/news/2019/-2116>.
- **Aleksanyan, Arusyak** (2017) “The Index of Democracy Level in Georgia.” In Trends of the Index of Democracy Level in the dimension of human rights and democratization (Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine and Moldova), edited by Arusyak Aleksanyan, 56-79. Yerevan: YSU press.
- Association agreement between the European Union and the European Atomic Energy Community and their Member States, of the one part, and Georgia, of the other part” (August 30, 2014). Official Journal of the European Union. [https://eur-lex.europa.eu/legal-content/en/TXT/PDF/?uri=CELEX:22014A0830\(02\)](https://eur-lex.europa.eu/legal-content/en/TXT/PDF/?uri=CELEX:22014A0830(02)).
- **Bader, Max** (2008) “Fluid Party Politics and the Challenge for Democracy Assistance in Georgia.” Caucasus Review of International Affairs, 2 (2): 84-93. Accessed July 18, 2019. http://www.cria-online.org/Journal/3/Fluid_Party_Politics_and_the_Challenge_for_Democracy_Assistance_in_Georgia_by_Max_Bader_done.pdf.
- **CDC** (2019) “Georgia Top 10 Causes of Death.” Centers for Disease Control and Prevention. Accessed July 18, 2019. <https://www.cdc.gov/globalhealth/countries/georgia/default.htm>.
- **CEC** (2018) “Elections 2018: Presidential Elections of Georgia - Second Round 28 November 2018.” Election Administration of Georgia. Accessed July 20, 2019. <https://results20181128.cec.gov.ge/eng/>.
- **Civil.ge** (2017a) “President Criticizes Planned National Security Council Abolishment.” November 5. Accessed July 17, 2019. <https://civil.ge/archives/126388>.
- **Civil.ge** (2017b) “Georgia Needs a National Security Council.” June 14. Accessed July 17, 2019. <https://civil.ge/archives/187529>.
- **EPDE** (2019) “Georgia: ISFED Statement on Proportional Elections with no Thresholds.” European Platform for Democratic Elections, June 25. Accessed July 20, 2019. <https://www.epde.org/en/news/details/isfed-welcomes-the-proportional-electoral-system-warns-about-risks-of-eliminating-threshold.html>.
- Free Trade Agreement Between the Government of the People’s Republic of China And The Government of Georgia” (May 13, 2017, Beijing). Accessed July 20, 2019. http://fta.mofcom.gov.cn/georgia/annex/xdzw_en.pdf.
- **FTA** (2019) “China-Georgia Free Trade Agreement.” China Free Trade Agreement Network. Accessed July 15, 2019. <http://fta.mofcom.gov.cn/topic/engeorgia.shtml>.

- Law of Georgia on Early and Preschool Education, No. 5366-IIS. Adopted on 8 June 2016. Accessed July 30, 2019. https://www.ilo.org/dyn/natlex/natlex4.detail?p_lang=en&p_isn=104529.
- **Lopatina, Irina** (2018) “Georgia Signs Free Trade Agreement with China. International Tax Review, January 30. Accessed July 30, 2019. <https://www.internationaltaxreview.com/article/b1f7n3d4sy1h2f/georgia-georgia-signs-free-trade-agreement-with-china>.
- **Millenium Challenge Corporation** (2013) “Millennium Challenge Compact between the United States of America acting through the Millennium Challenge Corporation and Georgia.” Accessed July 18, 2019. [http://www.mcageorgia.ge/cms-/Uploads/legal_acts/Georgia-Compact_II\[1\]1.pdf](http://www.mcageorgia.ge/cms-/Uploads/legal_acts/Georgia-Compact_II[1]1.pdf).
- **Ministry of Education, Science, Culture and Sports of Georgia** (2017) “Unified Strategy of Education and Science 2017-2021.” Accessed July 25, 2019. <http://mes.gov.ge/content.php?id=7755&lang=eng>.
- **Ministry of Finance of Georgia** (2017) “2017 State Budget Of Georgia: Chapter III - Georgian State Budget Expenditures, non-financial Assets and their Functional Classification.” Accessed July 25, 2019. https://mof.ge/images/File/biujetis-kano-ni2017/eng/chapter_III.pdf.
- **Ministry of Labour, Health and Social Affairs of Georgia** (2019) “Healthcare State Programs.” Accessed July 25, 2019. <https://www.moh.gov.ge/uploads/files/-2019/Failebi/HSP.pdf>.
- Organic Law of Georgia, Election Code of Georgia (2011). Accessed July 25, 2019. <https://matsne.gov.ge/en/document/download/1557168/22/en/pdf>.
- **OSGF** (2016) “DCFTA: Risks and Opportunities for Georgia.” Open Society Georgia Foundation. Accessed July 30, 2019. https://www.osgf.ge/files/2016/Publications/-DCFTA-ENG_WEB.pdf.
- **Radio Free Europe/Radio Liberty** (2017) “Georgia’s President Reluctantly Signs Constitutional Amendments.” October 20. Accessed July 25, 2019. <https://www.rferl.org/a/georgia-president-signs-constitutional-amenments/2880634-2.html>.
- **Topuria, Revaz** (2019) “Georgia can Stiil be a Hub for China, but only if the Belt and Road Survives.” The Diplomat, August 27. Accessed July 30, 2019. <https://thediplomat.com/2019/08/georgia-can-still-be-a-hub-for-china-but-only-if-the-belt-and-road-survives/>.
- **Venice Commission** (2017) “Venice Commission Opinion on the Draft Constitutional Amendments.” Adopted on 15 December 2017 at the Second Reading by the Parliament of Georgia. Accessed July 30, 2019. [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2018\)005-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2018)005-e).
- **Wheatley, Jonathan** (2017) Georgia from National Awakening to Rose Revolution: Delayed Transition in the former Soviet Union. Rutledge.
- World Bank (2019) “Georgia: Country Snapshot.” Accessed July 30, 2019. <http://pubdocs.worldbank.org/en/540881554988618321/Georgia-Snapshot-Apr20-19.pdf>.

4. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ. ԿԱՐԳԱԽՈՐՄ, ԹԵ՛ ԶԱՓԵԼԻ ԱՐԺԵՔ

ԱՐՏՅՈՄ ՏՈՆՈՅԱՆ

1993 թ. սեպտեմբերի 29-ին Ադրբեջանի խորհրդարանի խոսնակ Հեյդար Ալիևը, որն այդ ընթացքում ժամանակավոր ստանձնել էր նաև երկրի նախագահի լիազորությունները, հոկտեմբերի 3-ին նշանակված նախագահական ընտրություններից առաջ ներկայացնելով ապագա Ադրբեջանի մասին իր «պատկերացումները», հայտարարեց. «*Ադրբեջանական Հանրապետությունում պետք է կառուցենք ժողովրդավարական-իրավական պետություն: Ադրբեջանը պետք է առաջ գնա ժողովրդավարության ճանապարհով, և մենք երբևէ չենք վերադառնալու ամբողջատիրական համակարգին՝ կոմունիստական ռեժիմին: Ադրբեջանում պետք է իշխի քաղաքական բազմակարծությունը: Պետք է հաստատվի մարդու, խոսքի, դավանանքի և լեզվի ազատություն» (ՅՏԳՅՐՈՎ 2010):*

Ադրբեջանի պատմության հետխորհրդային շրջանը, որի ավելի քան 90%-ը կառավարել են Հեյդար Ալիևը և նրա որդին՝ Իլհամ Ալիևը, ցույց է տալիս, որ երկուսն էլ իրենց քաղաքական գործունեության ընթացքում վերոնշյալ տեքստում տրված խոստումներին հակառակ են գործել, ավելի ճիշտ կլիներ «պետք է» արտահայտության փոխարեն օգտագործել «չպետք է» և հակառակը:

Ունենալով ազգային-էթնիկական խայտաբղետ քարտեզ, խորհրդային արժեիզմը հաղթահարող, մեծամասամբ շիա հասարակություն, քաղաքական-կլանային համակարգ և դրանց զուգահեռ՝ նավթային ու գազային ահռելի պաշարներ՝ Հեյդար Ալիևը որդեգրեց Ադրբեջանում քաղաքական

կայունության հաստատման ոչ թե ժողովրդավարական, այլ բռնապետական մոդելը, որը ժառանգեց և մինչև օրս շարունակում է դրան հետևել նաև Իլիամ Ալիևը:

Միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների և դիտորդական առաքելությունների հրապարակած զեկույցները, Ադրբեջանի Հանրապետության ընդդիմադիր գործիչների հայտարարությունները, քաղաքական և կրոնական մեծաքանակ բանտարկյալները, քրեական կեղծ գործեր հարուցելու և տարատեսակ հալածանքների, անգամ սպանությունների միջոցով ազատ խոսքը լռեցնելու դեպքերը, Ադրբեջանը ներկայացնող քաղաքական վտարանդիների մեծ թիվը, հատկապես եվրոպական երկրներում, ինչպես նաև միջազգային մամուլում երկրի նախագահի, նրա քաղաքական թիմի անդամների ու մերձավորների անունների հիշատակումը՝ ամենատարբեր կոռուպցիոն գործարքների հետ կապված, փաստում են, որ Խորհրդային Միության փլուզումից հետո և հատկապես սկսած 1993 թ.-ից՝ Ադրբեջանում ժողովրդավարությունը խորքային ճգնաժամի մեջ է:

**4. Ժողովրդավարությունը հետխորհրդային Ադրբեջանում.
կարգախոս, թե՛ չափելի արժեք**

Աղյուսակ 1

**Ադրբեջանի Քաղաքական, Սոցիալական, Տնտեսական, Կրթական ու
Առողջապահական գործոնների և Ժողովրդավարության մակարդակի
ինդեքսները (2000-2018 թթ.)***

Տարեթիվ	Ք_{ԳԻ}	Տ_{ԳԻ}	Ս_{ԳԻ}	Կ_{ԳԻ}	Ա_{ԳԻ}	ԺՄԻ
2000	0,230	0,337	0,589	0,447	0,269	0,325
2001	0,266	0,394	0,597	0,429	0,264	0,353
2002	0,246	0,481	0,665	0,410	0,275	0,373
2003	0,247	0,591	0,672	0,422	0,403	0,418
2004	0,282	0,644	0,695	0,435	0,480	0,459
2005	0,260	0,558	0,715	0,399	0,483	0,426
2006	0,281	0,547	0,726	0,387	0,393	0,422
2007	0,275	0,519	0,764	0,377	0,355	0,411
2008	0,272	0,514	0,800	0,371	0,328	0,409
2009	0,281	0,502	0,850	0,429	0,408	0,430
2010	0,273	0,553	0,865	0,401	0,385	0,436
2011	0,258	0,545	0,903	0,471	0,376	0,438
2012	0,247	0,583	0,949	0,363	0,398	0,439
2013	0,247	0,584	0,969	0,390	0,416	0,447
2014	0,250	0,572	0,987	0,406	0,440	0,451
2015	0,227	0,604	0,917	0,429	0,541	0,456
2016	0,198	0,592	0,819	0,422	0,544	0,429
2017	0,225	0,469	0,815	0,422	0,551	0,409
2018	0,213	0,499	0,837	0,422	0,551	0,414


* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

Ք_{ԳԻ}-ի, Տ_{ԳԻ}-ի, Ս_{ԳԻ}-ի, Կ_{ԳԻ}-ի, Ա_{ԳԻ}-ի և հետևաբար դրանց հիման վրա հաշվարկված ԺՄԻ-ի որոշ տարիների արժեքները, հնարավոր է, աննշան տարբերվեն նախորդ հրապարակման համապատասխան տարիների արժեքներից՝ թարմացված և նոր տվյալների ներմուծմամբ պայմանավորված նվազագույն և առավելագույն արժեքների փոփոխման հետևանքով:

4.1 Ադրբեջանում ժողովրդավարության մակարդակի վրա ազդող քաղաքական գործոններն ու դրանց առանձնահատկությունները

Գծապատկեր 1

Ադրբեջանի Քաղաքական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)^{*}



Ադրբեջանի ժողովրդավարության մակարդակը արտահայտող Քաղաքական գործոնների ինդեքսի կորի (տե՛ս Գծապատկեր 1) դիտարկումը 1995-2018 թթ. ժամանակահատվածում⁵³ ցույց է տալիս, որ վերջին տասը

^{*} Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

⁵³ ԱՀ ԺՄԻ ինդեքսի առաջին երկու՝ 1995-2014 թթ. և 1995-2015 թթ. վերլուծությունները կատարել են Վ. Հունանյանը (*Հունանյան 2016*) և Տ. Հայրապետյանը (*2017*), որոնցում քաղաքական գործոնների ինդեքսը կազմվել է և վերլուծվել նույն մեթոդաբանությամբ: Բացի այդ՝ 1995-2017 թթ. ներառող ժամանակահատվածի համար ԱՀ քաղաքական գործոնների ինդեքսի վերլուծություն է կատարել նաև Ա. Տոնոյանը (*Տոնոյան 2018*): Դա ընտրված գործիքակազմի առումով որոշակիորեն նույնա-

4. Ժողովրդավարությունը հետխորհրդային Ադրբեջանում. Կարգախոս, թե՛ չափելի արժեք

տարիների ընթացքում Ադրբեջանում տեղի է ունեցել Ք_{ԳԻ} դանդաղ, աստիճանական անկում, ընդ որում՝ 2016 թ. ընթացքում դա եղել է համեմատաբար ավելի արտահայտված:

2015 թ.-ին ԱՀ-ում սկսված սոցիալ-տնտեսական ճգնաժամը (համաշխարհային շուկայում նավթի գների անկման հետևանքով ազգային արժույթի կրկնակի արժեզրկում, բանկային ոլորտում իրավիճակի վատթարացում, իրական միջին աշխատավարձի շեշտակի անկում, բյուջեի թերակատարում) և սրանով պայմանավորված՝ հասարակական-քաղաքական ճգնաժամը, որը ուղեկցվեց խորհրդարանական ընտրություններին նախորդած ցնցումներով, ներիշխանական և ներկլանային պայքարի սրացմամբ և ապա՝ որպես հետևանք, Ազգային անվտանգության նախարարության լուծարմամբ, դրա ղեկավար Էլդար Մահմուդովի և կառույցի բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաների ու գեներալների պաշտոնանկություններով ու դատերով⁵⁴, ինչպես նաև Նարդարանի դեպքերով (*Տոնյան 2018*), տրամաբանական շարունակություն ստացան 2016 թ.-ին: Հիմնական առանցքային իրադարձությունները, որոնք պայմանավորել են Ք_{ԳԻ} կորի համեմատաբար շոշափելի անկումը 2016 թ.-ին, ըստ ժամանակագրության ունեն հետևյալ հաջորդականությունը՝

- **հունվար**՝ ցույցեր և սոցիալական անհնազանդություններ Սիագանում, Շաբրանում, Ղուբայում, Լենքորանում և վերջինիս հարակից շրջաններում,

կան է առաջին երկուսի հետ: Նշված երեք հետազոտությունները, դրանցում արձարձված խնդիրները չկրկնելու նպատակով սույն ուսումնասիրության մեջ հիմնական շեշտը դրվել է 2016-2018 թթ. ժամանակահատվածի վրա:

⁵⁴ 2015 թ. խորհրդարանական ընտրություններից առաջ ԱՀ Ազգային անվտանգության համակարգում առաջացած ճգնաժամին Ի. Ալիևի արձագանքման ձևը, ձեռնարկած պատժիչ գործողությունները իրենց ընդհանուր տրամաբանությամբ համեմատելի են 2005 թ. խորհրդարանական ընտրություններին նախորդած շրջանում տեղի ունեցած զարգացումների հետ, երբ նախընտրական շրջանի ներկլանային խմորումների հետևանքով ընտրություններից 20 օր առաջ՝ հոկտեմբերի 16-ին, պետական հեղաշրջում նախապատրաստելու մեղադրանքով ձերբակալվեցին ԱՀ առողջապահության նախարար Ալի Ինսանովը, նրա եղբայր Ռաֆիկ Ինսանովը, Էկոնոմիկայի նախարար Ֆարիադ Ալիևը և նախագահի աշխատակազմի գործերի կառավարիչ Աքիֆ Մուրադվերդիևը (*Տոնյան 2018*):

- **մայիս**՝ քաղիասարակության ակտիվ ներկայացուցիչներ Ղիյաս Իբրահիմովի և Բայրամ Մամմադովի ձերբակալությունները կեղծ մեղադրանքներով,
- **ապրիլ**՝ քառօրյա պատերազմ ղարաբաղյան հակամարտության գոտում,
- **սեպտեմբեր**՝ Սահմանադրական բարեփոխումների հանրաքվե:

2016 թ. հունվարին ԱՀ մայրաքաղաք Բաքվից դուրս՝ հիմնականում երկրի հյուսիսային թաթաբնակ (Սիազան, Շաբրան, Ղուբա), հարավային թալիշաբնակ հատվածներում, ինչպիսիք են Լենքորանը, Ջալիլաբադը և Ասթարան, ինչպես նաև հարավարևմտյան վարչական շրջաններում (Ֆիզուլի, Աղջաբեդի, Բայլական և Աղսու) գրեթե միաժամանակ սկսում են բազմամարդ ցույցեր (*BBC 2016a*), որոնք թաթաբնակ Սիազանում ավարտվել են ՆԳՆ զորքերի և ցուցարարների միջև բախումներով, արցունքաբեր գազի կիրառմամբ, 13-ամյա դպրոցական աղջկա հիվանդանոց տեղափոխմամբ և 55 ցուցարարների ձերբակալությամբ (*BBC 2016b*): Իրավիճակի գրեթե նույնական պատկեր է արձանագրվել նաև նշված մյուս շրջաններում: Իշխանություններն Ադրբեջանի տարածքում զանգվածային ցույցեր «հրահրելու մեջ» անմիջապես մեղադրել են «Ադրբեջանի ժողովրդական ճակատ» (այսուհետ՝ ԱԺՃ) և «Մուսավաթ» կուսակցությունների ղեկավարությանը (*ARBP 2016*)⁵⁵: Իհարկե, իրականում նշված երկու ընդդիմադիր ուժերի, ինչպես նաև «Ադրբեջանի ազգային անկախության կուսակցության» շրջանային կենտրոնները կազմակերպչական ակտիվ մասնակցություն են ունեցել այդ ցույցերին (*BBC 2016b*): Թեև դրանք ունեին սոցիալական շարժառիթներ և պայմանավորված էին կենսական անհրաժեշտության ապրանքների գների թանկացմամբ և հատկապես գյուղական բնակավայրերում գործազրկության բարձր մակարդակով (*IRFS 2016*), սակայն,

⁵⁵ ԱՀ Գլխավոր դատախազության և ՆԳՆ 14.01.2016 թ. համատեղ հայտարարության մեջ մասնավորապես նշվել է. «Նախնական քննությամբ պարզվել է, որ Սիազան, Լենքորան, Ֆիզուլի, Աղջաբեդի, Աղսու քաղաքներում և համանուն վարչական շրջանների այլ բնակավայրերում հրահրված և երկրում հասարակական հանգստությունը խաթարելուն միտված անօրինական գործողությունները կազմակերպել են ԱԺՃ և «Մուսավաթ» կուսակցությունների ակտիվիստները, ինչպես նաև մի շարք ծայրահեղական կրոնական խմբավորումներ» (*ARBP 2016*):

4. Ժողովրդավարությունը հետխորհրդային Ադրբեջանում. Կարգախոս, թե՛ չափելի արժեք

հաշվի առնելով սոցիալական շարժման օջախների էթնիկական գործոնը, բացառված չէր, որ դրանք կարող էին վերածվել թաթ և հատկապես թալիշ ժողովուրդների ազգային ազատագրական պայքարի (*Pravda 2016*) կամ, դատելով ԱՀ Գլխավոր դատախազության և ՆԳՆ 14.01.2016 թ. համատեղ հայտարարության որոշ կետերից (*ARBP 2016*), ստանային կրոնական երանգավորում:

Ադրբեջանում հասարակական-քաղաքական խոսույթում սոցիալ-տնտեսական խնդիրների թեման փակելու և սեփական հասարակության ուշադրությունը շեղելու նպատակ էր հետապնդում թերևս նաև ապրիլ ամսին քառօրյա պատերազմի սանձազերծումը դարաբաղյան հակամարտության գոտում (*Տնտյան 2018*), որը ԱՀ նախագահին ժամանակ շահելու և ներքին սոցիալական լարվածությունը թուլացնելու, ներքաղաքական կյանքը հանդարտեցնելու հնարավորություն տվեց:

ԱՀ ԺՄԻ ինդեքսում 2016 թ. Ք_{ԳԻ} անկումային կորի վերլուծության տեսանկյունից հետաքրքիր իրադարձություններ էին մայիս ամսին քաղաքական դրդապատճառներով⁵⁶ NiDA շարժման⁵⁷ երիտասարդ ակտիվիստներ Ղիյաս Իբրահիմովի և Բայրամ Մամմադովի ձերբակալումը, թմրանյութեր պահելու և իրացնելու մասին կեղծ մեղադրանքի առաջադրումը և ապա 10 տարվա ազատազրկման դատապարտումը (*BBC 2016c*): Այս իրադարձությունը ոչ միայն ունեցավ ներքաղաքական և ներհասարակական մեծ հնչեղություն⁵⁸, այլև լայն արձագանքներ գտավ Ադրբեջանի սահմաններից դուրս և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կազմակերպությունների զեկույցներում ներկայացվեց որպես ԱՀ-ում իշխանությունների կողմից խոսքի ազատության սահմանափակման և մարդու իրավունք-

⁵⁶ Ադրբեջաներեն *günlü* նշանակում է «ծաղիկ», իսկ *qul* «ստրուկ», ինչը հնարավորություն էր տվել երիտասարդ ակտիվիստներին դիմել հետաքրքիր բառախաղի. Հեյդար Ալիևի ծննդյան օրվա և այդ կապակցությամբ ԱՀ-ում նշվող ծաղկի տոնից մեկ օր առաջ մի տառի փոփոխությամբ «Ձեր ծաղկի տոնը շնորհավոր» արտահայտությունը փոխել և նրա արձանի վրա գրել «Ձեր ստրուկի տոնը շնորհավոր» (*Meydan 2016a*):

⁵⁷ Շարժման պաշտոնական կայքի հասցեն է <http://www.nidavh.org>:

⁵⁸ Այս միջադեպը խստորեն դատապարտել են «Մուսավաթ» կուսակցությունը (*Azadliq Radiosu 2016*) և «Ժողովրդավարական ուժերի ազգային խորհուրդ» ընդդիմադիր ուժերի դաշինքը (*Azadliq qəzeti 2016*):

ների կոպիտ ոտնահարման հերթական օրինակ (*Amnesty International 2016, HRW 2016a*)⁵⁹: Հետագայում՝ 2019 թ. մարտի 16-ին, Ղիյաս Իբրահիմովը և Բայրամ Մամմադովն ազատ արձակվեցին ԱՀ նախագահ Ի. Ալիևի ստորագրած համաներման հրամանագրով⁶⁰:

Ադրբեջանի ԺՄԻ ինդեքսում քաղաքական գործոնների կորի՝ 2016 թ. անկումը պայմանավորող մյուս կարևոր գործոնը սեպտեմբերյան հանրաքվեով ընդունված սահմանադրական փոփոխություններն էին, որոնք էլ ավելի ընդլայնեցին ԱՀ նախագահի լիազորությունները: Եթե Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը 2009 թ. մարտին անցկացված հանրաքվեով ընդունված սահմանադրական փոփոխություններով հասել էր միևնույն անձի՝ երկու անգամից ավել ընտրվելու սահմանափակումը վերացնելուն (ԱՀ Սահմանադրություն, 101-րդ հոդված, 5-րդ կետ)՝ ցմահ նախագահելու հնարավորություն ստանալով, ապա 2016 թ. փոփոխություններով էլ ավելի է ընդլայնում նախագահի լիազորությունները՝ Ադրբեջանը դարձնելով սուպեր-նախագահական կամ այլ եզրաբանությամբ «ավտորիտար նախագահական» երկիր: Ըստ նոր Սահմանադրության՝ ԱՀ նախագահը իրավունք է ստանում ընտրվել 7 տարի պաշտոնավարման ժամկետով (նախկին 5-ի փոխարեն) և հայտարարել նախագահի արտահերթ ընտրություններ (ԱՀ Սահմանադրություն, 101-րդ հոդված, 1-ին կետ), ցրել խորհրդարանը և նշանակել նոր ընտրություններ (ԱՀ Սահմանադրություն, 98.1 հոդված): Բացի այդ՝ այդ հանրաքվեով ԱՀ-ում նախագահի թեկնածուների տարիքային

⁵⁹ Ղ. Իբրահիմովի և Բ. Մամմադովի անունները տեղ են գտել մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող միջազգային 18 կազմակերպությունների՝ Ադրբեջանի վերաբերյալ համատեղ հայտարարության մեջ, որտեղ մասնավորապես նշված է. «Ներքոստորագրող կազմակերպությունները կոչ են անում ադրբեջանական իշխանություններին դադարեցնել լրագրողների՝ քաղաքական շարժառիթներով հեղափոխումները և ճնշումները, չեղարկել այլախոհությունը և ազատ խոսքը քրեականացնող նոր օրենքները, չեղարկել Ղիյաս Իբրահիմովի և Բայրամ Մամմադովի մեղադրական վճիռները...» (OMCT 2016a):

⁶⁰ Ըստ ԱՀ նախագահ Ի. Ալիևի՝ 16.03.2019 թ. ստորագրած համաներման հրամանի՝ ԱՀ բանտերից և կալանավայրերից ազատ արձակվեցին 431 հոգի: Հրամանագրի տեքստը (Məhkum edilmiş bir sıra şəxslərin əfv olunması haqqında Azərbaycan Respublikası Prezidentinin Sərəncamı, 16.03.2016) տե՛ս ԱՀ նախագահի պաշտոնական կայքում՝ <https://president.az/articles/32416>:

4. Ժողովրդավարությունը հետխորհրդային Ադրբեջանում. Կարգախոս, թե՛ չափելի արժեք

շեմը 35-ից իջեցվեց 18-ի, հետևաբար ընտրելու իրավունք ունեցող ցանկացած ոք կարող է դառնալ նախագահ (ԱՀ Սահմանադրություն, 100-րդ հոդված)⁶¹: Միաժամանակ ներդրվեց առաջին փոխնախագահի և փոխնախագահների ինստիտուտը, որոնց նշանակում է և ազատում ԱՀ նախագահը (ԱՀ Սահմանադրություն, 103.1 հոդված): Ուշագրավ է հատկապես այն, որ ըստ ԱՀ նոր Սահմանադրության 105.1 հոդվածի՝ ԱՀ նախագահի վաղաժամկետ պաշտոնաթողության դեպքում Առաջին փոխնախագահն ստանձնում է ԱՀ նախագահի պարտականությունները, և մինչև 60-օրյա ժամկետում անցկացվում են արտահերթ նախագահական ընտրություններ (ԱՀ Սահմանադրություն, 105.1 հոդված): Ըստ ԵՄ՝ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 20.10.2016 թ. նախնական գնահատականի⁶² և բերված իրավական հիմնավորումների, համաձայն որոնց ԱՀ նախագահը սահմանադրական այդ նոր նորանուծությամբ կարող է հեշտությամբ ապահովել իշխանության փոխանցումը իր նախընտրածին՝ 103.1 կետը չի համապատասխանում ժողովրդավարության նորմերին (*Venice Commission 2016, 16*): Թեև առաջարկված փոփոխություններից յուրաքանչյուրը դրված էր առանձին քվեարկության, և 26.09.2016 թ. հանրաքվեին մասնակցածների 91,15%-ը կողմ քվեարկեց նախագահի ղեկավարման ժամկետի երկարաձգմանը և նախագահին արտահերթ նախագահական ընտրություններ անցկացնելու լիազորությամբ օժտելուն, 87,74%-ը՝ առաջին փոխնախագահի և փոխնախագահների ինստիտուտի ներդրմանը, 89,29%-ը՝ նրանց՝ ԱՀ նախագահի կողմից

⁶¹ Բացառված չէ, որ ԱՀ Սահմանադրության մեջ Նախագահի թեկնածուների տարիքային շեմը 35-ից 18-ի իջեցումը պայմանավորված է գործող նախագահ Ի. Ալիևի՝ իշխանությունը ժամանակին որդուն՝ Հեյդար Ալիևին (ծնվ. 03.08.1997) փոխանցելու հաշվարկով, որը սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի օրերին 19 տարեկան էր:

⁶² Թեև ԱՄՆ դեպարտամենտը 16.08.2016 թ. խորհուրդ էր տվել Ադրբեջանի իշխանություններին սահմանադրական փոփոխությունների տեքստն ուղարկել Վենետիկի հանձնաժողով՝ կարծիքի, բայց դա չարվեց: 06.09.2016 թ. ԵԽԽՎ նախաձեռնությամբ 20.09.2016 թ. Վենետիկի հանձնաժողովը տվել է նախնական կարծիք, որում առաջարկվող սահմանադրական փոփոխություններն անվանվել են «բացասական և եվրոպական սահմանադրական ժառանգությանը ոչ համապատասխան» (*Հովհաննիսյան 2018*):

նշանակվելուն և ազատվելուն, 90,96%-ը՝ նախագահի թեկնածուների տարիքային շեմի նվազեցմանը, 87,35%-ը՝ նախագահի կողմից խորհրդարանը ցրելու լիազորություն տալուն (*MSK 2016*), սակայն հանրաքվեին նախորդած մոտ մեկ ամսվա ընթացքում սահմանադրական փոփոխությունների դեմ հանդես եկան Ադրբեջանի ընդդիմադիր ուժերը, մասնավորապես «Մուսավաթ», «ԱԺՃ» կուսակցությունները, «Հանրապետական այլընտրանք» և NİDA շարժումները, «Ժողովրդական կուսակցությունը», «Ժողովրդավարական ուժերի ազգային խորհուրդ» դաշինքը, կազմակերպվեցին զանգվածային ցույցեր և հանրահավաքներ՝ «Ընդդեմ միապետության և թալանի» նշանաբանով, սակայն դրանք ավարտվեցին բռնի ուժի գործադրմամբ, ձերբակալություններով և ակտիվիստների դեմ քրեական գործեր հարուցելով (*Հովհաննիսյան 2018*): Իսկ հանրաքվեից հետո ԵԽԽՎ դիտորդական առաքելության զեկույցում նշվեց մի շարք թերությունների, մասնավորապես սահմանադրական փոփոխությունների տեքստի առնչությամբ կարծիք ստանալու համար Վենետիկի հանձնաժողովին չդիմելու և երկրի ներսում հանրային քննարկումներ չկազմակերպելու մասին (*PACE 2016*): Ե՛վ սահմանադրական փոփոխություններին նախորդած մեկ ամսվա, և՛ հաջորդած շաբաթների ցույցերի ժամանակ տեղի ունեցած ձերբակալությունները (*HRW 2016b*), ինչպես նաև սոցիալական անհնազանդության հունվարյան հախուռն դրսևորումները նպաստել են ԺՄԻ ՔԳԻ-ն ձևավորող ենթագործոններից սոցիալական անհնազանդությունների 2015 թ. ցուցանիշի շոշափելի վատթարացմանը⁶³:

Բացասական փոփոխություն է գրանցվել նաև «Ազատության տուն» միջազգային կազմակերպության՝ մամուլի ազատության վարկանիշային սանդղակում, որի համաձայն՝ Ադրբեջանի մամուլի ազատությունը 2016 թ.-ին գնահատվել է 90 միավոր՝ 2015 թ. 89-ի փոխարեն⁶⁴ (100-ն ամենաբացասական գնահատականն է): Սա պայմանավորված է ոչ միայն միջազգային մեծ հնչեղություն ստացած Ղ. Իբրահիմովի և Բ. Մամադովի հանդես քաղաքական բռնաճնշումներով և խոսքի ազատության սահմանափակ-

⁶³ Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

⁶⁴ Տե՛ս «Freedom of the Press» բաժնում տրված տարեկան գնահատականները՝ <https://freedomhouse.org/report/freedom-press/2017/azerbaijan> (25.06.2019):

4. Ժողովրդավարությունը հետխորհրդային Ադրբեջանում. կարգախոս, թե՛ չափելի արժեք

մամբ, այլև 2016 թ. հուլիսին Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջման փորձից հետո գյուլենականների⁶⁵ նկատմամբ ճնշումների ուժեղացմամբ (*Freedom House 2017a, 38-39*). Անկարայի պահանջով վերջիններիս հետ կապի մեջ մեղադրվող «ANS» հեռուստաընկերությունը և «ANS ՇՄ» ռադիոկայանը զրկվեցին հեռարձակման և սփռման իրավունքից (*IWPR 2016*), իսկ «Zaman-Azərbaycan» օրաթերթի գործունեությունը դադարեցվեց, համանուն համացանցային կայքը ԱՀ տարածքում արգելափակվեց (*Freedom House 2017a, 38-39*): Արգելվեց նաև «BBC» (British Broadcasting Corporation), «VOA» (Voice of America), RFE/RL (Radio Free Europe/Radio Liberty) միջազգային լրատվական գործակալությունների առցանց սփռումը Ադրբեջանի տարածքում (*Freedom House 2017a, 38-39*):

Քաղիասարակության նկատմամբ ադրբեջանական իշխանությունների ճնշումները կասկածի տակ են դրել միջազգային կազմակերպությունների հետ այդ երկրի համագործակցությունը, և դա հատկապես սուր դրսևորվեց 2015-2017 թթ. ընթացքում:

Դեռևս 2015 թ. ապրիլին բնական պաշարների բաց և հաշվետու կառավարումը խթանող համաշխարհային ստանդարտ հանդիսացող Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը (ԱՃԹՆ)⁶⁶, որին

⁶⁵ Գյուլենականներն իսլամական բարեփոխիչ Ֆեթհուլլահ Գյուլենի (ծնվ. 27.04.1941 թ. Թուրքիայի Էրզրում նահանգում) հետևորդներն են: Գյուլենականությունը Թուրքիայում սկիզբ առած սոցիալ-կրոնական շարժում է, որի առանցքային գաղափարներից մեկն իսլամի ու ժողովրդավարության համատեղելիության գաղափարն է: Ադրբեջանում շարժումը տարածվել է 1991 թ.-ից (մանրամասն տե՛ս Հովսեփյան 2013):

⁶⁶ ԱՃԹՆ-ի (անգլ.՝ Extractive Industries Transparency Initiative (EITI)) ստանդարտն ընդգրկում է բնական պաշարների արդյունահանումից մինչև դրա՝ երկրի քաղաքացիների վրա ունեցած ազդեցության հետ կապված բոլոր հիմնական խնդիրները, մասնավորապես՝ ինչպես են տրամադրվում և գրանցվում ընդերքօգտագործման և ոլորտի այլ թույլտվություններն ու պայմանագրերը, ովքեր են այս գործընթացների շահառուները, ինչպիսին են ֆինանսական և իրավական կարգավորումները, որքան արտադրանք է ստացվում, ինչքան են ոլորտից պետական բյուջե ուղղվող եկամուտները, ինչպես են բաշխվում այդ եկամուտները, ինչ ներդրում է ապահովվում տնտեսության մեջ՝ ներառյալ զբաղվածության աճը: Նախաձեռնությանը միացած յուրաքանչյուր երկրում ԱՃԹՆ-ն իրականացվում է կառավարության, արդյունահանող ճյուղերի գործարար հատվածի կազմակերպությունների և

անդամակցում են աշխարհի 51 երկրներ, Ադրբեջանի կարգավիճակը «լիարժեք անդամից» իջեցրել էր «թեկնածուի»՝ պայմանավորված ԱՃԹՆ հետ համագործակցող ՀԿ-ների և առհասարակ քաղիասարակության ներկայացուցիչների հանդեպ բռնություններով: ԱՃԹՆ-ին ուղղված միջազգային իրավապահ բազմաթիվ կազմակերպությունների բաց նամակների հետևանքով, որոնցում բարձրաձայնվում էին Ադրբեջանում ԱՃԹՆ գործընթացին մասնակից քաղիասարակության ներկայացուցիչների նկատմամբ ճնշումների, քաղաքական հետապնդումների, քրեական կեղծ գործեր հարուցելու և ձերբակալությունների շարունակականության մասին, 2016 թ. հոկտեմբերի 26-ին ԱՃԹՆ խորհրդի որոշմամբ Ադրբեջանը մնաց «թեկնածուի» կարգավիճակում (*EITI 2016*): Արդեն 2017 թ. մարտի 9-ին Բոգոտայում կայացած ԱՃԹՆ խորհրդի 36-րդ նիստի ժամանակ որոշում կայացվեց առհասարակ սառեցնել ԱՀ անդամակցությունը այդ կազմակերպությանը (*EITI 2017*)⁶⁷:

2016 թ.-ին «Բաց կառավարման գործընկերություն» (ԲԳԳ) նախաձեռնությունը⁶⁸ ևս, հաշվի առնելով քաղիասարակության հանդեպ ադրբեջանական իշխանությունների քաղաքականությունը, մեկ տարի ժամկետով կասեցրեց պետության անդամակցությունը կազմակերպությանը, որն

քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կոալիցիայի միջոցով, ընդ որում, ըստ ԱՃԹՆ կանոնադրության, ստանդարտին միացած երկրի կառավարությունը պետք է ապահովի ԱՃԹՆ-ի գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցության հարցում խոչընդոտների բացակայությունը և ձեռնպահ մնա այնպիսի գործողություններից, որոնք կարող են ԱՃԹՆ-ի իրականացման շուրջ հանրային քննարկումները նվազեցնել կամ սահմանափակել (*ԱՃԹՆՍ 2016, 16*):

⁶⁷ ԱՃԹՆ-ին ԱՀ անդամակցության սառեցման հետևանքների մանրամասն վերլուծությունը տե՛ս Alili 2017:

⁶⁸ Բաց կառավարման գործընկերությունը (ԲԳԳ) ստեղծվել է 2011 թվականին 8 երկրների նախաձեռնությամբ՝ ԱՄՆ, Բրազիլիա, Ինդոնեզիա, Մեքսիկա, Նորվեգիա, Ֆիլիպիններ, Հարավային Աֆրիկա, Միացյալ Թագավորություն: ԲԳԳ հռչակագրում ասվում է, որ այն նպատակ ունի բարձրացնել կառավարողների գործողությունների մասին հրապարակայնությունը, խթանել հասարակության մասնակցությունը հանրային կյանքի կառավարմանը, ձևավորել առավել թափանցիկ և պատասխանատու իշխանություններ ([http://www.ogp.am/u_files/file/OGP%20Declaration%20of%20Prnciples_ARM.pdf_\(25.06.2019\)](http://www.ogp.am/u_files/file/OGP%20Declaration%20of%20Prnciples_ARM.pdf_(25.06.2019))):

4. Ժողովրդավարությունը հետխորհրդային Ադրբեջանում. կարգախոս, թե՛ չափելի արժեք

աննախադեպ էր անդամ որևէ երկրի՝ ԲԿԳ անդամակցությունը կասեցնելու առումով (*Freedom House 2017b, 8*):

Պատահական չէ, որ «Freedom House» իրավապաշտպան կազմակերպության՝ աշխարհում քաղաքական իրավունքներին և քաղաքացիական ազատություններին վերաբերող ամենամյա զեկույցներում Ադրբեջանը 2016 թ.-ին շարունակել է մնալ «ոչ ազատ»՝ կրկնելով պատմության ընթացքում այդ կազմակերպության զեկույցներում գրանցած 2015 թ. ամենավատ ցուցանիշները (*Snúnյան 2018*): Ընդ որում՝ այս ցուցանիշները չեն փոխվել նաև հաջորդ երկու տարիներին (*Freedom House 2018; 2019a*):

2017 թ.-ին ԱՀ Ժողովրդավարության մակարդակի հնդեքսի Ք_{ԳԻ} կորը ունեցել է որոշ դրական տեղաշարժ՝ մասամբ պայմանավորված 2017 թ. ընթացքում ԱՀ-ում ընտրական գործընթացների բացակայությամբ, որոնք, որպես կանոն, Ադրբեջանի պարագայում ուղղակի բացասական են ազդում Ք_{ԳԻ} վրա (*Snúnյան 2018*): Արդյունքում, ընտրական գործընթացների բացակայությունն աննշան, բայց դրական ազդեցություն է ունեցել հատկապես Ք_{ԳԻ}-ն ձևավորող կարևոր բաղադրիչներից «սոցիալական անհնազանդությունների» դաշտի վրա:

ԱՀ-ում 2017 թ. քաղաքական ամենակարևոր իրադարձությունը, թերևս, այն էր, որ ԱՀ նախագահ Ի. Ալիևը, ելնելով 2016 թ. սահմանադրական հանրաքվեի արդյունքում իրեն վերապահված լիազորություններից, փետրվարի 21-ի հրամանագրով առաջին փոխնախագահ է նշանակում իր կնոջը՝ Մեհրիբան Ալիևային⁶⁹: Հաշվի առնելով այն, որ ԱՀ Սահմանադրության 105 և 106.1 հոդվածներով բավական լայն լիազորություններ են նախատեսված ԱՀ առաջին փոխնախագահի համար, իսկ գործող նախագահ Ի. Ալիևն այդ պաշտոնին նշանակեց իր կնոջը և դրանով փաստացի ավելի ընդլայնեց իր ընտանիքի իշխանությունը, ընդդիմադիր մի շարք գործիչներ հանդես եկան այդ նշանակման դեմ: Հատկապես սուր քննադատություններով հանդես եկան ԱԺԾԿ առաջնորդ Ալի Քարիմլին և «Մուսավաթ»

⁶⁹ Հրամանագրի տեքստը (M.A.Əliyevanın Azərbaycan Respublikasının Birinci vitse-prezidenti təyin edilməsi haqqında Azərbaycan Respublikası Prezidentinin Sərəncamı, 21.02.2017) տե՛ս ԱՀ նախագահի պաշտոնական կայքում՝ <https://president.az/articles/22850> (25.06.2019):

կուսակցության առանցքային դեմքերից Իսա Ղամբարը (*Azadliq 2017*). ընդ որում, առաջինը առցանց տեսահոլովակով հայտարարեց նաև, որ Ի. Ալիևը փորձում է Ադրբեջանը վերածել ընտանեկան միապետության և կոչ արեց ԱՀ ժողովրդին խաղաղ ցույցերի ու պայքարի միջոցով կանխել դա⁷⁰:

Ընդհանուր առմամբ, 2016 թ. սեպտեմբերի սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն, ապա ստեղծված սահմանադրական հիմքի վրա Ի. Ալիևի կողմից սեփական կնոջը ուժեղ լիազորություններով օժտված առաջին փոխնախագահի պաշտոնում նշանակելը ԱՀ-ում էլ ավելի թուլացրին խորհրդարանի դերը և ևս երկու քայլով հեռացրին այդ երկիրը ժողովրդավարությունից և ժողովրդավարական կառավարման հիմնական սկզբունքներից:

Ըստ «Transparency International» միջազգային կազմակերպության՝ Կոռուպցիայի ընկալման ամենամյա ինդեքսների վերլուծության՝ 2016-2017 թթ. ընկած ժամանակահատվածում ԱՀ-ում կոռուպցիայի սանդղակում նկատվել է որոշակի դրական տեղաշարժ⁷¹ ի տարբերություն 2018թ., որն առանձնացել է բացասական միտմամբ⁷²: «Ազատության տան» տարեկան զեկույցները Ադրբեջանում 2017-2018 թթ. ընթացքում կոռուպցիայի աճ են

⁷⁰ ԱԺԾԿ ղեկավար Ա. Քարիմլին նշանակման առնչությամբ մասնավորապես ասել է. «Սա դավաճանություն է 100 տարի առաջ արևելյան մուսուլմանական աշխարհում ստեղծված հանրապետության, ժողովրդի դեմոկրատական ժառանգության նկատմամբ: Սա մի քայլ է Ադրբեջանում պաշտոնապես միապետություն, անգամ բացարձակ միապետություն ստեղծելու ուղղությամբ: Ես համարում եմ, որ ԱՀ ազգաբնակչությունը չպետք է հաշտվի մեր երկրում միապետության ստեղծման, դրա դե-յուրե և դե-ֆակտո մակարդակներում յուրացման հետ: ... Մենք մտադիր չենք համակերպվել մեր Սահմանադրությունը այս տեսակ կեղծելու և մի ընդհանրի կողմից իշխանությունը զավթելու իրողության հետ: Սահմանադրության շրջանակներում, ժողովրդավարության սկզբունքների հիման վրա խաղաղ պայքարի միջոցով վերականգնելու ենք երկրում հանրապետականության դրույթները» (*Amerikansesi 2017*):

⁷¹ Տե՛ս «Transparency International» միջազգային կազմակերպության պաշտոնական կայքը՝ https://www.transparency.org/news/feature/corruption_perceptions_index_2016 (25.06.2019):

⁷² Տե՛ս նույն տեղում՝ <https://www.transparency.org/cpi2018> (25.06.2019):

4. Ժողովրդավարությունը հետխորհրդային Ադրբեջանում. կարգախոս, թե՛ չափելի արժեք

արձանագրել, ընդ որում նշված երկու տարիների համար էլ սահմանվել է հնարավոր ամենաբացասական նիշը՝ 7⁷³:

ԱՀ իշխանությունները 2017 թ. ընթացքում շարունակել են բիրտ ուժի գործադրման և բռնաճնշումների քաղաքականությունը ինչպես իրենց քաղաքական ընդդիմախոսների և հատկապես ԱԺՃԿ ղեկավարների ու ակտիվիստների, այնպես էլ լրագրողների և քաղհասարակության ակտիվ ներկայացուցիչների նկատմամբ (*HRW 2018*)⁷⁴: ԱՀ իշխանությունների կողմից մամուլի և ազատ խոսքի սահմանափակման քաղաքականության մեջ 2017 թ. առանձնանում է սոցիալական ցանցերի վրա իշխանությունների սևեռմամբ և սեփական քաղաքացիների դեմ քրեական գործերի հարուցմամբ, ինչպես նաև վտարանդիության մեջ գտնվող և ԱՀ իշխանություններին քննադատող անձանց լռեցնելու ուղղությամբ գործողությունների ծրագրային փաթեթի մշակմամբ և կյանքի կոչմամբ, որի առանցքային երկու կետերն էին՝

1. գործադրել ճնշումներ ԱՀ սահմաններից դուրս գտնվող և իշխանություններին ակտիվ քննադատող անձանց՝ ԱՀ տարածքում գտնվող հարազատների նկատմամբ⁷⁵,
2. հնարավորության դեպքում ահաբեկել վտարանդի ընդդիմադիրներին կամ օրինական (քրեական գործի հարուցում և արտահանձնման կազ-

⁷³ Տե՛ս «Ազատության տուն» միջազգային կազմակերպության պաշտոնական կայքը՝ <https://freedomhouse.org/report/nations-transit/2018/azerbaijan> (25.06.2019):

⁷⁴ Ըստ «Human Rights Watch» իրավապաշտպան կազմակերպության տարեկան զեկուցման՝ 2017 թ. ընթացքում ԱՀ-ում երկարաժամկետ դատապարտման են ենթարկվել 25 ընդդիմադիր գործիչներ, անկախ լրագրողներ և քաղհասարակության ակտիվ ներկայացուցիչներ (*HRW 2018*):

⁷⁵ Օրինակ, փետրվար ամսին ԱՀ իշխանությունները բերման են ենթարկել Նիդերլանդներում քաղաքական վտարանդիության մեջ գտնվող Թեյմուրխան Օրդուխանի 12 հարազատներին, ընդ որում վերջինիս տարածած տեսահոլովակում նրա հետ հեռախոսազանգով կապ հաստատած ոստիկանության աշխատակիցը բացահայտ հայտարարում է, որ 12 անձանց բերման ենթարկելը Թ. Օրդուխանի համացանցային ակտիվության և հակաիշխանական քարոզչության պատճառով է (*Meydan 2018a*): Նույն շարքից էին նաև հունիսին Վրաստանում քաղաքական վտարանդիության մեջ գտնվող Վիդադի Իսկանդերովի 5 հարազատներին աշխատանքից հեռացնելը և հոր գերեզմանը պղծելը (*Amerikaninsesi 2018*):

մակերպում)⁷⁶, անօրինական ճանապարհներով (առևանգում⁷⁷) նշված անձանց ԱՀ տարածք տեղափոխել և նրանց նկատմամբ խստագույն պատիժներ կիրառել:

Հետագայում նույնպես 2018 և 2019 թթ. այս գործողությունների հիմնական նպատակն էր այս կերպ սահմանափակել Ադրբեջանում տիրող համատարած բռնատիրության պայմաններում արտասահմանում ապաստանած, սոցիալական ցանցերի և համացանցային այլ գործիքների միջոցով ԱՀ իշխանություններին քննադատող և երկրում արդեն մեծ լսարան ձեռք բերած գործիչների ակտիվությունը: Հատկանշական է, որ ԱՀ իշխանական շրջանակներում արձանագրվել է որոշակի վախ առ այն, որ Ադրբեջանում սոցիալական ցանցերի միջոցով կարող է կրկնվել Եգիպտոսի սցենարը: 2017 թ. հունվար ամսին ԱՀ խորհրդարանի իշխող կուսակցությունը ներկայացնող պատգամավոր, Մարդու իրավունքների հանձնաժողովի անդամ և Մամուլի խորհրդի նախագահ Աֆլաթուն Ամաշովը հանձնաժողովի նիստին հայտարարեց, որ պետք է Ադրբեջանում սոցիալական ցանցերի և բլոգերների գործունեությունը կարգավորող օրենքի նախագիծ մշակվի⁷⁸: Իսկ 2018 թ. մարտ ամսին իշխանական «Նոր Ադրբեջան կուսակցությունը» ներկայացնող պատգամավորներից Հադի Ռաջաբլին արդեն հայտարարեց, որ Ադրբեջանում պետք է փակվեն սոցիալական ցանցերը⁷⁹, որը, սակայն,

⁷⁶ Տե՛ս, օրինակ, թալիշ քաղաքական գործիչ Ֆախրեդդին Աբբասովի գործը (*Jamnews 2019*):

⁷⁷ Տե՛ս, օրինակ, Աֆղան Մուխթարլիի և Ֆիքրեթ Հուսեյնովի գործերը (*HRW 2018*):

⁷⁸ Այս հանձնաժողովի նիստի բուն նպատակը սոցիալական ցանցերում ազատ խոսքի սահմանափակման մեխանիզմների ներդրման թեմայով խորհրդարանական կամ առնվազն ՆԱԿ խմբակցության շրջանակներում փակ քննարկումներ սկսելն էր, որը ակնհայտ է նաև նիստի մասնակիցներից ԱՀ խորհրդարանի օրենսդրական փորձաքննության բաժնի պետ Սարվան Սադիդովի հետևյալ հայտարարությունից. «Ով ինչ ուզում, գրում է (սոցիալական ցանցերում – Ա.Տ.): Եվ սա է պատճառը, որ այս հարթությունում քառո է տրորում: Այս ոլորտը կարիք ունի իրավական կարգավորման» (*1news 2017*):

⁷⁹ Հ. Ռաջաբլին մասնավորապես հայտարարել է. «Պետք է ԱՀ տարածքում արգելափակել սոցիալական ցանցերը, և այս խնդրում չպետք է լինի որևէ հետքայլ: Քանի որ Ադրբեջանը նախագահական ընտրությունների նախաշեմին է, իսկ սահմանափակումների հիմնական նպատակը Ադրբեջանն ապակայունացնելն է: Այսօր Ադրբեջանի ժողովրդի գլխավոր նպատակը պետք է լինի մեր երկրում կայունության պահ-

4. Ժողովրդավարությունը հետխորհրդային Ադրբեջանում. Կարգախոս, թե՛ չափելի արժեք

չդարձավ օրենսդրական նախաձեռնություն, որովհետև արժանացավ հանրային բուռն հակազդեցության և սուր քննադատությունների:

Ասվաձն արտացոլվել է նաև «Ազատության տուն» միջազգային կազմակերպության՝ «Ազատությունը ցանցում» շարքի զեկույցներում, որտեղ հարավկովկասյան երկրներից 2017-2018 թթ. ամենավատ ցուցանիշն Ադրբեջանինն է՝ 60/100 (հմմտ. Հայաստան՝ 25/100, Վրաստան՝ 25/100), որը նշանակում է «մասնակի ազատ», այն դեպքում, երբ թե՛ Հայաստանը և թե՛ Վրաստանը որակված են որպես ազատ (*Freedom House 2019b*):

2018 թ. համար Ադրբեջանի քաղաքական գործընթացների վրա ազդող ամենաառանցքային իրադարձություններն ապրիլին անցկացված արտահերթ նախագահական ընտրություններն էին և հունիսի գանձակյան դեպքերը: 2018 թ. ԱՀ քաղաքական կյանքի և գործընթացների վրա էական նշանակություն ունեցած մյուս իրադարձությունը ՀՀ-ում ապրիլին մեկնարկած քաղաքական գործընթացներն էին և ժողովրդական ցույցերին հաջորդած նորընտիր վարչապետ Ս. Սարգսյանի հրաժարականն ու նոր իշխանությունների ձևավորումը, որոնք որոշակիորեն նոր օրակարգ բերեցին հարևան Ադրբեջանի քաղաքական գործընթացներում և իշխանական վերնախավի գործողություններում:

2018 թ. փետրվարի 5-ին ԱՀ նախագահ Ի. Ալիևը, օգտագործելով 2016 թ. սահմանադրական փոփոխությունների հանրաքվեով իրեն վերապահված լիազորությունները (*ԱՀ Սահմանադրություն, 101.1 հոդված*), առանց որոշումը պարզաբանելու ստորագրեց Արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու մասին հրամանագիր⁸⁰, որով անակնկալի

*պանումը: Եթե հեղինակը աշխարհում ընթացող գործընթացներին, կրեսնենք, թե սոցիալական ցանցերի միջոցով ինչպիսի վիճակի են հասցրել Եգիպտոսին, Եմենին և ուրիշ այլ պետությունների: Հենց նշածս երկրներում սադրող կայքերի և սոցիալական ցանցերի միջոցով գործի դրեցին զանգվածային հոգեբանության վրա ազդող տարբեր հնարքներ և իրավիճակը հասցրին քաոսային կետրի: Հաշվի առնելով այս ամենը՝ Ադրբեջանի ժողովուրդը պետք է բացահայտի բոլոր սադրիչների իրական դեմքերը» (*Meydan 2018b*):*

⁸⁰ Հրամանագրի տեքստը (Növbədənənkənar Azərbaycan Respublikası Prezidenti seçkilərinin elan edilməsi haqqında Azərbaycan Respublikası Prezidentinin Sərəncamı, 05.02.2019) տե՛ս ԱՀ նախագահի պաշտոնական կայքում՝ <https://president.az/articles/22850> (25.06.2019):

բերեց հիմնական ընդդիմադիր ուժերին: Չունենալով դրան պատրաստվելու ժամանակ՝ «Ժողովրդավարական ուժերի Ազգային խորհուրդ» ընդդիմադիր դաշինքը բոյկոտեց ապրիլի 11-ին նշանակված ընտրությունները⁸¹ և չառաջադրեց որևէ թեկնածու (*Contact 2018a*): Ավելի ուշ բոյկոտին միացան նաև «Հանրապետական այլընտրանք» շարժումը (*Contact 2018b*), որի ղեկավար Իլլար Մամմադովն այդ պահին դեռևս բանտում էր, նաև՝ «Մուսավաթ» և «Հույս» կուսակցությունները (*BBC 2018*): Մյուս յոթ թեկնածուները, որոնք մասնակցեցին ընտրություններին, թեև ներկայացել էին որպես ընդդիմադիր, սակայն իրականում առաջադրվել էին Ի. Ալիևի պատվերով՝ նշանակված արտահերթ նախագահական ընտրությունների նախընտրական գործընթացները և արդյունքները լեգիտիմացնելու համար: Ադրբեջանի արտահերթ նախագահական ընտրությունների մասին ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ամփոփիչ զեկույցում նշվել է ընտրություններին նախորդած շրջանում և ընտրությունների օրը տեղի ունեցած բազմաթիվ կոպիտ խախտումների մասին (*OSCE 2018*): «Ժողովրդական ուժերի ազգային խորհուրդ» (ԺՈւԱԽ) ընդդիմադիր դաշինքն էլ ապրիլի 14-ին անցկացրած բողոքի ցույցի ժամանակ անընդունելի հայտարարեց ընտրությունների արդյունքները, համաձայն որոնց՝ Ի. Ալիևի ստացել էր քվեարկողների ձայների 86,02%-ը (*MSK 2018*):

Հուլիսի 10-ին զանգվածային անհնազանդության ուժեղ ալիք բարձրացավ Գանձակ քաղաքում, որի պատճառը հուլիսի 3-ին Գանձակի քաղաքապետի և նրա երեք թիկնապահների դեմ Յունիս Սաֆարովի իրականացրած մահափորձից հետո քաղաքի ոստիկանությունում ոստիկանների թողտվությամբ քաղաքապետի որդու անձնական հաշվեհարդարն էր Յ. Սաֆարովի նկատմամբ: Ըստ ԱՀ Գլխավոր դատախազության, ՆԳՆ և ՊԱԾ 06.07.2018 թ. համատեղ պաշտոնական հայտարարության՝ մահափորձի հեղինակ Յ. Սաֆարովը նպատակ է ունեցել ճանաչված քաղաքական գործիչներին սպանելու ճանապարհով ԱՀ-ում քառսային իրավիճակ ստեղծել, տապալել գործող պետական կարգը և բռնազավթելով իշխանությունը՝ երկրում հաստատել իսլամական կարգ (*ARBP 2018a*): Իսկ ԱՀ

⁸¹ Ընտրական օրենսգրքի համաձայն՝ նախագահական ընտրությունները պետք է կայանային հոկտեմբերի երրորդ չորեքշաբթի օրը՝ ամսի 17-ին (*Interfax 2018*):

4. Ժողովրդավարությունը հետխորհրդային Ադրբեջանում. Կարգախոս՝ ս, թե՛ չափելի արժեք

Նախագահի աշխատակազմի ազգամիջյան հարաբերությունների, բազմամշակութայնության և կրոնական հարցերի վարչության պետ Է. Նաջաֆովն էլ հայտնեց, որ Գանձակում գործել է դրսից կառավարվող ծայրահեղական կրոնական խմբավորում, որի անդամները, տարբեր սադրիչ գործողություններ իրականացնելով, փորձել են սասանել Ադրբեջանի հասարակական-քաղաքական կայունությունը, փոխել այդ երկրի աշխարհիկ կարգը և ստեղծել շարիաթի օրենքներով կառավարվող պետություն (*Modern.az 2018*): Արդյունքում, սկիզբ առած հասարակական անհնազանդությունները ցրվեցին ոստիկանական բիրտ ուժի կիրառմամբ, սակայն տեղի ունեցան բախումներ, որոնց ժամանակ զոհվեց նաև ոստիկանության երկու աշխատակից (*Mia.gov.az 2018*): Դրան հաջորդած օրերին ԱՀ ՊԱԾ-ը ձերբակալեց տասից ավել անձանց, իսկ այդ ծառայության մի շարք հատուկ գործողությունների ժամանակ զոհվեցին մի քանի հոգի, որոնք ՊԱԾ պաշտոնական հաղորդագրություններում ներկայացվեցին «կրոնական ծայրահեղական խմբավորումների անդամներ»⁸² (*տե՛ս, օրինակ, ARBP 2018b*):

Թեև 2018 թ.-ին ազատ արձակվեցին մի շարք քաղբանտարկյալներ, այդ թվում օգոստոսին «Հանրապետական այլընտրանք» շարժման առաջնորդ Իլլար Մամմադովը, սակայն, ըստ «Human Rights Watch» մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կազմակերպության հաղորդման, 2018 թ. ընթացքում բանտերում են շարունակել մնալ առնվազն 43 քաղբանտարկյալներ, այդ թվում՝ լրագրողներ, քաղաքական և կրոնական գործիչներ (*HRW 2019*): Շարունակվել են քաղաքական ակտիվիստների, հատկապես ԱԺԾԿ և «Մուսավաթ» ընդդիմադիր կուսակցությունների ակտիվ անդամների նկատմամբ քաղաքական հետապնդումները, թմրանյութերի հետ կապված կեղծ մեղադրանքներով քրեական գործերի հա-

⁸² Միացյալ Նահանգների Միջազգային կրոնական ազատության հարցերով հանձնաժողովն աշխարհում 2018 թ. կրոնական իրավիճակի գնահատմանը նվիրված ամենամյա զեկույցում անդրադարձել է նաև Գանձակի դեպքերին՝ մասնավորապես նշելով. «Թեև դժվար է գնահատականներ տալ Գանձակում տեղի ունեցած դեպքերին և իշխանությունների հակազդմանը, սակայն իրավապաշտպանները մեղադրեցին իշխանություններին՝ քաղաքական այլախոհությունը ճնշելու և իսլամական ահաբեկչության վտանգով մարդկանց սարսափեցնելու նպատակով տեղի ունեցածը որպես աղիթ օգտագործելու մեջ» (*USCIRF 2019*):

րուցման դեպքերը, հետապնդումները կրոնական ակտիվիստների, հատկապես «Մուսուլմանական միասնություն շարժման» անդամների նկատմամբ, որոնց առաջնորդ Թալեհ Բադիրզադեն և 17 այլ գործիչներ փակված են եղել բանտերում: Հետագայում՝ 2019 թ. մարտի 16-ին, այդ 17 անձանցից մի քանիսը ԱՀ նախագահ Ի. Ալիևի համաներման հրամանագրով ազատ արձակվեցին, սակայն դեռևս անազատության մեջ է շարժման առաջնորդ Թ. Բադիրզադեն⁸³:

Միացյալ Նահանգների Միջազգային կրոնական ազատության հարցերով հանձնաժողովի՝ աշխարհում 2018 թ.-ին տիրող կրոնական իրավիճակի գնահատմանը նվիրված ամենամյա զեկույցում Ադրբեջանը կրկին կրոնական ազատություններն ամենակոպիտ խախտողների ցանկում է⁸⁴:

ԱՀ ԺՄԻ Ք_{ԳԻ}-ում 2016-2018 թթ. համեմատությունը ցույց է տալիս, որ 2018 թ.-ին, պայմանավորված ԱՀ նախագահական արտահերթ ընտրություններով և դրան հաջորդած զանգվածային անհնազանդության սուր դրսևորումներով ուղեկցված գանձակյան դեպքերով, գրանցվել է բացասական միտում 2017 թ. համեմատ: Ընդ որում 2017 թ.-ին 2016 թ. համեմատ տեղի էր ունեցել ԺՄԻ Ք_{ԳԻ} դրական տեղաշարժ՝ պայմանավորված ընտրական գործընթացների բացակայությամբ: 2016-2018 թթ. Ք_{ԳԻ} կորի միտումները համեմատելի են 2003-2005 թթ. և 2013-2015 թթ. հատվածների հետ, որոնցում ընտրությունների միջանկյալ տարիները՝ 2004-ը և 2014-ը, ունեցել են ավելի բարձր Ք_{ԳԻ}-ի մակարդակ, քան դրանց նախորդ և հաջորդ տարիները: Ասվածը փաստում է, որ 2016-2018 թթ. օրինակով ևս ապացուցվում է, որ ԱՀ-ում ընտրական գործընթացները չափազանց մեծ նշանակություն ունեն Ք_{ԳԻ}-ի վրա:


⁸³ Հրամանագրի տեքստը (Məhkum edilmiş bir sıra şəxslərin əfv olunması haqqında Azərbaycan Respublikası Prezidentinin Sərəncamı, 16.03.2016) տե՛ս ԱՀ նախագահի պաշտոնական կայքում՝ <https://president.az/articles/32416> (25.06.2019):

⁸⁴ Զեկույցի՝ ԱՀ-ին նվիրված բաժնում նշված է, որ թեև ԱՀ իշխանությունները դրական քայլեր են կատարել կրոնական ազատությունների ապահովման ոլորտում, մասնավորապես պետական գրանցման թույլտվություն են տվել ոչ իսլամական չորս կրոնական կազմակերպությունների, սակայն երկրի մուսուլմանական մեծամասնությունը շարունակում է հանդուրժել իշխանությունների վերահսկողությունը, որոնք այդ կերպ փորձում են սահմանափակել ԻԻՀ կրոնական ազդեցությունը ԱՀ տարածքում (*USCIRF 2019, 146*):

4.2 Ադրբեջանում ժողովրդավարության մակարդակի կախյալությունը տնտեսական գործոններից

Գծապատկեր 2

Ադրբեջանի Տնտեսական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)^{*}



Թեև այս ուսումնասիրության արդյունքների համաձայն Ադրբեջանի ԺՄԻ վրա բարձր ազդեցություն ունեցող Տնտեսական գործոնների ինդեքսի ($S_{ԳԻ}$) երկու կտրուկ վերելքները եղել են 2004 և 2015 թվականներին՝ համապատասխանաբար 0,644 և 0,604 արդյունքներով, սակայն 2004-2015 թթ. միջակայքը եղել է որոշակիորեն կայուն, որի առաջին հատվածի համար (2004-2009 թթ.) հատուկ էր դանդաղ վարընթացը, իսկ երկրորդ հատվածը (2009-2015 թթ.) առանձնացել է դանդաղ և աստիճանական աճով (տե՛ս Գծապատկեր 2):

Դիտարկվող ժամանակահատվածում $S_{ԳԻ}$ կորի ամենակտրուկ անկումը գրանցվել է 2017 թ.-ին, որի հիմնական և ամենախորքային պատճառը թերևս 2015 թ.-ին նավթի գների անկումն էր համաշխարհային շուկայում և

^{*} Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

դրան հետևած սոցիալ-տնտեսական ցնցումն Ադրբեջանում: Որպես նշվածի անմիջական հետևանք՝

1. 2017 թ.-ին Ադրբեջանում գրանցվել է 12,9%-անոց գնաճ, որը ամենաբարձրն է 2009-2018 թթ. ներառող ժամանակահատվածի համար⁸⁵ (տե՛ս Գծապատկեր 3):

2. Բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԱ-ն (ՀՔ Ատլասի մեթոդ) 2017 թ.-ին ԱՀ-ում կազմել է 4070 ԱՄՆ դոլար, որը ամենացածրն է 2009-2017 թթ. ժամանակահատվածի համար⁸⁶ (տե՛ս Գծապատկեր 3): Ընդ որում, այդ ցուցանիշի տոկոսային անկումը, օրինակ, 2012-ից (\$6440) 2017 թվականը կազմել է 58% (\$4070):

3. Չափազանց անկումային է եղել 2017 թ.-ի տնտեսության վարկավորման մակարդակը՝ կազմելով այդ երկրի ՀՆԱ-ի ընդամենը 12,4%-ը, որը դարձյալ վատագույն ցուցանիշն է 2009-2018 թթ. ներառող ժամանակահատվածում⁸⁷: Համեմատության համար պետք է նշել, որ նշված ցուցանիշը 2015 թ.-ին եղել է 40,7%, ինչը նշանակում է, որ 2017 թ.-ին գրանցվել է ավելի քան եռակի անկում 2015 թ. համեմատ (տե՛ս Գծապատկեր 3):

4. 2008-2018 թթ. ժամանակահատվածում 2017 թ. առանձնացել է նաև պետական բյուջեի դեֆիցիտի ամենավատ՝ ՀՆԱ 1,6% ցուցանիշով⁸⁸ (տե՛ս Գծապատկեր 3):

Ընդհանուր առմամբ նկատվել են նաև որոշակի դրական տեղաշարժեր, հատկապես 2018 թ.-ին: Մասնավորապես, ըստ ԱՀ նախագահ Ի. Ալիևի՝ 2018 թ.-ին ԱՀ սոցիալ-տնտեսական ձեռքբերումներին նվիրված ամփոփիչ ելույթի՝ նշված տարում գնաճը նվազել է և կազմել 2,3%, կայունացել է ազգային արժույթի՝ մանաթի կուրսը, 3 միլիարդ դոլարով ավելացել է

⁸⁵ Տե՛ս ՀՔ պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/FP.CPI.TOTL.ZG?locations=AZ> (25.06.2019):

⁸⁶ Ավելի ցածր (4050 ԱՄՆ դոլար մեկ շնչի հաշվով) արդյունք է գրանցվել հաջորդ՝ 2018 թ.-ին (տե՛ս ՀՔ պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.PP.CD?locations=AZ> (25.06.2019)), որը մեղմվել է և չի ունեցել բացասական ազդեցություն Տ_{գր} կորի վրա՝ ի հաշիվ գնաճի 2,3% ցուցանիշի (*Əliyev 2019, 7*) (տե՛ս Գծապատկեր 3) և այլնի:

⁸⁷ Տե՛ս ՀՔ պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/FS.AST.DOMS.GD.ZS?locations=AZ> (25.06.2019):


⁸⁸ Տե՛ս <https://tradingeconomics.com/azerbaijan/government-budget> (25.06.2019):

**4. Ժողովրդավարությունը հետխորհրդային Ադրբեջանում.
կարգախոս, թե՛ չափելի արժեք**

արտարժույթային պահուստային ֆոնդը՝ կազմելով 45 միլիարդ դոլար (Əliyev 2019, 7):

Գծապատկեր 3⁸⁹

Գնաճի, մեկ շնչին ընկնող ՀԱԱ-ի, տնտեսության վարկավորման և պետբյուջեի կատարման ցուցանիշներն Ադրբեջանում (2009-2018 թթ.)




**4.3 Սոցիալական գործոնների ազդեցության
առանձնահատկությունները Ադրբեջանի ԺՄԻ վրա**

Սոցիալական գործոնների ինդեքսի (Ս_{ԳԻ}) կորի դիտարկումը և դրա համեմատությունը հետազոտության մեջ ներառված մյուս (քաղաքական, տնտեսական, կրթական և առողջապահական) գործոնների ինդեքսների հետ ցույց են տալիս, որ նշվածների մեջ կայունության և զարգացման ամենաբարձր դինամիկան ունեցել է հենց Ս_{ԳԻ}-ին, որը 2000-2014 թթ.-ին դրսևորվել է միայն վերընթաց կորով: Այնուհետև, սակայն, պայմանավորված համաշխարհային շուկայում նավթի գների անկմամբ, ապա որպես հե-

⁸⁹ Կազմվել է ՀԲ պաշտոնական կայքում և «Tradingeconomics.com» կայքում հրապարակված տվյալների հիման վրա:

տևանք՝ մանաթի արժեզրկմամբ, գնաճով և իրական աշխատավարձի նվազմամբ, 2015-2016 թթ. ԱԳԻ կորում արձանագրվել է շեշտակի անկում (տե՛ս Գծապատկեր 4):

Գծապատկեր 4
Ադրբեջանի Սոցիալական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)^{*}



Եթե 2014 թ.-ին իրական միջին աշխատավարձը Ադրբեջանում մեկ շնչի հաշվով կազմել է ամսական 558,9 ԱՄՆ դոլար, ապա 2016 թ.-ին այն կրճատվել է ավելի քան 50%-ով՝ հասնելով 277,9 ԱՄՆ դոլարի:

Վերը նշված բացասական միտումը պահպանվել է նաև 2017 թ.-ին, երբ իրական միջին աշխատավարձը մեկ շնչի համար ամսական եղել է 271,7 ԱՄՆ դոլար՝ ի տարբերություն արդեն 2018թ., երբ շնորհիվ գնաճի համեմատական ցածր՝ 2,3%-ոց⁹⁰ ցուցանիշի (*Əliyev 2019*)՝ գրանցվել է իրական միջին աշխատավարձի 14,2% աճ՝ կազմելով 310,5 ԱՄՆ դոլար (տե՛ս Գծապատկեր 5):


* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

⁹⁰ Հմտ.՝ 2016 թ.՝ 12,4%, 2017 թ.՝ 12,9% (*Տննյան 2018, 135*):

**4. Ժողովրդավարությունը հետխորհրդային Ադրբեջանում.
կարգախոս, թե՛ չափելի արժեք**

Գծապատկեր 5*

**Իրական աշխատավարձի դինամիկան Ադրբեջանում 2008-2018 թթ.-ին
(ԱՄՆ դոլարով)**



Այս ձևավորման վրա էական նշանակություն ունեցող ենթագործոններից է գործազրկությունը, որի մակարդակն Ադրբեջանում, համաձայն այդ երկրի վիճակագրական ծառայության և Համաշխարհային բանկի պաշտոնական կայքերում զետեղված տվյալների, բավական ցածր է. 2008-2018 թթ. տատանվել է 4,9-5,9%-ի միջակայքում⁹¹:

Ըստ Ադրբեջանի ՊՎԾ պաշտոնական կայքի տվյալների՝ գրեթե նույն իրավիճակն է նաև աղքատության ցուցանիշների դեպքում: Ըստ այդ աղբյուրի՝ աղքատության մակարդակը Ադրբեջանում 2013-2018 թթ.-ին տատանվել է բնակչության 4,9-5,4%-ի միջակայքում: Համեմատության համար նշենք, որ 2005 թ.-ին այդ ցուցանիշը եղել է 29,3%⁹²:

* Հաշվարկը հեղինակին է՝ հիմնված պաշտոնական տվյալների վրա:

⁹¹ Տե՛ս ՀԲ (<https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.ZS?locations=AZ>) և ԱՀ ՊՎԾ պաշտոնական կայքեր (https://www.stat.gov.az/source/demography/ay/az/004_2.xls) (25.06.2019):

⁹² Տե՛ս ԱՀ ՊՎԾ պաշտոնական կայք՝ <https://www.stat.gov.az> (25.06.2019):

Ամենևին պատահական չէ, որ 2003 թ.-ից առ այսօր ԱՀ նախագահ Ի. Ալիևը ներադրեցանական լսարանի հետ տարվող քարոզչական աշխատանքներում մեծ տեղ է հատկացնում հենց սոցիալական իրավիճակի բարելավման մասին թեզերի շարունակական կրկնությանը և դրանք «հաստատող» վիճակագրական տարբեր տվյալներ է ներկայացնում⁹³:

Չնայած սոցիալական համեմատաբար կայուն վիճակին՝ դժվար է գնահատականներ տալ Ադրբեջանի բնակչության իրական թվաքանակի մասին, քանի որ պահպանվում է տվյալները կեղծելու ավանդույթը (*Տոնոյան 2018*): Ամեն դեպքում, 2019 թ. ապրիլի 6-ին Ադրբեջանում նշվեց տասնիլիոներորդ բնակչի ծնունդը⁹⁴: Ուշագրավ է, որ, օրինակ, ըստ ԱՀ ՊՎԾ պաշտոնական կայքի տվյալների՝ 1999 թ.-ին ԱՀ բնակչության թվաքանակը եղել է 7,953,400, իսկ արդեն 2009 թ.-ին՝ 8,922,400⁹⁵, ինչը նշանակում է, որ երկրի բնակչությունը յուրաքանչյուր տասը տարին մեկ «ավելացել է» 1 միլիոնով:

⁹³ Օրինակ, 2018թ. փետրվարի 8-ին Բաքվում կայացած ՆԱԿ 6-րդ համագումարի ժամանակ, որտեղ ընդունվեց նույն թվականի ապրիլի 11-ին ԱՀ-ում անցկացվելիք արտահերթ նախագահական ընտրություններում Ի. Ալիևի թեկնածությունն առաջադրելու որոշում, վերջինս իր ելույթում նշել է. «*Հեղուղական և համակարգված ձևով կյանքի կոչվող սոցիալական քաղաքականության բնագավառում ձեռք են բերվել ակնառու հաջողություններ, մասնավորապես բարձրացվել է մարդկանց կենսամակարդակը, խթանվել բարեկեցությունը: Նախ և առաջ, պետք է նշվի աղքատության մակարդակի 50%-ից մինչև 5% կամ այլ կերպ ասած՝ մոտ 7 միլիոն 1.900.000 նոր աշխատատեղերի ստեղծումը: Այս ընթացքում (2003-2018 թթ. – Ա.Տ.) աշխատավարձերը միջինը աճել են 5, կենսաթոշակները՝ 8, իսկ բնակչության իրական եկամուտները՝ 2,6 անգամ» (Əliyev 2018, 41):*


⁹⁴ Տե՛ս «Նոր Ադրբեջան կուսակցության» (ՆԱԿ) պաշտոնական կայքը՝ <http://www.yap.org.az/az/view/news/32999/azerbaycan-ehalisinin-sayi-10-milyon-nefere-chatib> (25.06.2019):

⁹⁵ Տե՛ս ԱՀ ՊՎԾ պաշտոնական կայքը՝ https://www.stat.gov.az/source/demography/az/001_4-6.xls (25.06.2019):

4.4 Կրթություն և ժողովրդավարություն. կրթական գործոնները՝ որպես Ադրբեջանի ԺՄԻ ձևավորման բաղկացուցիչ

Գծապատկեր 6

Ադրբեջանի կրթական գործոնների ինդեքս (2000-2018 թթ.)^{*}



Համաձայն գծապատկեր 6-ի՝ Ադրբեջանում $Y_{ԳԻ}$ կորը վերջին մի քանի տարիների ընթացքում (2012-2018) ցուցաբերել է կայունություն, որը պայմանավորված է հիմնականում կրթական ոլորտին հատկացվող պետական ֆինանսական միջոցների կայունությամբ և դանդաղ աճի միտումով: Ընդ որում, եթե 2014-2017 թթ. պետական բյուջեից կրթության ոլորտին հատկացումներում տարեկան աճը եղել է ոչ շոշափելի, ապա 2018 թ. բյուջեում նախորդ՝ 2017 թ. համեմատ դրանք արձանագրել են միանգամից 17,7%-ի աճ (տե՛ս Աղյուսակ 2):

^{*} Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

**Ժամանակակից ժողովրդավարության համախմբման մարտահրավերները.
ԺՄԻ համեմատական վերլուծություն**

Հետաքրքրական է այն, որ եթե պետական հատկացումները հանրակրթության ոլորտին 2018 թ.-ին 2017 թ. համեմատ աճել են 15,9%-ով, ապա նույն ժամանակահատվածում նախադպրոցական կրթության համար հատկացումները աճել են մինչև 27,2%: Բարձրագույն կրթության ոլորտի բյուջետային ֆինանսավորումը 2016 թ.-ին բացասական միտում է ունեցել. 2015 թ. նկատմամբ արձանագրվել է մոտավորապես 5%-ի նվազում: 2017-2018 թթ. կրկին արձանագրվել է աճ, և 2018 թ.-ին այն հասել է 42,7 միլիոն մանաթի, որը վերջնարդյունքում 8,9 %-ով գերազանցել է 2015 թ. հատկացումները (տե՛ս Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Ադրբեջանում կրթական ոլորտի բյուջետային հատկացումները (2014-2018 թթ.)

Բյուջետային հատկացումները (մանաթով) 2014-2018 թթ.					
	2014 ⁹⁶	2015 ⁹⁷	2016 ⁹⁸	2017 ⁹⁹	2018 ¹⁰⁰
Կրթության ոլորտ	1,653,445,192	1,711,180,403	1,713,513,135	1,736,052,890	2,043,989,508
Նախադպր. կրթություն	158,653,570	165,575,447	157,372,405	137,786,562	175,314,065
Հանրակրթ.	851,029,044	898,254,044	940,134,626	933,517,278	1,082,159,571
Նախն. մասնագիտ.	78,614,372	34,287,423	33,724,900	23,058,384	27,977,633
Միջին մասնագիտ. կրթություն		44,646,660	43,563,736	42,887,794	41,302,250
Բարձրագույն կրթություն	32,978,063	39,215,650	37,235,595	41,383,900	42,716,929

⁹⁶ Տե՛ս Ադրբեջանի նախագահի պաշտոնական կայքը՝ <https://president.az/articles/-10554> (26.06.2019):

⁹⁷ Տե՛ս նույն տեղը՝ <https://president.az/articles/13772> (26.06.2019):

⁹⁸ Տե՛ս Ադրբեջանի Ֆինանսների նախարարության պաշտոնական կայքը՝ <http://maliyye.gov.az/sites/default/files/BUDCE%20-%202016%20AN%20YENI.pdf> (26.06.2019):


⁹⁹ Տե՛ս Ադրբեջանի նախագահի պաշտոնական կայքը՝ <https://president.az/articles/-22346> (26.06.2019):

¹⁰⁰ Տե՛ս նույն տեղը՝ <https://president.az/articles/26596> (26.06.2019):

**4. Ժողովրդավարությունը հետխորհրդային Ադրբեջանում.
կարգախոս, թե՛ չափելի արժեք**

Գծապատկեր 7⁰¹

Ադրբեջանի ՀՆԱ-ում կրթական ծախսերի մասնաբաժինը (1995-2016 թթ.)



Ըստ Համաշխարհային բանկի պաշտոնական կայքում ներկայացված տվյալների¹⁰² Ադրբեջանում վերջին 25 տարիների ընթացքում կրթության ոլորտում կատարված ծախսերը, բացառությամբ 1999 թ. (4,2%), չեն հասել այդ երկրի ՀՆԱ-ի 4%-ի շեմը: Ընդ որում՝ նշված ժամանակահատվածի համար ամենաանկումայինը եղել է 2012 թ.՝ 2%, որից հետո՝ մինչև 2017 թ., կրթական ոլորտի ծախսերը Ադրբեջանում չեն հասել ՀՆԱ 3%-ի շեմին (տե՛ս Գծապատկեր 7): Համեմատության համար արձանագրենք, որ Հայաստանի դեպքում ևս 2012-2016 թթ. ընթացքում կրթական ծախսերի համար պետության բյուջետային հատկացումները չեն հասել ՀՆԱ-ի 3%-ի շե-

¹⁰¹ Կազմվել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի պատրաստած «Կրթական ինդեքսի» (տե՛ս <http://hdr.undp.org/en/content/education-index> (26.06.2019)) և Համաշխարհային բանկի պաշտոնական կայքում հրապարակված «Կրթության բնագավառի պետական ծախսերը՝ (ըստ ՀՆԱ %-ի)» բաժնի տվյալների հիման վրա:

¹⁰² Տե՛ս Համաշխարհային բանկի պաշտոնական կայքը՝ <https://data.worldbank.org/indicator/SE.XPD.TOTL.GD.ZS?locations=AZ> (26.06.2019):

մը՝ ի տարբերություն Վրաստանի, որը միակն է հարավկովկասյան պետություններից 2016 թ.-ին ՀՆԱ-ի 3%-ը գերազանցող արդյունքով (3,78%)¹⁰³:

Վերջին տարիներին Ադրբեջանի կրթական ոլորտի շարժերից ուշագրավ է 2016 թ. հուլիսին Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջման փորձից հետո ադրբեջանական իշխանությունների կողմից «Կովկաս» ինստիտուտի փակումը, որի գործունեությունը կապվում էր Ֆաթուլլահ Գյուլենի և գյուլենական գաղափարախոսության հետևորդների հետ (*Meydan 2016b*):

Բացի այդ, հետաքրքրական են նաև 2015-2017 թթ. ընթացքում ԱՀ «Դավանանքի ազատության մասին» օրենքում կատարված փոփոխությունները երկրից դուրս կրոնական կրթություն ստացած անձանց՝ այդ երկրի տարածքում հետագա գործունեության մասին: Օրենքի 21-րդ հոդվածի երրորդ կետում նշված է, որ արտասահմանում կրթություն ստացած ԱՀ քաղաքացիները կարող են կրոնական ծեսեր և միջոցառումներ անցկացնել միայն այն դեպքերում, երբ ԿՄՎ-ն նախօրոք ձեռք է բերում համապատասխան համաձայնություն վարչական իշխանության հետ: Ընդ որում՝ 2015 թ. դեկտեմբերի 4-ի փոփոխությամբ դա կարող էր անել միայն Ադրբեջանում կրթություն ստացած ԱՀ քաղաքացին, իսկ 2017 թ. մայիսի 16-ի փոփոխությամբ նաև լրացուցիչ նշվել էր, որ արտասահմանում կրթություն ստացած ԱՀ քաղաքացուն արգելված է անցկացնել իսլամին վերաբերող կրոնական ծեսեր և միջոցառումներ¹⁰⁴:


¹⁰³ Տե՛ս նույն տեղը՝ <https://data.worldbank.org/indicator/SE.XPD.TOTL.GD.ZS?locations=AZ-AM-GE> (26.06.2019):

¹⁰⁴ Տե՛ս ԱՀ Արդարադատության նախարարության նորմատիվ իրավական ակտերի միասնական համացանցային էլեկտրոնային բազան՝ <http://www.e-qanun.az/framework/7649> (28.06.2019):

4.5 Փոփոխությունների դինամիկան Ադրբեջանի առողջապահական համակարգում և դրա ազդեցությունը ժողովրդավարության մակարդակի ինդեքսի վրա

Գծապատկեր 8¹⁰⁵

Ադրբեջանի Առողջապահական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)^{*}



Գծապատկեր 8-ից երևում է, որ առողջապահության ոլորտը ԱՀ-ում կայուն է, դանդաղ զարգացող: Ըստ Համաշխարհային բանկի պաշտոնական կայքում հրապարակված տվյալների՝ հատկապես 2011 թ.-ից հետո առողջապահության ընթացիկ ծախսերի տեսակարար կշիռն այդ երկրի

¹⁰⁵ Կազմվել է Ադրբեջանի պետական վիճակագրական ծառայության ներկայացրած «Կյանքի միջին տևողության» շեմի տարեկան փոփոխությունների (տե՛ս ԱՀ ՊՎԾ պաշտոնական կայքը՝ https://www.stat.gov.az/source/demography/en/002_4en.xls (28.06.2019)) ուսումնասիրության և Համաշխարհային բանկի պաշտոնական կայքում հրապարակված «Առողջապահության ընթացիկ ծախսերը՝ (ըստ ՀՆԱ%-ի)» բաժնի տվյալների (տե՛ս Համաշխարհային բանկի պաշտոնական կայքը՝ <https://data.worldbank.org/indicator/SH.XPD.TOTL.ZS> (28.06.2019)) հիման վրա:

^{*} Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

ՀՆԱ-ում շարունակաբար աճել է՝ 4,63%-ից (2011թ.) 2016 թ.-ին հասնելով 6,89%-ի¹⁰⁶:

Սակայն ուշագրավ է, որ Ադրբեջանի պետական բյուջեից առողջապահական ոլորտին հատկացվող գումարի չափը հատկապես 2014-2018 թթ. ընթացքում եղել է գրեթե անփոփոխ (տե՛ս Աղյուսակ 3), մինչդեռ առողջապահության ընթացիկ ծախսերի աճը, ըստ էության, պայմանավորված է եղել մասնավոր հատվածի վճարումներով:

Աղյուսակ 3

Ադրբեջանի պետբյուջեից առողջապահական ոլորտին կատարված հատկացումները (2014-2018 թթ.)

Տարեթիվ	Գումարը (մանաթային)
2014 ¹⁰⁷	725,586,166
2015 ¹⁰⁸	777,668,395
2016 ¹⁰⁹	744,855,809
2017 ¹¹⁰	745,381,258
2018 ¹¹¹	739,334,330

Ըստ Ադրբեջանի պետական վիճակագրական ծառայության տվյալների՝ ԱՀ-ում հետխորհրդային շրջանի համեմատ աճել է նաև կյանքի մի-

¹⁰⁶ Ադրբեջանում առողջապահության ընթացիկ ծախսերի ամենաբարձր ցուցանիշը, ըստ ՀՆԱ-ում դրանց մասնաբաժնի, գրանցվել է 2004 (7,34%) և 2005 (7,39%) թվականներին, իսկ ամենացածրը՝ 2002 թ.-ին (3,71%):

¹⁰⁷ Տե՛ս ԱՀ նախագահի պաշտոնական կայքը՝ <https://president.az/articles/10554> (28.06.2019):

¹⁰⁸ Տե՛ս նույն տեղը՝ <https://president.az/articles/13772> (28.06.2019):

¹⁰⁹ Տե՛ս Ադրբեջանի Ֆինանսների նախարարության պաշտոնական կայքը՝ <http://maliyye.gov.az/sites/default/files/BUDCE%20-%202016%20AN%20YENI.pdf> (28.06.2019):

¹¹⁰ Տե՛ս ԱՀ նախագահի պաշտոնական կայքը՝ <https://president.az/articles/22346> (28.06.2019):


¹¹¹ Տե՛ս նույն տեղը՝ <https://president.az/articles/26596> (28.06.2019):

**4. Ժողովրդավարությունը հետխորհրդային Ադրբեջանում.
կարգախոս, թե՛ չափելի արժեք**

ջին տևողությունը: Եթե 1995 թ.-ին այն եղել է 69,1, ապա 2018 թ.-ին հասել է 75,4-ի (տե՛ս Գծապատկեր 9)¹¹²:

Գծապատկեր 9

Կյանքի միջին սպասվող տևողությունն Ադրբեջանում՝ ըստ ԱՀ ՊՎԾ և ՀԲ տվյալների (1995-2018 թթ.)



ԱՀ նախագահի 2016-2018 թթ. ելույթների բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ Ի. Ալիևը ԱՀ առողջապահական խնդիրների և երկրում առողջապահական իրավիճակի մասին խոսելիս պարբերաբար կրկնել է մի քանի թեզեր, որոնք հետապնդում են ավելի շատ քարոզչական նպատակ: Դրանք հիմնականում հետևյալներն են՝

¹¹² Ադրբեջանի ՊՎԾ տվյալները որոշակիորեն հակասում են Ադրբեջանում կյանքի միջին տևողության մասին Համաշխարհային բանկի պաշտոնական կայքում գետեղված տվյալներին, ըստ որոնց՝ 1995թ.-ին Ադրբեջանում կյանքի միջին տևողությունը 1995 թ.-ին 65,2 տարի է եղել, իսկ 2018 թ.-ին՝ 72,1 (տե՛ս Գծապատկեր 9):

- Ադրբեջանում վերջին 15 տարիների ընթացքում կառուցվել է, վերակառուցվել և վերանորոգվել 600-ից ավելի հիվանդանոց,
 - բարձրացել է մարդկանց կյանքի միջին տևողությունը,
 - նվազել են մոր և մանկան մահացության դեպքերը¹¹³,
 - բարելավվել են Ադրբեջանի դիրքերը Առողջապահության համաշխարհային կազմակերպության դասակարգումներում,
 - մեծ ներդրումներ են արվել առողջապահական ենթակառուցվածքներում,
 - ԱՀ քաղաքացիները ամեն տարի անցնում են տարեկան անվճար բուժզննում (*Əliyev 2016, 2017, 2018*):

Ընդհանուր առմամբ, ԱՀ քաղաքացիների մոտ կա որոշակի անվստահություն սեփական երկրի առողջապահական համակարգի նկատմամբ, որով պայմանավորված՝ Ադրբեջանի հարյուր հազարավոր քաղաքացիներ նախընտրում են բուժվել հարևան երկրներում, հատկապես Իրանում (*Տոնոյան 2018, 135*):

4.6 Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի զարգացման միտումներն Ադրբեջանում (2000-2018 թթ.)

2000-2018 թթ. ներառող ժամանակահատվածում Ադրբեջանի ԺՄԻ-ն (տե՛ս Գծապատկեր 11), որի հաշվարկն այս հետազոտության մեջ կատարվել է հինգ (քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական և առող-


¹¹³ Թեև Ադրբեջանի ՊՎԾ տվյալներով ևս 2011-2017 թթ. շարունակաբար նվազել են հղիության և ծննդաբերության ժամանակ կանանց մահացության դեպքերը (տե՛ս ԱՀ ՊՎԾ պաշտոնական կայքը՝ https://www.stat.gov.az/source/demography/-az/004_6.xls (28.06.2019)), սակայն ԱՀ ընդդիմադիր մամուլում և քաղհասարակության շրջանում հղիության և ծննդաբերության ժամանակ կանանց մահացության խնդիրը ամենազգայուն և ամենաարձարձված թեմաներից է: Համաձայն նշված շրջանակներում արվող պնդումների՝ ԱՀ-ում տարեցտարի ոչ թե նվազում, այլ աճում են հատկապես ծննդաբերության ժամանակ կանանց մահացության դեպքերը: Որպես հիմնական պատճառ՝ նշվում են բժիշկների ոչ պրոֆեսիոնալությունը և մասնագիտությանը չտիրապետելը (տե՛ս, օրինակ, *Aznews 2018*):

**4. Ժողովրդավարությունը հետխորհրդային Ադրբեջանում.
կարգախոս՝, թե՛ չափելի արժեք**

ջապահական) գործոնների և դրանք ձևավորող ենթագործոնների տվյալների համադրմամբ (տե՛ս Գծապատկեր 10), որոշակի կայուն զարգացման միտում է ունեցել 2009-2015 թթ. ընթացքում:

Գծապատկեր 10

Ադրբեջանի ԺՄԻ վրա ազդող քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական և առողջապահական գործոնների ինդեքսները (2000-2018 թթ.)*




ԱՀ ԺՄԻ կայունության նշված հատվածը պայմանավորված է հիմնականում համաշխարհային շուկայում նավթի գների աճով և ադրբեջանական նավթի արտահանման ծավալների մեծացմամբ և, ըստ այդմ, նաև՝ մեկ շնչին հասնող ՀՆԱ-ի շեշտակի աճով: Ամբողջական վերընթաց կորով են արտահայտված նաև ՍԳԻ-ն և մասամբ ՏԳԻ-ն, ինչը ցուցում է առ այն, որ սոցիալ-տնտեսական գործոնները Ադրբեջանի պարագայում շոշափելի ազդեցություն ունեն այդ երկրի ԺՄԻ վրա: Ասվածը հաստատվում է նաև հա-

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները (տե՛ս մեթոդաբանությունը Գլուխ 1-ում):

մաշխարհային շուկայում նավթի գնի կտրուկ անկման պատճառով 2016-2017 թթ. սոցիալ-տնտեսական վարընթացներով և բացասական փոփոխության միտումներով: Ընդ որում 2017 թ.-ին Ադրբեջանի ԺՄԻ-ում կրկնվել է 21-րդ դարի առաջին համաշխարհային տնտեսական ճգնաժամի տարվա՝ 2008 թ. արդյունքը (0,409):

Գծապատկեր 11

Ադրբեջանի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը (2000-2018 թթ.)^{*}



Ուշագրավ է այն, որ եթե նշված երկու ժամանակահատվածներում (2009-2015 թթ. և 2016-2017 թթ.) ԺՄԻ վրա շոշափելի է եղել սոցիալական և տնտեսական գործոնների դրական ազդեցությունը, ապա 2004 թ.-ի դեպքում՝ դրանց զուգահեռ նաև քաղաքական գործոնի, որի շնորհիվ գրանցվել է ԱՀ ԺՄԻ քննարկվող ժամանակահատվածի ամենաբարձր ցուցանիշը՝ 0,459 (տե՛ս Գծապատկեր 11)¹¹⁴:

^{*} Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

¹¹⁴ Այս համատեքստում հետաքրքիր է հատկապես Ադրբեջանի ընդդիմադիր գործիչներից Իլլար Մամմադովի՝ 2017թ. հունվարի 20-ին միջազգային իրավապաշտ-

4.7 Ադրբեջանի ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծությունը

Արուսյակ Ալեքսանյան, Արտյոն Տոնոյան

Հետազոտության շրջանակներում ռեգրեսիոն վերլուծության միջոցով դուրս են բերվել մոդելում ընդգրկված քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական և առողջապահական գործոնների ինդեքսների այն փոփոխականները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն Ադրբեջանի ժողովրդավարության մակարդակի վրա:

Ըստ ռեգրեսիոն վերլուծության՝ Ադրբեջանի ԺՄԻ-ի* վրա քաղաքական գործոններից առավել նշանակալի ազդեցություն ունեն «Օրենքի գերակայության» և «Կոռուպցիայի ընկալման ինդեքսի» փոփոխականները: Ըստ այդմ՝ «Օրենքի գերակայության» և «Կոռուպցիայի ընկալման ինդեքսի» աճը 1 միավորով կնպաստի ԺՄԻ-ի աճին համապատասխանաբար 0,005 և 0,068 միավորներով (տե՛ս Աղյուսակ 4):

Աղյուսակ 4

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (Ք_{գր}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Օրենքի գերակայություն	0,005	0,431	0,000	24
Կոռուպցիայի ընկալման ինդեքս	0,068	0,393	0,001	24

պան կազմակերպություններին հղած բաց նամակի տեքստը, որտեղ նա հայտարարում է, որ միջազգային ներդրումները Ադրբեջանի նավթագազային ոլորտում, մասնավորապես նաև ադրբեջանական գազը Շահ Դենիզ հանքավայրից Թուրքիա և Եվրոպա արտահանելու համար նախատեսված «Հարավային գազային միջանցք» նախագծի իրականացման համար Ադրբեջանին հատկացվող վարկային և ոչ վարկային միջոցները ուղղակի հարվածում են հենց այդ երկրի ժողովրդավարական գործընթացներին և բանտերում պահում ադրբեջանական քաղհասարակության ներկայացուցիչներին (Mammadov 2017):

* ԺՄԻ-ն ժողովրդավարության մակարդակի ինդեքսն է, որից դուրս է բերվում համապատասխան անկախ փոփոխականը յուրաքանչյուր զույգային ռեգրեսիոն վերլուծության ժամանակ:

Ռեգրեսիոն վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ Ադրբեյջանի ԺՄԻ-ի վրա տնտեսական գործոններից առավելապես ազդում են «Տնտեսական ազատության ինդեքսի» և «բյուջեի հաշվեկշռի» փոփոխականները: Մասնավորապես, «Տնտեսական ազատության ինդեքսում» դրական փոփոխությունը 1 միավորով կբերի Ադրբեյջանի ԺՄԻ-ի աճին 0,005 միավորով, իսկ բյուջեի հաշվեկշռի աճը ՀՆԱ 1%-ով կբերի ԺՄԻ-ի աճին 0,027 միավորով (տե՛ս Աղյուսակ 5):

Աղյուսակ 5

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (S_{գր}-ի փոփոխականներ)

<i>Փոփոխական</i>	<i>Գործակից</i>	<i>Adj.R²</i>	<i>Sig.</i>	<i>N</i>
Տնտեսական ազատության ինդեքս	0,005	0,634	0,000	24
Բյուջեի հաշվեկշիռ	0,027	0,537	0,000	24

Սոցիալական գործոնների ինդեքսում ներառված փոփոխականներից Ադրբեյջանի ԺՄԻ-ի վրա համեմատաբար բարձր ազդեցություն ունի «Զինի գործակիցը», որի աճը 0,1 միավորով կբերի ԺՄԻ-ի նվազմանը 0,0029 միավորով (տե՛ս Աղյուսակ 6): Միևնույն ժամանակ իրական աշխատավարձի աճը 100 ԱՄՆ դոլարով կնպաստի ԺՄԻ-ի դրական փոփոխությանը 0,015 միավորով:

Աղյուսակ 6

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (U_{գր}-ի փոփոխականներ)

<i>Փոփոխական</i>	<i>Գործակից</i>	<i>Adj.R²</i>	<i>Sig.</i>	<i>N</i>
Իրական աշխատավարձ (100 ԱՄՆ դոլար)	0,015	0,344	0,002	24
Զինի ինդեքս	-0,029	0,705	0,000	24

Ըստ ռեգրեսիոն վերլուծության՝ Կրթական գործոնների ինդեքսի փոփոխականներից Ադրբեյջանի դեպքում ԺՄԻ-ի վրա առավել նշանակալի ազդեցություն ունի «ՄՀՀ կրթության բաղադրիչը», որի դրական աճը 0,1 միավորով կբերի ԺՄԻ-ի աճին 0,0521 միավորով (տե՛ս Աղյուսակ 7):

**4. Ժողովրդավարությունը հետխորհրդային Ադրբեջանում.
կարգախոս, թե՛ չափելի արժեք**

Աղյուսակ 7

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (Ա_{գր}-ի փոփոխականներ)

<i>Փոփոխական</i>	<i>Գործակից</i>	<i>Adj.R²</i>	<i>Sig.</i>	<i>N</i>
Մարդկային զարգացման համաթվի կրթության բաղադրիչ	0,521	0,275	0,005	24

Իսկ Ա_{գր} փոփոխականներից Ադրբեջանի ԺՄԻ-ի վրա համեմատաբար ուժեղ է ազդում «Կյանքի սպասվող տևողություն» փոփոխականը, որի աճը 1 տարով կբերի ԺՄԻ-ի աճին 0,023 միավորով (տե՛ս Աղյուսակ 8):

Աղյուսակ 8

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (Ա_{գր}-ի փոփոխականներ)

<i>Փոփոխական</i>	<i>Գործակից</i>	<i>Adj.R²</i>	<i>Sig.</i>	<i>N</i>
Կյանքի սպասվող տևողություն	0,023	0,534	0,000	24

Ռեգրեսիոն վերլուծությունը ցույց է տալիս, որ Ադրբեջանի ԺՄԻ-ն առավել զգայուն է Կոռուպցիայի ընկալման, Տնտեսական ազատության և Ջինի ինդեքսներում տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ: Բացի այդ՝ Ադրբեջանի ԺՄԻ վրա բարձր ազդեցություն ունեն նաև այնպիսի փոփոխականներ, ինչպիսիք են Օրենքի գերակայությունը, բյուջեի հաշվեկշիռը, իրական աշխատավարձը, ՄՀՀ կրթության բաղադրիչը և կյանքի սպասվող տևողությունը:

Գրականության ցանկ

- **1news** (2017) “В Азербайджане предлагают подготовить законопроект, регулирующий деятельность социальных сетей”, 19.01.2017. Дата доступа: 25.07.2019. <https://1news.az/news/v-azerbaydzhan-predlagayut-podgotovit-zakonoproekt-reguliruyuschiy-deyatel-nost-social-nyh-setey>.
- **Alili Ahmad, Bittner Victoria** (2017) “The cost of Azerbaijan’s leaving the Extractive Industries Transparency Initiative (EITI): Analysis of the impact on the economy and civil society,” CESD Press.

- **Amerikaninsesi** (2017) “Siyasetçilər və ekspertlər Mehriban Əliyevanın təyinatına münasibət bildirib”, publ. on 21.02.2017. Accessed June 26, 2019. <https://www.amerikaninsesi.org/a/munasibet/3733157.html>.
- **Amerikaninsesi** (2018) “Siyasi mühacirin atasının qəbri təhqir olunub”, publ. on March 05, 2018. Accessed July 25, 2019. <https://www.amerikaninsesi.org/a/siyasi/42-80909.html>.
- **Amnesty International** (2016) “Азербайджан: Десять лет лишения свободы за граффити”, publ. on 08.12.2016. Дата доступа: 24.06.2019. <https://amnesty.org.ru/asp/2016-12-09-azerbaijan/>.
- **ARBP** (2016) “Azərbaycan Respublikası Daxili İşlər Nazirliyinin və Baş Prokurorluğunun məlumatı”. Azərbaycan Respublikasının Baş Prokurorluğu, publ. on 14 January. Accessed June 24, 2019. <http://genprosecutor.gov.az/az/news/5/231>.
- **ARBP** (2018a) “Respublika Baş Prokurorluğu, Daxili İşlər Nazirliyi və Dövlət Təhlükəsizliyi Xidmətinin Mətbuat xidmətlərinin məlumatı”, publ. on 06 July, 2018. Accessed June 27, 2019. <http://genprosecutor.gov.az/news/5/1884/respublika-bas-prokurorlugu-daxili-isler-nazirliyi-ve-dovlet-tehlukesizliyi-xidmetinin-metbuat-xidmetlerinin-m-e-l-u-m-a-t-i>.
- **ARBP** (2018b) “Respublika Baş Prokurorluğu, Daxili İşlər Nazirliyi və Dövlət Təhlükəsizliyi Xidmətinin mətbuat xidmətlərinin məlumatı”, publ. on 21 July, 2018. Accessed June 27, 2019. <http://genprosecutor.gov.az/news/5/1894/respublika-bas-prokurorlugu-daxili-isler-nazirliyi-ve-dovlet-tehlukesizliyi-xidmetinin-metbuat-xidmetlerinin-m-e-l-u-m-a-t-i>.
- **Azadlıq qəzeti** (2016) “Milli Şura Qiyas İbrahimovla bağlı bəyanat Verdi”, publ. on 27.10.2016. Accessed June 25, 2019. <https://www.azadliq.info/162429.html>.
- **Azadlıq Radiosu** (2016) “Müsavat Qiyas İbrahimov barəsində hökmü pisləyib”, publ. on 31.10.2016. Accessed June 24, <https://www.azadliq.org/a/musavat-qiyas-ibrahimov/28086629.html>.
- **Azadlıq Radiosu** (2017) “Bir ailənin hegemonluğu...”, publ. on 21.02.2017. Accessed June 26, <https://www.azadliq.org/a/mehriban-eliyeva-vitse-prezident/2832-2447.html>.
- **Aznews** (2018) “Ana ölümü ilə bağlı acı statistika”, publ. on September 04, 2018. Accessed July, 26, 2019. <https://www.aznews.az/news/cemiyet/184076.html>.
- **BBC** (2016a) “Azərbaycanın bir neçə bölgəsində etiraz aksiyası keçirilib”, publ. on 12 January. Accessed June 24, 2019. https://www.bbc.com/azeri/azerbaijan/2016/01-160112_protests_over_high_prices.
- **BBC** (2016b) “Bölgələrdə etirazlar: Siyazəndə "55 nəfər saxlanılı””, publ. on 13 January. Accessed June 24, 2019. https://www.bbc.com/azeri/azerbaijan/2016/01-160113_siyazan_protests.
- **BBC** (2016c) “Qiyas İbrahimova 10 il həbs verildi”, publ. on 25.10.2016. Accessed June 24, 2019. <https://www.bbc.com/azeri/azerbaijan-37762077>.

4. Ժողովրդավարությունը հետխորհրդային Ադրբեջանում. Կարգախոս, թե՛ չափելի արժեք

- **BBC** (2018) “Prezident seçkisi: Müsavat və Ümid boykot qərarı verdi”, publ. on February 10, 2018. Accessed July 25, 2019. <https://www.bbc.com/azeri/azerbaijan-43016315>.
- **Contact** (2018a) “National Council of Democratic Forces Decides to Boycott Early Presidential Elections,” publ. on 06.02.2018. Accessed 27 June, 2019. <http://www.contact.az/ext/news/2018/2/free/politics%20news/en/68860.htm/National>
- **Contact** (2018b) “REAL Not to Recognize Results of Early Presidential Elections,” publ. on 05.02.2018. Accessed 27 June, 2019. <http://www.contact.az/ext/news/-2018/2/free/politics%20news/en/68859.htm/>.
- **EITI** (2016) “Board decision on the Validation of Azerbaijan,” publ. on 26.10.2016. Accessed June 25, 2019. https://eiti.org/sites/default/files/documents/board_decision_on_validation_of_azerbaijan_-_26_oct_2016.pdf.
- **Freedom House** (2017a) “Freedom in the World 2017: The Annual Survey of Political Rights and Civil Liberties,” ed. by Arch Puddington, Rowman & Littlefield.
- **Freedom House** (2017b) “Nations in Transit 2017: Azerbaijan,” 1-21. Accessed June 25, 2019. https://freedomhouse.org/sites/default/files/NIT2017_Azerbaijan.pdf.
- **Freedom House** (2018) “Freedom in the World 2018: Azerbaijan.” Accessed June 25, 2019. <https://freedomhouse.org/report/freedom-world/2018/azerbaijan>.
- **Freedom House** (2019a) “Freedom in the World 2019: Azerbaijan.” Accessed June 25, 2019. <https://freedomhouse.org/report/freedom-world/2019/azerbaijan>.
- **Freedom House** (2019b) “Freedom on the Net. 2018.” Accessed June 27, 2019. <https://freedomhouse.org/report/countries-net-freedom-2018>.
- **HRW** (2016a) “10-Year Sentence for Political Graffiti in Azerbaijan,” publ on 08.12.2016. Accessed June 24, 2019. <https://www.hrw.org/news/2016/12/08/10-year-sentence-political-graffiti-azerbaijan>.
- **HRW** (2016b) “Harassed, Imprisoned, Exiled: Azerbaijan’s Continuing Crackdown on Government Critics, Lawyers, and Civil Society,” publ. on October, 2016. Accessed July 25, 2019. https://www.hrw.org/sites/default/files/report_pdf/azerbaijan1016_web_0.pdf
- **HRW** (2018) “World Report 2018: Azerbaijan.” Accessed 26 June, 2019. <https://www.hrw.org/world-report/2018/country-chapters/azerbaijan>.
- **HRW** (2019) “World Report 2019: Azerbaijan.” Accessed 27 June, 2019. <https://www.hrw.org/world-report/2019/country-chapters/azerbaijan>. https://eiti.org/sites/default/files/documents/CESD_EITI_Assessment_Paper.pdf.
- **Interfax** (2018) “MSK İlham Əliyevin namizədliliyinin irəli sürülməsini təsdiq edib”, publ. on February 02, 2018. Accessed 25 July, 2019. <http://interfax.az/view/72-5918/az>.
- **IRFS** (Institute for Reporters’ Freedom and Safety) (2016) “Azerbaijan Braces for Protests,” publ. on 18 January. Accessed June 24, 2019. <https://www.irfs.org/news-feed/azerbaijan-braces-for-protests/>.
- **Jam-news** (2019) “Russia extradites Talysh rights activist to Baku”, publ. on March 02, 2019. Accessed July 25, 2019. <https://jam-news.net/russia-extradites-talysh-activist-to-baku/>.

- **Mammadov, Ilgar** (2017) “A letter from an inmate of the Southern Gas Corridor”, publ. on January 20, 2017. Accessed July 26, 2019. <https://www.opendemocracy.net/en/odr/open-letter-from-inmate-of-southern-gas-corridor/>.
- **Meydan** (2016a) “Граффити на памятнике Гейдару Алиеву - Qul bayraminiz mübarək!”, 10.05.2016. Дата доступа: 24.06.2019. <https://www.meydan.tv/en/article/graffiti-na-pamyatnike-gejdaru-alievu-qul-bayraminiz-mubarek/?ref=article-related-artciles>.
- **Meydan** (2016b) “Qafqaz University, Zaman Azerbaijan have closed - Gulen connection?”, publ. on July 20, 2016. Accessed July 26, 2019. <https://www.meydan.tv/en/article/qafqaz-university-zaman-azerbaycan-have-closed-gulen-connection/?ref=lang-switch>.
- **Meydan** (2017) “Bloqerlərin fəaliyyəti qanunla tənzimlənmə bilər”, publ. on 19.01.2019. Accessed June 27, 2019. <https://www.meydan.tv/ru/article/bloqerlerin-fealiyyeti-qanunla-tenzimplene-biler/>.
- **Meydan** (2018a) “Mühacir blogerin qohumlari həbs edilib”, publ. on February 19, 2018. Accessed July 25, 2019. <https://www.meydan.tv/az/article/muhacir-blogerin-qohumlari-hebs-edilib/>.
- **Meydan** (2018b) “Hadi Rəcəbli: Sosial şəbəkələri bağlamaq lazımdır”, publ. on 28.03.2018. Accessed June 27, 2019. <https://d9mc3ts4czbpr.cloudfront.net/az/article/hadi-recebli-sosial-sebekeleri-baglamaq-lazimdir/>.
- **Mia.gov.az** (2018) “Respublika Baş Prokurorluğunun, Daxili İşlər Nazirliyinin və Dövlət Təhlükəsizliyi Xidmətinin mətbuat xidmətlərinin məlumatı”, publ. on 13 July, 2019. Accessed 27 June, 2019. <https://mia.gov.az/?/az/news/view/1217>.
- **Modern.az** (2018) ““Gəncədə xaricdən idarə olunan azsaylı radikal dini qrup var” – Etibar Nəcəfov”, publ. on 15.07.2018. Accessed 27 June, 2019. <https://modern.az/-az/news/171506>.
- **MSK** (2016) Mərkəzi Seçki Komissiyası, “Ümumxalq səsverməsinə çıxarılmış Referendum Aktinin layihəsinə uyğun hər bir hissə üzrə səsvermənin nəticələri”, Accessed 24 June, 2019. <https://www.infocenter.gov.az/archive/referendum2016.aspx>.
- **MSK** (2018) “11 aprel 2018-ci il tarixində keçirilmiş Azərbaycan Respublikası Prezidentinin seçkilərinin yekununa dair Mərkəzi Seçki Komissiyasının Protokolu”, publ. on 15.04.2018. Accessed 27 June, 2019. http://www.msk.gov.az/uploads/Secki-2018/MSK_protokol-2018.pdf.
- **OMCT** (World Organisation Against Torture) (2016a) “Azerbaijan: Joint Statement: Stop Crackdown on Freedom of Expression,” publ. on 06.12.2016. Accessed June 24, 2019. <http://www.omct.org/monitoring-protection-mechanisms/urgent-interventions/azerbaijan/2016/12/d24087/>
- **OMCT** (World Organisation Against Torture) (2016b) “Azerbaijan: Joint Letter: Letter to the Members of the Extractive Industries Transparency Initiative Board on the Working Conditions of Civil Society in Azerbaijan,” publ. on 20.10.2016.

4. Ժողովրդավարությունը հետխորհրդային Ադրբեջանում. Կարգախոս, թե՛ չափելի արժեք

- Accessed June 25, 2019. http://www.omct.org/monitoring-protection-mechanisms/urgentinterventions/azerbaijan/2016/10/d24009/#_ftn1.
- **OSCE** (2018) “Azerbaijan, Early Presidential Election, 11 April 2018: Final Report,” publ. on 18.07.2018. <https://www.osce.org/odihr/elections/azerbaijan/388580?download=true>.
 - **PACE 2016** “Statement of the Parliamentary Assembly of the Council of Europe (PACE) assessment mission for the Constitutional referendum in Azerbaijan,” publ. on 27.09.2016. Accessed June 24, 2019. <http://assembly.coe.int/nw/xml/News/News-View-en.asp?newsid=6326&lang=2>.
 - **Pravda** (2016) “Баку недооценил талышский фактор”, 21.01.2017. Дата доступа: 24.06.2019. <https://www.pravda.ru/world/1289321-ataev/>.
 - **USCIRF** (2019) “2019 Annual Report by United States Commission on International Religious Freedom,” 146-151. Accessed 27 June, 2019. <https://www.uscifr.gov/sites/default/files/2019USCIRFAnnualReport.pdf>.
 - **Venice Commission** (2016) “Azerbaijan: preliminary opinion on the draft modifications to the Constitution submitted to the referendum of 26 September 2016,” European Commission for Democracy through Law (Venice Commission), Opinion No. 864/2016. Strasbourg.
 - **Əliyev, İlham** (2016) “Azərbaycan Respublikasının Prezidenti İlham Əliyevin nitqələri, çıxışları, müsahibələri və bəyanatları: 2016-ci il”. Accessed August 27, 2018. <http://files.preslib.az/site/ialiyev/2016.pdf>.
 - **Əliyev, İlham** (2017) “Azərbaycan Respublikasının Prezidenti İlham Əliyevin nitqələri, çıxışları, müsahibələri və bəyanatları: 2017-ci il”. Accessed August 27, 2018. <http://files.preslib.az/site/ialiyev/2017.pdf>.
 - **Əliyev, İlham** (2018) “Azərbaycan Respublikasının Prezidenti İlham Əliyevin nitqələri, çıxışları, müsahibələri və bəyanatları: 2018-ci il”. Accessed August 27, 2018. <http://files.preslib.az/site/ialiyev/2018.pdf>.
 - **Əliyev, İlham** (2019) “Azərbaycan Respublikasının Prezidenti İlham Əliyevin nitqələri, çıxışları, müsahibələri və bəyanatları: 2019-ci il.” Accessed July 26, 2019. <http://files.preslib.az/site/ialiyev/2019.pdf>.
 - **Əsgərov, Ağabəy** (2010) “Demokratik inkişafın Heydər Əliyev modeli: Yüksək siyasi təfəkkür və vətəndaş üçün layiqli həyat tərzini bu modelin təməl prinsipidir” // Səs. - 2010.-7 may. - N 80. - S. 5, 6.
 - **ԱՃԹՆՍ** (2016) Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության ստանդարտ 2016, Նորվեգիա, վերջին մուտք 25.06.2019, https://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/EITI_Standard_Arm-new.pdf:
 - **Հայրապետյան, Տարևիկ** (2017) «Ադրբեջանի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը» // Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի միտումները մարդու իրավունքների և ժողովրդավարացման չափումներում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա, Մոլդովա) / խմբ.՝ Ար. Ս. Ալեքսանյան, Եր., ԵՊՀ հրատ., 100-131:

- **Հովհաննիսյան, Տարոն** (2018) «Ադրբեջանում սահմանադրական փոփոխությունները և դրանց հետևանքները» // Ռազմաքաղաքական հանդես. Ադրբեջան, N1 (գլխ. խմբ. 4. Վրթանեսյան), Եր., Զորակն ԳԿԵՀ, 123-140:
- **Հովսեփյան, Լևոն** (2013) «Գյուլենական շարժումն Ադրբեջանում. ներկա իրավիճակն ու միտումները», Գլոբուս, N 5 (38), «Նորավանք» ԳԿՀ, 5-14:
- **Հունանյան, Վահան** (2016) «Ադրբեջանի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը» // Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատական վերլուծությունը մարդու իրավունքների և ժողովրդավարացման համատեքստում. Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ուկրաինա, Մոլդովա, խմբ.՝ Ար. Ս. Ալեքսանյան, Եր., ԵՊՀ հրատ., 73-95:
- **Տոնոյան, Արտյոմ** (2018) «Ադրբեջանի քաղաքական կայունության գինը. ժողովրդավարության հակոտնյաները» // Նորանկախ երկրների քաղաքական կայունությունն արդիականացման պայմաններում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա, Մոլդովա), խմբ.՝ Ար. Ս. Ալեքսանյան, Եր., ԵՊՀ հրատ., 101-147:

**5. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ
ԵՎ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ժամանակակից համաշխարհայնացման գործընթացներն ազդում են Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) հասարակական կյանքի ժողովրդավարական փոխակերպումների վրա՝ կանխորոշելով դրանց ցիվիլիարխիկ բնույթն ու հիմնական ուղղությունները: 2016-2018 թթ. ՌԴ քաղաքական համակարգում կատարված փոփոխությունները բացահայտում են ժողովրդավարության համախմբման տեսական մոդելների և դրանց ներդրման պրակտիկայի միջև առկա «բացը»: Չնայած ձեռք բերված արդյունքներին, այնուամենայնիվ ՌԴ-ում շարունակում են հակասական մնալ հանրային իշխանությունների ժողովրդավարական տարանջատման և գործառական հավասարակշռության ապահովման ընթացակարգերը: Դրանք երկրի քաղաքական ընտրանուց պահանջում են հստակեցնել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառական լիազորությունները՝ անհապաղ ապահովելով իշխանությունների տարանջատման ապահովման սահմանադրական սկզբունքը:

ՌԴ-ում ժողովրդավարական համախմբումը տեղի է ունենում հասարակության քաղաքական համակարգի նեոավտորիտար փոխակերպումների, համաշխարհային մրցունակության խորացման և աշխարհաքաղաքական պատժամիջոցների ուժեղացման պայմաններում: Դրանք սոցիալ-քաղաքա-

կան ոչ գծային գործընթացներ են, որոնք ընդգրկում են երկրի հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Այդ իրողությունները բացասաբար են ազդում երկրի անցումային հասարակության վրա, որովհետև սոցիալ-տնտեսական ենթահամակարգերը ժամանակ առ ժամանակ կորցնում են իրենց հավասարակշռվածությունն ու կայունությունը՝ հայտնվելով անհավասար փոխազդեցությունների միջավայրում: Այս առումով կարևորվում են ՌԴ-ում վարչակարգային փոփոխությունների նոր ռազմավարությունների մշակումն ու ներդրումը ժողովրդավարացման ոչ գծային իրողությունների և գծային տեսլականի հիման վրա (*Ачкасов 2018, 19-29, Кирюхина 2018, 22-28, Кулик 2017b, 4-22, Медведев 2016, 56-67, Никонов 2015, 2-41, Потапов 2018, 27-49, Ратленд 2016, 55-72, Сафронов 2016, 27-37, Тасиц 2017, 112-130, Цветкова 2019, 940-950*):

Դիտարկվող ժամանակահատվածում ՌԴ ժողովրդավարության մակարդակը պայմանավորված է եղել քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական և առողջապահական գործոնների ազդեցություններով (տե՛ս Աղյուսակ 1): Վերջիններս ցույց են տալիս, որ ժողովրդավարությունը ոչ միայն ցիվիլիարիսիկ մշակույթի, արժեքների և գաղափարախոսական սկզբունքների ու կանոնների համալիր է, այլև տվյալ երկրի քաղաքական համակարգի արդիականացման և զարգացման ինքնատիպ ուղի: Այս առումով, ի թիվս այլ հարցերի, քաղաքականության սուբյեկտներից պահանջվում են երկրի կենսական շահերի գիտակցման, անվտանգության ապահովման և բարեկեցության, կառավարման ու ինքնակառավարման, ինչպես նաև քաղաքացիական հասարակության հետ երկխոսության ու գործընկերության նոր որակներ:

5. Ռուսաստանի դաշնության ժողովրդավարական փոխակերպումները
 համաշխարհային մրցունակության և պատժամիջոցների պայմաններում

Աղյուսակ 1

ՌԴ Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական, Կրթական ու Առողջապահական
 գործոնների և ժողովրդավարության մակարդակի ինդեքսները
 (2000-2018 թթ.)*

Տարեթիվ	Ք _{ԳԻ}	Տ _{ԳԻ}	Ս _{ԳԻ}	Կ _{ԳԻ}	Ա _{ԳԻ}	ԺՄԻ
2000	0,301	0,444	0,507	0,432	0,129	0,356
2001	0,310	0,416	0,523	0,448	0,138	0,357
2002	0,325	0,409	0,537	0,499	0,144	0,369
2003	0,309	0,454	0,550	0,495	0,153	0,376
2004	0,291	0,491	0,569	0,488	0,114	0,375
2005	0,293	0,500	0,597	0,503	0,116	0,383
2006	0,297	0,569	0,630	0,510	0,158	0,412
2007	0,285	0,568	0,678	0,518	0,186	0,415
2008	0,260	0,595	0,734	0,527	0,207	0,422
2009	0,290	0,440	0,697	0,504	0,272	0,395
2010	0,320	0,488	0,737	0,528	0,240	0,423
2011	0,304	0,537	0,788	0,528	0,259	0,436
2012	0,306	0,548	0,812	0,521	0,280	0,444
2013	0,325	0,608	0,842	0,564	0,304	0,478
2014	0,282	0,534	0,802	0,561	0,315	0,438
2015	0,280	0,481	0,690	0,539	0,335	0,411
2016	0,267	0,549	0,701	0,533	0,350	0,425
2017	0,272	0,547	0,744	0,527	0,376	0,434
2018	0,276	0,567	0,733	0,527	0,383	0,440

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

Ք_{ԳԻ}-ի, Տ_{ԳԻ}-ի, Ս_{ԳԻ}-ի, Կ_{ԳԻ}-ի, Ա_{ԳԻ}-ի և հետևաբար դրանց հիման վրա հաշվարկված
 ԺՄԻ-ի որոշ տարիների արժեքները, հնարավոր է, աննշան տարբերվեն նախորդ
 հրապարակման համապատասխան տարիների արժեքներից՝ թարմացված և նոր
 տվյալների ներմուծմամբ պայմանավորված նվազագույն և առավելագույն արժեք-
 ների փոփոխման հետևանքով:

5.1 Ինքնիշխան ժողովրդավարության դաշնային քաղաքացիության և ազատականության հիմքերը

Նոր քաղաքական իրողություններում ՌԴ ժողովրդավարության մակարդակի 2016-2018 թթ. Քաղաքական գործոնների ինդեքսի (Ք_{ԳԻ}) դիտարկումը ցույց է տալիս, որ խնդրահարույց է համախմբված ժողովրդավարության և քաղաքական ինստիտուտների վերափոխման գործընթացը: Հենց դրա առաջընթացով է մեծապես պայմանավորված ՌԴ-ում ժողովրդավարական ինստիտուտների և ընթացակարգերի հիմնարար ամրագրումը՝ ժողովրդավարության նվաճումները դարձնելով անդառնալի: ՌԴ-ում ժողովրդավարացումը պետք է դիտարկել անընդհատ ավելացող բազմաթիվ ռիսկերի համատեքստում, որոնք պահանջում են նոր և արագ արձագանքներ մի շարք դժվար լուծելի հակասությունների և հիմնախնդիրների նկատմամբ:

Մասնակցային ժողովրդավարության դաշնային և տեղական մակարդակների փոխլրացման, ժողովրդավարական բարեփոխումների գործընթացային և ինստիտուցիոնալ նշանակության, ինչպես նաև դեմոկրատիզմի մասին հարցերը լայն քննարկման առարկա են դարձել պահպանողականության, ազատականության և արդիականության կողմնակիցների, կուսակցությունների, ՔՀԿ-ների, հասարակական շարժումների, էթնոազգային և էթնոկրոնական միավորումների շրջանում:

ՌԴ ժողովրդավարության մակարդակի ինդեքսի (ԺՄԻ) Ք_{ԳԻ}-ի կորը 2018 թ.-ին 2016-2017 թթ. համեմատ աճել է, բայց շարունակում է մնալ ցածր (տե՛ս Գծապատկեր 1, Աղյուսակ 1): Ընդ որում, գծապատկեր 1-ից երևում է, որ 2000-2018 թթ. ժամանակահատվածում Ք_{ԳԻ}-ի կորը 2018 թ.-ին 2000 թ.-ի համեմատ նույնպես ցածր է եղել:


ԺՄԻ-ի 2018 թ. Ք_{ԳԻ}-ի կորի ցածր մակարդակը հիմնականում պայմանավորված էր 2014 թ.-ից ի վեր Եվրամիության, ԱՄՆ-ի և արևմտյան երկրների հակառուսական պատժամիջոցների քաղաքականությամբ և համաշխարհային դիմակայության մի շարք գործընթացներով: Մասնավորապես, պատժամիջոցների հիմնական նպատակն է սահմանափակել ՌԴ աշխարհաքաղաքական ներգրավվածությունն ու ազդեցությունը՝ պարտադրե-

5. Ռուսաստանի դաշնության ժողովրդավարական փոխակերպումները համաշխարհային մրցունակության և պատժամիջոցների պայմաններում

լով երկրի ռազմաքաղաքական ընտրանուն վերանայել արտաքին քաղաքականությունը (*Клямкин 2017, 163-230, Охотский 2017, 160-175, Посадский 2016, 89-141, Севастьянов, 2017, 31-61, Федотова 2017, 63-77*):

Գծապատկեր 1

ՌԴ Քաղաքական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)*



Եթե սկզբում հակառուսական պատժամիջոցների կիրառման հիմնական պատճառն Ուկրաինայի ճգնաժամն էր, ապա 2016 թ.-ից՝ այդ ոլորտներն աստիճանաբար ընդլայնվեցին: Դա վկայում է այն մասին, որ պատժամիջոցներ սահմանող երկրներն ու կազմակերպություններն օգտագործում են երկրի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների և հասարակության առավել խոցելի կողմերը: Դրանցից են՝ 1) տնտեսությունում էժան վարկերի և ներդրումների կարիքը, ինչպես նաև կախվածությունն ԱՄՆ-ի ֆինանսատնտեսական ընթացակարգերից և համաշխարհային ֆինանսական համակարգից, 2) տնտեսության մի շարք հատվածներում բարձր տեխնոլոգիական սարքավորումների մատակարարման կախվածությունն արտերկրից, 3) տնտեսության զգայունությունն ապրանքային շուկաների փոփոխությունների նկատմամբ, 4) սոցիալական ոլորտի

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

խոցելիությունը, տնտեսական խնդիրները սոցիալական բողոքի վերածվելու ռիսկը՝ շարունակվող անհավասարության և բևեռացման պայմաններում, 5) ընտրանու, մտավոր և ձեռնարկատիրական ընկերակցությունների, սոցիալական ազդեցիկ խմբերի ինտեգրվածությունն ու ներառվածությունը համաշխարհային ինստիտուտների և գործընթացների մեջ:

Դիտարկվող ժամանակահատվածում ՌԴ ժողովրդավարական փոխակերպումների վրա զգալի են եղել համաշխարհային օրակարգի ամենակարևոր իրադարձությունները, որոնցից էին՝ Դոնբասում շարունակվող հակամարտությունը, «Բրեքսիթը», 2016 թ. ԱՄՆ-ի նախագահական ընտրությունները, Սիրիայում ռազմական հակամարտությունը, Թուրքիայում ձախողված հեղաշրջումը և այլն:

Աղյուսակ 2

2018 թ. ՌԴ նախագահական ընտրությունների արդյունքները¹¹⁵

<i>Թեկնածու</i>	<i>Առաջադրող սուբյեկտը</i>	<i>Ընտրողների ձայների քանակ</i>	<i>Ընտրողների ձայների տոկոս</i>
Վլադիմիր Պուտին	Ինքնաառաջադրված	56,430,712	76,69
Պավել Գրուդինին	ՌԴԿԿ	8,659,206	11,77
Վլադիմիր Ժիրինովսկի	ՌԼԴԿ	4,154,985	5,65
Քսենիա Սոբչակ	«ԳՐԱՆԻ» կուսակցություն	1,238,031	1,68
Գրիգորի Յավլինսկի	«Յաբլոկո» կուսակցություն	769,644	1,05
Բորիս Տիտով	«Աճի կուսակցություն»	556,801	0,76
Մաքսիմ Սուրայկին	ՌԿԿԿ	499,342	0,68
Սերգեյ Բաբուրին	«Ժողովրդական միություն»	479,013	0,65

¹¹⁵ Տվյալների աղբյուրը՝ ՌԴ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայք՝ <http://www.cikrf.ru/analog/prezidentskiye-vybory-2018/itogi-golosovaniya>, ԵԱՀԿ վերջնական հաշվետվությունը ՌԴ ընտրությունների վերաբերյալ՝ <https://www.osce.org/odihr/elections/383577?download=true> (19.06.2019):

5. Ռուսաստանի դաշնության ժողովրդավարական փոխակերպումները համաշխարհային մրցունակության և պատժամիջոցների պայմաններում

ՌԴ-ում քաղաքական համակարգի ժողովրդավարական փոխակերպումներում զգալի էին 2018 թ. նախագահական ընտրությունները, որոնցում հաղթեց գործող նախագահ Պուտինը (տե՛ս Աղյուսակ 2):

2018 թ. նախագահական ընտրություններին բնորոշ էին մի շարք առանձնահատկություններ: Առաջին հերթին պետք է նշել, խորհրդարանական և նախագահական ընտրությունների հաջորդականությունից շեղումը: Այսպես՝ 1995, 1999, 2003, 2007 և 2011 թվականներին տեղի ունեցած ՌԴ պետական դումայի ընտրություններին հաջորդեցին 1996, 2000, 2004, 2008 և 2012 թ. նախագահական ընտրությունները: Մինչդեռ 2016 թ.-ին տեղի ունեցած ՌԴ Պետական դումայի ընտրություններին հաջորդած նախագահական ընտրությունները տեղի ունեցան երկու տարի հետո՝ 2018 թ.-ին, որը նույնպես ազդեց արդյունքների վրա: Երկրորդ, ընտրական գործընթացները և դաշնային քարոզարշավը տեղի էին ունենում աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում. նախագահ Վ. Պուտինը ստիպված էր պարբերաբար արձագանքել համաշխարհային նշանակության հիմնախնդիրներին¹¹⁶: Երրորդ, ՌԴ կոմունիստական կուսակցությունը, ունենալով կազմակերպական մի շարք դժվարություններ, որոշեց առաջադրել դաշնային քաղաքականության մեջ նոր գործչի՝ Պ. Գրուդինինին: Չորրորդ, խորհրդարանական կուսակցություններից մեկը՝ «Արդար Ռուսաստան»-ը, հրաժարվեց առաջադրել իր սեփական թեկնածուն՝ աջակցելով Պուտինին: Հինգերորդ, տեղի ունեցավ ազատական ուժերի պառակտում, որի պատճառով էլ ազատականները ներկայացրին երկու թեկնածու՝ փորձառու քաղաքական գործիչ Գ. Յավլինսկուն և «նորեկ» Ք. Սոբչակին: Դա հնարավորություն տվեց երկրի գործող նախագահ Պուտինին «ինքնառաջադրվել» և նախագահական ընտրությունների միջոցով ձևավորել ներքաղաքական համախմբման օրակարգ՝ սկսելով արտաքին քաղաքականության նոր շրջափուլ: Նույնիսկ «այլընտրանքային» թեկնածուների առկայությունը Պուտինին հնարավորություն տվեց շահել ընտրողների մեծ մասի համակրանքը և դառնալ ընտրազանգվածի «հիմնական» թեկնածուն: Այս գործընթացն ուղեկցվում է, առաջին հերթին, «նոր» ընտրազանգվածի զգալի ներհույսով տարբեր կուսակ-

¹¹⁶ Ավելի մանրամասն տե՛ս Վ. Վ. Պուտինի կայքը՝ <http://putin2018.ru> (19.06.2019):

ցություններից և գաղափարախոսական ուղղվածությամբ ուժերից: Տեղին է նշել, որ նախագահական ընտրությունները թեկնածուներին հնարավորություն ընձեռեցին հանրայնացնել հասարակական սուր հիմնախնդիրները: Ներկայացնելով ընտրողների որոշակի հատվածի տեսակետներն ու շահերը՝ նրանցից յուրաքանչյուրը փորձում էր ձևավորել բովանդակալից բանավեճ և քաղաքական խոսույթ: Թերևս, քաղաքական հաղորդակցության ռուսական միջավայրում դեռևս կայացման փուլում են ընտրական մշակույթը, հրապարակային խոսքի և մասնակցության կանոնները: Մասնավորապես դրա օրինակներից էր այն, որ գործող նախագահ Պուտինը հրաժարվեց մասնակցել հրապարակային բանավեճերին և ներկայացնել որևէ ծրագիր: Դա բացատրվում էր նրանով, որ դեռևս 2012 թ.-ին նախագահի թեկնածու Պուտինն առաջադրեց իր նախընտրական թեզերը մի շարք հողվածներով, որոնք գրված էին ռուսական քաղաքական մտքի լավագույն ավանդույթներով, և որոնցում ընտրողներին ներկայացված էին հեղինակի աշխարհայացքը և արժեքային համակարգը: Այդպիսով, նա հանդես եկավ իր սեփական նախընտրական ծրագրով՝ առանձնացված «Միասնական Ռուսաստան» կուսակցությունից: Երկրի ղեկավարի պաշտոնը ստանձնելուց հետո այդ հրապարակումները հիմք դարձան նախագահ Պուտինի «մայիսյան հրամանագրերի»¹¹⁷: Դրանք պարունակում էին երկու հարյուրից ավելի հրահանգներ՝ կատարման ժամկետ սահմանելով 2012-2020 թվականները¹¹⁸: Ուշագրավ է այն, որ նախագահ Պուտինի «մայիսյան հրամանագրերի» մեծ մասը ձևականորեն իրականացվել է դեռևս 2013 թ. վերջին: Ընդ որում, հատկապես այն հրահանգները, որոնք վերաբերում էին դրանց ծրագրային դրույթների, հայեցակարգերի կամ ռազմավարությունների մշակմանն ու հստակեցմանը: Սակայն «մայիսյան հրամանագրերում» ներառված են բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնց մասին դաշնային կառավարությունը կա՛մ պարզապես լռում է հաշվետվությունում, կա՛մ էլ վերա-

¹¹⁷ Ավելի մանրամասն տե՛ս Указы Президента РФ В. В. Путина от 7 мая 2012 года №№ 594, 596, 597, 598, 599, 600, 601, 602, 603, 604, 605, 606 // http://www.rsr-online.ru/doc/2012_06_25/6.pdf (28.06.2019):

¹¹⁸ Տե՛ս նույն տեղում:

5. Ռուսաստանի դաշնության ժողովրդավարական փոխակերպումները համաշխարհային մրցունակության և պատժամիջոցների պայմաններում

նայում և վերաձևակերպում է դրանց հաշվարկման եղանակն այնպես, որ հնարավոր լինի դրանք ձևականորեն կատարված համարել: Մյուս կողմից, առաջադրվելով նախագահի պաշտոնավարման չորրորդ ժամկետին, Պուտինն առավել պրագմատիկ և համարժեքորեն էր ամփոփում իր պաշտոնավարման նախորդ տարիների միջանկյալ արդյունքները՝ վստահությամբ կարևորելով ընտրությունների արդյունքները և հետագա աշխատանքի հիմնական ուղղությունները: Այս առումով Պուտինն ունեցավ ակնհայտ առավելություն, որովհետև նա նախագահի միակ թեկնածուն է, որն ասում է ոչ միայն այն, ինչ է անելու, այլև ինչպես է անելու:

ՌԴ նախագահ Պուտինի և կառավարող «Միասնական Ռուսաստան» կուսակցության համար առանցքային խնդիրը մնում է կյանքի որակի բարելավման և կայուն զարգացման համար բարենպաստ հնարավորությունների ստեղծումը: Չէ՞ որ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում սոցիալ-տնտեսական անկայունությունն ու հետընթացը շարունակում են լուրջ սպառնալիք լինել երկրի ինքնիշխանությանը և էլ ավելի նվազեցնել ՌԴ արտաքին քաղաքականության հնարավորությունները: Այդ են վկայում նաև ԺՄԻ հետազոտությունները:

Աղյուսակ 3

«Ազատության տան» գնահատականները Ռուսաստանում ժողովրդավարական փոխակերպումների վերաբերյալ (2018 թ.)¹¹⁹

<i>Ժողովրդավարության առաջընթացի գործոններ</i>	<i>2018</i>
Ազգային ժողովրդավարական կառավարում	6,75
Ընտրական գործընթացներ	6,75
Քաղաքացիական հասարակություն	6,25
Լրատվամիջոցների անկախություն	6,50
Տեղական ժողովրդավարական կառավարում	6,50
Դատական համակարգը և դրա անկախությունը	6,75
Կոռուպցիա	6,75
Ժողովրդավարության գնահատական	6,61

¹¹⁹ Տվյալների աղբյուրը՝ «Ազատության տան» պաշտոնական կայք՝ <https://freedomhouse.org/report/nations-transit/2018/russia> (20.06.2019):


Աղյուսակ 3-ից երևում է, որ Ռուսաստանում ժողովրդավարական փոխակերպումները դանդաղ են ընթանում. երկրին բնորոշ է «համախմբված ավտորիտար վարչակարգը» (*Freedom House 2018a, Freedom House 2018b*): Այսինքն՝ երկրում առկա են սոցիալ-քաղաքական դժվարություններ, որոնք խոչընդոտում են ցիվիլիարխիկ պետականության, ՔՀԿ-ների և անհատների առաջադեմ ու ներդաշնակ զարգացումը: Այդպես օրինակ՝ դաշնային կառավարությունը ՌԴ տարբեր սուբյեկտներում կուտակված քաղաքական և սոցիալ-տնտեսական լարվածությունը մեղմելու կամ թուլացնելու նպատակով բյուրոկրատական ճնշումներ է գործադրում տարածքային կառավարչական ընտրանու վրա, իսկ երբեմն նույնիսկ սահմանափակում նրանց լիազորությունները, անկախությունն ու ինքնակառավարման գործառույթները (*КГИ 2018, ЦЕПР 2018*): Ակնհայտ է, որ նման միջոցների դիմելու նպատակը ոչ թե առկա խնդիրները վերացնելն է, այլ դրանց հրապարակային դրսևորումները քողարկել: Այդպիսի մեթոդները խաթարում են ՌԴ սուբյեկտների կառավարման համակարգի արդիականացման հենքը և նվազեցնում են նոր մարտահրավերներին արդյունավետ արձագանքելու նրանց կարողությունը:

Գծապատկեր 2-ից երևում է, որ ՌԴ-ում ՔՀԿ-ների գործընկերային ընթացակարգերի ամրապնդման տեսանկյունից կարևորվում է դրանց սահմանադրաիրավական միջավայրի բարելավումը: Այսպես, 2017 թ.-ին ՌԴ ՔՀԿ-ների կայունությունը զարգացում էր ապրում, բայց դրա իրավական միջավայրն ու հանրային ընկալումը վտանգված էին (*USAID 2018*), քանի որ առկա են մի շարք սահմանափակումներ, որոնք խանգարում էին ավելի քան 220 հազար ոչ առևտրային կազմակերպությունների, 4 հազար կուսակցությունների և քաղաքացիական շարժումների գործունեությունը, որի պատճառով էլ ակտիվ էր դրանց ընդամենը 15-20%-ը (*USAID 2018*):

5. Ռուսաստանի դաշնության ժողովրդավարական փոխակերպումները համաշխարհային մրցունակության և պատժամիջոցների պայմաններում

Գծապատկեր 2

2017 թ. Ռուսաստանի ՔՀԿ-ների կայունության ցուցանիշը¹²⁰



ՌԴ քաղաքական համակարգի ժողովրդավարացման նախադրյալներում զգալի են ներպետական և համաշխարհային անվտանգության մարտահրավերների ու ռիսկերի հակազդման, դրանց զսպման և հավասարակշռման գործոնները: Դրանք երկրի ռազմաքաղաքական ընտրանուց պահանջվում են ընդունել և իրականացնել քաղաքական այնպիսի որոշումներ, որոնք կնպաստեն ժողովրդավարության մակարդակի, մարդու և ազգային անվտանգության փոխլրացուցչության: *Ժողովրդավարության անվրանգային և անվրանգության ժողովրդավարական* չափումների ու միջազգային փորձի ներդրմամբ հնարավոր է բարելավել վարչակարգի ժողովրդավարացումը, ինչպես նաև ներքին և արտաքին սպառնալիքների դեմ պայքարը: *Անվրանգության ժողովրդավարությունը*, փաստորեն, քաղաքական իրավիճակների տարբեր շրջափուլերում ժողովրդավարական ինստիտուտների կարողությունն ու հնարավորությունն է՝ մշակել և իրականացնել կառուցողական հակազդեցություններ ընդդեմ ազգային անվտանգության սպառնալիքների, մարտահրավերների, վտանգների ու ռիսկերի՝ ձևավորելով գոր-

¹²⁰ Տվյալների աղբյուրը՝ ԱՄՆ ՄԶԳ «ՔՀԿ կայունության ցուցանիշ»-ի կայք՝ <https://www.usaid.gov/europe-eurasia-civil-society> (16.05.2019):

ծիքների և ընթացակարգերի այնպիսի համալիր, որը կապահովի երկրի բնականոն և կայուն զարգացումը (*Баранов 2014, 73-79, Клямкин 2017, 163-230, Старостин 2015, 76-80, Старостин, Верещагина, Самыгин 2016, 150-155*): Դա հնարավորություն կտա համախմբել ու հանրային իշխանությունների, ՏԻՄ-երի և ՔՀԿ-ների ջանքերը՝ արդյունավետորեն կարգավորելու ՌԴ սուբյեկտների, սոցիալ-քաղաքական և էթնոմշակութային տարբեր խմբերի միջև համագործակցության ընթացակարգերն ու բախումնային իրավիճակները: Այս ամենը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջում է ոչ միայն բարելավել անվտանգային միջավայրը, այլև ամրապնդել ժողովրդավարական ինստիտուտները և ընդլայնել ինտեգրման գործընթացները (*Барсенков 2017, 54-67, Камерон 2017, 162-185*): Այս առումով Ռուսաստանում, մի կողմից, պետության և ՔՀԿ-ների ռազմավարությունները համընկնում են քաղաքացիակենտրոն անվտանգության ապահովման առումով, իսկ մյուս կողմից՝ պետության և ՔՀԿ-ների միջև պարբերաբար առաջանում են հակասություններ քաղաքացիավարական ընթացակարգերի ընտրության հարցում: Դրա պատճառն այն է, որ պետությունը փորձում է դա անել պետականության ամրապնդման, իսկ քաղաքացիական հասարակությանը՝ ցիվիլիզարխիկ շահերն ու իրավունքները պաշտպանելու միջոցով: Նմանատիպ իրավիճակներում կարևորվում են ուղղահայաց, հորիզոնական և գործընկերային կապերի ու հարաբերությունների փոխլրացուցչությունը: Ընդ որում, քաղաքացիակենտրոն անվտանգության ապահովման հարցում ժամանակակից ժողովրդավարության հայեցակարգային մոտեցումները գրեթե նույնական են:

Աղյուսակ 4-ից երևում է, որ 2017 թ. Ռուսաստանի համաշխարհային ռազմականացման ինդեքսի միավորը բարձր է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ երկրների շարքում: Մասնավորապես, Բոննի փոխարկման միջազգային կենտրոնի տվյալներով՝ 2017 թ.-ին Ռուսաստանը 155 երկրների շարքում զբաղեցրել է 6-րդ վարկանիշային տեղը և շարունակել է մնալ ամենառազմականացված երկրներից մեկն աշխարհում և հետխորհրդային տարածաշրջանում (*Mutschler and Bales 2018*): Տեղին է նշել, որ 2018 թ.-ին Ռուսաստանի ռազ-

5. Ռուսաստանի դաշնության ժողովրդավարական փոխակերպումները համաշխարհային մրցունակության և պատժամիջոցների պայմաններում

մական ծախսերը կազմել են ավելի քան 64 մլրդ ԱՄՆ դոլար, որը երկրի ՀՆԱ-ի 3,9%-ն է¹²¹:

Աղյուսակ 4

2017 թ. ՀԱՊԿ անդամ երկրների համաշխարհային ռազմականացման ինդեքսը

Երկիր	Ռազմական ծախսերի համաթվի միավոր	Ռազմական անձնակազմի համաթվի միավոր	Ծանր զենքերի համաթվի միավոր	ՀՌԻ միավոր	Վարկանիշ
Հայաստան	6,41	6,11	2,9	860,05	3
Ռուսաստան	6,53	5,33	3,22	838,53	6
Բելառուս	5,98	5,83	2,98	819,07	10
Ղրղզստան	6,35	3,6	2,58	671,45	62
Ղազախստան	5,9	3,6	2,68	648,3	85
Տաջիկստան	5,97	3,3	1,65	565,34	126

ՌԴ-ում ժողովրդավարության ցիվիլիախիկ առաջընթացի համար առանցքային նշանակություն ունեն օրենքի գերակայության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ներպետական և միջազգային ընթացակարգերը: Չէ՞ որ քաղաքացիական մշակույթի և դաշնայնության կայացման արդի պայմաններում կարևորվում է, որ քաղաքացիները գործնականում կիսեն այն ընդհանուր արժեքները, գաղափարական ուղենիշները և վարքագծային նորմերը, որոնք էլ իրենց հերթին պետք է դրսևորվեն քաղաքական ինստիտուտների գործունեության մեջ: Այս առումով դաշնային ժողովրդավարությունը խարսխված է ՌԴ սուբյեկտների ՔՀԿ-ների իրավապաշտպան ակտիվության և մարդասիրական նախաձեռնությունների վրա: Մասնավորապես, 2018-2019 թթ. «Ազատությունն աշխարհում» զեկույցների տվյալներով՝ ՌԴ քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների համակցված գնահատականը 6,5 է, իսկ կարգավիճակը՝ «ոչ ազատ» (*Freedom House 2018a, 2019*):

Դիտարկվող ժամանակաշրջանում անազատականության (իլիբերալիզմի) և քաղաքացիական ակտիվության վատատեսական միտումները դրսևորվեցին նաև քաղաքական հանրահավաքներում և բողոքի այլ գործո-

¹²¹ Տվյալների աղբյուրը՝ «Stockholm International Peace Research Institute (SIPRI) Military Expenditure Database» // <https://www.sipri.org/databases/milex> (10.06.2019):

ղություններում: Ընդ որում, աճել են ինչպես քաղաքական, այնպես էլ սոցիալ-տնտեսական և աշխատանքային բողոքների քանակը: Այս առումով 2016-2018 թթ. համարվում են հանրահավաքային գործողությունների, զանգվածային բողոքի ցույցերի և անհնազանդությունների ակտիվացման ժամանակահատված: Ի մասնավորի, 2017-2018 թթ. ՌԴ սուբյեկտներում տեղի է ունեցել հանրահավաքային գործողությունների զգալի աճ՝ 2 հազար 526 բողոքի ցույց (*ԱՅՈՒՄ 2018*): Տեղին է նշել, որ դրանց 16,4%-ը եղել է քաղաքական բնույթի և վերաբերում էր դաշնային և տեղական նշանակության օրակարգերին (*ԱՅՈՒՄ 2018*): Այս առումով երկրի քաղաքական համակարգում համեմատաբար ակտիվ է եղել ՌԴ կոմունիստական կուսակցությունը (ՌԴԿԿ): Լինելով խորհրդարանական կուսակցություն և ունենալով տարածքային մասնաճյուղեր՝ դիտարկող ժամանակաշրջանում ՌԴԿԿ-ն փորձել է ազդել սոցիալական քաղաքականության և հատկապես կենսաթոշակային բարեփոխումների գործընթացի վրա: Խորհրդարանական և արտախորհրդարանական մնացած կուսակցությունները համեմատաբար ավելի ակտիվ են եղել երկրի որոշակի սուբյեկտներում՝ կախված կոնկրետ տարածքային գրասենյակի ակտիվությունից կամ սոցիալ-քաղաքական իրադրությունից:


Ինչպես երևում է գծապատկեր 3-ից, բողոքի գրանցված գործողությունների 60,4%-ին մասնակցել է մինչև 100 մարդ, իսկ 27,4%-ին՝ 100-ից մինչև 500 մարդ, 6,1%-ին՝ ավելի քան 500 մարդ, 5,8%-ին՝ 1000-ից մինչև 5000 մարդ, իսկ 0,3%-ին՝ ավելի քան 5000 մարդ (*ԱՅՈՒՄ 2018*): Ընդ որում, քաղաքական հավաքների զգալի մասը կազմակերպվել է ընդդիմադիր գործիչ Ա. Նավալնիի համախոհների կողմից, որոնց միացել կամ աջակցել են նաև տարբեր կուսակցություններ և ՔՀԿ-ներ: Ուշագրավ է, որ զանգվածային հավաքների և ուղղակի ժողովրդավարությանը բնորոշ քաղաքացիական մասնակցության այլ եղանակների կայացմանը հիմնականում խոչընդոտում են թույլ բազմակուսակցական համակարգը, ընդդիմադիր կուսակցությունների հատվածականությունը, կրավորական ՔՀԿ-ները, ապաքաղաքականացված սոցիալական ցանցերը և այլն (*Григорьев, Павлюшина 2017, 58-71, Дука, Швая 2017, 203-211, Лихачев 2018, 5-16*): Այս պատճառներով էլ սոցիալ-տնտեսական բողոքները, որպես կանոն, հազվադեպ են

5. Ռուսաստանի դաշնության ժողովրդավարական փոխակերպումները համաշխարհային մրցունակության և պատժամիջոցների պայմաններում

քաղաքականացվում, իսկ դրանց մասնակիցները դիմում են իշխանություններին կոնկրետ պահանջների կատարման կոչերով՝ փորձելով վերականգնել կամ պաշտպանել իրենց խախտված իրավունքները: Մտահոգիչն այն է, որ նույնիսկ կուսակցությունները դրանք չեն փոխակերպում քաղաքական պահանջների, այլ մնում են սոսկ հանրահավաքային գործողությունների մակարդակում՝ բավարարվելով տեղական իշխանությունների կամ որոշ պաշտոնյաների հրաժարականների կարգախոսներով:

Գծապատկեր 3

Հանրահավաքի մասնակիցների թիվը (ԱՅՈՒՄ 2018)



Դիտարկվող ժամանակահատվածում ՔԳԻ-ի աճի վրա դրական ազդեցություն է ունեցել ՌԴ սուբյեկտներում հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետության բարձրացումը: Չնայած պետության ձեռնարկած բոլոր ջանքերին և ՔՀԿ-ների ժողովրդավարական արժեքներին նվիրվածությանը, այնուամենայնիվ կոռուպցիան դարձել է սոցիալ-քաղաքական և տնտեսական լուրջ սպառնալիք երկրի քաղաքացիավարական անվտանգության ու զարգացման համար: Այն շարունակում է մնալ բարձր մակարդակի վրա և կրել համակարգային բնույթ: Օրինակ, ըստ Կոռուպցիայի ընկալման ինդեքսի (ԿԸԻ)՝ 2016 թ.-ին 176 երկրների շարքում Ռուսաստանը զբաղեցրել է 131-րդ տեղը, 2017 թ.-ին 180 երկրների շարքում՝ 135-րդ տեղը,

2018 թ.-ին 180 երկրների շարքում՝ 138-րդ տեղը¹²²: Հետևաբար, քաղաքական ընտրանու՝ ՌԴ-ում կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարելու պատրաստակամությունը միջազգային կազմակերպությունները համարում են քաղաքակիրթ պետության կայացման հիմնական ցուցիչ: Այս առումով կարևորվում են կոռուպցիայի դեմ պայքարի իրավական հենքի ժողովրդավարացման ընդլայնումը, որն ամրագրված է ՌԴ Սահմանադրությամբ, դաշնային սահմանադրական և այլ օրենքներով, միջազգային իրավունքով և պայմանագրերով, ՌԴ նախագահի և կառավարության, դաշնային և ՌԴ սուբյեկտների պետական մարմինների և այլ իրավական ակտերով (մասնավորապես, 2016-2017 թթ. և 2018-2020 թթ. կոռուպցիային հակազդեցության ազգային ծրագրերը¹²³ և այլն): Վերջիններս բաղկացած են ոչ միայն կոռուպցիոն իրավախախտումների դեմ միջոցառումներից, այլև կանխարգելիչ աշխատանքներից, քաղաքացիների իրավագիտակցության, բարեվարքության և ցիվիլիարխիկ կրթության մակարդակի բարձրացումից: Այդպիսով՝ դրանք կոչված են նպաստելու հակակոռուպցիոն չափանիշների տարածմանն ու հակակոռուպցիոն վարքագծի ձևավորմանը, կոռուպցիոն հանցագործությունների նվազեցմանը կամ վերացմանը:

Անդրադառնալով ԺՄԻ-ում ընդգրկված Ք_{ԳԻ}-ի Համաշխարհային գենդերային բացակի ինդեքսին (ՀԳԲԻ)՝ հարկ է նշել, որ 2016 թ.-ին Ռուսաստանը 144 երկրների շարքում զբաղեցրել է 75-րդ տեղը, 2017 թ.-ին 144 երկրների շարքում՝ 71-րդ տեղը, 2018 թ.-ին 149 երկրների շարքում՝ 75-րդ տեղը (*World Economic Forum 2016, 2017, 2018*): Ուշագրավ է, որ 2016-2018 թթ.-ին Ռուսաստանն ամենացածր ցուցանիշներն արձանագրել է «Քաղաքական հնարավորությունների հզորացում» ենթաինդեքսով (տե՛ս Աղյուսակ 5), իսկ ամենաբարձր ցուցանիշները՝ 2017-2018 թթ.-ին՝ «Առողջություն և

¹²² Տվյալների աղբյուրը՝ «Թրանսպարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի պաշտոնական կայք՝ <https://www.transparency.org/research/cpi/overview> (21.06.2019):

¹²³ Տե՛ս Указ Президента РФ от 01.04.2016г. №147 “О Национальном плане противодействия коррупции на 2016-2017 годы” // <http://pravo.gov.ru/proxy/ips/?docbody&nd=102393795>, Указ Президента РФ от 29.06.2018 г. № 378 “О Национальном плане противодействия коррупции на 2018-2020 годы” // <http://kremlin.ru/acts/bank/43253> (21.06.2019):

5. Ռուսաստանի դաշնության ժողովրդավարական փոխակերպումները համաշխարհային մրցունակության և պատժամիջոցների պայմաններում

գոյապրևում» ենթահինդեքսով՝ զբաղեցնելով 1-ին տեղը (*World Economic Forum 2017, 2018*):

Աղյուսակ 5

2016-2018 թթ. ՌԴ Համաշխարհային գենդերային բացակի ինդեքս¹²⁴

ՀԳԻ ենթահինդեքս	2016		2017		2018	
	<i>վարկանիշ</i>	<i>միավոր</i>	<i>վարկանիշ</i>	<i>միավոր</i>	<i>վարկանիշ</i>	<i>միավոր</i>
Տնտեսական մասնակցություն և հնարավորություն	41	0,722	41	0,724	31	0,741
Կրթական մակարդակ	45	0,997	50	0,997	28	1,000
Առողջություն և գոյատևում	40	0,979	1	0,980	1	0,980
Քաղաքական հնարավորությունների հզորացում	129	0,066	121	0,085	123	0,085
ՀԳԻ	75	0,691	71	0,696	75	0,701


5.2 Տնտեսական զարգացման, արդիականացման և ժողովրդավարացման մակարդակների միջև պատճառահետևանքային կապը

2016-2018 թթ.-ին ՌԴ-ում շուկայական տնտեսության կայացման և տնտեսական զարգացման ժողովրդավարական նախադրյալների համեմատական ուսումնասիրությունները հիմնավորում են այն թեզը, որ վարչակարգի ժողովրդավարացումն ավելի մեծ հնարավորություններ է տվել դաշնային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին համախմբելով ուժերը՝ արդիականացնել երկիրը և երաշխավորել եկամուտների, բարեկեցության, սոցիալական ապահովության, կրթության և առողջապահության ավելի բարձր մակարդակ:

¹²⁴ Տվյալների աղբյուրը՝ Համաշխարհային տնտեսական ֆորումի պաշտոնական կայք՝ <https://www.weforum.org/reports/the-global-gender-gap-report-2016>, <https://www.weforum.org/reports/the-global-gender-gap-report-2017>, <https://www.weforum.org/reports/the-global-gender-gap-report-2018> (21.06.2019):

Գծապատկեր 4

ՌԴ Տնտեսական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)*



2016-2018 թթ.-ին ՌԴ ԺՄԻ-ի տնտեսական գործոնների ինդեքսների ($S_{ԳԻ}$) վերլուծությունը ցույց է տալիս, որ ժողովրդավարական ինստիտուտների կայացման աստիճանը կախված է տնտեսական զարգացման մակարդակից (տե՛ս Գծապատկեր 4, Աղյուսակ 1): ՌԴ քաղաքական համակարգի և վարչակարգի ժողովրդավարական փոխակերպումները պետք է համապատասխանեն տնտեսական ներքին կարիքներին և կայուն տնտեսական աճի տեմպերին: Այս դեպքում երկիրը կկարողանա բարձրացնել մրցունակությունը և դիմագրավել միջազգային մարտահրավերներին՝ արդյունավետորեն ինտեգրվելով համաշխարհային տնտեսության հետարդյունաբերական համակարգին: Ըստ այդմ՝ Ռուսաստանը ներկայումս անցումային շրջանի «կառավարելի» ժողովրդավարություն ունեցող երկրներից է, որտեղ հանրային իշխանությունները դեռևս մասնավոր հատվածի հետ են իրականացնում բնական ռեսուրսների վերահսկումը: «Կառավարվելի» ժողովրդավարության կայունությունը կախված է ազգային եկամուտների բաշխման գործընթացում պետական վերահսկողությունից և վարչարարությունից: Դիվերսիֆիկացված տնտեսություն ունեցող երկրներում շատ ավելի դժվար է հասնել նման վերահսկողության, որովհետև հարստության աղբյուրները գտնվում

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

5. Ռուսաստանի դաշնության ժողովրդավարական փոխակերպումները համաշխարհային մրցունակության և պատժամիջոցների պայմաններում

են բազմաթիվ տնտեսվարողների ձեռքում, այլ ոչ թե մեկի: Արդյունավետությունը պետք է կառուցակցված լինի ձեռնարկատիրական նախաձեռնությամբ, այլ ոչ թե հումքի արտահանմամբ: Մոտ ապագայում, կարծես թե, նկատելի է մասնավոր հատվածի դերի նվազման միտում:

Ժողովրդավարական փոխակերպումների դանդաղումը կամ նահանջը, համակարգային կոռուպցիան, ուղեղների արտահոսքը, տեղեկատվական տեխնոլոգիաների արտադրողականությունը և նորարարական գաղափարները չխրախուսելը, էլեկտրոնային հասարակության անկայունությունը լուրջ խոչընդոտներ են ստեղծում երկրի գիտելիքահենք տնտեսության զարգացման ու առաջընթացի համար: Չէ՞ որ երկրի արդիականացման շնորհիվ են աճում ժողովրդավարական վարչաձևի կայունությունը, ազգային հարստությունը և սոցիալ-տնտեսական կառուցվածքի այլ տարրեր: Չնայած այն հանգամանքին, որ ժողովրդավարությունը կարող է առաջանալ տնտեսական զարգացման ցանկացած մակարդակում և տարբեր գործոնների շնորհիվ, բայց անհերքելի է, որ հետխորհրդային տարածքում ժողովրդավարական փոխակերպումներն առավել արդյունավետ են զարգանում «բաց» տնտեսություն և տնտեսական ինտեգրման արդյունավետ գործիքներ կիրառող երկրներում, որոնք ունեն միջինից բարձր ՀՆԱ-ի մակարդակ: Հետևաբար՝ անհրաժեշտ է ստեղծել կառուցողական ժողովրդավարության տնտեսական այնպիսի նախադրյալներ, որոնք կայուն հիմքեր կստեղծեն երկրի հետագա զարգացման համար:

ՌԴ կառավարության ծրագրերի հիմնական նպատակը երկրի տնտեսական վիճակի բարելավումն ու զարգացումն է, որի շնորհիվ տնտեսությունը կբարձրանա նոր մակարդակի: Ժողովրդավարական փոխակերպումների տնտեսական հիմքերի ամրապնդման տեսանկյունից կարևորվում են բնակչության եկամուտների և կենսամակարդակի աճը, ներքին պահանջարկի ընդլայնումը, ներդրումների խթանումը, որոնք կբարելավեն արդյունաբերությունը: Դա պահանջում է ինստիտուցիոնալ փոփոխություններ և տնտեսական ենթակառուցվածքների բարեփոխումներ, որոնք նոր ծառայությունների ընդլայնման ու ապրանքների արտահանման ծավալների ավելացման նոր խթան կդառնան: Այդ ամենը կնպաստի երկրի ներքին և արտաքին ինքնիշխանության ամրապնդմանն ու «լավ» տնտեսության կայաց-

մանր, ազգամիջյան հարաբերությունների ներդաշնակությամբ, սոցիալական, ժողովրդագրական, գիտակրթական, առողջապահական, զինված ուժերի, ռազմարդյունաբերության, ռազմատեխնիկական և այլ ոլորտներում պետական քաղաքականության բարելավմանը, արդիականացմանն ու կատարելագործմանը: Թերևս, սոցիալ-տնտեսական զարգացման և ազգային անվտանգության սպառնալիքների հաղթահարման լավագույն սցենարներ պարունակող ռազմավարական կանխատեսումը պետք է մարտավարական փոխկապակցված փաստաթղթերի ամբողջ համակարգի ձևավորման հիմք դառնա (*Френкель, Тихомиров, Сергиенко, Сурков 2018, 24-49*):

ՌԴ տնտեսական կայունության գործոնների ($S_{\text{ԳԻ}}$) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2016-2018 թթ. ժամանակահատվածում տնտեսական հիմնական ցուցանիշները բարելավվել են՝ պահպանելով աճի դրական միտումները (*Федеральная служба государственной статистики 2016, 2017, 2018*): Ընդ որում, 2018 թ.-ին $S_{\text{ԳԻ}}$ -ին նախորդ տարվա համեմատ աճ է գրանցել, սակայն շարունակում է ցածր մնալ 2013 թ. ցուցանիշներից, որն ամենաբարձրն է դիտարկվող ժամանակահատվածում (տե՛ս Գծապատկեր 4, Աղյուսակ 1): Տնտեսական համակարգի բարելավման առումով առանցքային նշանակություն է ունեցել այն, որ 2018 թ.-ին յոթ տարվա մեջ առաջին անգամ Ռուսաստանի բյուջեն, գերազանցելով սպասումները, կատարվել է պրոֆիցիտով՝ կազմելով երկրի ՀՆԱ-ի 2,7%-ը¹²⁵: Համեմատության համար տեղին է նշել, որ երկրի բյուջեի դեֆիցիտը 2017 թ.-ին կազմել էր ՀՆԱ-ի 1,4%-ը, 2016 թ.-ին՝ 3,5%-ը, 2015 թ.-ին՝ 2,6%-ը¹²⁶:

2018 թ. $S_{\text{ԳԻ}}$ -ն աճել է հիմնականում ՀԱԱ-ի, առևտրաշրջանառության ծավալների, տնտեսական ազատության ցուցանիշների բարելավման, ինչպես նաև բյուջեի պրոֆիցիտի շնորհիվ: Իսկ բացասական ազդեցություն-

¹²⁵ Տվյալների աղբյուրը՝ Ռուսաստանի պետական վիճակագրության դաշնային ծառայության կայքը՝ http://www.gks.ru/wps/wcm/connect/rosstat_main/rosstat/ru/statistics/publications/catalog/doc_1138717651859 (28.06.2019):

¹²⁶ Տե՛ս նույն տեղում:

5. Ռուսաստանի դաշնության ժողովրդավարական փոխակերպումները համաշխարհային մրցունակության և պատժամիջոցների պայմաններում

ների հիմնական պատճառներն են գնաճը, օտարերկրյա ուղղակի ներդրումների և տնտեսության վարկավորման ծավալների նվազումները¹²⁷:

Դիտարկվող ժամանակահատվածում տնտեսական քաղաքականության վերանայման ամենաառաջին ազդակներից մեկն օտարերկրյա ուղղակի ներդրումների նվազման միտումներն են: Տնտեսական փոխակերպումների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խոշոր ձեռնարկություններն այնքան էլ պատրաստակամ չեն այդ հարցում, իսկ տնտեսական գործունեության սահմանափակումները և կապիտալը շրջանառությունից հանելն ու բանկային հաշիվներին փոխանցելը տնտեսության վրա խիստ բացասական ազդեցություն են ունենում: Նման իրավիճակը խիստ բացասական հետևանքներ ունեցավ ներդրումային միջավայրի վրա, և դաշնային կառավարությունը ստիպված եղավ իրականացնել այնպիսի քայլեր, որոնք կնպաստեն, որ տնտեսվարող սուբյեկտների շրջանում վստահության մթնոլորտ ձևավորվի:

ՌԴ տնտեսական ինտեգրման և առաջընթացի առումով կարևոր նշանակություն ունեն աշխարհաքաղաքական լայնածավալ նախագծերի մշակումն ու իրականացումը (ՊԱՕ «Դաշնոմ» 2019), որոնք պահանջում են համապատասխան ենթակառուցվածքներ, սակայն պարունակում են մի շարք անորոշություններ: Դրանց ռեսուրսային, ներդրումային, առևտրային փոխհատուցման և այլ ռիսկերը հիմնականում պայմանավորված են ԱՄՆ-ի սահմանած պատժամիջոցներով¹²⁸: Պատահական չէ, որ հենց նմանատիպ բարդ և ճգնաժամային իրավիճակներում են հայտնվել «Հյուսիսային հոսք», «Հյուսիսային հոսք-2», «Կապույտ հոսք», «Թուրքական հոսք», «Սիբիրի ուժը» և այլ գազատարներ (ՊԱՕ «Դաշնոմ» 2019): ՌԴ միջազգային հեղինակության ու վարկի բարձրացմանն էին ուղղված այնպիսի միջոցառումներ, որոնցից էին 2018 թ. ֆուտբոլի աշխարհի առաջնությունը և 2019 թ.

¹²⁷ Տվյալների աղբյուրը՝ Համաշխարհային բանկի պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/BX.KLT.DINV.WD.GD.ZS?locations=RU> (28.06.2019):

¹²⁸ St'u Public Law No: 115-44 (08/02/2017), H.R.3364 - Countering America's Adversaries Through Sanctions Act // <https://www.congress.gov/bill/115th-congress/house-bill/3364/text> (24.06.2019):

համաշխարհային ձմեռային 29-րդ ունիվերսիադան և այլն: Այս առումով ՌԴ տնտեսությունը ստանում է ծախսերի եւ ռիսկերի լրացուցիչ ծանրաբեռնվածություն, որոնք կարող են հետագայում ավելանալ, եթե երկիրը ներքաշվի ԱՄՆ-ի հետ աշխարհաքաղաքական լիարժեք մրցակցության մեջ: Հատկապես, եթե Սիրիայում Ռուսաստանի և շահագրգիռ մյուս կողմերի միջև հակամարտությունը խորանա, Իրանի և Հյուսիսային Կորեայի միջուկային ու հրթիռային ծրագրերի շուրջ իրավիճակի լարվածությունն աճի, կամ էլ ԱՄՆ-Չինաստան տնտեսական շահերը բախվեն, ապա ԱՄՆ-ՌԴ հարաբերությունները կարող են էլ ավելի լարվել: Աշխարհաքաղաքական և կառուցվածքային գործոնների շարքում ՌԴ տնտեսական զարգացումը հայտնվել է արտաքին ցնցումների ազդեցության տակ, որոնք առավել զգալի են դարձել 2014 թվականից (*Medvedev 2016, 5-30, Medvedev 2018, 5-28*): Դրանք հիմնականում ներառում են ֆինանսական և տեխնոլոգիական բնույթի պատժամիջոցները, որոնք բացասաբար են ազդում նավթի, գազի և ռուսական արտահանման այլ ապրանքների գների դինամիկայի վրա: Այս պայմաններում ՌԴ աշխարհաքաղաքական հավակնությունների համաչափությունը տնտեսության ռեսուրսային պոտենցիալին կարևոր նախապայման է, որը բացառում է ինչպես ռեսուրսային խուսանավման հնարավորությունը, այնպես էլ փակուղային իրավիճակներից դուրս գալու ելքը հատկապես արտաքին տնտեսական հերթական ցնցումների պայմաններում (*Аганбегян 2017, 8-29, Аганбегян 2018, 7-26*): Համաշխարհային ՀՆԱ-ում ՌԴ մասնաբաժնի ավելացման առաջնահերթությունը երկարատև գործընթաց է, որին հասնելու համար երկրի քաղաքական ընտրանուց պահանջվում է զգալի ջանքեր¹²⁹:

¹²⁹ Ст'у Указ Президента РФ от 07.05.2018 № 204 “О национальных целях и стратегических задачах развития Российской Федерации на период до 2024 года” // <http://kremlin.ru/events/president/news/57425> (24.06.2019):

5.3 Ժողովրդավարական փոխակերպումների սոցիալական չափումները


ՌԴ ժողովրդավարական փոխակերպումների պայմաններում սոցիալական քաղաքականության առանցքը հասարակության անդամների կյանքի որակի և նրանց կենսագործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծումն ու պահպանումն է: Երկրի քաղաքական վարչակարգի ժողովրդավարացման նախադրյալները ստանում են սոցիալական նշանակություն, եթե դրանք ուղղված են սոցիալական պաշտպանության և անվտանգության բարելավմանը՝ դառնալով մարդակենտրոն քաղաքականության իրականացման միջոց:

ՌԴ-ում ժողովրդավարության կայացման սոցիալական նախադրյալների առումով զգալի է «միջին» խավի, փոքր և միջին սեփականատերերի դասի դերը, որովհետև նրանք սոցիալապես շահագրգռված են ազատակալության և ժողովրդավարության հարցում: Քանզի նրանք իրենց ազատությունների և իրավունքների պաշտպանությունը դիտարկում են ոչ միայն որպես քաղաքական մասնակցության եղանակ, այլև հանրային բյուրոկրատիայի միջամտությունից իրենց շահերի պաշտպանության արդյունավետ և գործնական միջոց: Այս նոր քաղաքակիրթ սեփականատերերի դասի ձևավորումն իրականում կարող է երաշխավորել ՌԴ-ում ժողովրդավարական փոխակերպումների առաջընթացը: Դատելով մեկ շնչի հաշվով եկամուտների աճի միտումներից՝ այս դասը երկրում արդեն ակտիվորեն ձևավորվում է: Սակայն դժվար է կանխատեսել, թե երբ այն կունենա ինքնուրույնություն, համընդհանուր քաղաքական կամք կամ այն, ինչ կոչվում է «հարկատուների ժողովրդավարություն»:

Դիտարկվող ժամանակահատվածում ՌԴ ԺՄԻ-ի սոցիալական գործոնների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2016-2018 թթ.-ին սոցիալական հիմնական ցուցանիշները բարելավվել են, բայց դեռևս շարունակել են մնալ ցածր մակարդակի վրա (տե՛ս Գծապատկեր 5, Աղյուսակ 1):

Գծապատկեր 5

ՌԴ Սոցիալական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)*



Գծապատկեր 5-ում երևում է, որ այդ տարիներին ժողովրդավարական փոխակերպումների սոցիալական նախադրյալների վրա դրական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են եղել մարդկանց սոցիալաշխատանքային հիմնախնդիրների լուծմամբ՝ իրական աշխատավարձի և զբաղվածության մակարդակի բարձրացմամբ: Այս առումով կարևորվում են դաշնային և տարածքային իշխանությունների կատարած աշխատանքը՝ սոցիալական պաշտպանության, սոցիալաշխատանքային ռիսկերի նվազեցումն ու դրանց արդյունավետ կառավարումը: Ընդ որում, ՌԴ-ում սոցիալական քաղաքականությունն իրականացվում է բնակչության եկամուտների ինդեքսավորման, նվազագույն սոցիալական երաշխիքների ապահովման (ըստ եկամուտների), պետական չափորոշիչների և կանոնակարգերի կարգավորման միջոցով՝ տրամադրելով նպաստ առանձին կատեգորիաների քաղաքացիներին: Մարդասիրական նշանակություն ունի նաև պարտադիր սոցիալական ապահովագրության, սոցիալական ապահովության և սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրումն առանձին կատեգորիաների համար:

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

5. Ռուսաստանի դաշնության ժողովրդավարական փոխակերպումները համաշխարհային մրցունակության և պատժամիջոցների պայմաններում

րիաների այն քաղաքացիներին, որոնք զուրկ են կենցաղային տարրական պայմաններից:


2000-2018 թթ. ՌԴ ԺՄԻ-ի սոցիալական գործոնների ինդեքսի (Ս_{ԳԻ}) գրանցած ամենաբարձր արժեքը 2013 թ.-ին էր: Չնայած 2017 թ. Ս_{ԳԻ}-ի ցուցանիշը 2015-2016 թթ. համեմատ աճել է, սակայն այն շարունակել է ցածր մնալ 2011-2014 թթ. համեմատ (տե՛ս Գծապատկեր 5, Աղյուսակ 1):

ՌԴ սոցիալական քաղաքականությունը հիմնված է իրավական մի շարք ակտերի վրա, որոնք կարգավորում են այս ոլորտում տարբեր սուբյեկտների գործունեությունը՝ հնարավորություն տալով նրանց գիտակցելու իրավունքներն ու պարտականությունները, ազատություններն ու պատասխանատվությունը: Դրանցից են, ի մասնավորի, ՌԴ Սահմանադրությունը, ընտանեկան, աշխատանքային և քաղաքացիական օրենսգրքերը, Դաշնային օրենքները և այլն: Ինչ վերաբերում է սոցիալական ոլորտում երկրի կառավարության լիազորություններին¹³⁰, ապա պետք է ուշադրություն դարձնել հետևյալ հիմնական սկզբունքներին և պարտականություններին.

1) Կառավարությունը երաշխավորում է պետական միասնական քաղաքականության իրականացումը: Այն նաև երաշխավորում է քաղաքացիների սոցիալական ապահովության, սոցիալական ապահովագրության, ծանր վիճակում գտնվող քաղաքացիների աջակցության սահմանադրական իրավունքները: 2) Կառավարությունը խթանում է բարեգործությունը երկրում, 3) Կառավարությունն ընդունում է կարևոր որոշումներ քաղաքացիների աշխատանքային իրավունքները պաշտպանելու հարցում, 4) Կառավարությունը զբաղվում է նոր ծրագրեր մշակմամբ կամ հին ծրագրերի կատարելագործմամբ՝ նվազեցնելու կամ ամբողջությամբ վերացնելու գործազրկությունը, 5) Կառավարությունն ապահովում է ծրագրերի իրականացումը, երաշխավորում է քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, իսկ անհրաժեշտության դեպքում նրանց սոցիալական պաշտպանվածությունը:

¹³⁰ Տե՛ս Конституция Российской Федерации // <http://constitution.kremlin.ru> (24.06.2019):

Գծապատկեր 6
Ռ-Դ շրջաններում բողոքի գործողությունների վարկանիշը (2019 թ. հունվար)
(AHO IPՅ 2019)



Տարածաշրջանային հետազոտությունների ինստիտուտի տվյալներով¹³¹ 2019 թ. հունվարին Ռ-Դ սուբյեկտներում գրանցվել է բողոքի գործողությունների և հանրահավաքների չորս մակարդակ՝ բարձր, նկատելի, չափավոր և ցածր (տե՛ս Գծապատկեր 6): Տեղին է նշել՝ հավաքների և բողոքի գործողությունների ճնշող մեծամասնությունը՝ շուրջ 74%-ը, պայմանավորված է եղել սոցիալ-տնտեսական տարբեր դժվարություններով. նման կերպ փորձել են հանրային դժգոհություն առաջացնել դաշնային և տեղական մակարդակներում մշակվող և իրականացվող սոցիալական քաղաքականության շուրջ (ԱՅՊՐ 2018): Հասկանալի պատճառներով բողոքի ցույցերի շուրջ 65%-ն անցկացվել է մայրաքաղաքում, խոշոր քաղաքներում և Ռ-Դ սուբյեկտների վարչական կենտրոններում (ԱՅՊՐ 2018): Ակնհայտ է, որ յուրաքանչյուր բողոք և դժգոհության ակիբ ուղղված է դաշնային և տեղական իշխանությունների դեմ: Եթե սոցիալական երկխոսության և գործընկերության ձևաչափով

¹³¹ Ավելի մանրամասն տե՛ս Տարածաշրջանային հետազոտությունների ինստիտուտի պաշտոնական կայք՝ <http://irex.group/analytics> (24.06.2019):

5. Ռուսաստանի դաշնության ժողովրդավարական փոխակերպումները համաշխարհային մրցունակության և պատժամիջոցների պայմաններում

չի կարգավորվում հիմնախնդիրը, ապա բողոքի ցույցերը դառնում են շարունակական, և որպես կանոն արհմիություններն այն քաղաքականացնում են՝ առաջադրելով ընդդիմադիր կարգախոսներ:

Սոցիալ-տնտեսական և սոցիալ-աշխատանքային բողոքի ցույցերի և գործադուլների կարևոր առանձնահատկությունը դրանց տեղային բնույթն էր: Բայց և այնպես արհմիությունները փորձում էին ձևավորել սոցիալական բողոքների և գործադուլների համակարգման ընդհանուր կենտրոններ: Դրանցում ներառված էին այնպիսի սոցիալական հարցեր, որոնք վերաբերում էին իրական աշխատավարձերի բարձրացմանը, քաղաքացիներին մատչելի և հարմարավետ բնակարաններով ապահովելուն, բնակարանային և կոմունալ ծառայությունների որակի բարելավմանը, երկարաժամկետ սոցիալական ապահովության քաղաքականության իրականացմանը և այլն: Այդ առումով ՌԴ ԺՄԻ-ի սոցիալական գործոններն ունեն ռազմավարական նշանակություն, որովհետև սոցիալական անվտանգությունը մարդու սոցիալական իրավունքների և ազատությունների պաշտպանության տարրերից է: Այն ժողովրդավարության ընթացակարգերի, սոցիալական ՀԿ-ների, ընկերակցությունների և արհմիությունների արդյունավետ մասնակցության միջոցով ազդում է անհատների, ընտանիքների, համայնքների, սոցիալական խմբերի և խավերի կարգավիճակի բարելավման վրա: Ակնհայտ է, որ սոցիալական զարգացման քաղաքականությունը ՌԴ-ում ժողովրդավարական առաջընթացի գործոն է: Երբ ժողովրդավարական փոխակերպումները չեն ուղեկցվում հասարակության սոցիալական բարեկեցության և երկրի տնտեսական աճով, ապա նվազում են հասարակության անդամների սոցիալ-տնտեսական մասնակցության շարժիչ ուժերն ու դրդապատճառները (*Шестопал, Смулькина 2018, 26-44, Шестопал 2019, 9-20*):


Գծապատկեր 7-ից երևում է, որ 2016-2018 թթ. ժամանակահատվածում ՌԴ-ում աշխատուժի թվաքանակը կտրուկ նվազել է նախորդ տարիների համեմատ: Եթե 2016 թ.-ին աշխատուժը եղել է 75 մլն 36 հազար 834 մարդ, ապա 2018 թ.-ին՝ 73 մլն 613 հազար 697 մարդ¹³²: Դա ցույց է տալիս, որ ՌԴ-ում աշխատանքային տարիքի բնակչության թիվը նվազել է՝ ազդելով աշխատանքային լարվածության մակարդակի վրա: Մինչույն ժամանակ

¹³² Տե՛ս նույն տեղում:

գործազրկությունը 2018 թ.-ին կազմել է 4,7%, որն ամենացածր ցուցանիշն է նույնիսկ 1991-2018 թթ. ժամանակահատվածում¹³³:

Գծապատկեր 7

Աշխատուժը ՌԴ-ում (2016-2018 թթ.)¹³⁴



2016-2018 թթ. ժամանակահատվածում ՌԴ սոցիալական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում առկա են տարբեր մոդելների տարրեր, որոնք որոշակի դժվարություններ են առաջացնում երկրի արդյունավետ կառավարման առումով: Մասնավորապես, ՌԴ սոցիալական քաղաքականությանը միաժամանակ բնորոշ են դարձել *պատերնալիստական, ազատական, սոցիալ-դեմոկրատական, պահպանողական* և այլ մոդելներին բնորոշ գծեր: Այսպես, մի կողմից, ՌԴ սոցիալական քաղաքականության *պատերնալիստական մոդելի* դրսևորման օրինակ է, երբ պետությունը պատասխանատու է քաղաքացիների սոցիալ-տնտեսական վիճակի և նրանց սոցիալական ապահովության համար: Այս պարագայում ձևավորվում է պետությունից քաղաքացիների կախվածության բարձր մակարդակ,

¹³³ Տվյալների աղբյուրը՝ Համաշխարհային բանկի պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.ZS?locations=RU> (28.06.2019):

¹³⁴ Տվյալների աղբյուրը՝ Համաշխարհային բանկի պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/SL.TLF.TOTL.IN?locations=RU> (28.06.2019):

5. Ռուսաստանի դաշնության ժողովրդավարական փոխակերպումները համաշխարհային մրցունակության և պատժամիջոցների պայմաններում

և դա այն դեպքում, երբ պետությունը ի վիճակի չէ մշտապես ապահովել նրանց բոլորի բարեկեցության մակարդակը: Մյուս կողմից, սոցիալական քաղաքականության մեջ ամրագրվում են *ազատական մոդելին* բնորոշ ընթացակարգեր, երբ պատասխանատվությունը դրվում է հասարակության յուրաքանչյուր անդամի վրա: Այս պարագայում կարևորվում են քաղաքացիների սոցիալ-տնտեսական ինքնազարգացումն ու պետության անկախությունը: Մեկ այլ դեպքում, կիրառում է սոցիալական քաղաքականության *սոցիալ-դեմոկրատական մոդելը*, երբ սոցիալական ապահովությունը քաղաքացու իրավունքն է՝ երաշխավորված պետության և նրա գործակալությունների կողմից: Ինչ վերաբերում է ֆինանսական բովանդակությանը, ապա այս դեպքում պահպանվում է աշխատուժի արտադրողականության բարձր մակարդակ սոցիալական երկխոսության և գործընկերային ընթացակարգերի միջոցով: Վերջերս սոցիալական քաղաքականությանը բնորոշ է դարձել նաև *պահպանողական մոդելի* տարրեր, որոնցում հատուկ ուշադրություն է դարձվում զբաղվածությանը, այլ ոչ թե սոցիալական նպաստների և ռեսուրսների վերաբաշխմանը: Այս դեպքում, բարձր և միջին աշխատավարձ ստացող աշխատողների համար արդյունքը կարող է ցանկալի լինել, իսկ մյուսները ստիպված են ապավինելու բարեգործական կազմակերպություններին և հանրային աջակցությանը:

Վերոհիշյալ մոտեցումների բախման օրինակ էր 2018 թ.-ին դաշնային կառավարության՝ ՌԴ Պետական դումա ներկայացրած կենսաթոշակային բարեփոխումների մասին օրինագիծը¹³⁵, որով նախատեսված էր երկրում կենսաթոշակային տարիքի շեմի բարձրացում և սոցիալական պատասխանատվության ընթացակարգերի վերանայում: Դաշնային կառավարության այս նախաձեռնությունը դարձավ քննադատությունների, քաղաքացիական անհնազանդությունների, զանգվածային դժգոհությունների և ցույցերի պատճառ: Դեռ ավելին՝ խորհրդարանական ընդդիմադիր կուսակցությունները սկսեցին քաղաքական գործընթաց, որով ցանկանում էին երկրի Սահմանադրական դատարանում վիճարկել կենսաթոշակային բարեփո-

¹³⁵ Ст'я Распоряжение от 16 июня 2018 года №1192-р. “О внесении в Госдуму законопроекта об изменениях в пенсионной системе” // <http://government.ru/activities/-selection/301/32902> (19.06.2019):

խումների նախագիծը (*Ведомости 2018, Федеральное агентство новостей 2018*): Ընդ որում, արհմիությունները, խորհրդարանական և արտախորհրդարանական ընդդիմադիր կուսակցությունները կենսաթոշակային փոփոխությունը համարում էին պետության սոցիալական բնույթին հակասող: Ռուսաստանի անկախ արհմիությունների դաշնությունը (ՌԱԱԴ), անցկացնելով հանդիպումներ, երթեր, ցույցեր և կոլեկտիվ այլ գործողություններ, երկրի կառավարությունից պահանջում էր այդ բարեփոխումները համապատասխանեցնել սոցիալական գործընկերության չափանիշներին (*Центральная профсоюзная газета «Солидарность» 2018a, 2018b, 2018c, 2018d, 2018e*): Եվ դա այն դեպքում, երբ դեռևս 2018 թ. հունվարի 29-ին ՌԱԱԴ-ի, գործատուների համառուսաստանյան միավորումների և ՌԴ կառավարության միջև ստորագրվել էր «2018-2020 թթ. գլխավոր համաձայնագիրը» (*ФНПР 2018*): Դրանով, ըստ էության, դաշնային մակարդակում սահմանվում էին սոցիալ-աշխատանքային և սոցիալ-տնտեսական հարաբերությունների կարգավորման սկզբունքները (*ФНПР 2018*): Դա էլ իր հերթին աշխատանքային ներուժի զարգացման միջոցով ապահովելու էր սոցիալական բարեկեցություն՝ ամրապնդելով «հասարակություն-բիզնես-պետություն» եռակողմ համագործակցությունը: Այսպիսով, նոր գլխավոր համաձայնագիրը դառնալու էր սոցիալական քաղաքականության սուբյեկտների շահերի հավասարակշռության միջոց և նրանց գործունեության առանցքը՝ պահանջելով բոլորից առաջնորդվել «աշխատող մարդը չպետք է աղքատ լինի» կարգախոսով:


5.4 Կրթության համակարգի միջազգայնացման միտումները

ՌԴ կրթական համակարգի ինտեգրումը և զարգացումը, կրթական տեխնոլոգիաները և միասնական գիտակրթական տարածքը սոցիալ-մշակութային որոշակի մթնոլորտ են ստեղծում կրթության նպատակների, բովանդակության և ձևերի շուրջ:

5. Ռուսաստանի դաշնության ժողովրդավարական փոխակերպումները համաշխարհային մրցունակության և պատժամիջոցների պայմաններում

Գծապատկեր 8-ից երևում է, որ դիտարկվող ժամանակահատվածում ՌԴ-ի ԺՄԻ-ի Կրթական գործոնների ինդեքսի կորը նվազել է նախորդ տարվա համեմատ: Դա պայմանավորված էր 2016-2018 թթ. կրթության ոլորտում պետության ծախսերի նվազմամբ¹³⁶: Սակայն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի Մարդկային զարգացման համաթվի 2018 թ. զեկույցի տվյալներով՝ ՌԴ-ն 189 երկրների վարկանիշային աղյուսակում զբաղեցրել է 49-րդ տեղը՝ գնահատվելով «շատ բարձր մակարդակ» ունեցող երկիր (*Human Development Report 2018*):

Գծապատկեր 8
ՌԴ Կրթական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)*



2016-2018 թթ. ՌԴ-ի ԿԳԻ-ի ցուցանիշների համար նշանակալի են եղել պետական կրթական քաղաքականության արդյունավետության բարձրացումը, որակյալ կրթության ապահովումը, արդյունքների և մրցունակության բարձրացումը, կրթության բովանդակության արդիականացումը, գիտակրթական համակարգի համապատասխանեցումը ժողովրդավարության և միջազգայնորեն ընդունված չափանիշներին: Այս հիմնախնդիրների լուծման

¹³⁶ Տվյալների աղբյուրը՝ Համաշխարհային բանկի պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/SE.XPD.TOTL.GD.ZS?locations=RU> (28.06.2019):

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

առումով կարևոր նշանակություն ունի «Կրթություն» ազգային ծրագիրը¹³⁷: Այն նպատակ ունի հասնելու հետևյալ նպատակներին՝ 1) ապահովել ռուսական կրթության համաշխարհային մրցունակությունը և տեղն աշխարհի 10 առաջատար երկրների շարքում՝ հանրակրթության որակի տեսանկյունից, 2) ՌԴ ժողովուրդների հոգևոր և բարոյական արժեքների, պատմական և ազգային-մշակութային ավանդույթների հիման վրա ներդաշնակորեն զարգացած և սոցիալապես պատասխանատու անձ դաստիարակել¹³⁸:

Գիտելիքի հասարակության դարաշրջանում Ռուսաստանը նույնպես բախվում է գիտակրթական համակարգի սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ մարտահրավերների:

Աղյուսակ 6

2014-2017 թթ. ՌԴ համախմբված բյուջեի կրթական ծախսերի կառուցվածքը¹³⁹

<i>SURH</i>	<i>2014</i>	<i>2015</i>	<i>2016</i>	<i>2017</i>
<i>ԿՐԹՈՒԹՅՈՒՆ</i>	<i>100</i>	<i>100</i>	<i>100</i>	<i>100</i>
Նախադպրոցական կրթություն	21,7	22,8	21,9	22,2
Հանրակրթություն	46,6	46,3	48,0	48,2
Միջին մասնագիտական կրթություն	6,6	6,5	6,4	6,3
Մասնագիտական պատրաստում, վերապատրաստում և որակավորման բարձրացում	0,7	0,6	0,7	0,7
Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն	17,1	17,0	16,3	15,6
Երիտասարդական քաղաքականություն և երեխաների առողջություն	2,0	1,9	2,1	2,1
Կիրառական գիտական հետազոտություններ կրթության բնագավառում	0,5	0,4	0,4	0,4
Կրթության բնագավառի այլ հարցեր	4,7	4,3	4,3	4,4

¹³⁷ Այդ մասին տե՛ս ՌԴ լուսավորության նախարարության պաշտոնական կայք՝ <https://edu.gov.ru/national-project> (19.06.2019):

¹³⁸ Տե՛ս նույն տեղում:

¹³⁹ Տվյալների աղբյուրը՝ ՌԴ դաշնային պետական վիճակագրական ծառայության պաշտոնական կայք՝ http://www.gks.ru/wps/wcm/connect/rosstat_main/rosstat/ru/statistics/finance/# (19.06.2019):

5. Ռուսաստանի դաշնության ժողովրդավարական փոխակերպումները համաշխարհային մրցունակության և պատժամիջոցների պայմաններում

Աղյուսակ 6-ից երևում է, որ 2014-2017 թթ. կրթության բյուջետային ծախսերի զգալի մասը հատկացվել է հանրակրթության (46-48%) և նախադպրոցական կրթության (21-22%) ոլորտներին: Ընդ որում, բացի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտի ծախսերից (17,1%-ից մինչև 15,6%-ի), դրանք համեմատաբար կայուն են եղել: Դա մասամբ պայմանավորված է բարձրագույն ուսումնական հաստատությունների համակարգային վերափոխումներով և դրանցում անվճար ուսուցման տեղերի կրճատմամբ (*Interfax.ru* 2019):

Դիտարկվող ժամանակահատվածում կրթության ոլորտում պետական քաղաքականություն իրականացնելու համար կարևոր նշանակություն են ունեցել կրթության զարգացման, ինտեգրման և արդյունավետ կառավարման գործիքակազմը, քանակական և որակական ցուցանիշների բարելավումը, կրթության ոլորտում ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը, կրթական համակարգի արդիականացման մշտադիտարկումը, սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների հիման վրա ստացված տեղեկատվության վերլուծությունը և այլն: Մասնավորապես, ՌԴ կառավարության «2018 թ.-ին կրթության ոլորտում պետական քաղաքականության իրականացման վերաբերյալ» զեկույցում ամրագրված է կրթական համակարգի արտահանման ներուժի զարգացման, ինչպես նաև կրթության գրավչության և մրցունակության բարձրացման միջոցով՝ արդյունավետորեն ինտեգրվելու համաշխարհային կրթական տարածքում (*Правительство РФ* 2019):

2016-2019 թթ. նախատեսված է իրականացնել դաշնային և տարածքային բարձրագույն ուսումնական հաստատությունների պետական աջակցության արդյունավետության գնահատման համալիր ծրագրեր (*Правительство РФ* 2019): Տեղին է նշել «5/100» ծրագրի մասին, որի շրջանակներում 2013-2018 թթ. հատկացված ֆինանսական միջոցների շնորհիվ զգալիորեն բարելավվել են երկրի դաշնային և ազգային հետազոտական համալսարանների մրցունակությունը աշխարհի առաջատար համալսարանների շարքում (*Правительство РФ* 2019): Այսպես 2018 թ. տվյալներով՝ ՌԴ 11 համալսարաններ ընդգրկվել են աշխարհի լավագույն 100 բուհերի ցանկում, իսկ 18-ը՝ աշխարհի լավագույն 200 բուհերի ինստիտուցիոնալ և այլ վարկա-


նիշներում (*Правительство РФ 2019*): Ընդ որում, հաշվի առնելով համալսարանների գիտակրթական և գիտահետազոտական ցանցային ներուժը, սահմանվել են արդիականացման և ինտեգրման պահանջներ, որոնց կատարման դեպքում հնարավոր կլինի ստանալ պետական աջակցության ծրագրեր և նախագծեր: Դրանցում անհրաժեշտ է ներգրավել նաև դաշնության սուբյեկտներին, տարածքային կառավարման և տեղական իշխանության մարմիններին:

5.5 Արդյունավետ առողջապահության համակարգի հանրային պատասխանատվությունը

ՌԴ-ում ժողովրդավարության կայացման առողջապահական նախադրյալների առումով կարևոր նշանակություն են ունեցել պետական քաղաքականության ակտիվացումը, բժշկական օգնության և սպասարկման մատչելիությունը, բժշկական ապահովագրության հասանելիությունը, կյանքի սպասվող տևողության կայուն աճը: Սակայն առայժմ քաղաքացիների առողջական վիճակի և առողջապահական անվտանգության հիմնական ցուցանիշներով Ռուսաստանը զիջում է զարգացած երկրներին: Դեռ ավելին. քաղաքացիներն առողջապահությունը համարում են պետական աջակցության և ներդրումների առավել ակնկալվող ուղղություն: Վերջին տարիներին դաշնային և տարածքային իշխանությունները հետևողականորեն իրականացնում են կյանքի որակի բարելավմանը և մարդկային կապիտալի զարգացմանը միտված մի շարք ծրագրեր՝ խրախուսելով քաղաքացիների առողջ ապրելակերպը, առողջ սննդակարգը, զանգվածային ֆիզկուլտուրայի և սպորտի տարածումը:

Գծապատկեր 9-ից երևում է, որ 2000-2018 թթ. ՌԴ ԺՄԻ-ի Առողջապահական գործոնների ինդեքսի (Ա_{ԳԻ}) կորն ընդհանուր առմամբ աճել է. ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է 2018 թ.:

ՌԴ Առողջապահական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)^{*}



2016-2018 թթ. ՌԴ ԱԳԻ-ի ցուցանիշների համար նշանակալի են եղել առողջապահության ոլորտում ընթացիկ ծախսերի և կյանքի սպասվող տևողության ցուցանիշների բարելավումը (տե՛ս Գծապատկեր 9, Աղյուսակ 1): Ընդ որում, 2016-2018 թթ. ՌԴ ԱԳԻ-ի կյանքի սպասվող տևողության ցուցանիշները 1995-2018 թթ. ժամանակահատվածում ամենաբարձրն են: Դրան նպաստել են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, ինչպես նաև առողջ սննդակարգի մշակույթի խթանմանը միտված պետական քաղաքականության ընթացակարգերը¹⁴⁰: Թերևս իրականացվող միջոցառումների շրջանակներում առանձնահատուկ դեր ունի «Պատրաստ աշխատանքի և պաշտպանության» համառուսաստանյան ֆիզիկական կուլտուրայի և սպորտի համալիրի փուլային ներդրումը (ԴՏՕ 2019):

^{*} Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

¹⁴⁰ Տե՛ս ՌԴ կառավարության պաշտոնական կայք՝ <http://government.ru/docs/5599> (20.06.2019), ՌԴ սպորտի նախարարության պաշտոնական կայք՝ <https://www.min-sport.gov.ru/activities/federal-programs/2/26363> (20.06.2019):

Դիտարկվող ժամանակահատվածում առողջապահության ոլորտում պետական քաղաքականությունն ուղղված է եղել արդյունավետ առողջապահության համակարգի արդիականացմանը, առողջապահական կրթության որակի բարձրացմանը, հիվանդությունների կանխարգելմանը, բժշկական օգնության և սպասարկման ենթակառուցվածքների զարգացմանը, առողջապահության ոլորտում հետազոտությունների ընդլայնմանը, բժշկական և դեղագործական գործունեության բարելավմանը, նյութատեխնիկական բազայի վերազինմանը, տեխնիկական հագեցվածությանը, բժշկական ապահովագրության համակարգի կայացմանը և այլն¹⁴¹: Այս առումով առանցքային նշանակություն է ունեցել բնակչության շրջանում ակոհոլային խմիչքների չարաշահման նվազեցման և ակոհոլիզմի կանխարգելման պետական քաղաքականության շրջանակներում ՔՀԿ-ների հետ աշխատանքները¹⁴²:

ՌԴ առողջապահության համակարգի արդիականացման շրջանակներում մարդասիրական նշանակություն են ունեցել պարտադիր առողջապահական ապահովագրության համակարգի բարեփոխումները: Դա հնարավորություն է կտա գրեթե բոլոր տեսակի բժշկական ծառայություններն աստիճանաբար ամբողջովին ֆինանսավորվի պարտադիր բժշկական ապահովագրության միջոցներից¹⁴³: Այդ նորացված համակարգը զգալիորեն նվազեցրեց ՌԴ տարբեր սուբյեկտներում և տարածքներում քաղաքացիների բժշկական օգնության տրամադրման անհամաչափությունը: Այս դեպքում հրատապ է դառնում առողջապահության ֆինանսավորման եղանակների բարեփոխումները՝ ապահովելու ֆինանսական աճող հոսքերի արդյունավետ օգտագործումը: Ըստ այդմ՝ բժշկական ծառայությունների ֆինանսավորման բաշխողական համակարգը փոխակերպվում է առողջության ապահովագրություն արդյունավետ համակարգի՝ առաջարկելով քաղաքա-

¹⁴¹ Տե՛ս ՌԴ առողջապահության նախարարության պաշտոնական կայք՝ <https://www.rosminzdrav.ru/ministry/programms> (20.06.2019):

¹⁴² Տե՛ս ՌԴ ակոհոլային շուկայի կարգավորման դաշնային ծառայության պաշտոնական կայք՝ http://www.fsrar.ru/policy_of_sobriety/koncepcia (23.06.2019):

¹⁴³ Տե՛ս Պարտադիր բժշկական ապահովագրության դաշնային հիմնադրամի պաշտոնական կայք՝ <http://www.ffoms.ru> (23.06.2019):

ցիներին բժշկական օգնության ծառայությունների հնարավորինս լայն շրջանակ:

2016-2018 թթ. ՌԴ առողջապահության նախարարությունն իրականացրել է նպատակային ծրագրեր, որոնք վերաբերել են առողջապահության անվտանգությանը (առողջ ապրելակերպի, դեղերի, սանիտարահամաճարակային, սննդամթերքի, աշխատանքային, ճանապարհային երթևեկության), ՌԴ Հարավի, Հեռավոր Արևելքի և Անդրբայկալի սոցիալ-տնտեսական զարգացմանը և այլ բնագավառներին¹⁴⁴:

5.6 Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի զարգացման միտումները


Գծապատկեր 10-ում և 11-ում ներկայացված են 2000-2018 թթ. ՌԴ ժողովրդավարության մակարդակի ինդեքսի միտումները: ԺՄԻ-ն 2018 թ.-ին աճել է (0,440), սակայն ԺՄԻ-ի 2013 թ. ցուցանիշն ամենաբարձրն է 2000-2018 թթ. ժամանակահատվածում:

Գծապատկեր 11-ից երևում է, որ 2018 թ.-ին ԺՄԻ-ի կորի աճը հիմնականում պայմանավորված էր Ք_{ԳԻ}-ի, Տ_{ԳԻ}-ի, Կ_{ԳԻ}-ի և Ա_{ԳԻ}-ի ցուցանիշների բարելավմամբ: Չնայած 2018 թ. Ա_{ԳԻ}-ի ցուցանիշը նվազել է, այնուամենայնիվ այն վերջին տարիներին որոշակիորեն կայունացել է (տե՛ս Գծապատկեր 10, 11):

¹⁴⁴ Տե՛ս ՌԴ առողջապահության նախարարության պաշտոնական կայք՝ <https://www.rosminzdrav.ru/ministry/programms/ftcp> (26.06.2019):

Գծապատկեր 10

ՌԴ ժողովրդավարության վրա ազդող Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական, Կրթական և Առողջապահական գործոնների ինդեքսները (2000-2018 թթ.)*



Դիտարկվող ժամանակաշրջանում ՌԴ-ում ժողովրդավարական բարեփոխումները հիմնականում ներառել են շարունակական սոցիալ-տնտեսական աճի, գիտության և նորարարական տեխնոլոգիաների զարգացման¹⁴⁵, տեղեկատվական և հեռահաղորդակցային ենթակառուցվածքների արդիականացման, միջազգային համագործակցության, համաշխարհային շուկայում երկրի մրցունակության, պատասխան պատժամիջոցների կիրառման, ռազմաքաղաքական անվտանգության ապահովման, պետական սահ-

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

ԺՄԻ-ի գործոնների ինդեքսները համեմատելի են միայն ըստ միտումների:


¹⁴⁵ Տե՛ս Указ Президента РФ от 01.12.2016 г. №642 “О Стратегии научно-технологического развития Российской Федерации” // <http://kremlin.ru/acts/bank/41449> (12.06.2019):

5. Ռուսաստանի դաշնության ժողովրդավարական փոխակերպումները համաշխարհային մրցունակության և պատժամիջոցների պայմաններում

մանի պաշտպանության և այլ առաջնահերթությունները¹⁴⁶: Այս համատեքստում ռազմաքաղաքական կարևոր նշանակություն ունեցավ 2016 թ. վերջից ՌԴ և Թուրքիայի միջև բարիդրացիական հարաբերությունների վերականգնումը, որի շնորհիվ համագործակցության դաշտ ստեղծվեց նաև Սիրիայում ռազմական գործողություններ համատեղ վարելու և առկա խնդիրները լուծելու հարցերում (ՄՕ ՔՓ 2017):

Գծապատկեր 11

ՌԴ ժողովրդավարության մակարդակի ինդեքսը (2000-2018 թթ.)**



Փոխակերպվող աշխարհակարգի պայմաններում ՌԴ արտաքին քաղաքականությանը բնորոշ են եղել բազմակողմանիությունը, «փափուկ» ուժը, սպառնալիքների հավասարակշռությունը և շարժունակ (ճկուն) անվտանգությունը: Այս առումով ԱՄՆ-ՌԴ համաշխարհային և տարածաշրջանային նոր դիմակայությունը գործառում է «կրկնակի զսպման քաղաքականության» ռազմավարությամբ: Ըստ այդմ՝ ընթանում է երկկողմ և

¹⁴⁶ Տե՛ս Указ Президента РФ от 30.11.2016 г. № 640 “Об утверждении Концепции внешней политики Российской Федерации” // <http://kremlin.ru/acts/bank/41451/page/1> (12.06.2019):

** Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

բազմակողմ ձևաչափերով մրցակցություն՝ հանուն ազգային կենսական շահերի գերակայության: Սա թուլացնում է տարածաշրջանային մրցակիցներին՝ բացառելով դրանցից մեկի դիրքերի ամրապնդումը:

ՌԴ քաղաքական համակարգի փոխակերպումներում ԱՊՀ-ն, ՀԱՊԿ-ը և ԵԱՏՄ-ն առաջացրին մի շարք կառուցվածքային-գործառական հիմնախնդիրներ, որոնք պայմանավորված էին եվրասիական ինտեգրման ընթացակարգերով: Այն, որ Ռուսաստանն առավել, քան երբևէ կարևորվում է «հավասար գործընկերների փոխհամաձայնության» ձևաչափի պահպանումը ԱՊՀ-ում, ՀԱՊԿ-ում և ԵԱՏՄ-ում, բնականաբար միտված էր բոլորի շահերը հավասարակշռելու:

ՌԴ դեմ պատժամիջոցները ձևավորեցին աշխարհատնտեսական անբարենպաստ միջավայր՝ դառնալով աշխարհաքաղաքական իրավիճակի վատթարացման գլխավոր պատճառը: Այսպես, 2014 թ.-ից ի վեր ԱՄՆ-ն, Եվրամիությունը և մի շարք այլ արևմտյան երկրներ ՌԴ դեմ վարում են պատժամիջոցների և սահմանափակումների քաղաքականություն:

Աշխարհաքաղաքական նոր մարտահրավերների համատեքստում, երբ պատժամիջոցները բացասաբար են ազդում պետական բյուջեի միջոցների գոյացման աղբյուրների և երկրի տնտեսության հիմնական ճյուղերի վրա, ՌԴ-ն վերանայում է տնտեսական անվտանգության ռազմավարական մոտեցումները¹⁴⁷: Նա սկսել է ավելի մեծ ուշադրություն դարձնել Արկտիկային՝ որպես բնական պաշարների արդյունահանման և օգտագործման մեծ ներուժ ունեցող գոտի¹⁴⁸: Դա հնարավորություն է տալիս Ռուսաստանին ակտիվորեն համագործակցել Չինաստանի հետ, որը տարածաշրջանում ենթակառուցվածքների և ածխաջրածնային արտադրանքի զարգացմանն ուղղված նախագծերում հիմնական ներդրողն է:

¹⁴⁷ Ст'у Указ Президента РФ от 13.05.2017г. №208 “О Стратегии экономической безопасности Российской Федерации на период до 2030 года” // <http://kremlin.ru/acts/bank/41921> (12.06.2019):

¹⁴⁸ Ст'у Постановление от 31.08.2017г. №1064 “О новой редакции государственной программы “Социально-экономическое развитие Арктической зоны Российской Федерации” // <http://government.ru/docs/29164> (24.06.2019):

Դիտարկվող ժամանակաշրջանում ՌԴ քաղաքական համակարգի ժողովրդավարացման և ինտեգրման գործընթացները տարբեր կերպ են ազդել բազմազգ, բազմակրոն և բազմամշակութային ռուսական հասարակության վրա, ընդ որում ինչպես ներերկրային, այնպես էլ միջերկրային մակարդակներում: Այս առումով քաղաքական ժողովրդավարացումը պետք է համակցված լինի սոցիալական, տնտեսական և մշակութային ժողովրդավարացման հետ, որպեսզի ցիվիլիարխիկ դեր ունենա յուրաքանչյուր քաղաքացու և սոցիալական խմբի կյանքում: Ակնհայտ է, որ ժողովրդավարական փոխակերպումը վերաբերում է ոչ միայն ՌԴ քաղաքական համակարգի և վարչաձևի ժողովրդավարացմանն ու տնտեսության ազատականացմանը, այլև բոլորի և յուրաքանչյուրի կենսակերպին, ժողովրդավարական երկրի քաղաքացու ձևավորմանն ու կենսագործունեությանը (*Шестопал, Смутькина 2018, 26-44, Шестопал 2019, 9-20*):

ՌԴ բազմատարր հասարակության համար ժողովրդավարական նշանակություն ունեն քաղաքացիավարական բարեփոխումները, որոնք պետք է նպաստեն կառավարող ընտրանու քաղաքական մշակույթի զարգացմանը, ինչպես նաև ազգային-էթնիկական և կրոնական տարբերությունների ու քաղաքական ժողովրդավարության համատեղմանը (*Шестопал, Смутькина 2018, 26-44, Шестопал 2019, 9-20*): Քանզի դաշնային և տարածքային իշխանությունների կողմից ազգամիջյան համերաշխության և միջկրոնական երկխոսության պահպանումը կենսական նշանակություն ունի երկրի կայուն զարգացման համար:

5.7 Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի ռեգրեսիոն վերլուծությունը

Արուսյակ Ալեքսանյան, Աշոտ Ալեքսանյան

Ռեգրեսիոն վերլուծության միջոցով բացահայտվում են ՌԴ ժողովրդավարության մակարդակի վրա ազդող Քաղաքական, Տնտեսական, Սոցիա-

լական, Կրթական և Առողջապահական գործոնների ինդեքսների առավել նշանակալի փոփոխականները: Այս համատեքստում հստակեցվում են, թե այդ գործոններից որը և ինչ իրավիճակներում է առավել նշանակալի ՌԴ-ում ժողովրդավարական փոխակերպումների բնույթն ու արդյունքները բացատրելու համար:

Ռեգրեսիոն վերլուծությամբ ստացված տվյալների համաձայն՝ նշանակալի կապ է հաստատվել ԺՄԻ-ի* և քաղաքական, ինչպես նաև տնտեսական, սոցիալական, կրթական և առողջապահական մի շարք փոփոխականների միջև:

Ըստ տվյալների վերլուծության արդյունքների՝ մոդելում ընդգրկված քաղաքական ցուցանիշներից նշանակալի կապ է հաստատվել ԺՄԻ-ի և «Քաղաքական կայունության/բռնության բացակայության», ինչպես նաև «սոցիալական անհանգստություններ և քաղաքական ճնշումներ» փոփոխականների միջև (տե՛ս Աղյուսակ 7):

Աղյուսակ 7

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (Ք_{գր}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R²	Sig.	N
Քաղաքական կայունության/ բռնության բացակայություն	0,006	0,362	0,001	24
Սոցիալական անհանգստություններ և քաղաքական ճնշումներ	-0,088	0,312	0,003	24

Ըստ չափումների՝ մոդելում ընդգրկված տնտեսական ցուցանիշներից նշանակալի կապ է հաստատվել ԺՄԻ-ի և «համախառն ազգային արդյունքը», ինչպես նաև «առևտրաշրջանառության ծավալը» փոփոխականների միջև (տե՛ս Աղյուսակ 8):

* ԺՄԻ-ն ժողովրդավարության մակարդակի ինդեքսն է, որից դուրս է բերվում համապատասխան անկախ փոփոխականը յուրաքանչյուր զույգային ռեգրեսիոն վերլուծության ժամանակ:

Աղյուսակ 8

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (S_{գր}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Համախառն ազգային արդյունքը մեկ շնչի հաշվով (1000 ԱՄՆ դոլար)	0,006	0,562	0,000	24
Առևտրաշրջանառության ծավալ (ՀՆԱ%)	-0,005	0,428	0,000	24

Կարևորելով ժողովրդավարական ընթացակարգերի դերը ՌԴ-ում սոցիալական արդարության, համերաշխության և անվտանգության ապահովման գործընթացում՝ մոդելում ընդգրկված սոցիալական ցուցանիշներից նշանակալի կապ է հաստատվել ԺՄԻ-ի և «իրական աշխատավարձի» (100 ԱՄՆ դոլար) ու «գործազրկության մակարդակի» միջև (տե՛ս Աղյուսակ 9):

Աղյուսակ 9

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (U_{գր}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Իրական աշխատավարձ (100 ԱՄՆ դոլար)	0,662	0,662	0,000	24
Գործազրկության մակարդակ (%)	-0,014	0,588	0,000	24

Դիտարկելով ՌԴ-ում ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների կրթության խթանման նախադրյալները՝ պարզ է դառնում, որ մոդելում ընդգրկված կրթական ցուցանիշներից նշանակալի կապ է հաստատվել ԺՄԻ-ի և «Մարդկային զարգացման համաթվի կրթության բաղադրիչը», ինչպես նաև «պետության ծախսերը կրթության ոլորտում» փոփոխականների միջև (տե՛ս Աղյուսակ 10):

Աղյուսակ 10

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (Կ_{գր}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Մարդկային զարգացման համաթվի կրթության բաղադրիչ	0,697	0,718	0,000	24
Պետության ծախսերը կրթության ոլորտում (ՀՆԱ%)	0,067	0,623	0,000	24

Մոդելում ընդգրկված առողջապահական ցուցանիշներից նշանակալի կապ է հաստատվել ԺՄԻ-ի և «կյանքի սպասվող տևողություն» փոփոխականի միջև (տե՛ս Աղյուսակ 11):

Աղյուսակ 11

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (Ագր-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Կյանքի սպասվող տևողություն	0,009	0,520	0,000	24

Ինչպես արդեն նշեցինք, Ռուսաստանի ԺՄԻ-ի վրա նշանակալի ազդեցություն ունեն «Քաղաքական կայունության/բռնության բացակայության» և «սոցիալական անհանգստություններ և քաղաքական ճնշումներ» փոփոխականները: «Քաղաքական կայունության/բռնության բացակայության» անկախ փոփոխականի աճը 1 միավորով կհանգեցնի ԺՄԻ-ի աճի 0,006 միավորով: Մինևույն ժամանակ, «սոցիալական անհանգստություններ և քաղաքական ճնշումների» անկախ փոփոխականի աճը 1 միավորով կհանգեցնի ԺՄԻ-ի կրճատման 0,088 միավորով (տե՛ս Աղյուսակ 7):

Տնտեսական ցուցանիշներից մեկ շնչի հաշվով ՀԱԱ-ի աճը 1000 ԱՄՆ դոլարով կհանգեցնի ԺՄԻ-ի աճի՝ 0,006 միավորով: Տեղին է նշել, որ պատժամիջոցները տնտեսական զգալի վնաս հասցրին երկրի ՀԱԱ-ին, ինչպես նաև արտաքին առևտրին, մրցունակությանն ու ներդրումային գրավչությանը: Այս առումով առևտրաշրջանառության ծավալի կրճատումը 1%-ով կհանգեցնի ԺՄԻ-ի նվազման՝ 0,005 միավորով (տե՛ս Աղյուսակ 8): ՌԴ արտաքին առևտրաշրջանառության հաշվեկշռի բացասական կապը ԺՄԻ-ի հետ հիմնականում պայմանավորված է ՌԴ դեմ ԱՄՆ, ԵՄ և մի շարք այլ երկրների սահմանափակումներով և պատժամիջոցներով, որոնք բացասական ազդեցություն ունեցան ՌԴ տնտեսական ինտեգրման, ռուսաստանյան շուկայի և արտադրության ընդլայնման հեռանկարների վրա: Առևտրաշրջանառության ծավալի կրճատումը բացահայտում է միջպետական հարաբերություններում պատժամիջոցների փոխադարձ կիրառման ազդեցության երկակիությունը և տնտեսական աճի զսպման գործիքները:

5. Ռուսաստանի դաշնության ժողովրդավարական փոխակերպումները համաշխարհային մրցունակության և պատժամիջոցների պայմաններում

Ռուսաստանի ԺՄԻ-ի սոցիալական գործոններից ժողովրդավարության վրա նշանակալիորեն ազդում են «իրական աշխատավարձը» և «գործազրկության մակարդակը»: Իրական աշխատավարձի բարձրացումը 100 ԱՄՆ դոլարով և գործազրկության կրճատումը 1%-ով կհանգեցնեն ԺՄԻ-ի աճի՝ համապատասխանաբար 0,01 և 0,014 միավորներով (տե՛ս Աղյուսակ 9): Ուշագրավ է երկրի իրական աշխատավարձի և իրական եկամուտների բազմաբնույթ դինամիկան, երբ աշխատավարձը բարձրանում է, իսկ իրական եկամուտները նվազում են: Ինչ վերաբերում է գործազրկությանը, ապա այն հիմնականում պայմանավորված է աշխատանքի գնի տատանումներով, աշխատաշուկայի հարմարվողականությամբ և տնտեսական իրավիճակի փոփոխություններով: Այս իրավիճակում ապահովվում է զբաղվածության բարձր և կայուն մակարդակ, սակայն նկատելի են աշխատավարձերի կտրուկ տատանումներ:

Ռուսաստանի ԺՄԻ-ի կրթական գործոններից ժողովրդավարության վրա նշանակալիորեն ազդում են «Մարդկային զարգացման համաթվի կրթության բաղադրիչը» և «պետության ծախսերը կրթության ոլորտում» փոփոխականները: Ընդ որում, Մարդկային զարգացման համաթվի կրթության բաղադրիչի փոփոխությունը 0,1 միավորով կհանգեցնի ԺՄԻ-ի աճի՝ 0,07 միավորով: Իսկ կրթության ոլորտում պետության ծախսերի ավելացումը ՀՆԱ-ի 1%-ով կհանգեցնի ԺՄԻ-ի աճի՝ 0,067 միավորով (տե՛ս Աղյուսակ 10): Կրթական քաղաքականության արդյունավետության բարձրացումը հիմնականում պայմանավորված է կրթության որակի և հասանելիության և մասնագիտացման մի շարք այլ հիմնախնդիրներով: Պետության ծախսերի ավելացումը կրթության ոլորտում նպաստում է երկրի քաղաքական, տնտեսական և սոցիալ-մշակութային առաջընթացին, մարդկային կապիտալի զարգացմանը, բարձրացնում քաղաքացիական մշակույթը և գիտակցությունը: Կարևոր է, որ կրթական քաղաքականությունն իրականացնելիս դաշնային և տարածքային իշխանության մարմինները սերտորեն համագործակցեն: Քանզի գիտելիքի հասարակության պահանջներին համապատասխան կրթության ոլորտում պետական քաղաքականության ձևավորման գործընթացում կենսական նշանակություն ունեն ԲՀԿ-ների արդյունավետ մասնակցությունը:

Առողջապահական գործոններից կյանքի սպասվող տևողության դրական փոփոխությունը 1 տարով կհանգեցնի ԺՄԻ-ի աճի՝ 0,009 միավորով (տե՛ս Աղյուսակ 11): Այս առումով կարևոր նշանակություն ունեն մարդկային կապիտալի զարգացմանն ուղղված ռազմավարական մի շարք ծրագրերի իրականացումը, որոնք պետք է նպաստեն կյանքի սպասվող տևողության ավելացմանը:

Այսպիսով, ՌԴ ժողովրդավարության մակարդակի ռեգրեսիոն վերլուծությունը հնարավորություն է տալիս ստուգել ժողովրդավարության և ինստիտուտների որակի միջև կապը: Տեղին է նշել, որ ԺՄԻ-ի մեթոդաբանությամբ ստացված արդյունքները թույլ են տալիս խոսել ինստիտուտների որակի և ժողովրդավարության մակարդակի ցուցանիշների միջև չափազանց բարձր կապի մասին: Միևնույն ժամանակ, ՌԴ ԺՄԻ-ի փոփոխականների հաշվարկված արժեքները նպաստում են ընդունելու և իրականացնելու քաղաքացիամետ որոշումներ՝ հիմնվելով վերոհիշյալ գործոնների միջև առկա պատճառահետևանքային կապերի վրա:

Գրականության ցանկ

- **Freedom House** (2018a) “Freedom in the World 2018: Russia.” Accessed June 24, 2019. <https://freedomhouse.org/report/freedom-world/2018/russia>.
- **Freedom House** (2018b) “Nations in Transit 2018: Russia.” Accessed May 31, 2019. <https://freedomhouse.org/report/nations-transit/2018/russia>.
- **Freedom House** (2019) “Freedom in the World 2019: Russia.” Accessed June 24, 2019. <https://freedomhouse.org/report/freedom-world/2019/russia>.
- **Interfax.ru** (2019) “Количество бесплатных мест в российских вузах уменьшится на четверть.” Дата доступа: 24.07.2019. <https://www.interfax.ru/russia/666341>.
- **McFaul, Michael and Regine Spector** (2009) “External Sources and Consequences of Russia’s ‘Sovereign Democracy’.” In *New Challenges to Democratization*, ed. by Peter Burnell and Richard Youngs, 116-133. London: Routledge.
- **Mutschler, Max M. and Marius Bales** (2018) *Global Militarization Index 2018*. Bonn: BICC.
- **Smith, Mark A.** (2006) “Sovereign Democracy: the ideology of Yedinaya Rossiya.” *Conflict Studies Research Centre UK Defence Academy, Russian Series 6* (37) (August).

5. Ռուսաստանի դաշնության ժողովրդավարական փոխակերպումները համաշխարհային մրցունակության և պատժամիջոցների պայմաններում

- **UNDP** (2018) “Human development indices and indicators: 2018 statistical update.” Accessed June 24, 2019. http://hdr.undp.org/sites/default/files/2018_human_development_statistical_update.pdf.
- **USAID** (2018) “2017 Civil Society Organization Sustainability Index: For Central and Eastern Europe and Eurasia 21st edition - September 2018.” Washington, D.C.: USAID; FHI 360; ICNL.
- **World Economic Forum** (2016) “The Global Gender Gap Report 2016.” Accessed June 24, 2019. http://www3.weforum.org/docs/GGGR16/WEF_Global_Gender_Gap_Report_2016.pdf.
- **World Economic Forum** (2017) “The Global Gender Gap Report 2017.” Accessed June 24, 2019. http://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2017.pdf.
- **World Economic Forum** (2018) “The Global Gender Gap Report 2018.” Accessed June 24, 2019. http://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2018.pdf.
- **Авксентьев, Виктор А., Борис В. Аксюмов, Валерий А. Васильченко** (2017) “Идеологическая война против России: анализ идей внешних и внутренних акторов”. Политическая экспертиза: ПОЛИТЭКС 13 (3): 40-56.
- **Аганбегян, Абел Г.** (2017) “Какой комплексный план до 2025 года нужен России?” Экономическая политика 4: 8-29.
- **Аганбегян, Абел Г.** (2018) “На пути к цивилизованному рынку”. Вестник Института экономики РАН 1: 7-26.
- **АНО ИРЭ** (2019) “Рейтинг протестной активности регионов России”. Дата доступа: 16.04.2019. <http://irex.group/articles/reiting-protestnoi-aktivnosti-regionov>.
- **Ачкасов, Валерий А.** (2018) “Российская дилемма: империя или нация-государство?” Политическая экспертиза: ПОЛИТЭКС 14 (3): 19-29.
- **Баранов, Сергей В.** (2014) “Демократия безопасности: концептуальная модель”. Известия Иркутского государственного университета. Серия «Политология. Религиоведение» 8: 73-79.
- **Барсенков, Александр С.** (2017) “Интеграция России в мировое сообщество: основные этапы”. Геополитический журнал 1 (17): 54-67.
- **Ведомости** (2018) “Думская оппозиция оспорит пенсионную реформу в Конституционном суде”. Дата доступа: 13.07.2019. <https://www.vedomosti.ru/politics/articles/2018/12/07/788741-pensionnyu-reformu>.
- **Виноградов, Валерий Д., Сергей Д. Савин** (2010) “Демократизация в аспекте современных цивилизационных процессов”. Вестник Санкт-Петербургского университета. Серия 12. Психология. Социология. Педагогика 4: 254-259.
- **Григорьев, Леонид М., Виктория А. Павлюшина** (2017) “Социальное неравенство как проблема экономической стратегии России”. Мир новой экономики 3: 58-71.
- **ГТО** (2019) “Документы: Всероссийский физкультурно-спортивный комплекс «Готов к труду и обороне»”. Дата доступа: 24.07.2019. <https://www.gto.ru/document>.

- **Дука, Александр В., Андрей Ю. Швая** (2017) “Перераспределение власти и дефицит демократии”. Журнал социологии и социальной антропологии 20 (2): 203-211.
- **Камерон, Росс** (2017) “Российский средний класс: агент демократии или оплот консерватизма?” Политическая наука 1: 162-185.
- **КГИ** (2018) “Эксперты КГИ представили итоги мониторинга социально-экономической и политической напряженности регионов за 3 года”. Дата доступа: 21.06.2019. <https://komitetgi.ru/analytics/3493>.
- **Кирюхина, Людмила** (2018) “Перспективы развития электронной демократии в Российской Федерации”. Теория государства и права 3: 22-28.
- **Клямкин, Игорь М.** (2017) “Россия-Украина: хроника событий и тематический комментарий (2014-2017 гг.). Исторические контексты”. Политическая концептология: журнал междисциплинарных исследований 4: 163-230.
- **Колесников, Владимир А.** (2016) “Общественные интересы, средний класс и гражданское общество versus бюрократическое государство в России”. Вестник Евразийской академии административных наук 1 (34): 113-122.
- **Комарова, Валентина В.** (2016) “Идеи народовластия”. Lex Russica 3 (112): 69-81.
- **Кузнецова, Анна В.** (2016) “Справедливый миропорядок как необходимая институциональная среда для безопасности России в XXI веке”. Безопасность Евразии 2 (52): 345-374.
- **Кулик, Анатолий Н.** (2017a) “Политические реформы в либеральном модернизационном дискурсе современной России”. В сборнике: Роль экспертно-аналитических сообществ в формировании общественной повестки дня в современной России Сборник научных трудов. Сер. “Политология”: 12-31.
- **Кулик, Анатолий Н.** (2017b) “Политическое участие, демократия и популизм в цифровую эпоху”. Политическая экспертиза: ПОЛИТЭКС 13 (4): 4-22.
- **Кынев, Александр В.** (2017) “Качество региональных политических институтов: попытка измерения”. Политическая наука 4: 259-283.
- **Левашов, Виктор К.** (2016) “Диалектика и динамика гражданского общества и социального государства”. Вестник Российского гуманитарного научного фонда 2 (83): 79-98.
- **Лихачев, Василий Н.** (2017) “Электоральная дипломатия в современном мире”. Диалог: политика, право, экономика 3 (6): 37-50.
- **Лихачев, Василий Н.** (2018) “Актуальные тренды электоральной дипломатии”. Актуальные проблемы теории и практики конституционного судопроизводства 13: 5-16.
- **Медведев, Дмитрий А.** (2016) “Социально-экономическое развитие России: обретение новой динамики”. Вопросы экономики 10: 5-30.
- **Медведев, Дмитрий А.** (2018) “Россия-2024: Стратегия социально-экономического развития”. Вопросы экономики 10: 5-28.

5. Ռուսաստանի դաշնության ժողովրդավարական փոխակերպումները համաշխարհային մրցունակության և պատժամիջոցների պայմաններում

- **Медведев, Николай П.** (2016) “Политические конфликты и многопартийность.” Вопросы политологии 4 (24): 56-67.
- **Медушевский, Андрей Н.** (2018) “Конституционная ретрадиционализация в Восточной Европе и России”. Сравнительное конституционное обозрение 1 (122): 13-32.
- **Мельников, Илья А.** (2018) “Местное самоуправление: между гражданским обществом и государством”. Вестник ВИАЭСУ 3: 41-48.
- **МО РФ** (2017) “Начальник Главного оперативного управления Генштаба ВС РФ генерал-лейтенант Сергей Рудской провел брифинг для представителей СМИ”. Дата доступа: 21.06.2019. https://function.mil.ru/news_page/country/more.htm?id=12108689@egNews.
- **Никонов, Вячеслав А.** (2015) “Россия: вызов и возможность”. Геополитический журнал 1 (8): 2-41.
- **Охотский, Евгений В.** (2017) “Правящий режим Украины: политика национализма, декоммунизации и майданной демократии”. Публичное и частное право 4 (36): 160-175.
- **Паин, Эмиль А., Сергей Ю. Федюнин** (2018) “Проблемы гражданской нации в России и на Западе: общее и особенное”. Политическая концептология: журнал междисциплинарных исследований 1: 171-191.
- **ПАО «Газпром»** (2019) “Газопроводы”. Дата доступа: 25.06.2019. <https://www.gazprom.ru/projects/#pipeline>.
- **Петухов, Владимир В.** (2017) “Демократизация российского общества: возможна ли вторая попытка?” Полис. Политические исследования 5: 8-23.
- **Посадский, Александр В.** (2016) “Русский вопрос: Россия как нация и цивилизация в условиях идеологических вызовов современности”. Метопарадигма. Альманах: богословие, философия, естествознание 9: 89-141.
- **Потапов, Денис В.** (2018) “Трансформация политического режима России в концептах демократического транзита и в политической реальности”. Теории и проблемы политических исследований 7 (4): 27-49.
- **Поцелуев, Сергей П., Дж.А. Тимчук** (2018) “Многосоставные общества между государственной и общественной нацией”. Южно-российский журнал социальных наук 19 (3): 96-125.
- **Правительство РФ** (2019) “Доклад Правительства о реализации государственной политики в сфере образования за 2018 год”. Дата доступа: 24.07.2019. <http://government.ru/news/36939>.
- **Ратленд, Питер** (2016) “Постсоветские элиты России”. Полис. Политические исследования 3: 55-72.
- **Сафронов, Вячеслав В.** (2016) “Неудовлетворенность граждан демократией и протест: Россия в Европейском контексте”. Телескоп: журнал социологических и маркетинговых исследований 2: 27-37.

- **Севастьянов, Александр Н.** (2017) “«Российская нация»: реклама и суть”. Вопросы национализма 1 (29): 31-61.
- **Старостин, Александр М.** (2015) “Аннексионные и сецессионные конфликты в геополитическом контексте”. Гуманитарий Юга России 3: 76-80.
- **Старостин, Александр М., Анна В. Верещагина, Сергей И. Самыгин** (2016) “Политическая безопасность российского государства в свете переформатирования политического сознания россиян и кризиса демократического проекта”. Государственное и муниципальное управление. Ученые записки СКАГС 2: 150-155.
- **Старостин, Александр М., Сергей И. Самыгин, Анна В. Верещагина** (2015) “От национальной идентичности к военной и информационной безопасности: эволюция войны и многообразие ее форм в условиях духовной деволюции современного общества”. Государственное и муниципальное управление. Ученые записки СКАГС 4: 158-163.
- **Тасиц, Константин И.** (2017) “Западные гуманитарные фонды в Армении как инструмент «мягкой силы»”. Проблемы национальной стратегии 5 (44): 112-130.
- **Федеральная служба государственной статистики** (2016) “Финансы России. 2016: Стат. сб.”. Москва: Росстат.
- **Федеральная служба государственной статистики** (2017) “Финансы России. 2017: Крат. стат. сб.”. Москва: Росстат.
- **Федеральная служба государственной статистики** (2018) “Финансы России. 2018: Стат. сб.”. Москва: Росстат.
- **Федеральное агентство новостей** (2018) “Коммунисты не верят профсоюзам. КПРФ настаивает на проведении референдума вместо митингов”. Дата доступа: 13.07.2019. <https://riafan.ru/1074414-kommunisty-ne-veryat-profsoyuzam-kprf-nastaivaet-na-provedenii-referenduma-vmesto-mitingov>.
- **Федотова, Юлия Г.** (2017) “Участие граждан в обеспечении обороны страны и безопасности государства”. Lex Russica 7 (128): 63-77.
- **ФНПР** (2018) “Генеральное соглашение на 2018-2020 годы”. Дата доступа: 21.06.2019. <http://fnpr.ru/n/2/15/284/15202.html>.
- **Френкель, Александр, Борис Тихомиров, Яков Сергиенко, Антон Сурков** (2018) “Экономика России в 2017–2019 годах: предпосылки для прорыва пока не созданы”. Экономическая политика 13 (5): 24-49. DOI: 10.18288/1994-5124-2018-5-24-49.
- **Цветкова, Наталья А.** (2019) “Дискурс «цветных революций»”. Постсоветские исследования 2 (2): 940-950.
- **Центральная профсоюзная газета «Солидарность»** (2018а) “Шмаков рассказал журналистам почему нельзя повышать пенсионный возраст”. Дата доступа: 13.07.2019.

5. Ռուսաստանի դաշնության ժողովրդավարական փոխակերպումները համաշխարհային մրցունակության և պատժամիջոցների պայմաններում

https://www.solidarnost.org/news/Shmakov_rasskazal_zhurnalistam_pochemu_nel_zy_a_povyshat__pensionnyy_vozrast.html.

- **Центральная профсоюзная газета «Солидарность»** (2018b) “Война против пенсионеров: На кладбище будет попасть проще, чем выйти на пенсию”. Дата доступа: 13.07.2019. https://www.solidarnost.org/articles/Voyna_protiv_pensionerov.html.
- **Центральная профсоюзная газета «Солидарность»** (2018с) “12 доводов против: Системная аргументация для противников повышения пенсионного возраста”. Дата доступа: 13.07.2019. https://www.solidarnost.org/articles/12_dovodov_protiv.html.
- **Центральная профсоюзная газета «Солидарность»** (2018d) “Пособие для скептика: Профсоюзные аргументы к спору о повышении пенсионного возраста”. Дата доступа: 13.07.2019. https://www.solidarnost.org/articles/Posobie_dlya_skeptika.html.
- **Центральная профсоюзная газета «Солидарность»** (2018е) “Профсоюзная кампания против повышения пенсионного возраста!” Дата доступа: 13.07.2019. https://www.solidarnost.org/topics-1/Profsoyuznaya_kampaniya_protiv_povysheniya_pensionnogo_vozrasta_.html.
- **ЦЭПР** (2018) “Рост протестной активности в России. Результаты всероссийского мониторинга 2017-2018 гг.”. Дата доступа: 21.06.2019. <http://cepr-su/wp-content/uploads/2018/11/Протесты-в-РФ-всероссийский-мониторинг.pdf>.
- **Шестопал, Елена Б.** (2019) “Проект длиною в четверть века. Исследование образов власти и лидеров в постсоветской России (1993-2018)”. Полис. Политические исследования 1: 9-20. DOI: <https://doi.org/10.17976/jpps/2019.01.02>.
- **Шестопал, Елена Б., Наталья В. Смутькина** (2018) “Факторы восприятия постсоветских стран в современном обществе”. Полис. Политические исследования 1: 26-44. <https://doi.org/10.17976/jpps/2018.01.03>.
- **Шпагин, Сергей А.** (2018) “Стабильность и динамика партийной системы в России: новые возможности для изучения”. Каспийский регион: политика, экономика, культура 2 (55): 70-77.
- **Щипков, Александр В.** (2016) Либерализм и социал-консерватизм в современном идеологическом дискурсе: Диссертация на соискание ученой степени доктора политических наук. Москва: Моск. гос. ун-т им. М. В. Ломоносова.
- **Яковлев, Максим В.** (2016) Демократия как проблема политической мысли стран СНГ: теоретико-методологический анализ: Диссертация на соискание ученой степени доктора политических наук. Москва: Моск. гос. ун-т им. М. В. Ломоносова.

**6. ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ.
ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԽՈՍՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

2016-2018 թթ. Բելառուսում սկսված արդիականացման գործընթացները բացահայտեցին պետական կառավարման համակարգի մի շարք թերություններ՝ ցածր արդյունավետություն, կառավարող օղակների և հասարակության ստորին շերտերի մեկուսացվածության և ժողովրդավարական առաջնորդության ընթացակարգերի չկայացվածություն: Երկրի կառավարման համակարգի բարեփոխումները հիմնված էին ոչ այնքան պետական ապարատի արդյունավետության բարձրացման, իրավական մշակույթի ձևավորման, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) հետ երկխոսության և քաղաքացիական մասնակցության եղանակների խթանման, որքան կառավարչական գործունեության բյուրոկրատացման վրա՝ ի վնաս դրա բովանդակության: Մինչդեռ, ժամանակակից Բելառուսի քաղաքական համակարգի ժողովրդավարական փոխակերպումները հրատապ են դարձնում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտներում առկա համակարգային հակասությունների վերացումը, որոնք վերջին տարիներին ավելի են սրվել: Խոսքը հատկապես վերաբերում է կառավարչական գործունեության որակի և մակարդակի անհամապատասխանությանը XXI դարի մարտահրավերներին:

Բելառուսում առկա է պետական կառավարման համակարգի արդիականացման որոշակի «ալգորիթմ». երբ առաջին փուլում առանցքային են

**6. Բելառուսական պետականության արդիականացման հեռանկարները.
պետականաշինության և քաղաքացիական խոսույթի առանձնահատկությունները**

համարվում սահմանադրաիրավական ակտերն ու օրենսդրությունը: Այնուհետև կարևորվում է պետական կառավարման համակարգում անխափան գործող ինստիտուտների և կազմակերպությունների ստեղծումը: Դրանից հետո դրանք ակտիվորեն կներգրավվեն ամբողջ համակարգի ընդհանուր կատարողականը բարելավելու գործին՝ ընթացիկ խնդիրների վերլուծության և հանրային ծառայության «կատարյալ» մոդելի հիման վրա: Ակնհայտ է, որ բելառուսական պետականության ժամանակակից զարգացումները հիմնականում պայմանավորված են քաղաքացիական և ազգային ինքնության առանձնահատկություններով, Ռուսաստանի և Բելառուսի Միութենական պետության «դիալեկտիկական» միասնությամբ, եվրասիական և եվրաինտեգրման գործընթացներով (*Свиридов 2016, Наматбекова, Сергеев 2019, Абраменко 2017, Анохина 2018*): Վերջիններս ներառում են բելառուս ժողովրդի քաղաքակրթական հիմքերը, ազգային արժեքներն ու շահերը, ինչպես նաև դրանց բոլորի պաշտպանվածությունը:

Քաղաքակրթության զարգացման ներկա փուլը պահանջում է ուժեղ պետականություն, որում առանցքային կլինեն մարդու իրավունքները, ազատություններն ու շահերը: Այս առումով մտահոգիչ է, որ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությունը հասարակության կյանքի ոլորտներին շատ հաճախ դառնում է «միջամտություն»՝ հանգեցնելով մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության մակարդակի անկման: Նման երևույթները նվազագույնի հասցնելու նպատակով պետք է գործառնեն քաղաքացիավարական ինստիտուտներն ու ընթացակարգերը, որոնք կարող են գործընկերային եղանակով ապահովել պատշաճ կարգավորումը: Դրա իրականացնելու համար երկրի նախագահից և կառավարող ընտրանուց պահանջվում է ապահովել սահմանադրաիրավական այնպիսի միջավայր, որում հանրային իշխանության մարմիններն ունակ կլինեն ինքնուրույն որոշումներ կայացնելու, ապահովելու սոցիալ-տնտեսական զարգացման համապատասխան մակարդակ և ներհասարակական համերաշխություն ու կայունություն՝ թույլ չտալով կամ նվազագույնի հասցնելով էթնոազգային, էթնոկրոնական և այլ հակամարտությունները (*Dimitrova et al 2018, Moshes, Nizhnikov 2019, Беспалая 2018, Стризов 2016*): Վերոնշյալը պահանջում է պետության ակ-

տիվ մասնակցություն հասարակական կյանքի ոլորտներում՝ ներգրավելով ՔՀԿ-ներին համապատասխան հիմնախնդիրների շուրջ: Դեռ ավելին, ռազմավարական որոշակի խնդիրներ կարգավորելու համար անհրաժեշտ է պետական և ոչ պետական ինստիտուտների գործառույթների փոխլրացուցչություն: Լիազորությունների փոխանցումը և իրավասությունների վերաբաշխումը պետք է տեղի ունենան այնպես, որ ՔՀԿ-ները դառնան քաղաքական համակարգի հիմնական դերակատարներ:

Դիտարկվող ժամանակահատվածում Բելառուսի ժողովրդավարության մակարդակը պայմանավորված է եղել քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական և առողջապահական գործոնների ազդեցություններով (տե՛ս Աղյուսակ 1): Հետևաբար, երկրի ժողովրդավարացման ներկայիս օրակարգում ներառվել են պետականաշինությունն ու պետական ինստիտուտների զարգացումը, ինչպես նաև դրանց արդյունավետության բարձրացումն արտաքին անկայունությունների, կառուցվածքային և ինստիտուցիոնալ արագացված բարեփոխումների պայմաններում: Վերջիններս երբեմն սահմանափակվել են ներքին խնդիրներով և չեն ազդել արտաքին գործոնների ու ազգային նպատակների իրականացման գործընթացների վրա:

**6. Բելառուսական պետականության արդիականացման հեռանկարները.
պետականաշինության և քաղաքացիական խոսույթի առանձնահատկությունները**

Աղյուսակ 1

**Բելառուսի Քաղաքական, Սոցիալական, Տնտեսական, Կրթական ու
Առողջապահական գործոնների և Ժողովրդավարության մակարդակի
ինդեքսները (1995-2018 թթ.)***

Տարեթիվ	Ք _{ԳԻ}	Տ _{ԳԻ}	Ս _{ԳԻ}	Կ _{ԳԻ}	Ա _{ԳԻ}	ԺՄԻ
2000	0,355	0,350	0,534	0,606	0,270	0,391
2001	0,335	0,341	0,559	0,595	0,278	0,383
2002	0,357	0,390	0,574	0,600	0,258	0,404
2003	0,357	0,371	0,596	0,605	0,282	0,405
2004	0,307	0,431	0,634	0,595	0,296	0,405
2005	0,345	0,401	0,673	0,610	0,308	0,420
2006	0,309	0,487	0,713	0,637	0,299	0,434
2007	0,336	0,553	0,742	0,594	0,334	0,464
2008	0,343	0,604	0,788	0,590	0,318	0,483
2009	0,330	0,561	0,759	0,582	0,313	0,462
2010	0,284	0,534	0,803	0,626	0,325	0,447
2011	0,287	0,746	0,719	0,595	0,288	0,487
2012	0,303	0,627	0,740	0,613	0,359	0,474
2013	0,313	0,607	0,878	0,616	0,397	0,493
2014	0,319	0,622	0,890	0,604	0,399	0,499
2015	0,325	0,685	0,808	0,603	0,458	0,515
2016	0,366	0,667	0,777	0,613	0,478	0,528
2017	0,379	0,683	0,830	0,606	0,488	0,543
2018	0,381	0,726	0,862	0,606	0,491	0,559

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

Ք_{ԳԻ}-ի, Տ_{ԳԻ}-ի, Ս_{ԳԻ}-ի, Կ_{ԳԻ}-ի, Ա_{ԳԻ}-ի և հետևաբար դրանց հիման վրա հաշվարկված ժՄԻ-ի որոշ տարիների արժեքները, հնարավոր է, աննշան տարբերվեն նախորդ հրապարակման համապատասխան տարիների արժեքներից՝ թարմացված և նոր տվյալների ներմուծմամբ պայմանավորված նվազագույն և առավելագույն արժեքների փոփոխման հետևանքով:

6.1 Նախագահական կառավարման ձևի քաղաքական համախմբման և վերահսկողության միտումները

Դիտարկվող ժամանակաշրջանում Բելառուսի քաղաքական համակարգի ժողովրդավարական բարեփոխումներն ունեցել են ներքին և արտաքին ազդակներ, իսկ կուտակված քաղաքական կապիտալը, կառավարչական ներուժն ու այլ ռեսուրսները միշտ չէ, որ օգտագործվել են բավականաչափ արդյունավետ:


Բելառուսական պետականության զարգացման նոր փուլը պայմանավորված է նախագահի ինստիտուտի կերպափոխումներով: Վերջինս փորձել է համախմբել քաղաքական ընտրանին այնպես, որ կարողանա ապահովել պետականության հետագա առաջընթացն ու անկախությունը: Սակայն նախագահի ինստիտուտի և պետական կառավարման համակարգի բարեփոխումները հանգեցրել են ոչ թե *ժողովրդավարական բյուրոկրատիայի* զարգացմանը, այլ խթանել են *բյուրոկրատական ժողովրդավարությունը*: Արդյունքում ընդլայնվել են պաշտոնյաների ղեկավարման և վերահսկողության գործառույթները, իսկ հանրային ծառայության արհեստավարժությունը, հաշվետվողականությունը և թափանցիկությունը չեն բարձրացել: Մեկ այլ խնդիր է երկրում պետական կառավարման նոր հարացույցի՝ *քաղաքացիավարական բյուրոկրատիայի* արմատավորումը, որովհետև կառավարչական նախկին մոդելներն այլևս չեն համապատասխանում հասարակական կյանքի արդի իրողություններին: Հետևաբար, անհրաժեշտ է արագորեն վերանայել Բելառուսում ժողովրդավարական բարեփոխումների գործընթացի կարևոր ուղղությունները՝ դրանք ամրագրելով կառավարության ծրագրերում:

Բելառուսի ժողովրդավարության Քաղաքական գործոնների ինդեքսը (Ք_{ԳԻ}) 2016-2018 թթ. նախորդ տարվա համեմատ աճել է (տե՛ս Գծապատկեր 1, Աղյուսակ 1): Սակայն 1995 թ. Ք_{ԳԻ}-ի ցուցանիշը 1995-2018 թթ. ժամանակահատվածում շարունակել է մնալ ամենաբարձրը (*Ալեքսանյան 2015, 124-142, Ալեքսանյան 2016, 166-182*):

**6. Բելառուսական պետականության արդիականացման հեռանկարները.
պետականաշինության և քաղաքացիական խոսույթի առանձնահատկությունները**

Գծապատկեր 1

Բելառուսի Քաղաքական գործունեների ինդեքսը (2000-2018 թթ.)*



2016-2018 թթ. Բելառուսի ժողովրդավարական փոխակերպումների վրա ՔԳԻ-ի ազդեցությունները հիմնականում պայմանավորված են եղել նախագահի ինստիտուտի և պետական կառավարման համակարգի արդիականացմամբ, 2016 թ. խորհրդարանական ու 2018 թ. ՏԻՄ-երի ընտրական գործընթացներով, եվրասիական, միութենական և եվրոպական ինտեգրման ընթացակարգերով, կուսակցությունների, արհմիությունների, ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների գործունեությամբ (*Vyatr 2017, Малышев 2019, Бушук 2017, Антонович 2018, Гавриков, Котляров 2017, Ласточкина 2018*):

Դիտարկվող ժամանակահատվածում երկրի Սահմանադրությամբ ամրագրված նախագահական կառավարման ձևի կերպափոխման միտումները շարունակել են նպաստել, որ կայանա Բելառուսի պետական համակարգի նոր մոդելը: Իշխանության ճյուղերի տարանջատման և հակակշռման հոչակված սկզբունքը վերափոխվել է երկրի նախագահի «հովանու ներքո» օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև փոխգործակցության: Միևնույն ժամանակ, խորհրդարանի դերն ու նշանակությունը երկրի քաղաքական կյանքում մղվել են հետին պլան՝ նախագահից և կառավարու-

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

թյունից հետո: Ավելին, Բելառուսի փորձը ցույց է տալիս, որ սոցիալ-տնտեսական ճգնաժամից դուրս գալու ճանապարհին արդյունավետորեն ապահովվում է նախագահական ուժեղ իշխանության միջոցով: Այս առումով հրատապ նշանակություն կունենա նախագահական կառավարման ձևի ժողովրդավարացումը՝ բացելով նոր փուլ բելառուսական պետականության զարգացման գործում: Այնուամենայնիվ, արևմտյան ժողովրդավարությունների փորձի ներդրումը դեռևս չի նպաստել, որ երկրի քաղաքական ընտրանին և հասարակության զգալի մասը գիտակցեն նախագահի ինստիտուտի իրավաքաղաքական կարգավիճակը և գործառույթները: Ակնհայտ է, որ երկրի նախագահի ձեռքում իշխանության լծակների չափազանց մեծ կենտրոնացումը սպառնում է ժողովրդավարությանը՝ հանգեցնելով համախմբված ավտորիտար վարչակարգին¹⁴⁹: Այս իրավիճակը կանխելու համար պետք է գործառի իշխանության ճյուղերի փոխադարձ զսպումների և հակակշիռների ընթացակարգը: Մինչդեռ, երկրի նախագահ Ա. Լուկաշենկոն պետական իշխանության մարմինների հետ (Ներկայացուցիչների պալատ, Հանրապետության խորհուրդ, Նախարարների խորհուրդ) իրականացնում է համատեղ կառավարման մի շարք գործառույթներ: Դրանք, մի կողմից, ենթադրում են համագործակցություն Ազգային ժողովի հետ, իսկ մյուս կողմից՝ կանխում են միակողմանի ավտորիտար որոշումների ընդունումն ու իրականացումը:

Ինչ վերաբերում է Միութենական պետությանը, ապա 2016-2018 թթ. նկատելի էր միութենական հարաբերությունների դանդաղում կամ «ձգձգում», որը շարունակվում է մինչ օրս: Հիմնական պատճառը, հավանաբար, բելառուս-ռուսական ինտեգրման մասնակիցների հետապնդած տարբեր նպատակներն են: Եթե Միութենական պետությունը ռուսական կողմի համար աշխարհաքաղաքական կենսունակ միավորում է, ապա բելառուսական կողմին բավարարում է բելառուս-ռուսական միավորման «փխրունությունը» (*Скриба 2016, Сошникова, Шернаев, Щелоков 2019*):

2016-2018 թթ. «միութենական» պետականաշինարարությունը «սառեցման» շրջափուլում է եղել: Միննույն ժամանակ, ինտեգրացիոն գործընթաց-

¹⁴⁹ Տե՛ս «Ազատության տան» պաշտոնական կայք՝ <https://freedomhouse.org/report/nations-transit/2018/belarus> (25.06.2019):

6. Բելառուսական պետականության արդիականացման հեռանկարները. պետականաշինության և քաղաքացիական խոսույթի առանձնահատկությունները

ների «ձգձգումը» պայմանավորված էր Բելառուսի ներքաղաքական խնդիրներով, ինչպես նաև եվրոպական և միջազգային ինտեգրման գործընթացներով: Դրանցում առավել շահագրգիռ էին բելառուսական ՔՀԿ-ները և ընդդիմադիր ուժերը, որոնք կասկածի տակ էին դնում Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերությունները: Համանման իրավիճակ էր նաև Բելառուսի և ՀԱՊԿ-ի ռազմաքաղաքական պարտավորությունների ոլորտում, հատկապես ՀԱՊԿ-ի դաշնակիցներին անվերապահորեն աջակցելու, ինչպես նաև ռուս-ուկրաինական հարաբերությունների, Ղրիմի և Սևաստոպոլի կարգավիճակի հարցերում: Բելառուսի ղեկավարությունը արել է հնարավոր ամեն ինչ՝ օգնելու, որ կարգավորվի հակամարտությունը հարևան Ուկրաինայում (*Андрощук 2019*):

«Ազատության տան» «Ազգերն անցումային փուլում» զեկույցների համաձայն՝ 2016-2018 թթ. Բելառուսի քաղաքական համակարգի ժողովրդավարական փոխակերպումների վարկանիշային միավորները աննշան բարելավվել են՝ 6,64-ից դառնալով 6,61 (տե՛ս Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

«Ազատության տան» գնահատականները Բելառուսի ժողովրդավարական փոխակերպումների վերաբերյալ (2018 թ.)¹⁵⁰

Ժողովրդավարության առաջընթացի գործոններ	2018
Ազգային ժողովրդավարական կառավարում	6,75
Ընտրական գործընթացներ	6,25
Քաղաքացիական հասարակություն	6,75
Լրատվամիջոցների անկախություն	6,75
Տեղական ժողովրդավարական կառավարում	6,75
Դատական համակարգը և դրա անկախությունը	7,00
Կոռուպցիա	6,00
Ժողովրդավարության գնահատական	6,61

¹⁵⁰ Տվյալների աղբյուրը՝ «Ազատության տան» պաշտոնական կայք՝ <https://freedom-house.org/report/nations-transit/2018/belarus> (25.06.2019):

Վերոհիշյալ զեկույցները բացահայտում են, որ երկրի կարևորագույն խնդիրներից մեկը շարունակում է մնալ դատական համակարգի բարեփոխումների իրավական ընթացակարգերը: Ի մասնավորի, 2012 թ.-ից ի վեր Բելառուսի դատական համակարգի և դրա անկախության գնահատականը մնացել է անփոփոխ՝ 7, որն ամենացածրն է¹⁵¹: Հայտնի է, որ զգալի է դատական համակարգի դերը քաղաքացիական հասարակության կայացման և ազգային տնտեսության զարգացման գործում: Քանզի դատարանների կողմից վեճերի անկախ և անկողմնակալ լուծումը Բելառուսի ներդրումային գրավչությունն ապահովելու և ձեռնարկատիրական գործունեությունը ավելացնելու նախադրյալներից մեկն է: Այս առումով կարևորվում է, որ իրավունքը և օրենքը՝ որպես սոցիալական իրականության վրա ազդող գործիքներ, օգտագործվեն հստակորեն և ժամանակին՝ բացահայտելով դրանց կառուցողական ներուժը: Երկրում իրականացվող բոլոր իրավական բարեփոխումները պետք է տեղավորվեն իրավական զարգացման միասնական հայեցակարգի մեջ:

ԺՄԻ-ի ՔԳԻ-ի ցուցանիշների վրա զգալիորեն ազդեցին նաև 2016 թ. սեպտեմբերի 11-ին Բելառուսի ազգային ժողովի ներկայացուցիչների պալատի (*OSCE/ODIHR 2016*) և սեպտեմբերի 16-ին կայացած Հանրապետության խորհրդի ընտրությունների արդյունքները¹⁵²: Քանի որ Բելառուսում գործում է պատգամավորների ընտրության մեծամասնական ընտրակարգը, ապա այն շարունակել է բացասաբար ազդել բազմակուսակցական համակարգի կայացման վրա: Այս անգամ էլ Ներկայացուցիչների պալատի 110 պատգամավորներից 94-ն անկուսակցական էին¹⁵³, իսկ 16-ը, այդ թվում 2-ը՝ ընդդիմադիր ուժերից: Չնայած եվրոպական կառույցների մի շարք դրական գնահատականներին՝ այնուամենայնիվ նրանք հրատապ անհրաժեշտություն էին համարում կատարել համապարփակ ընտրական բարեփոխումներ (*OSCE/ODIHR 2016, EEAS 2016*): Տեղին է նշել, որ ժողովրդավարության, ընտրական մշակույթի և քաղաքացիական մասնակցության

¹⁵¹ Տե՛ս նույն տեղում:

¹⁵² Տե՛ս Բելառուսի Հանրապետության ԸՀՀԱԿ-ի պաշտոնական կայք՝ <http://rec.gov.by/sites/default/files/pdf/Elections-SRNS6-soob2.pdf> (28.06.2019):

¹⁵³ Տվյալների աղբյուրը՝ Բելառուսի Հանրապետության ԸՀՀԱԿ-ի պաշտոնական կայք՝ <http://rec.gov.by/sites/default/files/pdf/Elections-PPNS6-post61.pdf> (28.06.2019):

6. Բելառուսական պետականության արդիականացման հեռանկարները. պետականաշինության և քաղաքացիական խոսույթի առանձնահատկությունները

վերաբերյալ մտահոգությունները շարունակվեցին նաև 2018 թ. փետրվարի 18-ին կայացած՝ Բելառուսի տեղական խորհուրդների պատգամավորների ընտրություններում¹⁵⁴: Մասնավորապես, Բելառուսի տեղական խորհուրդների 18 հազար 110 պատգամավորների զգալի մասը դարձյալ անկուսակցականներ էին¹⁵⁵ (տե՛ս Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Բելառուսի տեղական խորհուրդների պատգամավորական տեղերի հարաբերակցությունը¹⁵⁶

<i>Կուսակցություն</i>	<i>2018</i>	
	<i>Ընդամենը ընտրված է</i>	<i>%</i>
Անկուսակցականներ	17653	97,48
Բելառուսի կոմունիստական կուսակցություն	309	1,71
Աշխատանքի և արդարության հանրապետական կուսակցություն	127	0,70
Ժողովրդական համաձայնության սոցիալ-դեմոկրատական կուսակցություն	11	0,06
Լիբերալ-դեմոկրատական կուսակցություն	5	0,03
Բելառուսի սոցիալ-սպորտային կուսակցություն	4	0,02
Բելառուսի հայրենասիրական կուսակցություն	1	0,01
Բելառուսի ագրարային կուսակցություն	1	0,01
<i>Ընդամենը</i>	<i>18110</i>	<i>100</i>

Դիտարկվող ժամանակաշրջանում Բելառուսում խնդրահարույց են մնում մարդու իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային ընթացակարգերը: Իրավիճակի բարելավման առումով դրական էր այն, որ Բելառուսի նորանկախ պատմության մեջ առաջին անգամ հաստատվեց

¹⁵⁴ Տվյալների աղբյուրը՝ Բելառուսի Հանրապետության ԸՀՀԱԿՀ-ի պաշտոնական կայքը՝ <http://rec.gov.by/ru/vybory-2018> (28.06.2019):

¹⁵⁵ Տե՛ս նույն տեղում:

¹⁵⁶ Տե՛ս նույն տեղում:

մարդու իրավունքների 2016-2019 թթ. միջգերատեսչական պլանը¹⁵⁷: Այն ուղղված է խթանելու մարդու իրավունքների բնագավառում երկրի միջազգային պարտավորությունների կատարմանը, օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանը (*Хамутовская 2018, Самусевич 2017, Matsevich-Dukhan 2016, Bruns and Happ 2016*): Այնուամենայնիվ Բելառուսը Եվրոպայում միակ երկիրն է, որտեղ մահապատիժ է սահմանված ծանր հանցագործություն կատարողների համար: Դա բացասաբար է ազդում Բելառուսի եվրոպական ինտեգրման և միջազգային համագործակցության վրա (*Human Rights Committee 2017, EEAS 2018, OSCE/ODIHR 2018, Council of Europe 2019*): Մասնավորապես ՄԱԿ-ը կարևորվում է Բելառուսում մարդու իրավունքների պաշտպանության ազգային ինստիտուտի ստեղծումն այս ոլորտում միջազգային փորձի հիման վրա¹⁵⁸:

«Ազատության տան» զեկույցների համաձայն՝ քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների, մամուլի և համացանցի ազատության ոլորտներում Բելառուսը 2016-2018 թթ. համարվել է «անազատ»¹⁵⁹:

Բելառուսի քաղաքական համակարգում ավտորիտարիզմի և իլիբերալիզմի (անազատականության) միտումներն արձանագրվել են նաև «Amnesty International» և «Human Rights Watch» միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների 2017-2018 թթ. զեկույցներում¹⁶⁰:

Ինչ վերաբերում է Բելառուսի քաղաքացիական հասարակության գործունեությանը, ապա ԱԳ քաղաքացիական հասարակության ֆորումի

¹⁵⁷ Տե՛ս Բելառուսի Հանրապետության ԱԳՆ-ի պաշտոնական կայք՝ http://mfa.gov.-by/upload/doc/plan_all_ru.pdf (18.06.2019):

¹⁵⁸ Տվյալների աղբյուրը՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով զերագույն հանձնակատարի գրասենյակի պաշտոնական կայք՝ <http://www.ohchr.org/EN/countries/ENACARegion/Pages/BYIndex.aspx> (19.06.2019):

¹⁵⁹ Տե՛ս «Ազատության տան» պաշտոնական կայք՝ <https://freedomhouse.org/report-freedom-world/2018/belarus>, <https://freedomhouse.org/report-freedom-net/2018/belarus>, <https://freedomhouse.org/report-freedom-media/freedom-media-2019> (29.06.2019):


¹⁶⁰ Տվյալների աղբյուրը՝ «Amnesty International»-ի պաշտոնական կայք՝ <https://www.amnesty.org/en/countries/europe-and-central-asia/belarus> (18.06.2019), «Human Rights Watch»-ի պաշտոնական կայք՝ <https://www.hrw.org/world-report-2019/country-chapters/belarus> (18.06.2019):

**6. Բելառուսական պետականության արդիականացման հեռանկարները.
պետականաշինության և քաղաքացիական խոսույթի առանձնահատկությունները**

(ՔՀՖ)՝ Բելառուսի ազգային պլատֆորմի (ԲԱՊ) գործունեությունն¹⁶¹ ուղղված էր երկրի ինքնիշխանության ամրապնդմանը, քաղաքացիական հասարակության առաջնահերթությունների իրականացմանը, էկոլոգիական քաղաքականության բարելավմանը և այլն: Ավելին, ԱլԳ ՔՀՖ-ի ԲԱՊ-ը¹⁶² փորձել է հանրային արդյունավետ վերահսկողություն իրականացնել՝ բարձրացնելով քաղաքական մասնակցության մակարդակն ու պետական մարմինների թափանցիկությունը:

Գծապատկեր 2

2017 թ.-ի Բելառուսի ՔՀԿ-ների կայունության ցուցանիշը¹⁶³



Գծապատկեր 2-ից երևում է, որ Բելառուսի ՔՀԿ-ների կայունության ցուցանիշը 5,5 միավոր է, այսինքն՝ այն վտանգված է: Ընդ որում, Բելառուսի ՔՀԿ-ների ամենաբարձր միավորը կազմակերպական կարողություն-

¹⁶¹ Ավելի մանրամասն տե՛ս ԱլԳ ՔՀՖ-ի պաշտոնական կայք՝ <https://eap-csf.eu/eap-csf-belarusian-national-platform-adopts-resolutions-on-priorities-for-civil-society> (29.06.2019):

¹⁶² Տե՛ս ԱլԳ ՔՀՖ-ի ԲԱՊ-ի պաշտոնական կայք՝ <http://eng.npbelarus.info> (29.06.2019):

¹⁶³ Տվյալների աղբյուրը՝ ԱՄՆ ՄՀՀ «ՔՀԿ կայունության ցուցանիշ»-ի կայք՝ https://www.usaid.gov/sites/default/files/documents/1866/2017_CS0_Sustainability_Index_for_Central_and_Eastern_Europe_and_Eurasia.pdf (15.06.2019):

ների ոլորտում է, իսկ ամենացածրը՝ իրավական միջավայրի (*USAID 2017, USAID 2018*): Շարունակել է մտահոգիչ մնալ քաղաքացիական հասարակության հանրային ընկալման ցածր մակարդակը (տե՛ս Գծապատկեր 2), որը վկայում է քաղաքացիական խոսույթի և քաղաքական մշակույթի բացերի մասին: Հասկանալի պատճառներով դրանք նվազեցնում են ՔՀԿ-ների հանրային վերահսկողության գործառույթները և համախմբման ներուժը: Նման իրավիճակում ՔՀԿ-ները հետևողականորեն աշխատել են հասարակության անդամների վերաբերմունքի փոփոխության ուղղությամբ՝ համախմբելով ակտիվ քաղաքացիներին և փորձելով դիմագրավել սոցիալական մարտահրավերներին: Այնուամենայնիվ, ավտորիտար վարչակարգի և պետական ուժեղ հատվածի պայմաններում զգալի են ոչ ժողովրդավարական սահմանափակումներն ու պոպուլիզմի աճը:

2019 թ. հունվարի 1-ի դրությամբ Բելառուսում գրանցված են 15 կուսակցություն, 28 արհմիություն և 24523 արհմիութենական կազմակերպություն, 2923 հասարակական միավորում, 3524 կրոնական կազմակերպություն, շուրջ 400 բարեգործական կազմակերպություն¹⁶⁴:

Ինչ վերաբերում է ԺՄԻ-ի Ք_{ԳԻ}-ում ընդգրկված այլ փոփոխականներին, ապա 2016-2018 թթ. Կոռուպցիայի ընկալման ինդեքսը նախորդ տարիների համեմատ աճել է¹⁶⁵: 2016-2018 թթ. Ք_{ԳԻ}-ի վրա դրական ազդեցություն է ունեցել «գեներալային հավասարություն» ենթաինդեքսի ցուցանիշների բարելավումը¹⁶⁶:

Ամփոփելով նշենք, որ ԺՄԻ-ի Ք_{ԳԻ}-ի կորը 2000 թ. համեմատ 2018 թ. ին աճել է (տե՛ս Աղյուսակ 1, Գծապատկեր 1): Ի մասնավորի, արձանագրված դրական միտումները ցույց են տալիս, որ Բելառուսում ժողովրդա-

¹⁶⁴ Տվյալների աղբյուրը՝ Բելառուսի Հանրապետության նախագահի պաշտոնական կայք՝ http://president.gov.by/ru/society_ru (19.06.2019), Բելառուսի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնական կայք՝ https://minjust.gov.by/directions/compare_coverage (19.06.2019):

¹⁶⁵ Տե՛ս «Թրանսպարենսի ինդեքսեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի պաշտոնական կայք՝ <https://www.transparency.org/cpi2018> (23.06.2019):

¹⁶⁶ Տե՛ս Համաշխարհային կառավարման ինդիկատորների (WGI) նախագծի պաշտոնական կայք՝ <https://info.worldbank.org/governance/wgi/#home> (23.06.2019), Համաշխարհային տնտեսական ֆորումի պաշտոնական կայք՝ <https://www.weforum.org/reports/the-global-gender-gap-report-2018> (23.06.2019):

**6. Բելառուսական պետականության արդիականացման հեռանկարները.
պետականաշինության և քաղաքացիական խոսույթի առանձնահատկությունները**

վարական պետության զարգացման և «լավ կառավարման» սկզբունքների առանցքային կողմը հանրային իշխանության գործառույթների և պարտականությունների բաշխումն է, այլ ոչ թե քաղաքական որոշումների ընդունման և իրականացման գերկենտրոնացումը: Դա կիրառելի է միայն ճգնաժամային իրավիճակների պայմաններում: Բելառուսական հասարակության համախմբման ընթացակարգերում նկատվում է որոշակի փոխկապակցվածություն երկրի նախագահի և քաղաքական համակարգի նկատմամբ վստահության միջև: Ակնհայտ է, որ որքան էլ նախագահական կառավարման ձևն ունի բազմաթիվ թերություններ, դրանք հնարավոր է վերացնել աստիճանական բարեփոխումներով: Այսպիսով, երկրի նախագահի նկատմամբ վստահության մակարդակի նվազումով ակնկալվում է ժողովրդավարական բարեփոխումները սատարող քաղաքացիների թվի աճ: Այս առումով ժողովրդավարական նշանակություն ունեն ԲՀԿ-ների գործառույթների ընդլայնումը և «ներքևից» հասարակական վերահսկողության ակտիվացումը՝ հիմնված քաղաքացիական գիտակցության և մասնակցության մակարդակի աճի վրա:

6.2 Տնտեսական ինտեգրման շուկայական և ոչ շուկայական հետևանքները

Միջազգային և տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացները փոխակերպում են Բելառուսի տնտեսական համակարգը՝ որոշելով դրա հետագա զարգացման բնույթն ու գերակայությունները: Այդ գործընթացների հիմնական նպատակն է կայացնել միջազգային և տարածաշրջանային մասշտաբով համագործակցության նոր ընթացակարգերը: Դրանց բաղկացուցիչ տարրերից է նաև շուկայի ազատականացման սցենարի ընտրությունը, որը ենթադրում է տնտեսության պետական կառավարման ընթացակարգերի կրճատում: Դրան նպաստել են նաև Ռուսաստանի և Բելառուսի միջև արտոնյալ առևտրային ռեժիմը, ինչպես նաև ռուսական նավթի և գազի ներմուծման ցածր գները:

Բելառուսի տնտեսական մոդելին բնորոշ են մի շարք առանձնահատ-

կություններ, որոնք պայմանավորված են եղել պետության ակտիվ մասնակցությամբ (և՛ որպես հիմնական կարգավորիչ, և՛ որպես առավել նշանակալի դերակատար, և՛ որպես նորարար զարգացման ու արդիականացման կատալիզատոր) և շուկայական հարաբերությունների պատշաճ համադրմամբ: Դա շուկայի կարգավորելիությունն է, շուկայական և ոչ շուկայական բնույթի սահմանափակումների նկատմամբ խիստ վերահսկողությունը, ինչպես նաև ՌԴ-ի մեծածավալ օգնությունը: Հետաքրքիր է, որ վերջինս ճգնաժամի ժամանակ ապահովել է Բելառուսի տնտեսության կայունությունը, իսկ աճի փուլում՝ դրա մրցունակությունը: Այնուամենայնիվ, ներկայիս տնտեսական մոդելը, շնորհիվ ՌԴ-ից տրված արտոնությունների և դոտացիաների, կարողացել է հաղթահարել տնտեսությունում առաջացած մի շարք բացասական երևույթներ: Անհրաժեշտ է եղել կրճատել տնտեսության մեջ պետության ներկայությունը, ապահովել ձեռնարկատիրական ազատությունների և գործունեության աճ, ֆինանսական ոլորտում զարգացնել շուկայական հաստատությունները, փոխել գնագոյացման համակարգը և այլն:

Համաշխարհայնացման դարաշրջանում ավելանում են արտաքին շուկաներում բելառուսական ապրանքների և ծառայությունների նկատմամբ պահանջները: Հաջողությամբ շուկա դուրս գալ հնարավոր է դարձել միայն մրցակցային ապրանքների, ներառյալ նորարարական արտադրատեսակների թողարկմամբ: Երկրի կառավարությունը բելառուսական արտադրողների առջև խնդիր դրեց ավելացնել արտահանումը: Միևնույն ժամանակ, մշակվեց և գործողության մեջ դրվեց «2016-2020 թթ. արտահանման աջակցության և զարգացման ազգային ծրագիրը»¹⁶⁷: Ընդ որում, երկրի արտահանման խթանման ներքին համակարգ զարգացնելու ծրագրեն ամրագրված էին նաև մինչև 2030 թվականը երկրի սոցիալ-տնտեսական կայուն զարգացման ազգային ռազմավարության մեջ¹⁶⁸:


¹⁶⁷ Տե՛ս Բելառուսի Հանրապետության կառավարության պաշտոնական կայք՝ <http://www.government.by/upload/docs/fileaff83a3fc04eb9c0.PDF> (25.06.2019):

¹⁶⁸ Տե՛ս Բելառուսի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայք՝ <http://www.economy.gov.by/uploads/files/NSUR2030/Natsionalnaja-strategija-ustojchivogo-sotsialno-ekonomicheskogo-razvitija-Respubliki-Belarus-na-period-do-2030-goda.pdf> (25.06.2019):

**6. Բելառուսական պետականության արդիականացման հեռանկարները.
պետականաշինության և քաղաքացիական խոսույթի առանձնահատկությունները**

Գծապատկեր 3

Բելառուսի Տնտեսական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)*



Բելառուսի Տնտեսական գործոնների ինդեքսի ($S_{գի}$) ցուցանիշները ցույց են տալիս, որ $S_{գի}$ -ի կորը 2018 թ.-ին 2012-2017 թթ. համեմատ աճել է (տե՛ս Գծապատկեր 3, Աղյուսակ 1): Դա հիմնականում պայմանավորված էր առևտրաշրջանառության ծավալների շարունակական ավելացման և տնտեսական ազատության միջավայրի բարելավման, ինչպես նաև գնաճի նվազեցման միտումներով¹⁶⁹: Դրական էր նաև վերջին տարիների պրոֆիցիտային բյուջեի ազդեցությունը: Տեղին է նշել, որ 2016 թ. երկրի տնտեսական ազատության և 2017-2018 թթ. բյուջեի պրոֆիցիտի ցուցանիշներն ամենաբարձրն էին, իսկ գնաճն ամենացածրն էր 1995-2018 թթ. ժամանակահատվածում¹⁷⁰: Այս առումով երկրում զգալիորեն ակտիվացավ դրամա-

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

¹⁶⁹ Տե՛ս ՀԲ-ի պաշտոնական կայք՝

<http://data.worldbank.org/indicator/GC.BAL.CASH.GD.ZS>,

<http://data.worldbank.org/indicator/FP.CPI.TOTL.ZG>,

<http://data.worldbank.org/indicator/NE.TRD.GNFS.ZS> (26.06.2019), «Հերիթեջ» հիմնադրամի պաշտոնական կայք՝ <http://www.heritage.org/index/explore?view=by-region-country-year> (26.06.2019):

¹⁷⁰ Տե՛ս նույն տեղում:

վարկային գործառնությունը, որի շնորհիվ 2016 թ. հուլիսի 1-ից իրականացվեց ազգային արժույթի ամենալայնածավալ դենոմինացիան¹⁷¹ և բելառուսական ռուբլին ամրապնդեց իր դիրքերը:

2016-2018 թթ. բելառուսական ԱԷԿ կառուցելու նախագծային աշխատանքները նոր թափ ստացան¹⁷²: Այն պետք է բարձրացնի երկրի էներգետիկ անվտանգությունն ու միջուկային էներգիայի զարգացման հեռանկարները: Թերևս ԱԷԿ-ի շահագործումը նպաստի տարածաշրջանում էներգետիկ հզորությունների ավելցուկին՝ հնարավորություն տալով Բելառուսում արդիականացնել էներգետիկ համակարգերը:

Բելառուսը՝ որպես «նվազ բաց» տնտեսություն, բազմաթիվ գործառույթներով խորապես ինտեգրված է համաշխարհային տնտեսական գործընթացներին, իսկ երկրի արտաքին տնտեսական հատվածի դինամիկան մեզ թույլ է տալիս պատկերացում կազմել դրա բաղադրիչների արդյունավետության մասին (*Рудыў 2019, Шырыбович 2018a, Шырыбович 2018b, Куйко, Терещенко 2016*): Ուշագրավ է, որ Բելառուսի տնտեսական մոդելը խորապես նպաստել է, որ պետությունն ինքը կարգավորի ու վերահսկի տնտեսական գործընթացները և տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը՝ պահպանելու երկրի արդյունաբերական ներուժը: Դա երկրի նախագահ Լուկաշենկոյի քաղաքականության անքակտելի մասն է, որի նպատակն էր պահպանել պետության գերակա ներկայությունը տնտեսության և սոցիալական ոլորտներում (*Dobrinsky 2016, Shraibman 2018*):

Դիտարկվող ժամանակահատվածում Բելառուսի S_{գր}-ի ցուցանիշների վրա զգալի է եղել ԵԱՏՄ-ի գործունեությունը (*ЕЭК 2017a, ЕЭК 2017b, ЕЭК 2018a, ЕЭК 2018b, Aleksanyan 2018*): Մասնավորապես, Բելառուսը ԵԱՏՄ երկրների հետ առևտրային հարաբերություններում բախվում է երկու կարևոր խնդրի. առաջինը՝ շահութաբեր ապրանքատեսակների տեղաբաշխումը, որոնց արտահանման ծավալների ավելացումը մեծ օգուտ կբերի երկրին, իսկ երկրորդը՝ արտահանման նոր հեռանկարներ՝ ԵԱՏՄ յուրա-

¹⁷¹ Տե՛ս Բելառուսի Հանրապետության նախագահի պաշտոնական կայք՝ http://president.gov.by/ru/news_ru/view/kommentarij-k-ukazu-450-ot-4-nojabrja-2015-g-12489/ (26.06.2019):

¹⁷² Տե՛ս Բելառուսի Հանրապետության էներգետիկայի նախարարության պաշտոնական կայք՝ http://minenergo.gov.by/o_ministerstve/yadernaya_energetika/stroitelstvo_atomnoy_elektrostantsii (26.06.2019):

**6. Բելառուսական պետականության արդիականացման հեռանկարները.
պետականաշինության և քաղաքացիական խոսույթի առանձնահատկությունները**

քանչյուր երկրի հետ առանձին: Ավելին, Բելառուսի արտահանման նոր մոտեցումները պետք է մոտ լինեն ԵԱՏՄ երկրներից յուրաքանչյուրի արտահանման զամբյուղին: Կարճաժամկետ առումով կարևոր էր հասկանալ, որ բելառուսական ապրանքների արտադրության և արտահանման ներուժի զարգացման հավանականությունը մեծապես պայմանավորված էր արտադրական եղած հնարավորություններով և կուտակված փորձով: Ակնհայտ էր, որ բելառուսական բարձրորակ ապրանքատեսակների մասնաբաժինն ավելի մեծ էր դեպի Ռուսաստան և Ղազախստան առաքվողների մեջ: Դա պայմանավորված էր երկրների միջև արտաքին առևտրի ավելի երկարաժամկետ հարաբերություններով՝ որպես տնտեսական ինտեգրման տարբեր փուլերի բաղկացուցիչ մասեր: Բելառուսից դեպի Հայաստան և Ղրղզստան բարձր եկամտաբերությամբ արտահանման չափաբաժինը շատ ավելի ցածր էր: Դրա պատճառն այդ երկրների հետ առևտրաշրջանառության ծավալի ցածր ցուցանիշն է:

2016-2018 թթ. Բելառուսի համար ԵԱՏՄ երկրների հետ միջտարածաշրջանային հարաբերությունները ձևավորվել և զարգացել են երկկողմ ձևաչափով: Պատճառն այն է, որ բացակայում են միջպետական համապատասխան հաստատություններ: Եվրասիական տնտեսական ինտեգրացիոն կապերին հիմնականում մասնակցել են խոշոր բիզնեսն ու պետական ձեռնարկությունները, որովհետև ԵԱՏՄ-ում փոքր և միջին բիզնեսը գործնականում ընդգրկված չէ տարածաշրջանային առևտրի և տնտեսական հոսքերի մեջ: Միևնույն ժամանակ, Բելառուսի բնակչության, ընդդիմադիր կուսակցությունների և ԲՀԿ-ների համար դեռևս զգալի չեն եվրասիական տարածաշրջանային ինտեգրման բոլոր առավելությունները:

Ինչ վերաբերում է Բելառուսի և ԵՄ-ի երկրների միջև ապրանքաշրջանառությանը, ապա դրա վրա բացասաբար են ազդել Ռուսաստանի դեմ ԵՄ-ի սահմանած պատժամիջոցները և, դրան ի պատասխան, ռուսական հակապատժամիջոցները: Հիմնականում հենց այդ պատճառով էր, որ Բելառուսը և ԵԱՏՄ-ում ՌԴ մյուս գործընկերները հայտնվեցին ծանր իրավիճակում իրենց արտաքին առևտրային գործունեություն իրականացնելիս: Չէ՞ որ Բելառուսի և ԵԱՏՄ մյուս երկրների համար կենսական նշանակություն ունեւոյ ոչ այնքան առևտրաշրջանառությունը Եվրոպայի հետ՝ շրջանցելով Ռուսաստանը, որքան ամրապնդելու իրենց տարանցիկ դիրքերն ու

մասնակցելու առևտրային սեփական երթուղիների ձևավորմանը Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու շրջանակներում:

Դիտարկվող ժամանակահատվածում Բելառուսն ու Ռուսաստանը պահպանել են ընդհանուր սահմանի թափանցիկությունը՝ օգտագործելով միջպետական համագործակցության տարբեր ձևաչափեր: Դրան զգալիորեն նպաստել են երկու ժողովուրդների ազգային ինքնության ընդհանրությունները՝ հատկապես էթնոմշակութային և լեզվական աղերսները, այդ երկրներում ունեն սոցիալ-տնտեսության ոլորտի կառավարման քաղաքական տարբեր համակարգեր և մոդելներ: Այս համատեքստում էական հետաքրքրություն են ներկայացնում Բելառուսի և Ռուսաստանի սահմանամերձ շրջաններում տնտեսական զարգացման ծրագրերը, դրանց արդյունավետության հիման վրա միջպետական ինտեգրման ազդեցության գնահատումը, ինչպես նաև միջազգային տարածաշրջանի վերածվելու հնարավորությունը: Վերջինս, հիմնվելով աշխարհատնտեսական ընթացակարգերի վրա, նպաստում է Բելառուսի և Ռուսաստանի արտաքին տնտեսական հարաբերությունների ակտիվացմանն ու եկամուտների ավելացմանը: Ընդ որում, աստիճանաբար ընդլայնվում են որոշակի ապրանքների շուկաները, և դիվերսիֆիկացվում են արտաքին եկամուտների աղբյուրները, ինչպես նաև բարձրանում է ազգային տնտեսության մրցունակությունը: Դա անելու համար Բելառուսը և Ռուսաստանը կիրառում են այնպիսի միջոցներ, ինչպիսիք են ժամանակակից պահանջներին համարժեք ենթակառուցվածքների ստեղծումը, նորարարական տեխնոլոգիաների ներդրումը և տնտեսության թվայնացումը, միջազգային համագործակցությանը և ինտեգրացիոն գործընթացներին մասնակցությունը, ներառյալ ԵԱՏՄ և Ռուսաստան-Բելառուս Միութենական պետության ենթակառուցվածքները: Այս ամենը կարևոր է շուկայի ընդլայնման և արտադրական ռեսուրսների միջսահմանային ազատ տեղաշարժի առումով (*Долнина 2019, Власенко 2018*): Դա էլ իր հերթին խթանում է Բելառուսի տնտեսությունը՝ առանձնացված տարածքներում սահմանելով հարկային հատուկ ռեժիմ և այլն: Նման տնտեսական քաղաքականության պայմաններում ինտեգրման գործընթացները բարենպաստ ազդեցություն կունենան երկրների ոչ միայն մայրաքաղաքային, այլև մարզային շրջանների տնտեսության առաջընթացի վրա (*Тереник 2018, Буховец 2016*): Մինչ այժմ ռուս-բելառուսական սահմանամերձ

**6. Բելառուսական պետականության արդիականացման հեռանկարները.
պետականաշինության և քաղաքացիական խոսույթի առանձնահատկությունները**

շրջանները չեն հասցրել ձևավորել սպառողական այնպիսի շուկա, որը կարող էր դառնալ կենտրոն հնչյալ տեղացի բնակիչների, այնպես էլ Միութենական պետության քաղաքացիների համար: Տեղին է նշել, որ Միութենական պետության տնտեսական ինտեգրման առաջխաղացման գործընթացում առաջացել են տարածաշրջանային բազմաթիվ խնդիրներ, որոնք հնարավոր է լուծել ազգային մակարդակում: Այսպիսով, Միութենական պետության ընդհանուր տնտեսական տարածքը շատ բևեռացված է: Այն բնութագրվում է ինտեգրման գործունեության տարածքային մասնատմամբ, ինչը արտահայտվում է խոշոր քաղաքներում և կազմակերպություններում արտաքին տնտեսական գործունեության համակենտրոնացման մեջ (*Пасюкевич 2018, Ткалич 2019, Неменский, Холодков 2017*): Բելառուսի և Ռուսաստանի մարզերը, շրջանները, գյուղերն ու բնակավայրերը զգալիորեն տարբերվում են իրենց սոցիալ-տնտեսական զարգացմամբ, որը նույնպես ազդում է միջգերատեսչական և միջսահմանային համագործակցություններում դրանց ներգրավվածության աստիճանի վրա: Երկրների մարզերի մեծ մասին հատուկ է ներդրումների, նորարարությունների և սոցիալական միջտարածաշրջանային փոխգործակցությունների թերզարգացածությունը: Ընդ որում, Բելառուսի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական դրույթների համաձայն՝ դրանց իրականացումը հիմնված էր արտաքին տնտեսական ներուժի արդյունավետ օգտագործման, նորարարական տնտեսական գործոնների և մրցակցային առավելությունների արդյունավետ պայմաններ ստեղծելու վրա: Վերջինս էլ իր հերթին ուղղված էր երկրի բնակչության կյանքի որակի և մարդկային կապիտալի բարելավմանը: Հետևաբար, համայնքային տնտեսության զարգացման նորարարական գործոնները և դրա արդիականացումը մեծ նշանակություն ունեն ազգային տնտեսության մրցունակության բարձրացման պահանջները կատարելու առումով: Սա արտացոլված է մինչև 2030 թվականը Բելառուսի սոցիալ-տնտեսական կայուն զարգացման ազգային ռազմավարության մեջ, 2016-2020 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում, 2016-2020 թթ. թվային տնտեսության և տեղեկատվական հասարակություն զարգացման պետական ծրագրում, 2016-2022 թթ. տեղեկատվականացման զարգացման ռազմավարությունում, ինչպես նաև մի շարք փաստաթղթերում, որոնք տարածաշրջանային մակարդակով ապահովում են

տնտեսության էլ ավելի զարգացումը¹⁷³:

Դիտարկվող ժամանակահատվածում ԵԱՏՄ շուկայում բելառուսական ապրանքների նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու համար կարևորվել են հետևյալ միջոցառումները.

1. ԵԱՏՄ անդամ երկրների նորմատիվային-իրավական ընթացակարգերի համապատասխանեցումը, որը կատարյալ մրցակցության պայմաններում Բելառուսին թույլ կտա անցում կատարելու իրական շուկայական հարաբերություններին՝ զսպելով ապրանքների և ծառայությունների գները,

2. Թվային տնտեսության անցնելով՝ արագացել են ԵԱՏՄ տեղեկատվական միասնական համակարգ ստեղծելու աշխատանքները: Դա թույլ կտա Բելառուսին մասնակից երկրներում ձևավորել շուկայական ընթացակարգերի վերաբերյալ տվյալների շտեմարան,

3. Համապատասխան մասնագետների վերապատրաստման միասնական ռազմավարության մշակումը, որը հնարավորություն կտա Բելառուսին ակտիվորեն աշխատել թվային տնտեսությանն անցում կատարելու ուղղությամբ:

6.3 Սոցիալական քաղաքականության հիմնախնդիրները

Բելառուսի ժողովրդավարական փոխակերպումներում զգալիորեն բարձրացել է սոցիալական քաղաքականության արդյունավետությունը: Այն հասարակության զարգացման որակը և բնութագրերը որոշող ամենա-

¹⁷³ Տե՛ս Բելառուսի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայք՝ <http://www.economy.gov.by/uploads/files/NSUR2030/Natsionalnaja-strategija-ustojchivogo-sotsialno-ekonomicheskogo-razvitija-Respubliki-Belarus-na-period-do-2030-goda.pdf> (25.06.2019), <https://www.economy.gov.by/uploads/files/Programma-2020.pdf> (25.06.2019), Բելառուսի Հանրապետության կառավարության պաշտոնական կայք՝ <http://www.government.by/upload/docs/file4c1542d87d1083b5.PDF> (25.06.2019), e-Gov.by-ի պաշտոնական կայք՝ <http://e-gov.by/zakony-i-dokumenty/strategiya-razvitiya-informatizacii-v-respublike-belarus-na-2016-2022-gody> (25.06.2019):

**6. Բելառուսական պետականության արդիականացման հեռանկարները.
պետականաշինության և քաղաքացիական խոսույթի առանձնահատկությունները**

կարևոր գործոններից է՝ երկրի բարգավաճում, սոցիալական անվտանգության ու կայունության ապահովում, ինչպես նաև տնտեսության հետագա զարգացում ու ինտեգրում:

2016-2018 թթ. Բելառուսի սոցիալական քաղաքականության համակարգը գտնվել է փոխակերպումների շրջափուլում՝ միտված իրականացված ծրագրերի արդյունքները և զարգացած երկրների փորձը կատարելագործելուն: Երկրի սոցիալական քաղաքականության գերակայություններում զգալի են եղել մարդու սոցիալ-աշխատանքային իրավունքների պաշտպանության ընթացակարգերը՝ փորձելով նվազեցնել սոցիալական բևեռվածության աստիճանն ու բարելավել հասարակության անդամների հոգևոր և նյութական կարիքները: Այս համատեքստում կարևորվել է այնպիսի հիմնախնդիրների լուծումը, որոնք կապված էին եկամուտների և ծախսերի ուղղակի կառուցվածքի ձևավորման, աշխատանքի և զբաղվածության քաղաքականության, հասարակության բոլոր անդամների սոցիալական աջակցության ու պաշտպանության, սոցիալական ենթակառուցվածքների զարգացման, ժողովրդագրական իրավիճակի բարելավման, առողջապահություն և շրջակա միջավայրի անվտանգության և այլ ոլորտների հետ:

2016 թթ. Սոցիալական գործոնների ինդեքսի (U_{ԳԻ}) ցուցանիշը նախորդ տարվա համեմատ նվազել է, իսկ 2017-2018 թթ. աճել է (տե՛ս Գծապատկեր 4, Աղյուսակ 1): Թերևս կարևոր էր այն, որ դիտարկվող ժամանակահատվածում U_{ԳԻ}-ի կորը պահպանեց դրական միտումները (տե՛ս Գծապատկեր 4, Աղյուսակ 1): Եթե U_{ԳԻ}-ին 2000 թ.-ին ունեցել է 0,534 միավոր, ապա 2018 թ.-ին՝ 0,862 միավոր (տե՛ս Գծապատկեր 4, Աղյուսակ 1):


2016-2018 թթ. U_{ԳԻ}-ի կորի վրա դրական ազդեցություն են ունեցել գործազրկության և Ջինի ինդեքսի ցուցանիշների բարելավումը¹⁷⁴: Թեև 2017-2018 թթ. իրական աշխատավարձը 2016 թ. համեմատ աճել է, այնուամենայնիվ այն շարունակել է ցածր մնալ 2013-2014 թթ. ցուցանիշներից¹⁷⁵:

¹⁷⁴ Տվյալների աղբյուրը՝ ՀԲ-ի պաշտոնական կայք՝
<http://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.ZS>,


<https://data.worldbank.org/indicator/SI.POV.GINI?locations=BY> (13.06.2019):

¹⁷⁵ Տվյալների աղբյուրը՝ Բելառուսի Հանրապետության ազգային վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք՝ <http://www.belstat.gov.by> (13.06.2019):

Գծապատկեր 4
Բելառուսի Սոցիալական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)*



Գծապատկեր 5
Աշխատուժը Բելառուսում (2000-2018 թթ.)¹⁷⁶



* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

¹⁷⁶ Տվյալների աղբյուրը՝ ՀԲ-ի պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/SL.TLF.TOTL.IN?locations=BY&view=chart> (20.06.2019):

**6. Բելառուսական պետականության արդիականացման հեռանկարները.
պետականաշինության և քաղաքացիական խոսույթի առանձնահատկությունները**

Սոցիալապես կողմնորոշված շուկայական տնտեսության պայմաններում Բելառուսի նպատակն է ապահովել քաղաքացիների կյանքի պատշաճ որակ և բարեկեցության բարձր մակարդակ: Այս առումով շարունակել է մտահոգիչ մնալ նոր աշխատուժի (աշխատատեղերի) խնդիրը, որը 2000 թ.-ից կայուն աճել է մինչև 2015 թ., սակայն հետագայում աստիճանաբար սկսել է նվազել (տե՛ս Գծապատկեր 5):

2016-2018 թթ. Բելառուսի բնակչության զբաղվածության բաշխվածության մեջ զգալի է եղել արդյունաբերության, հատկապես մշակող արդյունաբերության, առևտրի ու վերանորոգման, կրթության և գյուղատնտեսության ոլորտների դերը (տե՛ս Աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Ձբաղվածությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների¹⁷⁷

<i>Տնտեսական գործունեության տեսակներ</i>	2016		2017		2018	
	<i>%</i>	<i>հազ. մարդ</i>	<i>%</i>	<i>հազ. մարդ</i>	<i>%</i>	<i>հազ. մարդ</i>
<i>Տնտեսության մեջ զբաղվածներ, ընդամենը՝</i>	100	4 405,7	100	4 353,6	100	4 337,9
Գյուղատնտեսություն, անտառային և ձկնային տնտեսություն	9,6	425,1	9,6	416,6	9,3	404,9
Արդյունաբերություն	23,3	1 027,1	23,5	1023,3	23,7	1 028,6
Հանքարդյունաբերություն	0,2	10,6	0,2	10,4	0,2	10,6
Մշակող արդյունաբերություն	19,8	870,6	19,9	865,8	20,2	874,8
Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու, տաք ջրի և օդորակման մատակարարում	2,2	99,3	2,3	98,2	2,2	96,7
Ջրամատակարարում, թափոնների հավաքում, մաքրում և հեռացում, աղտոտվածության վերացման աշխատանքներ	1,1	46,6	1,1	48,9	1,1	46,5
Շինարարություն	7,0	308,0	6,4	280,7	6,4	276,2

¹⁷⁷ Տվյալների աղբյուրը՝ Բելառուսի Հանրապետության ազգային վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք՝ <http://www.belstat.gov.by/ofitsialnaya-statistika/solialnaya-sfera/trud/godovye-dannye> (21.06.2019):

**Ժամանակակից ժողովրդավարության համախմբման մարտահրավերները.
ԺՄԻ համեմատական վերլուծություն**

Մեծածախ և մանրածախ առևտուր, մեքենաների և մոտոցիկլետների վերանորոգում	14,4	633,5	14,2	616,3	14,2	617,7
Տրանսպորտային, պահեստային, փոստային և սուրհանդակային գործունեություն	6,7	297,0	6,9	299,0	6,9	298,1
Ժամանակավոր բնակեցման և սննդի ծառայություններ	2,2	95,4	2,2	94,8	2,2	93,9
Տեղեկատվություն և կապ	2,2	98,8	2,4	104,5	2,6	113,9
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	1,6	72,7	1,6	70,4	1,6	68,0
Անշարժ գույքի գործարքներ	2,0	88,1	1,8	76,1	1,7	73,0
Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	3,1	136,5	3,2	140,2	3,2	137,3
Վարչական և օժանդակ ծառայությունների ոլորտում գործունեություն	2,1	91,5	2,3	102,1	2,3	101,4
Պետական կառավարում	4,3	188,8	4,2	184,4	4,2	181,2
Կրթություն	10,3	451,8	10,4	451,5	10,4	452,6
Առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում	7,3	320,5	7,4	323,6	7,5	325,3
Ստեղծագործականություն, սպորտ, ժամանց և հանգիստ	2,1	91,0	2,1	90,0	1,9	84,5
Այլ տեսակի ծառայությունների մատուցում	1,7	74,1	1,7	74,0	1,7	73,8
Մասնավոր տնային տնտեսությունների գործունեություն, տնային վարձու աշխատողների ներգրավում՝ արտադրելով ապրանքներ և ծառայություններ սեփական սպառման համար	0,1	5,8	0,1	6,1	0,2	7,5

Դիտարկվող ժամանակահատվածում երկրի սոցիալական քաղաքականության առաջնահերթությունների շարքում էին կյանքի որակի պատշաճ մակարդակի ապահովումը, հասարակության մեջ սոցիալական բարենպաստ մթնոլորտի ձևավորումը, սոցիալական արդարության սկզբունքի պահպանումը, սոցիալական նպաստները, կարիքավորներին և աղքատության շեմից ցածր մարդկանց օգնություն ցուցաբերելը և այլն: Այս նպատակներն իրականացվում են ծնելիության մակարդակը բարձրացնելու և

**6. Բելառուսական պետականության արդիականացման հեռանկարները.
պետականաշինության և քաղաքացիական խոսույթի առանձնահատկությունները**

կյանքի տևողությունը բարելավելու խնդիրները լուծելու միջոցով, ինչպես նաև՝ աշխատուժի օգտագործման արդյունավետության բարձրացման, աշխատանքային պայմանների բարելավման, սոցիալական ենթակառուցվածքների զարգացման և բնակչության համար, հարմարավետ կենսապայմանների ստեղծման ճանապարհով (*Министерство труда и социальной защиты РБ 2018, Бурова 2018*):

2016-2018 թթ. Բելառուսում սոցիալական քաղաքականության մշակման և իրականացման գործում զգալի են եղել արհմիությունների դերակատարությունը (*Федерация Профсоюзов Беларуси 2019, Министерство труда и социальной защиты РБ 2019*): Մասնավորապես, Բելառուսի Հանրապետության կառավարության, գործատուների հանրապետական միավորումների և արհմիությունների միջև ստորագրվեց «Գլխավոր համաձայնագիրը» 2019-2021 թթ. համար (*Министерство труда и социальной защиты РБ 2019*), որով ամրագրվեցին արհմիությունների հիմնական գործառույթները: Դա ժողովրդավարական զգալի նշանակություն կունենա հատկապես սոցիալ-աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտներում և այդ ժամանակահատվածում երկրի արհմիություններին հնարավորություն կտա պատշաճ ներգրավվածություն ունենալ սոցիալ-տնտեսական քաղաքականության մշակման ու իրականացման շրջափուլերին:

6.4 Կրթական համակարգն ինտեգրման ճանապարհին

Բելառուսի Հանրապետությունն ունի միջազգային համագործակցության դինամիկ օրակարգ, որը ներառում է գիտության, կրթության և տեխնոլոգիաների բնագավառների հիմնական նպատակները, խնդիրներն ու առաջնահերթ գործընկերներին: Չնայած Բելառուսի միջազգային գիտատեխնիկական համագործակցությունը հավատարիմ է բազմակողմանիու-

թյան սկզբունքներին, այնուամենայնիվ Ռուսաստանի՝ որպես հիմնական գործընկերոջ դերը, անհերքելի է և տարիների ընթացքում ավելանում է¹⁷⁸:

Միջազգային գիտատեխնիկական, հետազոտական և կրթական համագործակցության եվրոպական վեկտորն իրականացվում է ԵՄ անդամ երկրների և ԱԳ երկրների հետ համագործակցության միջոցով: Դրա վառ օրինակներից է Բելառուսի գիտնականների և սովորողների մասնակցությունը ԵՄ գիտակրթական և հետազոտական ծրագրերին, ԱԳ տարածաշրջանային պլատֆորմին, ԵՄ-ի հետ երկկողմ փոխգործակցության խորացումը և այլն: Ընդ որում, Բելառուսը ԵՄ 15 երկրների հետ ունի գիտակրթական ոլորտում երկկողմ միջազգային պայմանագրեր, որոնց զգալի մասն ընդգրկում է նաև առևտրատնտեսական և մշակութային բնույթի հարցերի լայն շրջանակ: Ակնհայտ է, որ 2010-2016 թթ. Բելառուսի դեմ ԵՄ պատժամիջոցները խոչընդոտեցին գիտության և կրթության ոլորտներում համապատասխան պայմանագրային հենքի զարգացումը՝ սահմանափակելով գործընկերների հետ ծրագրերի ընդլայնումը և ֆինանսավորումը: Իսկ պատժամիջոցների վերացումից հետո երկրի գիտակրթական համակարգի համար բացվեցին միջազգային գիտատեխնիկական ինտեգրման և համագործակցության նոր հեռանկարներ:


2016-2018 թթ. երկրի գիտակրթական քաղաքականությունն ուղղված էր հետևյալ հիմնախնդիրների կարգավորմանը. 1) Բելառուսական գիտնականների ինտեգրումը եվրոպական գիտական ցանցերին և նոր գործընկերության ձևավորումը՝ նախագծերի բարեհաջող իրականացման և նոր հայտերի համատեղ ներկայացման նպատակով, 2) «Հորիզոն 2020»-ին մասնակցության բարենպաստ միջավայրի ձևավորումը՝ աջակցելով գիտական հետազոտությունների զարգացմանը երկրի գերակա ոլորտներում, 3) մի շարք միջոցառումներ իրականացվեցին, որոնք նպաստել են գիտակրթական ոլորտի պահպանմանն ու զարգացմանը որպես ամբողջություն:

¹⁷⁸ Տե՛ս Բելառուսի Հանրապետության կրթության նախարարության պաշտոնական կայք՝ <http://edu.gov.by/sistema-obrazovaniya/upravlenie-mezhdunarodnogo-sotrudnichestva/otchety/index.php> (24.06.2019):

**6. Բելառուսական պետականության արդիականացման հեռանկարները.
պետականաշինության և քաղաքացիական խոսույթի առանձնահատկությունները**

Գծապատկեր 6

Բելառուսի Կրթական գործոնների ինդեքսները (2000-2018 թթ.)*



2017 թթ. Բելառուսի Կրթական գործոնների ինդեքսի (Կ_{գի}) ցուցանիշները նախորդ տարվա համեմատ նվազել են (տե՛ս Գծապատկեր 6, Աղյուսակ 1): Գծապատկեր 6-ից երևում է, որ 2016 թ.-ին Կ_{գի}-ին աճել է՝ դրական ազդեցություն ունենալով ժողովրդավարական փոխակերպումների վրա: Ուշագրավ է, որ չնայած 2000-2017 թթ. Կ_{գի}-ի կորի տատանումներին, այնուամենայնիվ 2000 թ.-ին և 2017 թ.-ին Կ_{գի}-ին արձանագրել է համարժեք ցուցանիշ (տե՛ս Գծապատկեր 6, Աղյուսակ 1):

2016-2017 թթ. Բելառուսի մարդկային զարգացման համաթվի (ՄՀՀ) կրթության բաղադրիչը նախորդ տարվա համեմատ բարելավվել է՝ 0,838 միավոր, իսկ պետության ծախսերը կրթության ոլորտում կազմել են ՀՆԱ-ի 5%¹⁷⁹:

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները: Որոշ տվյալների բացակայությամբ պայմանավորված՝ 2018 թ. Կ_{գի}-ն ենթակա է ճշգրտմանը:

¹⁷⁹ Տե՛ս ՄԱԿ-ի ՄՀՀ զեկույցի պաշտոնական կայք՝ <http://hdr.undp.org/en/data> (16.06.2019):

Բելառուսի կրթական քաղաքականության արդյունավետության բարձրացման առումով կարևոր նշանակություն է ունեցել «2016-2020 թթ. կրթությունը և երիտասարդության քաղաքականությունը» պետական ծրագրի հաստատումը¹⁸⁰: Այն սահմանում է կրթության և երիտասարդության հետ տարվող աշխատանքների ոլորտում պետական քաղաքականության մշակման և իրականացման հիմնական ուղղություններն ու գերակայությունները¹⁸¹:

Աղյուսակ 5

Կրթության հիմնական ցուցանիշները¹⁸²

	2016/ 2017	2017/ 2018	2018/ 2019
Նախադպրոցական հաստատությունների քանակը	3879	3812	3803
դրանցում երեխաներ, 1000 երեխա	418,1	426,3	435,1
Ընդհանուր միջնակարգ կրթության հաստատությունների քանակը	3155	3067	3 035
դրանցում սովորողներ, 1000 մարդ	982,3	994,5	1010,4
Մասնագիտական-տեխնիկական կրթական հաստատությունների քանակը	196	182	180
դրանցում սովորողներ, 1000 մարդ	70,3	66,9	65,7
Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	230	226	226
դրանցում սովորողներ, 1000 մարդ	117,8	114,1	113,3
Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	51	51	51
դրանցում ուսանողներ, 1000 մարդ	313,2	284,3	268,1

¹⁸⁰ Տե՛ս Բելառուսի Հանրապետության կրթության նախարարության պաշտոնական կայք՝ <http://edu.gov.by/about-ministry/obshchaya-informatsiya> (24.06.2019):

¹⁸¹ Տե՛ս նույն տեղում:

¹⁸² Տվյալների աղբյուրը՝ Բելառուսի Հանրապետության ազգային վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք՝ http://www.belstat.gov.by/ofitsialnaya-statistika/solialnaya-sfera/obrazovanie/godovye-dannye_5/osnovnye-pokazateli-obrazovaniya (24.06.2019):

**6. Բելառուսական պետականության արդիականացման հեռանկարները.
պետականաշինության և քաղաքացիական խոսույթի առանձնահատկությունները**

Աղյուսակ 5-ից երևում է, որ, ըստ կրթության հիմնական ցուցանիշների, կրճատվել են նախադպրոցական, ընդհանուր միջնակարգ կրթության, մասնագիտական-տեխնիկական կրթական և միջին մասնագիտական հաստատությունների քանակը:

2016-2018 թթ. Բելառուսում կրթական համակարգի առաջընթացի համատեքստում առանցքային նշանակություն են ունեցել 2016-2020 թթ. նորարարական զարգացման պետական ծրագիրը¹⁸³ և մշակված միջոցառումների փաթեթը՝ 2017 թ.-ին ազգային նորարարական համակարգի զարգացման համար: Այս առումով նշանակալից էր գիտատեխնիկական տեղեկատվության համակարգի կատարելագործումը¹⁸⁴: Դրա շնորհիվ ապահովվեցին ազգային տեղեկատվական ռեսուրսների ձևավորումը և արդյունավետ օգտագործումը, դրանց ինտեգրումը համաշխարհային տեղեկատվական տարածքին, ինչպես նաև բելառուսական օգտատերերի համար տեղեկատվության համաշխարհային ռեսուրսների հասանելիությունը՝ նպաստելով տեղեկատվական ապրանքների և ծառայությունների շուկայի ստեղծմանը: Այս նպատակի իրագործման համար կարևորվել են նաև գիտատեխնիկական գրադարանների, տեղեկատվական կենտրոնների և հիմնադրամների արդիականացման ծրագրերը: Դրանց շնորհիվ կատարելագործվել են նախադպրոցական, ընդհանուր միջնակարգ, մասնագիտական և բարձրագույն, ինչպես նաև հետբուհական, մեծահասակների լրացուցիչ և ներառական կրթության հիմնախնդիրները:

¹⁸³ Տե՛ս Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի պաշտոնական կայք՝ <http://www.gknt.gov.by/deyatelnost/innovatsionnaya-politika/gpir/> (24.06.2019):

¹⁸⁴ Տե՛ս Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի պաշտոնական կայք՝ <http://www.gknt.gov.by/deyatelnost/obespechenie-razvitiya-gsnti.php> (24.06.2019):

6.5 Առողջապահության արդիականացման մարտահրավերները

Ժամանակակից սոցիալ-ժողովրդագրական գործընթացները, տնտեսական աճը և առողջապահական տեխնոլոգիաների զարգացումը լուրջ մարտահրավերներ են Բելառուսի առողջապահական համակարգի համար: Հասարակությունն առողջապահության համակարգից ակնկալում է արդյունավետ հակազդում բնակչության մահացության մակարդակի աճի միտմանը՝ հատկապես աշխատանքային տարիքում: Թեև մոր և մանկան մահացության մակարդակը վերջին տարիներին նվազել է, այնուամենայնիվ այս ձեռքբերումը պահպանելու և ավելի բարելավելու համար մեծ ջանքեր են պահանջվում Բելառուսի առողջապահական համակարգից: Երկրի բնակչության կառուցվածքում տարեցների տեսակարար կշռի աճը նույնպես ենթադրում է առողջապահական համակարգում մի շարք արմատական փոփոխություններ՝ ավելի մեծ ծախսեր հիվանդությունների կանխարգելման, բժշկական և սոցիալական ծառայությունների համար: Ավելին, տնտեսական աճը նույնպես կնպաստի, որ պետությունը, բիզնեսը, բնակչության և բժշկական մասնագիտական համայնքներն առավել որակյալ բժշկական օգնություն կազմակերպեն և ավելացնեն այդ ոլորտին տրվող ֆինանսավորումը:


2016-2018 թթ. Բելառուսի առողջապահական գործոնների ինդեքսի (Ա_{ԳԻ}) կորն աճել է՝ 2000-2018 թթ. ժամանակահատվածում արձանագրելով ամենաբարձր ցուցանիշները (տե՛ս Գծապատկեր 7, Աղյուսակ 1): Դա բացատրվում է կյանքի սպասվող տևողության ցուցանիշների բարելավմամբ և ՀՆԱ-ի նկատմամբ առողջապահության ոլորտում ծախսերի ավելացմամբ¹⁸⁵:

¹⁸⁵ Տվյալների աղբյուրը՝ Բելառուսի Հանրապետության ազգային վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք՝ http://www.belstat.gov.by/ofitsialnaya-statistika/solialnaya-sfera/zdravoohranenie_2/godovye-dannye (20.06.2019):

**6. Բելառուսական պետականության արդիականացման հեռանկարները.
պետականաշինության և քաղաքացիական խոսույթի առանձնահատկությունները**

Գծապատկեր 7

Բելառուսի Առողջապահական գործոնների ինդեքսները (2000-2018 թթ.)*



Այս համատեքստում նշանակալի է «2016-2020 թթ. Բելառուսի Հանրապետության ժողովրդի առողջությունը և ժողովրդագրական անվտանգությունը» պետական ծրագիրը¹⁸⁶: Այն նախատեսում է բնակչության առողջության բարելավում, առողջությանը սպառնացող ռիսկի գործոնների հանրային իրազեկում, առողջ ապրելակերպի խթանում, ընտանեկան արժեքների ամրապնդում, բնակչության մահացության նվազում՝ հատկապես աշխատանքային տարիքում, կյանքի սպասվող տևողության աճ, առողջապահական համակարգի ծառայությունների որակի և մատչելիության բարելավման, ներքին միգրացիոն գործընթացների օպտիմալացման և այլ հիմնախնդիրների լուծում¹⁸⁷: Դրանք երկրի կառավարությունից պահանջում են մոտ ապագայում նախատեսել առողջապահական ծախսերի ավելացում՝ միաժամանակ վերահսկելով ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը: Քանզի բժշկական տեխնոլոգիաների զարգացումն ու նոր սերնդի

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները: Որոշ տվյալների բացակայությամբ պայմանավորված՝ 2018 թ. ԱԳԻ-ն ենթակա է ճշգրտմանը:

¹⁸⁶ Տե՛ս Բելառուսի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական կայք՝ <http://minzdrav.gov.by/ru/ministerstvo/gosudarstvennye-programmy/-index.php> (20.06.2019):

¹⁸⁷ Տե՛ս նույն տեղում:

դեղամիջոցների հայտնվելը մեծացնելու են երկրում հիվանդությունների վաղ հայտնաբերման և բուժման հնարավորությունները: Միևնույն ժամանակ, այս ամենն էապես կնպաստի, որ Բելառուսում բժշկական ծառայությունների գները բարձրանան, որովհետև նոր տեխնոլոգիաների ճնշող մեծամասնությունը պահանջում է մեծ ներդրումներ և շարունակական ծախսեր:

2016-2018 թթ. Բելառուսի առողջապահության նախարարությունը աշխատանքներ է կատարել բժշկագիտական տեղեկատվական համակարգչային ցանցի զարգացման, բժշկական տեղեկատվական սերվերների համալրման, առողջապահական հիմնարկների համար տեղեկատվական ռեսուրսների արդիականացման ուղղություններով: Այդ ամենն իրականացվել է Հանրապետական գիտական բժշկական գրադարանի հեռահաղորդակցային հանգույցի հենքի վրա: Միևնույն ժամանակ, դա հնարավորություն է տվել գիտական և տեղեկատվական աջակցություն ցուցաբերել առողջապահական հաստատություններին՝ նրանց տեղեկացնելով բժշկական օգնության նոր մեթոդների մասին (ախտորոշում, բուժում, հիվանդությունների բժշկական կանխարգելում, հիվանդների բժշկական վերականգնում, պրոթեզավորում): Ուշագրավ է, որ Առողջապահության նախարարությունն անվճար և արագ մուտքագրում է տարբեր տեսակի բժշկական անհրաժեշտ տեղեկատվություն՝ կենտրոնացած մեկ տեղեկատվական ռեսուրսի՝ «MED.BY» բժշկական գիտական տեղեկատվական տիրույթում: Դա նվազագույնի է հասցնում պահանջվող տեղեկատվությունը գտնելու ժամանակը (*Ильина, Ильин 2017*): Հետևաբար, Բելառուսում աստիճանաբար կարմատավորվի ինտեգրված միջգերատեսչական մոտեցումը, որը պահանջում է առողջապահական, կրթական և սոցիալական պաշտպանության ենթակառուցվածքների, ՏԻՄ-երի և բիզնեսի միջև սերտ փոխգործակցություն:

Աղյուսակ 6-ից երևում է, որ, ըստ առողջապահական հիմնական ցուցանիշների, 2016-2018 թթ. նախորդ տարվա համեմատ ավելացել են բժիշկ մասնագետների, գործող բժիշկների և բժշկական միջին անձնակազմի թվաքանակը:

**6. Բելառուսական պետականության արդիականացման հեռանկարները.
պետականաշինության և քաղաքացիական խոսույթի առանձնահատկությունները**

Աղյուսակ 6

Առողջապահության հիմնական ցուցանիշները¹⁸⁸

	2016	2017	2018
Բժիշկ մասնագետների թվաքանակը (ընդամենը, հազար մարդ)	54,5	54,8	55,4
Բժիշկ մասնագետների ընդհանուր թվաքանակից գործող բժիշկների թվաքանակը			
ընդամենը, հազար մարդ	41,5	42,0	42,5
10000 բնակչի հաշվով	43,7	44,3	44,9
Աշխատողների միջին բժշկական անձնակազմի թվաքանակը			
ընդամենը, հազար մարդ	125,8	126,3	126,9
10000 բնակչի հաշվով	132,4	133,1	133,9
Հիվանդանոցային հիմնարկների քանակը	636	622	612
Հիվանդանոցային մահճակալների քանակը			
ընդամենը, հազար միավոր	80,3	80,0	79,5
10000 բնակչի հաշվով	84,5	84,2	83,9
Ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների քանակը	2 311	2 196	2 230

Դիտարկվող ժամանակահատվածում Բելառուսում շարունակվել է «ԲԵԼՄԵԴ» միջազգային տեխնիկական աջակցության նախագիծը, որը ֆինանսավորում է ԵՄ-ն, իսկ իրականացնում են ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը, ԱՀԿ-ն, ՅՈՒՆԻՍԵՖ-ը և այլ կազմակերպություններ¹⁸⁹: Դա նպաստել է Բելառուսում կանխարգելելու ոչ վարակիչ հիվանդությունները և խթանելու առողջ ապրելակերպը՝ օժանդակելով երկրի առողջապահական հա-

¹⁸⁸ Տվյալների աղբյուրը՝ Բելառուսի Հանրապետության ազգային վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք՝ http://www.belstat.gov.by/ofitsialnaya-statistika/solialnaya-sfera/zdravoohranenie_2 (22.06.2019):

¹⁸⁹ Տե՛ս Բելառուսի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական կայք՝ <http://minzdrav.gov.by/ru/ministerstvo/mezhdunarodnaya-deyatelnost/proekt-belmed.php> (20.06.2019):

մակարգի արդիականացմանը¹⁹⁰: Տեղին է նշել նաև Բելառուս-ԵՄ երկկողմ համագործակցության շրջանակներում իրականացվող «Բելառուսում բժշկական նշանակության արտադրանքի փորձարկման լաբորատորիաների միջազգային հավատարմագրման և առողջապահական աջակցության» գործողությունների տարեկան ծրագիրը¹⁹¹:

Վերջին տարիներին պետությունը մեծ ներդրումներ է կատարել երկրի առողջապահության ոլորտում, բայց բազմաթիվ են հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները: Այդ իսկ պատճառով նոր մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է արդիականացնել երկրի առողջապահության համակարգը՝ բարձրացնելով դրա տեխնոլոգիական, կազմակերպչական և մասնագիտական մակարդակը: Ուշագրավ է, որ Բելառուսում պետությունը, բիզնեսը, ՋԼՄ-ները, ՔՀԿ-ները և մասնագիտական բժշկական հանրությունը հետևողականորեն վարում են հիվանդությունների կանխարգելման քաղաքականություն՝ բարձրացնելով առողջության արժեքը քաղաքացիների առաջնահերթությունների համակարգում:

6.6 Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի զարգացման միտումները

Բելառուսի պետականաշինության արդի փուլում երկրի քաղաքական համակարգը բնութագրվում է ուժեղ նախագահական իշխանությամբ, որում նշանակալի են նաև կառավարության և խորհրդարանի ակտիվ մասնակցությունը, սակայն երկրի քաղաքական կյանքում կուսակցությունները և ՔՀԿ-ները նվազ դեր ունեն: Դա այն դեպքում, երբ պետականաշինության և բելառուսական հասարակության հետագա առաջընթացը պայմանավորված է պառլամենտարիզմի, բազմակուսակցական համակարգի և քաղաքացիավարական մշակույթի զարգացմամբ, դրանց ներուժի համարժեք օգտագործմամբ:

¹⁹⁰ Տե՛ս նույն տեղում:

¹⁹¹ Տե՛ս նույն տեղում:

**6. Բելառուսական պետականության արդիականացման հեռանկարները.
պետականաշինության և քաղաքացիական խոսույթի առանձնահատկությունները**

Դիտարկվող ժամանակահատվածում Բելառուսի քաղաքական փոխակերպումներում նշանակալի են եղել նաև ԵԱՏՄ-ին, ինչպես նաև Միութենական պետականաշինությանը վերաբերող ազգային և աշխարհաքաղաքական հարցերը: Դրանք վերաբերում էին Բելառուսի և Ռուսաստանի ինքնիշխանության և Միութենական պետության ինստիտուտների վերագրված ազգային բաղադրիչի հարաբերակցությունը: Թերևս եվրասիական գործընկերության և երկու երկրների միջև «միութենական» ինտեգրման ներկա վիճակը դժվար թե կարելի է համարել «խոստումնալից»: Այս համատեքստում Բելառուսի բազմավեկտոր արտաքին քաղաքականությունը նպաստել է երկրի ազգային շահերի իրականացմանը:


Բելառուսի քաղաքական համակարգի ժողովրդավարական փոխակերպումների պայմաններում երկրի նախագահի և քաղաքական ընտրանու համար առանձնահատուկ նշանակություն են ունեցել ԵՄ-ի հետ համակողմանի համագործակցությունը, քանզի Բելառուսի եվրաինտեգրման գործընթացների խորացման դեպքում մեծանում է ԵՄ-ի պարտավորությունները հանրապետության ֆինանսատնտեսական աջակցության և տեխնոլոգիական արդիականացման հարցերում:

2000-2018 թթ. Բելառուսի ժողովրդավարության մակարդակի ինդեքսի (ԺՄԻ) ուսումնասիրություններում նկատելի է ԺՄԻ կորի աճը (տե՛ս Գծապատկեր 8, Գծապատկեր 9, Աղյուսակ 1): Գծապատկեր 1-ից և 2-ից երևում է, որ այս ժամանակահատվածում Բելառուսի ԺՄԻ-ի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է 2018 թ.-ին, իսկ ամենացածրը՝ 2001 թ.-ին:

2017-2018 թթ. Բելառուսի ԺՄԻ-ի բարելավումը հիմնականում պայմանավորված էր Ք_{ԳԻ}-ի, Տ_{ԳԻ}-ի, Ա_{ԳԻ}-ի և Ա_{ԳԻ}-ի ենթահինդեքսների ցուցանիշների անընդմեջ աճով (տե՛ս Գծապատկեր 8, Գծապատկեր 9, Աղյուսակ 1): Այս առումով ԺՄԻ-ի Կ_{ԳԻ}-ի 2016 թ. ենթահինդեքսի ցուցանիշները նույնպես դրական ազդեցություն են ունեցել: Սակայն 2017 թ. ԺՄԻ-ի Կ_{ԳԻ}-ի կորի անկումը բացասաբար է ազդել երկրի քաղաքացիավարական իրավիճակի վրա:

Գծապատկեր 8

Բելառուսի ժողովրդավարության վրա ազդող Քաղաքական, Սոցիալական, Տնտեսական, Կրթական և Առողջապահական գործոնների ինդեքսները (2000-2018 թթ.)*




2016-2018 թթ. Բելառուսի քաղաքական վարչակարգի ժողովրդավարացման և պետականաշինության շրջափուլերում խնդրահարույց էին ոչ միայն ընդդիմադիր ուժերի և ՔՀԿ-ների քաղաքացիավարական մասնակցությունը, այլև նրանց կարողությունը՝ համախմբելու սոցիալական խմբերին և պաշտպանելու հասարակության անդամների շահերը: Մի կողմից՝ երկրի նախագահի գերակայությունը քաղաքական համակարգում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ճնշումները կուսակցությունների և ՔՀԿ-ների վրա, ինչպես նաև դրանց «վերևից» կառավարելու փորձերը բացասաբար են անդրադառնում քաղաքացիավարական վերահսկողության լիարժեք կայացման վրա: Մյուս կող-

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:
ԺՄԻ-ի գործոնների ինդեքսները համեմատելի են միայն ըստ միտումների:

**6. Բելառուսական պետականության արդիականացման հեռանկարները.
պետականաշինության և քաղաքացիական խոսույթի առանձնահատկությունները**

միջ՝ քաղաքացիական մշակույթի անբավարար մակարդակը, կուսակցու-
թյունների և ԲՀԿ-ների ցածր արդյունավետությունը հատվածական են ազ-
դում ներպետական գործընթացների վրա:

**Գծապատկեր 9
Բելառուսի Ժողովրդավարության մակարդակի ինդեքսը (2000-2018 թթ.)***



**6.7 Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի
ռեգրեսիոն վերլուծությունը**

Արուսյակ Ալեքսանյան, Աշոտ Ալեքսանյան

Ռեգրեսիոն վերլուծության միջոցով դուրս են բերվել Ժողովրդավարու-
թյան մակարդակի չափման մոդելում ընդգրկված այն փոփոխականները,

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն Բելառուսի ժողովրդավարության մակարդակի վրա:

Բեգրեսիոն վերլուծությամբ ստացված տվյալների համաձայն՝ նշանակալի կապ է հաստատվել ԺՄԻ-ի* և քաղաքական, ինչպես նաև տնտեսական և սոցիալական գործոնների մի շարք փոփոխականների միջև: Ինչ վերաբերում է մոդելում ընդգրկված կրթական և առողջապահական գործոններին, ապա դրանց և ԺՄԻ-ի միջև նշանակալի կապեր չեն հաստատվել:

Ըստ տվյալների վերլուծության արդյունքների՝ մոդելում ընդգրկված քաղաքական ցուցանիշներից նշանակալի կապ է հաստատվել ԺՄԻ-ի և Մամուլի ազատության ինդեքսի փոփոխականների միջև (տե՛ս Աղյուսակ 7):

Աղյուսակ 7

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (Ք_դ-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R²	Sig.	N
Մամուլի ազատություն	0,006	0,234	0,010	24

Մոդելում ընդգրկված տնտեսական գործոններից նշանակալի կապ է հաստատվել ԺՄԻ-ի և տնտեսության վարկավորման, ինչպես նաև Տնտեսական ազատության ինդեքսի միջև (տե՛ս Աղյուսակ 8):

Աղյուսակ 8

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (S_դ-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R²	Sig.	N
Տնտեսության վարկավորման ծավալներ (ՀՆԱ%)	0,004	0,627	0,000	24
Տնտեսական ազատության ինդեքս	0,009	0,766	0,000	24

Սոցիալական գործոնների ինդեքսի փոփոխականներից նշանակալի կապ է դիտվել ԺՄԻ-ի և իրական աշխատավարձի, ինչպես նաև Ջինի ինդեքսի միջև (տե՛ս Աղյուսակ 9):

* ԺՄԻ-ն ժողովրդավարության մակարդակի ինդեքսն է, որից դուրս է բերվում համապատասխան անկախ փոփոխականը յուրաքանչյուր զույգային ռեգրեսիոն վերլուծության ժամանակ:

6. Բելառուսական պետականության արդիականացման հեռանկարները. պետականաշինության և քաղաքացիական խոսույթի առանձնահատկությունները

Աղյուսակ 9

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (U_{գր}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R²	Sig.	N
Իրական աշխատավարձ (100 ԱՄՆ դոլար)	0,028	0,724	0,000	24
Ջինի ինդեքս	-2,65	0,636	0,000	24

Ինչպես նշվեց, Բելառուսի ժողովրդավարության մակարդակի վրա նշանակալի ազդեցություն է ունեցել մամուլի ազատության ցուցանիշը: Սա նշանակում է, որ այդ ինդեքսի փոփոխությունը 1 միավորով կբերի ԺՄԻ-ի նվազմանը 0,006 միավորով: Իսկ ինչ վերաբերում է բելառուսական ՋԼՄ-ների վիճակին, ապա պետք է նշել, որ չնայած այս թեմայի շուրջ բազմաթիվ և բուռն քննարկումներին, միանգամայն «հստակ» է. դրանց գործունեությունը համահունչ է բելառուսական տնտեսության ընդհանուր վիճակին, քաղաքականությանն ու հասարակական կարծիքին: Այս տեսակետից երկրի ՋԼՄ-ները դարձել են ավտորիտար վարչակարգի ժողովրդավարացման գործիք, բայց գործիք, որը դեռևս ակտիվորեն ղեկավարում են պետությունը և բիզնեսը՝ բավարար չափով հաշվի չառնելով ԲՀԿ-ների շահերը: Ակնհայտ է, որ ՋԼՄ-ների տնտեսական կախվածությունն ազդում է տեղեկատվության որակի վրա, իսկ երկրի կառավարող ընտրանին օգտագործում է այդ ամենը հասարակական կարծիքը մանիպուլյացիաների ենթարկելու համար:

Բելառուսի ԺՄԻ-ի տնտեսական գործոններից ժողովրդավարության վրա նշանակալիորեն ազդում են տնտեսության վարկավորման ծավալների ավելացումը և տնտեսական ազատության ցուցանիշը: Սա նշանակում է, որ տնտեսության վարկավորման ծավալների աճը 1%-ով և Տնտեսական ազատության ինդեքսի դրական փոփոխությունը 1 միավորով կբերեն ԺՄԻ-ի աճին՝ համապատասխանաբար 0,004 և 0,009 միավորներով:

Բելառուսի ԺՄԻ-ի սոցիալական գործոններից ժողովրդավարության վրա նշանակալիորեն ազդում են իրական աշխատավարձը և Ջինի ինդեքսը: Իրական աշխատավարձի աճը 100 ԱՄՆ դոլարով, իսկ Ջինի գործակցի նվազումը 0,1 միավորով կբերեն ԺՄԻ-ի աճին համապատասխանաբար 0,028 և 0,27 միավորներով:

Բելառուսում ԺՄԻ-ի բարելավման առումով արդյունավետ կլինի ուշադրություն դարձնել քաղաքական, տնտեսական և սոցիալական վերոհիշյալ գործոններին, քանզի դրանց համարժեք դիտարկումները կնպաստեն Բելառուսի պետականության արդիականացման և ինքնիշխանության համար ռազմավարական նշանակություն ունեցող հիմնախնդիրների կարգավորմանը: Այս առումով Բելառուսում պետականաշինության, քաղաքացիական հասարակության և ժողովրդավարության զարգացման օրինաչափությունները որոշակի հաջորդականությամբ համակցված գործոնների համակարգ են:

Գրականության ցանկ

- **Aleksanyan, Ashot** (2018) “Civiliarchic Factors of the Formation of Civil Society in the Space of the Eurasian Economic Union (EAEC): Features of Civil Culture or Lack of Participation?” In *Политика развития, государство и мировой порядок: Материалы VIII Всероссийского конгресса политологов*, под общ. ред. **О. В. Гаман-Голутвиной, Л. В. Сморгунова, Л. Н. Тимофеевой**. Москва: Аспект Пресс: 611-612.
- **Bruns, Bettina** and **Dorit Happ** (2016) “EU Extra-territorialization and Securitization: What Does It Mean for Ukraine and Belarus?.” In *European Neighbourhood Policy. New Geographies of Europe*, **Bettina Bruns, Dorit Happ** and **Helga Zichner**, 139-159. London: Palgrave Macmillan.
- **Council of Europe** (2019) “World Congress Against the Death Penalty: Round table on “Why death penalty continues to be applied in Belarus?.” Accessed June 24, 2019. <https://www.coe.int/en/web/human-rights-rule-of-law/-/world-congress-against-the-death-penalty-round-table-on-why-death-penalty-continues-to-be-applied-in-belarus->.
- **Dimitrova, Antoaneta** et al (2018) “Statehood, State Capacity and Limited Access Orders: Comparing Belarus and Ukraine.” EU-STRAT Working Paper 12: 1-66.
- **Dobrinsky, Rumen** (2016) “Belarus’ unorthodox political and economic transformation.” In *The Belarus economy: the challenges of stalled reforms*, edited by Rumen Dobrinsky, 23-62. Vienna: The Vienna Institute for International Economic Studies, Research Reports, No. 413.
- **EEAS** (2016) “Parliamentary elections in Belarus: Statement by the Spokesperson on the parliamentary elections in Belarus.” Accessed June 24, 2019. https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/9692/parliamentary-elections-in-belarus_en.

**6. Բելառուսական պետականության արդիականացման հեռանկարները.
պետականաշինության և քաղաքացիական խոսույթի առանձնահատկությունները**

- **European Union** (2018) Human rights in Belarus: The EU's role since 2016. European Parliament: Policy Department, Directorate-General for External Policies.
- **Human Rights Committee** (2017) “Fifth periodic report submitted by Belarus under article 40 of the Covenant pursuant to the optional reporting procedure, due in 2016.” Accessed June 24, 2019. https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treaty-bodyexternal/Download.aspx?symbolNo=CCPR%2fC%2fBLR%2f5&Lang=en.
- **Matsevich-Dukhan, Iryna** (2016) “Mapping European Cultural Actors: Addressing the Case of Belarus.” In European Neighbourhood Policy. New Geographies of Europe, editors **Bettina Bruns, Dorit Happ** and **Helga Zichner**, 207-230. London: Palgrave Macmillan.
- **Moshes, Arkady** and **Ryhor Nizhnikov** (2019) “The Belarusian paradox: A country of today versus a president of the past.” FIIA Briefing paper 265: 1-8.
- **OSCE/ODIHR** (2016) Election Observation Mission Final Report: Republic of Belarus. Parliamentary Elections, 11 September 2016. Warsaw.
- **OSCE/ODIHR** (2018) The Death Penalty in the OSCE Area: Background Paper 2018. Warsaw.
- **Shraibman, Artyom** (2018) The House That Lukashenko Built. The Foundation, Evolution, and Future of the Belarusian Regime. Moscow: Carnegie Endowment for International Peace.
- **The Committee of Ministers of the Council of Europe** (2016) Council of Europe: Action Plan for Belarus 2016-2018. Strasbourg: Office of the Directorate General of Programmes.
- **USAID** (2017) “2016 Civil Society Organization (CSO) Sustainability Index for Central and Eastern Europe and Eurasia.” Washington, D.C.: U.S. Agency for International Development.
- **USAID** (2018) “2017 Civil Society Organization (CSO) Sustainability Index for Central and Eastern Europe and Eurasia.” Washington, D.C.: U.S. Agency for International Development.
- **Vyatr, Jerzy** (2017) “New and Old Authoritarianism in a Comparative Perspective.” Журнал Белорусского государственного университета. Социология 4: 26-33.
- **Абраменко, Елена Г.** (2017) “Институционализация парламентаризма в процессе постсоветской трансформации политической системы в Республике Беларусь”. Научные труды Республиканского института высшей школы 16: 3-10.
- **Андрощук, Сусанна В.** (2019) “Трансформация политического и экономического диалога Республики Беларусь и Украины (1991-2018 гг.)”. Вести Института предпринимательской деятельности 1 (20): 112-117.
- **Анохина, Виктория В.** (2018) “Белорусская модель социальной трансформации в условиях глобализации рисков”. Журнал Белорусского государственного университета. Философия. Психология 1: 41-52.

- **Антонович, Иван И.** (2018) “Константность истории и противоречивость ее интерпретаций”. Журнал Белорусского государственного университета. Социология 2: 30-34.
- **Беспалая, Мария А.** (2018) “Становление белорусской государственности: истоки, условия, формы”. Веснік Беларускага дзяржаўнага ўніверсітэта культуры і мастацтваў 2 (30): 5-13.
- **Бурова, Светлана Н.** (2018) “Гендерные исследования в Беларуси: история, социальный контекст, персоны”. Журнал Белорусского государственного университета. Социология 1: 161-168.
- **Буховец, Олег Г.** (2016) “Полноценная интеграция состоится”. Мир перемен 4: 19-23.
- **Бущик, Василий В.** (2017) “Особенности политических партий в Беларуси и России”. Весці БДПУ. Серыя 2. Гісторыя. Філасофія. Паліталогія. Сацыялогія. Эканоміка. Культуралогія 3 (93): 19-23.
- **Власенко, Максим Н.** (2018) “Сопряженность монетарной политики и макропруденциального регулирования: теоретический анализ и опыт Беларуси”. Белорусский экономический журнал 3 (84): 43-59.
- **Гавриков, Андрей В., Игорь В. Котляров** (2017) “Институционализация партий в Беларуси: возможности и политические реалии”. Вестник Белорусского государственного экономического университета 2 (121): 107-115.
- **Долинина, Татьяна Н.** (2019) “Беларусь: на пути к инклюзивному развитию”. Белорусский экономический журнал 1 (86): 4-29.
- **ЕЭК** (2017a) “Годовой отчет 2017: формируя цифровое пространство”. Дата доступа: 25.06.2019.
<http://www.eurasiancommission.org/ru/Documents/Годовой%20отчет%202017.pdf>.
- **ЕЭК** (2017b) “Доклад по итогам 2016 года”. Дата доступа: 25.06.2019.
http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_makroec_pol/economyViews/Pages/Архив%20Годового%20доклада.aspx.
- **ЕЭК** (2018a) “Доклад по итогам 2017 года”. Дата доступа: 25.06.2019.
http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_makroec_pol/economyViews/Pages/Архив%20Годового%20доклада.aspx.
- **ЕЭК** (2018b) “Аналитический доклад за 2017 год”. Дата доступа: 25.06.2019.
http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_makroec_pol/economyViews/Pages/Архив%20Годового%20доклада.aspx.
- **Ильина, Елена М., Ильин Михаил В.** (2017) “Политико-управленческие аспекты процесса цифровой трансформации в Республике Беларусь”. Научные труды Республиканского института высшей школы 16: 61-70.
- **Кийко, Николай В., Татьяна Г. Терещенко** (2016) “Антикоррупционная политика и законодательство Республики Беларусь”. Вестник института: преступление, наказание, исправление 1 (33): 38-45.

**6. Բելառուսական պետականության արդիականացման հեռանկարները.
պետականաշինության և քաղաքացիական խոսույթի առանձնահատկությունները**

- **Ласточкина, Ксения А.** (2018) “Стратегия и принципы демократизации нормотворческой деятельности как направления правовой политики Республики Беларусь”. *Право.by* 4 (54): 10-17.
- **Малышев, Дмитрий В.** (2019) “Политико-правовая система современной Республики Беларусь”. *Россия и новые государства Евразии* 1 (42): 103-111.
- **Министерство труда и социальной защиты РБ** (2018) “Информация о результатах реализации в 2018 году: Государственной программы о социальной защите и содействии занятости населения на 2016-2020 годы”. Дата доступа: 25.06.2019. <http://mintrud.gov.by/system/extensions/spaw/uploads/files/otchet-programme-2018-itog-24.06.2019.pdf>.
- **Министерство труда и социальной защиты РБ** (2019) “Генеральное соглашение между Правительством Республики Беларусь, Республиканскими объединениями нанимателей и профсоюзов на 2019-2021 годы”. Дата доступа: 25.06.2019. <http://mintrud.gov.by/system/extensions/spaw/uploads/files/GS-2019-2021.pdf>.
- **Наматбекова, Нурзат М., Сергей Г. Сергеев** (2019) ““Принудительная демократизация”: истоки, риски и последствия”. *Вестник Поволжского института управления* 19 (1): 19-25.
- **Неменский, Олег Б., Вячеслав М. Холодков** (2017) “Проблемы российско-белорусской экономической и политической интеграции”. *Проблемы национальной стратегии* 4 (43): 11-47.
- **Пасюкевич, Мария В.** (2018) “Привлечение иностранных инвестиций как элемент повышения конкурентоспособности реального сектора экономики Республики Беларусь”. *Журнал Белорусского государственного университета. Экономика* 1: 40-48.
- **Рудый, Кирилл В.** (2019) “Беларусь-Китай: сдвиги в экономическом сотрудничестве.” *Белорусский экономический журнал* 2 (87): 38-51.
- **Самусевич, Ольга М.** (2017) “Феномен речевой агрессии в белорусской прессе”. *Медиалингвистика* 2 (17): 41-51.
- **Свиридов, Артем В.** (2016) “Белорусская внутренняя политика в контексте внешних вызовов”. *Научные труды Республиканского института высшей школы* 15: 111-118.
- **Скриба, Андрей С.** (2016) “Неявные предпосылки к ослаблению союзнических отношений Беларуси с Россией”. *Международные отношения* 2: 139-148.
- **Сошникова Ирина В., Владимир И. Шерпаев, Владимир Ф. Щелоков** (2019) “Опыт строительства Союзного государства России и Беларуси для развития евразийской интеграции”. *Эко-потенциал* 1 (25): 211-221.
- **Стризов, Александр Л.** (2016) “Политика международной интеграции: объективные ограничения, возможности, риски (опыт Беларуси)”. *Вестник Воронежского государственного университета. Серия: История. Политология. Социология* 1: 108-114.

- **Тереник, Ольга Д.** (2018) “Местное самоуправление как элемент конституционного строя в Республике Беларусь и Республике Казахстан: общее и особенное”. Вестник Гродненского государственного университета имени Янки Купалы. Серия 4. Правоведение 8 (3): 85-95.
- **Ткалич, Татьяна** (2019) “Прогнозирование развития цифровой экономики в Республике Беларусь”. Общество и экономика 3: 109-127.
- **Федерация Профсоюзов Беларуси** (2019) “Социальное партнерство”. Дата доступа: 25.06.2019. https://1prof.by/about/social_part.
- **Хамутовская, Светлана В.** (2018) “Избирательная система Республики Беларусь в зеркале прикладных социологических исследований”. Весті БДПУ. Серія 2. Гісторыя. Філасофія. Паліталогія. Сацыялогія. Эканоміка. Культуралогія 1 (95): 55-60.
- **Шурубович, Алексей В.** (2018a) “Международный транзит в экономической модели Белоруссии”. Мир перемен 2: 174-189.
- **Шурубович, Алексей В.** (2018b) “Международный транзит как фактор экономического развития Белоруссии”. ЭТАП: экономическая теория, анализ, практика 4: 102-116.
- **Ալեքսանյան, Աշոտ** (2015) «Բելառուսի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը»: Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատական վերլուծությունը մարդու իրավունքների և ժողովրդավարացման համատեքստում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ուկրաինա, Մոլդովա), խմբ. Ա. Ալեքսանյան, 124-142, Երևան: ԵՊՀ հրատ.:
- **Ալեքսանյան, Աշոտ** (2016) «Բելառուսի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը»: Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատական վերլուծությունը մարդու իրավունքների և ժողովրդավարացման համատեքստում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ուկրաինա, Մոլդովա), խմբ. Ա. Ալեքսանյան, 166-182, Երևան: ԵՊՀ հրատ.:

7. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԶՍՊՄԱՆ ԵՎ ԱՆԱԶԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՓՈՒԼԵՐԸ ՂԱԶԱԽՍՏԱՆՈՒՄ. ԿԱՌԱՎԱՐԵԼԻ ԵՎ ՓՈՓՈԽՎՈՂ ԻՇԽԱՆԱԿԱՐԳ

ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ժամանակակից համաշխարհայնացման և տարածաշրջանային ինտեգրման գործընթացներն արագացրին Ղազախստանի քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային, գիտակրթական և այլ ոլորտների արդիականացումը: Կենտրոնական Ասիայի տարածաշրջաններում աշխարհաքաղաքական իրավիճակի արմատական փոփոխություններն ազդեցին ղազախստանյան անցումային հասարակության ինստիտուտների, մշակույթի, արժեքների և նորմերի վրա:

2016-2018 թթ. Ղազախստանի քաղաքական համակարգի ժողովրդավարացման նախադրյալներն առանձնակի հետաքրքրություն են ներկայացրել Կենտրոնական Ասիայի մյուս երկրներում նմանատիպ գործընթացների համեմատությամբ: Դրանցում արտացոլված են եղել պահպանողականության և ազատականացման ընդհանրություններն ու առանձնահատկությունները, որոնք Ղազախստանը դարձրել են Կենտրոնական Ասիայի հաջողակ, ազդեցիկ և կայուն զարգացող պետություն: Այս երկրի փորձը հետաքրքիր է այնքանով, որ Ղազախստանին հաջողվել է որոշակիորեն հաղթահարել ավանդական հասարակության սոցիալական, էթնոազգային, կրոնական և գաղափարական բաժանումները: Սակայն դիտարկվող ժամանակահատվածում երկրի նախագահին և կառավարող ընտրանուն դեռևս չի հաջողվել հրաժարվել ներպետական կոնֆլիկտները դիմակայու-

**Ժամանակակից ժողովրդավարության համախմբման մարտահրավերները.
ԺՄԻ համեմատական վերլուծություն**

թյամբ կարգավորելու մոդելից՝ փոխզիջումը դարձնելով քաղաքականության սուբյեկտների միջև փոխգործակցության հիմնական մեթոդ:

Աղյուսակ 1

Ղազախստանի Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական, Կրթական ու Առողջապահական գործոնների և ժողովրդավարության մակարդակի ինդեքսները (2000-2018 թթ.)*

Տարեթիվ	Ք_{ԳԻ}	Տ_{ԳԻ}	Ս_{ԳԻ}	Կ_{ԳԻ}	Ա_{ԳԻ}	ԺՄԻ
2000	0,318	0,557	0,553	0,436	0,099	0,395
2001	0,311	0,599	0,551	0,439	0,072	0,400
2002	0,301	0,586	0,576	0,441	0,086	0,397
2003	0,303	0,551	0,593	0,427	0,085	0,389
2004	0,296	0,668	0,622	0,413	0,109	0,420
2005	0,305	0,647	0,646	0,423	0,098	0,421
2006	0,296	0,721	0,675	0,449	0,080	0,441
2007	0,316	0,722	0,723	0,460	0,049	0,452
2008	0,321	0,723	0,755	0,444	0,092	0,461
2009	0,338	0,659	0,759	0,471	0,156	0,462
2010	0,328	0,574	0,793	0,461	0,118	0,434
2011	0,288	0,607	0,828	0,466	0,123	0,431
2012	0,280	0,604	0,871	0,471	0,171	0,437
2013	0,303	0,603	0,891	0,465	0,185	0,450
2014	0,325	0,563	0,867	0,470	0,213	0,449
2015	0,328	0,566	0,817	0,464	0,248	0,449
2016	0,324	0,664	0,730	0,477	0,286	0,469
2017	0,328	0,498	0,761	0,474	0,303	0,432
2018	0,330	0,509	0,767	0,474	0,309	0,437

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

Ք_{ԳԻ}-ի, Տ_{ԳԻ}-ի, Ս_{ԳԻ}-ի, Կ_{ԳԻ}-ի, Ա_{ԳԻ}-ի և հետևաբար դրանց հիման վրա հաշվարկված ԺՄԻ-ի որոշ տարիների արժեքները, հնարավոր է, աննշան տարբերվեն նախորդ հրապարակման համապատասխան տարիների արժեքներից՝ թարմացված և նոր տվյալների ներմուծմամբ պայմանավորված նվազագույն և առավելագույն արժեքների փոփոխման հետևանքով:

**7. Ժողովրդավարացման զսպման և անազատականության շրջափուլերը
Ղազախստանում. կառավարելի և փոփոխվող իշխանակարգ**


Դիտարկվող ժամանակահատվածում ժամանակակից Ղազախստանի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում հասարակական ինստիտուտների ժողովրդավարական զարգացումներում զգալի են եղել քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթական և առողջապահական գործոնները (տե՛ս Աղյուսակ 1): Ղազախստանի ազգային և քաղաքացիական ինքնությունն օրգանականապես կապված է երկրի աշխարհաքաղաքական դիրքի, իսկ հանրային իշխանության գործառույթային և կառուցվածքային հենքը՝ երկրի պատմամշակութային ավանդույթների ու նորմերի հետ: Ակնհայտ է, որ ղազախստանյան անցումային հասարակության քաղաքական վարչակարգի և նախագահական կառավարման ձևի հիմնախնդիրները դեռևս բավարար չափով ուսումնասիրված չեն «ժողովրդավարացման երրորդ ալիքի» շրջանակներում: Հատկանշական է, որ Ղազախստանի փորձը շատ առումներով հետաքրքիր է և արդիական հետխորհրդային ինստիտուցիոնալ փոխակերպումների համեմատական վերլուծության առումով:

7.1 Կառավարման ձևի ինստիտուցիոնալացման համակարգը. գործառական և կազմակերպչական կողմերը

Ղազախստանի սահմանադրաիրավական կարգի կայունությունը ժամանակակից պայմաններում մեծապես կախված է նախագահական կառավարման և քաղաքական վարչակարգի գործառույթների ընդլայնման մակարդակից: Դա թույլ տվեց պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին ավելացնել վերահսկողությունը ընդդիմադիր ուժերի, քաղաքացիական հասարակության և սոցիալական շարժումների գործունեության նկատմամբ: Այս կապակցությամբ առավել նշանակալիցը երկրի առաջին դեմքի գործունեությունն էր, որն ամրապնդեց նախագահի ինստիտուտը և նախագահական կառավարման ձևը: Դա նկատելի էր ղազախստանյան հասարակության քաղաքական արդիականացման, սահմանադրական բարեփոխումների և օրենքների ընդունման, պետական իշխա-

նությունների տարանջատման, դրանց ընտրովիության, հաշվետվողականության և բազմաթիվ այլ հարցերում: Ակնհայտ էր, որ գործադիր «ուղղահայացության» ուժեղացումը թուլացրել է օրենսդիր իշխանության կարգավիճակը: Ավելին, խորհրդարանական և ներկայացուցչական մարմինների ընտրությունները ավելի ձևական են դարձնել, քան նախկինում էր:

Գծապատկեր 1
Ղազախստանի Քաղաքական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)*



Ղազախստանի հանրապետության (ՂՀ) ժողովրդավարության Քաղաքական գործոնների ինդեքսը (Ք_{ԳԻ}) 2018 թ.-ին 2016-2017 թթ. համեմատ աճել է (տե՛ս Գծապատկեր 1, Աղյուսակ 1): Ընդ որում, 2000-2018 թթ. ժամանակահատվածում 2018 թ. Ք_{ԳԻ}-ի ցուցանիշը ցածր է միայն 2009 թ.-ից (տե՛ս Գծապատկեր 1, Աղյուսակ 1):

Ղազախստանում քաղաքական փոխակերպումների հիմնական առանձնահատկություններից մեկն այն էր, որ դրանք կայացել են տնտեսական բարեփոխումներին համընթաց: Այդ փոխակերպումներն ամրապնդել և ուժեղացրել են միմյանց, երբ դրանք հաջողել են, իսկ եթե հասա-

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

**7. Ժողովրդավարացման զսպման և անազատականության շրջափուլերը
Ղազախստանում. կառավարելի և փոփոխվող իշխանակարգ**

րակական կյանքի ոլորտներից մեկում ձախողել են, ապա դրանք բացասաբար են ազդել այլ ոլորտների բարեփոխումների վրա:

Ղազախստանի Ք_{ԳԻ}-ի ազդեցություններում նշանակալի են եղել երկրի քաղաքական համակարգի մակրո-, մեզո- և միկրոմակարդակների ինստիտուցիոնալ փոխակերպումները: Մասնավորապես, մակրոմակարդակում տեղի ունեցող ինստիտուցիոնալ փոխակերպումները նպաստում էին ներկայացուցչականության մշակույթի կայացմանը՝ հետևողականորեն կյանքի կոչելով գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների, ինչպես նաև ընտրական համակարգի բարեփոխումները: Իսկ մեզոմակարդակը ներառել է կուսակցությունների, արհմիությունների, ՔՀԿ-ների և հասարակական այլ միավորումների միջոցով հանրային շահերի ներկայացուցչության ընթացակարգերը: Հատկանշական էր, որ ներկայացուցչության հաջողությունը կամ ձախողումը պայմանավորված էր մակրո-, մեզո- և միկրոմակարդակներում ժողովրդավարական համախմբման հնարավորությամբ և արդյունավետությամբ:

Դիտարկվող ժամանակահատվածում Ղազախստանի Ք_{ԳԻ}-ի վրա զգալի են 2016 թ. մարտի 20-ին տեղի ունեցած խորհրդարանական արտահերթ ընտրությունները: Մասնակցած 6 կուսակցությունից 3-ն անցավ ստորին պալատ՝ Մաժիլիս¹⁹²: Այս անգամ էլ կառավարող՝ «Նուր Օտան» կուսակցությունը Ղազախստանի ժողովրդի վեհաժողովի (ՂԺՎ)¹⁹³ հետ ստացան բացարձակ մեծամասնություն: «Ակ Ժոլ» կուսակցությունը և Ղազախստանի կոմունիստական ժողովրդական կուսակցությունը ստացան 7-ական մանդատ: Հատկանշական էր, որ երկրի քաղաքական համակարգում և ընտրական գործընթացներում ամրապնդվեց Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբանկի կարգավիճակը: Փաստորեն քաղաքական հանդուրժողականության առումով չկարգավորված մնացին կառավարող կուսակցության և ընդդիմադիր ուժերի, ինչպես նաև կառավարություն և ՔՀԿ-ների միջև հակասությունները: Ի մասնավորի՝ ժողովրդավարական բարեփո-

¹⁹² Տվյալների աղբյուրը՝ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի պաշտոնական կայք՝ <http://www.osce.org/odihr/elections/kazakhstan/222541> (24.06.2019):

¹⁹³ Տե՛ս Ղազախստանի ժողովրդի վեհաժողովի պաշտոնական կայք՝ <https://assembly.kz> (29.06.2019):

խումների համատեքստում ԲՀԿ-ների համար կենսական նշանակություն ունի ստվերային տնտեսության կրճատման, հակակոռուպցիոն քաղաքականության ակտիվացման, սոցիալական արդարության պահպանման, աղքատության հաղթահարման և այլ խնդիրների հետ կապված հարցերի հրատապ լուծումը: Այս գործընթացներում քաղաքական կյանքի կազմակերպման առանձնահատկությունները պայմանավորված էին, մի կողմից, համաշխարհային համակարգում Ղազախստանի աշխարհաքաղաքական և տնտեսական կապերով ու դիրքով, իսկ մյուս կողմից՝ ավանդական սոցիալական կարգով՝ սեփականության և իշխանության ինքնատիպ փոխհարաբերություններով:

2016-2018 թթ. Ղազախստանի Բ_{գր}-ի վրա զգալի էր երկրի Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագահ Նազարբաևի նախաձեռնությունը: Այդ նպատակով երկրի նախագահի կողմից ձևավորված հատուկ հանձնաժողովը մշակեց սահմանադրական բարեփոխումների նախագիծը¹⁹⁴: Վերջինս 2017 թ. հունվարի 26-ից մինչև 2017 թ. փետրվարի 26-ը ներկայացվեց համաժողովրդական քննարկման¹⁹⁵: Այնուհետև՝ այն Սահմանադրական խորհրդի հաստատումից հետո¹⁹⁶ ստորագրվեց¹⁹⁷ երկրի նախագահի կողմից: Ուշագրավ էր Սահմանադրական խորհրդի որոշման մեջ հետևյալ ձևակերպումը. «Ղա-

¹⁹⁴ Ст'у Досье на проект Закона Республики Казахстан «О внесении изменений и дополнений в Конституцию Республики Казахстан» (1 марта 2017 года). Дата доступа: 23.06.2019. https://online.zakon.kz/document/?doc_id=33660150#pos=6;-155.

¹⁹⁵ Ст'у Распоряжение Президента Республики Казахстан от 25 января 2017 года №141 «О всенародном обсуждении проекта Закона Республики Казахстан «О внесении изменений и дополнений в Конституцию Республики Казахстан»». Дата доступа: 23.06.2019. https://online.zakon.kz/Document/?doc_id=35543562#pos=0;59:

¹⁹⁶ Ст'у Нормативное постановление Конституционного Совета Республики Казахстан от 9 марта 2017 года №1 «О проверке Закона Республики Казахстан «О внесении изменений и дополнений в Конституцию Республики Казахстан» на соответствие Конституции Республики Казахстан»». Дата доступа: 23.06.2019. https://online.zakon.kz/Document/?doc_id=36772838#pos=3;-137:

¹⁹⁷ Ст'у Закон Республики Казахстан от 10 марта 2017 года № 51-VI «О внесении изменений и дополнений в Конституцию Республики Казахстан». Дата доступа: 23.06.2019. https://online.zakon.kz/Document/?doc_id=32937557#pos=3;-155.

**7. Ժողովրդավարացման զսպման և անազատականության շրջափուլերը
Ղազախստանում. կառավարելի և փոփոխվող իշխանակարգ**

զախստանի Հանրապետության Նախագահի՝ Էլբասի* նախաձեռնությամբ իրականացվող սահմանադրական բարեփոխումները համահունչ են երկրի պատմական էվոլյուցիայի տրամաբանությանը և ապահովում են ժողովրդավարության հետագա մարմնավորումը՝ ավելացնելով խորհրդարանի և կառավարության պատասխանատվությունը նախագահական կառավարման ձևի անփոփոխելիության պայմաններում¹⁹⁸: Տեղին է նշել, որ այս սահմանադրական բարեփոխումները միտված էին իրականացնելու նախագահ Նազարբաևի «100 կոնկրետ քայլեր» ազգային ծրագիրը¹⁹⁹:

Վերոհիշյալ սահմանադրական բարեփոխումներն ամրապնդեցին երկրի նախագահի իրավասությունները պաշտպանության, արտաքին քաղաքականության, պետական կառավարման, Սահմանադրության պաշտպանության և պետական իշխանության ճյուղերի արդյունավետ գործունեության և դրանց փոխգործակցության ապահովման ոլորտներում: Միևնույն ժամանակ սոցիալ-տնտեսական ոլորտում երկրի նախագահի լիազորությունների զգալի մասը փոխանցվեց կառավարությանը: Կարևոր էր նաև այն, որ ամրագրվեց մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության նոր արդյունավետ ընթացակարգ. Ղազախստանը ոչ միայն ճանաչում է, այլև երաշխավորում է մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները: Պետականաշինության առումով երկրի Սահմանադրությամբ ամրագրվեց պետական անկախության անձեռնմխելիությունը, իսկ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու դեպքում պարտադիր համարվեց Սահմանադրական խորհրդի եզրակացության առկայությունը:

Ժամանակակից աշխարհակարգի պայմաններում Ղազախստանի տնտեսական առաջընթացը ճանապարհ է հարթել ավտորիտար վարչակարգի փոխակերպումների համար՝ հանգեցնելով կառավարման համակարգի վերադասավորումներին: Յուրաքանչյուր նման որոշում ընդունելու և

* Ղազախստանի Հանրապետության առաջին նախագահ Նուրսուլթան Նազարբաևն ի պաշտոնե կրում է «Ազգի առաջնորդ» (Էլբասի) տիտղոսը:

¹⁹⁸ Տե՛ս նույն տեղում:

¹⁹⁹ Տե՛ս «100 шагов по 5 институциональным реформам». Дата доступа: 23.06.2019. <http://www.adilet.gov.kz/ru/articles/100-shagov-po-5-institucionalnym-reformam>:

իրականացնելու համար երկրի նախագահից ավելի շատ ժամանակ էր պահանջում, որովհետև կառավարող ընտրանու և կուսակցության միջև բախվում էին տարբեր, երբեմն ուղղակիորեն հակառակ շահեր: Նման պայմաններում, մի կողմից, նկատելի էր, որ կառավարող ընտրանու ներսում փոփոխությունների հակված գործիչները ձեռք են բերել իրենց դիրքերն ուժեղացնելու նոր հնարավորություններ, իսկ մյուս կողմից՝ օրակարգային էր դարձել իշխանության իրավահաջորդ առաջադրելու «խոսույթը», որը, որպես կանոն, մերժում էին ընդդիմադիր ուժերը և ՔՀԿ-ները: Սակայն երկրի համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելը և տնտեսական աճը նպաստեցին «միջին խավի» ընդլայնմանն ու ամրապնդմանը որպես ուժ, որն առավել շահագրգռված է ժողովրդավարական ընթացակարգերը հաստատելու հարցում, քանզի ժողովրդավարական արժեքների վրա հիմնված քաղաքական և տնտեսական համակարգերը կարողանում են արդյունավետ լուծել հասարակության առջև ծառայած խնդիրները:

Ղազախստանյան հասարակության, ընդդիմադիր ուժերի, ՔՀԿ-ների, ինչպես նաև օտարերկրյա ներդրողների շրջանում մեծանում է դժգոհությունը ավտորիտար կառավարման, քաղաքական ազատությունների սահմանափակման, կոռուպցիոն երևույթների, նեպոտիզմի, ոստիկանական և իշխանության չարաշահումների պատճառով: Դրանք բնակչության լայն շերտերի, քաղաքացիական շարժումների և հատկապես երիտասարդ սերնդի կողմից ընկալվել են որպես երկրի հետագա զարգացման արգելակ: Ակնհայտ է, որ Ղազախստանում ժողովրդավարացման նպատակը պետք է լինի ոչ միայն կայունությունը, այլև կայուն և անխուսափելի փոփոխությունների հնարավորությունների ընձեռումը: Դրանք կարող են ղազախստանյան հասարակությունն առաջ տանել ոչ թե պատմական անհրաժեշտության «օրենքներով» սահմանված, այլ ժողովրդի կողմից ընդունելի ճանապարհով:

2016-2018 թթ. Ղազախստանի ՔԳԻ-ի վրա զգալի են եղել պետության միջազգային հեղինակության բարձրացմանն ուղղված արտաքին քաղաքականության հիմնական վեկտորները: ՄԱԿ-ի հետ համագործակցության առումով անցած տարիների ընթացքում Ղազախստանն արդյունավետ նախաձեռնողականություն է ցուցաբերել՝ ավանդաբար առաջատար լինելով

**7. Ժողովրդավարացման զսպման և անազատականության շրջափուլերը
Ղազախստանում. կառավարելի և փոփոխվող իշխանակարգ**

տարածաշրջանի երկրների շարքում: Հատկապես այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են առողջապահությունը, միգրացիան, էկոլոգիան, թմրամիջոցների ապօրինի շրջանառության և թրաֆիքինգի դեմ պայքարը, երեխաների և կանանց իրավունքների պաշտպանությունը: Դրա օրինակներից էր ՄԱԿ-ի աջակցությունը Ղազախստանին՝ Սեմիպալատինսկի փորձակայանը փակելու և Արալ ծովը վերականգնելու ծրագրերում (*UN 2018, UN News 2019*):

Դիտարկվող ժամանակահատվածում Ղազախստանը կարողացավ հասնել Ալմա Աթայում ՄԱԿ-ի տարածաշրջանային հանգույցի բացմանը՝ նպաստելով Կենտրոնական Ասիայում կայուն զարգացման ծրագրերի իրականացմանը մինչև 2030 թվականը²⁰⁰: Տեղին է նշել, որ երկիրը ակտիվորեն շարունակել է համագործակցությունը ՄԱԿ-ի Կենտրոնական Ասիայում կանխարգելիչ դիվանագիտության տարածաշրջանային կենտրոնի²⁰¹, ինչպես նաև ՄԱԿ-ի Հակահաբեկչական գլոբալ ռազմավարության²⁰² իրականացման շրջանակներում: Անկասկած, Ղազախստանի դիվանագիտության համար հիմնական իրադարձությունն այն էր, որ 2016 թ. հունիսի 28-ին երկիրն առաջին անգամ ընտրվեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2017-2018 թթ. ոչ մշտական անդամ²⁰³: Նշանակալից էր նաև այն, որ 2018 թ. հունվարին Ղազախստանը ստանձնեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նախագահությունը²⁰⁴: Այս առումով երկիրը համաշխարհային հարթակում կարևորեց Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրների շահերը: Այսպիսով, դառնալով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում ընտրված տարածաշրջանի առաջին երկիրը՝ նա ակտիվորեն ի ցույց դրեց Կենտրոնական Ասիայի խնդիրները՝ առաջարկելով տարածաշրջանի զար-

²⁰⁰ Տե՛ս ՂՀ ԱԳՆ պաշտոնական կայք՝ <http://mfa.gov.kz/en/content-view/v-almaty-otmetili-25-letie-ofisa-oon-v-kazahstane> (26.06.2019):

²⁰¹ Տե՛ս ՄԱԿ-ի Կենտրոնական Ասիայում կանխարգելիչ դիվանագիտության տարածաշրջանային կենտրոնի պաշտոնական կայք՝ <https://unrcca.unmissions.org> (26.06.2019):

²⁰² Տե՛ս ՄԱԿ-ի պաշտոնական կայք՝ <https://www.un.org/counterterrorism/ctitf/en/-uncct/press-release-kazakhstan-supports-uncct> (26.06.2019):

²⁰³ Տե՛ս Վրաստանում ՂՀ դեսպանատան պաշտոնական կայք՝ <http://mfa.kz/ru/tbilisi/content-view/clenstvo-kazahstana-v-sovete-bezopasnosti-oon-2> (26.06.2019):

²⁰⁴ Տե՛ս նույն տեղում:

գացման տարբերակներ: Երկրի նախագահության մեկամսյա ժամանակահատվածում իրականացվեցին մի շարք նախաձեռնություններ: Թերևս դրանցից առանցքայինը Կենտրոնական Ասիայում և Աֆղանստանում տարածաշրջանային գործընկերության կայացման քննարկումներն էին՝ փոխկապակցելով անվտանգության և զարգացման հիմնախնդիրները: Նման դիրքորոշումը նշանակալիորեն բարձրացրեց երկրի միջազգային հեղինակությունը: Սա տարածաշրջանային կարևոր ձեռքբերում է, հատկապես Կենտրոնական Ասիայի մյուս երկրների համեմատությամբ: 2018 թ.-ին Ղազախստանն ակտիվորեն մասնակցեց նաև ՅՈւՆԵՍԿՕ-ի, ԵԱՏՄ, ՀԱՊԿ, Իսլամական համագործակցության կազմակերպության, Թյուրքալեզու պետությունների համագործակցության խորհրդի ձեռնարկներին²⁰⁵:

Վերոհիշյալ դիտարկումների համատեքստում նշանակալի էր նաև 2018 թ. օգոստոսի 12-ին Ակտաուում անցկացված Կասպյան հինգերորդ գագաթնաժողովը²⁰⁶, որտեղ հինգ երկրների (Ադրբեջանի, Իրանի, Ղազախստանի, Ռուսաստանի և Թուրքմենստանի) նախագահները ստորագրեցին Կասպից ծովի իրավական կարգավիճակի մասին կոնվենցիան²⁰⁷: Դրանում ամրագրվեցին Կասպից ծովի նոր իրավական ընթացակարգերը, որը խորացնելու էր առափնյա երկրների համապարփակ համագործակցությունը (*Kadir 2019*):

Ղազախստանի ՔԳԻ-ի վրա զգալի են եղել նաև սիրիական հակամարտության խաղաղ կարգավորման միջնորդական ջանքերը: Չնայած Սիրիայում քաղաքացիական պատերազմը շարունակվում է, այնուամենայնիվ Աստանայի գործընթացի ներդրումը ազդեց բանակցությունների և խաղաղության ընթացակարգերի ամրապնդման վրա: Ի մասնավորի, 2017 թ. հուն-

²⁰⁵ Տե՛ս ՂՀ ԱԳՆ պաշտոնական կայք՝ <http://mfa.gov.kz/en/content-view/ois> (26.06.2019), Թյուրքալեզու պետությունների համագործակցության խորհրդի պաշտոնական կայք՝ <https://www.turkkon.org/en/turk-konseji-hakkinda> (26.06.2019),

²⁰⁶ Տե՛ս ՌԴ նախագահի պաշտոնական կայք՝ <http://en.kremlin.ru/catalog/countries/-KZ/events/58300> (26.06.2019), ՂՀ ԱԳՆ պաշտոնական կայք՝ <http://mfa.gov.kz/en/content-view/zulfia-amanzolova-kaspijdi-kkyktyk-mrtebesi-aktau-konferenciasyny-mni> (26.06.2019):

²⁰⁷ Տե՛ս ՌԴ նախագահի պաշտոնական կայք՝ <http://en.kremlin.ru/supplement/5328> (26.06.2019):

**7. Ժողովրդավարացման զսպման և անազատականության շրջափուլերը
Ղազախստանում. կառավարելի և փոփոխվող իշխանակարգ**

վարից սկսած, Աստանայի խաղաղության գործընթացը շարունակվեց նաև 2018-2019 թթ. (*AFP 2018, The Astana Times 2019a, The Astana Times 2019b*): Այդ ժամանակահատվածում տեղի ունեցավ հակամարտության և ռազմաքաղաքական լարվածության թուլացում, առանձնացվեցին հրադադարի գոտիներ, ներդրվեց հրադադարի ռեժիմի մոնիթորինգ և այլն:

Դիտարկվող ժամանակահատվածում Ղազախստանը շարունակել է ակտիվորեն մասնակցել ԵԱՏՄ-ում միասնական կանոնների և չափորոշիչների մշակման գործընթացին՝ ամրապնդելով ինտեգրված ռազմավարությունները: Ի տարբերություն նախորդ ինտեգրման նախագծերի՝ ԵԱՏՄ քաղաքական ազդեցությունը շատ ավելի ակնհայտ է Ղազախստանի քաղաքացիների համար՝ աշխատուժի միասնական շուկայի ձևավորման և սոցիալական որոշակի երաշխիքների միասնականացման շնորհիվ: Արդյունավետ ինտեգրման խորացումը և ինստիտուցիոնալ կապերի ամրապնդումը նպաստեցին Ղազախստանի և ՌԴ-ի միջև ոչ միայն տնտեսական համագործակցության զարգացմանը, այլև բարելավեցին դաշնակցային և քաղաքական փոխգործակցության մակարդակը (*Осадчая 2018, 35-54, Дробот 2018, 194-222, Шлыков 2017, 58-76, Никулина, Торобыгин 2017, 60-67*): Թեև Ղրիմի և ուկրաինական իրադարձությունների պատճառով որոշ փոփոխություններ են կատարվել Ղազախստանի եվրասիական համագործակցության ձևաչափում, այնուամենայնիվ տեղին է նշել, որ Արևմուտքի պատժամիջոցներին Ռուսաստանի պատասխանը ԵԱՏՄ գործընկերների աջակցությանը չի արժանացել: Ավելին՝ այն բացասական ազդեցություն է ունեցել, բայց չի դարձել ԵԱՏՄ հետագա գործակցությունը մերժելու պատճառ: Միևնույն ժամանակ, երկիրը զարգացրեց եվրասիականության և բազմակետորոշության գաղափարների վրա հիմնված արտաքին քաղաքականություն (*Редакция газеты «МК в Казахстане» 2019, ГУ «Библиотека Первого Президента РК-Елбасы» 2019, РИА Новости 2015, Панченко 2016*): Ըստ այդմ, եվրասիական ինտեգրման գործընթացին Ղազախստանի մասնակցությունը ոչ միայն դրական նշանակություն ունեցավ երկրի տնտեսության վրա, այլև ապահովեց ղազախստանյան եվրասիականության գաղափարների գործնական իրականացումը: Հատկանշական էր, որ երկրի համար եվրասիականությունը դարձել է ոչ միայն արտաքին քաղա-

քականության ռազմավարության հիմքը, այլև ինչ-որ առումով պետական գաղափարախոսություն:

Ինչ վերաբերում է Ղազախստան-ԵՄ երկկողմ հարաբերություններին և ԲՀԿ-ների կարողությունների զարգացմանը, ապա այս առումով կարևոր նշանակություն է ունեցել «Ղազախստանի քաղաքացիական հասարակության ներգրավման 2018-2020 թթ. ԵՄ ճանապարհային քարտեզը»²⁰⁸: Դրանից բխող գործողությունները նպաստել են ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացմանը: Ղազախստանի և ԵՄ-ի միջև մի քանի տարի առաջ ստորագրված Համաձայնագիրն արտաքին քաղաքականության կարևորագույն ձեռքբերումներից էր (*Official Journal of the European Union 2016*): Հետխորհրդային տարածքում ԵՄ արտաքին քաղաքականության ղազախստանյան վեկտորը միշտ էլ եղել է ընդունելի ուղղություններից մեկը: Հենց դա էլ հանգեցրել է տարածաշրջանում ուժերի հավասարակշռության և եվրասիական պետությունների ինտեգրման առաջնահերթությունների փոփոխությանը: Այնուամենայնիվ, 2015 թ.-ից ի վեր ԵՄ-ի հարաբերությունները Ղազախստանի հետ որոշակիորեն պայմանավորված էին ՌԴ-ԵՄ հարաբերություններով:

«Ազատության տան» «Ազգերն անցումային փուլում» զեկույցների համաձայն՝ Ղազախստանի ժողովրդավարական ցուցանիշներն ունեցել են բացասական միտում: Եթե 2016 թ. երկրի ժողովրդավարության համախառն գնահատականը 6,61 միավոր էր, ապա 2017 թ.-ին այն դարձել է 6,64, իսկ 2018 թ.-ին՝ 6,71 (տե՛ս Աղյուսակ 2): Ըստ դրանց՝ Ղազախստանը շարունակել է համարվել է «համախմբված ավտորիտար վարչակարգ» ունեցող երկիր²⁰⁹: Ընդ որում, կոռուպցիայի դեմ պայքարում պետական իշխանության մարմինների, ՏԻՄ-ի և քաղաքական ուժերի հանդեպ ԲՀԿ-ների անվստահությունը խորն է: Վերջիններս բացասական վերաբերմունք են

²⁰⁸ Տե՛ս Ղազախստանում ԵՄ պատվիրակության պաշտոնական կայք՝ « EU Country Roadmap for engagement with Civil Society 2018-2020 in Kazakhstan» // https://eeas.europa.eu/delegations/kazakhstan/61233/eu-country-roadmap-engagement-civil-society-2018-2020-kazakhstan_en (26.08.2019):

²⁰⁹ Տե՛ս «Ազատության տան» պաշտոնական կայք՝ <https://freedomhouse.org/report/nations-transit/nations-transit-2018> (20.06.2019):

**7. Ժողովրդավարացման զսպման և անազատականության շրջափուլերը
Ղազախստանում. կառավարելի և փոփոխվող իշխանակարգ**

դրսևորում նաև արդարադատության համակարգին և դատական իշխանության անկախության երաշխիքներին վերաբերող հարցերում:

Աղյուսակ 2

**«Ազատության տան» գնահատականները Ղազախստանում
Ժողովրդավարական փոխակերպումների վերաբերյալ (2018 թթ.)²¹⁰**

Ժողովրդավարության առաջընթացի գործոններ	2018
Ազգային ժողովրդավարական կառավարում	6,75
Ընտրական գործընթացներ	6,75
Քաղաքացիական հասարակություն	6,75
Լրատվամիջոցների անկախություն	6,75
Տեղական ժողովրդավարական կառավարում	6,50
Դատական համակարգը և դրա անկախությունը	6,75
Կոռուպցիա	6,75
Ժողովրդավարության գնահատական	6,71

Դիտարկվող ժամանակահատվածում շարունակվել են բռնաճնշումները Ղազախստանի մի շարք արհմիությունների և դրանց առաջնորդների նկատմամբ: Մասնավորապես, լուծարվեցին Ազատ արհմիությունների համադաշնությունը և դրան փոխարինված Անկախ արհմիությունների համադաշնությունը (*Центральная профсоюзная газета «Солидарность» 2019*): Մտահոգիչ էր այն, որ արհմիութենական շարժմանը և քաղաքացիական անհնազանդություններին հետևեցին ձերբակալություններ ու դատավարություններ (*Центральная профсоюзная газета «Солидарность» 2019*): Չնայած այն հանգամանքին, որ միջազգային, եվրոպական և ռուսական արհմիություններն աջակցեցին դազախ գործընկերներին, այնուամենայնիվ այդ ամենը երկրի իշխանություններն անտեսեցին: Տեղին է նշել, որ վերոհիշյալ ավտորիտար միջամտություններն արձանագրվեցին նաև «Human Rights Watch» միջազգային իրավապաշտպան կազմակերպության զեկույցում (*Human Rights Watch 2019, 321-331*): Նման իրավիճակում երկրի կառավարությունը որպես իր սոցիալական գործընկեր ճանաչեց ՂՀ արհմիություն-

²¹⁰ Տվյալների աղբյուրը՝ «Ազատության տան» պաշտոնական կայք՝ <https://freedom-house.org/report/nations-transit/2018/kazakhstan> (20.06.2019):

ների դաշնությանը²¹¹: Վերջինիս և գործատուների հանրապետական միավորումների հետ 2018 թ. հունվարի 31-ին կառավարությունը ստորագրեց 2018-2020 թթ. գլխավոր համաձայնագիրը²¹²:

Անդրադառնալով ԺՄԻ-ի Ք_{ԳԻ}-ում ընդգրկված այլ փոփոխականների՝ հարկ է նշել, որ նախորդ տարվա համեմատ 2018 թ. քաղաքական կայունության և օրենքի գերակայության ցուցանիշները նվազել են, իսկ Կոռուպցիայի ընկալման ցուցանիշն աճել է՝ արձանագրելով ամենաբարձր միավորը 2000-2018 թթ. ժամանակահատվածում:

Աղյուսակ 3

2016-2018 թթ. ՂՀ Համաշխարհային գենդերային բացակի ինդեքս²¹³

ՀԳԻ ենթահնդեքս	2016		2017		2018	
	վարկանիշ	միավոր	վարկանիշ	միավոր	վարկանիշ	միավոր
Տնտեսական մասնակցություն և հնարավորություն	31	0,745	30	0,744	32	0,741
Կրթական մակարդակ	58	0,995	48	0,997	30	1,000
Առողջություն և գոյատևում	1	0,980	36	0,979	42	0,979
Քաղաքական հնարավորությունների հզորացում	77	0,153	93	0,130	94	0,130
ՀԳԻ	51	0,718	52	0,713	60	0,712

Իսկ ինչ վերաբերում է ԺՄԻ-ում ընդգրկված Ք_{ԳԻ}-ի Համաշխարհային գենդերային բացակի ինդեքսին (ՀԳԻ), ապա պետք է ասել, որ 2016-2017 թթ. Ղազախստանը 144 երկրների շարքում զբաղեցրել է համապատասխանաբար՝ 51-րդ և 52-րդ տեղերը, իսկ 2018 թ.-ին 149 երկրների շարքում՝ 60-րդ տեղը (*World Economic Forum 2016, 2017, 2018*): Աղյուսակ 3-ից երևում է, որ 2016-2018 թթ.-ին Ղազախստանի ամենացածր ցուցանիշներն արձա-

²¹¹ Տե՛ս ՂՀ արհմիությունների դաշնության պաշտոնական կայք՝ <http://fprk.kz/en> (20.06.2019):

²¹² Տե՛ս նույն տեղում:

²¹³ Տվյալների աղբյուրը՝ Համաշխարհային տնտեսական ֆորումի պաշտոնական կայք՝ <https://www.weforum.org/reports/the-global-gender-gap-report-2016>, <https://www.weforum.org/reports/the-global-gender-gap-report-2017>, <https://www.weforum.org/reports/the-global-gender-gap-report-2018> (21.06.2019):

նագրվել են «Քաղաքական հնարավորությունների հզորացում» ենթաինդեքսով (տե՛ս Աղյուսակ 3):

Ամփոփելով հարկ է նշել, որ Քաղաքական գործոնների ինդեքսի կորը նախորդ տարիների համեմատ 2018 թ.-ին աճել է: Դա հիմնականում պայմանավորված էր Ղազախստանում ավտորիտարիզմից ժողովրդավարությանն անցնելու գործընթացով և վարչակարգային փոխակերպումների մի շարք փուլերի համադրությամբ: Չնայած դրական միտումներին, այնուամենայնիվ երկրի քաղաքական կյանքում ազատականացման և ժողովրդավարացման հիմնախնդիրները, քաղաքական և տնտեսական բարեփոխումների իրականացումը յուրաքանչյուր անգամ լուծվել են ավտորիտար վարչակարգին բնորոշ տարբեր գործիքակազմերով:

7.2 Տնտեսական աճի արդիականացման ներուժը

Տնտեսական աճը մակրոտնտեսական կարևորագույն ցուցանիշ է, որի օգնությամբ գնահատվում են ոչ միայն արտադրության իրական աճը, այլև երկրի տնտեսության կարողությունը՝ բավարարելու բնակչության աճող կարիքները, ինչպես նաև նպաստելու կյանքի որակի բարելավմանն ու ժողովրդավարացմանը: Ավելին, տնտեսական աճը երկրի տնտեսական հզորության ցուցիչն է: Այս ամենը, անշուշտ, կապված է այնպիսի որակական բաղադրիչների հետ, ինչպիսիք են՝ արտադրական գործոնների բարելավումը գիտատեխնոլոգիական առաջընթացի օգնությամբ, մակրո- և միկրոմակարդակներում կառավարման մեթոդների կատարելագործումը, ինչպես նաև բնակչության կրթական, մշակութային և ֆինանսական անվտանգության ընդհանուր մակարդակի բարձրացումը: Այս առումով կարևորվում են երկրի տնտեսական աճի գործոնները, որոնց հիման վրա հնարավոր է դառնում համարժեքորեն գնահատելու ժողովրդավարական փոխակերպումները, ինչպես նաև ցույց տալու դրանց դրական և բացասական հետևանքները երկրի կայուն զարգացման վրա:

Կենտրոնական Ասիայում հատվում են համաշխարհային կարևորագույն դերակատարների՝ ԱՄՆ-ի, Եվրոպայի, Չինաստանի և Ռուսաստանի

ռազմավարական շահերը, քանզի տարածաշրջանում կան էներգետիկ ռեսուրսների հսկայական պաշարներ, որոնք հիմնարար նշանակություն ունեն համաշխարհային տնտեսության զարգացման համար:


2016-2018 թթ. Ղազախստանի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները բախվել են տնտեսության բազմաթիվ հիմնախնդիրների: Դրանց հիմնական պատճառն ազատական շուկայի «բաց» չկարգավորվածությունն է (անկանխատեսելիությունը), ինչպես նաև համաշխարհային տնտեսությանը երկրի խորը ինտեգրվածությունը: Վերջինս առավելապես զգալի էր եղել, երբ ազգային արժույթը և ֆոնդային բորսայում բաժնետոմսերի արժեքը տատանվել են, գնաճը և բանկի տոկոսադրույքները բարձրացել են, պետական պարտքի սպասարկումը՝ ճնշվել և այլն: Ավելին, կառավարության տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացումը խոչընդոտել են ստվերային կապերը և տնտեսական չարաշահումները: Միևնույն ժամանակ, շարունակել են մտահոգիչ մնալ տնտեսության անկայունության միտումները, ռիսկային լինելու պատճառով այնտեղ ներդրումներ կատարողների և պարտատերերի դժկամությունը:

Ղազախստանի ԺՄԻ-ի Տնտեսական գործոնների ինդեքսի ($S_{գր}$) կորի 2016-2018 թթ. ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ $S_{գր}$ -ի կորը 2016 թ.-ին 2009-2015 թթ. համեմատ աճել է (տե՛ս Գծապատկեր 2, Աղյուսակ 1): Սակայն 2017 թ.-ին այն կտրուկ անկում է ապրել՝ գրանցելով դիտարկվող ժամանակահատվածի նվազագույն արժեքը, որը որոշակիորեն մեղմվել է 2018 թ.-ին: Գծապատկեր 2-ից երևում է, որ 2000-2018 թթ. ժամանակահատվածում Ղազախստանի ԺՄԻ-ի $S_{գր}$ -ի կորը տատանումներ է ունեցել: Արդյունքում այն գրանցել է բացասական միտում: Եթե 2000 թ.-ին $S_{գր}$ -ին ունեցել է 0,557 միավոր, ապա 2018 թ.՝ 0,509 միավոր (տե՛ս Գծապատկեր 2, Աղյուսակ 1):

2018 թ. $S_{գր}$ -ի ցուցանիշների անկման վրա ազդել է օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈւՆ), Տնտեսական ազատության ինդեքսի և շնչային ՀԱԱ-ի նվազումը²¹⁴:

²¹⁴ Տվյալների աղբյուրը՝ ՀԲ-ի պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/BX.KLT.DINV.WD.GD.ZS?locations=KZ> (24.07.2019), ՂՀ ազգային էկոնոմի-

Ղազախստանի Տնտեսական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)*



Գծապատկեր 3-ից երևում է, որ 2000-2018 թթ. Ղազախստանի ՕՈՒՆ-ների ցուցանիշները եղել են անկայուն: Եթե 2016 թ.-ին ավելացել են դրանց ծավալները, ապա 2017-2018 թթ. նվազել են²¹⁵: Ավելին, 2018 թ. ՕՈՒՆ-ները 2000-2018 ժամանակահատվածում եղել են ամենացածրը: Այս խնդիրը լուծելու, ինչպես նաև տնտեսության կառուցվածքային վերափոխումներն ապահովելու համար չափազանց կարևոր է օտարերկրյա կապիտալի ներգրավումը հանրապետության տնտեսության մեջ: Ղազախստանի փորձը ցույց է տալիս, որ օտարերկրյա կապիտալը դրականորեն է ազդել տնտեսության վրա: Ներդրումները նպաստել են մասնավոր ձեռներեցության ամրապնդմանը՝ մոբիլիզացնելով կապիտալը խոշոր ծրագրերի իրականացման համար: Նկատելի է նաև, որ ներդրումների տեսանկյունից ԵԱՏՄ-ում Ղազախստանի տնտեսական ինտեգրման գործընթացները դեռևս խնդրահարույց են (*Министерство Энергетики РК 2017, 2018a, 2018b*):


կայի նախարարության վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք՝ <http://www.stat.gov.kz> (24.07.2019):

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

²¹⁵ Տե՛ս նույն տեղում:

Գծապատկեր 3

2000-2018 թթ. ՂՀ-ում օտարերկրյա ուղղակի ներդրումները (% ՀՆԱ-ի նկատմամբ)²¹⁶



Այնուամենայնիվ, կարևոր է շեշտել, որ Ղազախստանում ներդրումների կրճատումը չի նշանակում ԵԱՏՄ-ի անարդյունավետությունը: Պարզապես Ղազախստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին համընկավ Ռուսաստանի տնտեսության մեջ ծայրաստիճան բացասական երևույթների հետ: Ուշագրավ է, որ Ղազախստանի կառավարության կարծիքով ԵԱՏՄ շրջանակներում տնտեսական կապերի ամրապնդումը պետք է ուղղված լինի օտարերկրյա ներդրողների վստահության բարձրացմանը հետխորհրդային տարածքում, որը պետք ստեղծի ներդրումային նոր հնարավորություններ երկրի տնտեսության բարելավման համար (*Министерство Энергетики РК 2017, 2018a*): Չնայած գործարար միջավայրի բարելավմանը միտված բարեփոխումների կառավարության ջանքերին, այսուամենայնիվ միջազգային զեկույցներն արձանագրում են ներդրումային հոսքերի անհաղթահարելի խոչընդոտների առկայության մասին: Մասնավորապես, պետական հաստատություններում կոռուպցիայի, դատական համակարգի անկախության ցածր մակարդակի և մտավոր սեփականության պաշտպանության, մաքսային, հակամենաշնորհային, հարկային վարչարարության, ինչպես

²¹⁶ Տվյալների աղբյուրը՝ ՀԲ-ի պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/BX.KLT.DINV.WD.GD.ZS?locations=KZ> (24.07.2019):

**7. Ժողովրդավարացման զսպման և անազատականության շրջափուլերը
Ղազախստանում. կառավարելի և փոփոխվող իշխանակարգ**

Նաև տրանսպորտային հաղորդակցությունների թերությունների մասին: Դրանք, անկասկած, վնասում են կառավարության ռազմավարական նպատակների ու խնդիրների փոխկապակցվածությանը, իսկ բյուջեն չի կարողանում ամբողջությամբ նպաստել դրանց իրականացմանը:

Տ_{ԳԻ}-ի ցուցանիշների հետագա բարելավման առումով կարևոր նշանակություն ունեցավ նորարարական քաղաքականության ակտիվացումը: Այս առումով ՂՀ-ում հիմնական խնդիր է այն առաջատար տեխնոլոգիաների ընտրությունը, որոնք որոշիչ ազդեցություն են ունեցել տնտեսության ճյուղերում արտադրության արդյունավետության և մրցունակության բարելավման վրա:


Գծապատկեր 4-ից երևում է, որ 2016-2018 թթ. նորարարական քաղաքականության ոլորտում արձանագրվել են դրական միտումներ: Մասնավորապես, 2018 թ.-ին նորարարական արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) տոկոսային մասնաբաժինը երկրի ՀՆԱ-ում կազմել է 1,91%, որն ամենաբարձր ցուցանիշն էր 2004-2018 թթ. ժամանակահատվածի համար²¹⁷: Ճիշտ է՝ այդ ցուցանիշը ցածր է, սակայն հուսադրող է, որ տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների և կենսատեխնոլոգիաների հետ մեկտեղ նորարարական զարգացումը ՂՀ-ում դարձել է գիտատեխնիկական վերափոխումների հիմքը: Երկար տարիների ընթացքում կուտակված հետընթացը պայմանավորված է եղել ոչ այնքան ազգային հետազոտությունների ցածր ներուժով, որքան նորարարական գործունեության թույլ ենթակառուցվածքներով: Դրա օրինակներից է արտադրողների կողմից նորամուծությունների՝ որպես մրցակցության միջոցի անտեսումը կամ հետին պլան մղելը, ինչը նվազեցրել է կիրառական գիտությունների և տեխնիկայի ներուժի նկատմամբ պահանջարկը: Տնտեսության ներկայիս վիճակը վկայում է, որ շուկայական բարեփոխումներում նորարարական քաղաքականությունն ուղղված է գիտատեխնոլոգիական ներուժի զարգացմանը, ինչպես նաև տնտեսության ոլորտների արդիականացմանն ու ապրանքների մրցունակության բարձրացմանը²¹⁸:

²¹⁷ Տե՛ս նույն տեղում:

²¹⁸ Ավելի մասնրամասն տե՛ս ՂՀ ազգային էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայք՝ <http://economy.gov.kz/ru/kategorii/tekushchaya-deyatelnost> (29.07.2019):

Գծապատկեր 4

Նորարարական արտադրանքի մասնաբաժինը ՀՆԱ-ում (%)²¹⁹



Ղազախստանի արտաքին և ներքին շուկաներում ճյուղային արդյունաբերական արտադրանքի պահանջարկի ներկայիս մակարդակը վճռորոշ է դարձել ինչպես հիմնական արտադրական ֆոնդերի կառուցվածքային փոփոխությունների, այնպես էլ դրանց զարգացման հեռանկարների համար: Լիովին օրինաչափ էր, որ կառավարության ծրագրերն ուղղված էին հենց այն ճյուղերի հզորացմանը, որոնք կարողացել էին մուտք գործել համաշխարհային շուկա (վառելիք և էներգետիկ համալիր, մետալուրգիա, քիմիա): Դա կարևոր նախադրյալ է դրանց արտադրական ներուժի արդյունավետությունը բարձրացնելու համար: Միևնույն ժամանակ, համաշխարհային շուկայում պոտենցիալ մրցունակ ապրանքներ արտադրող այլ ճյուղեր (մեքենաշինություն և պաշտպանական համալիր) կարիք ունեն կառավարության աջակցությանը: Թերևս կառավարությունից ավելի մեծ ուշադրություն է պահանջում արդյունաբերության այն ճյուղը, որը հիմնականում կենտրոնացած է ներքին շուկայի վրա (սննդի և թեթև արդյունաբերություն, շինանյութերի արտադրություն): Հատկանշական է, որ արդյունաբերության վե-

²¹⁹ Տվյալների աղբյուրը՝ ՂՀ ազգային էկոնոմիկայի նախարարության վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք՝ <http://www.stat.gov.kz> (24.07.2019):

**7. Ժողովրդավարացման զսպման և անազատականության շրջափուլերը
Ղազախստանում. կառավարելի և փոփոխվող իշխանակարգ**

րոհիշյալ ճյուղերի նկատմամբ նորարարական քաղաքականությունը տարբերվում է իր բնույթով, աջակցության ծավալով, որոնք անհրաժեշտ են արտադրական ներուժի համալրման և արդիականացման համար՝ հիմնված գիտատեխնոլոգիական ազգային նվաճումների վրա: Այս առումով պետական նորարարական քաղաքականության հիմնական ոլորտներն են. 1) նորարարական գործունեության նորմատիվ-իրավական աջակցության մշակում և կատարելագործում, դրան խթանող ընթացակարգերի և ինստիտուցիոնալ վերափոխումների համակարգի կայացում, 2) նորարարության ոլորտում մտավոր սեփականության պաշտպանություն և դրա ներդրում տնտեսական շրջանառության մեջ, 3) նորարարական գործունեության համապարփակ աջակցության համակարգի ստեղծում, արտադրության զարգացում՝ ավելացնելով մրցունակությունը և բարձր տեխնոլոգիական արտադրանքների արտահանումը, 4) նորարարության գործունեության ակտիվացման գործընթացում հրատապ է դառնում ոչ միայն պետական մարմինների, առևտրային կառույցների, ֆինանսական և վարկային հաստատությունների, այլև ՔՀԿ-ների մասնակցությունը ինչպես հանրապետական, այնպես էլ մարզային և շրջանային մակարդակներում:

Ներկայումս Ղազախստանն արագորեն դառնում է նավթի խոշորագույն արտադրողներից և արտահանողներից մեկն աշխարհում: Նավթի և գազի ոլորտը գերակա տեղ է գրավում Ղազախստանի տնտեսության զարգացման մեջ (*Министерство Энергетики РК 2019a, Forbes.com LLC 2019, Ювица, Елеукулова 2016*): Քանի որ երկրում իրականացվում են նախագծեր նավթագազային արդյունաբերության ոլորտում, ստեղծվում են արտաքին տնտեսական հարաբերություններ և կնքվում են համագործակցության պայմանագրեր (*Министерство Энергетики РК 2019a, 2019b, Корешкова 2019, Горбунова 2018*): Ղազախստանը դառնում է ոչ միայն արագ զարգացող նավթային երկիր նավթային և գազային օտարերկրյա ընկերությունների համար (*Корешкова, 2019, Горбунова, 2018, Нуреев, Бусыгин 2017, Лавров, Алексанян 2017*): Թերևս նկատելի են Ղազախստանի նավթարդյունաբերության ոլորտում օտարերկրյա ընկերությունների գործունեության մի շարք առանձնահատկություններ:

7.3 Սոցիալական քաղաքականության հիմնական ուղղությունները

Ղազախստանի կառավարության սոցիալական քաղաքականության մշակման և իրականացման շրջափուլերում առանցքային են համապարփակ սոցիալական արդիականացման հիմնական ուղղությունները: Սոցիալական պետության կայացման, մարդկային կայուն զարգացման ու համահասարակական ներդաշնակության ընթացակարգերն ամրագրված են «Ղազախստան-2050» ռազմավարությունում, «Մինչև 2030թ. ՂՀ ընտանեկան և գենդերային քաղաքականության հայեցակարգում»²²⁰, «Մինչև 2025 թ. ՂՀ զարգացման ռազմավարական պլանում» և մի շարք այլ փաստաթղթերում²²¹: Միևնույն ժամանակ կառավարությունն ակտիվորեն աշխատում է տնտեսության որակական արդիականացման և մարդկային կապիտալի զարգացման հարցերի շուրջ, որպեսզի կարողանա պատասխանել համաշխարհային մարտահրավերներին:


Հանրային բարեփոխումների նոր փուլում Ղազախստանն իրականացնում է սոցիալական արդիականացում՝ օգտագործելով համաշխարհային առաջադեմ չափանիշներ: Մի կողմից՝ դա եվրոպական սոցիալական արդիականացման փորձն է՝ հաշվի առնելով քաղաքացիավարական նորմերը և համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը: Իսկ մյուս կողմից՝ դա ասիական պետությունների փորձն է՝ հասարակության մեջ հարաբերությունները ներդաշնակեցնելով ավանդական էթիկական նորմերի միջոցով:

²²⁰ «Концепция семейной и гендерной политики Республике Казахстан до 2030 года (Утверждена Указом Президента РК от 06.12.2016 г. № 384)». Дата доступа: 25.06.2019. <https://egov.kz/cms/ru/law/list/U1600000384>.

²²¹ Տե՛ս ՂՀ նախագահի պաշտոնական կայք՝ http://www.akorda.kz/ru/official_documents/strategies_and_programs (26.07.2019):

Գծապատկեր 5

Ղազախստանի Սոցիալական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)*



Ղազախստանի Սոցիալական գործոնների ինդեքսի (Ս_{ԳԻ}) կորի 2000-2018 թթ. ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ս_{ԳԻ}-ի ցուցանիշները 2018 թ.-ին որոշակիորեն բարելավվել են (տե՛ս Գծապատկեր 5, Աղյուսակ 1): Սակայն 2016-2018 թթ. դրանք 2010-2015 թթ. համեմատ նվազել են (տե՛ս Գծապատկեր 5, Աղյուսակ 1): Այս անկումը հիմնականում պայմանավորված էր աշխատուժի իրական աշխատավարձի զգալի նվազմամբ և Ջինի ինդեքսի աճով²²²: Այս առումով նշանակալի են եղել սոցիալական բևեռվածության աստիճանը մեղմելու և անհավասարությունը հաղթահարելու կառավարության ծրագրերն: Սոցիալական պաշտպանության համակարգի ներկայիս վիճակը բնութագրվում է պետական պարտավորությունների հավասարակշռությամբ: Արդիականացվում են կենսաթոշակային կուտակային համակարգը, նպաստների և սոցիալական վճարումների ընթացակարգերը՝ ամրապնդելով աղքատներին ուղղված պետական նպատակային սոցիալա-


* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

²²² Տվյալների աղբյուրը՝ ՂՀ ազգային էկոնոմիկայի նախարարության վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք՝ <http://www.stat.gov.kz> (24.07.2019):

կան օգնությունը: Այս պայմաններում կենսամակարդակի բարձրացման խնդիրները, ինչպես նաև սոցիալական վճարների և աշխատավարձերի չափի անհամաչափությունները, կենսաթոշակային խնայողությունների և սոցիալական անվտանգության բազմաթիվ հարցեր շարունակում են մնալ իշխանությունների ուշադրության կենտրոնում (*OECD 2018, Maltseva and Saltanat 2018, UNICEF 2017*):

Գծապատկեր 6

ՂՀ աշխատուժի ընդհանուր թիվը (2016-2018 թթ.)



ՀԲ-ի աշխատուժի տվյալների համաձայն՝ 2016-2018 թթ. երկիրը նախորդ տարիների համեմատ ունեցել է աշխատանքային ռեսուրսների քանակական աճ: Եթե 2016 թ.-ին աշխատուժի ընդհանուր թիվը եղել է 9 մլն 184 հազար մարդ, ապա 2017 թ.-ին՝ 9 մլն 224 հազար 403 մարդ, իսկ 2018 թ.-ին՝ 9 մլն 256 հազար 772 մարդ (տե՛ս Գծապատկեր 6)²²³:

Երկրի քաղաքական համակարգի փոխակերպումների պայմաններում սոցիալ-աշխատանքային խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է դառնում համակողմանիորեն աջակցել արհմիությունների գործունեությանը

²²³ Տե՛ս ՀԲ-ի պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/SL.TLF.TOTL.IN?locations=KZ&view=chart> (19.06.2019):

**7. Ժողովրդավարացման զսպման և անազատականության շրջափուլերը
Ղազախստանում. կառավարելի և փոփոխվող իշխանակարգ**

ձեռնարկություններում: Ավելին, անհրաժեշտ է ուժեղացնել ՂՀ արհմիությունների դաշնության փորձագիտական, սոցիալական խորհրդատվության և աջակցության հատուկ օղակները (*ՓՈՐԿ 2019*): Այնուամենայնիվ, սահմանափակ ռեսուրսների պայմաններում առաջնային նշանակություն պետք է ունենան սոցիալական գործընկերության համակարգի կատարելագործումը, նորարարական մոտեցումների ներդրումը, հասցեականության ամրապնդումը և մասնավոր հատվածի ընդլայնված մասնակցությունը:

Աղյուսակ 4

ՂՀ միգրացիայի հաշվեկշիռը (2016-2018 թթ.)²²⁴

	2016	2017	2018
ՂՀ	-21,145	-22,130	-29,121
Աքմոլայի մարզ	-15,219	-341	-5,421
Ակտյուբինսկի մարզ	-3,251	-1,650	-2,119
Ալմա Աթայի մարզ	-1,504	-2,672	-15,466
Ատիրաուի մարզ	38	169	-379
Արևմտա-Ղազախստանյան մարզ	-2,984	-2,020	-2,154
Ժամբիլի մարզ	-16,257	-17,313	-11,701
Քարաղանդայի մարզ	-12,415	-11,685	-11,599
Քոստանայի մարզ	-7,722	-6,343	-5,585
Ղիզիլօրդայի մարզ	-6,671	-4,654	-3,718
Մանգիստաուի մարզ	-958	846	1,014
Հարավ-Ղազախստանյան մարզ	-29,029	-13,848	-
Պավլոդարի մարզ	-6,877	-6,908	-5,497
Հյուսիս-Ղազախստանյան մարզ	-7,244	-5,463	-4,697
Թուրքեստանի մարզ	-	-	-37,266
Արևելա-Ղազախստանյան մարզ	-14,998	-13,956	-12,870
ք. Աստանա	76,314	33,511	22,799
ք. Ալմա Աթա	27,632	30,197	31,082
ք. Շիմքենտ	-	-	34,456

Աղյուսակ 4-ից երևում է, որ 2016-2018 թթ. երկրի միգրացիայի բացասական հաշվեկշիռն աճել է՝ 21 հազար 145 մարդուց հասնելով 29 հազար

²²⁴ Տվյալների աղբյուրը՝ ՂՀ ազգային էկոնոմիկայի նախարարության վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք՝ <http://stat.gov.kz/official/industry/61/statistic/8> (25.06.2019):

121 մարդու: Փաստորեն, մեկնողների և ժամանողների բացասական հաշվեկշիռը համեմատաբար բարձր է երկրի Հարավ-Ղազախստանյան, Ալմա Աթայի, Ժամբիլի, Քարաղանդայի, Արևելա-Ղազախստանյան և Թուրքեստանի մարզերում (տե՛ս Աղյուսակ 4):

Աղյուսակ 5

ՂՀ արտաքին միգրացիայի հաշվեկշիռը (2014-2015 թթ.)²²⁵

	2016	2017	2018
ՂՀ	-21,145	-22,130	-29,121
Աքմոլայի մարզ	-1593	-2,231	-2,148
Ակտյուբինսկի մարզ	-713	-1,071	-1,261
Ալմա Աթայի մարզ	2210	3,753	542
Ատիրաույի մարզ	238	185	36
Արևմտա-Ղազախստանյան մարզ	-526	-786	-1,206
Ժամբիլի մարզ	-626	-479	-449
Քարաղանդայի մարզ	-5483	-5,571	-5,255
Քոստանայի մարզ	-3692	-4,169	-4,820
Ղիզիլօրդայի մարզ	-51	-27	-35
Մանգիստաուի մարզ	1381	1,087	1,114
Հարավ-Ղազախստանյան մարզ	501	754	-
Պավլոդարի մարզ	-3974	-3,888	-4,173
Հյուսիս-Ղազախստանյան մարզ	-2533	-2,651	-3,210
Թուրքեստանի մարզ	-	-	336
Արևելա-Ղազախստանյան մարզ	-3712	-4,306	-5,582
ք. Աստանա	-636	-926	-1,276
ք. Ալմա Աթա	-1,936	-1,804	-2,096
ք. Շիմքենտ	-	-	362

Աղյուսակ 5-ից երևում է, որ 2016-2018 թթ. երկրի արտաքին միգրացիայի հաշվեկշիռը, ըստ ներգաղթողների և արտագաղթողների թվաքանակի գնահատման, բացասական է, ինչը համեմատաբար բարձր է ՂՀ-ի Քարաղանդայի, Քոստանայի, Մանգիստաուի, Պավլոդարի, Հյուսիս-Ղազախստանյան և Արևելա-Ղազախստանյան մարզերում (տե՛ս Աղյուսակ 5):

²²⁵ Տվյալների աղբյուրը՝ ՂՀ ազգային էկոնոմիկայի նախարարության վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքը՝ <http://stat.gov.kz/official/industry/61/statistic/8> (25.06.2019):

**7. Ժողովրդավարացման զսպման և անազատականության շրջափուլերը
Ղազախստանում. կառավարելի և փոփոխվող իշխանակարգ**

Դիտարկվող ժամանակահատվածում Ղազախստանում սոցիալական քաղաքականության ազգային մոդելը կենտրոնացած էր կայուն տնտեսական աճի առավելությունների և հնարավորությունների օգտագործման վրա՝ փորձելով բարձրացնել մարդկանց բարեկեցության մակարդակը: Դրա իրականացման շնորհիվ կառավարությունը բարեփոխել է աշխատանքային հարաբերություններն ու զբաղվածությունը, կրճատել գործազրկությունը²²⁶, անցել կուտակային կենսաթոշակային համակարգին, ներմուծել սոցիալական նպաստների նոր տեսակներ, ստեղծել սոցիալական աջակցության հասցեական համակարգ²²⁷: Այդ ամենն էլ իր հերթին ապահովել է երկրի դիրքերի բարելավմանը հետխորհրդային տարածքում: Ակնհայտ է, որ երկրի տնտեսության աճով պայմանավորված՝ հնարավոր է դարձել ընդլայնել պետական սոցիալական ապահովության համակարգը երեք ուղղությամբ. 1) ընդլայնել սոցիալական ապահովության ոլորտը, 2) մեծացրել սոցիալապես պաշտպանված խմբերի քանակը, 3) բարձրացնել սոցիալական ապահովության ծառայությունների մակարդակն ու ավելացնել թվաքանակը: Այս առումով կարևորվում է սոցիալական պաշտպանության համակարգում կառավարության սոցիալական գործընկերների՝ արհմիությունների և գործատուների միավորումների դերի բարձրացումը: Չէ՞ որ սոցիալական պաշտպանության համակարգն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ֆինանսավորում են աշխատողները և գործատուները:

2016-2018 թթ. ՍԳԻ-ի ցուցանիշների բարելավման առումով կարևոր նշանակություն է ունեցել կենսաթոշակային բարեփոխումները: Դրանցում առանցքային են եղել պետության, աշխատողների և գործատուների միջև կենսաթոշակային պատասխանատվության տարանջատման սկզբունքները: Մասնավորապես, կենսաթոշակային համակարգի հետագա արդիակա-

²²⁶ Տե՛ս ՀԲ-ի պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOT.L.ZS?locations=KZ> (19.06.2019):

²²⁷ Ավելի մանրամասն տե՛ս ՂՀ աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարության պաշտոնական կայք՝ <https://enbek.gov.kz/ru/taxonomy/term/104> (18.07.2019), ՂՀ էլեկտրոնային կառավարության պաշտոնական կայք՝ https://egov.kz/cms/ru/articles/pension/pensionnaya_sistema (18.07.2019):

նացման նպատակով, նախատեսված է 2020 թ. հունվարի 1-ից ներդնել պայմանական-կուտակային լրացուցիչ բաղադրիչը²²⁸:

7.4 Կրթական համակարգի ռազմավարական զարգացման առաջնահերթությունները

Ժամանակակից ղազախստանյան հասարակության կրթական համակարգում սոցիալ-մշակութային փոխակերպումները շարունակվում են: Կրթության և դաստիարակության խնդիրներում հակասականությունը կրթության ոչ բոլոր խավերին մատչելիությունն է և որակը, դրա հիմնարար բնույթի և մասնագիտացման ոչ արդիական մեթոդները: Զգալի է կրթական գործոնների դերը երկրի ժողովրդավարացման, սոցիալ-տնտեսական զարգացման, մշակութային ինտեգրման և արդիականացման գործընթացներում: Դրանք կտրուկ բարձրացրել են ազգային գիտակրթական համակարգի մրցունակությունը, կրթության սոցիալ-տնտեսական և մշակութային դերը, ավանդական և հեռավար ուսուցման փոխլրացնող համակարգերը, ինչպես նաև կրթության զարգացումը կառավարելու ամենաարդյունավետ ընթացակարգերը: Այս խնդիրներն առաջնային տեղ են գրավում համաշխարհայինացման համատեքստում երկրի կրթական համակարգը փոխելու եղանակների և այդ փոփոխությունների հնարավոր բացասական հետևանքների վերաբերյալ ռազմավարություններում²²⁹:

Ղազախստանի Կրթական գործոնների ինդեքսի (Կ_{գի}) կորի 2000-2018 թթ. ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Կ_{գի}-ի կորը նախորդ տարվա համեմատ 2017-2018 թթ. նվազել է (տե՛ս Գծապատկեր 7, Աղյուսակ 1): Կ_{գի}-ի ցուցանիշների անկումը հիմնականում պայմանավորված էր կրթության ոլորտին ուղղվող պետական ծախսերի նվազմամբ²³⁰: Դրական էր, որ

²²⁸ Տե՛ս նույն տեղում:


²²⁹ Տե՛ս ՂՀ կրթության և գիտության նախարարության պաշտոնական կայք՝ <http://edu.gov.kz/ru/deyatelnost> (21.07.2019):

²³⁰ Տվյալների աղբյուրը՝ ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի ՄԶՀ-ի պաշտոնական կայք՝ <http://hdr.undp.org/en/data> (18.07.2019):

**7. Ժողովրդավարացման զսպման և անազատականության շրջափուլերը
Ղազախստանում. կառավարելի և փոփոխվող իշխանակարգ**

Կ_{գր}-ի ցուցանիշները 2000-2018 թթ. ժամանակահատվածում բարելավվել են: Եթե 2000 թ. Կ_{գր}-ն ունեցել է 0,436 միավոր, ապա 2018 թ.-ին՝ 0,474 միավոր: Ընդ որում, 2016 թ. Կ_{գր}-ն արձանագրել է ամենաբարձր ցուցանիշը 2000-2018 թթ. ժամանակահատվածի համար (տե՛ս Գծապատկեր 7, Աղյուսակ 1):

Գծապատկեր 7
Ղազախստանի Կրթական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)*



2016-2018 թթ. ՂՀ-ում գործող նախադպրոցական հաստատությունների քանակը նախորդ տարվա համեմատ ավելացել է: Եթե 2016 թ.-ին դրանց քանակը 9 հազար 410 էր, ապա 2017-2018 թթ. համապատասխանաբար՝ 9 հազար 828 և 10 հազար 314²³¹: Ընդ որում՝ դրանցում ներգրավված են եղել ավելի քան 880 հազար երեխա և ավելի քան 94 հազար մանկավարժական աշխատող²³²:

Նախորդ տարվա համեմատ 2016-2018 թթ. երկրում նկատելի են ինչպես բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակի, այնպես էլ

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

²³¹ Տե՛ս նույն տեղում:

²³² Տե՛ս նույն տեղում:

ուսանողների և պրոֆեսորադասախոսական համակազմի թվաքանակի նվազման միտումներ (տե՛ս Աղյուսակ 6):

Աղյուսակ 6

Բարձրագույն ուսումնական հաստատությունները²³³

	<i>2016/17</i>	<i>2017/18</i>	<i>2018/19</i>
Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	125	122	124
Ուսանողների թվաքանակը	477,074	496,209	542,458
Պրոֆեսորադասախոսական համակազմի թվաքանակը	38,241	38,212	38,275

Անցած տարիների ընթացքում զգալիորեն փոխվել է Ղազախստանի բարձրագույն կրթության որակը՝ արձագանքելով փոխակերպվող վարչակարգի սոցիալ-տնտեսական, մշակութային և քաղաքական նոր իրողություններին (*EUA 2018, European Commission/EACEA/Eurydice 2018*): Նախ, բավականին ընդլայնվել է բարձրագույն կրթությունը: Երկրորդ, բարձրագույն կրթության զանգվածայնացումը փոխակերպել է կրթական ծառայությունները՝ նոր տեսակի կրթական հաստատություններ, հեռավար կրթության ընդլայնում ու ուսանողների թվի աճ: Երրորդ, տեղի է ունեցել բուհերի ֆինանսավորման աղբյուրների և ընթացակարգերի դիվերսիֆիկացիա: Համալսարանների եկամտաբերությունն ապահովելու համար առանցքային են վճարովի հիմունքներով ուսուցումը, գիտահետազոտական և փորձարարական ստրուկտորական աշխատանքների իրականացումը: Այստեղ ներդրվել է արդյունքների վրա հիմնված բյուջետավորման, ինչպես նաև մրցակցային հիմունքներով միջոցների բաշխման ընթացակարգ: Վերջապես, ուսումնական հաստատություններն ակտիվորեն աշխատում են միջազգայնացման մակարդակը բարձրացնելու, Ղազախստանի և զարգացած երկրների հաստատությունների, ակադեմիական խմբերի և ուսանողների միջև ցանցային փոխգործակցություն հաստատելու ուղղությամբ:

Ղազախստանում կրթական համակարգի արդիականացումն ու միջազգայնացումն անխուսափելի գործընթաց են. այդ է վկայում երկրի տեղե-

²³³ Տե՛ս նույն տեղում:

**7. Ժողովրդավարացման զսպման և անազատականության շրջափուլերը
Ղազախստանում. կառավարելի և փոփոխվող իշխանակարգ**

կատվական տարածության, գիտության և տեխնիկայի զարգացման դինամիկան: Ավելին, գիտակրթական համակարգի արդյունավետության բարձրացումն արագորեն կերպափոխել է երկրի հանրային կառավարման և ՏԻՄ-երի ենթակառուցվածքները, մասնակցության և առաջնորդության որակները՝ հասարակության անդամներից պահանջելով պատրաստ լինել տիրապետելու փոփոխվող տեխնոլոգիաներին (*Dubok and Turakhanova 2017, World Bank Group 2018, International Monetary Fund 2018, Maltseva and Janenova 2018*): Այս ամենը զգալիորեն ընդլայնել է ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության, համալսարանական, դպրոցական և մասնագիտական կրթության ժամանակակից պահանջները: Ուշագրավ է, որ գիտելիքի դարաշրջանում անհատի արդյունավետությունը որոշվում է ոչ թե ձեռք բերված գիտելիքների քանակով, այլ տիրապետած հմտությունների բազմազանությամբ և դրանց կիրառման հնարավորություններով: Չէ՞ որ երկրի քաղաքացիների կենսամակարդակը և կյանքի որակը կախված են գիտակրթական համակարգի արդյունավետությունից:

Աղյուսակ 7

**Հետազոտությունների և մշակումների ներքին ծախսերն ըստ գիտության
ճյուղերի (մլն ղազախական տենգե)²³⁴**

	2016	2017	2018
Ընդամենը	66,600.1	68,884.2	72,224.6
<i>Այդ թվում՝</i>			
Բնական գիտություններ	23,496.2	22,428.3	21,083.9
Ինժեներական աշխատանքներ և տեխնոլոգիա	30,193.4	31,459.4	35,596.8
Բժշկական գիտություններ	2,277.9	3,278.3	2,207.7
Գյուղատնտեսական գիտություններ	6,884.6	6,528.0	7,953.5
Սոցիալական գիտություններ	1,072.2	1,650.8	1,586.9
Հումանիտար գիտություններ	2,675.8	3,539.4	3,795.8

²³⁴ Տե՛ս նույն տեղում:

Աղյուսակ 7-ից երևում է, որ ըստ գիտության ճյուղերի՝ 2016-2018 թթ. հետազոտությունների և մշակումների ներքին ծախսերն աճել են: Հատկանշական է, որ դրանցում գերակայող են եղել ծախսերն ինժեներական աշխատանքների և տեխնոլոգիայի, ինչպես նաև բնական գիտությունների ոլորտներում (տե՛ս Աղյուսակ 7):

Աղյուսակ 8

Հետազոտությունների և մշակումների ներքին ծախսերն ըստ աշխատանքի տեսակի (մլն դազախական տենգե)²³⁵

	<i>2016</i>	<i>2017</i>	<i>2018</i>
<i>Ընդամենը</i>	<i>66,600.1</i>	<i>68,884.2</i>	<i>72,224.6</i>
<i>Այդ թվում՝</i>			
<i>Գիտական հետազոտություններ և մշակումներ</i>			
Հիմնարար հետազոտություններ	13,809.2	10,785.9	10,629.0
Կիրառական հետազոտություններ	35,841.1	40,909.6	43,278.3
<i>Փորձարարական ստրուկտորական մշակումներ</i>			
Փորձարարական ստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքներ	12,341.7	14,817.7	16,387.9
Փորձանմուշների պատրաստում, ապրանքների խմբաքանակ (արտադրանք)	2,478.1	885.3	1,518.6
Նախագծման աշխատանքներ շինարարության համար	2,130.0	1,485.7	410.8

Աղյուսակ 8-ից երևում է, որ ըստ աշխատանքի տեսակի՝ 2016-2018 թթ. հետազոտությունների և մշակումների ներքին ծախսերի զգալի մասը հատկացվել է հիմնարար և կիրառական հետազոտություններին, փորձարարական ստրուկտորական ու տեխնոլոգիական մշակումներին:

Դիտարկվող ժամանակահատվածում ՂՀ-ում ժամանակակից կրթական տեխնոլոգիաների ներդրումը և կրթության լավագույն մոդելների ազգայնացումն ապահովել են որակյալ կրթություն ստանալու հնարավորու-

²³⁵ Տե՛ս նույն տեղում:

**7. Ժողովրդավարացման զսպման և անազատականության շրջափուլերը
Ղազախստանում. կառավարելի և փոփոխվող իշխանակարգ**

թյուն՝ անկախ բնակության վայրից: Մինևույն ժամանակ, կրթության ոլորտում համարժեք և հավասարակշռված պետական քաղաքականությունը լուծում է ղազախստանյան հասարակության մեջ քաղաքական կայունության խնդիրը: Քաղաքակրթական նշանակություն ունի նաև այն, որ ՂՀ կրթական քաղաքականությունը դարձել է ներպետական և միջազգային կառույցների փոխգործակցության առանցքային գործիք: Այնուամենայնիվ ակնհայտ է, որ ՂՀ կրթության ոլորտում պետական քաղաքականության ձևավորման գործընթացում, որը բավարարում է ժամանակի պահանջները, առկա են քաղաքացիական հասարակության անբավարար ներգրավվածության և սահմանափակվածության խնդիրներ: Մասնավորապես, կրթական քաղաքականության ներկա փուլը ցույց է տալիս, որ պետական իշխանությունը կրթական համակարգը համարում է կառավարող ընտրանու առաջնահերթություններն ապահովելու միջոց: Դա այն դեպքում, երբ շուկայական միջավայրը նոր պահանջներ է ներկայացնում երկրի կրթական հաստատությունների ներքին կառավարման, ինչպես նաև ամբողջ համակարգի արդյունավետության համար:

Անհնար է ղազախստանյան կրթության մրցունակությունը բարելավել և երկրի մարդկային կապիտալի զարգացման համար իրական ռեսուրսի վերածել, եթե առկա է պետական կրթական քաղաքականության ձևավորման համակարգ, որտեղ հաշվի են առնվում միայն բարձրագույն քաղաքական իշխանության սահմանած բացառիկ առաջադրանքները: Եթե պետական կրթական քաղաքականության ոլորտում չզարգանան գիտական մշակումները, և չկայանան գիտահետազոտական ուղղությունները, ապա զգալիորեն կավելանան կառավարչական ռիսկերը:

Գիտելիքի հասարակության պայմաններում պետական կրթական քաղաքականությունը ՂՀ-ում պետք է ներառի այն բոլոր սուբյեկտների կարիքները, որոնք այս կամ այն ձևով հետաքրքրված են կրթական ոլորտի զարգացմամբ: Եթե գիտելիքն աստիճանաբար, բայց կայուն կերպով դառնում է երկրի տնտեսական զարգացման հիմնական ռեսուրսը, ապա կրթական համակարգը նույնպես պետք է դառնա հանրային քաղաքականության առաջնային ոլորտ:

7.5 Առողջապահության համակարգի կառավարման և արդիականացման հիմնախնդիրները

Առողջապահության համակարգի արդիականացումը հրատապ է դարձրել առողջապահության ազգային մոդելի զարգացման խնդիրը, որը կհամապատասխանի դազախստանյան հասարակության ժամանակակից իրողություններին: Այս խնդրի բարդությունը պայմանավորված է առողջապահության ոլորտի մի շարք առանձնահատկություններով, որը ներառում է ոչ միայն բժշկական և կանխարգելիչ հաստատությունները, այլև շրջակա միջավայրի, սոցիալական պաշտպանության ծառայությունների, աշխատանքային անվտանգության և մարդկային կապիտալի բարելավման ծրագրերը: Դրանք ապահովել են աշխատանքային ռեսուրսների որակը՝ նպաստելով երկրի տնտեսական զարգացմանը: Հետևաբար, առողջության ոլորտում ներդրումները ստեղծել են ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական առավելություններ: Չէ՞ որ բնակչության առողջության մակարդակով է որոշվում պետության սոցիալական քաղաքականության արդյունավետությունը:

ՂՀ Առողջապահական գործոնների ինդեքսի (Ա_{ԳԻ}) կորի 2000-2018 թթ. ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ա_{ԳԻ}-ի կորը 2016-2018 թթ.-ին նախորդ տարիների համեմատ աճել է (տե՛ս Գծապատկեր 8, Աղյուսակ 1): 2018 թ. Ա_{ԳԻ}-ի ցուցանիշն ամենաբարձրն է եղել 2000-2018 թթ. ժամանակահատվածում:

2016-2018 թթ. Ա_{ԳԻ}-ի ցուցանիշի աճը հիմնականում պայմանավորված է եղել կյանքի միջին տևողության ցուցանիշների բարելավմամբ և առողջապահության ընթացիկ ծախսերի կայունությամբ²³⁶: Հատկանշական է, որ առողջապահության ոլորտի ծախսերն ավելացել են շնորհիվ երկրում «Առողջապահության միասնական ազգային համակարգի» ներդրման: Հենց դա էլ նպաստել է, որ բժշկական կազմակերպությունների ինքնավարությունն աճի, և այդ կազմակերպությունների միջև մրցակցային միջավայր

²³⁶ Տվյալների աղբյուրը՝ ՂՀ ազգային էկոնոմիկայի նախարարության վիճակագրական կոմիտեի կայք՝ <http://www.stat.gov.kz> (20.07.2019), ՀԲ-ի պաշտոնական կայք՝ https://data.worldbank.org/indicator/SH.XPD.CHEX.GD.ZS?fbclid=IwAR100nEFGQ3MfB13vPeA_zlsz4prJhZ8A92Jf48HavFASkbbaimFcNEyYaE&locations=KZ (20.07.2019):


**7. Ժողովրդավարացման զսպման և անազատականության շրջափուլերը
Ղազախստանում. կառավարելի և փոփոխվող իշխանակարգ**

ձևավորվի (ՔԱԶՅ 2017):

ԱԳԻ-ի կորի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2016-2018 թթ. երկրում մարդկանց կյանքի միջին տևողությունն աճել է՝ հասնելով 73 տարեկանի, որն ամենաբարձրն է եղել 2000-2018 թթ.²³⁷:

Գծապատկեր 8

Ղազախստանի Առողջապահական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)*



Աղյուսակ 9-ից երևում է, որ 2016-2017 թթ. նվազել է բոլոր մասնագիտություններով բժիշկների թվաքանակը, բայց ավելացել է միջին բժշկական անձնակազմը: Ներկայումս անհրաժեշտ է բարձրացնել բժշկական անձնակազմի արդյունավետությունը և ցանկալի արդյունքների հասնելու համար կատարելագործել ընթացակարգերը:

ԺՄԻ-ի ԱԳԻ-ի ցուցանիշների աճի համար կարևոր նշանակություն են ունեցել առողջապահության զարգացման պետական ծրագրերը: 2011-2015 թթ. առողջապահության պետական ծրագրի իրականացման ընթացքում զգալիորեն արդիականացվել է առողջապահական համակարգը, ներդրվել են ժամանակակից ընթացակարգեր, իրականացվել են մի շարք կառուց-

²³⁷ Տե՛ս նույն տեղում:

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

վաճքային վերափոխումներ: Առողջապահության զարգացման այս ոլորտները հետագայում ընդգրկվել են 2016-2019 թթ. «Դենսաուլիք» պետական ծրագրում²³⁸, ինչպես նաև 2020-2025 թթ. պետական նախագծում²³⁹:

Աղյուսակ 9

Առողջապահության հիմնական ցուցանիշները²⁴⁰

	2016	2017
Բոլոր մասնագիտությունների բժիշկների թվաքանակը (հազար մարդ)	74,6	72,1
Միջին բժշկական անձնակազմի թվաքանակը (հազար մարդ)	170,8	175,2
Հիվանդանոցային հիմնարկների քանակը	877	853
Հիվանդանոցային մահճակալների քանակը (հազար)	100,1	99,5
Հիվանդանոցային մահճակալների քանակը հիվանդ երեխաների համար (հազար)	18,4	18,2
Աշխատանքային գործունեության հետ կապված դժբախտ պատահարներից տուժածների թվաքանակը, այդ թվում՝ մահվան ելքով (մարդ)	2034	2045
Աշխատանքային գործունեության հետ կապված դժբախտ պատահարներից զոհերի թվաքանակը (մարդ)	225	211
Դժբախտ պատահարների նյութական հետևանքները (հազար տենգե)	1 278 543,8	1 503 460,7

²³⁸ Տե՛ս ՂՀ առողջապահության նախարարության պաշտոնական կայք՝ <http://dsm.gov.kz/ru/pages/gosudarstvennaya-programma-razvitiya-zdravoohraneniya-respubliki-kazakhstan-densauyk-na-2016-0> (26.07.2019):

²³⁹ Տե՛ս ՂՀ առողջապահության նախարարության պաշտոնական կայք՝ <http://dsm.gov.kz/ru/pages/proekt-rasporyazheniya-premer-ministra-respubliki-kazakhstan-o-sozdani-rabochey-gruppy-po> (26.07.2019):

²⁴⁰ Տվյալների աղբյուրը՝ ՂՀ ազգային էկոնոմիկայի նախարարության վիճակագրական կոմիտեի կայք՝ <http://www.stat.gov.kz> (16.05.2017):

ՂՀ առողջապահության նախարարության արդյունավետության
գնահատման արդյունքները²⁴¹

Գնահատման ուղղություն		2014 թ.-ի գնահատական			2015 թ.-ի գնահատական		
		Կրեդիտ վարկանիշում	միավոր	միջին միավոր	Կրեդիտ վարկանիշում	միավոր	միջին միավոր
1	Ռազմավարական նպատակների և խնդիրների ձեռքբերում և իրականացում	3	87,6	82,3	6	87,2	87,0
2	Բյուջետային միջոցների կառավարում	2	75,7	64,5	1	82,5	71,7
3	Հանրային ծառայությունների մատուցում	2	73,7	53,8	7	53,6	56,1
4	Անձնակազմի կառավարում	4	74,2	73,6	7	76,1	74,5
5	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում	1	90,1	80,1	1	91,6	76,7
Ընդհանուր Կրեդիտ		1	82,93		3	78,2	

Աղյուսակ 10-ից երևում են 2014-2015 թթ. Առողջապահության նախարարության գործունեության ցուցանիշները, որոնք գնահատված են ըստ երկրի պետական և տեղական կենտրոնական գործադիր մարմինների գործառույթների մշտադիտարկման²⁴²: Նկատելի է, որ առողջապահության համակարգում խնդրահարույց են մնում հանրային ծառայությունների մատուցման, մարդկային ռեսուրսների կառավարման և ռազմավարական ծրագրե-

²⁴¹ Տվյալների աղբյուրը՝ ՂՀ առողջապահության նախարարության պաշտոնական կայք՝ <http://dsm.gov.kz/ru/kategorii/pokazateli-effektivnosti-ministerstva> (26.07.2019):

²⁴² Այդ մասին տե՛ս ՂՀ արդյունաբերության և ենթակառուցվածքների զարգացման նախարարության պաշտոնական կայք՝ <http://www.miid.gov.kz/ru/pages/itogi-ocenki-effektivnosti-deyatelnosti-cgo-po-realizacii-gosudarstvennoy-politiki> (29.07.2019):

րի մշակմանն առնչվող ոլորտները (տե՛ս Աղյուսակ 10): Տեղին է նշել, որ երկրի առողջապահության արդյունավետությունը կախված է սպառողներին և կազմակերպություններին առաջարկվող բժշկական ծառայությունների մրցունակությունից (*World Health Organization 2018, WHO European Region 2018*): Ավելին, մասնավոր հատվածն ակտիվորեն ներգրավված է երկրի առողջապահության ֆինանսավորման գործում: Սովորաբար մասնավոր ծախսերի բարձր մակարդակի պատճառը այն է, որ պետական ֆինանսավորման ծավալը չի ապահովում բավարար անվճար բժշկական ծառայություններ: Այդ իսկ պատճառով էլ բնակչությունը ստիպված է լինում դիմել մասնավոր հատվածին, որը մատուցում է վճարովի բժշկական ծառայություններ: Բացի այդ, առողջության վրա պետական ծախսերի ավելացմանը զուգընթաց՝ մասնավորին դիմում են նաև ավելի թանկ դեղեր ձեռք բերելու համար, որովհետև դրանք չեն ընդգրկված անվճար բժշկական օգնության մեջ: Մասնավոր ծախսերի ավելացումը բացասաբար է ազդել բժշկական օգնության մատչելիության վրա՝ շարունակելով մեծացնել մասնավոր և պետական բժշկական ծառայություն ստանալու միջև տարբերությունը և լրացուցիչ ծանրաբեռնվածություն դնելով բնակչության անապահով հատվածների վրա: Ըստ այդմ, կառավարության հիմնական խնդիրն է բարձրացնել հասարակության վստահության մակարդակը հանրային հատվածում բժշկական ծառայությունների նկատմամբ՝ ապահովելով դրանց մատչելիությունն ու որակը: Այս առումով բնակչության առողջական վիճակն ուղղակիորեն կախված է ոլորտի ֆինանսավորման մակարդակից, բժշկական անձնակազմի վերապատրաստմանը հատկացվող միջոցների չափից և որակից, ինչպես նաև բնակչության եկամտի և կյանքի որակի մակարդակից: Հետևաբար, բնակչության կենսակերպի բարելավման և առողջապահության բարձր մակարդակի հասնելու համար կառավարությունն անհրաժեշտ են սոցիալական անվտանգության և ինտեգրման ծրագրեր:

7.6 Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի զարգացման միտումները

Ժողովրդավարության ղազախստանյան մոդելի ձևավորման նախադրյալները պայմանավորված են համաշխարհայնացման, ինտեգրման, քաղաքական փոխակերպումների և արդիականացման գործընթացներով: Երկրի քաղաքական համակարգի հետագա զարգացման վեկտորը վարչակարգի և նախագահական կառավարման ձևի ժողովրդավարացումն է, հանրային կյանքի բոլոր ոլորտներում ժողովրդավարության սկզբունքների իրականացումը:


Ժամանակակից պայմաններում մրցունակ լինելու համար Ղազախստանը պետք է խթանի քաղաքացիների նախաձեռնողական ու ստեղծագործական ներուժը: Դա երկրի նախագահի և կառավարող ընտրանու համար հրամայական է դարձնում կայացնել պետական իշխանության մարմինների և ԲՀԿ-ների միջև կառուցողական երկխոսության և գործընկերության ընթացակարգերը, բարձրացնել դրանց գործունակությունն ու արդյունավետությունը: Մասնավոր սեփականության և շուկայական հարաբերությունների զարգացման շրջափուլերը հաջողել են այն ժամանակ, երբ դրանցում ներգրավված են եղել ԲՀԿ-ները:

Դիտարկվող ժամանակահատվածում երկրում շարունակվել է շուկայական տնտեսության զարգացման համար օտարերկրյա ներդրումներ ներգրավելու քաղաքականությունը: Դրան նպաստում են ոչ միայն հանքահումքային հարուստ ռեսուրսները, այլև քաղաքական իրավիճակի կայունությունը: Այս ամենն ամրապնդեցին արդիականացման քաղաքական և սոցիալ-տնտեսական հիմքերը՝ Ղազախստանը դարձնելով հետխորհրդային մրցունակ երկրներից մեկը:

Գծապատկեր 9-ից և 10-ից երևում է, որ 2000-2018 թթ. ժամանակահատվածում Ղազախստանի ժողովրդավարության մակարդակի ինդեքսի (ԺՄԻ) ցուցանիշները բարելավվել են: Եթե 2000 թ.-ին ԺՄԻ-ն ունեցել է 0,395 միավոր, ապա 2018 թ.՝ 0,437 միավոր (տե՛ս Գծապատկեր 9, Գծապատկեր 10, Աղյուսակ 1): Դիտարկվող ժամանակահատվածում Ղազախստանի ԺՄԻ-ի կորի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է 2016

թ.-ին: 2017 թ.-ին ԺՄԻ-ի կորը նվազել է, իսկ 2018 թ.-ին՝ որոշակիորեն բարելավվել (տե՛ս Գծապատկեր 9, Գծապատկեր 10, Աղյուսակ 1):

Գծապատկեր 9
Ղազախստանի ժողովրդավարության վրա ազդող Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական, Կրթական և Առողջապահական գործոնների ինդեքսները (2000-2018 թթ.)*



2016 թ.-ին ԺՄԻ-ի վերելքը պայմանավորված է եղել ՏգԻ-ի, ԿգԻ-ի և ԱգԻ-ի ցուցանիշների աճով: 2016 թ.-ին ԺՄԻ-ի վրա բացասական ազդեցություն են ունեցել ՔգԻ-ի և ՍգԻ-ի ցուցանիշների անկումը: Տեղին է նշել, որ Ղազախստանի շուկայական հարաբերությունների զարգացման ներկա փուլում կառավարության տնտեսական բարեփոխումների հիմնական թիրախ են եղել պետական ներդրումային քաղաքականության մշակումն ու իրականացումը: Երկրի տնտեսության մեջ օտարերկրյա ներդրումների ներգրավումը և դրանց արդյունավետ օգտագործումը նպաստել են զարգացած երկրների հետ Ղազախստանի տնտեսական փոխշահավետ համագործակցության ընդլայնմանը: Դա ուղղված էր ոչ միայն տնտեսական աճի բարձր տեմպերի

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները: ԺՄԻ-ի գործոնների ինդեքսները համեմատելի են միայն ըստ միտումների:


**7. Ժողովրդավարացման զսպման և անազատականության շրջափուլերը
Ղազախստանում. կառավարելի և փոփոխվող իշխանակարգ**

ապահովմանը, այլև կրթության և առողջապահության ոլորտներում արդյունավետության բարձրացմանը:

2017 թ.-ին ԺՄԻ-ի վրա բացասաբար է ազդել ՏԳԻ-ի և ԿԳԻ-ի ցուցանիշների անկումը: Սակայն ԺՄԻ-ի ՔԳԻ-ի, ՍԳԻ-ի և ԱԳԻ-ի ցուցանիշների բարելավումը պահպանել են քաղաքացիավարական փոխակերպումների միտումները ՂՀ-ում: Այս ժամանակահատվածում ինտենսիվ աշխատանքներ են իրականացվել երկրի քաղաքական համակարգի հետագա արդիականացման համար: Կան նոր ճգնաժամեր և ռիսկեր, որոնց երկիրը պետք է պատրաստ լինի եվրասիական ինտեգրման տարբեր մարտահրավերների դիմագրավելու համար: Դրանցից նշելի են ներքին կազմալուծող իրողությունները (անվստահություն, ազգամիջյան լարվածություն, ԵԱՏՄ անդամ պետությունների առանձին գործողություններ և այլն) և արտաքին գործոնները (ինտեգրման մրցակցությունը): Այնուամենայնիվ, արևելյան և հարավային վեկտորների փոխլրացման շնորհիվ Ղազախստանին հաջողվել է հաղթահարել ինտեգրացիոն դաշինքների մրցակցությունը հավասար գործընկերություն ապահովելու միջոցով:

Գծապատկեր 10

Ղազախստանի Ժողովրդավարության մակարդակի ինդեքսը (2000-2018 թթ.)*



* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

2018 թ.-ին ԺՄԻ-ի դրական դինամիկան պայմանավորված էր Ք_{ԳԻ}-ի, Տ_{ԳԻ}-ի, Ա_{ԳԻ}-ի և Ա_{ԳԻ}-ի ցուցանիշների աճով, որն ուղեկցվեց Կ_{ԳԻ}-ի կայունությամբ: Դիտարկելով ժողովրդավարական գործընթացների էվոյուցիան՝ պետք է նշել, որ Ղազախստանն այսօր անցումային հասարակություն է: Դեռևս ազդեցիկ են նախագահական «ուղղահայաց» կառավարումը և ուժեղ գործադիր իշխանությունը: Այս համատեքստում համախմբված ավտորիտարիզմից անցում կատարելով դեպի ժողովրդավարական բարեփոխումներին՝ հանրապետությունում առայժմ բազմաթիվ են լուծում պահանջող խնդիրները: Դրանցից են պետականաշինության և ինքնիշխանության ամրապնդմանն ուղղված տարածաշրջանային և համաշխարհային տնտեսական ու քաղաքական գործընթացներին արդյունավետ ինտեգրումը: Միայն բարեփոխումների փուլային և համակարգված իրականացումը կլուծի Ղազախստանյան հասարակության մեջ առկա հիմնախնդիրների մեծ մասը: Անցումային փուլում կառավարող ընտրանուն հաջողվել է պահպանել ներքաղաքական կայունությունը և դիմակայել սոցիալական դժվարին փոխակերպումներին:

7.7 Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի ռեգրեսիոն վերլուծությունը

Արուսյակ Ալեքսանյան, Աշոտ Ալեքսանյան

Ռեգրեսիոն վերլուծության միջոցով դուրս են բերվել ժողովրդավարության մակարդակի չափման մոդելում ընդգրկված այն փոփոխականները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն ՂՀ ժողովրդավարության մակարդակի վրա: Այս մեթոդով ստացված տվյալների համաձայն՝ նշանակալի կապ է հաստատվել ԺՄԻ-ի* և քաղաքական, ինչպես նաև սոցիա-

* ԺՄԻ-ն ժողովրդավարության մակարդակի ինդեքսն է, որից դուրս է բերվում համապատասխան անկախ փոփոխականը յուրաքանչյուր զույգային ռեգրեսիոն վերլուծության ժամանակ:

**7. Ժողովրդավարացման զսպման և անազատականության շրջափուլերը
Ղազախստանում. կառավարելի և փոփոխվող իշխանակարգ**

լական և առողջապահական գործոնների մի շարք փոփոխականների միջև, իսկ մոդելում ընդգրկված տնտեսական և կրթական գործոնների ու ԺՄԻ-ի միջև նշանակալի կապ նկատելի չէ:

Ըստ տվյալների վերլուծության արդյունքների՝ մոդելում ընդգրկված քաղաքական ցուցանիշներից առավել նշանակալի է կապը ԺՄԻ-ի և օրենքի գերակայության, ինչպես նաև մամուլի ազատության միջև (տե՛ս Աղյուսակ 11):

Աղյուսակ 11

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (Ք_{գր.}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Օրենքի գերակայություն	0,003	0,387	0,001	24
Մամուլի ազատություն	0,006	0,791	0,000	24

Սոցիալական գործոնների ինդեքսում նշանակալի կապ է դիտվել ԺՄԻ-ի և իրական աշխատավարձի, ինչպես նաև Ջինի ինդեքսի և գործազրկության միջև (տե՛ս Աղյուսակ 12):

Աղյուսակ 12

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (Ս_{գր.}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Իրական աշխատավարձ (100 ԱՄՆ դոլար)	0,013	0,411	0,000	24
Ջինի ինդեքս	-1,516	0,507	0,000	24
Գործազրկություն	-0,015	0,726	0,000	24

Առողջապահական գործոնների ինդեքսում նշանակալի է ԺՄԻ-ի և «ծախսերն առողջապահության ոլորտում» (ՀՆԱ%) փոփոխականի միջև կապը (տե՛ս Աղյուսակ 13):

Աղյուսակ 13

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (Ա_{գր.}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Առողջապահության ընթացիկ ծախսեր (ՀՆԱ%)	-0,076	0,694	0,000	24

ՂՀ ժողովրդավարության մակարդակի վրա նկատելի ազդեցություն ունեն օրենքի գերակայությունը և մամուլի ազատությունը: Սա նշանակում է, որ օրենքի գերակայության աճը 1 միավորով կբերի ԺՄԻ-ի աճին 0,003 միավորով: Միևնույն ժամանակ մամուլի ազատության դրական փոփոխությունը 1 միավորով կհանգեցնի ԺՄԻ-ի աճին 0,006 միավորով (տե՛ս Աղյուսակ 11): Այս առումով կարևոր նշանակություն ունի քաղաքական դինամիզմի և սոցիալական կայունության միջև հավասարակշռության պահպանումը: Դա կարող է նպաստել ՔՀԿ-ների, ՉԼՄ-ների, սոցիալական խմբերի և ցանցերի ակտիվ ներգրավմանը քաղաքական որոշումների ընդունման գործընթացներում: Ավելին, երկրի կառավարող ընտրանու առանցքային առաջադրանքներից մեկը կայուն քաղաքական ինստիտուտների ստեղծումն է: Չէ՞ որ ինստիտուցիոնալ կայունությունը, որը հիմնված է կայուն պետական ինստիտուտների և ուժեղ քաղաքացիական հասարակության վրա, կնպաստի ապահովելու օրենքի գերակայությունն ու մամուլի ազատությունը:

ՂՀ ԺՄԻ-ի սոցիալական գործոններից ժողովրդավարության վրա նշանակալիորեն ազդել են իրական աշխատավարձը, Ջինի ինդեքսը և գործազրկության մակարդակը: Վերջինիս 1%-ով, իսկ Ջինի ինդեքսի 0,1 միավորով նվազումը կհանգեցնի ԺՄԻ-ի աճին՝ համապատասխանաբար 0,015 և 0,15 միավորներով (տե՛ս Աղյուսակ 12): Միևնույն ժամանակ իրական աշխատավարձի բարձրացումը 100 ԱՄՆ դոլարով կհանգեցնի ԺՄԻ-ի աճին 0,411 միավորով (տե՛ս Աղյուսակ 12): Ի մասնավորի, բնակչության աղքատությունը և հասարակության բևեռացման ցուցանիշները բացասաբար են անդրադառնում հանրապետության տնտեսական զարգացման վրա, խոչընդոտում են սոցիալական պետության ինստիտուտների զարգացումը: Անհավասարության և աղքատության արմատավորումը խանգարում է միջին խավի՝ բնակչության վճարունակ մեծամասնության ձևավորմանը: Համաաշխարհայինացման և ինտեգրման գործընթացների համատեքստում երկիրը պետք է հատուկ ուշադրություն դարձնի հասարակության սոցիալ-տնտեսական անկայունության կանխարգելման խնդիրներին, բնակչության կյանքի որակի և բժշկական օգնության մատչելիության ցածր ցուցանիշ-

**7. Ժողովրդավարացման զսպման և անազատականության շրջափուլերը
Ղազախստանում. կառավարելի և փոփոխվող իշխանակարգ**

ներին, ինչպես նաև կենսապահովման մակարդակից ցածր եկամուտ ունեցող անձանց իրավունքներին:

Ղազախստանի ԺՄԻ-ի Առողջապահական գործոններից նշանակալի է եղել ԺՄԻ-ի կապը առողջապահության ընթացիկ ծախսերի հետ: Վերջինիս կրճատումը 1%-ով կհանգեցնի ԺՄԻ-ի աճին 0,694 միավորով (տե՛ս Աղյուսակ 13): Այս առումով բնակչության բժշկական և սոցիալական պաշտպանության ընթացակարգերի ընդլայնումն ազգային անվտանգության ամրապնդման նախադրյալ է: Այս հարցերը ձեռք են բերել քաղաքական աննախադեպ նշանակություն, որը կառավարությունից պահանջում է մշտական ներդրումներ կատարել՝ մարդկային կապիտալի որակը բարելավելու համար:

Երկրի արդիականացման նախաձեռնությունների հիմնական մասն իրականացվում է «վերևից», որոնց հիմնական նախաձեռնողը երկրի նախագահն է: Այս իրավիճակը պայմանավորված է մի քանի գործոններով: Նախ և առաջ հարկ է նշել, որ երկրի նախագահին հաջողվել է իր շուրջը համախմբել գործունակ կառավարող ընտրանի, որը նախաձեռնում և իրականացնում է ինտեգրման և արդիականացման բազմաբնույթ ծրագրեր: Այդ իսկ պատճառով ՂՀ խորհրդարանում միակուսակցական համակարգի ձևավորման արգելքը բացատրվում է նրանով, որ այն, ի վերջո, կարող է հանգեցնել քաղաքական արդիականացման և ժողովրդավարության հիմնարար սկզբունքների արժեզրկմանը: Ակնհայտ է, որ ընդդիմադիր կուսակցությունները դեռևս չեն ձևավորվել որպես քաղաքացիավարական լիարժեք ուժ, այնուամենայնիվ զգալի է դրանց դերը բազմակուսակցական համակարգի կայացման գործում:

Գրականության ցանկ

- **AFP** (2018) “Syria: the Astana peace process.” Accessed June 29, 2019. <https://www.france24.com/en/20180905-syria-astana-peace-process>.
- **Akulov, Mikhail** (2019) “Eternal Futurostan: Myths, Fantasies and the Making of Astana in Post-Soviet Kazakhstan.” In *Theorizing Central Asian Politics: The State, Ideology and Power*, editors Rico Isaacs and Alessandro Frigerio, 189-210. Palgrave Macmillan.

- **Bissenova, Alima** (2016) “Building a Muslim Nation: The Role of the Central Mosque of Astana.” In *Kazakhstan in the Making: Legitimacy, Symbols, and Social Changes*, ed. by *Marlene Laruelle*, 211-228. Lanham, Boulder, NY, London: Lexington Books.
- **Dubok, Helen** and **Dilbar Turakhanova** (2017) “Kazakhstan Final Report: Gender Study for Central Asia.” Accessed August 29, 2019. https://eeas.europa.eu/sites/eeas/files/kazakhstan_final_report_16.11.2017_approved.pdf.
- **EUA** (2018) “Transition to University Autonomy in Kazakhstan. State of play of university governance and recommendations for the reform process.” Accessed August 29, 2019. https://eua.eu/downloads/publications/trunak%20eua%20report%20wp1_final.pdf.
- **European Commission/EACEA/Eurydice** (2018) *The European Higher Education Area in 2018: Bologna Process Implementation Report*. Luxembourg: Publications Office of the European Union.
- **Fauve, Adrien** (2019) “Beyond ‘Personality Cults’: Sacralization of Power in Kazakhstan and the Concept of Monarchy.” In *Theorizing Central Asian Politics: The State, Ideology and Power*, editors *Rico Isaacs and Alessandro Frigerio*, 167-188. Palgrave Macmillan.
- **Forbes.com LLC** (2019) “Добыча нефти в Казахстане сократилась, как и экспорт”. Дата доступа: 29.07.2019. https://forbes.kz/news/2019/06/10/new-sid_201160.
- **Human Rights Watch** (2019) “World Report: events of 2018. New York.
- **International Monetary Fund** (2018) *IMF Country Report No.18/277: Republic of Kazakhstan*. Washington, D.C.
- **Kadir, Rizal Abdul** (2019) “Convention on the Legal Status of the Caspian Sea.” *International Legal Materials* 58 (2): 399-413.
- **KAZENERGY** (2017) “Национальный Энергетический Доклад”. Дата доступа: 29.07.2019. http://www.kazenergy.com/upload/document/energy-report/National-Report17_ru.pdf.
- **Kudaibergenova, Diana T.** (2016) “Nationalizing Elites and Regimes: Nation-Building in Post-Soviet Authoritarian and Democratic Contexts.” In *Kazakhstan in the Making: Legitimacy, Symbols, and Social Changes*, ed. by *Marlene Laruelle*, 113-130. Lanham, Boulder, NY, London: Lexington Books.
- **Kudaibergenova, Diana T.** (2019) “Compartmentalized Ideology: Presidential Addresses and Legitimation in Kazakhstan.” In *Theorizing Central Asian Politics: The State, Ideology and Power*, editors *Rico Isaacs and Alessandro Frigerio*, 145-166. Palgrave Macmillan.
- **Laruelle, Marlene** (2016) “Which Future for National-Patriots? The Landscape of Kazakh Nationalism.” In *Kazakhstan in the Making: Legitimacy, Symbols, and Social Changes*, ed. by *Marlene Laruelle*, 155-180. Lanham, Boulder, NY, London: Lexington Books.

**7. Ժողովրդավարացման զսպման և անազատականության շրջափուլերը
Ղազախստանում. կառավարելի և փոփոխվող իշխանակարգ**

- **Maltseva, Elena and Saltanat Janenova** (2018) *Reversing Pension Privatization in Kazakhstan: ESS-Working Paper No. 67*. Geneva: International Labour Organization.
- **Mkrtchyan, Narek A.** (2017a) “New Language Policy of Kazakhstan: A Project of Kazakhization?” *Contemporary Eurasia VI* (1): 108-121.
- **Mkrtchyan, Narek A.** (2017b) “Nation Building Projects Through New Capitals: From St. Petersburg to Yerevan and Astana.” *Nationalities Papers. The Journal of Nationalism and Ethnicity* 45 (3): 485-498.
- **OECD** (2018) “SME and Entrepreneurship Policy in Kazakhstan 2018.” Accessed August 29, 2019. https://read.oecd-ilibrary.org/employment/sme-and-entrepreneurship-policy-in-kazakhstan-2018_9789264301450-en#page1.
- **Official Journal of the European Union** (2016) “Council Decision (EU) 2016/123 of 26 October 2015 on the signing, on behalf of the European Union, and provisional application of the Enhanced Partnership and Cooperation Agreement between the European Union and its Member States, of the one part, and the Republic of Kazakhstan, of the other part.” Accessed August 29, 2019. https://eeas.europa.eu/sites/eeas/files/enhanced_partnership_and_cooperation_agreement.pdf.
- **Peyrouse, Sebastien** (2016) “The Kazakh Neopatrimonial Regime: Balancing Uncertainties among the “Family,” Oligarchs, and Technocrats.” In *Kazakhstan in the Making: Legitimacy, Symbols, and Social Changes*, ed. by *Marlene Laruelle*, 29-62. Lanham, Boulder, NY, London: Lexington Books.
- **The Astana Times** (2019a) “12th round of Astana Process peace talks advances work to launch constitutional committee.” Accessed August 29, 2019. <https://astanatimes.com/2019/04/12th-round-of-astana-process-peace-talks-advances-work-to-launch-constitutional-committee>.
- **The Astana Times** (2019b) “13th round of Astana Process peace talks to be Aug. 1-2 in Nur-Sultan.” Accessed August 29, 2019. <https://astanatimes.com/2019/07/13th-round-of-astana-process-peace-talks-to-be-aug-1-2-in-nur-sultan>.
- **UN** (2018) “Cooperation between the United Nations and the International Fund for Saving the Aral Sea (A/72/L.42).” Accessed June 29, 2019. <https://digitallibrary.un.org/record/1477554>.
- **UN News** (2019) “‘Ground Zero’: Report from the former Semipalatinsk Test Site in Kazakhstan.” Accessed June 29, 2019. <https://news.un.org/en/story/2019/08/104-5221>.
- **UNICEF** (2017) “Annual Report: Kazakhstan.” Accessed August 29, 2019. https://www.unicef.org/about/annualreport/files/Kazakhstan_2017_COAR.pdf.
- **WHO European Region** (2018) *From Alma-Ata to Astana: Primary health care - reflecting on the past, transforming for the future. Interim Report from the WHO European Region*. Copenhagen, Denmark.
- **World Bank Group** (2018) “A new growth model for building a secure middle class: Kazakhstan Systematic Country Diagnostic.” Accessed August 29, 2019.

- <http://documents.worldbank.org/curated/en/664531525455037169/pdf/KAZ-SCD-April-2018-FINAL-eng-with-IDU-05012018.pdf>.
- **World Health Organization** (2018) “Kazakhstan.” Accessed August 29, 2019. <https://www.who.int/docs/default-source/primary-health/case-studies/kazakhstan.pdf>.
 - **Абзалбеков, Бауржан С.** (2018) “Особенности становления казахстанской партийной системы в постсоветский период”. Вестник Омского университета. Серия: Исторические науки 2 (18): 208-214.
 - **Абылкасымов, Алмаз Е.** (2018) “Эволюция национального антикоррупционного законодательства и антикоррупционных институтов в Республике Казахстан”. Союз криминалистов и криминологов 3: 56-64.
 - **Акматалиева, Айнура М.** (2018) “Инициатива “один пояс - один путь” в Центральной Азии”. Сравнительная политика 9 (4): 139-146.
 - **Алпыспаева, Галья А., Каншаим Ж. Нурмуханова, Шинар К. Оспанова** (2019) “Модернизация университетов Казахстана: современные контексты проблемы”. Философия образования 19 (2): 81-99.
 - **Анферов, Роман И.** (2018) “Перспективная роль Большого евразийского партнерства в системе международных отношений”. Евразийская интеграция: экономика, право, политика 2: 64-68.
 - **Аубакирова, Гульнара М.** (2019) “Новые подходы к построению модели экономического роста Казахстана”. Экономические отношения 9 (1): 123-134.
 - **Борисов, Николай А.** (2019) “Институт президентства в постсоветских государствах: методика анализа, факторы формирования и трансформации моделей”. Вестник Российского фонда фундаментальных исследований. Гуманитарные и общественные науки 1 (94): 88-99.
 - **Бурцев, Александр И.** (2017) “Ресурсы внешней политики Республики Казахстан”. Журнал исторических, политологических и международных исследований 3 (62): 70-82.
 - **Вардомский, Леонид Б.** (2019) “Евразийская интеграция: некоторые итоги и возможные сценарии развития”. Российский внешнеэкономический вестник 4: 110-126.
 - **Горбунова, Ольга А.** (2018) Воздействие санкций на функционирование российских компаний нефтегазового сектора на мировом рынке нефти и газа”. Вестник Евразийской науки 2. Дата доступа: 23.07.2019. <https://esj.today/PDF/07ECVN218.pdf>.
 - **Грозин, Андрей В.** (2019) “История и современное состояние внутриэлитной сферы и ТЭК Казахстана”. Постсоветский материк S2 (6): 146-163.
 - **ГУ «Библиотека Первого Президента РК - Елбасы»** (2019) “От идеи к реальности: к 25-летию евразийской инициативы Первого Президента РК-Елбасы Нурсултана Назарбаева”. Дата доступа: 21.06.2019. <http://presidentlibrary.kz/ru/news/ot-idei-k-realnosti-k-25-letiyu-evraziyskoy-iniciativy-pervogo-prezidenta-respubliki-kazahstan>.

**7. Ժողովրդավարացման զսպման և անազատականության շրջափուլերը
Ղազախստանում. կառավարելի և փոփոխվող իշխանակարգ**

- **Додонов, Вячеслав Ю.** (2019) “Экономическое развитие Казахстана в постсоветский период: основные тенденции и изменение роли в мировой экономике”. Вестник Дипломатической академии МИД России. Россия и мир 3 (21): 93-112.
- **Дробот, Елена В.** (2018) “Особенности интеграционных процессов в Евразийском экономическом союзе в условиях санкций”. Процессы евразийской интеграции: социально-политическое измерение: монография, *под общ. ред. Галина И. Осадчей*, 194-222. Москва: БИБЛИО-ГЛОБУС.
- **Жансаутова, Алия, Елена Нечаева, Мерuert Казбекова** (2018) “Политические риски в обеспечении водной безопасности. опыт стран Центральной Азии (Казахстан, Таджикистан, Узбекистан)”. Центральная Азия и Кавказ 21 (4): 27-37.
- **Зазнаев, Олег И., Виктор В. Сидоров** (2018) “Президентские системы на постсоветском пространстве: верна ли гипотеза Хуана Линца?”. Вестник РГГУ. Серия: Политология. История. Международные отношения 4 (14): 24-35.
- **Изотов, Владимир С.** (2018) “Идеология наднациональных политических пространств и интеграционное сознание. Постановка проблемы и сравнительный анализ ЕС и ЕАЭС”. Вестник Российского университета дружбы народов. Серия: Политология 20 (2): 154-166.
- **Ионова, Елена П.** (2019) “Особенности казахстанской модели транзита власти”. Россия и новые государства Евразии 2 (43): 103-114.
- **Искаков, Ирлан Ж.** (2018) ““Первая модернизация” в Казахстане: идеология и практика”. Вестник Московского университета. Серия 12: Политические науки 2: 114-127.
- **Ким, Хюнчжун** (2018) “Дружественность и враждебность в поведении стран Центральной Азии”. Международные процессы 16 (2 (53)): 156-174.
- **Корешкова, Елена В.** (2019) “Анализ современного состояния сотрудничества российских нефтегазовых компаний с иностранными партнерами”. Вестник Евразийской науки 1. Дата доступа: 23.07.2019. <https://esj.today/PDF/05ECV-N119.pdf>.
- **Кучукова, Нуриля, Кульшария О. Шаяхметова, Назира М. Тюлюндиева** (2018) “Инвестиционные возможности Казахстана”. Реформа 3 (79): 16-31.
- **Лавров, Сергей Н., Анна А. Алексанян** (2017) “К вопросу о транснационализации российских компаний нефтегазового сектора”. Вестник международных организаций 12 (1): 209-228.
- **Левицкий, Стивен, Лукан А. Вэй** (2018) “Подъем конкурентного авторитаризма”. Неприкосновенный запас. Дебаты о политике и культуре 5 (121): 29-47.
- **Мальшева, Дина Б.** (2018) “Политические процессы в постсоветской Центральной Азии”. Контуры глобальных трансформаций: политика, экономика, право 11 (3): 36-52.
- **Матаева, Майгуль Х.** (2019) “Интернационализация национальных конституций Республики Казахстан и стран Центральной Азии”. Право и государство 2 (83): 25-34.

- **Министерство Энергетики РК** (2017) “Справка о Евразийском экономическом союзе”. Дата доступа: 29.07.2019. <http://energo.gov.kz/index.php?id=10734>.
- **Министерство Энергетики РК** (2018a) “Итоги оценки эффективности деятельности”. Дата доступа: 29.07.2019. <http://energo.gov.kz/index.php?id=69-74>.
- **Министерство Энергетики РК** (2018b) “Справка по международному сотрудничеству”. Дата доступа: 29.07.2019. <http://energo.gov.kz/index.php?id=18551>.
- **Министерство Энергетики РК** (2019a) “Нефтегазовая отрасль”. Дата доступа: 29.07.2019. <http://energo.gov.kz/index.php?id=4738>.
- **Министерство Энергетики РК** (2019b) “Энергетика”. Дата доступа: 29.07.2019. <http://energo.gov.kz/index.php?id=4741>.
- **Мирзоев, Саймуддин Т.** (2019) “Геополитические интересы Республики Казахстан в Афганистане”. Вестник Таджикского национального университета. Серия социально-экономических и общественных наук 2: 280-286.
- **Никулина, Анастасия А., Андрей В. Торопыгин** (2017) “К вопросу о концептуальной основе развития Евразийской интеграции”. Управленческое консультирование 3: 60-67.
- **Нуреев, Рустем М., Евгений Г. Бусыгин** (2017) “Экономические санкции против России: краткосрочные и среднесрочные последствия для нефтяной и газовой промышленности”. Journal of Economic Regulation (Вопросы регулирования экономики) 8 (3): 6-22.
- **Осадчая, Галина И.** (2018) “Евразийский экономический союз как практическая реализация неоевразийской концепции на постсоветском пространстве”. В кн.: Процессы евразийской интеграции: социально-политическое измерение: монография, под общ. ред. Галина И. Осадчей, 35-54. Москва: БИБЛИО-ГЛОБУС.
- **Панченко, Жанна** (2016) “Геополитическая концепция «Евразийство» как фактор влияния на безопасность в Восточной Европе”. Wschód Europy. Studia humanistyczno-społeczne 2: 57-74.
- **Перепелица, Денис Г.** (2018) “Проблемы и перспективы формирования финансовой инфраструктуры общего экономического пространства ЕАЭС”. Федерализм 1 (89): 159-172.
- **Пилипенко, Игорь В.** (2019) “Евразийский экономический союз: Quo Vadis? ”. Экономика и управление: проблемы, решения 4 (1): 4-44.
- **Разумов, Ярослав В.** (2018) “Казахстан: оживление экономики и внутривнутриполитический зажим”. Большая игра: политика, бизнес, безопасность в Центральной Азии 1-2 (58-59): 40-46.
- **Редакция газеты «МК в Казахстане»** (2019) “В 2019 году отмечают 25-летие евразийской идеи Нурсултана Назарбаева”. Дата доступа: 21.06.2019. <https://mk-kz.kz/politics/2019/01/30/v-2019-godu-otmechayut-25letie-evraziyskoy-idei-nursultana-nazarbaeva.html>.

7. Ժողովրդավարացման զսպման և անազատականության շրջափուլերը Ղազախստանում. կառավարելի և փոփոխվող իշխանակարգ

- **РИА Новости** (2015) “Назарбаев: евразийство - объединяющая идея для всех жителей Казахстана”. Дата доступа: 21.06.2019. <https://ria.ru/20150311/1051-931691.html>.
- **РЦЭЗ** (2017) “О ЕНСЗ”. Дата доступа: 27.06.2019. <http://ezdrav.kz/po-setitelyam/o-enzz>.
- **Седик, Дэвид, Ирина Кобута** (2016) “Единый рынок пищевых продуктов Евразийского экономического союза и торговые барьеры”. Торговая политика 1 (5): 56-91.
- **Сейдуманов, Альнур С.** (2018) “Политический процесс в Казахстане на современном этапе”. Проблемы постсоветского пространства 5 (2): 181-190.
- **Сейтимова, Венера Х.** (2018) “Конституционный Совет Республики Казахстан - гарант охраны семьи и детства”. Вестник Института законодательства Республики Казахстан 5 (54): 21-27
- **Смирнов, Вадим А.** (2018) ““Борьба интеграций” на постсоветском пространстве: гуманитарное измерение”. Современная Европа 6 (85): 51-62.
- **Сыроежкин, Константин Л.** (2016) “Проект “Экономический пояс Шёлкового пути” в сложном пространстве Центральной Азии”. Контуры глобальных трансформаций: политика, экономика, право 9 (6): 104-122.
- **ФПРК** (2019) “Экспертный совет при Федерации Профсоюзов РК”. Дата доступа: 21.06.2019. <http://fprk.kz/экспертный-совет-при-федерации-профс>.
- **Центральная профсоюзная газета «Солидарность»** (2019) “Репрессии против казахских профлидеров”. Дата доступа: 27.06.2019. https://www.solidarnost.org/special/profdict/Kak_unichtozhali_svobodnye_profsoyuzu_v_Kazahstane.html.
- **Цыкунов, Григорий А., Игорь В. Демешко** (2019) “Институт президентства или падишаха”. Государственная власть и местное самоуправление 5: 15-20.
- **Шлыков, Павел В.** (2017) “Евразийство и евразийская интеграция в политической идеологии и практике Турции”. Сравнительная политика 8 (1): 58-76.
- **Ювица, Николай В.** (2018) “Модернизация местного управления в Казахстане и СНГ: теория и практика”. Economics. Law. State 1 (1): 43-52.
- **Ювица, Николай В., Анэль Д. Елеукулова** (2016) “Современное состояние нефтегазовой отрасли Казахстана”. Вестник университета Туран 4 (72): 244-250.

8. ՂՐՂՋՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

ԱԼԻՍԱ ՋԱՄԱԼՅԱՆ

Հետխորհրդային Ղրղզստանի անկախացմանը հաջորդող տարիները ուղեկցվել են քաղաքական և սոցիալ-տնտեսական համակարգերի մի շարք բարեփոխումներով: Այդուամենայնիվ, ինչպես նորանկախ մյուս երկրները, Ղրղզստանը նույնպես չէր կարող անմասն մնալ ժողովրդավարացման վրա բացասաբար ազդող գործոններից՝ կոռուպցիա, մարդու իրավունքների ոտնահարում, ավտորիտար համակարգին բնորոշ դրսևորումներ, ներքաղաքական լարվածություն, հակամարտություն և այլն: Կառավարության անընդմեջ փոփոխվող կազմը, ազգամիջյան բռնությունները, պետական մարմիններում էթնիկ փոքրամասնությունների բավարար մակարդակով ներկայացված չլինելը, նախկին ամբողջատիրական համակարգի ազդեցությունը, տնտեսական և այլ հիմնախնդիրները խոչընդոտում են երկրի՝ ժողովրդավարության մակարդակի կայունացումը ու զարգացումը:

Սույն գլխում Ղրղզստանի Հանրապետության (ՂրՀ) ժողովրդավարության մակարդակի ինդեքսի (ԺՄԻ) վրա հնարավոր ազդեցություն ունեցող գործոնների ինդեքսավորմամբ և դրանց համակողմանի վերլուծությամբ ներկայացվել են 2000-2018 թթ.-ին Ղրղզստանի ԺՄԻ-ի միտումները (տե՛ս Գծապատկեր 6, 7): Համակողմանի վերլուծության նպատակով առանձին ենթագլուխներով անդրադարձել ենք քաղաքական, տնտեսական, սոցիալական, առողջապահական և կրթական բաղադրիչներին, իսկ ռեգրեսիոն վերլուծությամբ դուրս են բերվել ԺՄԻ-ի վրա առավել բացասական կամ դրական ազդող գործոնները:

8. Ղրղզստանի ժողովրդավարության կայացման գործընթացները

Աղյուսակ 1

Ղրղզստանի Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական, Կրթական ու Առողջապահական գործոնների և ժողովրդավարության մակարդակի ինդեքսները (2000-2018թթ.)*

Տարեթիվ	Ք _{ԳԻ}	Տ _{ԳԻ}	Ս _{ԳԻ}	Կ _{ԳԻ}	Ա _{ԳԻ}	ԺՄԻ
2000	0,365	0,352	0,542	0,434	0,198	0,370
2001	0,352	0,380	0,554	0,461	0,196	0,376
2002	0,323	0,410	0,550	0,501	0,195	0,376
2003	0,315	0,442	0,576	0,507	0,266	0,392
2004	0,329	0,490	0,574	0,516	0,284	0,413
2005	0,244	0,497	0,599	0,533	0,346	0,391
2006	0,262	0,571	0,607	0,578	0,385	0,427
2007	0,221	0,552	0,648	0,635	0,316	0,409
2008	0,259	0,618	0,689	0,599	0,311	0,441
2009	0,240	0,609	0,718	0,620	0,352	0,441
2010	0,264	0,616	0,733	0,597	0,361	0,453
2011	0,307	0,593	0,784	0,657	0,379	0,479
2012	0,308	0,613	0,861	0,700	0,469	0,507
2013	0,316	0,720	0,853	0,668	0,458	0,533
2014	0,314	0,695	0,850	0,595	0,471	0,519
2015	0,306	0,772	0,821	0,623	0,419	0,529
2016	0,308	0,673	0,851	0,663	0,395	0,510
2017	0,321	0,597	0,864	0,702	0,403	0,502
2018	0,335	0,663	0,885	0,702	0,413	0,528


* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

Ք_{ԳԻ}-ի, Տ_{ԳԻ}-ի, Ս_{ԳԻ}-ի, Կ_{ԳԻ}-ի, Ա_{ԳԻ}-ի և հետևաբար դրանց հիման վրա հաշվարկված ժՄԻ-ի որոշ տարիների արժեքները, հնարավոր է, աննշան տարբերվեն նախորդ հրապարակման համապատասխան տարիների արժեքներից՝ թարմացված և նոր տվյալների ներմուծմամբ պայմանավորված նվազագույն և առավելագույն արժեքների փոփոխման հետևանքով:

8.1 Ղրղզստանը քաղաքական կարգավորման շրջափուլում

Գծապատկեր 1

Ղրղզստանի Քաղաքական գործունեների ինդեքսը
(2000-2018 թթ.)*



Ղրղզստանի Հանրապետության Ք_{ԳԻ} կորը 2000-2018 թթ. ընթացքում տարբեր միտումներ է ունեցել: Մասնավորապես, սկսած 2016 թ.-ից այն պարբերաբար աճել է՝ 2018 թ. հասնելով 0,335-ի: Դիտարկվող ժամանակահատվածում Ղրղզստանի Ք_{ԳԻ}-ն ամենաբարձր ցուցանիշը գրանցել է 2000 թ.-ին, իսկ ամենացածրը՝ 2007 թ.-ին (տե՛ս Աղյուսակ 1, Գծապատկեր 1):

ՂրԸ-ում 2015-2018 թթ. քաղաքական կարգավորման և համախմբման տարիներ էին. երկիրը վերականգնվում էր հեղափոխություններից և էթնիկ հակամարտություններից: Իրավիճակն ինչ-որ չափով կայունացել էր, և չնայած քաղաքական մրցակցության որոշ աստիճանի առկայությանը՝ դեռևս նկատելի էր Ալմազբեկ Աթամբաևի ազդեցությունը (*Bertelsmann Stiftung 2018, 3*): 2005 և 2010 թթ. տեղի ունեցած հեղափոխություններից հետո Ղրղզստանի ավտորիտար նախագահներն այլևս լուրջ դերակատարում չունեին երկրի քաղաքական համակարգում (*Tokmakov 2015*): Սակայն

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

8. Ղրղզստանի ժողովրդավարության կայացման գործընթացները

դա չէր խանգարում քաղաքական էլիտային՝ իր ձեռքում պահի իշխանությունը. խիստ արմատացած էր նաև կոռուպցիան (*Freedom House 2018*): Աթամբաևը ջանում էր ամրապնդել իր կուսակցության դիրքերը՝ սպառնալով քաղաքական բազմակարծությանը: Ինչպես նախկին, այնպես էլ ներկայիս իշխանությունները շարունակում էին ճնշել ընդդիմադիր ակտիվիստներին և ազգային փոքրամասնություններին: Ղրղզստանի քաղաքական օրակարգային հարցերից էր 2017 թ. հոկտեմբերի 15-ին տեղի ունեցած նախագահական ընտրությունները (*Tynan 2017*): Հարկ է նշել, որ ՂրՀ Սահմանադրությամբ ուղղակի ընտրված նախագահը, որը վարչապետի հետ մեկտեղ ունի գործադիր կառավարման լիազորություններ, ընտրվում է վեց տարի ժամկետով՝ առանց վերընտրվելու հնարավորության (*Freedom House 2018*): Ըստ ՂրՀ Սահմանադրության հոդված 83-ի²⁴³, նախագահը՝ որպես պետության գլուխ, զգալի լիազորություններ ունի, սակայն Ղրղզստանի կառավարության գլուխը վարչապետն է, որն էլ նշանակում է կառավարության անդամներին: Կառավարությունը գործադիր իշխանության ամենաբարձր մարմինն է: Սահմանադրության հոդված 64-ի²⁴⁴ համաձայն՝ նախագահը ներկայացնում է երկիրը միջազգային հարթակներում, կարող է ստորագրել կամ վետոյի իրավունքով չեղյալ համարել օրենքները, նշանակել նոր ընտրություններ, առաջադրել Գերագույն դատարանի դատավորներին, կառավարության բարձրագույն պաշտոնները զբաղեցնող անդամներին (*Central Intelligence Agency 2019*): Եվ չնայած Սահմանադրությամբ նախագահին տրված սահմանափակ լիազորություններին՝ Ղրղզստանում ակնառու է նախագահի ազդեցությունը (*Bertelsmann Stiftung 2018, 10*):

Չնայած այն հանգամանքին, որ 2017 թ. նախագահական ընտրություններն անկախ Ղրղզստանի պատմության մեջ երկրորդն էին, որ առանձնացան նախագահական իշխանության խաղաղ փոխանցմամբ, այդուամենայնիվ դրանք ընթացան իշխանական ռեսուրսների չարաշահմամբ: Նախագահ ընտրվեց Սոորոնբայ Ժեենբեկովը, որը Աթամբաևի նախագահության օրոք Ղրղզստանի վարչապետն էր: Հրապարակվեցին մի շարք հաշվետվու-

²⁴³ Տե՛ս “Конституция Кыргызской Республики” ((Введена в действие Законом КР от 27 июня 2010 года) (В редакции Закона КР от 28 декабря 2016 года N 218)) // <http://www.president.kg/ru/konstituciya/> (28.03.2019):

²⁴⁴ Տե՛ս նույն տեղը:

թյուններ ընտրողների, մասնավորապես պետական համակարգում աշխատողների նկատմամբ ճնշումներ գործադրելու վերաբերյալ: Միջազգային դիտորդներն արձանագրել էին նաև ընտրություններից առաջ հանրահավաքների անցկացման արգելքներ, ինչպես նաև ընտրատեղամասերում քաղաքացիական հասարակության դիտորդների մասնակցության սահմանափակումներ (*Human Rights Watch 2018*): Քարոզարշավի կանոնները խախտելու մեջ էր մեղադրվում նաև Օմուրբեկ Բաբանովը, որին ԿԸՀ-ն երեք անգամ նկատողություն էր տվել: Միևնույն ժամանակ, Բաբանովի թիմը դժգոհում էր, որ անվտանգության ծառայության աշխատակիցներն իրենց թեկնածուի վրա ճնշում էին գործադրում՝ ձայնագրելով նրա հանդիպումներն ու զրույցները և ձերբակալելով կողմնակիցներին (*BBC News 2017*): Ընտրություններին մասնակցելու համար դիմել էր 60 թեկնածու, որոնցից միայն 13-ը գրանցվեցին, իսկ ավելի ուշ ևս 2 մասնակից դուրս մնաց ընտրացուցակից: Արդյունքում մասնակցող 11 թեկնածուներից հաղթող ճանաչվեց Ղրղզստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավար Ժեննեբեկովը՝ ստանալով 54,22% վստահության քվե, երկրորդ տեղում էր «Հանրապետություն-Աթա Ժուրտ» խորհրդարանական խմբակցության ղեկավար Բաբանովը՝ 33,49% ձայնով (տե՛ս Աղյուսակ 2) (*Central Intelligence Agency 2019*): Ընտրությունների հաջորդ օրը՝ հոկտեմբերի 16-ին, Բաբանովը հանդես եկավ մամլո ասուլիսով, որտեղ հայտարարեց, որ չի ընդունում ընտրությունների արդյունքները և չի շնորհավորելու Ժեննեբեկովին: Նա նաև անդրադարձավ երկրում տիրող հասարակական կարգին և նշեց, որ իր ցանկացած գործողություն դատարանների և իրավապահների միջոցով կանխվելու է: Չնայած թեկնածուներից ոչ ոք՝ բացի Ժեննեբեկովից, բացահայտորեն չի ճանաչել ընտրությունների արդյունքները, շատ քիչ թվով բողոքներ են ներկայացվել դրանց անարդար լինելու վերաբերյալ: Իսկ «Միացյալ Ղրղզստան» կուսակցության ղեկավար Ադախան Մադումարովի հայտարարության համաձայն՝ ընտրությունները չեն կարող արդար լինել՝ արտերկրում ապրող մեծաքանակ բնակչության ներգրավվածության բացակայության և ընտրախախտումների ժամանակ իրավապահ մարմինների անգործության պատճառով (*OSCE 2018, 24*):

8. Ղրղզստանի ժողովրդավարության կայացման գործընթացները

Աղյուսակ 2

2017 թ. ՂրՀ նախագահական ընտրությունների արդյունքները²⁴⁵

<i>Թեկնածու</i>	<i>Առաջադրող սուբյեկտը</i>	<i>Ընտրողների ձայների քանակը</i>	<i>Ընտրողների ձայների տոկոսը</i>
Սոորոնբայ Ժենեբեկով	Ղրղզստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցություն	920620	54,22
Օմուրբեկ Բաբանով	«Հանրապետություն-Աթա ժուրտ» խմբակցություն	568665	33,49
Ադախան Մադումարով	«Միացյալ Ղրղզստան» կուսակցություն	110284	6,57
Թեմիր Սարիև	«Սպիտակ բազե» կուսակցություն	43311	2,55
Թալաթբեկ Մասադիկով	Անկուսակցական	10803	0,64
Ուլուկբեկ Կոչկորով	Անկուսակցական	8498	0,50
Ազիմբեկ Բեկնազարով	Անկուսակցական	2743	0,16
Արստանբեկ Աբդիլդաս	Անկուսակցական	2015	0,12
Արսլանբեկ Մալիև	Անկուսակցական	1621	0,10
Էրնիս Զարլիկով	Անկուսակցական	1554	0,09
Տոկտայիմ Ումիտալիևա	Անկուսակցական	1473	0,09
Ընդհանուր		1,697,868	100
<i>Ընտրողների մասնակցություն</i>		<i>3,014,434</i>	<i>56,32</i>

²⁴⁵ Տվյալների աղբյուրը՝ Центральная комиссия по выборам и проведению референдумов Кыргызской Республики, "Центризбирком определил результаты выборов Президента Кыргызской Республики 15 октября 2017 года, 31 октября 2017" // <https://shailoo.gov.kg/ru/news/1973/> (16.02.2019):

Միջազգային դիտորդների կարծիքով՝ Ղրղզստանի Ընտրությունների և հանրաքվեների կենտրոնական հանձնաժողովը քաղաքական կողմնակալություն է ցուցաբերել ընտրությունների ժամանակ, իսկ ընտրական օրենսգրքի փոփոխություններն ավելի էին դժվարացրել ոչ կառավարական կազմակերպությունների աշխատանքը և բողոքարկելու հնարավորությունը (*Freedom House 2018*):

Տեղին է նշել, որ ՂրՀ սահմանադրական բացերը և նախագահի, վարչապետի ու խորհրդարանի միջև իշխանությունը բաժանելու անհամաձայնությունները նպաստում են կառավարության անկայունությանը, որի վառ օրինակն է 2010 թ.-ից ի վեր վարչապետի պաշտոնակատարի տասնյակ փոփոխությունները. պաշտոնավարած վարչապետների թիվը գերազանցում է Ղրղզստանի անկախության տարիները: Կարելի է ենթադրել, որ փոփոխվող կառավարության կազմն է պատճառը, որ երկրում այդքան դժվար է կյանքի կոչել օրակարգային պարտավորությունները: 2017 թ. օգոստոսի 26-ին վարչապետի պաշտոնը զբաղեցրեց նախկին նախագահի աշխատակազմի ղեկավար Սապար Իսակովը, որը պաշտոնավարեց մինչև 2018 թ. ապրիլի 19-ը (*Freedom House 2018*): Աթամբակի դաշնակցի՝ Իսակովի՝ պաշտոնից հեռանալուց մեկ օր անց Ղրղզստանի խորհրդարանը երկրի վարչապետ ընտրեց Մուհամմեդկալի Աբիլգազիևին: Իսկ Աթամբակի ղեկավարած կոալիցիան միանգամից հրաժարվեց աջակցել Իսակովին, և ներկա 112 պատգամավորներից 101-ը նրան դեմ քվեարկեց: Ընտրությունների ժամանակ ժեներելովին աջակցած Աթամբակը սկսեց հրապարակայնորեն քննադատել իր նախընտրած իրավահաջորդին, թեև քաղաքական համակարգում դա լուրջ ազդեցություն չունեցավ (*Radio Free Europe / Radio Liberty 2018*):

Ղրղզստանը, շնորհիվ ազատ ընտրված խորհրդարանական համակարգի, արտաքին քաղաքականությամբ ջանում է պահպանել այդքան դժվարությամբ ձեռք բերված կայունությունը: Անդամակցելով տասնյակ միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, ԵԱՀԿ, ԱՄՀ, ՀԲ, ԱՀԿ, ԿԽ, ԱՄԿ և այլն)՝ ՂրՀ-ն փորձում է դիմակայել ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ քաղաքական մարտահրավերներին (*U.S. Department of State 2018*): Նշենք նաև, որ տարեցտարի ավելանում են ԵՄ-ՂրՀ փոխգործակ-

8. Ղրղզստանի ժողովրդավարության կայացման գործընթացները

ցության ոլորտները, իսկ 2010 թ. Ղրղզստանում էթնիկ բախումները հետագայում բացառելու համար ԵՄ-ի արտաքին գործողությունների հիմնական նպատակն է երկրում խաղաղության պահպանումը՝ ֆինանսական աջակցությունն ուղղելով ինստիտուցիոնալ բարեփոխումների ոլորտ (*European External Action Service 2018 a*):

Մարդու իրավունքներն ու ազատությունները: Ղրղզստանի Հանրապետության Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ մարդու իրավունքներն ու ազատությունները գերակա արժեքներ են, և ոչ ոք չի կարող ենթարկվել խտրականության սեռի, ռասայի, լեզվի, հաշմանդամություն ունենալու, էթնիկ պատկանելիության, հավատքի, տարիքի, քաղաքական համոզմունքների, կրթության, ծագման և այլ հանգամանքների համար: Այնուամենայնիվ, այս հոդվածը հաճախ է ոտնահարվում և անտեսվում: Էթնիկ ուզբեկները երբեմն շարունակում են տուժել բռնություններից ու խոշտանգումներից, կամայական կալանքից և վատ վերաբերմունքից:

Ժենեթեկովի նախագահության առաջին տարում մարդու իրավունքների ոտնահարման դեպքերը շարունակվում էին. մասնավորապես կանանց նկատմամբ բռնության (առևանգում, թրաֆիքինգ, խոշտանգումներ) դեպքերը հաճախ չէին բացահայտվում, իսկ անարդարացիորեն դատապարտված մարդու իրավունքների պաշտպան Ազիմժան Ասկարովը դեռևս անազատության մեջ է՝ չնայած ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի՝ նրան ազատ արձակելու 2016 թ. որոշմանը: Միևնույն ժամանակ, լրատվամիջոցների նկատմամբ բռնություններն այդքան էլ ակնառու չէին, քանի որ նախագահը փորձում էր կառուցողական երկխոսություն ունենալ քաղիասարակության և լրատվամիջոցների հետ (*Human Rights Watch 2019*):

2018 թ. սեպտեմբերին Ղրղզստանի վարչապետը ստորագրեց ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի (CRPD)²⁴⁶ վավերացման մասին որոշումը, որը մասամբ բարելավում է երկրում իրավունքների պաշտպանվածության մակարդակը (*Human Rights Watch 2019*): Այնուամենայնիվ, մարդու իրավունքների խնդիրներով զբաղվող ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները հա-

²⁴⁶ Տե՛ս "Convention on the Rights of Persons with Disabilities" // <https://www.un.org/disabilities/documents/convention/convoptprot-e.pdf> (28.03.2019):

ճախ են ենթարկվում ոտնձգությունների և ֆիզիկական հարձակումների: Այդպես օրինակ՝ մարդու իրավունքների պաշտպան Չոլպոն Ժակուպովան նախագահի հասցեին վիրավորական դիտարկումներ անելու համար ենթարկվեց դատական հետապնդման և տուգանվեց (*Freedom House 2018*): Ղրղզստանում դատական իշխանությունը շարունակում է կախված մնալ գործադիրից: Միջազգային դիտորդների կարծիքով՝ 2017 թ. դատապարտված ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչների և քննադատների դատավարությունները պատշաճ կերպով չեն իրականացվել՝ կոռումպացված դատական համակարգ ունենալու պատճառով (*Freedom House 2018*):

Չնայած այն հանգամանքին, որ քաղաքացիներն իրավունք ունեն քաղաքական կուսակցություններ ձևավորելու, դրանք պետք է ստանան առնվազն 0,7% վստահության քվե երկրի 9 մարզային ստորաբաժանումներից յուրաքանչյուրում, ինչն էլ խոչընդոտում է տեղական մակարդակում ձևավորված խմբերին մասնակցելու ազգային քաղաքականությունը (*Freedom House 2018*): Միևնույն ժամանակ, երկրում կուսակցական համակարգը բավականին մասնատված է, քանի որ Արդարադատության նախարարությունը պաշտոնապես գրանցել է ավելի քան 200 քաղաքական կուսակցություններ (*Kabar Agency 2016*): Մինչդեռ դրանց մեծ մասը չունի հստակ գաղափարախոսություն և շատ անհատականացված է՝ կենտրոնացած առաջնորդի շուրջ (*Ibrayev 2017*): Իսկ կուսակցական ղեկավարները հիմնականում հաջողակ գործարարներ են, որոնք ցանկանում են պատգամավորական մանդատ ստանալով իրենց գործարար շահերն առաջ տանել (*Machavariani 2017*): Հիմնականում դա է պատճառը, որ Ղրղզստանի քաղաքական համակարգը ոչ թե հստակ գաղափարախոսություններով և քաղաքական հարթակներով կազմակերպությունների, այլ լծակներ ունեցող անձանց ձեռքերում է:

Անդրադառնալով մոդելում ընդգրկված քաղաքական այլ փոփոխականներին՝ նշենք, որ 2010 թ. սահմանադրական բարեփոխումները միտված էին ապահովելու քաղաքական բազմակարծությունը, կանխարգելելու կոռուպցիան և ավտորիտար սուպերնախագահական համակարգը (*Temirkulov 2012*): Այս առումով նշենք, որ Կոռուպցիայի ընկալման ինդեքսի

8. Ղրղզստանի ժողովրդավարության կայացման գործընթացները

(ԿԸԻ)²⁴⁷ ցուցանիշները վերջին տարիներին բարելավվել են: Ղրղզստանին տրված գնահատականը 2016 թ. եղել է 28 միավոր, իսկ 2017-2018 թթ.-ին՝ 29: 2017 թ. օգոստոսին կաշառք վերցնելու համար ութ տարվա ազատազրկման դատապարտվեց «Ատա Մեկեն» ընդդիմադիր կուսակցության առաջնորդ Օմուրբեկ Թեքեբակը, որը Աթամբակի կարկառուն քննադատներից էր: Պատժից չխուսափեցին նաև Թեքեբակի դաշնակիցները, իսկ արդեն նոյեմբերին՝ հանրահավաքների ընթացքում, ազգամիջյան բռնություններ հրահրելու համար մեղադրանք առաջադրվեց «Հանրապետություն» կուսակցության ղեկավար Օ. Բաբանովին, որը հրաժարական տալով փախուստի դիմեց (*Freedom House 2018*):

Թեև 2012 թ. օրենքն²⁴⁸ ապահովում է խաղաղ հավաքների, բողոքի ցույցերի և քաղաքացիական անհնազանդության գործողությունների կազմակերպումը, 2017 թ. նախագահական ընտրություններից առաջ Բիշքեկի մի շարք վայրերում դատարանների համաձայնությամբ արգելվեց հանրահավաքների անցկացումը: Իսկ նոյեմբերի 8-ին Բիշքեկի դատարանը, պատճառաբանելով նոյեմբերի 24-ին կայանալիք նախագահի երդմնակալության արարողությունը, արգելեց խաղաղ ցույցերի և հանրահավաքների անցկացումը մինչև դեկտեմբերի 1-ը (*Human Rights Watch 2018*):

2017 թ. մարդահամարի տվյալներով Ղրղզստանի բնակչության 73,2%-ը ղրղզներն են, 14,6%-ը՝ ուզբեկներ, 5,8%-ը՝ ռուսներ, 1,1%-ը՝ դուրգաններ, 5,3%-ը՝ այլ ազգեր (*Central Intelligence Agency 2019*): Թեև էթնիկ փոքրամասնությունները բավականին մեծ թիվ են կազմում, նրանք հաճախ են ենթարկվում քաղաքական ճնշումների, ինչպես նաև բավականաչափ ներկայացված չեն ընտրատեղամասերում, նույնիսկ այն տարածքներում, որտեղ նրանք մեծամասնություն են:

²⁴⁷ Կոռուպցիայի ընկալման ինդեքսը գնահատվում է «Թրանսփարենսի ինթերնեշնլ» (Transparency International) կազմակերպության կողմից սահմանված 0-100 սանդղակի միջակայքում (մինչև 2012 թ.-ը՝ 0-10), որտեղ 0-ն նշանակում է ամբողջական կոռումպացվածություն, իսկ 100-ը՝ կոռուպցիայի բացակայություն:

²⁴⁸ St'u Law of the Kyrgyz Republic "On peaceful assemblies" No 64 of May 23, 2012 // <https://www.osce.org/bishkek/100475?download=true> (29.03.2019):

Ղրղզստանը վավերացրել է գենդերային հավասարության վերաբերյալ մարդու իրավունքների մասին մի շարք միջազգային պայմանագրեր, իսկ 2012 թ. ընդունել է Գենդերային հավասարության ձեռքբերման ազգային ռազմավարությունը (*EuroPlus Consulting & Management 2018, 9*): ՔԳԻ-ի փոփոխական ՀԳԲԻ-ի (Համաշխարհային տնտեսական ֆորումի Համաշխարհային գենդերային բացակի ինդեքս, Global Gender Gap) 2018 թ. գենդերային հավասարության չափումների համաձայն՝ 149 պետությունների շարքում Ղրղզստանը 86-րդ տեղում է՝ նախորդ տարվա համեմատ մեկ կետով ցածր: ՀԳԲԻ-ի ենթաինդեքսների «տնտեսական մասնակցության և հնարավորությունների» ոլորտում Ղրղզստանը 78-րդ տեղում է, «կրթության մակարդակով»՝ 79-րդ տեղում, «առողջության և գոյատևման» ոլորտում՝ 1-ին տեղում, իսկ «քաղաքական մասնակցության» ոլորտում՝ 93-րդ տեղում (*World Economic Forum 2018*): Ի տարբերություն էթնիկ փոքրամասնությունների, երկրում կանայք ունեն քաղաքական հավասար իրավունքներ և զբաղեցնում են որոշակի առաջատար պաշտոններ: Այնուամենայնիվ, խորհրդարանում նրանք նույնպես փոքրաթիվ են՝ 19,2% (*Freedom House 2018*): Կանայք հաճախ են բախվում տնտեսության մեջ սահմանափակ ներգրավվածության հիմնախնդրին, քանի որ իրավական դրույթներով արգելվում է նրանց աշխատանքը մի շարք ոլորտներում (Ղրղզստանում կանանց 51,7%-ն է զբաղվում որոշակի տեսակի աշխատանքով. առանձնացված է 400 աշխատատեղեր ընդգրկող մի ցանկ, որտեղ կանայք իրավունք չունեն աշխատելու) (*EuroPlus Consulting & Management 2018, 9*): ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն 2018 թ. սեպտեմբերին անցկացված հարցման արդյունքում պարզել է, որ կանանց առևանգման, սեռական բռնության և հարկադիր ամուսնության մշակույթը ոտնահարում է Ղրղզստանում կանանց իրավունքները, և կոչ է արել խստացնել օրենսդրությունը՝ պատժելու և կանխարգելելու սեռական բնույթի բոլոր հանցագործությունները (*Human Rights Watch 2019*): 2014 թ. հետազոտության համաձայն՝ գյուղական համայնքների կանանց 12%-ը, իսկ քաղաքային կանանց 14%-ն ամուսնացել է մինչև 18 տարեկան դառնալը (*National Statistical Committee of the Kyrgyz Republic, UNICEF 2014*):

8. Ղրղզստանի ժողովրդավարության կայացման գործընթացները

2017 թ. ապրիլին ընդունված ընտանեկան բռնության մասին օրենքը²⁴⁹ պետք է կանխեր բռնության դեպքերը, սակայն, ինչպես երեխաների հարկադիր և կամընտրական աշխատանքը, թրաֆիքինգն ու շահագործումը պատժող օրենքները, այն նույնպես գործնականում կիրառելի չէ (*Human Rights Watch 2018*): 2018 թ. հուլիսին Գլխավոր դատախազությունը լրատվամիջոցներին է ներկայացրել վերջին երկու տարիների ընթացքում ավելի քան 9000 կանանց և երեխաների նկատմամբ գրանցված բռնության դեպքեր, բացվել են 5456 վարչական և 784 քրեական գործեր (*Human Rights Watch 2019*): Ղրղզստանում ընտանեկան բռնության դեպքերի նվազման միտում առանձնապես չի նկատվում, քանի որ կանայք ֆինանսապես կախված են տղամարդկանցից:

Մամուլի ազատության ոլորտի հիմնախնդիրներն արտացոլվել են միջազգային տարբեր զեկույցներում: Այսպես՝ «Ազատության տան»* (*Freedom House*) 2017 թ. զեկույցի համաձայն (ընդգրկում է 2016 թ. իրադարձությունները)՝ Ղրղզստանը 199 պետությունների և տարածքային միավորների շարքում հայտնվել է 67-րդ տեղում՝ օրենսդրական, քաղաքական և տնտեսական միջավայրերում ստանալով համապատասխանաբար 20, 27, 20 միավորներ: Նախորդ տարվա համեմատ մամուլի ազատության Ղրղզստանի գնահատականը չի փոփոխվել՝ փորձագետների կողմից գնահատվելով «անազատ» (*Freedom House 2017*)^{**}: Ղրղզստանի հանրային տեղեկատվության հասանելիության մասին օրենքները բավականին խիստ են, բայց դարձյալ գործնականում չեն կիրառվում, քանի որ պետական պաշտոնյաները հազվադեպ են պատասխանատվության ենթարկվում իրենց ֆինանսական կարգավիճակի տվյալները չիրապարակելու համար, բացի այդ,

²⁴⁹ St'u Laws "On protection from family violence" and "On amending certain legislative Acts of the Kyrgyz Republic on protection from family violence" of April 28, 2017:

* «Ազատության տան» մամուլի ազատության և քաղաքական իրավունքների ու քաղաքացիական ազատությունների ինդեքսները տեղ են գտել ԺՄԻ-ի մոդելում՝ որպես Ք_{ԳԻ}-ի փոփոխականներ:

** «Ազատության տան» Մամուլի ազատության ինդեքսը գնահատվում է 100-ից մինչև 0 միավորային սանդղակով, որտեղ 0-ից 30 գնահատական ստացած երկրները «ազատ» են, 31-ից 60-ը՝ «մասնակի ազատ», իսկ 61-ից 100-ը՝ «անազատ»:

վերջին տարիներին պետական ակտիվների վաճառքի շուրջ կոռուպցիոն սկանդալները նոր թափ են ստացել (*Freedom House 2018*): ԶԼՄ ոլորտը բավականաչափ տարաբնույթ է. էթնիկ խմբերի մասին ատելության քարոզը ենթարկվում է քրեական պատասխանատվության, սակայն լրատվամիջոցներում հաճախ կարելի է բացահայտ ազգայնական հոդվածների հանդիպել: Օրենքները հակասում են միմյանց, ինչպես օրինակ՝ 2014 թ. ընդունված օրենքը²⁵⁰, որը քրեականացնում է ԶԼՄ-ներում հանցագործության կամ գրպարտության մասին կեղծ տեղեկությունների հրապարակումը, չի համապատասխանում 2011 թ. ընդունված գրպարտության ապաքրեականացման օրենքին²⁵¹: 2017 թ. լայն տարածում ստացան լրագրողների և լրատվամիջոցների դեմ բողոքներն ու դատական գործերը: Դրանցից էին նաև Գլխավոր դատախազության հարուցած դատական գործերը «Զանոսա» լրատվական ցանցի և «Ազատություն» ռադիոկայանի դեմ՝ Աթամբակի մասին ապատեղեկատվություն տարածելու համար: Այդ նույն տարում տուգանվեցին մի շարք լրատվամիջոցներ, Ղրղզստանի ներքին գործերին անդրադարձող երկու օտարերկրյա լրագրողների արգելեցին մուտք գործել երկիր, իսկ Ուզուբեկ Բաբակուլովը, որը օժանդակում էր Ռուսաստանում տեղակայված լրատվական կայքին, հունիսին լքեց երկիրը՝ տուգանվելով հակաուզբեկական քարոզչության համար: Օգոստոսին ծայրահեղական բովանդակությամբ նյութեր տարածելու մեղադրանքով փակվեց «Սեպտեմբեր» հեռուստաընկերությունը, իսկ դրա սեփականատերը դատապարտվեց ազատազրկման (*Freedom House 2018*): 2017 թ. հունիսին՝ ԵՄ-ի և Ղրղզստանի միջև ամենամյա երկխոսության ժամանակ, ԵՄ-ն հորդորեց ապահովել լրատվամիջոցների ազատությունները և պաշտպանել էթնիկ փոքրամասնությունների իրավունքները: Մինչդեռ ՄԱԿ-ի գլխավոր քար-

²⁵⁰ Տե՛ս “Закон Кыргызской Республики” ((Введен в действие постановлением Верховного Совета Республики Кыргызстан от 2 июля 1992 года N 939-XII) (В редакции Законов КР от 17 мая 2014 года N 69, 4 января 2017 года N 1)) // https://shailoo.gov.kg/ru/ZakonodatelstvoMyyzambar/ZakonyMyyzambar/O_sredstvax_massoivoi_inform/ (28.03.2019):

²⁵¹ Տե՛ս “Закон Кыргызской Республики” (В редакции Закона КР от 11 июля 2011 года N 89) // <http://cbd.minjust.gov.kg/act/view/ru-ru/203332/10?cl=ru-ru> (29.03.2019):

8. Ղրղզստանի ժողովրդավարության կայացման գործընթացները

տուղար Անտոնիու Գուտերեշը Աթամբակի հետ հանդիպման ժամանակ բարձր գնահատեց կառավարության՝ օրենքի գերակայությունը և մարդու իրավունքները պաշտպանելու ջանքերը (*Human Rights Watch 2018*): 2019 թ. փետրվարին և մայիսին Ղրղզստանի գործող և նախկին նախագահները հրաժարվեցին 2017 թ. լրագրողներին դատապարտելու իրենց անհիմն հայցերից՝ մի փոքր նվազեցնելով լրատվամիջոցների նկատմամբ ճնշումը (*Human Rights Watch 2019*):

Միևնույն ժամանակ «Ազատության տան» քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ոլորտները, ըստ կազմակերպության գնահատման, «մասնակի ազատ» են*։ Ղրղզստանին տրված գնահատականները քաղաքական իրավունքների (5 միավոր) և քաղաքացիական ազատությունների (5 միավոր) մակարդակների համար 2010 թ.-ից մինչև 2017 թ. անփոփոխ են մնացել, իսկ 2019 թ.-ին²⁵² քաղաքացիական ազատությունների (4 միավոր) մակարդակը մեկ նիշով բարելավվել է։

Ինչ վերաբերում է ակադեմիական և անձնական կարծիքն արտահայտելու ազատությանը, ապա այն պաշտոնապես սահմանափակված չէ, սակայն քարոզարշավների և քվեարկության ժամանակ ուսուցիչներն ու ուսանողները որոշակի ճնշումների են ենթարկվում, ինչպես եղավ 2017 թ. նախագահական ընտրությունների ժամանակ (*Freedom House 2018*):

2008 թ. Կրոնի մասին օրենքի²⁵³ համաձայն՝ երկրում բոլոր կրոնական կազմակերպությունները պարտավոր են գրանցվել, որն էլ շատ հաճախ արհեստականորեն երկար ու բարդ գործընթացի է վերածվում։ Մահմեդականության և ուղղափառ քրիստոնեության հետևորդներից բացի, մյուս կրոնականները ենթարկվում են խտրական վերաբերմունքի և ոտնձգությունների։ Կառավարության ջանքերով վերահսկվում և սահմանափակվում են

* «Ազատության տան» Քաղաքական իրավունքների և Քաղաքացիական ազատությունների ինդեքսը գնահատվում է 1-ից մինչև 7 միավորային սանդղակով, որտեղ 1-ից 2,5 գնահատական ստացած երկրներն «ազատ» են, 3-ից 5-ը՝ «մասնակի ազատ», 5,5-ից 7-ը՝ «անազատ»:

²⁵² Տե՛ս «Ազատության տան» պաշտոնական կայք՝ <https://freedomhouse.org/report-types/freedom-world> (01.04.2019):

²⁵³ Տե՛ս Law “On freedom of Religion and Religious Organizations” No 282 of December 31, 2008 // <https://www.osce.org/odihr/124810?download=true> (29.03.2019):

իսլամիստական նկրտումները, որոնք երկրում ազգային սպառնալիք են համարվում (*Freedom House 2018*): Երկրում դեռևս մեծամասնություն են նախապաշարմունքներով ապրող մարդիկ, որոնք իրենց այս կամ այն կրոնի ներկայացուցիչն են համարում ոչ թե կամավոր, այլ ընտանիքում արդեն իսկ ավանդաբար դավանվող կրոնի պատճառով:

Ղրղզստանում հասարակական կազմակերպություններն ակտիվ և արդյունավետ գործունեություն են ծավալում, սակայն դրանք հաճախ կենտրոնանում են մայրաքաղաքին առնչվող հարցերի վրա՝ անտեսելով գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական կարևորագույն հարցերը: Սպառողների շահերի պաշտպանության հարցերով են զբաղվում բազմաթիվ տեղական կազմակերպություններ: Իսկ բնապահպանությանը, գյուղական համայնքային խնդիրներին, միգրանտների իրավունքներին առնչվող հարցերը մնում են օրակարգից դուրս (*Bertelsmann Stiftung 2018, 14*):

Ղրղզստանում խնդրահարույց է նաև ԼԳԲՏ համայնքի նկատմամբ խտրականությունը: 2016 թ. ընդունված սահմանադրական փոփոխություններն²⁵⁴ ընդգրկում են նույնասեռականների ամուսնությունն արգելող դրույթ: Իսկ ԼԳԲՏ-ների դեմ ուղղված օրինազծի քննարկումը, որը խոչընդոտում է «ոչ ավանդական սեռական հարաբերությունների քարոզչությունը», խորհրդարանը ձգձգում է ընդունել (*Human Rights Watch 2018*):

Ինչ վերաբերում է երկրում առկա հակամարտություններին²⁵⁵, ապա հարկ է նշել, որ Ղրղզստանի, Ուզբեկստանի և Տաջիկստանի բնակիչները

²⁵⁴ Տե՛ս “Конституция Кыргызской Республики” ((Введена в действие Законом КР от 27 июня 2010 года) (В редакции Закона КР от 28 декабря 2016 года N 218)) // <http://www.president.kg/ru/konstituciya/> (28.03.2019):

²⁵⁵ Մոդելում հակամարտության առկայության ազդեցությունը ժողովրդավարության վրա գնահատվել է հետևյալ կերպ՝ ա) հակամարտության բացակայություն (2 միավոր), բ) պասիվ հակամարտության առկայություն (1 միավոր). պետությունը կոնֆլիկտային իրավիճակում է այլ պետության/պետությունների հետ, որը, սակայն, չի ուղեկցվում ռազմական ակտիվ գործողություններով, գ) ակտիվ հակամարտության առկայություն. պետությունը կոնֆլիկտային իրավիճակում է այլ պետության/պետությունների հետ, որն ուղեկցվում է ռազմական ակտիվ գործողություններով (0): Տվյալների նորմալացման ժամանակ՝ որպես առավելագույն արժեք (max.) ընդունվում է 2-ը, իսկ նվազագույն (min.)՝ 0-ն:

8. Ղրղզստանի ժողովրդավարության կայացման գործընթացները

երկար տասնամյակներ միասին ապրել են Ֆերգանայի հովտում²⁵⁶, և տարածքային պատկանելիության խնդիրը բազմիցս է ատելության և անհանդուրժողականության պատճառ դարձել (*Akiner 2016*): 1991 թ.-ից ի վեր Ղրղզստանում ներքին քաղաքական հիմնախնդիրները միշտ ուղեկցվել են հյուսիսի և հարավի միջև պայքարով, այդ իսկ պատճառով քաղաքական ուժերը հաճախ են փորձում նվազագույնի հասցնել կլանային ազդեցությունը երկրում (*Peace Insight 2015*): ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման կոմիտեն (CERD) 2018 թ. մայիսյան եզրափակիչ դիտարկումներում նշել է, որ կառավարության՝ ազգամիջյան հարցերի կարգավորման քաղաքականությունը կենտրոնացած է ազգային ինքնության ստեղծման վրա, որը չի ներառում բոլոր էթնիկ խմբերին, ինչն էլ կարող է անցյալի հակամարտությունների վերսկսման նոր խթան դառնալ (*Human Rights Watch 2019*): 2010 թ. ազգամիջյան բախումներից 8 տարի է անցել, սակայն զոհերի ընտանիքները դեռ շարունակում են սպասել արդարության: Ուզբեկների՝ քաղաքական համակարգում սահմանափակ ներկայացվածությունը, ինչպես նաև նրանց լեզվի կարգավիճակն օրենքով ամրագրված չլինելը և ազգամիջյան չկարգավորված խնդիրները խոչընդոտում են լուծելու հակամարտությունը:


Այսպիսով, Ղրղզստանի համար շարունակական խնդիր է կոռուպցիան, ներքաղաքական լարվածությունը, բռնության դրսևորումները, ազգամիջյան հակամարտությունները, սահմանների անվտանգության խոցելիությունը, երբեմն էլ՝ հնարավոր ահաբեկչությունները:

²⁵⁶ Ֆերգանայի հովիտը միջլեռնային գոգավորություն է Տյան Շանի և Հիսարա-Ալայան լեռնային համակարգերի միջև, սահմանակից է Ուզբեկստանին, Ղրղզստանին և Տաջիկստանին: Այստեղ կան նավթի, գազի, ածխի, պղնձի, բազմամետաղների հանքավայրեր: Այն բամբակագործության, շերամապահության և գինեգործության կարևորագույն շրջաններից է (*Encyclopaedia Britannica 2013*):

8.2 Տնտեսության զարգացման հիմնախնդիրները

Գծապատկեր 2

Ղրղզստանի Տնտեսական գործոնների ինդեքսը
(2000-2018 թթ.)^{*}



2018 թ. ընթացքում երկրի տնտեսական հիմնական ցուցանիշները բարելավվել են՝ նպաստելով $S_{գր}$ -ի աճին նախորդ տարվա համեմատ. այն 0,597-ից հասել է 0,663-ի: 2000-2018 թթ. ժամանակահատվածում $S_{գր}$ -ի ամենաբարձր արժեքը (0,772) գրանցվել է 2015 թ.-ին (տե՛ս Գծապատկեր 2, Աղյուսակ 1): 2018 թ. $S_{գր}$ -ի աճին նպաստել են, մասնավորապես, ՀԱԱ-ի (\$1220 մեկ շնչի հաշվով), արտաքին առևտրաշրջանառության (101 ՀՆԱ%) և տնտեսության վարկավորման (22 ՀՆԱ%) ծավալների ավելացումը, ինչպես նաև գնաճի (1,5%) և բյուջեի դեֆիցիտի կրճատումը (-1,1 ՀՆԱ%): Ինչ վերաբերում է օտարերկրյա ուղղակի ներդրումներին, ապա 2015 թ.-ին գրանցած 17,13%-ից այն ՀՆԱ-ի նկատմամբ կտրուկ նվազել է՝ 2017 թ.-ին հասնելով -1,39%-ի²⁵⁷:

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

²⁵⁷ Տվյալների աղբյուրը՝ Համաշխարհային բանկի պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/> (15.07.2019):

8. Ղրղզստանի ժողովրդավարության կայացման գործընթացները

ՂրՀ-ն 6,3 միլիոն բնակչությամբ, գյուղատնտեսության, էլեկտրաէներգետիկայի և զբոսաշրջության ոլորտներում մեծ ներուժ ունեցող ցամաքային երկիր է: Երկրի տնտեսությունը շարունակում է մեծապես կախված մնալ արտերկրում, հատկապես Ռուսաստանում և Ղազախստանում աշխատողների դրամական փոխանցումներից, որոնք 2017 թ. դրությամբ կազմել են ՀՆԱ-ի 27%-ը: Գյուղական բնակավայրերի աղքատության մակարդակի կրճատմանը նպաստում է ծառայությունների մատուցման, գյուղատնտեսության, հանքարդյունաբերության, շինարարության և էլեկտրաէներգետիկայի ոլորտների դանդաղ, սակայն դրական աճը: Ղրղզստանը հարուստ է վարելահողերով (7%), արոտավայրերով (48%), անտառներով և հանքանյութերով. հատկապես հեռանկարային է գյուղատնտեսության ոլորտը (*World Bank 2018*): Արտահանման և ներմուծման ընդհանուր ծավալը կազմում է Ղրղզստանի ՀՆԱ-ի 102,2%-ը: Առևտրի համաշխարհային կազմակերպության ուսումնասիրությունների համաձայն՝ 2018 թ. հունիսի 30-ի դրությամբ ՂրՀ-ում հակատարիֆային 17 միջոցառումներ են ձեռնարկվել: Այնուամենայնիվ, ընդհանուր ներդրումային միջավայրը ռիսկային է և անորոշ (*Heritage Foundation 2019*): Ֆինանսական ռեսուրսները՝ ուժեղ բանկային համակարգը, ներդրումային կարողությունները, միկրոֆինանսավորումն ու անձնական միջոցների կառավարումը, հավասարապես կարևոր են յուրաքանչյուր երկրի տնտեսական աճն ապահովելու համար: Ուստի Ղրղզստանի տնտեսական դանդաղ աճի պատճառներից մեկն էլ գյուղաբնակների համար ֆինանսական հաստատությունների անհասանելի լինելու հանգամանքն է: Վարկային տոկոսադրույքները բարձր են, իսկ չափահաս բնակչության միայն 46%-ն է օգտվում բանկերից, եղած գումարները ճիշտ չեն կառավարվում նույնիսկ պետական ոլորտում (*Bradley 2017*):

2018 թ. հունվար-նոյեմբեր ամիսների դրությամբ ՀՆԱ-ի աճը դանդաղել է՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 4,7%-ից հասնելով 3,5%-ի, ինչն էլ պայմանավորված է եղել ոսկու արդյունահանման կտրուկ անկմամբ («Կումտոր» ոսկու հանքն ապահովում է ՀՆԱ-ի 10%-ը): Եվ չնայած Եվրասիական տնտեսական միության շրջանակներում եղած առևտրային հնարավորություններին՝ այս հանգամանքը խոչընդոտ է նաև բավարար չափով արտահանման արտադրանք ունենալու համար (*World Bank 2019 a*):

Աղյուսակ 3

Ղրղզստանի տնտեսության տվյալները²⁵⁸

	2016	2017
Բնակչություն (մլն)	6,1	6,3
ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	1,118	1,204
Տնտեսական աճ (ՀՆԱ, տարեկան տատանումները %-ով)	4,3	4,7
Հարկաբյուջետային հաշվեկշիռ (ՀՆԱ %)	-4,4	-3,2
Պետական պարտք (ՀՆԱ %)	59,1	58,8
Գնաճ (տարեկան տատանումները %-ով)	0,4	3,2
Առևտրի հաշվեկշիռ (ԱՄՆ դոլար, մլրդ)	-2,1	-2,4
Արտահանում (ԱՄՆ դոլար, մլրդ)	1,6	1,8
Ներմուծում (ԱՄՆ դոլար, մլրդ)	3,7	4,2
Արտահանում (տարեկան տատանումները %-ով)	-0,7	12,9
Ներմուծում (տարեկան տատանումները %-ով)	-3,0	12,1
Արտաքին պարտք (ՀՆԱ %)	115	108

Ղրղզստանի Տնտեսական ազատության ինդեքսը 2018-2019 թթ. ընթացքում եղել է 62,3, ըստ այդմ երկրի տնտեսությունը աշխարհում 79-րդ տեղն է զբաղեցնում: Ղրղզ-ն Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի 43 երկրների շարքում 17-րդն է, իսկ երկրի ընդհանուր միավորը տարածաշրջանային և համաշխարհային միջին ցուցանիշներից բարձր է (*Heritage Foundation 2019*):

Այսպիսով, Ղրղզ-ի ձեռնարկատիրական միջավայրում բարեփոխումներ կատարելու գործընթացը շատ դանդաղ է և անհավասար պայմաններում է գտնվում: Քաղաքական մրցակցությունները և շահերը հաճախ են խանգարում կառուցվածքային ավելի խորը փոփոխություններ իրականացնելուն: Բազմաթիվ ոլորտներում նկատելի է նախկին համակարգի ազդեցությունը. տնտեսությունում բացակայում են տնտեսական ազատության ինստիտուցիոնալ հիմքերը, իսկ մասնավոր ներդրումների համար բարենպաստ պայ-

²⁵⁸ Տվյալների աղբյուրը՝ Focus Economics (2019) “Kyrgyzstan Economic Outlook” // <https://www.focus-economics.com/countries/kyrgyzstan> (12.07.2019):


8. Ղրղզստանի ժողովրդավարության կայացման գործընթացները

մաններ ստեղծելը շարունակում է խնդրահարույց լինել (*Heritage Foundation 2019*): Ուստի երկրում սոցիալ-տնտեսական և քաղաքական վայրիվերումները վերջին մի քանի տարիների ընթացքում սահմանափակում են կառուցվածքային խնդիրների լուծման հնարավորությունները:

8.3 Անհավասարության խոսույթը և սոցիալական աջակցության քաղաքականությունը

Գծապատկեր 3

Ղրղզստանի Սոցիալական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)*



ԺՄԻ-ի Ս_գ-ի կորը ցույց է տալիս, որ, չնայած որոշ տատանումներին, 2000-2012 թթ. ընթացքում այն պարբերաբար աճել է: 2013-2015 թթ.-ին այդ կորը անընդմեջ անկում է գրանցել, իսկ 2015 թ.-ից հետո այն աճի

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

միտում է գրանցել իրական աշխատավարձի բարձրացման շնորհիվ²⁵⁹: Ղրղզստանում աշխատավարձը բարձրացել է նաև 2019 թ. ապրիլին՝ հասնելով 16346 սոմի (234 ԱՄՆ դոլար): Հարկ է նշել, որ 1999 թ.-ից սկսած՝ ամսական միջին աշխատավարձը կազմել է 7546 սոմ (158 ԱՄՆ դոլար), իսկ ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2018 թ. դեկտեմբերին՝ 21339 սոմ (305 ԱՄՆ դոլար)²⁶⁰:

Ինչ վերաբերում է գործազրկության մակարդակին, ապա 2018 թ. այն նախորդ տարվա համեմատ աճել է 0,28 %-ով: 2000-2019 թթ. ընթացքում գործազրկության առավելագույն ցուցանիշը գրանցվել է 2002 թ.-ին՝ 12,55%, իսկ ամենացածրը՝ 2017 թ.-ին՝ 6,89%²⁶¹:

Աղյուսակ 4

Գրանցված գործազուրկների թիվը 2016-2018 թթ. ընթացքում²⁶²

	2016	2017	2018
Ընդհանուր	55,579	57,578	70,869
<i>Բարձրագույն կրթություն</i>	7,198	6,503	5,691
Հատուկ մասնագիտական կրթություն	10,734	10,529	8,399
<i>Միջնակարգ կրթություն</i>	30,097	33,194	44,700
Թերի միջնակարգ կրթություն	7,550	7,352	12,079
<i>Տղամարդ</i>	26,106	28,296	35,510
<i>Կին</i>	29,473	29,282	35,359

2017-2019 թթ. ընթացքում Ղրղզստանի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա բացասաբար է ազդել նաև աղքատության մակարդակի աճը:

²⁵⁹ Տվյալների աղբյուրը՝ ՂՀ ազգային վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք՝ <http://www.stat.kg/en/statistics/trud-i-zarabotnaya-plata/> (20.07.2019):

²⁶⁰ Տվյալների աղբյուրը՝ Trading Economics (2019b) “Kyrgyzstan Wages” // <https://tradingeconomics.com/kyrgyzstan/wages> (29.06.2019):

²⁶¹ Տե՛ս ՀԲ պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.-ZS?locations=KG> (20.07.2019):

²⁶² Տվյալների աղբյուրը՝ ՂՀ ազգային վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք՝ <http://www.stat.kg/en/statistics/zanyatost/> (15.07.2019):

8. Ղրղզստանի ժողովրդավարության կայացման գործընթացները

Դրա հիմնական պատճառներից մեկը Խորհրդային Միության աջակցության դադարեցումն է: Եվ չնայած գյուղատնտեսությունից կախված լինելուն՝ ոլորտում կա տեղեկացվածության և ռեսուրսների մեծ բաց: Բնակչության երկու երրորդն ապրում է գյուղական համայնքներում և չունի հողերի կառավարման, անասնաբուծության, անասնաբուժության և գյուղատնտեսության զարգացման վերաբերյալ բավականաչափ գիտելիքներ: Այդ պատճառով նվազում է հողի բերրիության մակարդակը, իսկ բնակչության 12%-ն ունի սննդամթերքի անբավարարության խնդիր (*Bradley 2017*):

ՂրԸ 2018-2022 թթ. զարգացման ծրագրի համաձայն՝ պետք է սոցիալական աջակցություն տրամադրվի խոցելի խմբերի ներկայացուցիչներին՝ թոշակառուներին, հաշմանդամներին, ծայրահեղ աղքատներին: Նյութական օգնության միջոցով հնարավոր կլինի նրանց վերաինտեգրել հասարակությանը, որն էլ կխթանի երկրի տնտեսական աճը: Հատուկ ուշադրություն է պետք դարձնել ոլորտի բացերին, ուսումնասիրությունների միջոցով բացահայտել թերությունները և խրախուսել դրանց լուծմանն ուղղված տարբեր կազմակերպությունների ջանքերը²⁶³:

8.4 Կրթական «կապիտալի» զարգացման դժվարությունները

2000-2017 թթ. ԺՄԻ-ի Կ_{ԳԻ}-ի²⁶⁴ կորը որոշ տատանումներով պահպանել է աճի միտումները: 2015 թ.-ից սկսած՝ Կ_{ԳԻ}-ի ցուցանիշները պարբերաբար աճել են՝ 2017 թ. հասնելով առավելագույն արժեքի (0,702), որն էլ պայմա-


²⁶³ Տվյալների աղբյուրը՝ “The Development Program of the Kyrgyz Republic for the period 2018-2022” (Approved by the Decree Jogorku Kenesh of the Kyrgyz Republic of April 20, 2018 No. 2377-V) // https://www.un-page.org/files/public/the_development_program_of_the_kyrgyz_republic_for_the_period_2018-2022.pdf (15.07.2019):

²⁶⁴ Որոշ տվյալների բացակայությամբ պայմանավորված՝ 2018 թ. Կ_{ԳԻ}-ին որոշ ճշգրտումների կարիք ունի:

նավորված է Մարդկային զարգացման համաթվի կրթության բաղադրիչի²⁶⁵ և կրթությանն ուղղված պետական ծախսերի ծավալների²⁶⁶ ավելացմամբ (տե՛ս Գծապատկեր 4, Աղյուսակ 1):

Գծապատկեր 4

Ղրղզստանի կրթական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)*



Մինչև Խորհրդային Միության փլուզումը Կենտրոնական Ասիայի երկրները բազմաթիվ ձեռքբերումներ են ունեցել կրթության ոլորտում՝ ներառյալ մեծահասակների գրագիտության մակարդակի բարձրացումը, դպրոցն ավարտողների թվաքանակի աճը, ինչպես նաև մաթեմատիկայի և բնական գիտությունների ոլորտներում ուսանողների նվաճումները: Այնուամենայնիվ, 1991 թ. անկախությունից հետո Ղրղ-ն մի շարք փորձությունների միջով է անցել՝ իր քաղաքացիների կրթական կայուն մակարդակն ապահո-

²⁶⁵ Տվյալների աղբյուրը՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի պաշտոնական կայք՝ <http://hdr.undp.org/en/data?fbclid=IwAR3drTmCN1nJ0yy2yNnDj2wbuos4NY5RrEtOIQes7g1EqKwiekN6C9SwQhk> (25.07.2019):

²⁶⁶ Տվյալների աղբյուրը՝ ՀԲ պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/SE.XPD.TOTL.GD.ZS?locations=KG> (25.07.2019):

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

8. Ղրղզստանի ժողովրդավարության կայացման գործընթացները

վելու համար: Եվ գրեթե 30 տարի շարունակ կրթությանը տրամադրվող անբավարար ֆինանսավորումը, խաթարված ենթակառուցվածքները և ուսուցիչների մասնագիտական սահմանափակ կարողությունները հանգեցրել են երիտասարդների գրագիտության մակարդակի նվազմանը (*Информационное Агентство "24.kg" 2018*): 2014 թ.-ից երկրում փորձում են բարեփոխել ժամանակակից ուսումնական ծրագրերը և կրթության կառավարման ձևերը, օրինակ՝ ԱՄՆ ՄՁԳ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերը, որոնք մեծ աջակցություն են ցուցաբերում ներառական կրթության ներդրման ու ազգային փոքրամասնությունների որակյալ կրթության ապահովման ուղղությամբ (*USAID from the American People 2019*):

Հարկ է նշել նաև, որ 2013-2018 թթ. ընկած ժամանակահատվածում ԵՄ-ն 17 մլն եվրո աջակցություն է տրամադրել Ղրղզստանի կառավարությանը՝ ի հավանություն 2012 թ. ներկայացված Կրթության զարգացման ռազմավարությանը՝ երկրի բոլոր համայնքներում կրթության որակի բարձրացման նպատակով: Արդյունքում, բարելավվել են հանրակրթական ոլորտի կատարողականությունը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը, իսկ Կրթության և գիտության նախարարությունը 96,66%-ով հասել է 2020 թ. ռազմավարական ծրագրում սահմանված 290 ցուցանիշներին (*European External Action Service 2018 b*):

Ղրղզստանում լուրջ խնդիր է նաև կրթական համակարգի վրա իսլամի և կրոնական արմատական տրամադրությունների ազդեցությունը: Ավելի քան 2,500 մեդրեսենների (իսլամական պաշտամունքի սպասավորներ պատրաստող ուսումնական դպրոց) կառուցումը մեծ ազդեցություն է ունենում բնակչության սոցիալ-տնտեսական կյանքի տարբեր ուղղությունների վրա: Քաղաքական գիտությունների թեկնածու Ալմազբեկ Ակմաթալիևի խոսքով՝ շատերի համար մեդրեսեններն օժանդակ հաստատություններ են՝ Ղուրանն ամբողջովին ուսումնասիրելու և արաբերենը սովորելու համար, որն էլ դրական է ազդում երեխայի բարոյական դաստիարակության վրա: Սակայն մի շարք ընտանիքների երեխաներ զրկվում են պատշաճ մակարդակով կրթություն ստանալու իրենց իրավունքից, քանի որ կրոնական կրթական հաստատություններում պարագայում ոչ բոլոր առարկաներն են ենթակա պարտադիր դասավանդման (*Bulan Institute for Peace Innovations*


2017): Այս խնդիրը կարող է լուծվել միայն կրթության նկատմամբ իշխանությունների պատասխանատվության աստիճանի բարձրացմամբ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ երկրում դպրոց հաճախողների թվի աճը լավ կրթական մակարդակ ապահովելու գրավական չէ, քանի որ աղքատ ընտանիքների երեխաներից շատերը մոտիվացված չեն սովորելու, իսկ մի շարք դեպքերում ուսուցիչների կարողությունների և հմտությունների պակասը լուրջ խոչընդոտ է դառնում որակյալ կրթություն ապահովելու համար:

8.5 Ղրղզստանի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված հնարավոր լուծումները

Գծապատկեր 5

Ղրղզստանի Առողջապահական գործոնների ինդեքսը
(2000-2018 թթ.)*



* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

8. Ղրղզստանի ժողովրդավարության կայացման գործընթացները

2000-2018 թթ. ԺՄԻ-ի ԱԳԻ-ի կորը որոշ տատանումներով աճել է՝ 2000 թ. գրանցված 0,198 միավորից 2018 թ. հասնելով 0,413-ի: 2018 թ. ԱԳԻ-ի ցուցանիշն աճել է նախորդ 3 տարիների համեմատ, որին մեծապես նպաստել է կյանքի սպասվող տևողության փոփոխականի աճը²⁶⁷ (տե՛ս Գծապատկեր 5, Աղյուսակ 1):

ՂրՀ ՀՆԱ-ի 8%-ն առողջապահության վրա է ծախսվում, և իրականում Ղրղզստանն ավելի լավ արդյունքներ է գրանցել առողջապահության ոլորտում եկամտի նույն մակարդակն ունեցող մնացած երկրների համեմատ (*World Bank 2019 b*): Կյանքի միջին տևողությունը Կենտրոնական Ասիայի երկրների շարքում ամենացածրերից մեկն է՝ 71,5 տարի²⁶⁸: Սակայն, երկրում արդի առողջապահական ծառայությունները հասանելի չեն, քանի որ ոլորտն առայժմ Խորհրդային Միությունից ժառանգած սարքավորումների հույսին է: Ընդհանուր առմամբ բժշկական անձնակազմը բավականաչափ կրթված է, սակայն չկան ժամանակակից տեխնոլոգիաներ, որոնց շնորհիվ հնարավոր կլիներ մեծ հաջողությունների հասնել (*U.S. Embassy in the Kyrgyz Republic 2018*):

2019 թ. հունիսի 7-ին Համաշխարհային բանկը հաստատել է ՂրՀ-ում առողջապահության որակի բարելավման նոր ծրագիրը, որը ֆինանսավորվում է Միջազգային զարգացման ասոցիացիայից (IDA) (20 մլն ԱՄՆ դոլար գումարից 10 մլն-ն արտոնյալ պայմաններով վարկ է, իսկ մյուս մասը՝ դրամաշնորհ): 17 մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհ են տրամադրել նաև Շվեյցարիայի զարգացման ու համագործակցության գործակալությունը (SDC) և Գերմանիայի զարգացման բանկը (KfW): Ծրագիրն աջակցում է Ղրղզստանի 2019-2030 թթ. «Առողջ անհատ՝ բարգավաճ երկիր» առողջապահության նոր ռազմավարությանը, որը սոցիալական տարբեր շերտերին առաջնային բուժօգնության ծառայություններից հավասար պայմաններով օգտվելու հնարավորություն է ընձեռում (*World Bank 2019 b*):


²⁶⁷ Տվյալների աղբյուրը՝ ՀԲ պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/SP.DYN.LE00.IN?locations=KG> (25.07.2019):

²⁶⁸ Տվյալների աղբյուրը՝ ՂՀ ազգային վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք՝ <http://www.stat.kg/ru/statistics/naselenie/> (30.07.2019):

8.6 Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի զարգացման միտումները

Գծապատկեր 6

Ղրղզստանի ժողովրդավարության վրա ազդող Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական, Կրթական և Առողջապահական գործոնների ինդեքսները (2000-2018 թթ.)*




Գծապատկեր 7-ում ներկայացված են 2000-2018 թթ. Ղրղզստանի Հանրապետության ժողովրդավարության մակարդակի ինդեքսի միտումները: Այսպիսով, 2018 թ. ԺՄԻ-ին աճ է արձանագրել (0,528) նախորդ երկու տարիների համեմատ, իսկ ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2013 թ.-ին՝ 0,533 միավոր:

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

ԺՄԻ գործոնների ինդեքսները համեմատելի են միայն ըստ միտումների:

Գծապատկեր 7

Ղրղզստանի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը (2000-2018 թթ.)*



Գծապատկեր 6-ից կարող ենք եզրակացնել, որ ԺՄԻ-ի 2018 թ. կրի աճը հիմնականում պայմանավորված էր ՔԳԻ-ի, ՍԳԻ-ի և ԱԳԻ-ի ցուցանիշների աճով, ինչպես նաև ԿԳԻ-ի կայունությամբ:

Այսպիսով, ՂրՃ ԺՄԻ-ի ցուցանիշների կայունացման համար կարևոր է ինչպես քաղաքական, այնպես էլ սոցիալ-տնտեսական բարեփոխումների իրականացումը:

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

8.7 Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի ռեգրեսիոն վերլուծությունը

Արուսյակ Ալեքսանյան, Ալիսա Ջամայյան

Հետազոտության շրջանակում ռեգրեսիոն վերլուծության միջոցով դուրս են բերվել ժողովրդավարության մակարդակի չափման մոդելում ընդգրկված Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական, Կրթական և Առողջապահական գործոնների ինդեքսների այն փոփոխականները, որոնք համեմատաբար մեծ ազդեցություն են ունեցել Ղրղզստանի ժողովրդավարության մակարդակի վրա: Ստացված տվյալների համաձայն՝ նշանակալի կապ է հաստատվել ԺՄԻ-ի* և մի շարք այլ փոփոխականների միջև: Այսպես, մոդելում առկա քաղաքական ցուցանիշներից կապ է հաստատվել ԺՄԻ-ի և «Օրենքի գերակայություն», «Կոռուպցիայի ընկալման ինդեքս» և «սոցիալական անհանգստություններ և քաղաքական ճնշումներ» փոփոխականների միջև (տե՛ս Աղյուսակ 5):

Աղյուսակ 5

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (Ք_{գր}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Օրենքի գերակայություն	-0,004	0,237	0,009	24
Կոռուպցիայի ընկալման ինդեքս	0,012	0,445	0,000	24
Սոցիալական անհանգստություններ և քաղաքական ճնշումներ	-0,026	0,209	0,014	24

Մոդելում ընդգրկված տնտեսական գործոններից նշանակալի կապ է հաստատվել նաև ԺՄԻ-ի և «համախառն ազգային արդյունքը մեկ շնչի

* ԺՄԻ-ն ժողովրդավարության մակարդակի ինդեքսն է, որից դուրս է բերվում համապատասխան անկախ փոփոխականը յուրաքանչյուր զույգային ռեգրեսիոն վերլուծության ժամանակ:

8. Ղրղզստանի ժողովրդավարության կայացման գործընթացները

հաշվով», ինչպես նաև «Տնտեսական ազատության ինդեքս» փոփոխականների միջև (տե՛ս Աղյուսակ 6):

Աղյուսակ 6

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (S_{գր}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Համախառն ազգային արդյունքը մեկ շնչի հաշվով (1000 ԱՄՆ դոլար)	0,123	0,909	0,000	24
Տնտեսական ազատության ինդեքս	0,011	0,455	0,000	24

Սոցիալական գործոնների ինդեքսում նշանակալի կապ է հաստատվել ԺՄԻ-ի և «իրական աշխատավարձ» և «Զինի ինդեքս» փոփոխականների միջև (տե՛ս Աղյուսակ 7):

Աղյուսակ 7

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (U_{գր}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Իրական աշխատավարձ (100 ԱՄՆ դոլար)	0,1	0,900	0,000	24
Զինի ինդեքս	-0,497	0,263	-0,006	24

Կրթական գործոնների ռեգրեսիոն վերլուծությամբ նշանակալի կապ է հաստատվել ԺՄԻ-ի և «Մարդկային զարգացման համաթվի կրթության բաղադրիչ», ինչպես նաև «պետության ծախսերը կրթության ոլորտում» փոփոխականների միջև (տե՛ս Աղյուսակ 8):

Աղյուսակ 8

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (Կ_{գր}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Մարդկային զարգացման համաթվի կրթության բաղադրիչ	1,097	0,530	0,000	24
Պետության ծախսերը կրթության ոլորտում (ՀՆԱ %)	0,034	0,513	0,000	24

Իսկ մոդելում առկա առողջապահական ցուցանիշներից նշանակալի կապ է հաստատվել ԺՄԻ-ի և «կյանքի սպասվող տևողություն», ինչպես նաև «առողջապահության ընթացիկ ծախսեր» փոփոխականների միջև (տե՛ս Աղյուսակ 9):

Աղյուսակ 9

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (Ա_{գր}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R²	Sig.	N
Կյանքի սպասվող տևողություն	0,029	0,564	0,000	24
Առողջապահության ընթացիկ ծախսեր (ՀՆԱ %)	0,029	0,357	0,001	24

Ռեգրեսիոն վերլուծության համաձայն՝ քաղաքական գործոններից Ղրղզստանի ԺՄԻ-ի վրա նշանակալի ազդեցություն ունեն Օրենքի գերակայությունը, Կոռուպցիայի ընկալման ինդեքսը, ինչպես նաև սոցիալական անհանգստությունները և քաղաքական ճնշումները (տե՛ս Աղյուսակ 5): Այսպես՝ «Օրենքի գերակայություն» և «սոցիալական անհանգստություններ և քաղաքական ճնշումներ» անկախ փոփոխականների նվազումը 1 միավորով հանգեցնում է ԺՄԻ-ի աճին՝ համապատասխանաբար 0,004 և 0,026 միավորներով: ԺՄԻ-ի բացասական կապը այս փոփոխականների հետ պայմանավորված է քաղաքացիական անհնազանդությունների և հեղափոխությունների միջոցով իշխանափոխության (օրինակ՝ 2005 թ. Հեղափոխության ժամանակ երեք անգամ անընդմեջ ընտրված նախագահ Ակակի հրաժարականը), հին կարգերի տապալման, նոր Սահմանադրության ընդունման և մի շարք այլ փոփոխությունների հետ: Միևնույն ժամանակ, «Կոռուպցիայի ընկալման ինդեքս» անկախ փոփոխականի աճը 1 միավորով կնպաստի ԺՄԻ-ի աճին 0,012 միավորով (տե՛ս Աղյուսակ 5):

Ըստ ստացված տվյալների՝ Ղրղզստանի ԺՄԻ-ի վրա են ազդում նաև մեկ շնչի հաշվով համախառն ազգային արդյունքը և Տնտեսական ազատության ինդեքսը: Վերջինիս աճը 1 միավորով կհանգեցնի ԺՄԻ-ի ավելացմանը 0,011 միավորով, իսկ 1 շնչի հաշվով ՀԱԱ-ի 1000 դոլարով աճը կնպաստի ԺՄԻ-ի աճին 0,123 միավորով (տե՛ս Աղյուսակ 6):

8. Ղրղզստանի ժողովրդավարության կայացման գործընթացները

Ղրղզստանի ԺՄԻ-ի սոցիալական գործոններից ժողովրդավարության վրա նշանակալիորեն ազդում են իրական աշխատավարձը և Ջինի ինդեքսը: Այսպիսով, իրական աշխատավարձի աճը 100 ԱՄՆ դոլարով, իսկ Ջինի գործակցի նվազումը 0,1 միավորով կբերեն ԺՄԻ-ի աճին համապատասխանաբար 0,1 և 0,05 միավորներով (տե՛ս Աղյուսակ 7):

Մարդկային զարգացման համաթվի կրթության բաղադրիչի (գնահատվում է 0-1 միջակայքի սահմաններում) աճը 0,1 միավորով, իսկ կրթության ոլորտում պետության ծախսերի ավելացումը 1%-ով ՀՆԱ-ի նկատմամբ կհանգեցնեն ԺՄԻ-ի դրական փոփոխության՝ համապատասխանաբար 0,11 և 0,034 միավորներով (տե՛ս Աղյուսակ 8):

Իսկ առողջապահական գործոններից կյանքի սպասվող տևողության դրական փոփոխությունը 1 տարով և առողջապահության ընթացիկ ծախսերի աճը 1%-ով ՀՆԱ-ի նկատմամբ կնպաստեն ԺՄԻ-ի աճին 0,029 միավորով (տե՛ս Աղյուսակ 9):

Ուստի, ՂրՀ ժողովրդավարության մակարդակի ռեգրեսիոն վերլուծության միջոցով կարող ենք որոշել, թե քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական և առողջապահական գործոններից որոնք են առավելապես ազդում երկրում ժողովրդավարական գործընթացների արդյունավետ իրականացման վրա, ինչպես նաև ընդգծել երկրում գործող ինստիտուտների դերն ու նշանակությունը ժողովրդավարությունը խթանելու հարցում:

Գրականության ցանկ

- **ADB** (2014) “The Kyrgyz Republic: Strategic Assessment of the Economy,” Asian Development Bank, December. Accessed May 05, 2019. <https://www.adb.org/publications/kyrgyz-republic-strategic-assessment-economy>.
- **Akiner, Shirin** (2016) “Kyrgyzstan 2010: Conflict and Context.” Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program. Accessed February 19, 2019. http://silkkroadstudies.org/resources/2016-Akiner-Kyrgyzstan_2010-Conflict-Context.pdf.
- **Amnesty International** (2018) “Kyrgyzstan 2017/2018.” Accessed February 16, 2019. <https://www.amnesty.org/en/countries/europe-and-central-asia/kyrgyzstan/report-kyrgyzstan/>.

- **Around the CASPIAN** (2017) “Political Party System Formation in Kyrgyzstan.” Accessed February 9, 2019. <http://caspienet.eu/2017/08/30/political-party-system-formation-kyrgyzstan/>.
- **BBC News** (2017) “Kyrgyzstan election: A historic vote, but is it fair?” Accessed February 16, 2019. <https://www.bbc.com/news/world-asia-41594816>.
- **Bertelsmann Stiftung** (2018) “BTI 2018 Country Report — Kyrgyzstan.” Accessed February 20, 2019. <https://www.bti-project.org/en/reports/country-reports/detail/-itc/KGZ/>.
- **Bradley, Olivia** (2017) “Causes of Poverty in Kyrgyzstan.” BORGEM Magazine. Accessed June 29, 2019. <https://www.borgenmagazine.com/causes-of-poverty-in-kyrgyzstan/>.
- **Bulan Institute for Peace Innovations** (2017) “Islam and Education in Kyrgyzstan: Problems and Perspectives.” Accessed July 3, 2019. <https://bulaninstitute.org/islam-education-kyrgyzstan-problems-perspectives-2/>.
- **Central Intelligence Agency** (2019) “The World Factbook.” Accessed February 16, 2019. <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/kg.html>.
- **Encyclopedia Britannica** (2013) “Fergana Valley.” Accessed March 28, 2019. <https://www.britannica.com/place/Fergana-Valley>.
- **European External Action Service** (2018a) “EU-Kyrgyz Republic Relations.” Accessed February 17, 2019. https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage_en/4079/EU-Kyrgyz%20Republic%20relations.
- **European External Action Service** (2018b) “Support to the Reform of the Education Sector in the Kyrgyz Republic.” Accessed July 2, 2019. https://eeas.europa.eu/delegations/kyrgyz-republic/50040/node/50040_ru.
- **EuroPlus Consulting & Management** (2018) “Gender Study for Central Asia.” Accessed February 17, 2019. https://eeas.europa.eu/sites/eeas/files/kyrgyzstan_final_report_09.01.2018_approved_workshop_final.pdf.
- **Focus Economics** (2019) “Kyrgyzstan Economic Outlook.” Accessed June 12, 2019. <https://www.focus-economics.com/countries/kyrgyzstan>
- **Freedom House** (2017) “Freedom in the World 2018.” Accessed February 5, 2019. <https://freedomhouse.org/report/nations-transit/2017/kyrgyzstan>.
- **Freedom House** (2018) “Freedom in the World 2018.” Accessed February 8, 2019. <https://freedomhouse.org/report/nations-transit/2018/kyrgyzstan>.
- **Heritage Foundation** (2019) “2019 Index of Economic Freedom: Kyrgyz Republic.” Accessed July 15, 2019. <https://www.heritage.org/index/country/kyrgyzrepublic>.
- **Human Rights Watch** (2018) “World Report 2018: Kyrgyzstan.” Accessed February 12, 2019. <https://www.hrw.org/world-report/2018/country-chapters/kyrgyzstan>.
- **Human Rights Watch** (2019) “World Report 2019: Kyrgyzstan.” Accessed February 12, 2019. <https://www.hrw.org/world-report/2019/country-chapters/kyrgyzstan#>.
- **Ibrayev, Omurbek** (2017) “Cost of Politics in Kyrgyzstan.” Background Paper. Westminster Foundation for Democracy.

8. Ղրղզստանի ժողովրդավարության կայացման գործընթացները

- **Kabar Agency** (2017) “Kyrgyz parliament approves government's report for 2016.” Accessed April 16, 2018. <https://kabar.kg/eng/news/kyrgyz-parliament-approves-the-governments-report-for-2016/>.
- **Machavariani, Maia** (2017) “Political Party System Formation in Kyrgyzstan.” Accessed April 4, 2019. <http://caspiantet.eu/2017/08/30/political-party-system-formation-kyrgyzstan/>.
- **National Statistical Committee of the Kyrgyz Republic, UNICEF** (2014) “Multiple Indicator Cluster Survey in the Kyrgyz Republic 2014.” Accessed February 16, 2019. <http://www.mics2014.kg/index.php/en/>.
- **OSCE** (2017) “Presidential Election. OSCE/ODIHR Election Observation Mission, 15 October 2017.” Accessed February 12, 2019. <https://www.osce.org/odihr/elections/-kyrgyzstan/333296>.
- **OSCE/ODIHR** (2018) “Kyrgyz Republic Presidential Election. OSCE/ODIHR Election Observation Mission Final Report, Warsaw, 15 October 2017.” Accessed February 13, 2019. <https://www.osce.org/odihr/elections/kyrgyzstan/374740?download=true>.
- **Peace Insight** (2015) “A brief history of conflict in Kyrgyzstan.” Accessed February 11, 2019. <https://www.peaceinsight.org/blog/2015/09/a-brief-history-of-conflict-in-kyrgyzstan/>.
- **Radio Free Europe / Radio Liberty** (2018) “Kyrgyz Parliament Approves New Prime Minister, Cabinet.” Accessed February 18, 2019. <https://www.rferl.org/a/kyrgyz-parliament-approves-new-prime-minister-cabinet/29182781.html>.
- **Temirkulov, Azamat** (2012) “Domestic Developments in Kyrgyzstan.” OSCE Yearbook.
- **Tokmakov, Alexander** (2015) “Kyrgyzstan: Two revolutions, but still no prosperity.” Accessed March 2, 2018. <https://www.dw.com/en/kyrgyzstan-two-revolutions-but-still-no-prosperity/a-18352547>.
- **Trading Economics** (2019a) “Kyrgyzstan - Economic indicators.” Accessed July 3, 2019. <https://tradingeconomics.com/kyrgyzstan/indicators>.
- **Trading Economics** (2019b) “Kyrgyzstan Wages.” Accessed June 29, 2019. <https://tradingeconomics.com/kyrgyzstan/wages>.
- **Tynan, Deidre** (2017) “The Domestic Challenge to Kyrgyzstan’s Milestone Election.” Accessed March 12, 2018. <https://www.crisisgroup.org/europe-central-asia/central-asia/kyrgyzstan/domestic-challenge-kyrgyzstans-milestone-election>.
- **U.S. Department of State** (2018) “U.S. Relations with Kyrgyzstan.” Accessed February 17, 2019. <https://www.state.gov/r/pa/ei/bgn/5755.htm>.
- **U.S. Embassy in the Kyrgyz Republic** (2018) “Medical Assistance.” Accessed June 3, 2019. <https://kg.usembassy.gov/u-s-citizen-services/doctors/>.
- **USAID from the American People** (2019) “Kyrgyz Republic: Education.” Accessed June 2, 2019. <https://www.usaid.gov/kyrgyz-republic/education>.

- **World Bank** (2018) “The World Bank in the Kyrgyz Republic: Country Snapshot.” Accessed June 29, 2019. <http://pubdocs.worldbank.org/en/448901524235309520/-Kyrgyz-Republic-Snapshot-Spring2018.pdf>.
- **World Bank** (2019a) “Kyrgyz Republic: Weak Growth Despite Emerging Regional Opportunities.” Accessed June 17, 2019. <https://www.worldbank.org/en/country/kyrgyzrepublic/publication/economic-update-fall-2018>.
- **World Bank** (2019b) “The Kyrgyz Republic to Gain Better Primary Health Care, with World Bank Support.” Accessed July 3, 2019. <https://www.worldbank.org/en/news/press-release/2019/06/07/kyrgyz-republic-to-gain-better-primary-health-care>.
- **World Economic Forum** (2018) “The Global Gender Gap Report 2018.” Accessed March 25, 2019. http://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2018.pdf.
- **Информационное Агентство "24.kg"** (2018) “Crisis in education. How Kyrgyzstan can overcome it.” Дата доступа: 07.03.2019. https://24.kg/english/79321_Crisis_in_education_How_Kyrgyzstan_can_overcome_it/.
- **Президент Кыргызской Республики** (2010) “Конституция Кыргызской Республики.” Дата доступа: 02.11.2019. <http://www.president.kg/ru/konstituciya/>.
- **Центральная комиссия по выборам и проведению референдумов Кыргызской Республики** (2017) “Центризбирком определил результаты выборов Президента Кыргызской Республики 15 октября 2017 года.” Дата доступа: 02.16.2019. <https://shailoo.gov.kg/ru/news/1973/>.

9. ԿՈՆՍՈՑԻԱԼ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ՆԵՐՈՒԺՆ ՌԻԿՐԱԻՆԱՅՈՒՄ. ՔԱՂԱՔԱՑԻԱՎԱՐԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

2016-2018 թթ. Ուկրաինայի ժողովրդավարական համախմբման գործընթացներում առանցքային նշանակություն են ունեցել ինքնիշխանության ամրապնդման, պետականաշինության, քաղաքացիավարական անվտանգության և խաղաղության, ազգային անվտանգության և ինքնության, համահասարակական միասնության, եվրոպական ինտեգրման և միջազգային համագործակցության խորացման հիմնախնդիրները: Հատկանշական է, որ երկրի քաղաքական ընտրանին, խորհրդարանական և արտախորհրդարանական կուսակցությունների առաջնորդները, տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ներկայացուցիչները փորձում էին ներքաղաքական կյանքում ձևավորել *անվրանգայնացման խոսույթ*: Դա հնարավորություն էր տալիս երկրի նախագահին և ռազմաքաղաքական ղեկավարությանը մշտապես հանրային օրակարգում պահել ռուս-ուկրաինական լարված հարաբերությունները, Դոնեցկի ժողովրդական (ԴԺՀ) և Լուգանսկի ժողովրդական (ԼԺՀ) ինքնահռչակ հանրապետություններում շարունակվող հակաահաբեկչական գործողությունները և այլն: Այս համատեքստում կարելի է դիտարկել նաև ԵՄ անդամ երկրների առաջնորդների դիրքորոշումը Ռուսաստանի նկատմամբ՝ շարունակելու չճանաչման, ապօրինի բռնակցման, դատապարտման և պատժամիջոցների քաղաքականությունը (EEAS 2017b): Դրա վկայությունն էր նաև 2018 թ. նոյեմբերի 25-ին Ուկրաինայի ռազմածովային և ՌԴ անվտանգության դաշնային ծառայության ուժերի

միջև Ազգվի ծովի Կերչի նեղուցում տեղի ունեցած միջադեպի շուրջ միջազգային հանրության արձագանքները (*Council of the EU 2019, Gorenburg 2018*): Ի պատասխան այդ միջադեպի՝ Ուկրաինայի նախագահը, ստանալով Գերագույն ռադայի և խորհրդարանական կուսակցությունների աջակցությունը, երկրում սահմանեց ռազմական դրություն²⁶⁹ և պահանջեց ընդլայնել պատժամիջոցները և ուժեղացնել միջազգային ճնշումը ՌԴ ռազմաքաղաքական ղեկավարության վրա: Չնայած այն հանգամանքին, որ ռազմական դրություն հայտարարվեց ոչ ամբողջ Ուկրաինայում, այլ միայն որոշակի տարածքներում, այնուամենայնիվ ներքաղաքական լարվածությունը խորացավ:

Համաձայն ընթացակարգի՝ երկրի նախագահին ռազմական դրություն մտցնելու առաջարկությունը ներկայացրել էր Ուկրաինայի ազգային անվտանգության և պաշտպանության խորհուրդը (ՈւԱԱՊԽ): Ընդ որում, ՈւԱԱՊԽ-ն կողմ էր, որ պետական ինքնիշխանությունն ու անկախությունն ապահովելու նպատակով մի շարք հրատապ միջոցառումներ իրականացվեն²⁷⁰: *Անվտանգայնացման խոսույթը* հատկապես նկատելի էր, երբ ընդդիմադիր ուժերը կամ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ) նախաձեռնում էին զանգվածային ցույցեր, երթեր, հավաքներ և բողոքի այլ միջոցառումներ: Քանզի քաղաքացիական անհնազանդությունները քաղաքական ընտրանին որակում էր որպես սպառնալիք երկրի ինքնիշխանությանը, ներքին և արտաքին անվտանգությանը, միջազգային հեղինակությանը, պաշտպանվածությանը և այլն: Սակայն Եվրասոցացման համաձայնագրի, ՆԱՏՕ-ի հետ անվտանգային ու ռազմա-

²⁶⁹ Ст'у Указ Президента України №393/2018 “Про введення воєнного стану в Україні”. Дата доступу: 13.06.2019. <https://www.president.gov.ua/documents/3932-018-25594>; Закон України “Про затвердження Указу Президента України “Про введення воєнного стану в Україні” (Відомості Верховної Ради (ВВР), 2018, № 48, ст.381). Дата доступу: 13.06.2019. <https://zakon.rada.gov.ua/laws/show/2630-viii>:

²⁷⁰ Ст'у Рада національної безпеки і оборони України рішення від 26 листопада 2018 року “Щодо надзвичайних заходів із забезпечення державного суверенітету і незалежності України та введення воєнного стану в Україні” (Введено в дію Указом Президента України від 26 листопада 2018 року № 390/2018). Дата доступу: 13.06.2019. <https://zakon.rada.gov.ua/laws/show/n0012525-18#n8>:

**9. Կոնսոցիալ համախմբման ներուժն Ուկրաինայում.
քաղաքացիավարական անվտանգության սահմանները**

քաղաքական ինտեգրման և մի շարք այլ փաստաթղթերի շրջանակներում Ուկրաինայի ստանձնած պարտավորությունները ցիվիլիարխիկ նշանակություն ունեցան ժողովրդավարության և անվտանգության փոխլարցուցչության համար: Դա նշանակում էր *ժողովրդավարական անվտանգության խոսույթ*²⁷¹ երաշխավորելով մարդու իրավունքների և օրենքի գերակայության ներդաշնակությունն անվտանգայնացման համատեքստում (*Bourne 2018, 23-46, Walter 2018, 79-95, Bruns and Happ 2016, 139-159*): Այլ կերպ ասած՝ հենց քաղաքական վարչաձևի ժողովրդավարացման գործընթացներում է հրատապ դառնում անվտանգային հիմնախնդիրների նախադրյալները: Վերջիններիս համատեքստում բացառվում է հակաժողովրդավարական գործողությունների լեգիտիմացումը: Միևնույն ժամանակ, ՔՀԿ-ներին հնարավորություն էր տրվում ակտիվորեն մասնակցել տարբեր միջոցառումների՝ օգտվելով զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության²⁷¹ իրենց իրավունքից: Այդպիսով այդ ամենը նպաստում էր և՛ քաղաքացիական մշակույթի կայացմանը, և՛ հասարակական գիտակցության բարձրացմանը, և՛ ժողովրդավարական արժեհամակարգի արմատավորմանը:

²⁷¹ Ст'у Закон України “Про національну безпеку України” (Відомості Верховної Ради (ВВР), 2018, № 31, ст.241). Дата доступу: 19.06.2019. <https://zakon.rada.gov.ua/laws/show/2469-19>, “Стратегія кібербезпеки України” (Затверджено Указом Президента України від 15 березня 2016 року №96/2016). Дата доступу: 19.06.2019. <https://zakon5.rada.gov.ua/laws/show/96/2016>, “План заходів на 2018 рік з реалізації Стратегії кібербезпеки України” (Затверджено розпорядженням Кабінету Міністрів України від 11 липня 2018 р. № 481-р). Дата доступу: 19.06.2019. <https://zakon.rada.gov.ua/laws/show/481-2018-%D1%80>:

Աղյուսակ 1

Ուկրաինայի Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական, Կրթական ու
Առողջապահական գործոնների և ժողովրդավարության մակարդակի
ինդեքսները (2000-2018 թթ.)*

Տարեթիվ	Ք _{ԳԻ}	Տ _{ԳԻ}	Ս _{ԳԻ}	Կ _{ԳԻ}	Ա _{ԳԻ}	ԺՄԻ
2000	0,400	0,522	0,549	0,505	0,221	0,440
2001	0,412	0,454	0,568	0,542	0,238	0,435
2002	0,444	0,467	0,586	0,596	0,265	0,462
2003	0,423	0,515	0,601	0,612	0,292	0,473
2004	0,405	0,499	0,619	0,594	0,272	0,459
2005	0,461	0,574	0,655	0,651	0,273	0,512
2006	0,497	0,544	0,696	0,663	0,281	0,525
2007	0,483	0,610	0,743	0,661	0,264	0,540
2008	0,497	0,689	0,787	0,679	0,238	0,570
2009	0,494	0,575	0,717	0,734	0,329	0,547
2010	0,444	0,574	0,766	0,699	0,399	0,535
2011	0,468	0,678	0,808	0,663	0,408	0,574
2012	0,451	0,658	0,866	0,698	0,429	0,574
2013	0,394	0,603	0,894	0,697	0,449	0,542
2014	0,340	0,582	0,774	0,649	0,409	0,491
2015	0,362	0,618	0,653	0,622	0,427	0,495
2016	0,378	0,591	0,694	0,596	0,424	0,496
2017	0,382	0,573	0,741	0,596	0,434	0,499
2018	0,378	0,540	0,792	0,596	0,427	0,494

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

Ք_{ԳԻ}-ի, Տ_{ԳԻ}-ի, Ս_{ԳԻ}-ի, Կ_{ԳԻ}-ի, Ա_{ԳԻ}-ի և հետևաբար դրանց հիման վրա հաշվարկված ժՄԻ-ի որոշ տարիների արժեքները, հնարավոր է, աննշան տարբերվեն նախորդ հրապարակման համապատասխան տարիների արժեքներից՝ թարմացված և նոր տվյալների ներմուծմամբ պայմանավորված նվազագույն և առավելագույն արժեքների փոփոխման հետևանքով:

Դիտարկվող ժամանակահատվածում Ուկրաինայում ժողովրդավարության մակարդակը պայմանավորված է եղել քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական և առողջապահական գործոնների ազդեցություններով (տե՛ս Աղյուսակ 1): Դրանք վկայում են, որ համաշխարհայնացման պայմաններում ժամանակակից ուկրաինական հասարակության առաջընթացն ուղղակիորեն կապված է ժողովրդավարության հետագա զարգացման հետ: Հետևաբար, երկրի կայուն զարգացման կարևորագույն խնդիրներից մեկը հանրային կառավարման ժողովրդավարացումն է, որը բարձրացնում է իշխանությունների քաղաքական պատասխանատվության և թափանցիկության մակարդակը:

9.1 Ժողովրդավարության և քաղաքականության անվտանգայնացման միտումները


2016-2018 թթ. Ուկրաինայի ԺՄԻ-ի քաղաքական գործոնների ինդեքսի կորի դիտարկումը ցույց է տալիս, որ առանցքային նշանակություն են ունեցել արդյունավետ կառավարման, օրենքի գերակայության, ՁԼՄ-ների ազատության, հակակոռուպցիոն քաղաքականության, ՔՀԿ-ների և սոցիալական խմբերի հանրային մասնակցության, միջազգային և եվրոպական ինտեգրման խորացման, էթնոքաղաքական և էթնոմշակութային հակասությունների կարգավորման, սոցիալական գործընկերության, կառուցողական երկխոսության և այլ հիմնախնդիրները:

Գծապատկեր 1-ից երևում է, որ նախորդ տարվա համեմատ Ուկրաինայի ՔԳԻ-ի կորը 2018 թ. նվազել է 2000-2013 թթ. նկատմամբ՝ ունենալով ավելի ցածր մակարդակ (տե՛ս Գծապատկեր 1, Աղյուսակ 1):

Դիտարկվող ժամանակաշրջանում Ուկրաինայի ժողովրդավարական համախմբման գործընթացներում զգալի են եղել քաղաքական համակարգի և վարչակարգի անկայունություն, ինքնիշխանության ամրապնդման, ռազմաքաղաքական անվտանգության և ինտեգրման, քաղաքացիական միասնության, տարածքային ամբողջականության վերականգնման, հարավարևելյան շրջաններում հակամարտությունների կարգավորման և ռուս-ուկ-

րահնական հարաբերությունների «զսպմանն» ուղղված քայլերը (*Dobysch 2019, 51-64, Resende 2018, 23-41, Nikolko 2018, 69-93, Fiedlschuster 2016, 71-91, Kostuchenko and Akulenko 2016, 115-138*): Դրա վկայությունն է, օրինակ՝ 2019 թ. ապրիլի 1-ից Ուկրաինայի և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և գործընկերության պայմանագրի դադարեցումը²⁷², կամ էլ՝ ԵՄ չճանաչման քաղաքականությունը Ղրիմի և Սևաստոպոլի հարցում. ԵՄ շարունակում է դատապարտել Ռուսաստանին միջազգային իրավունքի այս նորմը խախտելու և այդ տարածքներն անօրինական բռնակցելու համար (*EEAS 2017b*):

Գծապատկեր 1
Ուկրաինայի Քաղաքական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)*



2018 թ. ԺՄԻ-ի Ք_գ-ի ցուցանիշների վրա շարունակեցին բացասաբար ազդել ԼԺՀ և ԴԺՀ ինքնահռչակ հանրապետությունների շուրջ ռազմաքաղաքական բարդ իրավիճակը և աշխարհաքաղաքական զարգացումները:

²⁷² Ст'у Закон України “Про припинення дії Договору про дружбу, співробітництво і партнерство між Україною і Російською Федерацією” (Відомості Верховної Ради (ВВР), 2019, № 1, ст.2). Дата доступу: 23.06.2019. <https://zakon.rada.gov.ua/laws/show/2643-19>:

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

**9. Կոնսոցիալ համախմբման ներուժն Ուկրաինայում.
քաղաքացիավարական անվտանգության սահմանները**

Փաստորեն, 2018 թ. հունվարի 18-ին ընդունված «Դոնեցկի և Լուգանսկի շրջանների ժամանակավոր գրավյալ տարածքներում Ուկրաինայի պետական ինքնիշխանությունն ապահովելու պետական քաղաքականության առանձնահատկությունների վերաբերյալ» Ուկրաինայի օրենքով²⁷³ ամրագրվեցին երկրի իրավաքաղաքական մոտեցումները ՌԴ գործողությունների նկատմամբ: Դրանք ցույց են տալիս, որ ուկրաինական ինքնության գաղափարին վերաբերող հարցերը մեծ ազդեցություն ունեն երկրի հասարակական-քաղաքական կայունության վրա (*Степуко 2011, 171-184*): Ակնհայտ է, որ ուկրաինական ինքնությունը ներառում է քաղաքացիական, տարածքային, լեզվական, մշակութային, կրոնական և մի շարք այլ բաղկացուցիչ տարրեր, որոնք պետք է միավորեն երկրի բոլոր քաղաքացիներին: Հատկապես որ ուկրաինական քաղաքացիական ինքնությունը սերտորեն կապված է երկրի արտաքին քաղաքական վեկտորի ընտրությանը:

Ժամանակակից Ուկրաինայում ժողովրդավարությունն ընկալվում է ոչ միայն որպես քաղաքացիավարական արժեքների համակարգ, գաղափարախոսական սկզբունքների և կանոնների միասնություն, այլև համահասարակական զարգացման առանձնահատուկ եղանակ, քաղաքական արդիականացման այնպիսի շրջափուլ, որի հաջողության համար անհրաժեշտ է հանրային բարեկեցության և քաղաքական մշակույթի համադրություն (*Becker 2018, 43-68, Budrytė 2018, 155-177, Martsenyuk and Troian 2018, 129-153*): Դրանում պետք է պահպանվեն սահմանադրականության և մարդասիրության սկզբունքները, ինչպես նաև քաղաքական ընտրանու և կուսակցական առաջնորդների առանձնահատուկ դերը, որովհետև նրանք են պատասխանատու երկրի ներքին և արտաքին քաղաքականության հաջողությունների և ծախողումների համար: Այս առումով Ուկրաինայում ժողովրդավարացումն ու ինտեգրումը բախվում են էթնոմշակութային և էթնոկրոնական ավելացող ռիսկերին, որոնք պահանջում են հրատապ լուծումներ (*Makhortykh 2018, 219-247, Nuzov 2017, 132-153, Osipian and*

²⁷³ Ст'у Закон України “Про особливості державної політики із забезпечення державного суверенітету України на тимчасово окупованих територіях у Донецькій та Луганській областях” (Відомості Верховної Ради (ВВР), 2018, № 10, ст.54). Дата доступу: 23.06.2019. <https://zakon.rada.gov.ua/laws/show/2268-19>:

Osipian 2012, 616-642): Վերջիններս վտանգում են քաղաքական համակարգի կայունությունը, որովհետև երկրի նախագահի և կառավարող կուսակցության գործունեության մեջ նվազում են քաղաքացիական համախմբման բովանդակությունն ու սպասելիքները (*Karnaukhova 2018, 249-274*):

2018 թ.-ին ընդունված «Ուկրաինայի ազգային անվտանգության մասին» օրենքում²⁷⁴ սահմանվեցին ազգային անվտանգության սպառնալիքները և դրանց առնչվող առաջնահերթությունները, ինչպես նաև այլ երկրների հետ փոխշահավետ հարաբերությունների զարգացման սկզբունքները: Ընդ որում, երկրի քաղաքական, տնտեսական, անվտանգային և իրավական ինտեգրման գործընթացներում առանցքային տեղ էր հատկացված Եվրամիությանը և Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպությանն անդամակցության հարցերին²⁷⁵: Այդ ամենն Ուկրաինայի համար տեղի է ունենում վերահիտեգրման ձևաչափում՝ վերականգնելով և վերադարձնելով «ինտեգրված» կապերն ու հարաբերությունները:

Ժամանակակից Ուկրաինայի ժողովրդավարական զարգացման օրակարգային հարցերից է ռազմավարական ինտեգրումը՝ հաշվի առնելով նաև դրա բացասական, դրական, իրական և ձևական կողմերը: Ներկայումս ինտեգրումը Ուկրաինայում տեղի է ունենում ապահիտեգրման գործընթացներին զուգահեռ, որովհետև դիտարկվող ժամանակահատվածում նկատելի են Ուկրաինայի և Ռուսաստանի միջև հարաբերությունների «սառեցման» և ապահիտեգրման միտումներ: Օրինակ, երբ թուվանում կամ խզվում են երկու երկրների միջև նախկինում հաստատված քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կապերը: Ուշագրավ է, որ նույնիսկ հետխորհրդային տարածքում (ԱՊՀ, ԵԱՏՄ) տեղի ունեցող ինտեգրման գործընթացներն ուղեկցվում են ոչ թե նախկին տնտեսական կապերի վերականգնմամբ, այլ նորերի ստեղծմամբ, որովհետև փոխվել են սոցիալ-տնտեսական պայմանները:

²⁷⁴ Ст'у Закон України “Про національну безпеку України” (Відомості Верховної Ради (ВВР), 2018, № 31, ст.241). Дата доступу: 19.06.2019. <https://zakon.rada.gov.ua/laws/show/2469-19>.

²⁷⁵ Ст' у նույն տեղում:

**9. Կոնսոցիալ համախմբման ներուժն Ուկրաինայում.
քաղաքացիավարական անվտանգության սահմանները**

Դիտարկվող ժամանակահատվածում Ուկրաինայի ժողովրդավարության մակարդակի վրա բացասաբար են ազդել երկրի ռազմականացման և ռազմական ծախսերի ավելացման միտումները, հարավարևելյան շրջաններում հակամարտությունները, ինքնահռչակ ԴԺՀ-ում և ԼԺՀ-ում լարված իրավիճակը, ինչպես նաև տարածքային ամբողջականության վերականգման պատճառով Ռուսաստանի հետ հարաբերությունների սրումը (Council of the EU 2018):

Աղյուսակ 2

Ուկրաինայի համաշխարհային ռազմականացման ինդեքսը²⁷⁶

Տարի	Ռազմական ծախսերի համաթվի միավոր	Ռազմական անձնակազմի համաթվի միավոր	Ծանր զենքերի համաթվի միավոր	ՀՌԻ միավոր	Վարկանիշ
2013	6,26	5,04	2,73	769,15	22
2014	6,37	5,02	2,65	770,67	20
2015	6,49	5,19	2,66	789,8	14
2016	6,46	5,2	2,64	786,89	15
2017	6,43	5,2	2,64	785,13	14

Աղյուսակ 2-ից երևում է, որ 2013-2017 թթ. Համաշխարհային ռազմականացման ինդեքսի տվյալներով՝ Ուկրաինան զբաղեցրել է 22-ից 14-րդ տեղերը: Մասնավորապես, Բոննի փոխարկման միջազգային կենտրոնի տվյալներով՝ 2017 թ.-ին Ուկրաինան 155 երկրների շարքում զբաղեցրել է 14-րդ վարկանիշային տեղը²⁷⁷: Հարկ է նշել, որ 2016-2018 թթ.-ին Ուկրաինայի ռազմական ծախսերը համապատասխանաբար կազմել են երկրի ՀՆԱ-ի 3,7%-ը, 3,2%-ը և 3,8%-ը (SIPRI 2019):

Աշխարհաքաղաքական ուղղվածության պատճառով՝ միջազգային հանրությունը պատշաճ ուշադրության չի արժանացնում, որ երկրի արևելյան հատվածներում հակամարտության խորացումը հիմնականում պայմանավորված է դրանց տարածաշրջանային ինքնությամբ: Այսպես՝ բնակչու-

²⁷⁶ Տե՛ս Բոննի փոխարկման միջազգային կենտրոնի պաշտոնական կայք՝ <https://gmi.bicc.de/index.php?page=gmi-publications> (14.06.2019):

²⁷⁷ Տե՛ս նույն տեղում:

թյան ճնշող մեծամասնությունն օգտագործում է ռուսաց լեզուն՝ կրելով էթնոմշակութային և տեղեկատվական-հաղորդակցական տարածության ազդեցությունները: Տարբեր գործոններով պայմանավորված՝ տարածքային ինքնությունը բախվում է քաղաքացիական ինքնությանը, որովհետև այդ շրջանների բնակիչներն Ուկրաինայի քաղաքացիներ են (*Степуко 2018, 48-54, Степуко 2016a, 68-74, Степуко 2016b, 163-170*): Սակայն 2014 թ. իշխանափոխությունից հետո Ուկրաինայում տարածքային և համաուկրաինական ինքնության բախումները նպաստեցին կենտրոնախույս միտումների տարածմանը Ղրիմի և Դոնբասի բնակիչների շրջանում (*Степуко 2017, 39-46, Розумний 2016, 160-167*): Այսպիսով, տարածքային ինքնության խնդիրը չափազանց կարևոր է դիտարկվող ժամանակահատվածում ժողովրդավարացման գործընթացների էությունը հասկանալու համար:

Ուկրաինայի արտաքին քաղաքականության ընտրության հարցը չափազանց կարևոր է, քանի որ երկրում առանձնահատուկ տեղ ունի միջազգային հարաբերությունների համակարգում (*Степуко, Черненко 2017, 178-183, Розумний 2016, 33-41, 91-95*): Աշխարհի առաջատար երկրների՝ Ուկրաինայի նկատմամբ ուշադրության աճը նախ և առաջ պայմանավորված է սոցիալ-տնտեսական ներուժով և աշխարհագրական դիրքով: Բացի այդ, երկրի արևմտյան և արևելյան շրջանների պատմական փորձը, այն է՝ դարեր շարունակ եվրոպական տարբեր երկրների կազմում գտնվելը նպաստել է մշակութային մերձեցման և արտաքին քաղաքականության կողմնորոշումների ձևավորման: Դա իր հերթին կանխորոշեց ԵՄ երկրների և Ռուսաստանի՝ Ուկրաինայի նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունքը: Երբ կողմերից մեկը ձգտում էր Ուկրաինան պահել իր ազդեցության ոլորտում, երկու ժողովուրդների մշակութային կապերը, ռուսաց լեզվի զանգվածային տարածումը և սերտ համագործակցության ռազմավարական առավելությունները հոգուտ Ռուսաստանի էին: Ուշադրության է արժանի այն, որ Ուկրաինայի քաղաքական կայունությունը և օրենքի գերակայությունը մեծապես կախված են հենց էթնոմշակութային, լեզվական և քաղաքացիության գործոններից: Եթե ուկրաինական ժամանակակից քաղաքական ընտրանիներն ընտրեն դրանցից մեկը, կրկին կվտանգվեն ներհասարակական համերաշխությունն ու տարածքային ամբողջականությունը և հետևաբար՝

**9. Կոնսոցիալ համախմբման ներուժն Ուկրաինայում.
քաղաքացիավարական անվտանգության սահմանները**

այդ ընտրանիների գերիշխող դիրքերը: Այնուամենայնիվ, 2016-2018 թթ. իրադարձությունները ցույց տվեցին, որ Ուկրաինայի քաղաքական ընտրանին, կուսակցությունները և ՔՀԿ-ներն իրենց աշխարհաքաղաքական ընտրությունը կատարեցին հոգուտ ԵՄ-ի և ԱՄՆ-ի հետ հետագա ինտեգրման ու սերտ համագործակցության: Արտաքին քաղաքականության մեջ երկրի նախագահ Պ. Պորոշենկոն աստիճանաբար հրաժարվեց բազմավեկտոր ռազմավարությունից՝ խորացնելով եվրաինտեգրման գործընթացները, բայց միևնույն ժամանակ «զգուշանալով» Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցում: Արևմտյան ժողովրդավարություններին մերձենալու և եվրոպական ինտեգրման գործընթացները կառավարող ընտրանին և ՔՀԿ-ները լիովին իրականացրին, իսկ ԵՄ-ին անդամակցելու գաղափարը դարձավ գերակայող մտավորականություն երիտասարդության, խոշոր քաղաքների և արևմտյան տարածաշրջանի բնակիչների շրջանում: Այս մոդելը գրավիչ էր զգալի թվով ուկրաինացիների համար՝ պայմանավորված նրանց տարածքային ինքնության և վերաբերմունքի առանձնահատկություններով:

Ուկրաինայի տարածաշրջանային կապերի ակտիվացման առումով նույնքան կարևոր գործոն են հարևան պետությունների անդամակցությունը ԵՄ-ին և այդ երկրներում ժողովրդավարական քաղաքացիության կայացման օրինակները:

ԵՄ-ին Ուկրաինայի հնարավոր անդամակցության հիմնական առավելությունների շարքում գերակա են ազատ տեղաշարժվելու իրավունքը, մարդկանց կենսամակարդակի բարձրացումը, ԵՄ անդամ երկրներում երիտասարդների կրթվելու հնարավորությունը և ներքին բարեփոխումների շարունակականությունը: Այս առումով Ուկրաինայի համար նշանակալից էր 2017 թ. հունիսի 11-ից Ուկրաինայի քաղաքացիների համար վիզայի ազատականացման ռեժիմի սահմանումը (*EEAS 2017a*): Դա երկրի քաղաքացիներին հնարավորություն տվեց առանց վիզայի մուտք գործել Շենգենյան գոտու երկրներ՝ ամրապնդելով Ուկրաինայի և ԵՄ ժողովուրդների միջև բազմակողմանի կապերը (*European Commission 2017a, European Commission 2017b*): Դեռ ավելին, 2016 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտավ «Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիրը» (ԽՀԱԱԳ),

իսկ 2017 թ. սեպտեմբերի 1-ից՝ նաև Ուկրաինայի և ԵՄ-ի միջև կնքված Ասոցացման համաձայնագիրը (*European Commission 2019, EEAS 2017c*): Դրանք կխորացնեն ԵՄ-ի և Ուկրաինայի միջև գործընկերությունն ու երկխոսությունը ժողովրդավարացման, արտաքին քաղաքականության, անվտանգության, սոցիալ-տնտեսական և այլ ոլորտներում:

Ժողովրդավարության մակարդակի բարձրացման առումով վճռորոշ նշանակություն ունի քաղաքակրթական նախադրյալների կայացումը: Այս համատեքստում կարևորվում են երկրի նախագահի, կառավարության, խորհրդարանական կուսակցությունների առաջնորդների, քաղաքական գործիչների և ՔՀԿ-ների ջանքերը՝ համախմբելու Ուկրաինայի բոլոր քաղաքացիներին: Նրանց համար առանցքային են քաղաքացիական միասնությունը, էթնոմշակութային ու համահասարակականության (կոնսոցիալիզմի) սկզբունքները, ուկրաիներենը և ուկրաինական մշակույթը պահպանելը: Ուկրաինական ազգի համախմբման հիմնական անկյունաքարը կարելի է համարել հասարակության մեջ անընդհատ և իրական երկխոսությամբ միավորող արժեքների որոնումը: Թերևս այս երկխոսության հիմքը մշակութային բազմազանության սկզբունքի պահպանումն է, յուրաքանչյուր էթնիկ մշակույթի ճանաչումը որպես համազգային ժառանգության կարևոր և անհրաժեշտ բաղադրիչ: Տեղին է նշել, որ ժողովրդավարական համախմբման ամենակարևոր խնդիրը բազմէթնիկ հասարակության մեջ համազգային կամ վերէթնիկական գիտակցության ձևավորումն է, որին կարող են էապես նպաստել քաղաքական համակարգի հիմնական դերակատարները՝ պետությունը, ՏԻՄ-երը, կուսակցությունները, ՔՀԿ-ները, սոցիալական ցանցերը, մտավորականության ընտրանիները, եկեղեցին և այլն: Գաղտնիք չէ, որ քաղաքացիական ինքնությունն ունակ է միավորելու միևնույն պետության մեջ ապրող տարբեր էթնիկ խմբերին պատկանող մարդկանց: Օրինակ՝ Ուկրաինայի էթնիկ ռուսները կարող են ունենալ ուկրաինական քաղաքացիական ինքնություն: Մյուս կողմից, ուկրաինական էթնիկ ինքնությունը միավորում է տարբեր պետությունների քաղաքացիների, որոնք ուկրաինական սփյուռքի ներկայացուցիչներ են: Նրանք ունեն ուկրաինական էթնիկ ինքնություն, բայց չունեն ուկրաինական քաղաքացիական ինքնություն, որովհետև նրանք չունեն ուկրաինական քաղաքացիություն: Այս հա-

**9. Կոնսոցիալ համախմբման ներուժն Ուկրաինայում.
քաղաքացիավարական անվտանգության սահմանները**

մատեքստում «ուկրաինական» եզրույթը բնորոշում է և՛ Ուկրաինայի քաղաքացիներին, և՛ ազգությամբ ուկրաինացիներին: Ակնհայտ է, որ ժամանակակից Ուկրաինայում քաղաքացիական ինքնության ձևավորման համար առանցքային նշանակություն ունեն պետականության ժողովրդավարական հիմքերի ամրապնդումը և համահասարակական համախմբումը:

Արդի աշխարհակարգի փոխակերպումներում հիմնական պատճառներից մեկը, որը խանգարեց լիարժեք զարգացնել ռուս-ուկրաինական հարաբերությունները, երկու երկրների քաղաքական ընտրանիների մոտեցումներում միջազգային հարաբերությունների համակարգում Ուկրաինայի տեղի և դերի հարցում տարբեր տեսակետներն էին: Եթե ռուսական կողմը բնական էր համարում Ուկրաինային իր ազդեցության ոլորտում տեսնելը, ապա մյուս կողմի համար առանցքային էին ԵՄ-ի հետ համագործակցության ընդլայնումն ու խորացումը: ՌԴ կառավարող ընտրանու նման մոտեցման հիմնական փաստարկն ավանդաբար պայմանավորված է պատմական և էթնոմշակութային գործոններով. Ռուսաստանի և Ուկրաինայի տարածքները երկար ժամանակ ընդհանուր և միացյալ են եղել մեկ պետության կազմում (Ռուսական կայսրություն, ԽՍՀՄ), ուստի գտնում էին, որ նույնիսկ Ուկրաինայի անկախացումից հետո պետք է պահպանվեին սերտ հարաբերությունները: Մյուս փաստարկը, որպես կանոն, վերաբերում է երկու ժողովուրդների լեզվական և մշակութային ընդհանրությանը: Ավելին, «ռուսներն ու ուկրաինացիները մեկ ժողովուրդ են» թեզը բազմիցս օգտագործել է ՌԴ նախագահ Վ. Պուտինը²⁷⁸ նույնիսկ ռուս-ուկրաինական հակամարտությունը սկսվելուց հետո (*АиФ 2016, Известия 2018*): Այնուամենայնիվ հարկ է նշել, որ երկու ժողովուրդների էթնոմշակութային ընդհանրությունները չեն նպաստել երկու պետությունների քաղաքական կապերի ամրապնդմանը: Դեռ ավելին, 2016-2018 թթ. երկու երկրների հարաբերություններն ունեցել են բացասական դինամիկա: Դա ցույց է տալիս, որ էթնոմշակութային ընդհանրությունները կապ չունեն անկախ պետություն կառուցելու գործընթացի հետ: Չէ՞ որ արդի պայմաններում առաջնային են դարձել ազգի քաղաքացիական բնութագրիչները, և այս առումով ուկրաինական հասարա-

²⁷⁸ Տե՛ս “Обращение Президента РФ”. Дата доступа: 11.06.2019. <http://kremlin.ru/events/president/news/20603>:

կությունը քաղաքացիական ազգ դառնալու ճանապարհին է: Մյուս կողմից, Ուկրաինայի հետ հարաբերությունները ՌԴ ռազմաքաղաքական ղեկավարությունը հիմնականում դիտարկում է ԱՄՆ-ի, ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի հետ համաշխարհային դիմակայության համատեքստում: Մինչդեռ ռուս-ուկրաինական բազմաթիվ համատեղ նախագծեր՝ ներառյալ մարդասիրական և մշակութային, իրականացվում էին հիմնականում երկու երկրների հասարակական-քաղաքական գործիչների անձնական նախաձեռնությունների շնորհիվ:

«Ազատության տան» «Ազգերն անցումային փուլում» զեկույցների համաձայն՝ Ուկրաինայի քաղաքական համակարգի ժողովրդավարական փոխակերպումների վարկանիշային միավորները 2016-2018 թթ. բարելավվել են՝ 4,68-ից դառնալով 4,64-ի (տե՛ս Աղյուսակ 3): Ընդ որում, երկրի քաղաքական վարչակարգը, ըստ ժողովրդավարության առաջընթացի համախառն գնահատականների, բնորոշվել է «անցումային կառավարություն կամ խառը (հիբրիդ)»:

Աղյուսակ 3

«Ազատության տան» գնահատականներն Ուկրաինայի ժողովրդավարական փոխակերպումների վերաբերյալ (2016-2018 թթ.)²⁷⁹

Ժողովրդավարության առաջընթացի գործոններ	2016	2017	2018
Ազգային ժողովրդավարական կառավարում	5,75	5,75	5,75
Ընտրական գործընթացներ	3,50	3,50	3,50
Քաղաքացիական հասարակություն	2,25	2,50	2,75
Լրատվամիջոցների անկախություն	4,00	4,00	4,25
Տեղական ժողովրդավարական կառավարում	5,25	5,00	4,75
Դատական համակարգը և դրա անկախությունը	6,00	5,75	5,75
Կոռուպցիա	6,00	5,75	5,75
Ժողովրդավարության գնահատական	4,68	4,61	4,64

²⁷⁹ Տվյալների աղբյուրը՝ «Ազատության տան» պաշտոնական կայք՝ <https://freedom-house.org/report/nations-transit/2018/ukraine> (24.06.2019):

**9. Կոնսոցիալ համախմբման ներուժն Ուկրաինայում.
քաղաքացիավարական անվտանգության սահմանները**

Աղյուսակ 3-ից երևում է, որ Ուկրաինայի ժողովրդավարության առաջընթացի ցուցանիշներից ամենաբարձրը «Քաղաքացիական հասարակության» գնահատականն է, որը 2017-2018 թթ.-ին 2016 թ.-ի համեմատ աստիճանաբար նվազել է: Իսկ ամենացածր գնահատականներն Ուկրաինան ստացել է «Ազգային ժողովրդավարական կառավարում», «Կոռուպցիա» և «Դատական համակարգի ու դրա անկախություն» գործոնների տրված միավորներով (տե՛ս Աղյուսակ 3): Ինչ վերաբերում է կոռուպցիային, ապա թերևս ամենամեծ իրադարձություններից էին «Կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի» մասին հաղորդման նախագծի հրապարակումներն Ուկրաինայի նախագահի «օֆշորային գործարքների» մասին (OCCRP 2016):

«Ազատության տան» տվյալների համաձայն՝ քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների, մամուլի և ցանցի ազատության ոլորտներում Ուկրաինան 2016-2018 թթ. համարվել է «մասնակի ազատ»²⁸⁰: Այս առումով երկրում շարունակում են մտահոգիչ մնալ լրագրողների նկատմամբ բռնությունները: Օրինակ, 2016 թ. հուլիսի 20-ին լրագրող Պավել Շերեմետի կանխամտածված սպանությունը (*Радио Свобода 2018*):

«Amnesty International» միջազգային իրավապաշտպան կազմակերպության 2017-2018 թթ. զեկույցի համաձայն՝ Ուկրաինայում ոստիկանությունը, անվտանգության ծառայությունը և այլ իրավապահ մարմիններ կատարել են մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի մի շարք խախտումներ, որոնք մնացել են անպատիժ (*Amnesty International 2018, 292-298*): Ըստ այս զեկույցի դիտարկումների՝ Ուկրաինայում նման իրավիճակի պատճառը Հետաքննությունների պետական գրասենյակի²⁸¹ (ՀՊԳ) ընթացակարգային թերացումներն էին (*Amnesty International 2018, 293*): Այնինչ հենց ՀՊԳ-ն է իրավասու անցկացնել ան-

²⁸⁰ Տվյալների աղբյուրը՝ «Ազատության տան» պաշտոնական կայք՝ <https://freedomhouse.org/report/freedom-world/2018/ukraine> (24.06.2019), <https://freedomhouse.org/report/freedom-media/freedom-media-2019> (24.06.2019), <https://freedomhouse.org/report/freedom-net/2018/ukraine> (24.06.2019):

²⁸¹ Տե՛ս Հետաքննությունների պետական գրասենյակի պաշտոնական կայք՝ <https://dbr.gov.ua> (24.06.2019):

կախ հետաքննություններ իրավապահ մարմինների և պաշտոնատար այլ անձանց նկատմամբ:

Ուկրաինայում մարդու իրավունքների հարցերով ՄԱԿ-ի դիտորդական առաքելության 2016-2018 թթ. զեկույցների մեջ նույնպես արձանագրված են միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի խախտումների մասին: Դրանց զգալի մասի պատճառը զինված հակամարտությունն է Ուկրաինայի հարավարևելյան շրջաններում և դրա խաղաղ կարգավորման անհրաժեշտ պայմանների բացակայությունը: Չնայած Գերագույն ռադան ընդունել է իրավական մի շարք ընթացակարգեր²⁸², այնուամենայնիվ Դոնեցկի և Լուգանսկի շրջաններում իրավիճակը շարունակում մնալ լարված (*OHCHR 2018a, OHCHR 2018b, OHCHR 2018c, OHCHR 2018d, Human Rights Watch 2018*): Փորձելով վերջ տալ զինված հակամարտությանը, անպատժելիության մթնոլորտին և անօրինական կալանավորումներին՝ երկրի նախագահը և խորհրդարանը սահմանեցին տեղական ինքնակառավարման հատուկ կարգ²⁸³: Այն կոչված է ապահովելու հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը՝ երկրի տարածքից դուրս բերելով ապօրինի զինված բոլոր կազմավորումները, ռազմական տեխնիկան, ինչպես նաև զինյալներին և վարձկաններին²⁸⁴: Ի դեպ, հակամարտության ողջ ժամանակահատվածում՝ 2014 թ. ապրիլի 14-ից մինչև 2019 թ. փետրվարի 15-ը, ըստ ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի տվյալների, զինված հակամարտության պատճառով սպանվել է 3321, իսկ վիրավորվել ավելի քան 7000 քաղաքացիական անձ:

Աղյուսակ 4-ից երևում է, որ 2016-2018 թթ. քաղաքացիական բնակչության շրջանում զոհերի թիվը զգալիորեն կրճատվել է, որը հնարավոր է

²⁸² Стів Закон України “Про створення необхідних умов для мирного врегулювання ситуації в окремих районах Донецької та Луганської областей” (Відомості Верховної Ради (ВВР), 2017, № 40-41, ст.384). Дата доступу: 12.06.2019. <https://zakon.rada.gov.ua/laws/show/2167-19>, Закон України “Про внесення зміни до статті 1 Закону України “Про особливий порядок місцевого самоврядування в окремих районах Донецької та Луганської областей” (Відомості Верховної Ради (ВВР), 2018, № 42, ст.333). Дата доступу: 12.06.2019. <https://zakon.rada.gov.ua/laws/show/2588-19>:

²⁸³ Стів նույն տեղում:

²⁸⁴ Стів նույն տեղում:

**9. Կոնսոցիալ համախմբման ներուժն Ուկրաինայում.
քաղաքացիավարական անվտանգության սահմանները**

դարձել հակամարտության կողմերի՝ հրադադարը մասամբ պահպանելու շնորհիվ (OHCHR 2019b): Եթե այս տվյալներին ավելացնենք նաև հակամարտությունից տուժած շուրջ 5,2 միլիոն մարդու՝ ներառյալ «շփման գծի» երկայնքից տեղահանված ավելի քան 1,3 միլիոն ներքին և մեկուսացված համայնքների բնակիչներին, ապա հակամարտության ծավալները խիստ մտահոգության տեղիք են տալիս (Humanitarian Response 2019, OHCHR 2019b, OHCHR 2017):

Աղյուսակ 4

Չոհերը քաղաքացիական բնակչության շրջանում (2016-2018 թթ.)²⁸⁵

Տարի	Սպանված	Վիրավորված	Ընդամենը
2016	112	476	588
2017	117	487	604
2018	55	224	279

Դիտարկվող ժամանակահատվածում Ուկրաինայում շուրջ 3,5 միլիոն մարդ կարիք ունի մարդասիրական օգնության և պաշտպանության: Խնդրահարույց է մնում նաև ԴԺՀ և ԼԺՀ բնակիչների կենսաթոշակների և սոցիալական նպաստների տրամադրման հարցը (Humanitarian Response 2019, OHCHR 2019b): Այսպես, օրինակ՝ ԼԺՀ-ում կենսաթոշակառուների թիվը կազմում է 347 հազար 954 մարդ, իսկ ԴԺՀ-ում՝ 778 հազար 903²⁸⁶: Հաշվի առնելով այն, որ 2019-2020 թթ. Ուկրաինայում նախընտրական ժամանակահատված է՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը մշակել է ներհասարակական ինտեգրման մի շարք առաջարկություններ (OHCHR 2019a)՝ ապահովելու Ուկրաինայում արդար և ժողովրդավարական ընտրական գործընթացներ: Դա ենթադրում է մարդու քաղաքական իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպա-

²⁸⁵ Տվյալների աղբյուրը՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի պաշտոնական կայք՝ <https://www.ohchr.org/EN/Countries/ENACA-Region/Pages/UARreports.aspx> (11.07.2019):

²⁸⁶ Տվյալների աղբյուրը՝ Ուկրաինայի կենսաթոշակային հիմնադրամի պաշտոնական կայք՝ <https://www.pfu.gov.ua/informatsijna-mapa> (11.07.2019):

նություն ընտրություններից առաջ և ընթացքում՝ բացառելով բռնությունները ԲՀԿ-ների, քաղաքացիական ակտիվիստների, ՋԼՄ-ների, լրագրողների և փաստաբանների նկատմամբ:

2016-2018 թթ. Ուկրաինայի քաղաքական համակարգի վրա ազդել են նաև միասնական ու անկախ Ուկրաինական ուղղափառ եկեղեցու (ՈւՈւԵ) ձևավորման գործընթացները, որոնցում ակտիվորեն ներգրավված էին նաև երկիր նախագահը, կառավարող ընտրանու ներկայացուցիչները և հասարակական բազմաթիվ գործիչներ: Նրանք պայքարեցին, որպեսզի ՈւՈւԵ-ն կարողանա դուրս գալ Ռուսաստանի ուղղափառ եկեղեցու ենթակայությունից (*HURI 2019*): Չնայած Ուկրաինայում ՈւՈւԵ-ն պետությունից անջատ հաստատություն է, այնուամենայնիվ կրոնական լարվածությունն ու դիմակայությունն ունեցան քաղաքական դրսևորումներ: Մասնավորապես, Գերագույն ռադան ընդունեց «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրինագիծ²⁸⁷, որը վերաբերում էր կրոնական կազմակերպությունների անվանումներին: Դրանով Ուկրաինական ուղղափառ եկեղեցուն (Մոսկվայի պատրիարքարանի) պարտավորեցրեց իր անվան մեջ նշելու Ռուս ուղղափառ եկեղեցուն պատկանելու մասին²⁸⁸, քանի որ Ուկրաինական ուղղափառ եկեղեցին (Մոսկվայի պատրիարքարանի) մաս է կազմում այնպիսի կրոնական կազմակերպության, որի կենտրոնը գտնվում է այն պետության տարածքում, որը ռազմական ագրեսիա է իրականացրել Ուկրաինայի նկատմամբ²⁸⁹: Հետևաբար՝ այդ կազմակերպությունը պարտավոր է իր անվան մեջ նշելու իր պատկանելիությունն Ուկրաինայի սահմաններից դուրս գտնվող կրոնական կազմակերպությանը: Ուշագրավ է, որ եթե ՈւՈւԵ-ի անկախացումը հոգևոր առաջնորդների համար կրոնական և մշակութային

²⁸⁷ Ст' у Закон України “Про свободу совісті та релігійні організації” (Відомості Верховної Ради УРСР (БВР), 1991, №25, ст.283) {Із змінами, внесеними згідно із Законами №2581-VIII від 02.10.2018, БВР, 2018, №46, ст.371; №2598-VIII від 18.10.2018, БВР, 2018, №46, ст.373; №2662-VIII від 20.12.2018, БВР, 2019, №3, ст.23; №2673-VIII від 17.01.2019, БВР, 2019, №6, ст.40}. Дата доступу: 12.06.2019. <https://zakon.rada.gov.ua/laws/show/987-12#n67>:

²⁸⁸ Ст' у նույն տեղում:


²⁸⁹ Ст' у նույն տեղում:

**9. Կոնսոցիալ համախմբման ներուժն Ուկրաինայում.
քաղաքացիավարական անվտանգության սահմանները**

ինքնության ու անվտանգության խնդիր էր, ապա երկրի նախագահի և քաղաքական գործիչների համար՝ լեգիտիմության և անձնական հեղինակությունը բարձրացնելու խնդիր:

Ինչ վերաբերում է 2016-2018 թթ. Ուկրաինայում քաղաքացիական հասարակության կայացման նախադրյալներին, ապա ՔՀԿ-ների արդյունավետությունը մեծապես կախված է պետական կառավարման և ՏԻՄ-երի քաղաքացիավարական ընթացակարգերից:

**Գծապատկեր 2
2017 թ.-ի Ուկրաինայի ՔՀԿ-ների կայունության ցուցանիշը²⁹⁰**



Գծապատկեր 2-ից երևում է, որ 2018 թ. ՔՀԿ-ների կայունության ցուցանիշը 3,2 միավոր է, այսինքն՝ Ուկրաինայում քաղաքացիական հասարակության զարգացման գործընթացը դեռևս շարունակվում է, և Ուկրաինայում 2016-2017 թթ. ՔՀԿ-ների ամենաբարձր միավորը շահերի պաշտպանության տիրույթում է, իսկ ամենացածրը՝ ֆինանսական կայունության (USAID 2017, USAID 2018): Դա վկայում է, որ Ուկրաինայում անհրաժեշտ է ակտիվացնել քաղաքացիական հասարակությունը խթանելու համար պե-

²⁹⁰ Տվյալների աղբյուրը՝ ԱՄՆ ՄՀՀ «ՔՀԿ կայունության ցուցանիշ»-ի կայք՝ https://www.usaid.gov/sites/default/files/documents/1866/2017_CS0_Sustainability_Index_for_Central_and_Eastern_Europe_and_Eurasia.pdf (15.06.2019):

տական քաղաքականությունը: Քանի որ 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ Ուկրաինայում գրանցված են 80 հազար 461 հասարակական և 1254 քաղաքացիական միավորումներ, 25 հազար 223 կրոնական կազմակերպություններ, 27 հազար 601 արհմիություններ, 311 ստեղծագործական միություններ, 17 հազար 726 բարեգործական կազմակերպություններ և 1552 ինքնակազմակերպված մարմիններ (*USAID 2018, 220*):

ԱլԳ քաղաքացիական հասարակության ֆորումի (ՔՀՖ) Ուկրաինայի ազգային պլատֆորմի 2016-2018 թթ. գործունեությունը²⁹¹ հիմնականում ուղղված էր արդարության, օրենքի գերակայության, իրավունքների և ազատությունների ընդլայնման, ժողովրդավարական ընթացակարգերի խորացման, իրավական և սոցիալական պետության գործառույթների իրականացմանը: Դա համահունչ էր Ուկրաինայի եվրաինտեգրման քաղաքականության ծրագրերին, ինչպես նաև 2013-2014 թթ. «Արժանապատվության հեղափոխության» արդիականացման օրակարգին: Միևնույն ժամանակ, քաղաքացիական հասարակությունն ակնկալում էր, որ երկրի կառավարությունն օրենսդրորեն կապահովի և գործընկերային քաղաքականությամբ կերաշխավորի ՔՀԿ-ների ներգրավվածությունը հանրային որոշումների ընդունման գործընթացում: Դա ամրագրված էր նաև Ուկրաինայի քաղաքացիական հասարակության ներգրավման 2014-2017թթ. և 2018-2020թթ. ճանապարհային քարտեզներում (*Delegation of the EU to Ukraine 2014, Delegation of the EU to Ukraine 2019*):

Անդրադառնալով ԺՄԻ մոդելում քաղաքական կայունության 2016-2018 թթ. ցուցանիշներին՝ կարելի է արձանագրել, որ դրանք 1995-2013 թթ. համեմատ շարունակում են մնալ ցածր: Ընդ որում, դիտարկվող ժամանակահատվածում մտահոգիչ են նաև մամուլի ազատության, քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ցուցանիշները: Միևնույն ժամանակ օրենքի գերակայության 2016 թ. ցուցանիշները նախորդ տարվա համեմատ բարելավվել են, իսկ Կոռուպցիայի ընկալման ինդեքսը գրանցել

²⁹¹ Տե՛ս ԱլԳ ՔՀՖ-ի Ուկրաինայի ազգային պլատֆորմի պաշտոնական կայք՝ <http://eap-csf.org.ua> (28.04.2017):

9. Կոնսոցիալ համախմբման ներուժն Ուկրաինայում. քաղաքացիավարական անվտանգության սահմանները

է ամենաբարձր միավորները 1995-2015 թթ. համեմատ²⁹²: Ըստ Կոռուպցիայի ընկալման ինդեքսի՝ Ուկրաինան 2016-2018 թթ. ավելի առաջադիմեց՝ 176 և 180 երկրների շարքում համապատասխանաբար զբաղեցնելով 131-րդ, 130-րդ և 120-րդ տեղերը²⁹³: Ուկրաինայում կոռուպցիայի մակարդակի նվազեցման առումով կարևոր նշանակություն է ունեցել Գերագույն ռադա ներկայացված «2018-2020 թթ. հակակոռուպցիոն ռազմավարության մասին» թիվ 8324 օրինագիծը²⁹⁴: Այն նախապատրաստել է Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալությունը²⁹⁵՝ ներառելով պետական հակակոռուպցիոն քաղաքականության նոր սկզբունքներ, որոնք առաջիկա երեք տարիների ընթացքում կորոշեն կոռուպցիայի կանխարգելման և դրանց դեմ պայքարի գերակա ուղղությունները:

Ըստ Համաշխարհային գեոէկոնոմիկ թափանցիկության ինդեքսի (*World Economic Forum 2016, 2017, 2018*) տվյալների՝ 2016 թ.-ին Ուկրաինան 144 երկրների շարքում զբաղեցրել է 69-րդ տեղը, 2017 թ.-ին 144 երկրների շարքում՝ 61-րդ տեղը, 2018 թ.-ին 149 երկրների շարքում՝ 65-րդ տեղը (*World Economic Forum 2016, 2017, 2018*):

Այդուսակ 5-ից երևում է, որ Ուկրաինայում 2016-2018 թթ. վերաբերյալ տվյալների շարքում ամենացածրը շարունակում է մնալ քաղաքական հնարավորությունների ենթահինդեքսը (*World Economic Forum 2016, 2017, 2018*): Ընդ որում, 2016-2018 թթ.-ին ամենաբարձր ցուցանիշներն արձանագրվել են «Կրթական մակարդակ» ենթահինդեքսով, իսկ 2017-2018 թթ.-ին՝ նաև «Տնտեսական մասնակցություն և հնարավորություն» ենթահինդեքսով (*World Economic Forum 2016, 2017, 2018*):

²⁹² Տե՛ս ՀԲ պաշտոնական կայք՝ <http://info.worldbank.org/governance/wgi/index.aspx#reports> (14.06.2019), «Թրանսփարենսի ինդեքսը» հակակոռուպցիոն կենտրոնի պաշտոնական կայք՝ <https://www.transparency.org/cpi2018> (14.06.2019):

²⁹³ Տե՛ս «Թրանսփարենսի ինդեքսը» հակակոռուպցիոն կենտրոնի պաշտոնական կայք՝ <https://www.transparency.org/country/UKR> (14.06.2019):

²⁹⁴ Տե՛ս “Проект Закону про Антикорупційну стратегію на 2018-2020 роки”. Дата доступу: 18.06.2019. http://w1.c1.rada.gov.ua/pls/zweb2/webproc4_1?pf3511=63942:

²⁹⁵ Տե՛ս Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալության պաշտոնական կայք՝ <https://nazk.gov.ua/uk> (14.06.2019):

Աղյուսակ 5

2016-2018 թթ. Ուկրաինայի Համաշխարհային գենդերային բացակի ինդեքս²⁹⁶

ՀԳԲի ենթահինդեքս	2016		2017		2018	
	վարկանիշ	միավոր	վարկանիշ	միավոր	վարկանիշ	միավոր
Տնտեսական մասնակցություն և հնարավորություն	40	0,722	34	0,736	28	0,747
Կրթական մակարդակ	26	1,000	28	1,000	26	1,000
Առողջություն և գոյատևում	40	0,979	51	0,978	56	0,978
Քաղաքական հնարավորությունների հզորացում	107	0,098	103	0,107	105	0,107
ՀԳԲի	69	0,700	61	0,705	65	0,708

Ամփոփելով նշենք, որ Ուկրաինայի ԺՄԻ-ի Քաղաքական գործոնների ինդեքսի (Ք_{ԳԻ}) կորը 2000-2018 թթ. ժամանակահատվածում տատանումներով նվազել է: Եթե Ք_{ԳԻ}-ն 2000 թ.-ին ունեցել է 0,400 միավոր, ապա 2018 թ.-ին՝ 0,378 միավոր: Ընդ որում, Ք_{ԳԻ}-ն 2018 թ.-ին հավասարվել է 2016 թ.-ի մակարդակին՝ նվազելով 2017 թ.-ի համեմատ: 2000-2018 թթ. ժամանակահատվածում Ք_{ԳԻ}-ի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է 2006 թ.-ին, իսկ ամենացածրը՝ 2014 թ.-ին (տե՛ս Գծապատկեր 1, Աղյուսակ 1):

9.2 Եվրոպական տնտեսական ինտեգրման հնարավոր հետևանքները

Եվրոպական տնտեսական ինտեգրման ընթացակարգերը դարձել են Ուկրաինայի ինքնիշխանության և կայուն զարգացման ռազմավարության բաղկացուցիչ մասը ինչպես կարճաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում: Աշխարհաքաղաքականորեն Ուկրաինան

²⁹⁶ Տվյալների աղբյուրը՝ Համաշխարհային տնտեսական ֆորումի պաշտոնական կայք՝ <https://www.weforum.org/reports/the-global-gender-gap-report-2016> (21.06.2019), <https://www.weforum.org/reports/the-global-gender-gap-report-2017> (21.06.2019), <https://www.weforum.org/reports/the-global-gender-gap-report-2018> (21.06.2019):

**9. Կոնսոցիալ համախմբման ներուժն Ուկրաինայում.
քաղաքացիավարական անվտանգության սահմանները**


գտնվում է եվրոպական և եվրասիական ինտեգրման գործընթացների խաչմերուկում: Եթե ԵՄ-ի հետ տնտեսական համագործակցության ընդլայնումն ու խորացումն Ուկրաինան համարում է զարգացման հիմնական ռազմավարություն, ապա հետխորհրդային մի շարք երկրների հետ տնտեսական կապերի վերականգնումը՝ կարճաժամկետ հարմարվողականության խնդիր: ԵՄ-ի համար Ուկրաինան էներգետիկ անվտանգության հարցերում միշտ եղել է առանցքային գործընկերներից մեկը, և երկիրը որպես տարանցիկ երկիր հատուկ դեր է խաղացել Ռուսաստանի էներգետիկ արտադրանքների՝ հիմնականում գազի և նավթի համար:

Ուկրաինայի և ԵՄ-ի միջև հարաբերությունները սկսեցին ձևավորվել Ուկրաինայի եվրասոցացման համաձայնագրի մշակումից և ընդունումից շատ առաջ: Անկախ Ուկրաինայի գոյության պատմության ընթացքում ԵՄ երկրների հետ հարաբերությունների խորացումը, ներառյալ տնտեսական հարաբերությունների զարգացումը, եղել է արտաքին քաղաքականության հիմնական նպատակներից մեկը: Այս գործընթացը բազմակողմանի էր, որովհետև ԵՄ երկրները նույնպես հետաքրքրություն էին ցուցաբերում Ուկրաինայի և նորանկախ այլ երկրների տնտեսական ինտեգրման հարցերում: Վերջիններս հավատում էին, որ Ուկրաինայում շուկայական տնտեսության ձևավորումից հետո կիրականանա տնտեսական զարգացման արագացված սցենարը՝ նկատի ունենալով այն, որ այդ երկիրն ունի տնտեսական աճի բավականին մեծ ներուժ: Այս առումով հիմնականում կարևորվում էին՝ Ուկրաինայի օրենսդրության համապատասխանեցումը ԵՄ օրենսդրությանը, տնտեսական ինտեգրումը, առևտրային հարաբերությունների և արդյունաբերության զարգացումը, համաեվրոպական անվտանգության համակարգին ինտեգրումը, քաղաքական համախմբումը, սոցիալական քաղաքականության համապատասխանեցումը ԵՄ չափանիշներին, մշակութային, կրթական և գիտատեխնիկական ինտեգրումը, շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում համագործակցությունը և այլն:

Եվրոպական ինտեգրման և համագործակցության ընդլայնման համատեքստում ուկրաինական տնտեսության ժողովրդավարական հեռանկարների ուսումնասիրությունը հետաքրքրություն է ներկայացնում նաև ռուս-ուկրաինական հարաբերությունների կերպափոխման առումով: Դա պայ-

մանավորված է այդ երկրների պատմականորեն ձևավորված տնտեսական փոխկապվածությամբ, աշխարհաքաղաքական հարևանության անխուսափելիությամբ և սոցիալ-մշակութային խորը հարաբերություններով:

Գծապատկեր 3
Ուկրաինայի Տնտեսական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)*



Ուկրաինայում ԺՄԻ-ի Տնտեսական գործոնների ինդեքսի կորը նախորդ տարվա համեմատ 2016-2018 թթ. նվազել է: Եթե 2015 թ. այն կազմել է 0,618, ապա 2018 թ.՝ 0,540 միավոր (տե՛ս Գծապատկեր 3, Աղյուսակ 1): 2015 թ. ՏԳԻ-ի կորի աճի վրա ազդել են օտարերկրյա ուղղակի ներդրումների անկայունությունը, բյուջեի դեֆիցիտը, համախառն ազգային արդյունքի, տնտեսության վարկավորման և առևտրի ծավալների նվազումը: Տնտեսական անվտանգության և ինտեգրման գործընթացների վրա բացասաբար է ազդել լարված ռազմաքաղաքական իրավիճակը Ուկրաինայի հարավ-արևելքում:

2016-2018 թթ. Ուկրաինայի տնտեսական համակարգի կայունության վրա դրական է ազդել երկրի կառավարության և Կենտրոնական բանկի՝ գնաճի զսպման քաղաքականությունը. 2018 թ.-ին այն հասավ շուրջ 11%-ի՝

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

**9. Կոնսոցիալ համախմբման ներուժն Ուկրաինայում.
քաղաքացիավարական անվտանգության սահմանները**

նախորդ տարվա 14,4%-ի դիմաց²⁹⁷: Այս առումով կարևոր նշանակություն է ունեցել հակակոռուպցիոն ռազմավարության հաջող իրականացումը, որը բարձրացրեց ինչպես քաղաքացիների վստահությունը կառավարության նկատմամբ, այնպես էլ երկրի մրցունակությունն ու գրավչությունն օտարերկրյա ներդրումների ծավալը: Ստվերային տնտեսության կրճատման և տնտեսական մրցակցության պաշտպանության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով երկրի հակակոռուպցիոն ռազմավարության արդյունավետության գնահատականը հիմնված կլինի երկրի կոռուպցիայի վիճակի տարեկան ուսումնասիրությունների վրա: Դրանցում առաջնային են այն բարեփոխումները, որոնք բխում են ԵԽ-ի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի²⁹⁸, ինչպես նաև ՏՀԶԿ-ի Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի²⁹⁹ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողություններից:

2016-2018 թթ. ժամանակահատվածը շրջադարձային է եղել ԵՄ-Ուկրաինա հարաբերությունների առաջընթացի համար: 2017 թ. սեպտեմբերի 1-ից ուժի մեջ մտավ ԵՄ-Ուկրաինա Ասոցացման համաձայնագիրը, որը ներառում է նաև Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱԳ) մասին ընթացակարգերը³⁰⁰: Դրանք կոչված են արդիականացնելու Ուկրաինայի տնտեսական համակարգը և ենթակառուցվածքները, համապատասխանեցնելու ԵՄ չափանիշներին: Ի մասնավորի, Ուկրաինայի համար ամենակարևոր հնարավոր օգուտներից մեկը կարող է լինել գազատրանսպորտային համակարգի հիմնական մասի ֆիզիկական և բարոյական ծայրահեղ մաշվածության խնդրի լուծումը: Կարևորելով ԵՄ-Ուկրաինա տնտեսական կապերի ներուժը և առևտրային հարաբերությունների դրա-

²⁹⁷ Տե՛ս ՀԲ պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/FP.CPI.TOTL.-ZG?locations=UA> (21.06.2019):

²⁹⁸ Տե՛ս ԵԽ-ի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (GRECO) պաշտոնական կայք՝ <https://www.coe.int/en/web/greco> (21.06.2019):

²⁹⁹ Տե՛ս Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) պաշտոնական կայք՝ <https://www.oecd.org/corruption/acn/istanbulactionplan> (21.06.2019):

³⁰⁰ Տե՛ս Ուկրաինայում ԵՄ պատվիրակության պաշտոնական կայք՝ https://eeas.europa.eu/delegations/ukraine/1937/ukraine-and-eu_en (21.06.2019):

կան դինամիկան՝ ԽՀԱԱԳ-ն ժամանակավորապես ներդրվել էր 2016 թ. հունվարի 1-ից³⁰¹: Մասնավորապես, 2017 թ. առաջին կիսամյակի տվյալներով՝ ԵՄ-ի և Ուկրաինայի միջև առևտրաշրջանառությունն աճել է 23%-ով, իսկ Ուկրաինայի արտահանման ընդհանուր տեսակարար կշռի շուրջ 40%-ը բաժին է ընկել ԵՄ-ին³⁰²: Տեղին է նշել, որ առաջիկա տարիներին երկրի համար տնտեսական առաջընթացի և համակարգային ինտեգրման առումով առանցքային նշանակություն են ունենալու ԵՄ-ի 12,8 միլիարդ եվրո աջակցության փաթեթը³⁰³, ինչպես նաև Արժույթի միջազգային հիմնադրամի ներդրումները (*IMF 2019*): Դրանք ներառում են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ենթակառուցվածքների բարեփոխումներ և արդիականացում:

9.3 Սոցիալական փոխակերպումների միտումները

Ուկրաինական հասարակության ժողովրդավարացման ներկա փուլում առանցքային նշանակություն է ունեցել սոցիալական քաղաքականությունը: Այն միտված էր պաշտպանելու մարդու սոցիալ-աշխատանքային իրավունքներն ու ազատությունները՝ հասարակության անդամների սոցիալական կապիտալի վերարտադրության և սոցիալական համակարգերի կայունության նախադրյալներ ստեղծելու համար: 2016-2018 թթ. Ուկրաինայում սոցիալական քաղաքականության նպատակն էր հասնել սոցիալական որոշակի ցուցանիշների (բնակչության բարեկեցության բարձրացում, մարդկային ներուժի զարգացում, եկամուտների բաշխման անհավասարության կրճատում), որոնք համահունչ կլինեն երկրի կայուն զարգացման տեսլականին: Մինևույն ժամանակ, Ուկրաինայում խնդիր է դրվել բարձրացնել աշխատուժի զբաղվածության մակարդակը և կենսամակարդակը, կրթության մատչելիությունը, բժշկության և այլնի համար ստեղծել քաղաքակիրթ պայ-

³⁰¹ Տե՛ս նույն տեղում:


³⁰² Տե՛ս նույն տեղում:

³⁰³ Տե՛ս նույն տեղում:

**9. Կոնսոցիալ համախմբման ներուժն Ուկրաինայում.
քաղաքացիավարական անվտանգության սահմանները**

մաններ, բարձրացնել սոցիալական նպաստները, կենսաթոշակները և պետական հատվածի ծառայողների աշխատավարձերը:

**Պճապատկեր 4
Ուկրաինայի Սոցիալական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)***



Ուկրաինայում ԺՄԻ-ի Սոցիալական գործոնների ինդեքսի (Ս_{ԳԻ}) կորը 2016-2018 թթ. նախորդ տարվա համեմատ անընդմեջ աճել է (տե՛ս Պճապատկեր 4, Աղյուսակ 1): Եթե 2016 թ. այն եղել է 0,694, ապա 2017-2018 թթ.՝ համապատասխանաբար 0,741 և 0,792 միավոր (տե՛ս Աղյուսակ 1): 2018 թ. Ս_{ԳԻ}-ի ցուցանիշի աճը հիմնականում պայմանավորված էր իրական աշխատավարձի բարձրացմամբ: Դրան զգալիորեն նպաստել է Ուկրաինայի սոցիալական քաղաքականության նախարարության եվրոպական սոցիալական ինտեգրման գործողությունները³⁰⁴: Դրանք ուղղված էին երկրում սոցիալական իրավիճակի բարելավմանը, սոցիալական անվտանգության ու պաշտպանվածության չափանիշների կատարելագործմանը: Դա

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:


³⁰⁴ Տե՛ս Ուկրաինայի սոցիալական քաղաքականության նախարարության պաշտոնական կայք՝ <https://www.msp.gov.ua/ru/timeline/evropeyska-ta-evroatlantichna-integraciya.html> (21.06.2019):

բխում էր Ուկրաինայի և ԵՄ-ի միջև ասոցացման համաձայնագրի գործադրմանը վերաբերող փոխադարձ պարտավորություններից:

2018 թ.-ին ՍԳԻ-ի վրա դրական ազդեցություն է ունեցել նաև գործազրկության ընդհանուր մակարդակի կրճատումը 0,1%-ով՝ հասնելով 9,4%-ի³⁰⁵: Սակայն մտահոգիչ է այն, որ 2016-2018 թթ. գործազրկության ընդհանուր մակարդակն Ուկրաինայում բարձրացել է՝ հասնելով 9,4%-ի³⁰⁶:

Գծապատկեր 5

Ուկրաինայի աշխատուժի ընդհանուր թիվը (2016-2018 թթ.)



Համաշխարհային բանկի տվյալներով՝ Ուկրաինայում աշխատուժը 2018 թ.-ին կազմել է 20 միլիոն 281 հազար 397 մարդ, որը ցածր է 2016-2017 թթ. համեմատ³⁰⁷ (տե՛ս Գծապատկեր 5): Ի մասնավորի, Ուկրաինայում 1995 թ.-ից աշխատուժի նվազման միտումները դարձել են ռիսկային՝ խոչընդոտելով երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացը:

³⁰⁵ Տե՛ս ՀԲ պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.-ZS?locations=UA> (21.06.2019):

³⁰⁶ Տե՛ս նույն տեղում:

³⁰⁷ Տվյալների աղբյուրը՝ ՀԲ պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/SL.TLF.TOTL.IN?locations=UA&view=chart> (26.06.2019):

**9. Կոնսոցիալ համախմբման ներուժն Ուկրաինայում.
քաղաքացիավարական անվտանգության սահմանները**

Դիտարկվող ժամանակահատվածում Ուկրաինայում սոցիալապես ամենանշանակալի իրադարձությունը 2017 թ. հոկտեմբերի 3-ին ընդունված կենսաթոշակային բարեփոխումներն էին³⁰⁸: Նախատեսվում է առաջիկա 10 տարիներին կենսաթոշակային համակարգն աստիճանաբար բարելավել՝ երկրում ապահովելու սոցիալական համերաշխություն և արդարություն: Ապահովագրության ստաժի պահանջների բարձրացման պատճառով ուկրաինացիներն ամեն տարի կենսաթոշակի կանցնեն նոր կանոնների համաձայն: Փաստորեն, տղամարդկանց և կանանց կենսաթոշակային տարիքը մնաց նույնը, բայց ավելացան աշխատանքային ստաժի պահանջները: Տեղին է նշել, որ դրանք դեռևս բավարար չեն 11,5 միլիոն³⁰⁹ կենսաթոշակառուների կյանքի որակը բարձրացնելու առումով, քանի որ Ուկրաինայում տարեցների մեծ մասն ապրում է աղքատության մակարդակից ցածր: Դեռ ավելին, կան մի շարք ընթացակարգեր, որոնք կարող են հանգեցնել կենսաթոշակային տարիքի բարձրացման, կենսաթոշակ ստացողների թվի նվազման, իսկ որոշ դեպքերում՝ նաև առանց կենսաթոշակի մնալու ռիսկի:

2016-2018 թթ. Ուկրաինայում սոցիալական զարգացման վրա, բացի արտաքին գործոններից, ավելանում են նաև սոցիալ-տնտեսական և քաղաքական բարդ իրավիճակները: Արմատական արդիականացման համար ներդրումների պակասն արտադրությունը դարձնում է անմրցունակ, իսկ ձեռնարկությունների ֆինանսական վիճակը՝ անկայուն: Տնտեսական ակտիվության նվազման պատճառով սահմանափակվում են աշխատողների սոցիալ-աշխատանքային իրավունքներն ու երաշխիքները, կրճատվում են աշխատատեղերն ու սոցիալական պաշտպանվածության մակարդակը, վատթարանում են աշխատանքային պայմանները, աճում է սոցիալական լարվածությունն աշխատանքային կոլեկտիվներում և այլն: Այս պայմաններում մեծանում են Ուկրաինայի արհմիությունների դաշնության (ՈւԱԴ)³¹⁰

³⁰⁸ Стів Закон України “Про внесення змін до деяких законодавчих актів України щодо підвищення пенсій” (Відомості Верховної Ради (ВВР), 2017, № 40-41, ст.383). Дата доступу: 13.06.2019. <https://zakon3.rada.gov.ua/laws/show/2148-19>:

³⁰⁹ Стів Ուկրաինայի կենսաթոշակային հիմնադրամի պաշտոնական կայք՝ <https://www.pfu.gov.ua> (21.06.2019):

³¹⁰ Стів Ուկրաինայի արհմիությունների դաշնության պաշտոնական կայք՝ <http://www.fpsu.org.ua/generalna-ugoda-galuzevi-ugodi-teritorialni-ugodi> (21.06.2019):

գործառույթները, որոնք փորձում են ամրապնդել արհեստակցական շարժումը, բարձրացնել աշխատողների միասնությունն ու համերաշխությունը: Մասնավորապես, զգալի են ՈւԱԴ-ի ջանքերը Ուկրաինայում սոցիալական պետության զարգացման, սոցիալական երկխոսության և աշխատողների արժանապատիվ աշխատանքի հարցերում: Դրանց կարգավորմամբ հնարավոր կդառնա կյանքի որակը և մակարդակը համապատասխանեցնել եվրոպական չափանիշներին: Վերջիններս արտացոլվեցին 2016 թ.-ին ընդունված «Ուկրաինայում սոցիալ-տնտեսական քաղաքականության և աշխատանքային հարաբերությունների իրականացման հիմնական սկզբունքների և նորմերի կարգավորման վերաբերյալ» գլխավոր համաձայնագրում³¹¹:

Զգալի է ԵՄ-ի մարդասիրական օգնությունը երկրի հարավ-արևելքում ռազմաքաղաքական հակամարտությունից տուժածներին: Նրա մարդասիրական օգնությունը կազմել է 88,1 միլիոն եվրո, իսկ 177 միլիոն եվրո է հատկացվել վերականգնման և խաղաղաշինության գործողությունների համար³¹²: Հանդուրժողականության մշակույթի ձևավորման առումով՝ Ուկրաինայում սոցիալական քաղաքականության կարևորագույն խնդիրներից են ոչ միայն զբաղվածության, ժողովրդագրական և բնակարանային խնդիրների լուծումը, այլև յուրաքանչյուր քաղաքացու ներուժի և նրա արժանապատիվ կյանքի առավելագույն իրականացման աջակցությունը:

Ուկրաինայի համար սոցիալական քաղաքականության գերակա նպատակը բնակչության կենսամակարդակի բարձրացումն է, մարդկային ներուժի զարգացումը, միջին խավի ձևավորումը, եկամուտների բաշխման անհավասարության կրճատումը և նպատակային օգնության տրամադրումը: Դա նշանակում է մշակել և իրականացել այնպիսի սոցիալական քաղաքականություն, որը կնպաստի երկրում աղքատության կրճատմանը, սոցիալապես անապահով տնային տնտեսությունների պաշտպանվածության բարձրացմանը, սոցիալական նպաստների սոցիալապես ընդունելի որակի ապահովմանը և այլն: Այսինքն՝ Ուկրաինայում սոցիալական գործոնների

³¹¹ Տե՛ս նույն տեղում:

³¹² Տե՛ս Ուկրաինայում ԵՄ պատվիրակության պաշտոնական կայք՝ https://eeas.europa.eu/delegations/ukraine/1937/ukraine-and-eu_en (21.06.2019):

**9. Կոնսոցիալ համախմբման ներուժն Ուկրաինայում.
քաղաքացիավարական անվտանգության սահմանները**

համատեքստում առաջնային է դառնում քաղաքացիների սոցիալական պաշտպանությունը՝ կենտրոնանալով մարդու սոցիալ-աշխատանքային իրավունքների և սոցիալական ծառայությունների մատուցման որակի վրա:

9.4 Եվրոպական կրթական ինտեգրման հեռանկարները


Ուկրաինայի եվրաինտեգրման արդի փուլում առանձնահատուկ նշանակություն է ունեցել արդյունավետ կրթական քաղաքականությունը, որը նորանոր հեռանկարներ է բացել երկրի ռազմավարական նպատակներին հասնելու համար: Նույնիսկ եվրոպական կրթական ինտեգրման այս կարճ ժամանակահատվածի դիտարկումը վկայում է, թե որքան մեծ է կրթական գործոնների ազդեցությունն Ուկրաինայի սոցիալ-տնտեսական ինտեգրման մակարդակի վրա:

2016-2018 թթ. Ուկրաինայի կրթական քաղաքականությունն ուղղված է եղել եվրոպական կրթական ինտեգրման նորմատիվ հենքի և հիմնական սկզբունքների ձևավորմանը՝ ամրապնդելով միջազգային շարժունակությունն ու կրթական երկխոսությունը: Ակնհայտ է, որ ԵՄ-ի հետ Ուկրաինայի քաղաքական և տնտեսական հետագա միասնությունն անհնար է առանց հասարակության սոցիալական համախմբման: Այդ խնդիր լուծվում է Ուկրաինայի սոցիալական բարեփոխումների միջոցով, որտեղ կրթությունը՝ որպես անհատի սոցիալականացման ինստիտուտ, առանցքային դեր է խաղում: Այնուամենայնիվ, Ուկրաինայի եվրոպական կրթական ինտեգրումը չի ընթացել այնքան արագ և սահուն, որքան ցանկացել են այս գործընթացի հիմնական դերակատարները: Եվրոպական կրթական տարածքը նախ և առաջ բնութագրվում է ավանդույթների բազմազանությամբ. ԵՄ երկրների կրթական համակարգերը զգալիորեն տարբերվում են, իսկ կրթության ոլորտին վերաբերող որոշումներ կայացնելու իրավունքը մնում է ԵՄ անդամ երկրների իրավասության շրջանակներում:

Ժամանակակից Ուկրաինայի կրթական համակարգում առանցքային նշանակություն են ունեցել նաև ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների կրթության ծրագրերը: Դրանք բխել են ԵԽ-ի նա-

խարարների կոմիտեի ընդունած «Ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների կրթության մասին» խարտիայի³¹³ ընթացակարգերից:

Գծապատկեր 6
Ուկրաինայի Կրթական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)*



2018 թ. Ուկրաինայի ԺՄԻ-ի կրթական գործոնների ինդեքսի (Կ_{ԳԻ}) կորը 2016-2017³¹⁴ թթ. չի փոխվել: Սակայն 2016-2018 թթ. Կ_{ԳԻ}-ին 2015 թ. համեմատ նվազել է (տե՛ս Գծապատկեր 6, Աղյուսակ 1):

2016-2017 թթ.-ին Ուկրաինայի կրթության ոլորտի պետական ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 5%-ը³¹⁵, իսկ 2017 թ. Մարդկային զարգացման համաթվի (ՄԶՀ) կրթության բաղադրիչով Ուկրաինան ունեցել է «մարդկային զար-

³¹³ Տե՛ս “Council of Europe Charter on Education for Democratic Citizenship and Human Rights Education” (Adopted in the framework of Recommendation CM/Rec(2010)7 of the Committee of Ministers). Accessed June 19, 2019. <https://rm-coe.int/16803034e5>:

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

³¹⁴ Որոշ տվյալների բացակայությամբ պայմանավորված՝ 2017-2018 թթ. Կ_{ԳԻ}-ն ենթակա է ճշգրտման:

³¹⁵ Տվյալների աղբյուրը՝ ՀԲ պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/SE.XPD.TOTL.GD.ZS?locations=UA> (26.06.2019):

**9. Կոնսոցիալ համախմբման ներուժն Ուկրաինայում.
քաղաքացիավարական անվտանգության սահմանները**

գացման բարձր մակարդակ»՝ զբաղեցնելով 88-րդ տեղը 189 երկրների շարքում (*Human Development Report 2018*):

Դիտարկվող ժամանակահատվածում Ուկրաինայի կրթության և գիտության նախարարությունը մշակել է կրթական համակարգի արմատական բարեփոխումների համալիր ծրագիր: Դրա բաղկացուցիչ մասն էին նաև հանրակրթության բարեփոխումներն ու «Ուկրաինական նոր դպրոցի» հայեցակարգը³¹⁶: Վերջինս ենթադրում է պետական կրթական չափորոշիչներին համապատասխան աստիճանական փոփոխություններ: Դրանք կիրականացվեն երեք փուլով. 1-ին փուլը՝ 2016-2018 թթ., 2-րդը՝ 2019-2022 թթ., իսկ 3-րդը՝ 2023-2029 թթ.³¹⁷: Այսպես, նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչի համաձայն՝ դպրոց կհաճախեն 2018 թ. սեպտեմբերի 1-ից, իսկ հիմնական և ավագ դպրոցների պետական կրթական չափորոշիչների ներդրումը կսկսվի համապատասխանաբար՝ 2022 թ. սեպտեմբերի 1-ից և 2027 թ. սեպտեմբերի 1-ից (*Факти 2018*): Միևնույն ժամանակ նշանակալի են եղել նաև կրթության, գիտության և գիտատեխնիկական ոլորտը կարգավորող մի շարք օրենքների ընդունումն ու փոփոխությունները³¹⁸:

2016-2018 թթ. Ուկրաինայի բարձրագույն կրթության որակի բարձրացման և առաջընթացի առումով առանցքային նշանակություն են ունեցել միջազգայնացման և եվրոպականացման մի շարք ծրագրեր: Զգալի է եղել միջազգային տեխնիկական աջակցությունը երկրի կրթական բարեփոխումների առաջնահերթությունների իրականացման գործում: Մասնավորապես, ԵՄ-ի «Էրազմուս+» ծրագիրը շարունակել է ակտիվորեն աջակցել Ուկրաինայի գիտակրթական համակարգի բազմաթիվ նախագծերի իրականաց-

³¹⁶ Տե՛ս Ուկրաինայի կրթության և գիտության նախարարության պաշտոնական կայք՝ <https://mon.gov.ua/storage/app/media/zagalna%20serednya/nova-ukrainska-shkola-compressed.pdf> (26.06.2019):

³¹⁷ Տե՛ս նույն տեղում:

³¹⁸ Տե՛ս Закон України “Про освіту” (Відомості Верховної Ради (ВВР), 2017, № 38-39, ст.380). Дата доступу: 13.06.2019. <https://zakon.rada.gov.ua/laws/show/2145-viii>, Закон України “Про наукову і науково-технічну діяльність” (Відомості Верховної Ради (ВВР), 2016, № 3, ст.25). Дата доступу: 13.06.2019. <https://zakon.rada.gov.ua/laws/show/2145-viii>:

մանր, գործընկերային կապերի ամրապնդմանը, շարժունությանն ու վերապատրաստմանը³¹⁹: Այս համատեքստում կարևորվում է նաև այն, որ «Բարձրագույն կրթության մասին» Ուկրաինայի օրենքում³²⁰ ամրագրված է համապարփակ համալսարանական ինքնավարության հայեցակարգը՝ գիտական, ֆինանսական և կազմակերպչական: Ակնհայտ է, որ այս օրենքը բացում է նոր հնարավորություններ ակադեմիական ինքնավարության, համալսարանական կյանքի ժողովրդավարացման և ուսանողական ինքնակառավարման զարգացման համար: Այս առումով նկատելի է իրական առաջընթաց, որը հնարավոր չէ ապահովել առանց ֆինանսական և կազմակերպչական ինքնավարության շոշափելի որակական աճի: Ավելին, նման պայմաններում ակադեմիական ինքնավարությունն առաջացնում է ոչ թե նոր հնարավորություններ, այլ նոր խնդիրներ և լրացուցիչ ծանրաբեռնվածություն:

Ժամանակակից պայմաններում եվրոպական կրթական տարածքը ծածկված է ցանցային բազմաթիվ կառույցներով: Դրանց դինամիզմը և գործընկերային մոտեցումները հնարավորություն են տալիս Ուկրաինայի կրթական համակարգում իրականացնել այնպիսի բարեփոխումներ, որոնց ճկունության ու շարժունակության շնորհիվ հնարավոր կլինի արագորեն հարմարվել արտաքին միջավայրի ցանկացած փոփոխությունների: Այս փուլում Ուկրաինայի կրթական համակարգի համար կարևոր նշանակություն ունի այն, որ ԵՄ-ում ցանցային կրթական կառույցների միջև համագործակցության արդյունավետությունն ապահովվում և գնահատվում է ընդհանուր ուժերի ու ռեսուրսների համախմբման շնորհիվ՝ հիմնված երկխոսության և փոխհամաձայնության վրա: Այլ կերպ ասած՝ ԵՄ-ում կրթական ինտեգրումն իրականացվում է ցանցային կառավարման սկզբունքներով, որոնց հորիզոնական բնույթն արդիականացնում է Ուկրաինայի կրթական համակարգը:

³¹⁹ Տե՛ս Ուկրաինայի կրթության և գիտության նախարարության պաշտոնական կայք՝ <https://mon.gov.ua/ua/tag/erazmus+> (26.06.2019):

³²⁰ Տե՛ս Закон України “Про вищу освіту (Відомості Верховної Ради (ВВР), 2014, № 37-38, ст.2004). Дата доступу: 13.06.2019. <https://zakon.rada.gov.ua/laws/show/1556-18>:

9. Կոնսոցիալ համախմբման ներուժն Ուկրաինայում. քաղաքացիավարական անվտանգության սահմանները

Դիտարկվող ժամանակահատվածում կրթության ոլորտում նշանակալի է եղել ուկրաիններենը երկրի միակ պետական լեզու հռչակելը՝ ապահովելով դրա ներդրման սահմանադրաիրավական ընթացակարգերը: Այս առումով մշակվեց համապատասխան օրինագիծ, որը հետագայում ընդունվեց Գերագույն ռադայի կողմից³²¹: Դրանով ամրագրվում էր, որ Ուկրաինայում միակ պետական լեզուն ուկրաիններենն է, իսկ բազմալեզվություն մտցնելու փորձերը՝ անընդունելի, որովհետև դա հակասում է Ուկրաինայի Սահմանադրությանը, հղի է երկրում լեզվական պառակտում, ազգամիջյան առճակատումներ ու թշնամանք առաջացնելու վտանգներով: Այս համատեքստում պարտադիր է դառնում ուկրաիններենի տիրապետումը յուրաքանչյուր քաղաքացու, ինչպես նաև քաղաքացիություն հայցող բոլոր դիմորդների համար: Միևնույն ժամանակ, բոլոր պաշտոնյաներն ու ուժային կառույցների ղեկավարները, բոլոր մակարդակների պատգամավորները, դատավորները, փաստաբանները, համալսարանների ղեկավարները, բժշկական աշխատողները և այլք պետք է խոսեն ուկրաիններեն: Այդ օրենքի համաձայն՝ պետական մարմիններում և հիմնարկներում բոլոր նիստերը, հանդիպումները և այլ միջոցառումները՝ ինչպես կենտրոնական, այնպես էլ տարածքային, պետք է անցկացվեն ուկրաիններեն:


9.5 Առողջապահության նորարարական մոդելի մրցակցային առավելությունները

Ուկրաինայի քաղաքական համակարգի ժողովրդավարացման արդի պայմաններում քաղաքակրթական նշանակություն ունեն առողջապահության ոլորտում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրումը, արդիականացումն ու նորարարությունները: Դրանք հզոր խթան են ինչպես հիվանդությունների բուժման և կանխարգելման ոլորտի բարեփոխումների, այնպես էլ հեռաբժշկության և բժշկական ենթակառուցվածքների

³²¹ Ст'у Закон України “Про забезпечення функціонування української мови як державної” (Відомості Верховної Ради (ВВР), 2019, № 21, ст.81). Дата доступу: 12.06.2019. <https://zakon.rada.gov.ua/laws/show/2704-19>.

զարգացման համար. ընդլայնվեն բնակչությանը մատուցվող բժշկական ծառայությունների շրջանակը, իսկ որակը բարելավվի: Այս ամենն անհրաժեշտ է առողջապահական ծառայությունների հասանելիությունը, քաղաքացիների կյանքի որակը, առողջ ապրելակերպը և կյանքի սպասվող տևողությունը բարձրացնելու համար: Առողջապահության նորարար կատարելագործումը բնակչության առողջությունն ու կյանքի որակը արմատապես բարելավելու, վաղաժամ մահվան դեմ պայքարի և երկրի ժողովրդագրական խնդիրները լուծելու ամենաարդյունավետ միջոցն է:

Գծապատկեր 7
Ուկրաինայի Առողջապահական գործոնների ինդեքսը (2000-2018 թթ.)*



Ուկրաինայում ԺՄԻ-ի առողջապահական գործոնների ինդեքսի (Ա_{ԳԻ}) կորը 2018 թ.-ին նախորդ տարվա համեմատ նվազել է (տե՛ս Գծապատկեր 7, Աղյուսակ 1): ԺՄԻ-ի Ա_{ԳԻ}-ին 2017 թ.-ին բարելավվել է, որը երկրորդ ամենաբարձր ցուցանիշն է 2000-2018 թթ. ժամանակահատվածում (տե՛ս Գծապատկեր 7, Աղյուսակ 1):

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

**9. Կոնսոցիալ համախմբման ներուժն Ուկրաինայում.
քաղաքացիավարական անվտանգության սահմանները**

2017 թ. ԺՄԻ-ի Ա_{գր}-ի ցուցանիշների բարելավմանը նպաստել են կյանքի սպասվող տևողության աճը և առողջապահության ընթացիկ ծախսերի կայունությունը: Վերջինս կազմել է երկրի ՀՆԱ-ի 6,7%-ը³²²: Առողջապահության ոլորտի ծախսերի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2016 թ. նոյեմբերի 30-ին ընդունվել է «Առողջապահության համակարգի ֆինանսավորման բարեփոխումների հայեցակարգը»³²³: Այն պետք է ապահովի առողջապահական մոդելի արդիականացումը և բժշկական ծառայությունների մատուցման արդյունավետությունը՝ փորձելով բավարարել հասարակության կարիքները: Դա ենթադրում է, որ առողջապահության ոլորտում ներդրումները չպետք է լինեն սուկ դրամական բնութագիր, այլև պահպանեն սոցիալական նշանակությունը և չափելի լինեն մարդկային ներուժի որակով: Այլ կերպ ասած՝ Ուկրաինայում առողջապահության արդյունաբերացման քաղաքականության կիրառման գործընթացում անհրաժեշտ է դառնում գործընկերային ձևաչափի ապահովումը (*Romaniuk and Semigina 2018*):

2016-2018 թթ. շարունակվել են առողջապահության համակարգի բարեփոխումների ազգային ռազմավարությունից³²⁴ բխող գործողությունները, ինչպես նաև առողջապահության տեղեկատվականացման պետական քաղաքականությունը: Դրա հիմնական նպատակն էր առողջապահության տարբեր ոլորտներում զարգացնել տեղեկատվական միջավայրը՝ ձևավորելով տնտեսապես արդարացված այնպիսի ենթակառուցվածքներ, որոնք հնարավորություն կտան արդյունավետորեն օգտագործել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները (*ГС “Фонд підтримки реформ в*

³²² Տվյալների աղբյուրը՝ ՀԲ-ի պաշտոնական կայք՝ https://data.worldbank.org/indicator/SH.XPD.CHEX.GD.ZS?fbclid=IwAR100nEFGQ3MfB13vPeA_zlsz4prJhZ8A92Jf48HavFASkbbaimFcNEyYaE&locations=UA (14.06.2019), Ուկրաինայի պետական վիճակագրական ծառայության պաշտոնական կայք՝ <http://www.ukrstat.gov.ua> (14.06.2019):

³²³ Տե՛ս “Концепція реформи фінансування системи охорони здоров’я (Схвалено розпорядженням Кабінету Міністрів України від 30 листопада 2016 р. № 1013-р)”² Дата доступу: 17.06.2019. <https://zakon.rada.gov.ua/laws/show/1013-2016-%D1%80-#n8>.

³²⁴ Տե՛ս Ուկրաինայի առողջապահության նախարարության պաշտոնական կայք՝ «Національна стратегія реформування системи охорони здоров’я в Україні на період 2015-2020 років», <https://moz.gov.ua/strategija> (14.06.2019):

Україні” 2018): Պետք է նշել, որ նման ծառայությունների մատուցման հիմնական ռեսուրսը բարձր որակավորմամբ բժշկական անձնակազմն է, որն ունի ժամանակակից առաջատար տեխնոլոգիաներով աշխատելու բավարար գիտելիքներ: Չափազանց կարևոր է, որ Ուկրաինայի առողջապահության մոդելը նպաստի հասնելու բնակչության առողջության բարձր ցուցանիշների (WHO 2018, The USAID HIV Reform in Action Project 2018):


Ուկրաինայի եվրահետադարմամբ առողջապահության նորարարական մոդելի մրցակցային առավելությունները հասանելի են դարձել բժշկական պրակտիկայում գիտական հետազոտությունների արդյունավետ ներդրմամբ, ինչպես նաև բարձր որակավորմամբ անձնակազմի վերապատրաստման, տեսական գիտելիքների և գործնական փորձի համատեղման շնորհիվ: Այս մրցակցային առավելության ձեռքբերումը հնարավոր է դարձել Ուկրաինայի առողջապահական համակարգում ժամանակակից համալսարանական կլինիկաների ներդրմամբ՝ այդպիսով աստիճանաբար կայացնելով առողջապահության ոլորտում սոցիալական պետական գործընկերությունը:

9.6 Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի զարգացման միտումները

Գծապատկերներ 8-ում և 9-ում ներկայացված են 2000-2018 թթ. Ուկրաինայի ժողովրդավարության մակարդակի ինդեքսի (ԺՄԻ) և Ք_{ԳԻ}-ի, Տ_{ԳԻ}-ի, Ա_{ԳԻ}-ի, Կ_{ԳԻ}-ի և Ա_{ԳԻ}-ի ցուցանիշները: Գծապատկերներից երևում է, որ 2016-2018 թթ. ԺՄԻ-ի ցուցանիշները, որոշ տատանումներով հանդերձ, կայուն են: 2018 թ. ԺՄԻ-ին 2016-2017 թթ. ցուցանիշների համեմատ ցածր է: Ընդ որում, համախառն գնահատականների համաձայն՝ ԺՄԻ-ն 2018 թ.-ին ունեցել է ավելի բարձր ցուցանիշ, քան 2000 թ.-ին (տե՛ս Գծապատկեր 8, 9, Աղյուսակ 1):

Գծապատկեր 8

Ուկրաինայի ժողովրդավարության վրա ազդող Քաղաքական, Սոցիալական, Տնտեսական, Կրթական և Առողջապահական գործոնների ինդեքսները (2000-2018 թթ.)*




Գծապատկերներ 8-ից և 9-ից երևում է նաև, որ 2016 թ.-ին ԺՄԻ-ի աճը հիմնականում պայմանավորված էր Ք_{գԻ}-ի և Ս_{գԻ}-ի ցուցանիշների բարելավմամբ: Դրան նպաստեցին քաղաքական մի շարք կարևոր փոփոխություններ, որոնցից էին՝ կառավարող կոալիցիայի փլուզումը, Գրոյսմանի գլխավորությամբ նոր կառավարության ստեղծումը, եվրաինտեգրման գործընթացները, վիզային ռեժիմի ազատականացման շուրջ բանակցությունները, կոռուպցիայի դեմ իրական պայքարի սկիզբն ու էլեկտրոնային հոշակագիրը: Ընդ որում, 2016 թ.-ն ամբողջությամբ անցավ կոռուպցիայի դեմ պայքարի կարգախոսի ներքո, որովհետև սա Ուկրաինային առանց վի-

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:
ԺՄԻ-ի գործոնների ինդեքսները համեմատելի են միայն ըստ միտումների:

զայի ռեժիմ տրամադրելու պայմաններից մեկն էր: Դրա համար իրավաքաղաքական նշանակություն էր ստանում նախկինում հիմնված հակակոռուպցիոն մարմինների աշխատանքը:

Գծապատկեր 9

Ուկրաինայի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը (2000-2018 թթ.)*



2017 թ.-ին ԺՄԻ-ի աճը հիմնականում պայմանավորված էր ՔԳԻ-ի, ՍԳԻ-ի և ԱԳԻ-ի ցուցանիշների բարելավմամբ, ինչպես նաև ԿԳԻ-ի հարաբերական կայունությամբ (տե՛ս Գծապատկեր 8, 9): Այս առումով կարևոր նշանակություն են ունեցել առանց վիզայի շենգենյան գոտի մուտք գործելու՝ Ուկրաինայի քաղաքացիների հնարավորությունը, հակամարտող կողմերի միջև գերիների զանգվածային փոխանակումը, նվազագույն աշխատավարձի բարձրացումը, կենսաթոշակային, առողջապահության և կրթական բարեփոխումները:

2018 թ.-ին ԺՄԻ-ին նվազել է, որի պատճառը ՔԳԻ-ի, ՏԳԻ-ի և ԱԳԻ-ի ցուցանիշների անկումն էր (տե՛ս Գծապատկեր 8, 9, Աղյուսակ 1): Տեղին է նշել, որ քաղաքական, տնտեսական և առողջապահական գործոնների բա-

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:
ԺՄԻ-ի գործոնների ինդեքսները համեմատելի են միայն ըստ միտումների:

**9. Կոնսոցիալ համախմբման ներուժն Ուկրաինայում.
քաղաքացիավարական անվտանգության սահմանները**

ցասական ազդեցությունները ժողովրդավարության մակարդակի անկման վրա որոշակիորեն մեղմվել են սոցիալական գործոնների բարելավման շնորհիվ: 2018 թ. ընդհանուր առմամբ հագեցած էր քաղաքական իրադարձություններով, իսկ տարեվերջին սկսվեց նախագահական ընտրությունների քարոզարշավը: Չնայած թեկնածուների աննախադեպ քանակին, այնուամենայնիվ նախընտրական պայքարում առաջատարներն էին Պետրո Պորոշենկոն, Յուլիա Տիմոշենկոն և Վլադիմիր Զելենսկին: Նրանք էին հիմնականում արտահայտում ուկրաինական հասարակության տրամադրությունները:

2018 թ.-ին ԺՄԻ-ի վրա զգալի էր նաև էթնոքաղաքական լարվածության նոր ալիքը: Դրա հիմնական պատճառն ինքնահոչակ ԴԺՀ-ում և ԼԺՀ-ում չկարգավորված հակամարտությունն էր, ինչպես նաև 2018 թ. փետրվարի 23-ին ուժի մեջ մտած «Դոնեցկի և Լուգանսկի շրջանների ժամանակավոր գրավյալ տարածքներում Ուկրաինայի պետական ինքնիշխանությունն ապահովելու պետական քաղաքականության առանձնահատկությունների վերաբերյալ» օրենքը:

Այս լարվածությունը խորացավ՝ վերափոխվելով ՌԴ-ի և Ուկրաինայի միջև էթնոկրոնական և էթնոմշակութային լարվածության: Դրա պատճառը 2018 թ. ապրիլի 17-ին նախագահ Պ. Պորոշենկոյի պաշտոնական դիմումն էր Կոստանդնուպոլսի տիեզերական պատրիարքություն՝ խնդրելով Ուկրաինային տրամադրել ավտոկեֆալիայի տոմոս: Այդ դիմումին կոչով միացավ նաև Գերագույն ռադան: Կոստանդնուպոլսի պատրիարքարանը բավարարեց ուկրաինական իշխանությունների խնդրանքը (ավտոկեֆալիա տրամադրելով ուկրաինական եկեղեցուն): Դա հնարավորություն է տալիս Ուկրաինայում ստեղծել միասնական և անկախ ուղղափառ եկեղեցի: Այս ամենը միջազգային մեծ արձագանք ստացավ՝ հերթական անգամ սրելով ՌԴ-ի հետ քաղաքական, կրոնական և մշակութային հարաբերությունները: ՌԴ-ի և Ուկրաինայի միջև հակամարտությունն էլ ավելի խորացավ 2018 թ. նոյեմբերի 25-ին Կերչի նեղուցում տեղի ունեցած ռուսական և ուկրաինական ռազմանավերի զինված բախումից հետո: Այդ միջադեպից հետո երկրի նախագահի առաջարկով և Գերագույն ռադայի հաստատմամբ երկրում 30-օրյա ռազմական դրություն հայտարարվեց: Միևնույն ժամանակ պայմա-

նավորված Ուկրաինան սկսեց բանակցություններ վարել ԱՄՆ-ի, ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի հետ՝ ՌԴ-ի դեմ նոր պատժամիջոցներ սահմանելու համար:

2016-2018 թթ. Ուկրաինայի ԺՄԻ-ի գործոնների համեմատական վերլուծությունը հիմնավորում է, որ երկրում համահասարակական համախմբումը մեծապես պայմանավորված է քաղաքացիական ինքնության և հայրենասիրության, քաղաքացիավարական մշակույթի, անձի իրավունքների և ազատությունների, էթնոկրոնական և էթնոմշակութային հակասությունների քաղաքակիրթ կարգավորմամբ, ՔՀԿ-ների մասնակցությամբ, բազմակարծության և հանդուրժողականության արժեքներով: Ավելին, դրանք Ուկրաինայի քաղաքական համակարգի ժողովրդավարացման կառուցվածքային-գործառական նախադրյալներն են: Եթե հաշվի առնենք համահասարակական համախմբման քաղաքացիավարական նշանակությունը, ապա ակնհայտ է դառնում, որ Ուկրաինայում ժողովրդավարությունը լուրջ փորձությունների է ենթարկվում: Դրանց արդյունավետ հաղթահարման համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները՝ 1) ժողովրդավարության սահմանադրաիրավական հիմքերի ամրապնդում, 2) ուկրաինական հասարակության միասնության և էվոլյուցիոն զարգացման համար հուսալի երաշխիքների ստեղծում, որը կբացառի սոցիալական ցնցումները, 3) քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային փոխակերպումների անդառնալիության ապահովում, 4) դինամիկ անցում դեպի շուկայական տնտեսություն՝ աստիճանաբար ինտեգրվելով համաշխարհային տնտեսական համակարգին:

9.7 Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի ռեգրեսիոն վերլուծությունը

Արուսյակ Ալեքսանյան, Աշոտ Ալեքսանյան

Ռեգրեսիոն վերլուծության միջոցով դուրս են բերվել ԺՄԻ-ի չափման մոդելում ընդգրկված այն փոփոխականները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն Ուկրաինայի ժողովրդավարության մակարդակի վրա:

**9. Կոնսոցիալ համախմբման ներուժն Ուկրաինայում.
քաղաքացիավարական անվտանգության սահմանները**

Ստացված տվյալների համաձայն՝ նշանակալի կապ է հաստատվել ժՄԻ-ի և քաղաքական, ինչպես նաև տնտեսական, սոցիալական և կրթական գործոնների մի շարք փոփոխականների միջև: Մոդելում ընդգրկված առողջապահական գործոնների և ժՄԻ-ի միջև նշանակալի կապ չի հաստատվել: Մոդելում ընդգրկված քաղաքական ցուցանիշներից նշանակալի կապ է հաստատվել ժՄԻ-ի* և «Օրենքի գերակայություն», ինչպես նաև «Քաղաքական իրավունքներ և քաղաքացիական ազատություններ» փոփոխականների միջև (տե՛ս Աղյուսակ 6):

Աղյուսակ 6

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (Ք_{գր}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Օրենքի գերակայություն	0,011	0,436	0,000	24
Քաղաքական իրավունքներ և քաղաքացիական ազատություններ	-0,053	0,218	0,012	24

Ստացված տվյալների համաձայն՝ մոդելում ընդգրկված տնտեսական ցուցանիշներից նշանակալի կապ է հաստատվել ժՄԻ-ի և օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈւՆ) փոփոխականի միջև (տե՛ս Աղյուսակ 7):

Աղյուսակ 7

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (S_{գր}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՀՆԱ%)	0,015	0,303	0,003	24

Սոցիալական գործոնների ինդեքսում նշանակալի կապ է դիտարկվել ժՄԻ-ի և իրական աշխատավարձի միջև (տե՛ս Աղյուսակ 8):

* ժՄԻ-ն ժողովրդավարության մակարդակի ինդեքսն է, որից դուրս է բերվում համապատասխան անկախ փոփոխականը յուրաքանչյուր զույգային ռեգրեսիոն վերլուծության ժամանակ:

Աղյուսակ 8

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (Ա_{գր}-ի փոփոխականներ)

<i>Փոփոխական</i>	<i>Գործակից</i>	<i>Adj.R²</i>	<i>Sig.</i>	<i>N</i>
Իրական աշխատավարձ (100 ԱՄՆ դոլար)	0,033	0,634	0,000	24

Կրթական գործոնների ինդեքսի փոփոխականներից նշանակալի կապ է դիտվել ԺՄԻ-ի և պետության ծախսերը կրթության ոլորտում փոփոխականի միջև (տե՛ս Աղյուսակ 9):

Աղյուսակ 9

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (Կ_{գր}-ի փոփոխականներ)

<i>Փոփոխական</i>	<i>Գործակից</i>	<i>Adj.R²</i>	<i>Sig.</i>	<i>N</i>
Պետության ծախսերը կրթության ոլորտում (<ՆԱ%)	0,039	0,376	0,001	24

Ըստ ռեգրեսիոն վերլուծության՝ Ուկրաինայի ԺՄԻ-ի վրա նշանակալի ազդեցություն ունեն «Օրենքի գերակայություն» և «Քաղաքական իրավունքներ և քաղաքացիական ազատություններ» փոփոխականները (տե՛ս Աղյուսակ 6): «Օրենքի գերակայություն» անկախ փոփոխականի աճը 1 միավորով կհանգեցնի ԺՄԻ-ի աճին 0,011 միավորով: Միևնույն ժամանակ «Քաղաքական իրավունքներ և քաղաքացիական ազատություններ» ինդեքսի դրական փոփոխությունը 1 միավորով կբերի ԺՄԻ-ի աճին 0,053 միավորով (տե՛ս Աղյուսակ 6): Տեղին է նշել, որ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում անազատականության դրսևորումներն ունեցել են ապակառուցողական ազդեցություն: Դրանք երկրում ոչ քաղաքացիավարական միջավայր են ձևավորել ժողովրդավարական համախմբման և Դոնբասի վերահսկողության համար: Միևնույն ժամանակ, աճում են մարդու և հասարակության անվտանգության ռիսկերն ու սպառնալիքները, ներառյալ մշակութային, տեղեկատվական և սոցիալական անվտանգությունը, որոնք, որպես կանոն, պահանջում են համակարգային լուծումներ, որովհետև հաճախ անհամատեղելի են առանձնահատուկ քաղաքական շահերի առաջխաղացմանը: Միջէթնիկական անհանդուրժողականությունն այս շղթայի

**9. Կոնսոցիալ համախմբման ներուժն Ուկրաինայում.
քաղաքացիավարական անվտանգության սահմանները**

ամենախոցելի օղակն է, որը քաղաքականացնում է էթնիկ ինքնությունն ու սրում հակամարտությունը:

Այսպիսով, մոդելում ներառված տնտեսական գործոններից Ուկրաինայի ժողովրդավարության վրա նշանակալի ազդեցություն ունի ՕՈւՆ-ն, որի՝ 1%-ով ՀՆԱ-ի նկատմամբ աճը կապահովի ԺՄԻ-ի դրական փոփոխությանը 0,015 միավորով:

Սոցիալական գործոններից ժողովրդավարության մակարդակի վրա ազդում է իրական աշխատավարձը, որի 100 ԱՄՆ դոլարով բարձրացումը կբերի ԺՄԻ-ի աճին 0,03 միավորով:

Կրթության ոլորտում պետության ծախսերի փոփոխությունը 1%-ով ՀՆԱ-ի նկատմամբ կնպաստի ԺՄԻ-ի ավելացմանը 0,039 միավորով:

Այսպիսով, ռեգրեսիոն վերլուծությունը ցույց է տալիս, որ ԺՄԻ-ի վրա առավելապես ազդում են քաղաքական, տնտեսական, սոցիալական և կրթական անկախ փոփոխականները: Ուկրաինայի եվրաինտեգրման պայմաններում իրավական պետության ձևավորումը պահանջում է փոխել վերաբերմունքն օրենքի գերակայության, քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների նկատմամբ, այն է՝ ստեղծել երաշխիքներ դրանց լիարժեք իրականացման համար: Օրենքի գերակայության խնդիրն անքակտելիորեն կապված է Ուկրաինայում Սահմանադրության գերակայության և վերահսկողության, համահասարակական ժողովրդավարության, իրավական պետության, քաղաքացիական ինքնության կայացման նախադրյալների հետ: Այս համատեքստում կարևորվում է նաև Ուկրաինայի աշխարհատնտեսական դիրքի ամրապնդումը՝ խթանելով արտաքին առևտրի, ներդրումների և նորարարական քաղաքականությունը: ՕՈւՆ-ի դինամիկան ցույց է տալիս, որ անհրաժեշտ է մշակել երկրի տնտեսության հետագա ռացիոնալ մասնակցության նոր ռազմավարություն: Դրանում առաջին հերթին պետք է հաշվի առնվեն երկրի սոցիալ-տնտեսական անվտանգության նպատակները, և երկրորդ՝ պետք է համապարփակ ձևով մոտենալ ՕՈւՆ-ի խնդրին: Քանի որ ՕՈւՆ-ի ակտիվ ներգրավման շնորհիվ Ուկրաինայում առավել արդյունավետ են ընթացել բարեփոխումները, իսկ օտարերկրյա ձեռնարկատերերը՝ որպես ինստիտուցիոնալ տարբեր մշակույթի կրողներ, օգնել են ձևավորել տնտեսական գործընկերության նոր

միջավայր: Այս գործընթացների սոցիալական նշանակությունը դրսևորվում է իրական աշխատավարձի և կրթության ոլորտում պետության ծախսերի ավելացմամբ: Ուկրաինական հասարակության կայուն զարգացման համար անհրաժեշտ է, որ երկրի քաղաքացիները պատրաստ լինեն օգտագործելու ժողովրդավարական ընթացակարգերը, որպեսզի մարդկանց մեծամասնությունն իրեն զգա որպես քաղաքացի՝ պատրաստ լինելով մասնակցելու քաղաքացիավարական կառավարման և ինքնակառավարման գործընթացներին:

Գրականության ցանկ

- **Amnesty International** (2018) “The Amnesty International Report 2017/18.” London: Amnesty International Ltd.
- **Becker, Douglas** (2018) “The Rationality and Emotion of Russian Historical Memory: The Case of Crimea.” In *Crisis and Change in Post-Cold War Global Politics*, editors *Erica Resende, Dovilė Budrytė, Didem Buhari-Gulmez*, 43-68. Cham: Palgrave Macmillan.
- **Bourne, Angela K.** (2018) “Militant Democracy and the Banning of Political Parties in Democratic States: Why Some Do and Why Some Don’t.” In *Militant Democracy - Political Science, Law and Philosophy. Philosophy and Politics - Critical Explorations*, vol 7, editors *Afshin Ellian, Bastiaan Rijpkema*, 23-46. Cham: Springer.
- **Bruns, Bettina and Dorit Happ** (2016) “EU Extra-territorialization and Securitization: What Does It Mean for Ukraine and Belarus?.” In *European Neighbourhood Policy. New Geographies of Europe*, editors *Bettina Bruns, Dorit Happ, Helga Zichner*, 139-159. London: Palgrave Macmillan.
- **Budrytė, Dovilė** (2018) “Memory, War, and Mnemonical In/Security: A Comparison of Lithuania and Ukraine.” In *Crisis and Change in Post-Cold War Global Politics*, editors *Erica Resende, Dovilė Budrytė, Didem Buhari-Gulmez*, 155-177. Cham: Palgrave Macmillan.
- **Council of the EU** (2018) “European Council conclusions, 13-14 December 2018.” Accessed June 19, 2019. <https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2018/12/14/european-council-conclusions-13-14-december-2018/pdf>.
- **Council of the EU** (2019) “Ukraine: EU responds to escalation at the Kerch Strait and the Sea of Azov, and renews sanctions over actions against Ukraine’s territorial integrity.” Accessed June 19, 2019. <https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2019/03/15/ukraine-eu-responds-to-escalation-at-the-kerch-strait-and-the-azov-sea-and-renews-sanctions-over-actions-against-ukraine-s-territorial-integrity>.

**9. Կոնստիալ համախմբման ներուժն Ուկրաինայում.
քաղաքացիավարական անվտանգության սահմանները**

- **Delegation of the EU to Ukraine** (2014) “Ukraine-EU Country Roadmap for engagement with Civil Society 2014-2017.” Accessed July 11, 2019. https://eeas.europa.eu/sites/eeas/files/ukraine_civil_society_roadmap_2014.pdf.
- **Delegation of the EU to Ukraine** (2019) “Ukraine-EU Country Roadmap for engagement with Civil Society 2018-2020.” Accessed July 11, 2019. https://eeas.europa.eu/sites/eeas/files/roadmap_for_cs.pdf.
- **Dobysch, Mykola** (2019) “Euromaidan and conflict in Eastern Ukraine in social networking sites: Territorial differences of pro-Russian subscriptions in Ukraine.” *Hungarian Geographical Bulletin*, 68 (1): 51-64.
- **EEAS** (2017a) “Visa-free travel for Ukrainians comes into force.” Accessed June 19, 2019. https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage_en/27990/Visa-free%20travel%20for%20Ukrainians%20comes%20into%20force.
- **EEAS** (2017b) “The EU non-recognition policy for Crimea and Sevastopol: Fact Sheet.” Accessed June 19, 2019. https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/37464/eu-non-recognition-policy-crimea-and-sevastopol-fact-sheet_en.
- **EEAS** (2017c) “EU-Ukraine Association Agreement enters fully into force.” Accessed June 19, 2019. https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/3159-1/eu-ukraine-association-agreement-enters-fully-force_en.
- **European Commission** (2017a) “Report from the Commission to the European Parliament and the Council: First Report under the Visa Suspension Mechanism.” Accessed June 19, 2019. https://ec.europa.eu/home-affairs/sites/homeaffairs/files/what-is-new/news/20171220_first_report_under_suspension_mechanism_en.pdf.
- **European Commission** (2017b) “Report from the Commission to the European Parliament and the Council: Second report under the visa suspension mechanism.” Accessed June 19, 2019. https://ec.europa.eu/home-affairs/sites/homeaffairs/files/what-we-do/policies/european-agenda-migration/20181219_com-2018-856-report_en.pdf.
- **European Commission** (2019) “Countries and regions: Ukraine.” Accessed June 19, 2019. <http://ec.europa.eu/trade/policy/countries-and-regions/countries/ukraine>.
- **Fiedlschuster, Micha** (2016) “Democratizing EU Democracy Assistance? The EU’s Perspective on Civil Society.” In *European Neighbourhood Policy. New Geographies of Europe*, editors *Bettina Bruns, Dorit Happ, Helga Zichner*, 71-91. London: Palgrave Macmillan.
- **Gorenburg, Dmitry** (2018) “The Kerch Strait skirmish: a Law of the Sea perspective.” *Hybrid CoE. Strategic Analysis* (December): 1-7.
- **Human Development Report** (2018) “Human Development Indicators and Indices: 2018 Statistical Update.” New York: United Nations Development Programme. Accessed June 30, 2019. http://hdr.undp.org/sites/default/files/2018_human_development_statistical_update.pdf.
- **Human Rights Watch** (2018) “Ukraine. Events of 2017.” Accessed July 11, 2019. <https://www.hrw.org/world-report/2018/country-chapters/ukraine>.

- **Humanitarian Response** (2019) “Humanitarian Response Plan.” Accessed July 11, 2019. https://www.humanitarianresponse.info/sites/www.humanitarianresponse.info/files/documents/files/ukraine_2019_humanitarian_response_plan_en.pdf.
- **HURI** (2019) “What Does an Independent Orthodox Church Mean for Ukraine?.” Accessed July 11, 2019. <https://www.huri.harvard.edu/news/news-from-huri/369-orthodox-church-of-ukraine.html>.
- **IMF** (2019) “Ukraine.” Accessed July 11, 2019. <https://www.imf.org/en/Countries/-UKR>.
- **Karnaukhova, Oxana** (2018) “The Economy of Risks in the Eurasian Economic Union: From Common Memory Towards Economic Security.” In *Memory and Securitization in Contemporary Europe*, editors *Vlad Strukov, Victor Apryshchenko*, 249-274. London: Palgrave Macmillan.
- **Kostiuchenko, Tetiana and Liubov Akulenko** (2016) “The EaP Achievements in Ukraine and Georgia: Public Opinion vs. Institutional Changes.” In *European Neighbourhood Policy. New Geographies of Europe*, editors *Bettina Bruns, Dorit Happ, Helga Zichner*, 115-138. London: Palgrave Macmillan.
- **Makhortykh, Mykola** (2018) “#NoKievNazi: Social Media, Historical Memory and Securitization in the Ukraine Crisis.” In *Memory and Securitization in Contemporary Europe*, editors *Vlad Strukov, Victor Apryshchenko*, 219-247. London: Palgrave Macmillan.
- **Martsenyuk, Tamara and Iryna Troian** (2018) “Gender Role Scenarios of Women’s Participation in Euromaidan Protests in Ukraine.” In *Crisis and Change in Post-Cold War Global Politics*, editors *Erica Resende, Dovidè Budrytè, Didem Buhari-Gulmez*, 129-153. Cham: Palgrave Macmillan.
- **Nikolko, Milana** (2018) “Collective Trauma, Memories, and Victimization Narratives in Modern Strategies of Ethnic Consolidation: The Crimean Tatar Case.” In *Crisis and Change in Post-Cold War Global Politics*, editors *Erica Resende, Dovidè Budrytè, Didem Buhari-Gulmez*, 69-93. Cham: Palgrave Macmillan.
- **OCCRP** (2016) “Petro Poroshenko.” Accessed July 11, 2019. <https://www.occrp.org/en/panamapapers/persons/poroshenko>.
- **OHCHR** (2017) “Report on the human rights situation in Ukraine 16 November 2016 to 15 February 2017.” Accessed July 11, 2019. https://www.ohchr.org/Documents/Countries/UA/UAReport17th_EN.pdf.
- **OHCHR** (2018a) “Report on the human rights situation in Ukraine 16 November 2017 to 15 February 2018.” Accessed July 11, 2019. https://www.ohchr.org/Documents/Countries/UA/ReportUkraineNov2017-Feb2018_EN.pdf.
- **OHCHR** (2018b) “Report on the situation of human rights in the temporarily occupied Autonomous Republic of Crimea and the city of Sevastopol, Ukraine 13 September 2017 to 30 June 2018.” Accessed July 11, 2019. https://www.ohchr.org/Documents/Countries/UA/CrimeaThematicReport10Sept2018_EN.pdf.

**9. Կոնստիալ համախմբման ներուժն Ուկրաինայում.
քաղաքացիավարական անվտանգության սահմանները**

- **OHCHR** (2018c) “Report on the human rights situation in Ukraine 16 May to 15 August 2018.” Accessed July 11, 2019. https://www.ohchr.org/Documents/Countries/UA/ReportUkraineMay-August2018_EN.pdf.
- **OHCHR** (2018d) “Report on the human rights situation in Ukraine 16 August to 15 November 2018.” Accessed July 11, 2019. https://www.ohchr.org/Documents/Countries/UA/24thReportUkraineAugust_November2018_EN.pdf.
- **OHCHR** (2019a) “Civic space and fundamental freedoms ahead of the presidential, parliamentary and local elections in Ukraine in 2019-2020.” Accessed July 11, 2019. <https://www.ohchr.org/Documents/Countries/UA/CivicSpaceFundamentalFreedoms2019-2020.pdf>.
- **OHCHR** (2019b) “Report on the human rights situation in Ukraine 16 November 2018 to 15 February 2019.” Accessed July 11, 2019. <https://www.ohchr.org/Documents/Countries/UA/ReportUkraine16Nov2018-15Feb2019.pdf>.
- **Resende, Erica** (2018) “Crisis and Change in Global Politics: A Dialogue with Deleuze and Badiou’s Event to Understand the Crisis in Ukraine.” In *Crisis and Change in Post-Cold War Global Politics*, editors Erica Resende, Dovilė Budrytė, Didem Buhari-Gulmez, 23-41. Cham: Palgrave Macmillan.
- **Romaniuk, Piotr and Tetyana Semigina** (2018) “Ukrainian health care system and its chances for successful transition from Soviet legacies.” *Global Health* 14 (116): 1-11.
- **SIPRI** (2019) “SIPRI Military Expenditure Database.” Accessed July 11, 2019. <https://www.sipri.org/databases/milex>.
- **The USAID HIV Reform in Action Project** (2018). 2018 Capitation Rate in Ukraine. Kyiv.
- **USAID** (2017) “2016 Civil Society Organization (CSO) Sustainability Index for Central and Eastern Europe and Eurasia.” Washington, D.C.: U.S. Agency for International Development.
- **USAID** (2018) “2017 Civil Society Organization (CSO) Sustainability Index for Central and Eastern Europe and Eurasia.” Washington, D.C.: U.S. Agency for International Development.
- **Walter, Christian** (2018) “Interactions between International and National Norms: Towards an Internationalized Concept of Militant Democracy.” *Militant Democracy - Political Science, Law and Philosophy. Philosophy and Politics - Critical Explorations*, vol 7, editors Afshin Ellian, Bastiaan Rijkema, 79-95. Cham: Springer.
- **WHO** (2018) “Can people afford to pay for health care? New evidence on financial protection in Ukraine.” Accessed July 11, 2019. http://www.euro.who.int/__data/assets/pdf_file/0008/381590/ukraine-fp-eng.pdf?ua=1.
- **АиФ** (2016) “Путин считает, что Россию и Украину «разделили, а потом стравили»”. Дата доступа: 17.06.2019. http://www.aif.ru/politics/world/putin_schitayet_chno_rossiyu_i_ukrainu_razdelili_a_potom_stravili.

- **ГС “Фонд підтримки реформ в Україні”** (2018) “Reforms in Ukraine: Progress in 2017 & Priorities for 2018.” Accessed July 11, 2019. https://fsr.org.ua/sites/default/files/imce/book_print.pdf.
- **Известия** (2018) “Путин назвал Украину близкой России страной”. Дата доступа: 17.06.2019. <https://iz.ru/818999/2018-12-01/putin-nazval-ukrainu-blizkoi-rossii-stranoi>.
- **Радио Свобода** (2018) “Прошло два года со дня убийства Павла Шеремета”. Дата доступа: 17.06.2019. <https://www.svoboda.org/a/29378016.html>.
- **Розумний, Максим М.** (2016) Виклики національного самовизначення: монографія. Київ: НІСД.
- **Степико, Михайло Т.** (2011). Українська ідентичність: феномен і засади формування : монографія. Київ: НІСД.
- **Степико, Михайло Т.** (2016a) “Гуманітарна реінтеграція окупованих територій Криму та Донбасу”. Стратегічні пріоритети 1 (38): 68-74.
- **Степико, Михайло Т.** (2016b) “Гібридна війна як війна ідентичностей”. Strategic priorities 3 (40): 163-170.
- **Степико, Михайло Т.** (2017) “Сучасне русинство: етнополітичний проект чи криза української національної ідентичності”. Strategic priorities 1 (42): 39-46.
- **Степико, Михайло Т.** (2018) “Гуманітарний вимір консолідації української нації”. Scientific Journal Virtus 28: 48-54.
- **Степико, Михайло Т., Тетяна В. Черненко** (2017) “Українська ідентичність як визначальна засада протидії російській агресії.” Стратегічні пріоритети 3 (44): 178-183.
- **Факти** (2018) “Без домашніх завдань і табелів. Які зміни чекають на школи 1 вересня”. Дата доступу: 17.06.2019. <https://fakty.com.ua/ua/ukraine/20180831-vbyvstvo-zaharchenko-reaktsiya-sotsialnyh-merezh>.

10. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ՄՈԼԴՈՎԱՅՈՒՄ

ԱԼԻՍԱ ՋԱՄԱԼՅԱՆ

Նորանկախ Մոլդովայի ժողովրդավարության կայացման գործընթացում նշանակալի են հատկապես ներքաղաքական զարգացումներն ու աշխարհաքաղաքական իրադարձություններից պետության կախվածությունը: Երկրում կատարված օրենսդրական փոփոխությունները և ընտրական նոր՝ խառը համակարգն ամենևին էլ չեն նպաստել կոռուպցիոն ռիսկերի վերացմանն ու լիբերալ հասարակության ձևավորմանը, հակառակը՝ բազմիցս արժանացել են քաղհասարակության և միջազգային կառույցների քննադատություններին: Մոլդովայում տիրող օրակարգային հարցերից են մերձդնեստրյան հակամարտությունը, Ռուսաստանի և Ռումինիայի հետ լարված հարաբերությունները, եվրոպամետ և եվրասկեպտիկ ուժերի միջև տարաձայնությունները: Պետք է նշել, որ քաղաքական անորոշությունը, վարչական թույլ համակարգը, չկայացած ենթակառուցվածքները, էներգետիկ կախվածությունը, տնտեսական ճնշումներն ու թափանցիկության պակասը, մասնատված հասարակությունը և արտագաղթը ժողովրդավար պետության ձևավորման խոչընդոտներ են:

Սույն գլխում Մոլդովայի Հանրապետության (ՄՀ) ժողովրդավարության մակարդակի ինդեքսի (ԺՄԻ) միտումների ուսումնասիրությունը կատարվել է քաղաքական, տնտեսական, սոցիալական, առողջապահական և կրթական բաղադրիչների համեմատական վերլուծության հիման վրա: Այս գործոնների ինդեքսների որակական և քանակական բնութագրիչները ներկայացված են Գծապատկեր 8-ում, իսկ մշակված տվյալներն ամփոփված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Մոլդովայի Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական, Կրթական ու Առողջապահական գործոնների և ժողովրդավարության մակարդակի ինդեքսները (2000-2018թթ.)*

Տարեթիվ	Ք _{ԳԻ}	Տ _{ԳԻ}	Ս _{ԳԻ}	Կ _{ԳԻ}	Ա _{ԳԻ}	ԺՄԻ
2000	0,523	0,435	0,521	0,474	0,232	0,463
2001	0,497	0,534	0,533	0,500	0,255	0,484
2002	0,453	0,565	0,553	0,547	0,325	0,489
2003	0,478	0,563	0,561	0,550	0,309	0,499
2004	0,473	0,566	0,581	0,640	0,420	0,521
2005	0,470	0,634	0,593	0,669	0,457	0,546
2006	0,482	0,634	0,615	0,697	0,517	0,563
2007	0,496	0,745	0,663	0,751	0,552	0,613
2008	0,470	0,731	0,728	0,747	0,560	0,606
2009	0,405	0,541	0,755	0,825	0,724	0,558
2010	0,544	0,452	0,731	0,800	0,656	0,580
2011	0,569	0,520	0,755	0,767	0,604	0,602
2012	0,571	0,551	0,789	0,759	0,619	0,615
2013	0,563	0,589	0,805	0,735	0,599	0,619
2014	0,553	0,560	0,813	0,707	0,606	0,606
2015	0,530	0,484	0,758	0,680	0,606	0,567
2016	0,508	0,439	0,810	0,655	0,545	0,543
2017	0,517	0,439	0,846	0,657	0,549	0,551
2018	0,520	0,463	0,902	0,657	0,542	0,564


* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

Ք_{ԳԻ}-ի, Տ_{ԳԻ}-ի, Ս_{ԳԻ}-ի, Կ_{ԳԻ}-ի, Ա_{ԳԻ}-ի և հետևաբար դրանց հիման վրա հաշվարկված ԺՄԻ-ի որոշ տարիների արժեքները, հնարավոր է, աննշան տարբերվեն նախորդ հրապարակման համապատասխան տարիների արժեքներից՝ թարմացված և նոր տվյալների ներմուծմամբ պայմանավորված նվազագույն և առավելագույն արժեքների փոփոխման հետևանքով:

10.1 Ընտրական օրենսգրքի բարեփոխումները՝ քաղաքական օրակարգային հարց

Գծապատկեր 1

Մոլդովայի Քաղաքական գործոնների ինդեքսը
(2000-2018 թթ.)*



Մոլդովայի Հանրապետության ԺՄԻ-ի ՔԳԻ-ի կորը 2000-2018 թթ. ընթացքում տարբեր միտումներ է ունեցել: 2016 թ.-ից սկսած՝ այն պարբերաբար աճել է՝ 2018 թ. հասնելով 0,520-ի: Դիտարկվող ժամանակահատվածում Մոլդովայի ՔԳԻ ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2012 թ.-ին, իսկ ամենացածրը՝ 2009 թ.-ին (տե՛ս Գծապատկեր 1, Աղյուսակ 1):

Մոլդովան, լինելով բազմակուսակցական ժողովրդավարական պետություն, դասվելով մրցակցային ընտրական համակարգ ունեցող երկրների շարքին, որտեղ խաղաղ հավաքների, խոսքի և կրոնի իրավունքները

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

պաշտպանված են օրենքով, շարունակ պայքարում է ինչպես պետական պաշտոնյաների, այնպես էլ դատական համակարգում լուրջ կոռուպցիայի դեմ: Մոլդովայի պետական քաղաքականության կարևորագույն հարցերից են ազգային գաղափարախոսության քննարկումները, աշխարհաքաղաքական իրադարձություններից պետության կախվածությունը: Իսկ հանրային քննարկումներում և բանավեճերում նման հարցերի առկայությունը հաճախ է նպաստում պոպուլիստական ուժերի առաջացմանը (*European Forum for Democracy and Solidarity 2018, Bertelsmann Stiftung 2018, 5*): Երկրում 2014 թ. բանկային սկանդալը, որին հաջորդեցին հազարավոր մարդկանց բողոքի ցույցերը, հանգեցրին երկրի քաղաքական համակարգի նկատմամբ խորը անվստահության: 2017 թ.-ին Մոլդովայի ժողովրդավարական գործընթացներում հաճախ էին ի հայտ գալիս ճգնաժամային փուլեր, քանի որ ընտրական նոր՝ խառը համակարգն արժանացավ քաղաքացիական հասարակության, խորհրդարանական և արտախորհրդարանական ընդդիմադիր կուսակցությունների, միջազգային կազմակերպությունների, նաև Վենետիկի հանձնաժողովի քննադատություններին: Նախագահ Իգոր Դոդոնը՝ իր ռուսամետ հայացքներով և Ռուսաստանի հետ բարիդրացիական երկխոսության հարթակ ծավալելով, խառնաշփոթ առաջացրեց երկրի եվրահինտեգրման օրակարգում: Ավելին, 2017 թ. ընթացքում նա առնվազն վեց անգամ հանդիպել է Վլադիմիր Պուտինի և ռուս բարձրաստիճան պաշտոնյաների հետ և ավելի բարենպաստ պայմաններ է ստացել Մոլդովայի աշխատանքային միգրանտների համար: Իր այդ քայլով Դոդոնը հասարակությունը բաժանեց երկու ճամբարների՝ արևելամետ և արևմտամետ (*Freedom House 2018*): Ներկայումս այդ ճամբարներում առանցքային դեր են կատարում խորհրդարանում ամենաշատ ձայներն ունեցող, գործող կոալիցիայի համար ուժեղ ընդդիմություն հանդիսացող Սոցիալիստների կուսակցությունը, արտախորհրդարանական «Մեր» կուսակցությունը և Կոմունիստների կուսակցությունը, որը կառուցողական ընդդիմություն է (*Bertelsmann Stiftung 2018, 5*):

2016 թ.-ից սկսած՝ Մոլդովայում նախագահական ընտրություններն անցկացվում են համընդհանուր և ուղղակի ընտրակարգով: Եթե առաջին փուլում ոչ մի թեկնածու չի հաղթահարում 50%-ի շեմը, ապա առավելագույն

10. Ժողովրդավարության ամրապնդումը Մոլդովայում

ձայներ ստացած երկու թեկնածուները մրցում են երկրորդ փուլում (*Constitution of the Republic of Moldova 1994, Article 78*): Խորհրդարանն իրավունք ունի սահմանադրական դրույթները խախտելու, քրեական հանցանք կատարելու դեպքում նախազահին անվստահություն ներկայացնելու՝ անդամների առնվազն երկու երրորդի ձայնով: Նախազահի լիազորությունները պաշտոնապես դադարեցվում են դատավճիռն ուժի մեջ մտնելուց հետո (*Constitution of the Republic of Moldova 1994, Article 81*): Երկրի նախագահն ունի օրենսդրական նախաձեռնության իրավունք, որի շրջանակում օրենքն առարկություններով երկու շաբաթվա ընթացքում կարող է ներկայացվել խորհրդարան՝ վերանայման: Սակայն եթե խորհրդարանը պահպանում է իր նախկին որոշումը, նախագահը պարտավորվում է այն վավերացնել (*Constitution of the Republic of Moldova 1994, Article 93*): Եթե հնարավոր չի լինում կառավարություն ձևավորել, կամ օրենքների ընդունման ընթացակարգն արգելափակվում է 3 ամսով, նախագահն իրավունք ունի լուծարել խորհրդարանը՝ միայն խորհրդարանական խմբակցությունների հետ խորհրդակցելուց հետո և տարվա մեջ միայն մեկ անգամ (*Constitution of the Republic of Moldova 1994, Article 85*):

Նախազահի առաջադրած վարչապետը կառավարությունում ունի առավելագույն լիազորություններ, և նրա հրաժարականի դեպքում ամբողջ կառավարությունը լուծարվում է (*Freedom House 2018*): Սակայն խորհրդարանը իր անդամների առնվազն մեկ քառորդի առաջարկությամբ կարող է անվստահություն հայտնել կառավարությանը՝ մեծամասնության ձայներով, որն էլ պետք է քննարկվի այն խորհրդարան ներկայացվելուց 3 օրվա ընթացքում (*Constitution of the Republic of Moldova 1994, Article 106*):

2017 թ. հուլիսին խորհրդարանը փոփոխություններ կատարեց ընտրական օրենսգրքում՝ համամասնական ընտրակարգից անցնելով խառը ձևի: Այս ընտրական օրենքը³²⁵ բազմաթիվ վիճաբանությունների պատճառ դարձավ: Ընդդիմադիր կուսակցությունները պնդում էին, որ այն միտված էր

³²⁵ Տե՛ս “Парламент Республики Молдова, Кодекс о выборах” ((Введена в действие Законом Молдовы от 21 ноября 1997 года № 1381-XIII) (В редакции Закона Молдовы от 20 июля 2017 года №154)) // http://base.spinform.ru/show_doc.fwx?rgn=99259 (08.05.2019):

պահպանելու օլիգարխ Վլադիմիր Պլախոտնյուկի և նրա Դեմոկրատական կուսակցության իշխանությունը: Եվրախորհրդի Վենետիկյան հանձնաժողովը խստորեն կոչ է արել փոփոխել օրենքը, քանի որ այն չէր բխում ընտրողների շահերից (*Freedom House 2018*):

2019 թ. փետրվարի 24-ին Մոլդովայում տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ, որոնք ուղեկցվեցին խախտումներով և պետական ռեսուրսների չարաշահմամբ: ԵԱՀԿ-ի զեկույցի համաձայն՝ ընտրությունները մրցունակ էին, իսկ մարդկանց հիմնարար իրավունքները՝ ընդհանուր առմամբ հարգված (*OSCE 2019*): Սակայն քաղաքական դերակատարների կողմից ԶԼՄ-ների վերահսկումը սահմանափակում էր ընտրողներին ներկայացվող տեսակետների բազմազանությունը, իսկ նախընտրական փուլում 200-ից ավելի ֆեյսբուքյան օգտատերեր, որոնց ինքնությունը կասկածելի էր և ասոցացվում էր կառավարության աշխատակիցների հետ, արգելափակվել էին: Հարկ է նշել նաև, որ ընտրությունները տեղի ունեցան հակասական մի նոր ընտրակարգով, քանի որ ընտրարշավները չէին ուղեկցվում հանրային քննարկումներով և խորհրդակցությամբ (*BBC News 2019b*): Մոլդովայի ԿԸՀ-ի տվյալների համաձայն՝ խորհրդարանական ընտրություններին մասնակցել է 1,457,220 ընտրող (ընտրողների 49,24%-ը), որոնցից 76,583-ը քվեարկել են արտերկրում բացված ընտրատեղամասերում, իսկ 37,257-ը՝ Դնեստր գետի ձախ ափի, Բենդերի և Կաուշանի շրջանի բնակիչների համար նախատեսված տեղամասերում (*Central Electoral Commission of the RM 2019*): Արդյունքում խորհրդարան անցան չորս կուսակցություններ՝ Մոլդովայի Հանրապետության սոցիալիստների կուսակցությունը, Մոլդովայի դեմոկրատական կուսակցությունը, Գործողության և համերաշխության կուսակցության ու Արժանապատվության և ճշմարտության պլատֆորմ կուսակցության («ACUM») դաշինքը և «Հանրապետական սոցիալ-քաղաքական շարժման հավասարություն» («Տօր») կուսակցությունը: Մոլդովայի կոմունիստների կուսակցությունն անկախությունից ի վեր առաջին անգամ չհաղթահարեց նվազագույն շեմը (տե՛ս Աղյուսակ 2 և Գծապատկեր 2):

10. Ժողովրդավարության ամրապնդումը
Մոլդովայում

Աղյուսակ 2


ՄՀ 2019 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքները³²⁶

Քաղաքական կուսակցություններ, դաշինքներ	2019				
	Խորհրդարանում զբաղեցրած տեղերը			Ստացած ձայները	%
	Հ	Մ	Ընդամենը		
Մոլդովայի Հանրապետության սոցիալիստների կուսակցություն	18	17	35	441,191	31,15
Մոլդովայի դեմոկրատական կուսակցություն	13	17	30	334,539	23,62
«ACUM» դաշինք	14	12	26	380,181	26,84
«Հանրապետական սոցիալ- քաղաքական շարժման հավասարություն» («Sor») կուսակցություն	5	2	7	117,779	8,32
Մոլդովայի Հանրապետության կոմունիստների կուսակցություն	0	0	0	53,175	3,75
«Մեր կուսակցություն»	0	0	0	41,769	2,95
Լիբերալ կուսակցություն	0	0	0	17,741	1,25
Այլ կուսակցություններ	0	0	0	29,984	2,12
Անկուսակցականներ	-	3	3	-	-
Անվավեր	-	-	-	40,861	-
Ընդամենը	50	51	101	1,457,220	100
Գրանցված ընտրողներ	-	-	-	2,959,143	49,24

³²⁶ Աղբյուրը՝ ՄՀ ԿԸՀ-ի պաշտոնական կայքը՝ https://a.cec.md/ro/cu-privire-la-totaliza-rea-rezultatelor-alegerilor-parlamentului-republicii-moldo-2751_92705.html (08.05.2019):

Գծապատկեր 2

ՄՀ խորհրդարան անցած կուսակցությունների ստացած ձայների տոկոսային հարաբերակցությունը³²⁷




Հարկ է նշել, որ 2019 թ. խորհրդարանական ընտրությունները տարբերվում էին ոչ միայն խառը ընտրական համակարգով (տե՛ս Գծապատկեր 3), այլև ընտրության օրը խորհրդակցական հանրաքվեով և քարոզչությամբ, 4 քվեաթերթիկով քվեարկությամբ, ինքնությունը հաստատող ժամկետանց փաստաթղթերի քվեարկության արգելմամբ, գրանցման համար թեկնածուների անձնական ներկայության պարտադիր լինելով և կուսակցության ցուցակներում կանանց մոտ 40% ներկայացվածությամբ (*Parliament of the RM 2018*): Այս օրենսդրական փոփոխություններն արժանացել են ընդդիմության քննադատությանը. ըստ նրանց՝ դրանք հապճեպ որոշման արդյունք են եղել, ուստի անտեսվել են որոշումների կայացման թափանցիկության դրույթները:

³²⁷ Աղբյուրը՝ ՄՀ ԿԸՀ-ի պաշտոնական կայք՝ https://a.cec.md/ro/cu-privire-la-totalizarea-rezultatelor-alegerilor-parlamentului-republicii-moldo-2751_92705.html (13.05.2019):

Գծապատկեր 3

Խորհրդարանում մեծամասնական և համամասնական ընտրակարգերով
պատգամավորական տեղերի հարաբերակցությունը³²⁸



Երկրում կոռուպցիայի մակարդակը բավականին բարձր է, քանի որ հակակոռուպցիոն օրենքները բավարար չափով չեն կիրառվում, հաճախ էլ ոտնահարվում են հենց օրենսդիր մարմնի ներկայացուցիչների կողմից: 2017 թ. հրապարակված Ազգային հակակոռուպցիոն կենտրոնի զեկույցի համաձայն՝ 2015 թ. համեմատ 2016 թ. արձանագրվել է կոռուպցիոն դեպքերի 23% աճ (*National Anticorruption Center 2019*): 2016 թ.-ին է արձանագրվել նաև Կոռուպցիայի ընկալման ինդեքսի (ԿԸԻ) 2012 թ.-ից ի վեր նվազագույն ցուցանիշը (30): Արդեն 2017 և 2018 թթ. այն աճել է՝ կազմելով համապատասխանաբար 31 և 33 միավորներ³²⁹: Դեպքերը նկատելի են հատկապես իրավական, բանկային և ֆինանսական ոլորտներում: 2017 թ. ապրիլին հակակոռուպցիոն գործողությունների թիրախում էին հայտնվել տեղական ինքնակառավարման մարմիններում գործունեությամբ զբաղվող

³²⁸ Տե՛ս ՄՀ ԿԸՀ-ի պաշտոնական կայք՝ https://a.cec.md/ro/alegeri-si-referendumuri-2830.html?election_type=1&year=2019 (13.05.2019):

³²⁹ Տե՛ս «Թրանսպարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի պաշտոնական կայք՝ <https://www.transparency.org/research/cpi> (13.05.2019):

քաղաքական գործիչները: Իսկ արդեն օգոստոսին կոռուպցիայի համար մեկ տարի 4 ամսվա ազատազրկման դատապարտվեց նաև տրանսպորտի և ճանապարհային ենթակառուցվածքների նախկին նախարար Յուրի Չիրինցիուկը (*Transparency International 2018*): 2018 թ. հուլիսին խորհրդարանն ընդունեց բազմաթիվ քննադատությունների արժանացած «ֆինանսական համաներման» մասին դրույթը (*Agora.md. 2018*), որը թույլ է տալիս մարդկանց հայտարարագրել իրենց ունեցվածքը՝ առանց տեղեկացնելու դրանց ծագման մասին, պայմանով, որ նրանք ունեցվածքի 3 % հարկ վճարեն պետությանը: Նախագահի նախաձեռնությամբ ֆինանսական բարեփոխումների փաթեթի մաս կազմող այս դրույթով փաստորեն օրինականացվեց խարդախությունը. Համաշխարհային բանկը և Արժույթի միջազգային հիմնադրամը ևս մտահոգություն հայտնեցին այս փոփոխության վերաբերյալ, քանի որ այն կոռուպցիայի դեմ պայքարի հարցում կարող է խանգարել Մոլդովայի կառավարությանը (*Freedom House 2019*):

Մոլդովայի ներկայիս կառավարությունը ձգտում է ավելի սերտ կապեր հաստատել Եվրամիության հետ, որը տարիներ շարունակ աջակցություն է ցուցաբերել երկրի արդարադատության և անվտանգության ոլորտներին, խթանել է գործարար միջավայրի ստեղծումը, խոսքի ազատությունը, սոցիալական պայմանների բարելավումը, օգնել է պայքարելու միգրացիայի, թրաֆիքինգի, կազմակերպված հանցավորության, կոռուպցիայի և փողերի լվացման դեմ (*European External Action Service 2018*):

Այնուամենայնիվ, օրենքի գերակայության բացթողումները, քաղաքական և տնտեսական էլիտաների սերտաճումը և երկրի տնտեսության վրա նրանց ազդեցությունը շարունակում են երկրի կայուն զարգացման մեծ խոչընդոտ լինել:

Մարդու իրավունքներն ու ազատությունները:

Մոլդովայում մարդու իրավունքները, փոքրամասնությունների հանդեպ անհանդուրժողականությունը, արդարադատության անկախության հիմնախնդիրը և իշխանության միջամտությունը ՁԼՄ-ների գործունեությանը շարունակում են գերակա խնդիրներ լինել: Ազգային փոքրամասնությունները (գնչուներ՝ 7%, ուկրաինացիներ՝ 6,6%, գազաուզներ՝ 4,6%, ռուսներ՝ 4,1%,

10. Ժողովրդավարության ամրապնդումը Մոլդովայում

բուլղարացիներ՝ 1,9%, այլք՝ 0,8%)³³⁰ քաղաքականության մեջ ներգրավված լինելու հարցում լուրջ խոչընդոտների չեն բախվում, սակայն գազաուզներն ու թյուրքերը համեմատաբար քիչ են ներկայացված երկրի կառավարման համակարգում (*Freedom House 2018*): Բացի այդ, գազաուզները շարունակում են մնալ Մոլդովայի ամենաաղքատ բնակիչները և մեծապես կախված են կառավարությունից տրամադրվող սուբսիդիաներից: Նրանց մեծամասնությունը դեմ է եվրահինտեգրմանը, քանի որ կարծում են, որ այն բացասաբար կազդի առանց այդ էլ ցածր կենսամակարդակի և Ռուսաստանի հետ առևտրային կապերի վրա: Հետևաբար, նրանց շրջանում գերիշխում են ռուսամետ և եվրասկեպտիկ տրամադրությունները, որի պատճառով էլ 2014 թ. հանրաքվեի ընթացքում գազաուզների գրեթե 99%-ը ԵԱՏՄ-ին միանալուն դեմ քվեարկեց (*Stratan, Aleqsandr 2018, Minority Rights Group 2018*):

Համաշխարհային տնտեսական ֆորումի Համաշխարհային գենդերային բացակի («Global Gender Gap») ինդեքսի (ՀԳԲԻ) 2018 թ. գենդերային հավասարության չափումների համաձայն՝ 149 պետությունների շարքում Մոլդովան 35-րդ տեղում է՝ նախորդ տարվա համեմատ զիջելով իր դիրքը 5 կետով: ՀԳԲԻ-ի ենթաինդեքսների «տնտեսական մասնակցության և հնարավորությունների» ոլորտում Մոլդովան 18-րդ տեղում է, «կրթության մակարդակով»՝ 69-րդ տեղում, «առողջության և գոյատևման» ոլորտում՝ 1-ին տեղում, իսկ «քաղաքական մասնակցության» ոլորտում՝ 72-րդ տեղում (*World Economic Forum 2018*): 2016 թ. ներկայացված 71-րդ օրենքը ուղղված է ապահովելու քաղաքական մասնակցության գենդերային հավասարություն, ըստ որի՝ կուսակցական թեկնածուների և կառավարության առաջադրած թեկնածուների 40%-ը պետք է կին լինի (*Freedom House 2018*):

Մոլդովայի Սահմանադրության համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի ունի մտքի, խղճի և կարծիքի ազատություն (*Constitution of the Republic of Moldova 1994, Article 32*): Սակայն երկրում լրատվության միջավայրը խիստ բևեռացված է: Լրատվամիջոցներն աշխատում են քաղաքական կամ գոր-

³³⁰ Աղբյուրը՝ Կենտրոնական հետախուզության գործակալություն՝ <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/md.html> (07.03.2019)

ծարար շահերից բխող օրակարգով, պատկանում են քաղաքական կուսակցություններում ներգրավված անձանց, իսկ շուկայի գրեթե 70%-ը վերահսկում է Վլադիմիր Պլահոտնյուկը, որը ներկայումս հինգ ազգային հեռուստաընկերություններից չորսի սեփականատերն է: Բացի այդ, լրագրողները հաճախ են ենթարկվում պետական մարմինների ճնշումներին՝ հնարավորություն չունենալով մասնակցել քաղաքական քննարկումներին (*Bertelsmann Stiftung 2018, 10*): Այսպես, «Ազատության տան»* (*Freedom House*) 2017 թ. զեկույցի համաձայն (ընդգրկում է 2016 թ. իրադարձությունները)՝ Մոլդովան 199 պետությունների և տարածաշրջանների ցանկում հայտնվել է 56-րդ տեղում՝ օրենսդրական, քաղաքական և տնտեսական միջավայրերում ստանալով համապատասխանաբար 17, 21, 18 միավորներ: Նախորդ տարվա համեմատ՝ մամուլի ազատության Մոլդովային տրվող գնահատականը չի փոխվել՝ փորձագետների կողմից գնահատվելով «մասնակի ազատ» (*Freedom House 2017*)**:

Համաձայն «Ազատության տան» զեկույցի՝ քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ոլորտները «մասնակի ազատ» են***: Մոլդովային տրված գնահատականները քաղաքական իրավունքների (3 միավոր) և քաղաքացիական ազատությունների (3 միավոր) ոլորտների համար 2010 թ.-ից մինչև 2017 թ. անփոփոխ են եղել, իսկ 2018 թ.-ին³³¹ քաղաքացիական ազատությունների (4 միավոր) ցուցանիշը մեկ միավորով նվազել է:

* «Ազատության տան» մամուլի ազատության և քաղաքական իրավունքների ու քաղաքացիական ազատությունների ինդեքսներն ընդգրկված են ԺՄԻ-ի մոդելում՝ որպես Ք_{ԳԻ}-ի փոփոխականներ:

** «Ազատության տան» Մամուլի ազատության ինդեքսը գնահատվում է 100-ից մինչև 0 միավորային սանդղակով, որտեղ 0-ից 30 գնահատական ստացած երկրները «ազատ» են, 31-ից 60-ը՝ «մասնակի ազատ», իսկ 61-ից 100-ը՝ «անազատ»:

*** «Ազատության տան» Քաղաքական իրավունքների և Քաղաքացիական ազատությունների ինդեքսը գնահատվում է 1-ից մինչև 7 միավորային սանդղակով, որտեղ 1-ից 2,5 գնահատական ստացած երկրներն «ազատ» են, 3-ից 5-ը՝ «մասնակի ազատ», 5,5-ից 7-ը՝ «անազատ»:

³³¹ Տե՛ս «Ազատության տան» պաշտոնական կայք՝ <https://freedomhouse.org/report/-freedom-world/2019/moldova> (11.05.2019):

10. Ժողովրդավարության ամրապնդումը Մոլդովայում

Թեև ՄՀ Սահմանադրությունն ապահովում է դավանանքի ազատությունը (*Constitution of the Republic of Moldova 1994, Article 16*), և երկրում չկա կրոնական որևէ իշխանություն, այդուհանդերձ հատուկ կարգավիճակ է տրամադրված Մոլդովայի ուղղափառ եկեղեցուն: 2017 թ. կրոնական փոքրամասնությունների՝ մասնավորապես Եհովայի վկաների, պենտեկոստալների, հուդայականների ու բապտիստների նկատմամբ բռնության դեպքերը փաստում են Մոլդովայում կրոնական անհանդուրժողականության մասին (*Freedom House 2018*):

Անդրադառնալով խաղաղ հավաքների ազատությանը, որը երաշխավորվում է Սահմանադրությամբ (*Հոդված 40*)՝ հարկ է նշել, որ ցուցարարների նկատմամբ ոստիկանության բռնի գործողությունները շարունակական են (*Amnesty International 2018*): Մոլդովայում ԼԳԲՏ համայնքը նույնպես օգտվում է խաղաղ հավաքներ կազմակերպելու իրավունքից, սակայն նրանց երթերն ու ցույցերը մշտապես արժանանում են ուղղափառ եկեղեցու և պահպանողական քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների ագրեսիվ վերաբերմունքին: Այդպիսի դեպքերում իշխանությունները սովորաբար ի վիճակի չեն լինում ապահովել մասնակիցների անվտանգությունը (*Bertelsmann Stiftung 2018, 10*): Օրինակ՝ 2017 թ. մայիսի 21-ի ԼԳԲՏ համայնքի երթը ոստիկանությունը դադարեցրեց, քանի որ, նրանց կարծիքով, այն կարող էր զանգվածային անկարգությունների պատճառ դառնալ: «Ավանդական ընտանեկան փառատոնի» ցույցերին ակտիվորեն մասնակցող նախագահ Դոդոնը խիստ քննադատության ենթարկեց ԼԳԲՏ համայնքի երթը՝ նշելով, որ նրանք ոտնահարում են երկրի ավանդական արժեքները (*Amnesty International 2017/2018*):

Մոլդովայում ակտիվ գործունեություն են ծավալում նաև հասարակական կազմակերպությունները: 2017 թ. հուլիսին Արդարադատության նախարարությունը, առանց աշխատանքային խմբի կարծիքը հաշվի առնելու, ներկայացրեց երեք հոդված, որոնց համաձայն՝ քաղաքական գործունեություն ծավալող ՀԿ-ները պարտավորվում են ֆինանսական հաշվետվություններ հրապարակել իրենց եկամտի աղբյուրների վերաբերյալ: Փաստաթղթերի տվյալների անհամապատասխանության դեպքում կառավարությունը դադարեցնում է իր ֆինանսական աջակցությունը, իսկ ՀԿ-ները խոշոր

տուգանքներ են վճարում, մինչև անգամ լուծարվում են (*Amnesty International 2017/2018*):

ՄՀ-ում իշխանությունների տարանջատումն արդյունավետ չի իրականացվում, դատական համակարգը ենթարկվում է քաղաքական ճնշումների, որն էլ խոչընդոտում է նրա անկախությունը: Դատավորներն աշխատանքից ազատվում են իշխանություններին անհաճո որոշումներ կայացնելու համար. այդպես եղավ, օրինակ՝ 2017 թ.-ին, երբ դատավոր Դոմնիկա Մանոլեն սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ հանրաքվե անցկացնելու որոշում ընդունելու պատճառով զրկվեց պաշտոնից: Նա նաև ենթարկվեց քրեական պատասխանատվության, թեև հանրային լուսմներ տեղի չունեցան: Եվրամիության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները բազմիցս քննադատել են Մոլդովայի՝ քաղաքական դրդապատճառներով մեղադրանքներ առաջադրելու պրակտիկան: 2017 թ. դատավարությունների ժամանակ լրատվամիջոցներին և հանրությանը իրավունք չտրվեց ծանոթանալու դատական փաստաթղթերին, իսկ փաստաբանների պնդմամբ՝ այդ ընթացքում մի շարք ամբաստանյալներ անարդար դատաքննության զոհ դարձան: Համապատասխան մարմինները չեն երաշխավորում հավասար իրավունքներ բոլորին, քանի որ ազգային փոքրամասնությունները բնակարանի, կրթության և զբաղվածության ոլորտներում հաճախ են ենթարկվում խտրական վերաբերմունքի, իսկ մարդկանց թրաֆիքինգը շարունակում է օրհասական խնդիր մնալ:

Մարդու իրավունքների հիմնախնդիրներից է նաև երեխաների հարկադիր և կամընտրական աշխատանքը. կառավարության ուսումնասիրությունների համաձայն՝ 2017 թ. 5-14 տարեկան երեխաների 24%-ն ակտիվորեն զբաղվել է որոշակի աշխատանքով (*Freedom House 2018*): Երկրում զգալիորեն տարածված են նաև ընտանեկան և սեռական բռնության դեպքերը (*Cheianu-Andrei, Perevoznic, Zaporojan-Pîrgari, and Grosu 2015*): «Մոլդովայում ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության գինը» զեկույցի համաձայն՝ 15 տարեկանից բարձր կանանց 63%-ը ենթարկվել է ֆիզիկական, հոգեբանական կամ սեռական բռնության (*Women's Law Center, UN Women Moldova 2016*): Իրավապահ մարմիններում և դատական համակարգերում մեծ չափերի հասած կոռուպցիան խոչընդոտում է թրաֆի-

10. Ժողովրդավարության ամրապնդումը Մոլդովայում

քինգի հարցերով գործերի արդար քննությունն ու պաշտոնատար անձանց քրեական հետապնդումը: Նշենք նաև, որ 2017 թ. թրաֆիքինգի հետաքննության դեպքերը զգալիորեն աճել են՝ 151-ից (2016 թ.) հասնելով 185-ի: Վերջին հինգ տարիների ընթացքում կատարված հետազոտությունների համաձայն՝ Մոլդովան այն երկրներից է, որտեղ սեռական թրաֆիքինգը և հարկադիր աշխատանքը՝ ներառյալ հարկադիր մուրացկանությունը, մեծ թիվ են կազմում: Զոհերը թրաֆիքինգի են ենթարկվում ինչպես Մոլդովայում, այնպես էլ Ռուսաստանում, Ուկրաինայում, Եվրոպական, մերձավորարևելյան, աֆրիկյան և ասիական մի շարք երկրներում: Նրանք հիմնականում 13-15 տարեկան գյուղաբնակ աղջիկներ են կամ էլ մանկատներում մեծացած դեռահասներ, որոնց կրթական մակարդակը շատ ցածր է (*U.S. Department of State 2018a*):

Խնդրահարույց է նաև ձերբակալվածների հանդեպ խոշտանգումները, որոնք հազվադեպ են քննության ենթարկվում և պատժվում: Այս առումով հատկանշական է 2017 թ. բանտարկված Անդրեյ Բրագուտայի դեպքը, որը մահացել է բանտախցի դատապարտյալների կողմից դաժան ծեծի ենթարկվելու պատճառով (*Freedom House 2019*): Քրեակատարողական հիմնարկներում տիրող նման անօրինությունները, սանիտարահիգիենիկ վատ պայմանները և բանտախցերի գերբեռնվածությունը հաճախ են արժանանում միջազգային կառույցների քննադատությանը:

Ինչ վերաբերում է Մոլդովայի և Մերձդնեստրի միջև տարիներ շարունակվող հակամարտությանը³³², որին Ռուսաստանը բացահայտորեն միջամտում է, ապա պետք է նշել, որ տարածքային ամբողջականության պահպանման համար անհրաժեշտ է Եվրամիության աջակցությունը, Քիշնևի ավելի ակտիվ ներգրավվածությունը և Մերձդնեստրի բնակիչների կարծիքը

³³² Մոդելում հակամարտության ազդեցությունը ժողովրդավարության վրա գնահատվել է հետևյալ կերպ՝ ա) հակամարտության բացակայություն (2 միավոր), բ) պասիվ հակամարտություն (1 միավոր). պետությունը հակամարտության մեջ է այլ պետության/պետությունների հետ, որը, սակայն, չի ուղեկցվում ռազմական ակտիվ գործողություններով, գ) ակտիվ հակամարտություն. պետությունը հակամարտության մեջ է այլ պետության/պետությունների հետ, որն ուղեկցվում է ռազմական ակտիվ գործողություններով (0): Տվյալների դասակարգման ժամանակ որպես առավելագույն արժեք (max.) ընդունվում է 2-ը, իսկ նվազագույն (min.)՝ 0-ն:


հաշվի առնելը (*Grant 2017, Carnegie Europe 2018*): 2018 թ. Նյու Յորքում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նստաշրջանի ժամանակ Մոլդովայի արտաքին գործերի նախարարը ՄԱԿ-ին կոչ է արել համապատասխան կառույցներ ներգրավել՝ անդամ պետությունների ինքնիշխանությունը պաշտպանելու նպատակով: Նա նշել է, որ ՄԱԿ-ը պետք է ջանքեր չխնայի հակամարտությունը կարգավորելու գործընթաց սկսելու համար՝ օգտագործելով իր միջազգային հեղինակությունը և տարածաշրջանից հեռացնելով Մերձդնեստրում տեղակայված ռուսական զորքերը: Նա պնդել է, որ նրանց ապօրինի ներկայությունն ամենևին էլ չի նպաստում չեզոքության ապահովմանը և խոչընդոտում է երկրի միավորումը (*EurAsia Daily 2018*): Քաղաքական կամքի, փոխզիջման ունակության և կողմերի միջև վստահության բացակայությունը պարտադրում է խնդրի շուրջ անարդյունավետ բանակցությունների ծավալում և արտաքին դերակատարների փոխհամաձայնեցված միջամտություն (*Osipov, Vasilevich 2019*):

ՄՀ ԺՄԻ-ի Քաղաքական գործոնների ինդեքսի փոփոխականները վերլուծելիս կարող ենք նշել, որ «Քաղաքական կայունության» ցուցանիշը 2011-2014 թթ. արդյունքների համեմատ անկում է ապրել: Սակայն 2017 թ. ցուցանիշը 2016 թ. համեմատ աճել է 3,81 միավորով: «Օրենքի գերակայության» ցուցանիշը 2017 թ. աճել է 4,33 միավորով՝ հասնելով 37,5-ի: Տվյալների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ 2012 թ.-ից սկսած՝ ՔԳԻ-ի նվազման (տե՛ս Աղյուսակ 1) հիմնական պատճառներն են եղել քաղաքական կայունության անկումը, փոքրամասնությունների հանդեպ խտրական վերաբերմունքը, կոռումպացված քաղաքական համակարգը, ինչպես նաև ռուսամետ և եվրոպամետ ուժերի միջև տարածայնությունները:

10.2 Տնտեսական զարգացման թիրախները

Գծապատկեր 4

Մոլդովայի Տնտեսական գործոնների ինդեքսը
(2000-2018 թթ.)*



2018 թ. ընթացքում ՄՀ տնտեսական հիմնական ցուցանիշները բարելավվել են (0,463)¹ նպաստելով $S_{գր}$ -ի աճին նախորդ տարվա համեմատ (0,439): 2000-2018 թթ. ժամանակահատվածում $S_{գր}$ -ն ամենաբարձր արժեք (0,745) գրանցել է 2007 թ.-ին (տե՛ս Աղյուսակ 1):

Թեև Մոլդովայի տնտեսությունը հարուստ է՝ մեղմ և բարենպաստ բնակլիմայական պայմանների շնորհիվ, սակայն 2019 թ. դրությամբ այն շարունակում է մնալ Եվրոպայի ամենաաղքատ երկրներից մեկը: Մոլդովայում բավականաչափ զարգացած է գյուղատնտեսության ոլորտը, որն էլ նպաստում է տնտեսական աճին, իսկ արտերկրում աշխատողների տարեկան դրամական փոխանցումներն ապահովում են ՀՆԱ-ի գրեթե 15%-ը: Մոլդովան բնական էներգետիկ պաշարների սակավության պատճառով

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

մշտապես կախվածության մեջ է Ռուսաստանից, հատկապես բնական գազ մատակարարող «Գազպրոմ» ընկերությունից: Սակայն 2018 թ. ՄՀ-ն Ռուսիայի «Տրանսգազ» ընկերությանն առաջարկել է Քիշնևը Ունգենին կապող խողովակաշար կառուցել՝ գազը երկրի կենտրոնական հատվածներ հասցնելու համար: Բացի այդ, Մոլդովան ձգտում է մինչև 2022 թ. կապեր հաստատել նաև եվրոպական էլեկտրական ցանցի հետ, որն ինչ-որ չափով կթուլացնի Ռուսաստանի ազդեցությունը երկրի տնտեսության վրա (*CIA World Factbook 2019*):

Կառավարության՝ ԵՄ-ին ինտեգրվելու նպատակադրումը շուկայական հարաբերություններում որոշակի առաջընթաց է ապահովել: 2017 թ. Մոլդովան սպասվածից լավ տնտեսական արդյունքներ է գրանցել, որը մեծապես պայմանավորված էր սպառման ավելացմամբ, գյուղատնտեսական արտադրանքի արտահանման եկամուտների աճով (2017 թ. Մոլդովան իր արտադրանքի 65%-ն արտահանել է ԵՄ) և հարկերի հավաքման գործընթացի բարելավմամբ (*CIA World Factbook 2019*):

Մոլդովայի տնտեսական ակտիվությունն աճել է՝ 2018 թ. վերջին եռամսյակի 3,8%-ից 2019 թ. առաջին եռամսյակում հասնելով 4,4%-ի (*Focus Economics 2019*): 2019 թ. երկրի Տնտեսական ազատության ինդեքսն աճել է 0,7 կետով՝ 2018 թ. համեմատ հասնելով 59,1-ի, որն էլ պայմանավորված է պետական ծախսերով և աշխատաշուկայի հավասար պայմաններով: Այս ցուցանիշով Մոլդովան եվրոպական տարածաշրջանի 44 երկրների շարքում զբաղեցնում է 40-րդ տեղը, իսկ տնտեսական ազատության ընդհանուր միավորը ցածր է տարածաշրջանային և համաշխարհային միջին ցուցանիշներից: Տեսականորեն թվում է, թե Մոլդովայի շահաբեր գյուղատնտեսությունը պետք է, որ նպաստեր տնտեսության զարգացմանը, սակայն երկրի քաղաքական անկայունությունը հաճախ է խոչընդոտում երկրում կառուցողական բարեփոխումների իրականացումը: Կառավարությունը բազմիցս է փորձել լուծել ֆինանսական հատվածում եղած խնդիրները, սակայն կոռուպցիան, Մերձդնեստրի հետ չլուծված տարածքային խնդիրը, վառելիքի բարձր գները և Մոլդովայից գյուղատնտեսական արտադրանքի ներմուծման արգելքը Ռուսաստանի կողմից տնտեսությունը դարձրել են խոցելի և դրամական փոխանցումներից ավելի կախյալ: Բյու-

**10. Ժողովրդավարության ամրապնդումը
Մոլդովայում**

րոկրատիան և թափանցիկության պակասը դժվարացնում են մասնավոր ձեռնարկատիրության ձևավորումն ու զարգացումը: Աշխատանքային օրենսդրությունը աշխատաժամերի խիստ սահմանափակումներ է դնում, որն էլ բազմաթիվ աշխատողների դժգոհության առիթ է տալիս (*Heritage Foundation 2019*): Մոլդովացիների լայնածավալ արտագաղթը, ծնելիության մակարդակի նվազումը հանգեցրել են ծերացող բնակչության թվաքանակի աճին, որն էլ բացասաբար է անդրադառնում կենսաթոշակային համակարգի վրա և սահմանափակում է երկրի երկարաժամկետ մրցունակությունը (*World Bank 2019a*):

Աղյուսակ 3

Մոլդովայի տնտեսության տվյալները ³³³

	2016	2017
Բնակչություն (մլն)	3,6	3,5
ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	1,925	2,349
Տնտեսական աճ (ՀՆԱ, տարեկան տատանումները %-ով)	4,3	4,5
Հարկաբյուջետային հաշվեկշիռ (ՀՆԱ %)	-2,1	-
Պետական պարտք (ՀՆԱ %)	42,1	-
Գնաճ (տարեկան տատանումները %-ով)	6,5	6,6
Առևտրի հաշվեկշիռ (ԱՄՆ դոլար, մլրդ)	-2,0	-2,4
Արտահանում (ԱՄՆ դոլար, մլրդ)	2,0	2,4
Ներմուծում (ԱՄՆ դոլար, մլրդ)	4,0	4,8
Արտահանում (տարեկան տատանումները %-ով)	4,0	18,6
Ներմուծում (տարեկան տատանումները %-ով)	0,8	20,2
Արտաքին պարտք (ՀՆԱ %)	90,6	83,0

Համաաշխարհային բանկի 2019 թ. տվյալների համաձայն՝ մոլդովացի աշխատողից 1 տարի է պահանջվում արտադրելու այն, ինչը գերմանացին կաներ 18 օրում: 2018 թ. իրական ՀՆԱ-ն աճել է 4% -ով՝ 2016 թ. 4,5%-ի և

³³³ Տվյալների աղբյուրը՝ Focus Economics (2019) “Moldova Economic Outlook” // <https://www.focus-economics.com/countries/moldova> (02.07.2019):

2017 թ. 4,7%-ի համեմատ: Չնայած խոշոր ներդրումներին՝ 2018 թ. տնտեսական աճը 4%-ով դանդաղել է: Սակայն հարկային կրճատումները, ոչ ֆինանսական ակտիվների 45%-ով աճը, սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված հատկացումների 15%-ով ավելացումը, աշխատավարձերի 23%-ով բարձրացումը և դրամական փոխանցումները նպաստել են եկամտի աճին, իսկ օտարերկրյա ներդրումների աճն ապահովել է գնաճի դանդաղումը, շահութաբեր տոկոսադրույքները և պետական ներդրումները: Ներքին պահանջարկով պայմանավորված՝ ներմուծման քանակն ավելացել է 8,9%-ով, իսկ արտահանումը նվազել է 3,4%-ով (*World Bank 2019a*):

Մոլդովայի S_{qH} -ին որոշակի տատանումներով մինչև 2013 թ. աճել է, որից հետո պարբերաբար անկում է գրանցվել մինչև 2017 թ.: 2018 թ. դարձյալ նկատվում է S_{qH} -ի աճ, որը, սակայն, չի գերազանցել 2013 թ. մակարդակը: 2018 թ. աճին են նպաստել ՀՆԱ-ի, արտաքին առևտրաշրջանառության, օտարերկրյա ուղղակի ներդրումների աճը, ինչպես նաև գնաճի անկումը³³⁴ (տե՛ս Գծապատկեր 4 և Աղյուսակ 1):


Այսպիսով, Մոլդովայի տնտեսությունը շարունակում է խոցելի լինել արտաքին ֆինանսական հոսքերի և արտադրողականության մակարդակի նվազման, կառուցվածքային թերությունների, կոռուպցիայի, քաղաքական անորոշության, թույլ վարչական համակարգի, էներգետիկ կախվածության, ռուսական քաղաքական և տնտեսական ճնշման, գյուղատնտեսական արտադրանքի արտահանման սահմանափակումների և Մերձդնեստրի տարածաշրջանում չլուծված հակամարտության պատճառով:

³³⁴ Տե՛ս ՀԲ պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/FP.CPI.TOTL.ZG?locations=MD> (02.07.2019):

10.3 Սոցիալական ռիսկերի քողարկման փորձ

Գծապատկեր 5

Մոլդովայի Սոցիալական գործոնների ինդեքսը
(2000-2018 թթ.)*



Մոլդովացի երիտասարդների 20,6%-ը զբաղվում է որոշակի տեսակի աշխատանքով: Նրանց ավելի քան մեկ երրորդը զբաղվում է գյուղատնտեսությամբ, մեծածախ և մանրածախ առևտրով, ինչպես նաև հյուրանոցային և ռեստորանային ծառայություններ մատուցելով: Նրանք աշխատաշուկայում հաճախ են խտրականությունների ենթարկվում և շահագործվում՝ պայմանավորված նաև գործազուրկ դառնալու ռիսկով (*Organisation for Economic Co-operation and Development 2019*): Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) տվյալների համաձայն՝ գործազրկության մակարդակը վերջին 4 տարիների ընթացքում շատ քիչ է տատանումների են-

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

թարկվել³³⁵: Այսպիսով, քաղաքաբնակները, երիտասարդները և տղամարդիկ ավելի ակտիվ են, քան տարեցները, կանայք և գյուղացիները (տե՛ս Աղյուսակ 4): Մոլդովայում երիտասարդների գործազրկության մակարդակը 2000 թ.-ից մինչև 2018 թ. միջինում եղել է 15,71%, իսկ ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2000 թ.-ին՝ 37%: Սակայն երիտասարդների գործազրկության մակարդակը 2018 թ. չորրորդ եռամսյակում նվազել է՝ հասնելով 5,5%-ի, որը, 2000 թ.-ից սկսած, ամենացածր ցուցանիշն է եղել³³⁶: Ինչ վերաբերում է 2018 թ. չորրորդ եռամսյակի ընդհանուր գործազրկության մակարդակին, ապա նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ այն 3,3%-ից նվազել է՝ հասնելով 2,9%-ի: 2000-2018 թթ. ընկած ժամանակահատվածում գործազրկության միջին մակարդակը կազմել է 6,03%, ընդ որում՝ ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2006 թ. առաջին եռամսյակում՝ 13%, իսկ ամենացածրը՝ 2018 թ. երրորդ եռամսյակում՝ 2,20%³³⁷:

Հարկ է նշել, որ պատշաճ պայմաններով աշխատանք չգտնելը միգրացիայի ազդեցիկ գործոն է հատկապես գյուղական բնակավայրերի երիտասարդների համար, որտեղ գործազրկությունն ավելի բարձր է: Միգրանտների 60%-ը այդ համայնքներից են, որտեղ չկան մասնագիտական ուսումնական հաստատություններ և աշխատանքի հեռանկարներ: Արտագաղթի հիմնական ուղղություններն են Ռուսաստանը, Իտալիան, Ուկրաինան, Թուրքիան և Իսրայելը: Կին միգրանտները, որոնք արտագաղթում են՝ նոր հմտություններ և մասնագիտական որակավորում ստանալու նպատակով, ավելի շատ են, քան տղամարդիկ, և նրանք խոցելի են հատկապես սոցիալական և բժշկական ապահովագրություն չունենալու պատճառով (*Organisation for Economic Co-operation and Development 2019*):

³³⁵ Տվյալների աղբյուրը՝ Մոլդովայի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք՝ http://statistica.gov.md/public/files/publicatii_electronice/Moldova_in_cifre/2019/Breviar_en_2019.pdf (12.07.2019):

³³⁶ Տվյալների աղբյուրը՝ Trading Economics (2019e) “Moldova Youth Unemployment Rate” // <https://tradingeconomics.com/moldova/youth-unemployment-rate> (11.07.2019):

³³⁷ Տվյալների աղբյուրը՝ Trading Economics (2019d) “Moldova Unemployment Rate”// <https://tradingeconomics.com/moldova/unemployment-rate> (11.07.2019):

ՄՀ գործազրկության մակարդակը՝ ըստ տարիքային խմբի,
սեռի և տարածքի³³⁸

	2016	2017	2018
Ընդհանուր (%)	4,2	4,1	3,0
մինչև 25 տարեկան	11,2	11,8	7,4
25 տարեկան և ավելի	3,6	3,5	2,6
Տղամարդ	5,5	4,8	3,5
մինչև 25 տարեկան	10,9	10,9	7,5
25 տարեկան և ավելի	5,0	4,3	3,1
Կին	2,9	3,3	2,5
մինչև 25 տարեկան	11,7	13,0	7,2
25 տարեկան և ավելի	2,3	2,7	2,2
Քաղաքային	6,0	5,7	4,5
մինչև 25 տարեկան	14,1	14,3	10,7
25 տարեկան և ավելի	5,4	5,1	4,0
Գյուղային	2,6	2,7	1,8
մինչև 25 տարեկան	8,9	9,9	4,8
25 տարեկան և ավելի	2,1	2,7	1,6

Նախագահ Դոդոնի խոսքով՝ ներկայումս լրջագույն խնդիրներն են ոչ թե կոռուպցիան, արտաքին քաղաքականությունը կամ աշխարհաքաղաքական պայքարը, այլ մասնատված հասարակությունը և բազմաթիվ երիտասարդների արտագաղթը, որն էլ Մոլդովան դարձնում է թոշակառուների երկիր (*Radio Free Europe / Radio Liberty 2018*): 2004-2018 թթ. ընթացքում կանանց միջին թոշակային տարիքը եղել է 57,1 տարեկան, իսկ տղամարդկանցը՝ 62,1 տարեկան: Ամենացածր կենսաթոշակային տարիքը գրանցվել է 2005 թ.-ին՝ 57 տարեկանը կանանց և 62-ը՝ տղամարդկանց համար, իսկ

³³⁸ Տվյալների աղբյուրը՝ Մոլդովայի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք՝ http://statistica.gov.md/public/files/publicatii_electronice/Moldova_in_cifre/2019/Breviar_en_2019.pdf (12.07.2019):

ամենաբարձրը՝ 2018 թ.-ին, որը կազմել է համապատասխանաբար 58 և 63 տարեկան³³⁹:

Եվրոպայի ամենաաղքատ երկրների շարքում գտնվող Մոլդովայի աշխատող բնակչության ամսական միջին եկամուտը 2019 թ. առաջին եռամսյակում կազմել է 6923 լեյ (388 դոլար)՝ 2018 թ. չորրորդ եռամսյակին գրանցած 6987,5 լեյի (391,6 դոլարի) համեմատությամբ: Մոլդովայի բնակչության ամսական միջին աշխատավարձը 2000-2019 թթ. ընթացքում կազմել է 2594,12 լեյ (145,4 դոլար). 2018 թ. չորրորդ եռամսյակում գրանցվել է նշված ժամանակահատվածի ամենաբարձր ցուցանիշը՝ 6987,50 լեյ (391,6 դոլար), իսկ 2000 թ. առաջին եռամսյակում՝ ամենացածր նիշը՝ 329,60 լեյ (18,5 դոլար)³⁴⁰:

Եվ թեև երկրում աղքատության կրճատումը հիմնականում պայմանավորված է արտերկրում աշխատողների դրամական փոխանցումների աճով, որոնք կարևոր են հիմնականում գյուղական բնակչության համար, այնուամենայնիվ այն բավարար չէ ծերացող բնակչության կենսամակարդակը բարելավելու համար (*Bertelsmann Stiftung 2018*):

Այսպիսով, ՄՀ ԺՄԻ-ի ՍԳԻ-ի կորը 2015 թ.-ից հետո անընդմեջ աճել է: 2018 թ. ՍԳԻ-ի ցուցանիշի աճին մեծապես նպաստել է աշխատավարձերի ավելացումը: Ուսումնասիրվող ժամանակահատվածում ՍԳԻ-ի ամենացածր ցուցանիշը գրանցվել է 2000 թ.-ին, իսկ ամենաբարձրը՝ 2018 թ.-ին (տե՛ս Գծապատկեր 5 և Աղյուսակ 1):


³³⁹ Տվյալների աղբյուրը՝ Trading Economics (2019b) “Moldova Retirement Age-Men” // <https://tradingeconomics.com/moldova/retirement-age-men> և Trading Economics (2019) “Moldova Retirement Age-Womenb” // <https://tradingeconomics.com/moldova/retirement-age-women> (11.07.2019):

³⁴⁰ Տվյալների աղբյուրը՝ Trading Economics (2019a) “Moldova Average Monthly Wages” // <https://tradingeconomics.com/moldova/wages> (11.07.2019):

10.4 Կրթական բարեփոխումների դաշտը

Գծապատկեր 6

Մոլդովայի Կրթական գործոնների ինդեքսը
(2000-2018 թթ.)*



Գծապատկեր 6-ում երևում է, որ ՄՀ ԺՄԻ-ի Կրթական գործոնների ինդեքսի կորը 2016-2018 թթ. ընթացքում կայուն է, ինչն էլ պայմանավորված է եղել կրթության ոլորտում պետության ծախսերի և ՄՀ կրթության բաղադրիչի ցուցանիշների կայունացմամբ: 2000-2018 թթ.-ին ԿԳԻ-ի ամենացածր ցուցանիշը գրանցվել է 2000 թ.-ին, իսկ ամենաբարձրը՝ 2009 թ.-ին՝ պայմանավորված կրթությանն ուղղված պետական հատկացումների բարձր ցուցանիշով³⁴¹ (տե՛ս Գծապատկեր 5 և Աղյուսակ 1):

Վերջին տասնամյակների ընթացքում Մոլդովայի կրթական համակարգում լրջագույն խնդիր է տարրական և միջնակարգ կրթության ոլորտում

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

³⁴¹ Տե՛ս ՀԲ պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/SE.XPD.TOTL.GD.ZS?locations=MD> (02.07.2019):

աշակերտների թվի աստիճանական նվազումը: Բացի այդ, կրթության ոլորտը խոցելի է արդյունավետության և կրթական որակի պակասի, այդ թվում՝ անհամապատասխան ուսումնական ծրագրերի, ոչ ժամանակակից ուսումնական նյութերի և վերապատրաստում չանցած ուսուցիչների պատճառով: Ազգային փոքրամասնությունները և մարգինալացված խմբերը՝ գյուղական բնակավայրերի երիտասարդները, աղքատ ընտանիքների երեխաները և գնչուները, տարրական կրթություն ստանալիս լուրջ խոչընդոտների են բախվում: Աշակերտների միայն 60%-ն է շարունակում կրթությունը հանրակրթական դպրոցներում, իսկ գրեթե 30%-ը նախընտրում է մասնագիտական ուսուցում ստանալ մասնավոր կամ պետական այլ հաստատություններում (*Organisation for Economic Co-operation and Development 2019*): Իսնդիր են նաև կրթության ոլորտի կառավարումը, մոնիտորինգը և արդյունքների գնահատումը: Ուստի «Կրթություն 2020» ոլորտային նախագիծն ընդգրկում է յոթ ռազմավարական նպատակներ, ըստ որոնց՝ պետք է բարձրացնել կրթական ծրագրերի հասանելիության մակարդակը, ամբողջովին անցում կատարել ներառական կրթության, իսկ 12-ամյա կրթությունը դարձնել պարտադիր, մատչելի դարձնել մասնագիտական-տեխնիկական կրթությունը և նպաստել վերապատրաստման ծրագրերին մեծահասակների ակտիվ մասնակցությանը: Պետք է նաև ապահովել ուսումնական գործընթացի արդիականությունը և կարիերայի զարգացման հնարավորությունները՝ կրթության բովանդակային հիմնահարցերի կարգավորման, տարրական, միջնակարգ և մասնագիտական / տեխնիկական կրթությունը կարևորելու, համալսարանական ուսումնական ծրագրերը արդիականացնելու և գիտական հետազոտությունները խթանելու միջոցով: Անհրաժեշտ է նաև զբաղվել ռեսուրսների կառավարման օպտիմալացմամբ՝ կրթության ֆինանսավորման արդյունավետությունը բարձրացնելու, ուսումնական հաստատությունների ենթակառուցվածքները բարելավելու միջոցով: Ներկայումս մեծ նշանակություն է տրվում որոշումների կայացման գործընթացում ուսանողների մասնակցությունը ընդլայնելուն, ծնողների բավարար կրթական մակարդակն ապահովելուն և համագործակցությունը զարգացնելուն, որն էլ կնպաստի որակի ապահովման ինստիտուցիոնալ շրջանակի ստեղծմանը (*Global Partnership for Education 2019*):

10. Ժողովրդավարության ամրապնդումը Մոլդովայում

Մոլդովայի կառավարությունը կրթական համակարգում բարեփոխումների մի շարք նախագծեր և ծրագրեր է իրականացրել: 2019 թ. մայիսի 16-ին Քիշնևում տեղի ունեցավ «Մոլդովայի Հանրապետությունում կրթության միջոցով ժողովրդավարական արժեքների խթանումը» համաժողովը, որն ազդարարում էր Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ, Եվրախորհրդի ջանքերով իրականացվող «Կրթություն հանուն Մոլդովայի Հանրապետության ժողովրդավարության» ծրագրի մեկնարկը: Ծրագրի նպատակն է ձևավորել Եվրախորհրդի չափանիշներին համապատասխան քաղաքացիական կրթություն, որին աջակցում է յուրաքանչյուր շահագրգիռ կողմ՝ Կրթության, մշակույթի և հետազոտությունների նախարարությունը, մարզերի կրթության վարչությունները, կրթության ոլորտի մասնագետները, ուսուցիչներին վերապատրաստող կազմակերպությունները, մեթոդաբանները, դպրոցների տնօրենները, ուսուցիչները և աշակերտները (*Council of Europe Portal 2019*):

Հարկ է նաև նշել, որ 10 տարի շարունակ մարդու իրավունքներին վերաբերող արտադասարանական առարկան ներկայումս դարձել է կամընտրական: Մշակվել է մարդու իրավունքների կրթության առաջին ուսումնական ծրագիրը, վերանայվել և ներդրվել են կայուն զարգացման նոր մոդուլներ, որոնք հաստատել են Կրթության նախարարությունը և Ուսումնական ծրագրերի ազգային խորհուրդը: 2015 թ.-ից ի վեր Մոլդովայում կառուցվում են մարդու իրավունքների ոլորտին առնչվող հաստատություններ, և միայն 2018 թ. վերապատրաստում է անցել 150 ուսուցիչ (*Amnesty International 2019*):


Ինչ վերաբերում է կրթությանը հատկացվող միջոցներին, ապա Համաշխարհային բանկի տվյալների համաձայն՝ 2009 թ.-ից սկսած ՀՆԱ-ի և ընդհանուր պետական բյուջեի տեսակարար կշռի համեմատ կրթության պետական ծախսերը տարեցտարի նվազել են, այնուամենայնիվ, բյուջեից հատկացումների առումով կրթության ոլորտը շարունակում է առաջնային լինել, իսկ ՏՀԶԿ և ԵՄ անդամ պետությունների համեմատ՝ Մոլդովայի պետական բյուջեից կրթությանը հատկացվող տեսակարար կշիռն ամենամեծն է (*World Bank Group 2018, 19*):

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Մոլդովայի կառավարությունը գիտակցում է կրթության դերը գիտելիքահենք հասարակություն ստեղծելու հարցում և բազմաթիվ ծրագրեր է մշակում քաղաքացիների կյանքի որակը բարելավելու և հնարավորությունների շրջանակը մեծացնելու համար: Ուստի, կենտրոնացված, ավանդական կրթական համակարգը քայլ առ քայլ դառնում է ուսանողակենտրոն և եվրոպական արժեհամակարգին համապատասխան:

10.5 Մարդկային կապիտալի բացակայությունը ՄՀ առողջապահական համակարգում

Գծապատկեր 7

Մոլդովայի Առողջապահական գործոնների ինդեքսը
(2000-2018 թթ.)*



Գծապատկեր 7-ից երևում է, որ 2000-2018 թթ. ԺՄԻ-ի Առողջապահական գործոնների ինդեքսի կորն աճի միտումներ է ունեցել՝ ամենաբարձր ցուցանիշը գրանցելով 2009 թ.: Սակայն, վերջին տարիներին այն նվազել է առողջապահական ծախսերի կրճատման պատճառով:

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

10. Ժողովրդավարության ամրապնդումը Մոլդովայում

Մոլդովան ունի առողջապահական համընդհանուր համակարգ, բայց այդ ոլորտը եվրոպական չափանիշների համեմատ շատ թույլ է զարգացած, իսկ մի շարք գյուղական բնակավայրերում այն հասանելի չէ: Այնուամենայնիվ, ներկայումս ոլորտում մի շարք բարեփոխումներ են իրականացվում տարբեր հասարակական կազմակերպությունների միջոցով: ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ Ամերիկյան միջազգային առողջապահական դաշինքը նոր ծրագրեր է իրականացրել Մոլդովայում տուբերկուլյոզի, ՄԻԱՎ-ի, հեպատիտ B- ի և C- ի տարածումը վերահսկելու և կանխարգելելու համար: Մոլդովացիները հիմնականում տառապում են սրտանոթային հիվանդություններից, քաղցկեղից, հղիության ընթացքում առաջացած բարդություններից և շնչառական հիվանդություններից, իսկ քաղաքացիների շրջանում ալկոհոլի, ծխախոտի ու թմրամիջոցների սպառումն այնքան բարձր է, որ մահվան հիմնական պատճառներից է համարվում (*AP Companies 2019*): 2017 թ. 10000 բնակչի հաշվով 36,7 բժիշկ և 69,2 բուժաշխատող է գրանցվել: Նախորդ տարիների համեմատ հիվանդանոցներում մահճակալների թիվը կրճատվել է՝ հասնելով յուրաքանչյուր 10,000 բնակչի համար 52 մահճակալի³⁴²:

2018 թ.-ին ծնելիության ցուցանիշը 2017 թ. համեմատ նվազել է 4,3%-ով. գրանցվել է ընդամենը 32,6 հազար ծնունդ: Մոլդովայում կյանքի սպասվող տևողությունը տարեցտարի աճում է: 2016 թ.-ին այն եղել է 71,6 տարի, իսկ արդեն 2017 թ.՝ 71,7 տարի³⁴³: Զգալի տարբերություն կա սեռերի միջև. Կանանց համար կյանքի սպասվող տևողությունը 77 տարի է, իսկ տղամարդկանց համար՝ 69,3 տարի³⁴⁴:

Զափահասների մահվան ցուցանիշով 225 երկրների շարքում Մոլդովան 17-րդ տեղում է. 2017 թ. 1000 շնչի հաշվով արձանագրվել է 12,6 մահ-

³⁴² Տվյալների աղբյուրը՝ Մոլդովայի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք՝ http://statistica.gov.md/public/files/publicatii_electronic/Moldova_in_cifre/2018/Breviar_en_2018.pdf (12.07.2019):

³⁴³ Տվյալների աղբյուրը՝ Համաշխարհային բանկի պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/SP.DYN.LE00.IN?locations=MD> (22.07.2019):


³⁴⁴ Տվյալների աղբյուրը՝ Մոլդովայի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք՝ http://statistica.gov.md/public/files/publicatii_electronic/Moldova_in_cifre/2019/Breviar_en_2019.pdf (12.07.2019):

վան դեպք³⁴⁵: 2018 թ. ընթացքում այս ցուցանիշը 1,2%-ով աճ է գրանցել: Մոլդովայում մանկամահացության դեպքերը 2015 թ.-ից սկսած աստիճանաբար նվազել են՝ 375-ից հասնելով 326-ի³⁴⁶:

10.6 Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի զարգացման միտումները

Գծապատկեր 8

Մոլդովայի ժողովրդավարության վրա ազդող Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական, Կրթական և Առողջապահական գործոնների ինդեքսները (2000-2018 թթ.)*



³⁴⁵ Տվյալների աղբյուրը՝ Index Mundi (2017) // <https://www.indexmundi.com/g/r.aspx?-c=md&v=26> (11.07.2019):

³⁴⁶ Տվյալների աղբյուրը՝ Մոլդովայի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքը՝ http://statistica.gov.md/public/files/publicatii_electronice/Moldova_in_cifre/2019/Breviar_en_2019.pdf (11.07.2019):

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

ԺՄԻ-ի գործոնների ինդեքսները համեմատելի են միայն ըստ միտումների:


**10. Ժողովրդավարության ամրապնդումը
Մոլդովայում**

Գծապատկեր 9-ում ներկայացված են Մոլդովայի ժողովրդավարության մակարդակի ինդեքսի (ԺՄԻ) 2000-2018 թթ. միտումները, ըստ որի՝ 2013 թ. վերելքից հետո ԺՄԻ-ն մինչև 2016 թ. հետզհետե անկում է ապրել:

Գծապատկեր 8-ից երևում է, որ ԺՄԻ-ի 2017-20018 թթ. կորի բարձրացումը հիմնականում պայմանավորված էր Ք_{ԳԻ}-ի, Տ_{ԳԻ}-ի և Ա_{ԳԻ}-ի ցուցանիշների աճով, ինչպես նաև Կ_{ԳԻ}-ի կայունությամբ:

Գծապատկեր 9

Մոլդովայի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը (2000-2018թթ.)*



Այսպիսով, 2016 թ.-ից Ք_{ԳԻ}-ն անընդմեջ աճել է, որն էլ պայմանավորված էր քաղաքական կայունության և օրենքի գերակայության ցուցանիշների աճով: 2018 թ. տնտեսական զործոններից ԺՄԻ-ի վրա բացասական ազդեցություն են ունեցել բանկային ոլորտում առկա ճգնաժամը, բյուջեի

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

դեֆիցիտի աճը, ինչպես նաև արտաքին օժանդակության բացակայությունը: Իսկ 2017-2018 թթ. ԱԳԻ-ն, մասնավորապես, աճել է գործազրկության մակարդակի անկման և իրական աշխատավարձի աճի շնորհիվ: ԺՄԻ-ի Կրթական գործոնների ինդեքսը³⁴⁷ 2017 թ.-ին նախորդ տարվա համեմատ նվազել է, իսկ 2016-2018 թթ.-ին գրանցված ԱԳԻ-ի ցուցանիշները աննշան տատանումներով հիմնականում եղել են միևնույն մակարդակում:

10.7 Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի ռեգրեսիոն վերլուծությունը

Արուսյակ Ալեքսանյան, Ալիսա Ջամայան

Ռեգրեսիոն վերլուծության միջոցով դուրս են բերվել ժողովրդավարության մակարդակի չափման մոդելում ընդգրկված Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական, Կրթական և Առողջապահական գործոնների ինդեքսների այն փոփոխականները, որոնք համեմատաբար նշանակալի ազդեցություն են ունեցել Մոլդովայի ժողովրդավարության մակարդակի վրա:

Ռեգրեսիոն վերլուծությամբ ստացված տվյալների համաձայն՝ նշանակալի կապ է հաստատվել ԺՄԻ-ի* և քաղաքական, տնտեսական, սոցիալական, ինչպես նաև առողջապահական մի շարք փոփոխականների միջև:

Այսպես, քաղաքական ցուցանիշներից կապ է հաստատվել ԺՄԻ-ի և «Քաղաքական կայունություն / բռնության բացակայություն», «Քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ինդեքս», ինչպես նաև «Մամուլի ազատություն» փոփոխականների միջև (տե՛ս Աղյուսակ 5):

³⁴⁷ Որոշ տվյալների բացակայությամբ պայմանավորված՝ 2018 թ.-ի ԿԳԻ-ն ենթակա է ճշգրտմանը:

* ԺՄԻ-ն ժողովրդավարության մակարդակի ինդեքսն է, որից դուրս է բերվում համապատասխան անկախ փոփոխականը յուրաքանչյուր զույգային ռեգրեսիոն վերլուծության ժամանակ:

Աղյուսակ 5

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (Ք_{գր.}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Քաղաքական կայունություն / բռնության բացակայություն	0,003	0,224	0,011	24
Քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ինդեքս	-0,078	0,252	0,007	24
Մամուլի ազատություն	-0,008	0,535	0,000	24

Մոդելում ընդգրկված տնտեսական գործոններից նշանակալի կապ է հաստատվել ժՄԻ-ի և «տնտեսության վարկավորման ծավալները», «օտարերկրյա ուղղակի ներդրումներ», ինչպես նաև «բյուջեի հաշվեկշիռ» փոփոխականների միջև (տե՛ս Աղյուսակ 6):

Աղյուսակ 6

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (S_{գր.}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Տնտեսության վարկավորման ծավալները (<ՆԱ%)	0,011	0,244	0,008	24
Օտարերկրյա ուղղակի ներդրումներ (<ՆԱ%)	0,017	0,145	0,038	24
Բյուջեի հաշվեկշիռ (<ՆԱ%)	0,021	0,155	0,032	24

Սոցիալական գործոնների ինդեքսում նշանակալի կապ է հաստատվել ժՄԻ-ի և «իրական աշխատավարձ», «գործազրկության մակարդակ» և «Զինի ինդեքս» փոփոխականների միջև (տե՛ս Աղյուսակ 7):

Աղյուսակ 7

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (U_{գր.}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Իրական աշխատավարձ (100 ԱՄՆ դոլար)	0,026	0,792	0,000	24
Գործազրկության մակարդակ (%)	-0,071	0,598	0,000	24
Զինի ինդեքս	-3,311	0,829	0,000	24

Իսկ առողջապահական ցուցանիշներից նշանակալի կապ է հաստատվել ԺՄԻ-ի և «կյանքի սպասվող տևողություն», ինչպես նաև «առողջապահության ընթացիկ ծախսերը» փոփոխականների միջև (տե՛ս Աղյուսակ 8):

Աղյուսակ 8

ԺՄԻ-ի ռեգրեսիոն վերլուծություն (Ա_{գր}-ի փոփոխականներ)

Փոփոխական	Գործակից	Adj.R ²	Sig.	N
Կյանքի սպասվող տևողություն	0,049	0,143	0,039	24
Առողջապահության ընթացիկ ծախսեր (ՀՆԱ %)	0,026	0,145	0,037	24

Ռեգրեսիոն վերլուծության համաձայն՝ քաղաքական գործոններից Մոլդովայի ԺՄԻ-ի վրա նշանակալի ազդեցություն ունեն Քաղաքական կայունությունը/բռնության բացակայությունը, Քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ինդեքսը և Մամուլի ազատությունը: Սա նշանակում է, որ Քաղաքական կայունության / բռնության բացակայության մեկ միավորով դրական փոփոխությունը կբերի ԺՄԻ-ի աճին 0,003 միավորով: Միևնույն ժամանակ Քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ինդեքսի և Մամուլի ազատության 1 միավորով բարելավումը կնպաստի ԺՄԻ-ի աճին՝ համապատասխանաբար 0,078 և 0,008 միավորներով (տե՛ս Աղյուսակ 5):

Ըստ ստացված տվյալների՝ Մոլդովայի ԺՄԻ-ի վրա են ազդում նաև տնտեսության վարկավորման ծավալները, օտարերկրյա ուղղակի ներդրումները և բյուջեի հաշվեկշիռը: Տնտեսության վարկավորման և օտարերկրյա ուղղակի ներդրումների աճը ՀՆԱ-ի 1%-ով կնպաստի ԺՄԻ-ի դրական փոփոխությանը՝ համապատասխանաբար 0,011 և 0,017 միավորներով: Միևնույն ժամանակ բյուջեի հաշվեկշիռի նվազումը 1%-ով կբերի ԺՄԻ-ի աճին 0,021 միավորով (տե՛ս Աղյուսակ 6):

Մոլդովայի ԺՄԻ-ի սոցիալական գործոններից ժողովրդավարության վրա նշանակալիորեն ազդում են գործազրկության մակարդակը, իրական աշխատավարձը և Զինի ինդեքսը: Այսպես, գործազրկության մակարդակի 1%-ով, իսկ Զինի ինդեքսի 0,1 միավորով նվազումը կհանգեցնի ԺՄԻ-ի աճին՝ համապատասխանաբար 0,071 և 0,3 միավորներով: Իսկ աշխատա-

10. Ժողովրդավարության ամրապնդումը Մոլդովայում

վարձի բարձրացումը 100 ԱՄՆ դոլարով կնպաստի ԺՄԻ-ի աճին 0,026 միավորով (տե՛ս Աղյուսակ 7):

Առողջապահական գործոններից կյանքի սպասվող տևողության դրական փոփոխությունը 1 տարով և առողջապահության ընթացիկ ծախսերի աճը 1%-ով ՀՆԱ-ի նկատմամբ կնպաստեն ԺՄԻ-ի աճին՝ համապատասխանաբար 0,049 և 0,026 միավորներով (տե՛ս Աղյուսակ 8):

Այսպիսով, ՄՀ ժողովրդավարության մակարդակի ռեգրեսիոն վերլուծության միջոցով կարող ենք որոշել, թե քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական և առողջապահական գործոններից որոնք են առավելապես ազդում ժողովրդավարացման գործընթացների վրա, ուստի երկրի ժողովրդավարության բարելավման համար արդյունավետ կլինի ուշադրություն դարձնել հասարակության քաղաքական համակարգի ժողովրդավարացման վերոհիշյալ ոլորտների բարեփոխումների վրա:

Գրականության ցանկ

- **Agora.md** (2018) “Undeclared Goods will be Legalized. Parliament Adopted the Tax Amnesty Law.” Accessed May 9, 2019. <https://agora.md/stiri/48021/bunurilenedeclarate-vor-putea-fi-legalizate--parlamentul-a-adoptat-legea-amnistiei-fiscale>.
- **Alegeri.md** (2019) “Parliamentary elections in 2019 in the Republic of Moldova.” Accessed May 10, 2019. http://alegeri.md/w/Pagina_principal%C4%83.
- **Amnesty International** (2017/2018) “Moldova 2017/2018.” Accessed June 10, 2019. <https://www.amnesty.org/en/countries/europe-and-central-asia/moldova/report-moldova/>.
- **Amnesty International** (2019) “Moldova: Implementing Human Rights Education into national curricula.” Accessed July 12, 2019. <https://www.amnesty.org/en/latest-education/2019/06/moldova-national-human-rights-curricula/>.
- **AP Companies** (2019) “Health care system in Moldova.” Accessed July 12, 2019. <https://www.ap-companies.com/services/ekspatam/moldova/#>.
- **BBC News** (2019a) “Moldova election marred by allegations of vote-buying.” Accessed March 25, 2019. <https://www.bbc.com/news/world-europe-47360523>.
- **BBC News** (2019b) “Moldovan election prompts Facebook to remove accounts.” Accessed March 28, 2019. <https://www.bbc.com/news/world-europe-47237920>.
- **Bertelsmann Stiftung** (2018) “Moldova Country Report.” Accessed July 11, 2019. <https://www.bti-project.org/en/reports/country-reports/detail/itc/MDA/>.

- **Carnegie Europe** (2019) “Moldova Election: A Democratic Illusion?” Accessed March 11, 2019. <https://carnegieeurope.eu/strategieurope/78416>.
- **Central Electoral Commission of the RM** (2019) “Parliamentary Elections from 24.02.2019.” Accessed May 13, 2019. <https://a.cec.md/ro/24-februarie-2019-3660.html>.
- **Central Intelligence Agency** (2019) “Moldova.” Accessed July 3, 2019. <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/md.html>.
- **Cheianu-Andrei, Diana, Iurie Perevoznic, Angelina Zaporozjan-Pîrgari, and Eleonora Grosu** (2015) “Men and gender equality in the Republic of Moldova.” Accessed March 14, 2019. <https://promundoglobal.org/wp-content/uploads/2016/03-/IMAGES-Moldova-English-web.pdf>.
- **CIA World Factbook** (2019) “Moldova Economy.” Accessed July 10, 2019. https://theodora.com/wfbcurrent/moldova/moldova_economy.html.
- **Constitution of the Republic of Moldova** (1994). http://www.constcourt.md/public/files/file/Actele%20Curtii/acte_en/MDA_Constitution_EN.pdf.
- **Council of Europe Portal** (2019) “Launch of Project, Education for Democracy in the Republic of Moldova.” Accessed July 12, 2019. https://www.coe.int/en/web/education/newsroom/-/asset_publisher/ESahKwOXIcQ2/content/launch-of-project-education-for-democracy-in-the-republic-of-moldova-
- **EurAsia Daily** (2018) “De-Sovereignization: Testing a Conflict-Resolution Model at Moldova’s Expense in Transnistria (Part One).” Accessed May 9, 2019. <https://jamestown.org/program/de-sovereignization-testing-a-conflict-resolution-model-at-moldovas-expense-in-transnistria-part-one/>.
- **European Centre for Minority Issues** (2011) “Minority Issues Mainstreaming in the South Caucasus.” Accessed April 18, 2019. https://www.ecmi.de/uploads/tx_lfpubdb/Minority_Issues_South_Caucasus_fulltext.pdf.
- **European External Action Service** (2018) “EU-Moldova relations, Factsheet.” Accessed July 3, 2019. https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage_en/4011/EU-Moldova%20relations,%20Factsheet.
- **European Forum for Democracy and Solidarity** (2018) “Moldova.” Accessed July 2, 2019. <https://www.europeanforum.net/countries/moldova>.
- **Focus Economics** (2019) “Moldova Economic Outlook.” Accessed July 7, 2019. <https://www.focus-economics.com/countries/moldova>.
- **Freedom House** (2017) “Freedom in the World 2017.” Accessed January 31, 2019. <https://freedomhouse.org/report/freedom-world/2017/moldova>.
- **Freedom House** (2018) “Freedom in the World 2018.” Accessed February 1, 2019. <https://freedomhouse.org/report/freedom-world/2018/moldova>.
- **Freedom House** (2019) “Freedom in the World 2019.” Accessed July 1, 2019. <https://freedomhouse.org/report/freedom-world/2019/moldova>.
- **Geoba** (2018) “Selected Rankings-2018.” Accessed June 1, 2019. <http://www.geoba.se/country.php?cc=US&year=2018>.

10. Ժողովրդավարության ամրապնդումը Մոլդովայում

- **Global Partnership for Education** (2019) “Education in Moldova”. Accessed July 12, 2019. <https://www.globalpartnership.org/country/moldova>.
- **Grant, Thomas** (2017) “Frozen Conflicts and International Law.” Accessed April 15, 2019. <https://www.lawschool.cornell.edu/research/ILJ/upload/Grant-final.pdf>.
- **Heritage Foundation** (2019) “Moldova.” Accessed June 25, 2019. <https://www.heritage.org/index/country/moldova>.
- **Index Mundi** (2017) “Death Rate-Country Comparison.” Accessed July 11, 2019. <https://www.indexmundi.com/g/r.aspx?c=md&v=26>.
- **Minority Rights Group** (2018) “Moldova. Minorities and Indigenous Peoples.” Accessed June 28, 2019. <https://minorityrights.org/minorities/gagauz/>.
- **National Anticorruption Center** (2019) “Raport de activitate al CNA pe anul 2016”. Accessed July 9, 2019. [file:///C:/Users/jamaly_ali/Downloads/public_publications_1479143_md_raportul_de_ac%20\(2\).pdf](file:///C:/Users/jamaly_ali/Downloads/public_publications_1479143_md_raportul_de_ac%20(2).pdf).
- **National Bureau of Statistics of the Republic of Moldova** (2019) “Moldova in Figures.” Accessed July 12, 2019. http://statistica.gov.md/public/files/publicatii_electronice/Moldova_in_cifre/2019/Breviar_en_2019.pdf.
- **Organisation for Economic Co-operation and Development** (2019) “Key Issues Affecting Youth in Moldova.” Accessed July 11, 2019. <https://www.oecd.org/dev/inclusivesocietiesanddevelopment/youth-issues-in-moldova.htm>.
- **OSCE** (2019) “Fundamental rights generally respected in competitive Moldovan elections, though campaign tainted by violations, international observers say.” Accessed July 2, 2019. <https://www.osce.org/odihr/elections/moldova/412361>.
- **Osipov, Alexander, and Hanna Vasilevich** (2019) “Transnistrian Nation-Building: A Case of Effective Diversity Policies?” Accessed August 1, 2019. https://www.researchgate.net/publication/334747508_Transnistrian_Nation-Building_A_Case_of_Effective_Diversity_Policies.
- **Parliament of the RM** (2018) “Law № 238 of 08-11-2018.” Accessed May 11, 2019. <http://www.legis.md/cautare/rezultate/109778>.
- **Radio Free Europe / Radio Liberty** (2018) “Dodon: Moldova's Biggest Problem Is Population Loss, Not Corruption.” Accessed July 11, 2019. <https://www.rferl.org/a/dodon-moldova-s-biggest-problem-is-population-loss-not-corruption/29448972.html>.
- **Stratan, Maksim, and Katerina Aleqsandr** (2018) “Gagauzia - Moldova's Pro-Russian Autonomous Region.” Accessed June 11, 2019. <https://jam-news.net/gagauzia-moldovas-pro-russian-autonomous-region/>.
- **Trading Economics** (2019a) “Moldova Average Monthly Wages.” Accessed July 11, <https://tradingeconomics.com/moldova/wages>.
- **Trading Economics** (2019b) “Moldova Retirement Age-Men.” Accessed July 11, 2019. <https://tradingeconomics.com/moldova/retirement-age-men>.
- **Trading Economics** (2019c) “Moldova Retirement Age-Women.” Accessed July 11, <https://tradingeconomics.com/moldova/retirement-age-women>.

- **Trading Economics** (2019d) “Moldova Unemployment Rate.” Accessed July 11, 2019. <https://tradingeconomics.com/moldova/unemployment-rate>.
- **Trading Economics** (2019e) “Moldova Youth Unemployment Rate.” Accessed July 11, 2019. <https://tradingeconomics.com/moldova/youth-unemployment-rate>.
- **Transparency International** (2018) “Moldova.” Accessed June 11, 2019. <https://www.transparency.org/country/MDA>.
- **U.S. Department of State** (2018a) “Moldova - 2018 Trafficking in Persons Report.” Accessed July 3, 2019. <https://www.state.gov/j/tip/rls/tiprpt/countries/2018/28271-0.htm>.
- **U.S. Department of State** (2018b) “U.S. Relations With Moldova.” Accessed July 3, 2019. <https://www.state.gov/r/pa/ei/bgn/5357.htm>.
- **Women's Law Center, UN Women Moldova** (2016) “Report on Costing of Domestic Violence and Violence against Women in Moldova.” Accessed June 3, 2019. <http://cdf.md/files/resources/114/Raport%20UN%20-%20EN.pdf>.
- **World Bank** (2019a) “The World Bank in Moldova.” Accessed July 10, 2019. <https://www.worldbank.org/en/country/moldova/overview>.
- **World Bank** (2019b) “Worldwide Governance Indicators.” Accessed June 6, 2019. <http://info.worldbank.org/governance/wgi/index.aspx#reports>.
- **World Bank Group** (2018) “Moldova: Education Sector Public Expenditure Review.” Accessed July 12, 2019. <http://documents.worldbank.org/curated/en/897-081523894080457/pdf/125331-WP-P161676-MD-Mini-PER-final-for-imagebank4-2018.pdf>.
- **World Economic Forum** (2018) “The Global Gender Gap Report.” Accessed July 12, 2019. http://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2018.pdf.
- **Парламент Республики Молдова** (2017) “Кодекс о выборах”. Введена в действие Законом Молдовы от 21 ноября 1997 года № 1381-XIII. В редакции Закона Молдовы от 20 июля 2017 года №154. Дата доступа: 08.05.2019. http://base.spinform.ru/show_doc.fwx?rgn=99259.
- **Խաչատրյան, Արմինե** (2017) «Մոլդովայի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը» // Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի միտումները մարդու իրավունքների և ժողովրդավարության չափումներում. Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ուկրաինա, Մոլդովա / Խմբ.՝ Ար. Ալեքսանյան, Եր., ԵՊՀ հրատ.:

**11. ՀԵՏԵՆՈՐՀՐԴԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ
ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.
ՄԻՋԵՐԿՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

*(Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս,
Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա, Մոլդովա)*

ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ


Սույն գլխում ներկայացվում է Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ուկրաինայի և Մոլդովայի միջերկրային համեմատական վերլուծությունը, որում դրանք դասակարգվել են ըստ ժողովրդավարության մակարդակի ինդեքսի (ԺՄԻ) 2017 և 2018 թթ. կտրվածքով, և վեր են հանվել զարգացման ու հետընթացի միտումները:

Հետխորհրդային երկրների ժողովրդավարացման ուսումնասիրությունները (*Hale 2015, Way 2015*) միտված են յուրաքանչյուր պետության անցման առանձնահատկությունների բացահայտմանը: Անցման շրջանի տարբեր փուլերում հետխորհրդային նորանկախ երկրներն ունեցել են ինչպես առաջընթացի, այնպես էլ նահանջի «դրվագներ» (*Valiyev 2012, Dresden and Howard 2015*): Այս համատեքստում կարևոր հարցադրումներից է այն, թե ինչ դասեր կարելի է քաղել այդ շրջափուլում գտնվող երկրների փորձից (*Knott 2018, Antonov, Galushko 2018*):

Կարևոր է արձանագրել նաև, որ եթե ժողովրդավարությունը որպես արժեհամակարգ և գաղափարախոսություն ունիվերսալ է, ապա ժողովրդավարացումը որպես գործընթաց՝ ունիկալ, և յուրաքանչյուր պետություն այս առումով ունի իր ուրույն «ճանապարհային քարտեզը»:

11.1 Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատական վերլուծությունը

Գծապատկեր 1
Ժողովրդավարության մակարդակի ինդեքսը (2017, 2018 թթ.)*



Գծապատկեր 1-ում ներկայացված են միջերկրային վերլուծության արդյունքները 2017 և 2018 թթ. համար, որոնց համաձայն՝ դիտարկվող բոլոր երկրները «մասնակի ժողովրդավարական» են: ԺՄԻ-ի 2018 թ. վարկանիշային աղյուսակը 50,6 միավորով գլխավորում է Վրաստանը: Վերջինիս 0,4 միավորով գիջում է Մոլդովան՝ զբաղեցնելով երկրորդ հորիզոնականը: Պետք է նշել, որ ԺՄԻ վերջին տարիների ուսումնասիրություններում այս

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

Ժողովրդավարության մակարդակի միջերկրային ինդեքսն արտահայտվում է 0-ից 100 միջակայքում ընկած համապատասխան միավորներով, որտեղ պետությունները որակվում են հետևյալ կերպ. 0-ից 32-ը՝ ժողովրդավարական, 33-ից 66-ը՝ մասնակի ժողովրդավարական, 67-ից 100-ը՝ ժողովրդավարական:

11. Հետխորհրդային ժողովրդավարական փոխակերպումները և արդիականացման առանձնահատկությունները. միջերկրային վերլուծություն

Երկու երկրները միշտ եղել են առաջատար դիրքերում՝ պարբերաբար հայտնվելով վարկանիշային աղյուսակի առաջին և երկրորդ տեղերում: Երրորդ հորիզոնականում է Հայաստանը՝ 46,7 միավորով, որը թռիչքաձև առաջընթաց է արձանագրել նախորդ տարվա համեմատ (տե՛ս Գծապատկեր 1, Աղյուսակ 1): Հայաստանին հաջորդում է Բելառուսը, որը վերջին տարիներին ԺՄԻ ցուցանիշներում զգալի դրական փոփոխություններ է արձանագրել: Ընդ որում, եթե նախորդ տարիներին այդ առաջընթացն ապահովվում էր հիմնականում սոցիալական և տնտեսական գործոնների շնորհիվ, ապա 2018 թ. Բելառուսը բարձր ցուցանիշներ է ունեցել նաև քաղաքական մի շարք փոփոխականներում:

Աղյուսակ 1

Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատությունը (2017, 2018 թթ.)*

Երկրներ	2018 թ.	փոփոխ. 2017 թ. համեմատ	2017 թ.
Վրաստան	50,6	0,4	50,2
Մոլդովա	50,2	0,4	49,8
Հայաստան	46,7	4,2	42,5
Բելառուս	46,5	1,0	45,6
Ուկրաինա	42,9 ↓	-0,1	43,0
Ղրղզստան	41,0	0,9	40,1
Ղազախստան	40,7 ↓	-0,1	40,8
Ռուսաստան	39,9	1,0	38,8
Ադրբեջան	34,7	0,1	34,6

Հինգերորդ տեղը զբաղեցրել է Ուկրաինան՝ 42,9 միավորով: 2018 թ.-ին նախորդ տարվա համեմատ դիրքային փոփոխություն է գրանցել Ղրղզստանը (41)՝ առաջ անցնելով Ղազախստանից (40,7): Ղրղզստանին հաջորդում է Ռուսաստանը (39,9), իսկ Ադրբեջանը 34,7 միավորով շարունակում է մնալ

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

վերջին հորիզոնականում, որը շատ մոտ է «ոչ ժողովրդավարական քաղաքական համակարգ» կատեգորիային:

2017 և 2018 թթ. ԺՄԻ-ում գրանցած ցուցանիշները համեմատելիս պարզ է դառնում, որ բացառությամբ Ուկրաինայի և Ղազախստանի բոլոր պետությունները գրանցել են առաջընթաց (Աղյուսակ 1): Եվ եթե վերջիններիս միավորային դրական փոփոխությունները տատանվում են 0,1-ից 1-ի սահմաններում, ապա Հայաստանի պարագայում այդ փոփոխությունը կազմել է շուրջ 4,2 միավոր: 2018 թ. «Թավշյա հեղափոխությունից» հետո դրական փոփոխություններ գրանցվեցին քաղաքական մի շարք ցուցանիշներում: Միջազգային կառույցներն արձանագրել են առաջընթաց մասնավորապես քաղաքական իրավունքների ոլորտում և ընտրական գործընթացներում (*Freedom House 2019, OSCE/ODIHR 2018*): Այդուամենայնիվ, Հայաստանում ժողովրդավարության կայուն աճի և առավել ևս համախմբման վերաբերյալ որևէ եզրահանգում կատարելը ժամանակավրեպ է: Քաղաքական իրավունքների և ընտրական գործընթացների ոլորտում տեղի ունեցող դրական փոփոխությունները շատ բնորոշ են հետհեղափոխական շրջանին (հատկապես խաղաղ հեղափոխությունների պարագայում), քանի որ հասարակությունը հնարավորություն է ստանում լեգալացնելու լեգիտիմ առաջնորդին: Իրական փոփոխություններ հնարավոր կլինի արձանագրել միայն հաջորդ ընտրություններին, երբ այդ առաջնորդը ու իր քաղաքական հենարանը, ունենալով վարչական ռեսուրսների նկատմամբ ամբողջական հասանելիություն, չեն ունենա հասարակության նախկին բացարձակ աջակցությունը: Հենց այդ ժամանակահատվածում են առավել ակնառու դառնում թե՛ հետընթացի, և թե՛ առաջընթացի գործընթացներն ու ժողովրդավարության իրական պատկերը:

Այս առումով կարևոր է նաև հետխորհրդային մյուս պետությունների (Վրաստան, Ուկրաինա և Ղրղզստան) «հետհեղափոխական փորձի» ուսումնասիրությունները, քանի որ նրանք ունեցել են ժողովրդավարության առաջընթացի և նահանջի շրջափոխեր, ավելին՝ հեղափոխությունների կրկնություններ (Ղրղզստան և Ուկրաինա), որոնք երկրորդ անգամ արդեն խաղաղ չէին և ընթացան ուժեղ բախումներով ու մարդկային կորուստներով:

11. Հետխորհրդային ժողովրդավարական փոխակերպումները և արդիականացման առանձնահատկությունները. միջերկրային վերլուծություն

Աղյուսակ 2

2018 թ" ԺՄԻ-ի փոփոխականների արժեքները
(Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան,
Ղրղզստան, Ուկրաինա, Մոլդովա)³⁴⁸

Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի փոփոխականները	Հայաստան	Վրաստան	Ադրբեջան	Ռուսաստան	Բելառուս	Ղազախստան	Ղրղզստան	Ուկրաինա	Մոլդովա
1. Քաղաքական կայունություն (0-100)	30,5	30,0	21,0	29,0	58,1	45,7	25,2	6,2	32,9
2. Օրենքի գերակայություն (0-100)	48,6	63,9	29,3	20,7	19,2	35,6	17,8	24,0	37,0
3. Մամուլի ազատություն (100-0) ^a	63	50	90	83	83	85	67	53	56
4. Քաղ. Իրավունք. և քաղաքաց. ազատ. (7-1)	4	3	6,5	6,5	6,5	6	4,5	3,5	3,5
5. Կոռուպցիայի ընկալման ինդեքս (0-100)	35	58	25	28	44	31	29	32	33
6. Գենդերային հավասարություն (0-1)	0,678	0,677	0,68	0,701	0,747	0,712	0,691	0,708	0,733
7. Քաղաքական համակարգ (0,1,2)	1	1	0	0	0	0	0	0	1
8. Խորհրդարան. մեծամասնություն (0,1,2)	1	0	0	0	0	0	1	1	1
9. Սոց. անհանգստությ. և քաղ. ճնշ. (0-5)	1,9	3	1,3	1,7	3,5	3,1	2	1,9	3
10. Կրոն (0,1)	1	1	0	1	1	0	0	1	1
11. Հակամարտության առկայություն (0,1,2)	1	1	1	1	2	2	1	0	1
12. ՀԱԱ 1 շնչի հաշվով \$ (գնողունակության համարժեքով ճշգրտված)	10460	10900	17070	26470	19200	24230	3780	9020	7680
13. Արտաքին առևտրաշրջ. (% ՀՆԱ)	90,4	121,7	92,0	51,5	139,3	60,6	101,1	99,0	86,7
14. Տնտ. ազատության ինդեքս (0-100)	67,7	75,9	65,4	58,9	57,9	65,4	62,3	52,3	59,1
15. Տնտեսության վարկավորում (% ՀՆԱ)	62,8	68,6	29,6	53,9	35,4	31,8	22,4	50,6	20,9
16. ՕՈՆ (% ՀՆԱ)	2,0	7,3	3,0	0,5	2,5	0,1	0,6	1,9	2,1
17. Գնաճ (%)	2,5	2,6	2,3	2,9	4,9	6,0	1,5	10,9	3,1
18. Բյուջեի պրոֆիցիտ/դեֆիցիտ (% ՀՆԱ)	-1,8	-2,3	-0,4	2,7	3,8	-1,4	-1,1	-1,66	-1
19. Իրական աշխատավարձ \$ (գնողունակության համարժեքով ճշգրտված)	856	1141	1173	1719	1427	1310	713	877	839
20. Գործազրկության մակարդակ (%)	17,7	14,1	5,2	4,7	5,7	4,9	7,2	9,4	3,4
21. Ջինի ինդեքս (0-100) ^a	33,6	37,9	33,7	37,7	25,4	27,5	27,3	25,0	25,9
22. ՄԶԿ-կրթության բաղադրիչ (0-1) ^a	0,749	0,845	0,709	0,832	0,838	0,814	0,735	0,794	0,71
23. Պետության ծախսերը կրթության ուղղությամբ (% ՀՆԱ) ^a	2,7	3,8	2,5	3,7	4,8	2,8	6,1	5,4	6,7
24. Կյանքի սպասվող տևողությունը ^a	75	73	73	72	74	73	71	72	72
25. Պետության ծախսերն առողջապահության ուղղությամբ (% ՀՆԱ) ^a	1,6	3,1	1,4	3,0	3,9	2,1	2,6	2,9	4,4


³⁴⁸ Հաշվարկների հիմք են հետևյալ աղբյուրները՝ 1, 2 - www.govindicators.org, 3, 4 - <http://www.freedomhouse.org>, 5 - <http://www.transparency.org>, 6 - <http://www.weforum.org/issues/global-gender-gap>, 7, 8, 9, 10, 11 – գնահատված է հետազոտողների կողմից, 12, 13, 15, 16, 17, 20, 21, 23, 24, 25 - <http://data.worldbank.org/indicator>, 14 - <http://www.heritage.org/index/>, 18, 19 - Ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ, 22 - <http://hdr.undp.org>:

a – 2018 թ. տվյալների բացակայության դեպքում հաշվարկներում օգտագործվել են տվյալ աղբյուրի նախորդ տարվա/տարիների տվյալները (մուտքը՝ 08.08.2019):

11.2 Քաղաքական գործոնների ինդեքսը (Ք_{ԳԻ})

Գծապատկեր 2

Քաղաքական գործոնների ինդեքսը (2018 թ.)*



ԺՄԻ-ի Քաղաքական գործոնների ինդեքսի վարկանիշային աղյուսակի առաջին հորիզոնականում է Վրաստանը՝ 52,1 միավորով, որին հաջորդում են Մոլդովան և Հայաստանը (տե՛ս Գծապատկեր 2): Հարկ է նշել, որ եթե նախորդ տարիների ուսումնասիրություններում (*Aleksanyan 2016, 2017*) Վրաստանն ու Մոլդովան, լինելով առաջին և երկրորդ տեղերում, ունեցել են զգալի միավորային տարբերություններ մյուս պետությունների համեմատ, ապա 2018 թ. Ք_{ԳԻ}-ի վարկանիշային աղյուսակի տվյալներով՝ Հայաստանը առավելապես մոտեցել է այդ պետությունների գրանցած արդյունքներին՝ կրճատելով այդ բացատը: Քաղաքական գործոնների ամենացածր ինդեքսն ունի Ադրբեջանը, որը 21,3 միավորով վերջին տեղում է:

Անդրադառնալով Քաղաքական գործոնների ինդեքսի առանձին փոփոխականներին (տե՛ս Աղյուսակ 2)՝ նշենք, որ Համաշխարհային բանկի

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

11. Հետխորհրդային ժողովրդավարական փոխակերպումները և արդիականացման առանձնահատկությունները. միջերկրային վերլուծություն

(ՀԲ) «Օրենքի գերակայություն» փոփոխականի 2018 թ. տվյալների համաձայն՝ վերոնշյալ ինը պետություններից լավագույն ցուցանիշը Վրաստանինն է (63,9), վատագույնը՝ Ղրղզստանինը (17,8): Միևնույն ժամանակ ՀԲ-ի «Քաղաքական կայունության / բռնության բացակայության» 2018 թ. ինդեքսի ամենաբարձր ցուցանիշն ունի Բելառուսը (58,1), իսկ ամենացածրը՝ Ուկրաինան (6,2): Քաղաքական կայունության լավագույն երկրորդ ցուցանիշը Ղազախստանինն է (45,7)³⁴⁹: Այս առումով հավելենք նաև, որ, ի տարբերություն մյուս բոլոր պետությունների, և՛ Բելառուսը, և՛ Ղազախստանը չունեն հակամարտության գոտիներ, ինչով և պայմանավորված է վերջիններիս ստացած բարձրագույն միավորները «Հակամարտության առկայությունը»³⁵⁰ փոփոխականի համար:

Ըստ «Ազատության տան»՝ «Մամուլի ազատության»³⁵¹ լավագույն ցուցանիշը Վրաստանինն է (50), վատթարագույնը՝ Ադրբեջանինը (90) (*Freedom House 2017*): Վրաստանին են պատկանում նաև «Քաղաքական իրավունքների» և «Քաղաքացիական ազատությունների»³⁵² լավագույնը ցուցանիշները (3), որին հաջորդում են Մոլդովան (3,5) և Ուկրաինան (3,5), և որոնք միավորային նահանջ են արձանագրել նախորդ տարվա համեմա-

³⁴⁹ Տե՛ս ՀԲ պաշտոնական կայք՝ <http://info.worldbank.org/governance/wgi/index.aspx#home> (20.07.2019):

³⁵⁰ Մոդելում հակամարտության ազդեցությունը ժողովրդավարության վրա գնահատվել է հետևյալ կերպ՝ ա) հակամարտության բացակայություն (2 միավոր), բ) պասիվ հակամարտության առկայություն (1 միավոր). պետությունը կոնֆլիկտային իրավիճակում է այլ պետության/պետությունների հետ, որը, սակայն, չի ուղեկցվում ռազմական ակտիվ գործողություններով, գ) ակտիվ հակամարտության առկայություն. պետությունը կոնֆլիկտային իրավիճակում է այլ պետության/պետությունների հետ, որն ուղեկցվում է ռազմական ակտիվ գործողություններով (0): Տվյալների նորմալացման ժամանակ՝ որպես առավելագույն արժեք (max) ընդունվում է 2-ը, իսկ նվազագույն (min)՝ 0-ն:

³⁵¹ «Ազատության տան» Մամուլի ազատության ինդեքսը գնահատվում է 100-ից մինչև 0 միավորային սանդղակով, որտեղ 0-ից 30 գնահատական ստացած երկրները «ազատ» են, 31-ից 60-ը՝ «մասնակի ազատ», իսկ 61-ից 100-ը՝ «անազատ»:

³⁵² «Ազատության տան» Քաղաքական իրավունքների և Քաղաքացիական ազատությունների ինդեքսը գնահատվում է 1-ից մինչև 7 միավորային սանդղակով, որտեղ 1-ից 2,5 գնահատական ստացած երկրներն «ազատ» են, 3-ից 5-ը՝ «մասնակի ազատ», 5,5-ից 7-ը՝ «անազատ»:

տությամբ: Ցուցանիշի անկում է գրանցել նաև Բելառուսը (6,5): Այս ոլորտում 2018 թ.-ին նախորդ տարվա համեմատ դրական փոփոխություններ են արձանագրվել միայն Հայաստանում (4) և Ղրղզստանում (4,5): «Ազատության տան» գնահատմամբ՝ Վրաստանը, Ուկրաինան, Մոլդովան, Հայաստանը և Ղրղզստանը «մասնակի ազատ» են, իսկ ահա Բելառուսը, Ռուսաստանը, Ադրբեջանն ու Ղազախստանը՝ «անազատ» (տե՛ս Աղյուսակ 2) (*Freedom House 2019*):

Ըստ «Կոռուպցիայի ընկալման ինդեքսի»³⁵³ (ԿԸԻ)՝ լավագույն արդյունքները Վրաստանին են (58): Եվ չնայած Վրաստանը կոռուպցիայի դեմ պայքարում տարածաշրջանի առաջատարներից է, այնուամենայնիվ մասնագետները մտահոգություն են հայտնում ժողովրդավարության մի շարք ասպեկտներում հետընթացի առնչությամբ*, ինչը խոցելի է դարձնում երկիրը կոռուպցիայի դեմ պայքարում: ԿԸԻ-ի երկրորդ լավագույն արդյունքը Բելառուսին է (44), որը Վրաստանի և Չեռնոգորիայի (45) հետ կազմել է Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի շրջանում միջինից բարձր ցուցանիշներ (43) գրանցած եռյակը: ԿԸԻ-ի նվազագույն ցուցանիշն Ադրբեջանին է (25), որը նախորդ տարվա համեմատ զգալի՝ 6 միավորի նահանջ է ունեցել: Կրճատումը մեծապես կախված էր անկախ լրագրողների, քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների գործունեության սահմանափակումներով (օրինակ՝ միջազգային ֆինանսավորման կասեցման փորձերի միջոցով): Ավելին, 2017 թ. սեպտեմբերին «Կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի ուսումնասիրության նախագծի» (OCCRP) հրապարակած հետաքննության արդյունքներով (*OCCRP 2017*) բացահայտվում էին Ադրբեջանում 2,9 միլիարդ ԱՄՆ դոլարի չափով փողերի լվացման գործարքները: Ըստ աղբյուրի՝ այդ միջոցներն օգտագործ-

³⁵³ «Կոռուպցիայի ընկալման ինդեքսը» գնահատվում է 0-100 բալային համակարգով, ընդ որում՝ 0-ն համապատասխանում է լիովին կոռումպացված երկրներին, 100-ը՝ կոռուպցիայից լիովին ձերբազատված երկրներին:

* Ըստ «Թրանսփարենսի ինթերնեշնլ» կազմակերպության մասնագետների՝ Վրաստանում ժողովրդավարացման խնդիրներից են իրավապահ մարմինների հաշվետվողականության բացակայությունը, արդարադատության համակարգ քաղաքական դրդապատճառներով միջամտությունը, պաշտոնական դիրքի չարաշահումները, քաղաքացիական հասարակության նկատմամբ ճնշումները և այլն:

11. Հետխորհրդային ժողովրդավարական փոխակերպումները և արդիականացման առանձնահատկությունները. միջերկրային վերլուծություն

վել են նաև Ադրբեջանի միջազգային վարկանիշի բարձրացման ուղղությամբ՝ մարդու իրավունքների խախտման դեպքերից և այլ խնդիրներից ուշադրությունը շեղելու նպատակով (*Transparency International 2019*):

ԺՄԻ-ի փոփոխական՝ Համաշխարհային տնտեսական ֆորումի Համաշխարհային գենդերային բացակի (Global Gender Gap) 2018 թ. ինդեքսի համաձայն՝ գենդերային հավասարության ամենաբարձր ցուցանիշը Բելառուսում է (0,747): Այն Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի 26 երկրների շարքում չորրորդն է: Համաշխարհային գենդերային բացակի ամենացածր ինդեքսը Վրաստանում (0,677) է, որին չնչին առավելությամբ նախորդում է Հայաստանը (0,678) (*World Economic Forum 2018, Part 1: 10-11, 16, 37*):


Քաղաքացիական անհնազանդությունների³⁵⁴ ամենաբարձր մակարդակը շարունակաբար եղել է Ուկրաինայում՝ կապված նախընտրական գործընթացների և քաղաքական տարբեր լարված իրավիճակների հետ: 2018 թ. քաղաքացիական անհնազանդությունների մակարդակը բարձր է եղել նաև Հայաստանում՝ պայմանավորված հեղափոխական իրադարձություններով, սակայն դրանք մեծամասամբ խաղաղ բնույթի էին:

2018 թ. Հանրապետության նախագահի լիազորությունների ավարտով և նորընտիր նախագահի պաշտոնի ստանձմամբ ամբողջությամբ ուժի մեջ մտան 2015 թ. սահմանադրական փոփոխությունները, որով Հայաստանը անցում էր կատարում կառավարման խորհրդարանական համակարգի: Ըստ այդմ՝ ՔԳԻ-ի «քաղաքական համակարգ» փոփոխականի 2018 թ. տվյալների համաձայն՝ դիտարկվող պետություններից Հայաստանը Մոլդովայի և

³⁵⁴ Գնահատվում է «սոցիալական անհանգստություններ ու քաղաքական ճնշումներ» փոփոխականի միջոցով 0-5 սանդղակի շրջանակներում: Գնահատումը ներառում է սահմանված ժամանակահատվածում ցույցերի, գործադուլների, սոցիալական անկարգությունների քանակը և մասնավորապես ճնշումները դրանց նկատմամբ, այդ թվում նաև՝ քաղաքական ձերբակալությունների ու սպանությունների դեպքերը: Հաշվի առնելով նման վիճակագրության բացակայությունը, հիմնվելով թերթերի, հետազոտությունների, հաշվետվությունների տեղեկատվության ուսումնասիրությունների և վերլուծության վրա՝ դրանց գնահատականը տրվում է հետազոտողների կողմից, որտեղ 0-ն անհանգստությունների և ճնշումների առավելագույն քանակն է՝ ընդհուպ հեղաշրջումներ և հեղափոխություններ, 5-ը՝ դրանց լիովին բացակայությունը:

Վրաստանի հետ կազմեց այն երկրների շարքը, որոնց քաղաքական համակարգերը բնորոշվում են խորհրդարանի առավել լայն լիազորություններով:

Գծապատկեր 3
Քաղաքական գործոնների ինդեքսը (2017, 2018 թթ.)*



Համեմատելով Քաղաքական գործոնների ինդեքսի 2017 և 2018 թթ. արդյունքները (տե՛ս Գծապատկեր 3)՝ պարզ է դառնում, որ Հայաստանը զգալի առաջընթաց է արձանագրել նախորդ տարվա համեմատ՝ հիմնականում շնորհիվ «քաղաքական համակարգ» փոփոխականի և Քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ինդեքսների դրական փոփոխությունների: Բացառությամբ Ուկրաինայի, Ղազախստանի և Ադրբեջանի՝ մյուս պետությունները ևս արձանագրել են ցուցանիշների աճ նախորդ տարվա համեմատությամբ, որում առավել նկատելի է Բելառուսի և Ղրղզստանի Ք_{ԳԻ}-ի աճը: Ամենամեծ հետընթացը գրանցել է Ադրբեջանը՝ պայմանավորված «օրենքի գերակայության» ցուցանիշի վատթարացմամբ, «Կոռուպցիայի ընկալման ինդեքսի» աննախադեպ նվազմամբ և երկրում

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:


11. Հետխորհրդային ժողովրդավարական փոխակերպումները և արդիականացման առանձնահատկությունները. միջերկրային վերլուծություն

սոցիալական անհանգստությունների և դրանց նկատմամբ ճնշումների աճով:

11.3 Տնտեսական գործոնների ինդեքսը (S_{ԳԻ})

Գծապատկեր 4

Տնտեսական գործոնների ինդեքսը (2018 թ.)*



ԺՄԻ-ի Տնտեսական գործոնների 2018 թ. ինդեքսի լավագույն ցուցանիշը Բելառուսինն է (48,9), որին հաջորդում է Վրաստանը (47,6): Հայաստանը զբաղեցրել է վարկանիշային աղյուսակի 5-րդ հորիզոնականը: S_{ԳԻ}-ի նվազագույն ցուցանիշը գրանցել է Ուկրաինան (տե՛ս Գծապատկեր 4):

2018 թ. Բելառուսի տնտեսությունը աճի արագ տեմպ արձանագրեց, որը 2015-2016 թթ. անկումից հետո վերականգնողական բնույթ էր կրում: Տնտեսական աճը կազմեց 3%, որում տնային տնտեսությունների սպառողական ակտիվությունը և արդյունաբերությունն ունեցան կարևոր նպաստ:

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

տող, իսկ գյուղատնտեսությունը՝ զսպող ազդեցություն: $S_{\text{ԳԻ}}$ -ի փոփոխականներից դիտարկվող պետությունների համեմատ Բելառուսն արձանագրել է արտաքին առևտրաշրջանառության ամենաբարձր ցուցանիշը, որը կազմել է ՀՆԱ-ի 139%-ը³⁵⁵: 2018 թ. գրանցվեց նաև բյուջեի պրոֆիցիտի աճ (3,8 ՀՆԱ%), որը տեղի ունեցավ արտաքին տնտեսական գործունեության և անուղղակի հարկերի հաշվին: Շարունակվեց գնաճի զսպման արդյունավետ քաղաքականությունը. 2018 թ. այն հասավ պատմական նվազագույն ցուցանիշի՝ 4,9%-ի (*Евразийский Банк Развития 2019*): Եվ չնայած գրանցված դրական միտումներին՝ պետք է նշել, որ Բելառուսի տնտեսությունը մեծապես կախված է արտաքին գործոններից:

$S_{\text{ԳԻ}}$ -ի փոփոխականներում դիտարկվող պետությունների համեմատ Վրաստանն ունի տնտեսության վարկավորման, օտարերկրյա ուղղակի ներդրումների և Տնտեսական ազատության ինդեքսի³⁵⁶ (ՏԱԻ) ամենաբարձր ցուցանիշները (տե՛ս Աղյուսակ 2): ՏԱԻ-ի երկրորդ լավագույն արդյունքը Հայաստանինն է: Եվրոպական տարածաշրջանի 44 երկրի շարքում Վրաստանը (75,9) դիրքավորվել է 8-րդ, իսկ Հայաստանը (67,7)՝ 24-րդ տեղերում: Ուկրաինան 52,3 միավորով զբաղեցրել է ամենավերջին՝ 44-րդ տեղը՝ Մոլդովայի, Ռուսաստանի և Բելառուսի հետ ստանալով «հիմնականում անազատ» կարգավիճակը (*Miller, Kim, Roberts 2019, 32, 52*):

Հարկ է նշել, որ Ուկրաինան՝ սկսած 2014 թվականից, գտնվում է $S_{\text{ԳԻ}}$ -ի վարկանիշային աղյուսակի վերջին հորիզոնականում: 2014-2015 թթ. ռուս-ուկրաինական հարաբերությունների վատթարացումն ու պատերազմական գործողությունները, ինչպես նաև փոխադարձ պատժամիջոցների կիրառումը մեծ ազդեցություն ունեցան Ուկրաինայի տնտեսության վրա՝ խորաց-


³⁵⁵ Տե՛ս ՀԲ պաշտոնական կայք՝ <http://data.worldbank.org/indicator/NE.TRD.GNFS.ZS> (20.07.2019):

³⁵⁶ «Տնտեսական ազատության ինդեքսը» գնահատվում է «Հերիթիջ» հիմնադրամի և «Ուոլ Սթրիթ» օրաթերթի սահմանած 0-100 միավորային սանդղակով՝ ըստ 10 գործոնների, որտեղ 0-ից 49,9 գնահատական ստացած երկրները «տնտեսապես ճնշված» են, 50-ից 59,9-ը՝ «հիմնականում անազատ», 60-ից 69,9-ը՝ «չափավոր ազատ», 70-ից 79,9-ը՝ «հիմնականում ազատ», իսկ 80-ից 100-ը՝ «ազատ»: 2018 թ. ԺՄԻ-ի հաշվարկների համար հիմք է ընդունվել 2019 թ. ՏԱԻ-ին, քանի որ այն ընդգրկում է 2017 թ. հուլիսի 1-ից մինչև 2018 թ. հունիսի 30-ն ընկած ցուցանիշները:

11. Հետխորհրդային ժողովրդավարական փոխակերպումները և արդիականացման առանձնահատկությունները. միջերկրային վերլուծություն

նելով տնտեսական ճգնաժամը. տնտեսական անկումը 2014 թ. հասավ 6,6%-ի, իսկ արդեն 2015 թ.՝ 9,8%-ի: 2018 թ. Ուկրաինայի տնտեսությունը որոշ չափով վերականգնվեց՝ արձանագրելով 3% տնտեսական աճ, որը, սակայն, շատ խոցելի է և մեծապես կախված է միջազգային ֆինանսական աջակցությունից: Մասնագետները կանխատեսում են, որ 2019 թ. Ուկրաինան դարձյալ կառերեսվի տնտեսական մի շարք մարտահրավերների՝ կապված Ռուսաստանի նավթամթերքների՝ Ուկրաինա ներմուծելու արգելքի հետ: Ռուսաստանից ստացվող նավթն ու ածուխը համապատասխանաբար կազմում են Ուկրաինայի ներմուծման ընդհանուր ծավալների 35 և 65%-ը (Euler Hermes 2019):

Գծապատկեր 5
Տնտեսական գործոնների ինդեքսը (2017, 2018 թթ.)*



Տնտեսական գործոնների 2017 և 2018 թթ. համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր պետությունները նախորդ տարվա համեմատ 2018 թ. գրանցել են աճ: Ամենամեծ առաջընթացը Ռուսաստանինն է, ամենափոքրը՝ Ղազախստանինը (տե՛ս Գծապատկեր 5): 2015 թ. տնտեսա-


* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

կան անկումից հետո Ռուսաստանի տնտեսությունը աստիճանաբար վերականգնվում է՝ միավորային և դիրքային զգալի փոփոխություններ արձանագրելով նաև ՏԳԻ-ի վարկանիշային աղյուսակում (Aleksanyan 2017, 259):

11.4 Սոցիալական գործոնների ինդեքսը (ՍԳԻ)

Գծապատկեր 6

Սոցիալական գործոնների ինդեքսը (2018 թ.)*



ԺՄԻ-ի միջերկրային վերլուծության տվյալների համաձայն՝ Սոցիալական գործոնների ինդեքսի 2018 թ. ամենաբարձր ցուցանիշն ունի Բելառուսը (59,6): Վերջինիս հաջորդում է Ղազախստանը՝ 58,9 միավորով: Պետք է նշել, որ Բելառուսն ու Ղազախստանը ՍԳԻ-ի վարկանիշային աղյուսակում մշտապես կիսել են առաջին և երկրորդ հորիզոնականները: ՍԳԻ-ի նվազագույն ցուցանիշներն արձանագրել են Վրաստանն ու Հայաստանը՝ համապատասխանաբար 51,9 և 51,5 միավորներով (տե՛ս Գծապատկեր 6): Այս


* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

11. Հետխորհրդային ժողովրդավարական փոխակերպումները և արդիականացման առանձնահատկությունները. միջերկրային վերլուծություն

պետությունները և մշտապես զբաղեցրել են վերջին հորիզոնականները, այն տարբերությամբ, որ նախորդ տարիներին Վրաստանն էր հաջորդում Հայաստանին (Aleksanyan 2015, 215, 2016, 285, 2017, 256): Դրա պատճառը իրական աշխատավարձն է, որ նախորդ տարվա համեմատ Վրաստանում աճել է՝ 984 ԱՄՆ դոլարից հասնելով 1141-ի (ճշգրտված է գնողունակության ցուցանիշով), իսկ Հայաստանում՝ նվազել՝ 895 ԱՄՆ դոլարից կրճատվելով մինչև 856-ի³⁵⁷: Իրական աշխատավարձի ամենաբարձր ցուցանիշներն ունեն Ռուսաստանը, Բելառուսը և Ղազախստանը (տե՛ս Աղյուսակ 2):

Գծապատկեր 7

Աղքատության և գործազրկության մակարդակները հետխորհրդային տարածքում³⁵⁸



³⁵⁷ Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները՝ միջին անվանական աշխատավարձի, սպառողական գների ինդեքսի և փոխարժեքի վերաբերյալ պաշտոնական տվյալների հիման վրա:


³⁵⁸ Աղբյուրը՝ ՀԲ և Ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ:

Գծապատկեր 7-ում ներկայացված են աղքատության (ազգային աղքատության գիծ) և գործազրկության մակարդակները դիտարկվող պետություններում: Աղքատության ամենաբարձր ցուցանիշները Հայաստանում (25,7%) և Ղրղզստանում են (25,5%), որոնց հաջորդում է Վրաստանը (21,9%): Սակայն եթե գործազրկության մակարդակը Ղրղզստանում չափավոր է (7%), ապա Հայաստանում այն դարձյալ ամենաբարձրն է և կազմում է 17,7%, այն դեպքում, երբ համաշխարհային միջին ցուցանիշը 5% է: Գործազրկության ամենացածր մակարդակը Մոլդովայում է (3,4%), իսկ աղքատության՝ Ուկրաինայում (2,4%) և Ղազախստանում (2,5%):

Կարևոր սոցիալական հիմնախնդիրներից է նաև հասարակության եկամուտների բևեռվածությունը: Եկամուտների կենտրոնացման գործակցի՝ Ջինի ինդեքսի ամենաբարձր ցուցանիշը Վրաստանում (37,9) և Ռուսաստանում է (37,7), ամենացածրը՝ Ուկրաինայում (25) և Բելառուսում (25,4)³⁵⁹:

Գծապատկեր 8

Սոցիալական գործոնների ինդեքսը (2017, 2018 թթ.)*



³⁵⁹ Տե՛ս ՀԲ պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/SI.POV.GINI> (20.07.2019):

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:


11. Հետխորհրդային ժողովրդավարական փոխակերպումները և արդիականացման առանձնահատկությունները. միջերկրային վերլուծություն

Դիտարկելով ՍԳԻ-ի 2017 և 2018 թվականների միտումները՝ կարող ենք արձանագրել, որ բոլոր պետությունները, բացառությամբ Հայաստանի, գրանցել են ցուցանիշների աճ: Առավել նկատելի է Մոլդովայի առաջընթացը, որը պայմանավորված էր իրական աշխատավարձի աճով և գործազրկության կրճատմամբ (տե՛ս Գծապատկեր 8):

11.5 Կրթական գործոնների ինդեքսը (ԿԳԻ)

Գծապատկեր 9

Կրթական գործոնների ինդեքսը (2018 թ.)*



ԺՄԻ-ի միջերկրային վերլուծության Կրթական գործոնների ինդեքսի 2018 թ. տվյալների համաձայն՝ լավագույն ցուցանիշն ունի Մոլդովան (58,5), որին հաջորդում է Ղրղզստանը (57,4): Հայաստանը 43,5 միավորով նախավերջին, իսկ Ադրբեջանը (40,5) վերջին տեղերում են (տե՛ս Գծապատկեր 9):

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

Կրթության ոլորտում կառավարության կատարած ծախսերի տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիտարկվող պետությունների շարքում Մոլդովան շարունակաբար ամենաշատ միջոցներն է հատկացնում այս ոլորտին (որպես ՀՆԱ-ի մասնաբաժին): Այսպես՝ 2017 թ. կրթությանն ուղղված ծախսերը կազմել են Մոլդովայի ՀՆԱ-ի 6,7%-ը, իսկ բյուջեի ընդամենը ծախսերի՝ 18,3%-ը: Հարկ է նշել, որ դրանք ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո տարեցտարի զգալիորեն նվազել են: Համեմատության համար նշենք, որ Մոլդովայի 2009 թ. պետական ծախսերը կրթության ոլորտում եղել են ՀՆԱ-ի 9,5%, իսկ 2010 թ. բյուջեի ծախսերի՝ 22,3%-ը: Կրթությանն ուղղված պետական նվազագույն ծախսերն ունեն Ղազախստանը, Հայաստանը և Ադրբեջանը, որոնց ցուցանիշները չեն գերազանցում ՀՆԱ-ի 3%-ը (տե՛ս Աղյուսակ 2)³⁶⁰:

ԿԳԻ-ի ենթահինդեքսի՝ ՄԶՀ կրթության բաղադրիչի 2017 թ. ամենաբարձր միավորը Վրաստանին է (0,845), իսկ ամենացածրը՝ Ադրբեջանինը (0,709): Հայաստանին տրված է 0,749 միավորը³⁶¹: Նախորդ տարիների համեմատ 2017 թ.-ին Հայաստանի ուսման միջին տևողությունը աճել է՝ կազմելով 11,7 տարի, իսկ ուսման սպասվող տևողությունը 13 տարի է: 1990-2017 թթ. ընթացքում Հայաստանի ուսման միջին տևողությունն ավելացել է 1,6, իսկ ուսման սպասվող տևողությունը՝ 2,3 տարով (*UNDP 2018, 2*):

2018 թ. բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների համախառն ընդգրկվածության լավագույն ցուցանիշը, ինչպես և նախորդ տարիներին, Բելառուսին է. այն կազմում է 87,4%: Բելառուսին հաջորդում են Ուկրաինան (82,7%) և Ռուսաստանը (81,9%)՝ համանման ցուցանիշներով: Հայաստանի համախառն ընդգրկվածությունը բուժերում կազ-

³⁶⁰ Տե՛ս ՀԲ պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/SE.XPD.TOTL.GD.ZS> (20.07.2019):

³⁶¹ ՄԶՀ կրթության ենթահինդեքսը գնահատվում է ըստ երկու ցուցանիշի՝ 1. ուսման միջին տարիներ (ներառում է 25 տարին լրացած անձի՝ դպրոցում և/կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ստացած կրթության միջին տարիները՝ առավելագույն 15 տարուց), 2. ուսման սպասվող տարիներ (դպրոցահասակ երեխայի ուսման տարիների այն թիվն է, որը սպասվում է, որ նա կունենա՝ ուսման առավելագույն 18 տարուց (ներառյալ մագիստրատուրայում սովորելու հնարավորությունը)): Աղբյուրը՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր, Մարդկային զարգացման զեկույցներ՝ <http://hdr.undp.org/> (20.07.2019):

11. Հետխորհրդային ժողովրդավարական փոխակերպումները և արդիականացման առանձնահատկությունները. միջերկրային վերլուծություն

մում է 54,6%, որը վերջին տարիներին ունեցել է աճի միտում: Աճի ամենամեծ դինամիկան ցուցաբերել են Բելառուսն ու Ուկրաինան. 2000 թ. համեմատությամբ բարձրագույն կրթության համախառն ընդգրկվածությունն աճել է ավելի քան 30%-ով: Ամենացածր ընդգրկվածությունը շարունակում է մնալ Ադրբեջանում՝ 27,7% (տե՛ս Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների համախառն ընդգրկվածությունը (2018), %³⁶²

Բելառուս	87,4
Ուկրաինա (2014)	82,7
Ռուսաստան (2017)	81,9
Վրաստան	60,3
Հայաստան	54,6
Ղազախստան	54,0
Ղրղզստան	41,3
Մոլդովա	39,8
Ադրբեջան	27,7


11.6 Առողջապահական գործոնների ինդեքսը (Ա_{ԳԻ})

ԺՄԻ-ի Առողջապահական գործոնների ինդեքսի 2018 թ. տվյալների համաձայն՝ Բելառուսը 50,7 միավորով գտնվում է առաջին հորիզոնականում, որին հաջորդում է Մոլդովան (48,9): Հայաստանը 43,9 միավորով հինգերորդ հորիզոնականում է, իսկ նվազագույն ցուցանիշը Ադրբեջանինն է (40) (տե՛ս Գծապատկեր 10):

³⁶² Տե՛ս ՀԲ պաշտոնական կայք՝ <http://data.worldbank.org/indicator/SE.TER.ENRR> (22.07.2019):

Գծապատկեր 10

Առողջապահական գործոնների ինդեքսը (2018 թ.)*



Բելառուսում բժշկական ծառայությունները բնակչության համար հավասարապես հասանելի են, սակայն արդյունավետության տեսակետից՝ ոչ լիարժեք: Այն մեծ ձեռքբերումներ է արձանագրել հանրային առողջապահության այնպիսի հիմնախնդիրների լուծման ուղղությամբ, ինչպիսիք են մանկական մահացությունը և վարակիչ հիվանդությունները: Պետության առողջապահության ներկայիս մարտահրավերներից են մատուցվող ծառայությունների որակի բարելավումն ու պետական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը (*World Bank 2018, 6*): 2016 թ. Բելառուսի առողջապահության ոլորտի պետական ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 3,9%, որը դիտարկվող 9 պետությունների շրջանում երկրորդ լավագույն ցուցանիշն է: Առողջապահությանն ուղղված պետական ամենաբարձր ծախսերն ունի Մոլդովան՝ ՀՆԱ-ի 4,4%-ի չափով: Ի տարբերություն դրան՝ Ադրբեջանի պետական ծախսերը ամենացածրն են և կազմում են ՀՆԱ-ի 1,4%-ը³⁶³:

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

³⁶³ Տե՛ս ՀԲ պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/SH.XPD.GHED.GD.ZS> (23.07.2019):

11. Հետխորհրդային ժողովրդավարական փոխակերպումները և արդիականացման առանձնահատկությունները. միջերկրային վերլուծություն

ԱԳԻ-ի ենթահինդեքսներից կյանքի սպասվող տևողության ամենաբարձր ցուցանիշն ունի Հայաստանը, որը կազմում է 75 տարի: Երկրորդ լավագույն արդյունքը Բելառուսինն է (74 տարի), իսկ ահա ամենացածր ցուցանիշը՝ Ադրբեջանինը (72 տարի)³⁶⁴: Բոլոր պետությունների մոտ նկատվում է խիստ տարբերություն կանանց և տղամարդկանց կյանքի սպասվող տևողության ցուցանիշների միջև: Օրինակ՝ Ուկրաինայում, Բելառուսում և Ռուսաստանում այն կազմում է 10 տարի՝ հոգուտ կանանց: Այս տեսակետից կարևոր է այն միջոցառումների իրականացումը, որոնք կուղղվեն դրա պատճառների վերացմանը:

Եզրակացություններ

Ամփոփելով ժողովրդավարության մակարդակի ինդեքսի միջերկրային վերլուծության ուսումնասիրությունները՝ կարող ենք առանձնացնել հետևյալ դրույթներն ու եզրահանգումները.

- ԺՄԻ-ի ամենաբարձր ցուցանիշն ունի Վրաստանը, որին հաջորդում է Մոլդովան, իսկ վերջին տեղում Ադրբեջանն է,
- դիտարկվող ինը պետությունները «մասնակի ժողովրդավարական» են, այն տարբերությամբ, որ Ադրբեջանի գրանցած ցուցանիշը շատ մոտ է «ոչ ժողովրդավարական քաղաքական համակարգ» կատեգորիային,
- Հայաստանը, զբաղեցնելով երրորդ հորիզոնականը, ամենամեծ առաջընթացն է արձանագրել նախորդ տարվա համեմատությամբ,
- ԵԱՏՄ անդամ երկրների շրջանում ԺՄԻ-ի ամենաբարձր արդյունքն ունի Հայաստանը, որին հաջորդում են Բելառուսը, Ղրղզստանը և Ղազախստանը, իսկ ամենացածր միավորներն ունի Ռուսաստանը,
- Բելառուսը ոչ միայն ունի լավագույն արդյունքները ՔԳԻ-ի առանձին փոփոխականներում, այլև առաջին հորիզոնականը Տնտեսական, Սոցիալական և Առողջապահական գործոնների ինդեքսներում,

³⁶⁴ Տե՛ս ՀԲ պաշտոնական կայք՝ <http://data.worldbank.org/indicator/SP.DYN.LE00.IN> (23.07.2019):

- Սոցիալական գործոնների ինդեքսի նվազագույն ցուցանիշները շարունակաբար Հայաստանին ու Վրաստանին են, որոնք դիտարկվող պետությունների շրջանում ունեն գործազրկության ամենաբարձր մակարդակը,
- Ադրբեջանը վերջին հորիզոնականում է Քաղաքական, Կրթական և Առողջապահական գործոնների ինդեքսների վարկանիշային աղյուսակներում:

ԺՄԻ-ի առանձին փոփոխականների համեմատական վերլուծության համաձայն՝ դիտարկվող ինը պետությունների շարքում

- ✓ Վրաստանն ունի լավագույն ցուցանիշները քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների, մամուլի ազատության, օրենքի գերակայության ու կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում,
- ✓ Բելառուսն ունի քաղաքական կայունության ամենաբարձր մակարդակն ու գենդերային հավասարության լավագույն ցուցանիշը,
- ✓ քաղաքական կայունության ամենացածր և կոնֆլիկտայնության ամենաբարձր մակարդակն Ուկրաինայում է,
- ✓ Ադրբեջանը վատթարագույն արդյունքներն է արձանագրել Մամուլի ազատության և Կոռուպցիայի ընկալման ինդեքսներում, իսկ Ռուսաստանի և Բելառուսի հետ նաև կիսել է Քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների նվազագույն ցուցանիշը,
- ✓ Հայաստանի, Մոլդովայի և Վրաստանի քաղաքական համակարգերը բնորոշվում են խորհրդարանի առավել լայն և նախագահի սահմանափակ լիազորություններով:

Այսպիսով, կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ հետխորհրդային ժողովրդավարական փոխակերպումներում յուրաքանչյուր պետություն ձևավորում է իր ուրույն օրակարգն ու «ճանապարհային քարտեզը», որում կարող են խտացված լինել իրարամերժ, միմյանց հակասող գործընթացներն ու իրադարձությունները՝ ժողովրդավարության առաջընթացի և հետընթացի փուլերով: Եվ եթե ժողովրդավարությունը որպես արժեքների և սկզբունքների համակարգ համընդհանուր է, ապա դրա «տե-

ղայնացման» գործընթացը առանձնահատուկ է յուրաքանչյուր պետության համար՝ պայմանավորված պատմական, մշակութային, կրոնական և այլ արժեքներով:

Գրականության ցանկ

- **Aleksanyan, Arusyak** (2015) “Cross-country Analysis of the Index of Democracy Level.” In Comparative Analysis of the Index of Democracy Level: Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine and Moldova, edited by Arusyak Aleksanyan, 208-219. Yerevan: YSU press.
- **Aleksanyan, Arusyak** (2016) “Cross-country Analysis of the Index of Democracy Level.” In Comparative Analysis of the Index of Democracy Level in the context of Human Rights and Democratization (Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine and Moldova), edited by Arusyak Aleksanyan, 276-293. Yerevan: YSU press.
- **Aleksanyan, Arusyak** (2017) “Cross-country Analysis of the Index of Democracy Level.” In Trends of the Index of Democracy Level in the dimension of human rights and democratization (Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine and Moldova), edited by Arusyak Aleksanyan, 256-275. Yerevan: YSU press.
- **Antonov, Oleg and Artem Galushko** (2018) "The common space of neo-authoritarianism in post-Soviet Eurasia." *Baltic Worlds* 2018 (4), Special issue on Academic Freedom: 21-29. Accessed June 27, 2019. http://balticworlds.com/wp-content/uploads/2019/04/BW-2018_4_Antonov_Gaulshko_p_20-29.pdf
- **Dresden, Jennifer and Marc Morjé Howard** (2015) “Authoritarian backsliding and the concentration of political power.” *Democratization* 23 (7):1-25.
- **Euler Hermes** (2019) “Country Report – Ukraine.” Accessed July 20, 2019. https://www.eulerhermes.com/en_global/economic-research/country-reports/Ukraine.html.
- **Freedom House** (2017) “Freedom of the Press 2017. Press Freedom’s Dark Horizon”. Accessed July 18, 2019. https://freedomhouse.org/sites/default/files/-FOTP_2017_booklet_FINAL_April28.pdf
- **Freedom House** (2019) “Freedom in the World 2019. Country Report: Armenia.” Accessed July 10, 2019. <https://freedomhouse.org/report/freedom-world/2019/armenia>.
- **Hale, Henry E.** (2015) *Patronal Politics: Eurasian Regime Dynamics in Comparative Perspective*. Cambridge: Cambridge University Press.

- **Knott, Eleanor** (2018) “Perpetually ‘partly free’: lessons from post-soviet hybrid regimes on backsliding in Central and Eastern Europe.” *East European Politics*, 34(3): 355-376.
- **Miller, Terry, Anthony Kim, James Roberts** (2019) “2019 Index of Economic Freedom,” 25th Anniversary Edition. The Heritage Foundation. Accessed July 15, 2019. https://www.heritage.org/index/pdf/2019/book/index_2019.pdf.
- **OCGRP** (2017) “The Azerbaijani Laundromat.” Organized Crime and Corruption Reporting Project, September 4. Accessed July 25, 2019. <https://www.ocgrp.org/en/azerbaijanilaundromat/>.
- **OSCE/ODIHR** (2018) “Republic of Armenia, Early Parliamentary Elections, 9 December” ODIHR Election Observation Mission Final Report. Accessed July 18, 2019. <https://www.osce.org/odihr/elections/armenia/413555>.
- **Transparency International** (2019) “Eastern Europe & Central Asia: weak checks and balances threaten anti-corruption efforts.” Accessed July 15, 2019. https://www.transparency.org/news/feature/weak_checks_and_balances_threaten_anti_corruption_efforts_across_eastern_eu.
- **UNDP** (2018) “Briefing note for countries on the 2018 Statistical Update: Armenia.” Accessed July 20, 2019. <https://www.undp.org/content/dam/armenia/docs/2018%20-HDR%20Statistical%20Update%20Armenia.pdf>.
- **Valiyev, Ceyhun** (2012) “Transition to Democracy in Post-Soviet States: Success or Failure. Case Study Analysis.” *Khazar Journal of Humanities and Social Sciences* (15): 5-25.
- **Way, Lucan** (2015) *Pluralism by Default: Weak Autocrats and the Rise of Competitive Politics*. Baltimore, MD: Johns Hopkins University Press.
- **World Bank** (2018) “Country Partnership Framework for the Republic of Belarus for the period FY18–22.” Washington, D.C.: World Bank Group. Accessed July 18, 2019. <http://documents.worldbank.org/curated/en/748191523557929050/pdf/CPF-FY2018-22-Feb-21-03122018.pdf>.
- **World Economic Forum** (2018) “The Global Gender Gap Report 2018.” Accessed July 20, 2019. http://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2018.pdf.
- **Евразийский Банк Развития** (2019) «Микрообзор ЕАБР: Республика Беларусь», 08 апреля. Дата доступа 20 июля, 2019г. <https://eabr.org/analytics/ceg-quarterly-reviews/aprel-2019-respublika-belarus/>.

ԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱԲԱՌԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբիզագին, Մուհամմեդկալի, 298
Ադրբեջան (ԱՀ), 3, 7, 10, 13, 16, 85, 101, 102, 103, 104, 105, 106, 107, 108, 109, 110, 111, 112, 113, 114, 115, 116, 117, 118, 119, 120, 121, 122, 123, 124, 125, 126, 127, 128, 129, 130, 131, 132, 133, 134, 135, 136, 137, 138, 139, 143, 144, 250, 415, 417, 420, 421, 422, 423, 424, 431, 432, 433, 434, 435, 436, 451
Ադրբեջանի ժողովրդական ճակատ կուսակցություն (ԱԺԾԿ), 7, 106, 113, 114, 115, 119
Ազատության տուն (Freedom House), 18, 23, 24, 25, 45, 46, 110, 114, 115, 117, 153, 202, 203, 206, 252, 253, 303, 305, 340, 341, 388, 421, 422
ազատություն, 24, 28, 101, 387
Ազատությունն աշխարհում, 23, 45, 157
Ազգային ժողով (ԱԺ), 7, 13, 34, 40, 41, 42, 43, 46, 202
ազգային փոքրամասնություններ, 41, 295, 315, 386, 390, 402
Ազովի ծով, 328
Աթամբան, Ալմազբեկ, 294, 295, 298, 301, 304, 305

Ալին, Իլիամ, 101, 102, 105, 108, 109, 113, 114, 117, 118, 120, 122, 126, 133
Ալին, Հեյդար, 101, 107, 109
Ալինա, Մեհրիբան, 113
աղքատության մակարդակ, 56, 58, 125, 126, 309, 312, 355, 429
ամբողջատիրական, 20, 78
ամբողջատիրական համակարգ, 20, 101, 292
Ամերիկայի Միացյալ Նահանգներ (ԱՄՆ), 7, 19, 29, 50, 51, 57, 58, 67, 68, 69, 79, 83, 85, 88, 97, 98, 109, 112, 122, 124, 125, 138, 148, 149, 150, 155, 157, 165, 166, 183, 184, 187, 188, 189, 207, 235, 255, 283, 284, 310, 312, 315, 317, 321, 323, 337, 340, 345, 368, 370, 371, 395, 405, 409, 411, 422, 429
Անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ), 7, 184, 334
անկայունություն, 76, 153, 163, 198, 256, 284, 298, 331, 350, 394
անհանդուրժողականություն, 34, 44, 307, 370, 386, 389
անհնազանդություն, 105, 110, 113, 118, 119, 120, 158
անվստահություն, 43, 77, 380
անվտանգայնացման խոսույթ, 327

- անվտանգության
ժողովրդավարություն, 155
- անվտանգություն, 5, 7, 8, 11, 13, 17,
79, 105, 146, 155, 156, 159, 164,
167, 178, 182, 184, 187, 217, 250,
255, 264, 274, 278, 285, 296, 307,
327, 328, 329, 331, 334, 338, 341,
345, 349, 350, 353, 370, 371, 386
- առաջընթաց, 38, 153, 157, 163, 165,
171, 203, 214, 225, 253, 255, 340,
341, 351, 352, 359, 415, 418, 436
- առևտրաշրջանառություն, 19, 22, 52,
53, 86, 96, 97, 98, 164, 186, 187,
188, 211, 213, 308, 352, 396, 419,
426
- առևտրի ազատ գոտի, 52
- Առողջապահական գործոնների
ինդեքս (Ա_{ԳԻ}), 7, 16, 17, 29, 30, 35,
62, 64, 65, 66, 68, 75, 92, 94, 97,
103, 131, 139, 147, 178, 179, 181,
188, 199, 226, 227, 231, 242, 274,
275, 280, 281, 282, 283, 293, 316,
317, 318, 319, 322, 330, 362, 363,
364, 366, 378, 404, 406, 408, 410,
433, 434, 435
- առողջապահական ծախսեր, 227,
404
- առողջապահության ընթացիկ
ծախսեր, 62, 64, 131, 132, 274,
285, 323, 363, 411
- առողջապահության համակարգ, 72,
178, 180, 226, 230, 274, 277, 363
- Առողջապահության
համաշխարհային
կազմակերպություն (ԱՀԿ), 7, 229
- առողջապահության ոլորտ, 47, 62,
63, 131, 179, 180, 226, 230, 274,
281, 317, 361, 363, 364, 434
- Ասկարով, Ազիմժան, 299
- ավտոկեֆալիա, 367
- ավտորիտար, 37, 78, 108, 154, 202,
208, 235, 247, 248, 252, 253, 255,
292, 294
- ավտորիտար համակարգ, 20, 292
- ավտորիտար նախագահ, 294
- ավտորիտար
սուպերնախագահական
համակարգ, 300
- ավտորիտար վարչակարգ, 208, 235,
247, 255
- ավտորիտարիզմ, 206, 255, 282
- Ատա Մեկեն, 301
- Արդար Ռուսաստան, 151
- արդիականացում, 10, 11, 61, 74, 144,
146, 154, 161, 163, 164, 175, 177,
178, 180, 182, 196, 201, 210, 212,
215, 225, 226, 228, 230, 231, 236,
241, 243, 255, 259, 261, 262, 263,
268, 270, 274, 279, 281, 285, 333,
346, 351, 352, 355, 360, 361, 363,
402, 415
- արդիականություն, 148, 402
- Արդյունահանող ճյուղերի
թափանցիկության
նախաձեռնություն (ԱՃԹՆ), 7, 111,
112
- Արևելյան գործընկերություն (ԱԷԳ), 7,
206, 207, 222, 346
- Արժույթի միջազգային հիմնադրամ
(ԱՄՀ), 7, 298, 352, 386

Արտոնությունների ընդհանրացված
համակարգ (GSP+), 54, 70, 84

Բ

Բարանով, Օմուրբեկ, 296, 297, 301

Բարգավաճ Հայաստան

կուսակցություն (ԲՀԿ), 7, 41

բարեփոխում, 15, 34, 58, 77, 79, 83,
89, 90, 91, 92, 95, 98, 158, 163,

173, 174, 180, 185, 196, 198, 200,
204, 209, 244, 245, 255, 258, 262,

267, 280, 282, 292, 299, 310, 319,
337, 351, 352, 355, 357, 359, 360,

361, 363, 366, 371, 379, 386, 394,
401, 403, 405, 411

բարձրագույն կրթություն, 46, 60,
128, 270, 312, 359, 360, 433

բարձրագույն ուսումնական

հաստատություններ, 61, 177, 224,
269, 270, 432, 433

Բաքրաձե, Դավիթ, 80

Բելառուս, 3, 4, 7, 14, 16, 17, 52, 143,
144, 157, 196, 197, 198, 199, 200,

201, 202, 203, 204, 205, 206, 207,
208, 209, 210, 211, 212, 213, 214,

215, 216, 217, 218, 219, 221, 222,
223, 224, 225, 226, 227, 228, 229,

230, 231, 232, 233, 234, 235, 236,
240, 414, 415, 417, 419, 421, 422,

423, 424, 425, 426, 428, 429, 430,
432, 433, 434, 435, 436, 451

բյուջեի ղեֆիցիտ, 19, 22, 51, 122, 164,
308, 350, 408, 419

բյուջեի հաշվեկշիռ, 138, 139, 409,
410

բյուջեի պրոֆիցիտ, 164, 211, 426

բողոք, 158, 171

բողոքի ցույց, 118, 158, 170, 171, 301,
380

բռնություն, 18, 22, 23, 43, 47, 48, 96,
112, 186, 188, 292, 299, 301, 302,

303, 307, 341, 344, 389, 390, 408,
409, 410, 421

Բրեքսիթ, 150

Գ

գազ, 101, 106, 137, 165, 166, 209,
219, 261, 307, 349, 351, 394

գենդերային հավասարություն, 18,
22, 26, 46, 208, 302, 387, 419, 423

Գերագույն ռադա, 328, 342, 344,
347, 361, 367

գիտակրթական համակարգ, 175,
176, 222, 268, 271, 359

գնաճ, 19, 22, 29, 122, 123, 124, 165,
211, 256, 308, 310, 351, 395, 396,
419, 426

գործազրկության մակարդակ, 19, 22,
57, 58, 187, 189, 284, 312, 397,
398, 399, 408, 409, 410, 419, 429,
430

Գործողության և համերաշխության
կուսակցության ու
Արժանապատվության և
ճշմարտության պլատֆորմ
կուսակցության («ACUM») դաշինք,
382, 383

գործոն, 7, 8, 9, 15, 16, 17, 19, 20, 21,
22, 23, 29, 30, 31, 35, 36, 37, 48,
49, 55, 56, 57, 59, 62, 64, 65, 66,

67, 68, 74, 75, 76, 82, 88, 90, 92,
94, 95, 97, 98, 103, 104, 107, 108,
121, 123, 124, 127, 131, 135, 136,
137, 138, 146, 147, 148, 149, 155,
162, 163, 164, 166, 167, 168, 169,
171, 175, 178, 179, 182, 186, 190,
198, 199, 200, 201, 211, 215, 217,
218, 223, 226, 227, 232, 234, 236,
242, 243, 244, 255, 256, 257, 263,
268, 269, 274, 275, 280, 281, 283,
292, 293, 294, 308, 311, 314, 316,
318, 320, 321, 330, 331, 332, 341,
348, 350, 353, 356, 357, 358, 362,
365, 366, 367, 368, 369, 370, 377,
378, 379, 392, 393, 397, 401, 404,
406, 408, 409, 417, 420, 424, 425,
426, 427, 428, 430, 431, 433, 434,
435, 436

Գուտերեշ, Անտոնիու, 305

Գրուդինին, Պավել, 151

Դ

դեմոկրատիզմ, 148

Դոդոն, Իգոր, 380, 389, 399

Դոնբաս, 150, 336, 370

Դոնեցկ (ԴԺՀ), 7, 327, 333, 342, 367

Ե

Ելք դաշինք, 40, 41

Եկամուտ, 21, 28, 51, 63, 93, 161, 162,

163, 167, 168, 189, 214, 217, 285,

352, 356, 394, 430

Եվրախնտեգրում, 197, 231, 331, 337,

346, 357, 364, 365, 371, 380, 387

Եվրասիական տնտեսական

միություն (ԵԱՏՄ), 7, 52, 53, 70,

184, 212, 213, 214, 216, 231, 250,

251, 257, 258, 281, 309, 334, 387,

435

Եվրասկեպտիկ, 377, 387

Եվրոպական միություն (ԵՄ), 7, 12,

52, 53, 54, 83, 84, 85, 88, 91, 109,

148, 184, 188, 213, 222, 229, 230,

231, 252, 298, 299, 304, 315, 327,

332, 334, 336, 337, 338, 339, 340,

349, 351, 352, 354, 356, 357, 359,

360, 368, 386, 390, 391, 394, 403

Եվրոպայի խորհուրդ (ԵԽ), 7, 79,

351, 357

Եվրոպայի խորհրդի

խորհրդարանական վեհաժողով

(ԵԽԽՎ), 7, 109, 110

Եվրոպայում անվտանգության և

համագործակցության

կազմակերպություն (ԵԱՀԿ), 7, 41,

118, 150, 245, 298, 382

Զ

զանգվածային անկարգություններ,
389

Չանգվածային լրատվության

միջոցներ (ՉԼՄ), 7, 25, 44, 201,

230, 235, 284, 304, 331, 344, 382,

386

զանգվածային ցույցեր, 106, 110, 328

զեկույց, 18, 19, 23, 24, 28, 43, 45, 51,

72, 73, 83, 107, 110, 113, 117, 118,

119, 120, 157, 175, 177, 203, 206,

223, 252, 253, 258, 303, 340, 341,
342, 382, 385, 388, 390, 432
Զուրաբիշվիլի, Սալումե, 80, 81

Է

Էթնիկ փոքրամասնություններ, 292,
301, 302, 304

Ը

ընդդիմադիր ուժեր, 106, 107, 110,
118, 203, 204, 232, 243, 245, 248,
300, 328
ընդդիմություն, 27, 380, 384
ընտանեկան բռնություն, 43, 303,
390
ընտրական գործընթաց, 23, 38, 113,
120, 151, 153, 201, 203, 245, 253,
340, 343, 418
ընտրական համակարգ, 245, 379,
384
ընտրական օրենսգիրք, 39, 40, 72,
80, 118, 298, 379, 381
ընտրողներ, 152, 382
ընտրություններ, 13, 34, 38, 39, 40,
77, 78, 80, 81, 118, 151, 204, 244,
245, 296, 298, 382, 384, 418

Թ

Թեքերան, Օմուրբեկ, 301
Թուրքիա, 85, 111, 130, 137, 150, 183,
398
Թոքվիլ, Ալեքսիս դե, 58
Թոքվիլի էֆեկտ/պարադոքս, 58

Թրանսփարենսի հիմնադրամ
(Transparency International), 18, 24,
48, 160, 208, 301, 347, 385, 422

Ժ

ժակուպովա, Չոլպոն, 300
ժամանակակից
ժողովրդավարություն, 3, 4, 14, 15,
17, 156, 451
ժեներելով, Սոորոնբայ, 295, 296,
297, 298
ժողովրդական ուժերի ազգային
խորհուրդ (ԺՈԱԽ), 7, 118
ժողովրդավարական
բարեփոխումներ, 148, 182, 200,
209, 246, 282
ժողովրդավարական գործընթացներ,
137, 282, 323, 380
ժողովրդավարական համախմբում,
4, 15, 16, 145, 245, 327, 331, 338,
370
ժողովրդավարական
փոխակերպումներ, 11, 20, 31, 145,
150, 151, 153, 154, 162, 163, 167,
168, 171, 185, 186, 196, 201, 203,
216, 223, 231, 253, 255, 340, 415,
436
ժողովրդավարական
քաղաքացիություն, 187, 337, 357
ժողովրդավարացում, 5, 13, 14, 15, 17,
74, 82, 143, 144, 146, 148, 155, 160,
161, 167, 185, 198, 202, 232, 235,
240, 241, 243, 248, 255, 268, 279,
292, 329, 331, 333, 336, 338, 352,
360, 361, 368, 411, 415, 422

Ժողովրդավարության կայացում, 11,
14, 167, 178, 292, 377
 Ժողովրդավարության համախմբում,
3, 4, 14, 17, 20, 37, 58, 66, 76, 78,
145, 451
 Ժողովրդավարության մակարդակի
 ինդեքս (ԺՄԻ), 3, 4, 7, 10, 12, 14,
15, 16, 17, 18, 20, 21, 23, 28, 30, 31,
35, 36, 45, 48, 50, 51, 64, 65, 66,
67, 68, 69, 74, 75, 94, 95, 96, 97,
98, 103, 104, 107, 108, 110, 113,
120, 121, 123, 127, 134, 135, 136,
137, 138, 139, 143, 144, 147, 148,
153, 160, 162, 167, 169, 171, 175,
178, 181, 182, 185, 186, 187, 188,
189, 190, 199, 204, 208, 230, 231,
232, 233, 234, 235, 236, 240, 242,
254, 256, 275, 279, 280, 281, 282,
283, 284, 285, 292, 293, 303, 311,
313, 317, 318, 319, 320, 321, 322,
323, 330, 331, 332, 346, 348, 350,
353, 358, 362, 363, 364, 365, 366,
367, 368, 369, 370, 371, 377, 378,
379, 388, 392, 400, 401, 404, 406,
407, 408, 409, 410, 411, 414, 415,
416, 417, 418, 419, 420, 423, 425,
426, 428, 431, 433, 435, 436, 451
 Ժողովրդավարություն, 4, 7, 10, 11, 12,
14, 16, 17, 20, 21, 22, 27, 29, 30, 31,
34, 35, 36, 37, 38, 48, 49, 50, 58,
64, 65, 66, 67, 68, 69, 74, 75, 76,
78, 94, 95, 96, 98, 101, 102, 103,
104, 109, 111, 113, 114, 121, 131, 134,
136, 137, 143, 144, 145, 146, 147,
148, 153, 155, 157, 158, 162, 163,
167, 171, 175, 178, 181, 182, 183,

185, 186, 189, 190, 197, 198, 199,
200, 202, 203, 204, 230, 231, 232,
233, 234, 235, 236, 240, 242, 244,
247, 252, 253, 279, 280, 281, 282,
284, 285, 292, 293, 306, 318, 319,
320, 323, 329, 330, 331, 335, 338,
340, 341, 364, 365, 366, 367, 368,
369, 371, 377, 378, 391, 403, 406,
407, 408, 410, 411, 414, 415, 416,
417, 418, 419, 421, 422, 435, 436

Ի

իլիբերալիզմ, 157, 206
 Իմ քայլը դաշինք, 40, 41
 ինտեգրում, 15, 53, 156, 163, 165,
174, 177, 178, 184, 185, 188, 201,
202, 203, 206, 209, 212, 213, 214,
215, 217, 221, 222, 225, 228, 231,
241, 248, 251, 252, 256, 257, 268,
278, 279, 281, 282, 284, 285, 327,
329, 331, 333, 334, 337, 343, 348,
349, 350, 352, 353, 357
 ինքնիշխանություն, 153, 163, 207,
231, 236, 282, 327, 328, 331, 333,
348, 367, 392
 իշխանափոխություն, 23, 322, 336
 իշխանության ճյուղեր, 201, 202, 247
 իշխանություն, 23, 25, 27, 34, 37, 38,
42, 43, 49, 66, 69, 78, 87, 90, 91,
106, 107, 108, 109, 111, 112, 113,
114, 115, 116, 117, 118, 119, 120, 130,
145, 156, 159, 162, 168, 170, 178,
185, 189, 197, 201, 202, 209, 230,
243, 244, 245, 246, 248, 252, 253,

264, 273, 279, 282, 295, 298, 300,
316, 331, 367, 382, 386, 389, 390
իշխանությունների տարանջատում,
34, 145, 244

Իսակով, Սապար, 298

Իվանիշվիլի, Բիծինա, 78

իրական աշխատավարձ, 19, 22, 28,
57, 66, 68, 69, 97, 98, 124, 125,
138, 139, 168, 171, 187, 189, 217,
234, 235, 263, 283, 284, 312, 321,
323, 353, 369, 370, 371, 372, 408,
409, 410, 419, 429, 431

Իրան (ԻԻՀ), 7, 52, 134, 166, 250

իրավունք, 12, 13, 18, 22, 23, 24, 25,
26, 27, 45, 54, 64, 65, 66, 77, 87,
95, 96, 98, 108, 109, 111, 113, 156,
157, 159, 160, 167, 169, 171, 173,
204, 206, 217, 247, 285, 295, 299,
300, 302, 303, 304, 305, 306, 315,
329, 332, 337, 341, 342, 343, 346,
352, 355, 357, 368, 369, 370, 371,
379, 381, 382, 388, 389, 390, 403,
409, 410, 418, 421, 424

L

լեգիտիմ, 34, 66, 418

Լուգանսկ (ԼԺՀ), 7, 327, 332, 335,
342, 343, 367

Լուկաշենկո, Ալեքսանդր, 202, 212

Լուսավոր Հայաստան
կուսակցություն, 41

լրագրող, 43, 44, 45, 108, 115, 304,
341, 344, 422

Խ

խաղաղ հավաքներ, 301, 379, 389

խոշտանգում, 43, 299, 391

խոսքի ազատություն, 107, 110, 386

Խորը և համապարփակ ազատ
առևտրի գոտի (ԽՀԱԱԳ), 7, 83,
84, 337, 351, 352

Խորհրդային Միություն, 74, 102, 313,
314, 317

խորհրդարան, 26, 40, 43, 108, 110,
298, 306, 342, 381, 386

խորհրդարանական ընտրություններ,
40, 76, 77, 78, 105, 117, 382, 383,
384

խորհրդարանական համակարգ, 79,
81, 298, 423

խորհրդարանական
մեծամասնություն, 18, 22, 27, 40,
419

Ծ

ծախսերն առողջապահության
ոլորտում, 19, 23, 283, 419

Ծառուկյան դաշինք, 41

ծնելիություն, 64, 92, 220, 395, 405

Կ

Կազմակերպված հանցավորության և
կոռուպցիայի ուսումնասիրության
նախագիծ (OCCRP), 422

կայունություն, 12, 18, 22, 23, 37, 116,
123, 127, 135, 146, 154, 155, 162,
163, 164, 207, 210, 217, 243, 248,
274, 279, 282, 284, 298, 319, 334,
345, 350, 352, 363, 366, 407, 410

կանանց իրավունքներ, 46, 249, 302
կառավարություն, 24, 25, 27, 77, 89,
169, 174, 202, 227, 260, 285, 292,
295, 305, 387, 394

Կենտրոնական Ասիա, 13, 59, 62,
241, 243, 249, 250, 255, 314, 317,
351, 422, 423

Կենտրոնական ընտրական
հանձնաժողով (ԿԸՀ), 8, 13, 25,
39, 41, 79, 296, 382, 383, 384,
385

Կերչի նեղուց, 328, 367

կյանքի սպասվող տևողություն, 19,
23, 28, 64, 68, 69, 97, 98, 139,
178, 179, 188, 190, 226, 227, 317,
322, 323, 362, 363, 405, 410, 411,
435

կոռուպցիա, 24, 25, 43, 48, 51, 55,
102, 114, 153, 159, 160, 163, 203,
248, 252, 253, 258, 292, 295, 300,
301, 304, 307, 340, 341, 347, 351,
365, 377, 380, 385, 386, 390,
394, 396, 399, 422, 436

Կոռուպցիայի ընկալման ինդեքս
(ԿԸԻ), 8, 18, 22, 24, 48, 67, 68,
114, 137, 139, 159, 208, 254, 300,
301, 320, 322, 346, 347, 385, 419,
422, 424, 436

կուսակցություն, 7, 8, 9, 37, 41, 76,
77, 78, 79, 80, 106, 110, 114, 118,
119, 126, 148, 150, 153, 154, 158,
159, 173, 174, 201, 205, 208, 213,
230, 232, 233, 245, 248, 285, 295,
296, 297, 300, 301, 327, 328, 334,
337, 338, 380, 381, 382, 383, 384,
389

Կրթական գործոնների ինդեքս (ԿԳԻ),
8, 16, 17, 29, 30, 35, 59, 68, 75,
90, 94, 97, 103, 127, 138, 139, 147,
175, 181, 187, 199, 223, 231, 242,
268, 269, 280, 281, 282, 293, 313,
314, 319, 321, 330, 358, 364, 366,
370, 378, 401, 407, 408, 431, 432

կրթական համակարգ, 90, 91, 174,
177, 221, 225, 268, 270, 273, 315,
357, 359, 360, 401, 403, 404

կրթական մակարդակ, 46, 47, 90,
161, 254, 316, 347, 348, 391, 402

կրթության ոլորտ, 19, 22, 60, 61, 91,
127, 128, 129, 175, 177, 187, 189,
222, 223, 268, 273, 314, 321, 323,
357, 358, 361, 370, 372, 401, 402,
403, 432

կրթության որակ, 180, 189, 315, 359

կրթությանն ուղղված պետական
ծախսեր, 59, 314, 341, 374, 419,
422, 432, 438

կրոն, 18, 22, 27, 102, 106, 107, 111,
119, 120, 130, 185, 208, 241, 305,
306, 315, 333, 344, 346, 367, 379,
389, 419, 437

Ը

հակակոռուպցիոն

քաղաքականություն, 159, 246, 331,
347

հակամարտության առկայություն, 18,
22, 27, 48, 306, 419, 421

համախառն ազգային արդյունք
(ՀԱԱ), 8, 19, 22, 67, 69, 164, 186,
188, 256, 308, 320, 322, 350, 419

համախառն ազգային եկամուտ
(ՀԱԵ), 28, 50

համախառն ներքին արդյունք (ՀՆԱ),
8, 19, 50, 51, 52, 59, 62, 63, 91,
92, 97, 98, 122, 123, 129, 130, 131,
132, 135, 138, 157, 163, 164, 166,
187, 189, 223, 226, 234, 258, 259,
260, 283, 308, 309, 310, 317, 321,
322, 323, 335, 358, 363, 369, 370,
371, 393, 395, 396, 403, 409, 410,
411, 419, 426, 432, 434

համախմբում, 11, 37, 69, 151, 200,
208, 209, 294, 327, 334, 338, 357,
360, 368, 418

համախմբված ավտորիտար
վարչակարգ, 154, 202, 252

համամասնական ընտրակարգ, 40
Համաշխարհային բանկ (ՀԲ), 8, 17,
18, 19, 23, 25, 48, 50, 51, 52, 54,
56, 57, 58, 73, 83, 92, 93, 122, 123,
125, 129, 131, 133, 165, 172, 175,
211, 217, 218, 256, 258, 264, 267,
274, 298, 308, 312, 314, 317, 347,
351, 354, 358, 363, 386, 395, 396,
401, 403, 405, 420, 421, 426, 429,
430, 432, 433, 434, 435

Համաշխարհային գենդերային
բացակի ինդեքս (ՀԳԻ), 8, 46,
47, 160, 161, 254, 302, 347, 348,
387

Համապարփակ և ընդլայնված
գործընկերության համաձայնագիր
(ՀԸԳՀ), 8, 54

համեմատական վերլուծություն, 3, 4,
14, 16, 17, 18, 40, 144, 240, 243,
368, 377, 415, 416, 427, 436, 451

Հայ Յեղափոխական

Դաշնակցություն (ՀՅԴ), 8, 40, 41
Հայաստան (ՀՀ), 3, 4, 8, 10, 12, 13,
14, 16, 17, 34, 35, 36, 37, 38, 39,
40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 48,
49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 57,
58, 59, 60, 61, 62, 63, 64, 65, 66,
67, 68, 69, 70, 72, 73, 81, 85, 86,
117, 129, 143, 144, 157, 213, 240,
414, 415, 417, 418, 419, 420, 422,
423, 424, 425, 426, 428, 429, 430,
431, 432, 433, 435, 436, 451

Հայաստանի Հանրապետական
կուսակցություն (ՀՀԿ), 8, 40, 41
հանդուրժողականություն, 44, 245,
356, 368

Հանթինգթոն, Սամուել, 37
հանրակրթության որակ, 176
հանրահավաք, 110, 157, 158, 159,
170, 296, 301

Հանրապետական սոցիալ-
քաղաքական շարժման
հավասարություն («Տօր») կուսակցություն, 382, 383

Հանրապետություն-Աթա ժուրտ, 296,
297

հասարակական կազմակերպություն
(ՀԿ), 8, 23, 112, 171, 306, 389, 405
հավաք, 43, 158, 170

Հավաքական անվտանգության
մասին պայմանագրի
կազմակերպություն (ՀԱՊԿ), 8,
156, 157, 184, 203, 250

հեղաշրջում, 26, 105, 111, 130, 150,
423

հեղափոխություն, 26, 34, 36, 38, 43, 44, 58, 294, 322, 346, 418, 423
 հետազոտություն, 14, 15, 16, 17, 18, 23, 26, 27, 73, 105, 123, 134, 137, 153, 170, 176, 177, 180, 222, 259, 271, 272, 302, 320, 364, 391, 402, 403, 423
 հետընթաց, 20, 34, 36, 37, 49, 58, 66, 153, 259, 415, 418, 422, 424, 436
 հետխորհրդային երկրներ, 15, 349, 415
 հետխորհրդային նորանկախ երկրներ, 415
 հետխորհրդային տարածք, 15, 36, 57, 163, 252, 258, 267, 334, 429
 հետհեղափոխական, 34, 38, 44, 66, 418
 հիբրիդային ժողովրդավարություն, 10, 74

Ձ

ձերբակալություն, 43

Ղ

Ղազախստան (ՂՀ), 3, 4, 8, 11, 14, 16, 17, 52, 143, 144, 157, 213, 240, 241, 242, 243, 244, 245, 246, 247, 248, 249, 250, 251, 252, 253, 254, 255, 256, 257, 258, 259, 260, 261, 262, 263, 264, 265, 266, 267, 268, 269, 270, 272, 273, 274, 275, 276, 277, 279, 280, 281, 282, 284, 285, 309, 312, 317, 414, 415, 417, 418, 419, 421, 424, 427, 430, 433, 451

Ղազախստանի ժողովրդի վեհաժողով (ՂԺՎ), 8, 245
 Ղամբար, Իսա, 114
 դարաբաղյան հակամարտություն, 106, 107
 Ղրիմ, 203, 251, 332, 336
 Ղրղզստան (ՂրՀ), 3, 4, 8, 11, 14, 16, 17, 52, 143, 144, 157, 213, 292, 293, 294, 295, 297, 298, 299, 300, 301, 302, 303, 304, 305, 306, 307, 308, 309, 310, 311, 312, 313, 314, 315, 316, 317, 318, 319, 320, 322, 323, 415, 417, 418, 419, 422, 424, 431, 433, 435, 451
 Ղրղզստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, 296

Ճ

ճնշում, 26, 42, 44, 45, 111, 112, 115, 154, 186, 188, 296, 301, 305, 320, 322, 388, 390, 396, 423, 425

Մ

Մազնում, Ռոնալդ, 79
 Մադումարով, Ադախան, 296, 297
 մահացություն, 93, 134, 226, 227, 434
 մամուլի ազատություն, 18, 22, 24, 44, 45, 110, 234, 235, 283, 284, 303, 346, 388, 408, 409, 410, 419, 421, 436
 մայիսյան հրամանագրեր, 152
 մանաթ, 122, 124, 128, 132
 մանկամահացություն, 93, 406

մասնակի ժողովրդավարական, 416, 435

Մարգվելաշվիլի, Գիորգի, 77, 78, 82

Մարդկային զարգացման համաթվի (ՄԶՀ) կրթության բաղադրիչ, 19, 22, 28, 68, 69, 97, 98, 138, 139, 187, 189, 223, 314, 321, 323, 358, 401, 419, 432

մարդու իրավունքներ, 8, 14, 43, 54, 72, 107, 108, 116, 119, 143, 144, 157, 187, 197, 205, 206, 240, 292, 299, 300, 302, 305, 329, 341, 342, 343, 357, 358, 370, 386, 390, 403, 414, 423

մարտահրավերներ, 4, 13, 14, 17, 36, 49, 54, 62, 63, 76, 79, 91, 154, 155, 162, 176, 184, 196, 208, 226, 230, 262, 281, 298, 427, 434

մեթոդաբանություն, 4, 10, 12, 14, 15, 16, 20, 23, 95, 104, 135, 190

Մեր կուսակցություն, 383

մերձդնեստրյան հակամարտություն, 377

Միավորված ազգերի

կազմակերպություն (ՄԱԿ), 8, 19, 28, 63, 64, 129, 175, 206, 223, 229, 248, 249, 268, 298, 299, 302, 304, 307, 314, 342, 343, 392, 432

Միացյալ Ղրղզստան, 296

Միութենական պետություն, 197, 202, 214, 215, 231

միջազգային իրավապաշտպան կազմակերպություն, 102, 137, 206

միջերկրային վերլուծություն, 4, 11, 16, 29, 415, 416, 428, 431, 435

մոդել, 23, 24, 25, 26, 28, 31, 45, 48, 50, 51, 67, 68, 96, 97, 102, 137, 173, 186, 187, 188, 200, 201, 210, 212, 233, 234, 267, 282, 283, 300, 303, 306, 320, 322, 337, 346, 364, 368, 369, 371, 388, 391, 408, 409, 421

Մոլդովա (ՄՀ), 3, 4, 8, 11, 14, 15, 16, 17, 45, 58, 143, 144, 240, 377, 378, 379, 380, 382, 383, 384, 385, 386, 387, 388, 389, 390, 391, 392, 393, 394, 395, 396, 397, 398, 399, 400, 401, 403, 404, 405, 406, 407, 408, 410, 411, 414, 415, 416, 417, 419, 420, 422, 423, 426, 430, 431, 432, 433, 434, 435, 436, 451

Մոլդովայի դեմոկրատական կուսակցություն, 382, 383

Մոլդովայի Հանրապետության կոմունիստների կուսակցություն, 382, 383

Մոլդովայի Հանրապետության սոցիալիստների կուսակցություն, 382, 383

Մուսավաթ, 106, 107, 110, 113, 118, 119

Յ

Յավլինսկի, Գրիգորի, 151

Ն

Նազարբան, Նուրսուլթան, 245, 246, 247

Նախագահ, 25, 42, 43, 77, 78, 80, 81, 82, 101, 102, 105, 107, 108, 109,

110, 113, 116, 117, 119, 120, 122, 126,
128, 132, 133, 151, 152, 153, 160,
197, 200, 201, 202, 208, 209, 212,
231, 232, 241, 243, 245, 246, 247,
248, 250, 262, 279, 285, 295, 298,
299, 300, 301, 322, 327, 328, 334,
337, 338, 339, 341, 342, 344, 345,
367, 380, 381, 386, 389, 399, 423,
436
նախագահական ընտրություններ,
76, 79, 80, 101, 109, 116, 117, 118,
150, 151, 152, 295, 297, 301, 305,
367, 380
նախագահական կառավարման ձև,
41, 200, 201, 202, 209, 243, 247,
279
նախընտրական գործընթաց, 118,
423
նահանջ, 14, 15, 51, 163, 415, 418,
421, 422
Նավալնի, Ալեքսեյ, 158
նավթ, 101, 105, 121, 123, 135, 136,
166, 209, 261, 307, 349, 427
ՆԱՏՕ, 8, 79, 328, 340, 368
Նարդարան, 105
նեոավտորիտար փոխակերպումներ,
145
ներերկրային վերլուծություն, 4, 15
Նոր Ադրբեջան, 116
նորանկախ երկրներ, 4, 14, 144

Շ

շիա, 101
շուկա, 54, 61, 83, 84, 91, 105, 121,
123, 135, 136, 180, 182, 188, 209,

210, 214, 216, 225, 251, 256, 260,
388
շուկայական հարաբերություններ,
95, 210, 279, 280, 394
շուկայական տնտեսություն, 161, 219,
279, 349, 368

Ո

ոչ ժողովրդավարական քաղաքական
համակարգ, 418, 435

Չ

Չինաստան, 85, 87, 88, 166, 184,
255

Պ

պատգամավոր, 40, 46, 78, 116, 204,
205, 298, 300, 361, 385
պատժամիջոց, 11, 25, 85, 145, 148,
149, 165, 166, 182, 184, 188, 213,
222, 251, 327, 328, 368, 426
պետական բյուջե, 88, 111, 122, 127,
132, 184, 403
Պետական դոմա, 151
պետական կառավարում, 23, 25, 145,
156, 196, 197, 200, 201, 209, 220,
232, 243, 247, 256, 345
պետական մարմիններ, 207, 261,
292, 361, 388
պետության ծախսերը կրթության
ոլորտում, 19, 22, 187, 189, 223,
321, 370
Պլահոտնյուկ, Վլադիմիր, 382, 388
Պշտրոսկի, Ադամ, 38

Պուտին, Վլադիմիր, 151, 152, 153,
339, 380

Ջ

Ջինի ինդեքս/գործակից, 19, 22, 28,
68, 69, 138, 139, 217, 234, 235,
263, 283, 284, 321, 323, 409, 410,
419, 430

Ռ

ռազմական դրություն, 328, 367
ռազմավարություն, 15, 91, 146, 152,
156, 183, 210, 215, 216, 249, 251,
252, 262, 268, 315, 317, 337, 347,
348, 349, 351, 363, 371
ռեգրեսիոն վերլուծություն, 31, 67, 68,
96, 97, 137, 138, 139, 185, 186,
187, 188, 190, 233, 234, 235, 282,
283, 292, 320, 321, 322, 323, 368,
369, 370, 371, 408, 409, 410, 411
Ռուսաստան (ՌԴ), 3, 4, 8, 9, 11, 14,
16, 17, 52, 53, 85, 86, 88, 143, 144,
145, 146, 147, 148, 149, 150, 151,
152, 153, 154, 155, 156, 157, 158,
159, 160, 161, 162, 163, 164, 165,
166, 167, 168, 169, 170, 171, 172,
173, 174, 175, 176, 177, 178, 179,
180, 181, 182, 183, 184, 185, 186,
187, 188, 189, 190, 197, 203, 209,
210, 213, 214, 215, 222, 231, 240,
250, 251, 252, 255, 258, 304, 309,
327, 328, 332, 333, 334, 335, 336,
337, 339, 340, 344, 349, 367, 368,
377, 380, 387, 391, 394, 398, 414,

415, 417, 419, 422, 426, 427, 428,
429, 430, 432, 433, 435, 436, 451

Ռուսաստանի անկախ

արհմիությունների դաշնություն
(ՌԱԱԴ), 8, 174

Ռուսաստանի Դաշնության

կոմունիստական կուսակցություն
(ՌԴԿԿ), 9, 150, 158

Ռուսաստանի լիբերալ-

դեմոկրատական կուսակցություն
(ՌԼԴԿ), 9, 150

Ռուսաստանի կոմունիստներ

կոմունիստական կուսակցություն
(ՌԿԿԿ), 9, 150

Ս

սահմանադրական բարեփոխումներ,
77, 106, 243, 246, 247, 300

սահմանադրական

փոփոխություններ, 39, 41, 77, 78,
82, 108, 109, 110, 114, 117, 144,
306, 390, 423

Սահմանադրություն, 39, 44, 72, 77,
78, 79, 81, 108, 109, 113, 114, 117,
160, 169, 201, 246, 247, 295, 299,
322, 371, 387, 389

Սարգսյան, Սերժ, 41, 42, 117

Սևաստոպոլ, 203, 332

Սորբյակ, Քսենյա, 151

սոցիալական անհանգստություններ
ու քաղաքական ճնշումներ, 18, 22,
26, 186, 188, 320, 322, 419, 423,
425

Սոցիալական գործոնների ինդեքս
(ՍԳԻ), 9, 16, 17, 29, 30, 35, 55, 56,

57, 66, 68, 75, 88, 94, 97, 103,
123, 124, 125, 135, 138, 147, 168,
169, 181, 187, 199, 217, 218, 231,
234, 235, 242, 263, 267, 280, 281,
282, 283, 293, 311, 319, 321, 330,
353, 354, 364, 365, 366, 370, 378,
397, 400, 407, 408, 409, 428, 430,
431, 436
սոցիալական պաշտպանություն, 56,
167, 168, 228, 263, 267, 274, 285,
357
սոցիալ-տնտեսական ճգնաժամ, 105,
202

Վ

Վաշաձե, Գրիգոր, 80, 81
վարկանիշային աղյուսակ, 175, 417,
420, 425, 426, 428, 436
վարչական ռեսուրս, 418
վարչակարգ, 58, 155, 161, 162, 270,
279, 331
վարչապետ, 25, 41, 42, 77, 295, 298,
299, 381
վստահություն, 23, 42, 43, 81, 82,
165, 209, 258, 278, 296, 300, 351,
392
Վրաստան (ՎՀ), 3, 4, 10, 14, 16, 17,
45, 58, 74, 75, 76, 77, 78, 79, 80,
81, 82, 83, 84, 85, 87, 88, 89, 90,
91, 92, 93, 94, 95, 96, 98, 115, 117,
130, 143, 144, 240, 249, 414, 415,
416, 417, 418, 419, 420, 421, 422,
423, 424, 425, 426, 428, 429, 430,
432, 433, 435, 436, 451
Վրացական երազանք, 78, 91

Տ

տեղական ինքնակառավարման
մարմիններ (ՏԻՄ), 9, 145, 156, 161,
197, 201, 228, 232, 243, 252, 256,
271, 327, 338, 345, 385
Տնտեսական ազատության ինդեքս
(ՏԱԻ), 9, 19, 22, 27, 51, 138, 234,
235, 256, 310, 322, 394, 419, 426
տնտեսական աճ, 50, 56, 58, 83, 95,
162, 171, 182, 188, 226, 248, 255,
267, 280, 309, 310, 313, 349, 393,
395, 396, 425, 427
տնտեսական անկում, 427, 428
Տնտեսական գործոնների ինդեքս
(ՏԳԻ), 9, 16, 17, 29, 30, 35, 49, 50,
66, 67, 75, 82, 94, 97, 103, 121,
122, 135, 138, 147, 162, 164, 181,
187, 199, 211, 212, 231, 234, 242,
256, 257, 259, 280, 281, 282, 293,
308, 321, 330, 350, 364, 366, 369,
378, 393, 396, 407, 409, 425, 426,
427, 428
տնտեսական զարգացում, 54, 84,
161, 162, 163, 164, 166, 181, 197,
214, 215, 268, 273, 274, 284, 349,
393
Տնտեսական համագործակցության և
զարգացման կազմակերպություն
(ՏՀՀԿ), 9, 351, 403
տնտեսական ճգնաժամ, 37, 136, 427
տնտեսության վարկավորում, 19, 22,
51, 96, 97, 98, 165, 234, 235, 308,
350, 409, 410, 419, 426
տոմոս, 367

տվյալ, 4, 17, 18, 24, 25, 26, 27, 28, 29, 35, 39, 41, 42, 43, 46, 47, 48, 49, 51, 52, 53, 57, 58, 60, 75, 80, 81, 83, 85, 86, 94, 103, 123, 125, 126, 129, 131, 132, 133, 134, 135, 147, 150, 153, 155, 156, 157, 160, 161, 164, 165, 170, 172, 175, 176, 177, 186, 199, 203, 204, 205, 206, 207, 208, 216, 217, 218, 219, 223, 224, 226, 227, 229, 234, 242, 245, 253, 254, 256, 258, 260, 263, 264, 265, 266, 268, 274, 276, 277, 282, 283, 293, 297, 301, 303, 306, 308, 310, 312, 313, 314, 317, 320, 322, 330, 335, 340, 341, 342, 343, 345, 347, 348, 352, 354, 358, 363, 369, 378, 382, 389, 391, 392, 395, 397, 398, 399, 400, 403, 405, 406, 408, 410, 419, 420, 421, 423, 428, 429, 431, 432, 433

Ց

ցիփիլիարիսիկ, 145, 146, 154, 156, 160, 185, 329
ցուցանիշ, 4, 17, 18, 23, 25, 28, 29, 31, 36, 43, 46, 48, 49, 50, 51, 56, 58, 59, 60, 61, 62, 63, 64, 65, 66, 67, 68, 69, 74, 83, 84, 88, 89, 92, 93, 95, 96, 97, 110, 113, 117, 122, 123, 124, 125, 132, 136, 155, 160, 164, 167, 169, 172, 175, 177, 178, 179, 181, 186, 187, 188, 190, 200, 204, 207, 208, 211, 212, 213, 217, 223, 224, 225, 226, 228, 229, 231, 234, 235, 244, 252, 254, 256, 257,

259, 263, 267, 268, 269, 274, 275, 276, 277, 279, 280, 281, 282, 283, 284, 294, 301, 308, 310, 312, 313, 317, 318, 319, 320, 322, 332, 341, 345, 346, 347, 348, 352, 353, 362, 363, 364, 365, 366, 369, 379, 385, 388, 392, 393, 394, 398, 400, 401, 404, 405, 406, 407, 408, 410, 417, 418, 421, 422, 423, 424, 425, 426, 428, 429, 430, 431, 432, 433, 434, 435, 436

ՈՒ

Ուկրաինա, 3, 4, 8, 11, 14, 15, 16, 17, 45, 58, 143, 144, 149, 203, 240, 327, 328, 329, 330, 331, 332, 333, 334, 335, 336, 337, 338, 339, 340, 341, 342, 343, 344, 345, 346, 347, 348, 349, 350, 351, 352, 353, 354, 355, 356, 357, 358, 359, 360, 361, 362, 363, 364, 365, 366, 367, 368, 370, 371, 391, 398, 414, 415, 417, 418, 419, 421, 422, 423, 424, 425, 426, 427, 430, 432, 433, 435, 436, 451

Ուկրաինական ուղղափառ եկեղեցի (ՈւՈւԵ), 8, 344

ուսման միջին տարիներ, 28, 432

ուսման միջին տևողություն, 432

ուսման սպասվող տարիներ, 28, 432

ուսման սպասվող տևողություն, 432

ուսումնասիրություն, 4, 5, 12, 13, 14, 16, 17, 26, 30, 36, 48, 76, 105, 121, 131, 161, 164, 165, 167, 231, 256, 263, 268, 274, 275, 309, 313, 349,

351, 377, 390, 415, 416, 418, 420,
422, 423, 432, 435, 436

Փ

Փաշինյան, Նիկոլ, 40, 42
փոխակերպում, 4, 15, 16, 165, 184,
217, 231, 243, 244, 245, 247, 255,
264, 268, 279, 281, 282, 339, 352,
368
փոփոխական, 18, 21, 23, 25, 26, 27,
29, 30, 31, 45, 48, 50, 67, 68, 69,
96, 97, 98, 137, 138, 139, 186, 187,
188, 189, 190, 233, 234, 235, 254,
282, 283, 303, 317, 320, 321, 322,
368, 369, 370, 371, 388, 392, 408,
409, 410, 419, 421, 423, 424, 426,
436

Ք

քաղաքական բազմակարծություն,
23, 44, 101, 295, 300
Քաղաքական գործոնների ինդեքս
(Ք_{գի}), 9, 16, 17, 29, 30, 35, 36, 45,
46, 48, 64, 66, 67, 75, 76, 94, 96,
103, 104, 105, 107, 110, 113, 120,
137, 147, 148, 149, 159, 160, 181,
186, 199, 200, 201, 204, 208, 231,
234, 242, 244, 245, 246, 248, 250,
254, 255, 280, 281, 282, 283, 293,
294, 302, 303, 319, 320, 330, 331,
332, 348, 364, 365, 366, 369, 378,
379, 388, 392, 407, 409, 420, 423,
424, 435
Քաղաքական իրավունքների և
քաղաքացիական

ազատությունների ինդեքս, 18, 22,
23, 45, 64, 96, 98, 157, 206, 305,
341, 346, 369, 370, 371, 388, 408,
409, 410, 419, 421, 424, 436

քաղաքական կայունություն, 36, 102,
119, 144, 254, 273, 333, 336, 346,
392, 407, 436

Քաղաքական կայունություն /
բռնության բացակայություն, 18,
22, 23, 48, 96, 98, 186, 188, 392,
408, 409, 410, 419, 421, 436

քաղաքական համակարգ, 12, 13, 15,
18, 22, 25, 26, 34, 79, 145, 146, 151,
155, 158, 162, 184, 185, 196, 198,
200, 203, 206, 209, 230, 231, 232,
241, 245, 264, 279, 281, 294, 298,
300, 307, 331, 334, 338, 340, 344,
361, 368, 380, 392, 411, 419

քաղաքական հետապնդումներ, 112,
119

քաղաքական ձերբակալություններ,
26, 423

քաղաքական մասնակցություն, 167,
207, 302, 387

քաղաքական վարչակարգ, 167, 232,
243, 340

քաղաքացիական
անհնազանդություններ, 42, 173,
253, 301, 322, 328, 423

քաղաքացիական հասարակության
կազմակերպություններ (ՔՀԿ), 9,
148, 154, 155, 156, 157, 158, 159,
180, 189, 196, 198, 201, 203, 207,
208, 209, 213, 230, 232, 233, 235,
245, 246, 248, 252, 261, 279, 284,

Անունների և հիմնաբառերի ցանկ

328, 329, 331, 337, 338, 344, 345,
346, 368

քաղաքացիական հասարակություն,
4, 7, 12, 106, 112, 115, 134, 137, 146,
153, 196, 203, 204, 206, 207, 208,
236, 243, 252, 253, 273, 284, 296,
299, 328, 340, 345, 346, 377, 380,
390, 422

քաղաքացիական շարժում, 154, 248

քաղբանտարկյալ, 119

Քարիմի, Ալի, 113, 114

Օ

օտարերկրյա ուղղակի ներդրումներ
(ՕՈւՆ), 9, 19, 22, 51, 165, 256,

257, 258, 308, 350, 369, 371, 396,
409, 410, 419, 426

օրենքի գերակայություն, 18, 22, 23,
24, 48, 65, 67, 68, 96, 98, 137,
139, 157, 254, 283, 284, 305, 320,
322, 329, 331, 336, 346, 369, 370,
371, 386, 392, 407, 419, 421, 424,
436

Ֆ

Ֆերգանայի հովիտ, 307

ֆինանսատնտեսական ճգնաժամ,
82, 262, 432

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ.
ԺՄԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

*(Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս,
Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա, Մոլդովա)*

Խմբագիր՝ ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

**CHALLENGES TO THE CONSOLIDATION
OF MODERN DEMOCRACY:
IDL COMPARATIVE ANALYSIS**

*(Armenia, Georgia, Azerbaijan, Russia,
Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine and Moldova)*

Edited by ARUSYAK ALEKSANYAN

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.y-su.am

Ալ. Մանուկյան 1, Երևան 0025, ՀՀ
Հեռ.՝ + 374 10 550810
Ֆաքս՝ + 374 10 576340
Էլ.փոստ՝ info@ces.am
info@regionalmaster.net
a.aleksanyan@ces.am
Կայք՝ www.ces.am

«...հեղիսորհրդային ժողովրդավարական փոխակերպումներում յուրաքանչյուր պեպություն ձևավորում է իր ուրույն օրակարգն ու «ճանապարհային քարտեզը», որում կարող են խտացված լինել իրարամերժ, միմյանց հակասող գործընթացներն ու իրադարձությունները՝ ժողովրդավարության առաջընթացի և հեղինակացի փուլերով: Եվ եթե ժողովրդավարությունը որպես արժեքների և սկզբունքների համակարգ համընդհանուր է, ապա դրա «տեղայնացման» գործընթացը առանձնահատուկ է յուրաքանչյուր պեպության համար՝ պայմանավորված պատմական, մշակութային, կրոնական և այլ արժեքներով»:

Արուսյակ Ալեքսանյանը քաղաքական գիտությունների թեկնածու է, դասավանդում է Երևանի պետական համալսարանի եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնում և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի քաղաքագիտության ամբիոնում: